Эривань. Учительская Семинарія. - Erivan. Séminaire.

Նվիրվում է
Երևանի պետական համալսարանի
հիմնադրման 90-ամյակին:

ԵՐԵՎԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ - 2009

ՀՏԴ 030
ԳՄԴ 92
Կ - 414

Հրատարակչական խորհուրդ

Ա.Հ.Սիմոնյան (նախագահ),
Ա.Ա.Ավետիսյան, Հ.Ք.Գասպարյան (պատ.քարտուղար),
Է.Ս.Գևորգյան, Մ.Ա.Դավթյան, Ա.Ա.Կիրակոսյան,
Գ.Ա.Ղարիբյան, Ի.Գ.Ղարիբյան, Լ.Պ.Ղարիբջանյան,
Հ.Ղ.Միրզոյան, Ս.Պ.Մուրադյան, Պ.Գ.Ստեփանյան,
Յու.Լ.Վարդանյան

Խմբագրական խորհուրդ

Ա.Հ.Սիմոնյան (նախագահ),
Հ.Ք.Գասպարյան (պատ.քարտուղար), Է.Ս.Գևորգյան,
Մ.Ա.Դավթյան, Ա.Ա.Կիրակոսյան, Ի.Գ.Ղարիբյան,
Հ.Ղ.Միրզոյան, Ս.Պ.Մուրադյան

Կ- 414 Կենսագրական հանրագիտարան - Եր.: ԵՊՀ հրատ., 2009թ. 620 էջ:

ԳՄԴ 92

ISBN 978-5-8084-1162-3

© ԵՊՀ հրատարակչություն, 2009թ.
© Կազմողի համար, 2009թ.

ԱՌԱՋԱԲԱՆ

Երևանի պետական համալսարանի հիմնադրումը հայ ժողովրդի նորագույն պատմության կարևորագույն իրադարձություններից է: Այն ըստ էության գալիս էր իրականացնելու մեր ժողովրդի՝ կրթության ու լուսավորության ձգտումներն ու երազանքները: Համալսարանի ծնունդը խորհրդանշում էր հայ ժողովրդի հոգևոր վերածնունդը:

Դարերով իր պետականությունը կորցրած հայը, որն ուսման ծարավը հագեցնում էր Եգիպտոսում, Միջագետքում, ավելի ուշ՝ Հունաստանում, Հին Հռոմում, եվրոպական այլ երկրներում, ինչպես նաև օտար քաղաքներում իր իսկ հիմնադրած հայկական կրթօջախներում (Վենետիկ, Մոսկվա, Թիֆլիս, Կ.Պոլիս և այլն), արդեն եկել էր այն համոզման, որ ազգային համալսարան ունենալու գաղափարը հարկ է իրականացնել հենց Հայաստանում: Չնայած ժամանակի պատմաքաղաքական ու սոցիալ-տնտեսական ծանր պայմաններին և այս խնդրի վերաբերյալ ցարական Ռուսաստանի անբարեհաճ դիրքորոշմանը՝ հայ մտավորականությունը համոզված էր, որ հայոց բարձրագույն կրթօջախի հիմնադրումով պիտի ապահովվի երկրի առաջընթացը: Ոչ պակաս կարևոր նախադրյալներ էին նաև այն փորձն ու ավանդույթները, որոնք ձևավորվել էին դեռևս 5-րդ դարից: Երբ 9-րդ դարի վերջին տասնամյակներում Բագրատունիները վերականգնեցին հայկական պետականությունը, երկրի տնտեսությունն ու մշակույթն ապրեցին հզոր վերելք, որը տևեց մինչև 13-14-րդ դարերը: Ուսումնակրթական գործն այնպիսի թափ ու ծավալ ստացավ, որ մի շարք կենտրոններում հիմնվեցին «վարդապետարաններ» կամ համալսարաններ: Բուն Հայաստանում միջնադարյան համալսարաններ բացվեցին Սանահինում ու Հաղպատում (10-րդ դար), Անիում (11-րդ դար), Գետիկում, Կարսում, Կեչառիսում, Գլաձորում, Տաթևում և այլուր: Կիլիկյան Հայաստանում համալսարաններ էին հիմնվել Սսում, Տարսոնում, Սկևռայում, Լամբրոնում, որտեղ աստվածաբանական առարկաներից զատ դասավանդվում էին մաթեմատիկա, երկրաչափություն, տոմարագիտություն, պատմություն, աշխարհագրություն, քերականություն, երաժշտություն, գրչության արվեստ, փիլիսոփայություն,

ճարտասանություն և այլ առարկաներ: Այդ համալսարանների սաներն ստանում էին բազմակողմանի կրթություն, տիրապետում էին մի քանի լեզուների: Բարձրագույն այդ դպրոցներում դասավանդում էին միջնադարյան Հայաստանի գիտության, գրականության, արվեստի ու աստվածաբանության նշանավոր ներկայացուցիչներ:

Ցավոք, մոնղոլ-թաթարական և ապա թուրք-պարսկական ավերիչ արշավանքների ու դաժան լծի հետևանքով Հայաստանն անկում ապրեց և կանգնեց կործանման վտանգի առջև: Եթե չլինեին պատմական ճակատագրի այդ կործանարար հարվածները, և երկրի հետագա զարգացումն ընթանար բնականոն հունով, ապա այսօր մենք կարող էինք խոսել միջնադարից եկող և անընդմեջ շարունակվող համալսարանական կրթության մասին:

Մայր հայրենիքում հայկական համալսարան հիմնելու գաղափարը օրակարգային դարձավ հատկապես 19-րդ դարի 40-50-ական թվականներից: Խ.Աբովյանը, Մ.Նալբանդյանը, Հովհ.Թումանյանը և ուրիշներ չափազանց կարևորում էին հայ երիտասարդին մայրենի լեզվով կրթելն ու դաստիարակելը: Ամենայն հայոց բանաստեղծը գտնում էր, որ ***«... Պետք է ստեղծել Հայոց Համալսարան, ուր կարելի կլինի բարձրագույն գիտություններ ավանդել ու սովորեցնել հայերեն լեզվով: Մեր տարրական ու միջնակարգ դպրոցների մեջտեղը պետք է կառուցանել ու պահել մի գիտության տաճար, մեր մանր ու մեծ ճրագների մեջտեղը պետք է վառել մի ջահ՝ Հայկական Համալսարանը»:***

1918թ., երբ Հայաստանն անկախություն ձեռք բերեց և վերականգնեց դարեր առաջ կորցրած պետականությունը, հոգևոր կյանքի զարգացումը կրկին դարձավ պետության հոգածության առարկա: Ինչպես վկայում են վավերագրերը, իր գոյության մեկ տարին դեռ չբոլորած նորանկախ Հայաստանի Հանրապետությունը 1919թ. մայիսի 16-ին ընդունեց համալսարանի հիմնադրման մասին հետևյալ որոշումը.

«1. Հիմնել Երևանում համալսարան հետևյալ չորս բաժիններով՝
ա) պատմա-լեզվաբանական, բ) տնտեսա-իրավաբանական, գ) բժշկական և
դ) ֆիզիկա-մաթեմատիկական՝ տեխնիկական ստորաբաժանումներով:

2. Համալսարանը բանալ 1919-1920 ճեմարանական տարում:

3. Առաջին հերթին բանալ պատմա-լեզվաբանական բաժինը:

4. Մնացած բաժինները բանալու ժամանակը և հերթը սահմանում է Մինիստրների խորհուրդը ըստ Հանրային կրթության մինիստրի առաջարկության:

5. Համալսարանը բանալու նախնական ծախսերը հոգալու համար հատկացնել երեք հարյուր հազար ռուբլի (300000 ռ.)՝ հանձնարարելով ֆինանսների մինիստրությանը բանալ համապատասխան վարկ հանրային կրթության մինիստրությանը:

Մինիստրների խորհրդի գործերի կառավարիչ՝ Գ.Խատիսյան:

Սույն օրենքը հաստատված է Մինիստրների խորհրդի 1919թ. մայիսի 16-ի նիստում ըստ Հայաստանի խորհրդի 1919թ. ապրիլի 27-ի ընդունած օրենքի»:

Երևանում շենքային պայմաններ չկային կրթական նման հաստատություն հիմնելու համար, ուստի համալսարանի բացման հանդիսավոր արարողությունը տեղի ունեցավ 1920թ. հունվարի 31-ին Ալեքսանդրապոլի (այժմ՝ Գյումրի) առևտրային դպրոցի շենքում: Ներկա էին խորհրդարանի նախագահ Ա.Սահակյանը, նախարարապետ (վարչապետ) Ա.Խատիսյանը, հանրային կրթության նախարար Ն.Աղբալյանը, բարձրաստիճան այլ պաշտոնյաներ, օտարերկրյա դիվանագետներ: Բացման խոսքով հանդես է եկել համալսարանի առաջին ռեկտոր (տեսուչ), պրոֆեսոր Յու.Ղամբարյանը, ապա ելույթ է ունեցել Ն.Աղբալյանը: ***«Չնայած որ մեր երկիրն ավերված է, – ասել է նա, – մեր ժողովուրդը՝ աղքատության մեջ, մենք հիմնում ենք բարձր կրթարան: Այն, ինչ որ մենք ունենք այսօր, ձեռք է բերված սերունդների արյունով... Մենք վերաշինում ենք մեր տունը և հիմնում կրթության տաճարներ, առանց խորհելու, թե ի՞նչ են մտածում մեր մասին մեր թշնամիները, որոնք միշտ քանդել են մեր շինածը: Մեր մեջ հավատ կա, որ այս անգամ հայոց ազգի նավը դուրս կգա փոթորկից անփորձանք: Մեր թշնամիները չեն հաջողելու, և այն ջահը, որ մենք վառում ենք Հայաստանի բարձրավանդակի վրա, չի հանգչի և կլուսավորե Առաջավոր Ասիան: Անցնում է մղձավանջը, և պայծառանում է Հայաստանի երկինքը: Դեռ մեզ համար բոլոր վտանգներն անցած չեն, դեռ մեկ ձեռքում սուր պիտի ունենանք, բայց արդեն ժամանակն է, որ մյուս ձեռքում գրիչ բռնենք»:***

Ելույթից հետո ընթերցվել են նորաստեղծ համալսարանին ուղղված ողջույնի բազմաթիվ հեռագրեր: Նույն օրը լույս է տեսել «Հայաստանի համալսարան» մեկօրյա թերթը, որի վաճառքից ստացված եկամուտը հատկացվել է չքավոր ուսանողների օգնության ֆոնդին: Այնուհետև արարողությունը վերածվել է տոնախմբության:

Առաջին կիսամյակի դասերն սկսվեցին փետրվարի 1-ից և տևեցին մինչև մայիս ամիսը: Առաջինը բացվեց պատմալեզվաբանական ֆակուլտետը (262 ուսանող, 32 դասախոս): Անձնուրաց նվիրումով գործի անցան հայագիտության ավագ սերնդի ներկայացուցիչներ Մ.Աբեղյանը, Հ.Մանանդյանը, Ե.Տեր-Մինասյանը, Գ.Հովսեփյանը, Ստ.Մալխասյանցը, Ս.Տիգրանյանը և ուրիշներ: Անհրաժեշտ էր համալրել դասախոսական կազմը: Յու.Ղամբարյանի ջանքերով Երևանի համալսարան հրավիրվեցին Ռուսաստանում և Եվրոպայում կրթություն ստացած մանկավարժական ու գիտական մեծ փորձառությամբ անվանի մասնագետներ Հր.Աճառյանը, Գ.Արեշյանը, Գ.Ասատուրը, Հ.Անժուրը, Գ.Էդիլյանը և ուրիշներ:

Նախարարների խորհրդի 1920թ. հունիսի 21-ի նիստում որոշվեց համալսարանը տեղափոխել Երևան՝ նրան տրամադրելով Երևանի սեմինարիայի շենքը, որտեղ համալսարանի պարապմունքները պետք է վերսկսվեին հոկտեմբերի 16-ին, սակայն քաղաքական լարված իրավիճակի պատճառով հնարավոր չեղավ այդ որոշումն իրագործել:

Խորհրդային իշխանության հաստատման առաջին ամիսներին համալսարանը վերաբացվեց Երևանում: Ելնելով այդ իրողությունից, և հատկապես, գիտակրթական կարևոր այդ օջախը միայն խորհրդային իրավակարգի ծնունդ տեսնելու ցանկությունից՝ տասնամյակներ շարունակ անտեսվել են առաջին հանրապետության օրոք արված ձեռնարկումներն ու այդ մասին եղած փաստաթղթերը: Մինչդեռ որքան էլ սուր էր նորաստեղծ խորհրդային իշխանության ատելությունը նախորդի հանդեպ, այնուամենայնիվ, կարևորելով նրա ստեղծած համալսարանի գոյության պատմական փաստը, որոշվեց ոչ թե փակել, այլ պարզապես վերակազմել այն՝ հարմարեցնելով իր շահերին ու խնդիրներին: Այդ է հաստատում ՀԽՍՀ առաջին լուսժողկոմ Աշոտ Հովհաննիսյանի 1920թ. դեկտեմբերի 17-ին ստորագրած առաջին իսկ հրամանը՝ «Երևանի համալսարանը վերակազմելու մասին», որով ստեղծվել է 3 հոգուց բաղկացած հանձնաժողով (նախագահ՝ Գրիգոր Չուբարյան)՝ մշակելու վերակազմելիք համալսարանի կանոնադրությունը: Շուրջ մեկամսյա նախապատրաստական աշխատանքներից հետո համալսարանի վերաբացման արարողությունը տեղի է ունեցել 1921թ. հունվարի 23-ի կիրակի օրը, իսկ 24-ին վերսկսվել են 1920թ. մայիսին ավարտված պարապմունքները: Վերաբացված համալսարանը կոչվում էր Երևանի ժողովրդական համալսարան և նախկին մեկ ֆակուլտետի փոխարեն ուներ երկու՝ բնագիտական և հասարակագիտական ֆակուլտետ: Համալսարանի ռեկտոր էր նշանակվել ականավոր պատմաբան Հակոբ Մանանդյանը:

Տարբեր տարիների համալսարանն ունեցել է տարբեր անվանումներ. 1919-1920թթ.՝ Երևանի համալսարան, 1920-1923թթ.՝ Երևանի ժողովրդական համալսարան, 1923-1930թթ. ՀԽՍՀ պետական համալսարան, 1930-1933թթ.՝ Մանկավարժական ինստիտուտ, 1933-1941թթ. Երևանի պետական համալսարան, 1941-1958թթ.՝ Երևանի Վ.Մոլոտովի անվան պետական համալսարան, 1958-1970թթ. Երևանի պետական համալսարան, 1970-1990թթ. Երևանի Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանակիր պետական համալսարան, 1990-ից՝ Երևանի պետական համալսարան: Տարանունները նույնականացնելու նպատակով բոլոր տարիների համար համալսարանի անունը գրքում գրված է Երևանի պետական համալսարան՝ ԵՊՀ: Անհրաժեշտության դեպքում հապավումներով են տրված նաև մյուս բուհերի անվանումները:

ԵՊՀ 90-ամյա պատմությունն իր մեջ խտացված ամփոփում է այդ նույն ժամանակահատվածում մեր ժողովրդի ու երկրի լավագույն նվաճումները և, իհարկե, կրած դժվարություններն ու կորուստները: Համոզվելու համար բավական է հիշել, որ միայն 1937թ. ահասարսուռ 12 ամիսների ընթացքում Երևանի պետական համալսարանում փոխվել է 6 ռեկտոր, որոնցից և ոչ մեկը, բնականաբար, չի հասցրել քիչ թե շատ լուրջ ավանդ ներդնել համալսարանի զարգացման գործում: Ոչ պակաս դաժան ճակատագիր ունեցան նաև բազմաթիվ համալսարանականներ, ովքեր ենթարկվեցին անլուր հալածանքների, բռնադատվեցին շինծու մեղադրանքներով. նրանցից շատերն իրենց մահկանացուն կնքեցին բանտերում ու աքսորավայրերում:

Մեծ հայրենականի տարիներին համալսարանի 500 դասախոսներ, ասպիրանտներ, ուսանողներ, վարչատնտեսական աշխատողներ զինվորագրվեցին հայրենիքի պաշտպանությանը: Նրանցից շատերը զոհվեցին հերոսաբար, իսկ ոչ քչերը վերադարձան վիրավոր ու հաշմանդամ:

1988-ին, երբ հայ ժողովուրդն ազգային զարթոնք էր ապրում, ԵՊՀ-ն դարձյալ առաջին շարքերում էր: Արցախյան ազատամարտին մասնակցեցին բազմաթիվ համալսարանականներ, որոնցից շատերը դարձան նահատակներ: Պատերազմում նահատակված հերոսների հիշատակը մայր բուհում հավերժացնելու նպատակով անվանակոչվել են լսարաններ:

Այսօր Երևանի պետական համալսարանը 90 տարեկան է, հիրավի տպավորիչ մի տարիք, որը ենթադրում է մեծ իմաստնություն և հարուստ կենսափորձ: Իրոք, իր ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեությամբ ընդգրկելով հասարակական կյանքի գրեթե բոլոր ոլորտները, ԵՊՀ-ն մշտապես առաջատար դեր է խաղացել հանրապետության ոչ միայն գիտական, այլև հասարակական զարգացումների պատմության մեջ: Հատկապես անգնահատելի է ԵՊՀ-ի դերը Հայաստանում կրթական համակարգի ձևավորման ու զարգացման գործում: ԵՊՀ-ն էր, որ ծնունդ տվեց բարձրագույն կրթության ճյուղավորմանը հանրապետությունում: Համալսարանի տարբեր ֆակուլտետների հիմքի վրա ժամանակին ստեղծվեցին Երևանի պոլիտեխնիկական, գյուղատնտեսական, մանկավարժական, բժշկական, ժողտնտեսության ինստիտուտները, որոնք այսօր իրավամբ կոչվում են համալսարաններ: ԵՊՀ-ն կարևոր դեր է խաղացել նաև Հայաստանի գիտությունների ակադեմիայի կայացման ու զարգացման գործում: 1943թ. Ակադեմիայի հիմնադիր կազմի 23 ակադեմիկոսներից 12-ը ԵՊՀ պրոֆեսորներ էին:

Հայաստանում և նրա սահմաններից դուրս մեծ ճանաչում է գտել ԵՊՀ-ում սկզբնավորված մաթեմատիկայի հայկական գիտական դպրո-

ցը, որը հիմնադրել է Ա.Շահինյանը, և որի կայացմանն իրենց նպաստն են բերել Մ.Ջրբաշյանը, Ս.Մերգելյանը և ուրիշներ: Մեխանիկայի գիտական դպրոցն ստեղծվել է ԵՊՀ ռեկտորներ Ն.Հարությունյանի և Ս.Համբարձումյանի ջանքերով: Հայաստանում ֆիզիկական հետազոտությունները սկզբնավորվել են ԵՊՀ-ում Ալիխանյան եղբայրների հիմնադրած տիեզերական ճառագայթների ու միջուկային հետազոտությունների լաբորատորիայում և Արագածի գիտական կայանում, որոնց հենքի վրա ստեղծվել է Երևանի ֆիզիկայի ինստիտուտը: ԵՊՀ-ում 1950թ. Գ.Սահակյանի ջանքերով բացվել է տեսական ֆիզիկայի ամբիոնը, որը կարևորագույն դեր է խաղացել Հայաստանում բարձրորակ ֆիզիկոսների պատրաստման և ֆիզիկայի հայկական դպրոցի ստեղծման գործում:

Երևանի պետական համալսարանը եղել և մնում է ազգային կրթության և գիտության տաճար, որտեղ կրթվել, դաստիարակվել և կյանք են մտել բազմաթիվ սերունդներ: Համալսարանի շրջանավարտներից շատերը դարձել են անվանի գիտնականներ և մեծ ճանաչում ձեռք բերել ոչ միայն մեր երկրում, այլև նրա սահմաններից դուրս՝ Գևորգ Ջահուկյան, Էդուարդ Աղայան, Արտաշես Շահինյան, Սերգեյ Մերգելյան, Միքայել Չայլախյան, Էզրաս Հասրաթյան: Համալսարանում են ուսանել հանճարեղ գրողներ Եղիշե Չարենցը, Հովհաննես Շիրազը, Պարույր Սևակը, Սիլվա Կապուտիկյանը և ուրիշներ, ինչպես նաև հասարակական-քաղաքական ու պետական մի շարք ականավոր գործիչներ:

Այսօր Երևանի պետական համալսարանը ազգային և տարածաշրջանային դերակատարությամբ կրթական և գիտամշակութային ինքնավար հաստատություն է, որի հիմնական առաքելությունը կրթության զարգացման պետական ռազմավարության շրջանակներում գիտելիքի ստեղծումը, զարգացումը և փոխանցումն է եկող սերունդներին: ԵՊՀ գործունեության գերակա ոլորտներն են հայագիտությունը, հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և բնական գիտությունները, մշակույթը:

Համալսարանը մշտապես ձգտում է գերազանցության ու նորարարության՝ ուսուցման, գիտական հետազոտությունների և հանրությանը մատուցվող ծառայությունների ոլորտներում: Արդի գլոբալացող հասարակության և աշխատաշուկայի պայմաններում նրա առաջնահերթ խնդիրներից է՝ դառնալ ուսանողակենտրոն ուսումնական միջավայր, տալ գործուն հասարակական կյանքի և ղեկավար դերի պատրաստ, մասնագիտական կարիերայի ձգտող և շարունակական կրթության ունակ շրջանավարտներ:

Մայր բուհը պատմական բացառիկ դերակատարություն է իրականացնում ոչ միայն մայր հայրենիքում, այլև սփյուռքահայության շրջանում. հազարավոր սփյուռքահայեր մասնագիտական կրթություն կամ

գիտական աստիճան ստանալով ԵՊՀ-ում, վերադառնում են իրենց բնակության վայրերը, հայրենիքում ստացած գիտելիքներն ու հայրենասիրական ոգին ի սպաս դնում հայապահպանության ազգանվեր գործին:

ԵՊՀ-ում սովորել և այժմ էլ սովորում են արտերկրի տարբեր ազգությունների ներկայացուցիչներ:

ԵՊՀ-ն ոչ միայն գործուն մասնակցություն է ունենում միջազգային տարբեր գիտաժողովների ու համաժողովների, այլև հաճախ հանդես է գալիս այդպիսիք կազմակերպողի դերում:

Այսօր ԵՊՀ-ն, ինչպես աշխարհի շատ համալսարաններ, մեծ մարտահրավերների և փոփոխությունների շրջան է ապրում, իրողություն, որ պայմանավորված է ժողովրդագրական, տեխնոլոգիական, սոցիալական, տնտեսական և մշակութային բազմաթիվ գործոններով:

ԵՊՀ-ում մեկնարկած ռազմավարական պլանավորման գործընթացը կարևորագույն քայլ է առկա մարտահրավերները դիմակայելու և գլոբալ-հետազոտական համալսարան դառնալու ճանապարհին:

ԵՊՀ 90-ամյակի առթիվ այս կենսագրական հանրագիտարանը կազմելիս հիմք են ընդունվել որոշակի չափանիշներ. նրանում ընդգրկվել են՝

- ԵՊՀ ռեկտորները,
- ԵՊՀ պրոռեկտորները (ուսումնական և գիտական աշխատանքների գծով, միջազգային կապերի գծով, ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով),
- համալսարանում աշխատած և աշխատող (նաև համատեղությամբ) ակադեմիկոսները և թղթակից անդամները,
- գիտության այն դոկտոր, պրոֆեսորները, ովքեր ունեն ԵՊՀ աշխատանքային առնվազն 5 տարվա ստաժ. բացառություն է գիտության դոկտոր Էդուարդ Մարգարյանը, որը թեև չուներ պրոֆեսորի կոչում, սակայն երկար տարիներ աշխատել է պրոֆեսորի և դեկանի պաշտոններում և վախճանվել պաշտոնավարության ընթացքում,
- ՀԽՍՀ, ՀՀ և այլ երկրների գիտության, տեխնիկայի և մշակույթի վաստակավոր գործիչները՝ անկախ գիտական աստիճանից և կոչումից,
- հին սերնդի այն դասախոսները (անկախ գիտական աստիճանից և կոչումից), ովքեր զգալի ավանդ են ներդրել համալսարանի ստեղծման, ֆակուլտետների հիմնադրման ու զարգացման գործում,
- առաջին սերնդի հրավիրյալ դասախոսները,
- գիտության այն թեկնածուները, ովքեր կա՛մ գիտական հայտնագործության հեղինակ են, կա՛մ Պետական մրցանակի դափնեկիր, կա՛մ արժանացել են պրոֆեսորի կոչման (բացառությամբ Հակոբ Սալախյանի, որը միջազգային լայն ճանաչում ունեցող գրականագետ էր),

• ներկայումս գործող դեկանները,

• Արցախյան ազատամարտում զոհված աշխատակիցները:

Վերը նշված չափանիշներից միակ բացառությունն արվել է Լևոն Ներսիսյանի դեպքում, ով հիրավի բացառիկ դերակատարում է ունեցել ինչպես համալսարանի, այնպես էլ XX դարի վերջին տասնամյակների Երևանի մշակութային կյանքում:

Գրքում ընդգրկված անձանց ցանկը կազմվել է ԵՊՀ ֆակուլտետների ներկայացրած ցուցակների հիման վրա՝ ըստ հրատարակչական խորհրդի սահմանած չափանիշների:

Կենսագրություններում տրված են միայն պետական պարգևներն ու մրցանակները: Ոմանց պարգևների ստացման թվականները չեն նշված, որովհետև հնարավոր չի եղել պարզել:

Կենսագրական տվյալները ճշգրտելու համար օգտագործվել են հանրագիտարաններ (ՀՍՀ, ՀՀՀ, Ով ով է), «Մեր անվանի դասախոսները» մատենաշարի երեք հատորները, Լ.Պ.Ղարիբջանյանի «Երևանի պետական համալսարանը» մենագրությունը, «ԵՊՀ ռեկտորները» գիրքը, «Երևանի համալսարան, 1918-1920թթ.» վավերագրերի ժողովածուն, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա. անձնակազմը» տեղեկատուն: Դրանց միջև անհամապատասխանություններ նկատվելու դեպքում նախապատվությունը տրվել է «Հայաստանի սովետական հանրագիտարան»-ին:

Որպես առաջին փորձ՝ ներկա «Կենսագրական հանրագիտարան»-ը, հարկավ, կունենա թերություններ՝ որոշ անճշտություններ, բացթողումներ ու վրիպակներ: Խմբագրական խորհուրդը սիրով կընդունի արված դիտողություններն ու առաջարկությունները. դրանք, անշուշտ, հաշվի կառնվեն հետագա հրատարակություններում:

ԵՊՀ ռեկտոր՝ Ա.Հ.Սիմոնյան

ՍԱՐԳՍՅԱՆ ՍԵՐԺ ԱԶԱՏԻ

Հայաստանի Հանրապետության Նախագահ,
Երևանի պետական համալսարանի
խորհրդի նախագահ

ԵՊՀ
ՌԵԿՏՈՐՆԵՐ

ՂԱՄԲԱՐՅԱՆ ՅՈՒՐԻ ՍՏԵՓԱՆԻ

Իրավաբան, պրոֆեսոր

Ծնվել է 1850թ. Թիֆլիսում: Միջնակարգ կրթությունն ստացել է ծննդավայրում: Այնուհետև ավարտել է Մոսկվայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը և 1884թ. դարձել նույն համալսարանի պրոֆեսոր՝ անընդմեջ պաշտոնավարելով մինչև 1899թ.:

Յու.Ղամբարյանը նշանավոր իրավաբան էր, իրավունքի տեսաբան: 1898-ին հրատարակել է "Гражданское право", "Вещное право" (կ.1-2, СПб.) աշխատությունը: 1899թ. լույս տեսած հասարակական-իրավաբանական գիտությունների ժողովածուի առաջին համարում տպագրվել է Յու.Ղամբարյանի "Право в его основных моментах" ուսումնասիրությունը: Մեծ արձագանք է գտել նաև 1910թ. նույն ժողովածուում հրատարակված "Свобода и ее гарантии" (т.1, СПб.) աշխատությունը: Նա «Գրանատ» հանրագիտական բառարանի խմբագրական խորհրդի անդամ էր:

1900թ. Յու.Ղամբարյանը եռանդուն մասնակցություն է ունեցել Փարիզում հումանիտար գիտությունների ռուսական բարձրագույն դպրոցի հիմնադրմանը, դասախոսել Բրյուսելի համալսարանում: 1906-1911թթ. եղել է Սանկտ Պետերբուրգի համալսարանի քաղաքացիական իրավունքի ամբիոնի վարիչ և մշակել ու հրատարակել է քաղաքացիական իրավունքի դասընթացը՝ "Курс гражданского права" (т.1, ч. общая, СПб., 1911) և այլ արժեքավոր աշխատություններ: Ռուսական աղբյուրներում նա հիշատակվում և մեծարվում է որպես Ռուսաստանի սոցիոլոգիական դպրոցի հիմնադիր: Վերջին շրջանում վերադարձել է Թիֆլիս և ղեկավարել Վրաստանի պոլիտեխնիկական ինստիտուտը:

1919թ. սոցիալ-քաղաքական ծանր պայմաններում ՀՀ կառավարությունը կարողացավ իրականացնել հայ մտավորականության դարավոր իղձը՝ ազգային համալսարան ունենալու գաղափարը: Համալսարանի կազմակերպիչ-ռեկտոր առաջադրվեց գիտության մեծ երախտավոր, գիտական կյանքի նշանակալի ուղի անցած Յու.Ղամբարյանը: Չնայած պատկառելի

տարիքին՝ նա այդ խիստ դժվարին ու պատասխանատու գործում դրսևորում է մեծ կամք ու տոկունություն:

1920թ. հունվարի 31-ին տեղի է ունենում համալսարանի բացումը Ալեքսանդրապոլում: Բացման արարողության ժամանակ հանդես է գալիս ռեկտոր Յու.Ղամբարյանը: Նրա հակիրճ, բայց խիստ հագեցած ու տպավորիչ խոսքը սոսկ հավուր պատշաճի ասված ողջույնի տոնական մաղթանք չէր, այլ համալսարանի հասարակական դերի ու կոչման, գիտության կաճառի մասին ծրագրային ելույթ:

Յու.Ղամբարյանը Հայաստանում աշխատեց 1919թ. հուլիսից մինչև 1920թ. դեկտեմբերը: Այդ կարճ ժամանակում նա ահռելի գործ կատարեց՝ լուծելով նորաբաց համալսարանի առանցքային հիմնահարցերը. կարողացավ ապահովել համալսարանի գիտական ներուժը, հավաքագրել հիմնադիր պրոֆեսորներին, ստեղծել բարձրորակ աշխատակազմ, որը կարող էր պատիվ բերել ցանկացած առաջնակարգ համալսարանի: Նա հանրապետության արտաքին գործոց նախարարության միջոցով դիմեց Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչներին Ամերիկայում, Անգլիայում, Ֆրանսիայում, Իտալիայում, Կ.Պոլսում, Ավստրիայում ու Պարսկաստանում՝ կազմակերպել կամավոր նվիրատվությունների հանգանակում և համալսարանի գրադարանի համար ձեռք բերել գրքեր թե՛ գիտական հիմնարկներից և թե՛ մասնավոր անձանցից:

1920թ. նոյեմբերի 29-ին Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո փոխվեցին համալսարանի դիմագիծն ու ծրագրերը, և նախկին աշխատակազմը ռեկտորի հետ միասին ազատ արձակվեց: Յու.Ղամբարյանն ստիպված էր վերադառնալ Թիֆլիս: Այդ պահից, ցավոք, պատմությունը լռում է նրա մասին...

Համալսարանի առաջին ռեկտորը տասնամյակների հեռվից ներկայանում է ոչ միայն որպես համաեվրոպական ճանաչում ունեցող մեծ գիտնական, այլև իր հայրենիքի ճակատագրով խորապես մտահոգված մտավորական և իրավամբ պետք է դասվի հայոց մեծերի շարքում:

Յու.Ղամբարյանի բրոնզաձույլ կիսանդրին ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի նախասրահում խորհրդանշում է ականավոր գիտնական-մանկավարժի դերը համալսարանի հիմնադրման և կայացման գործում:

Վախճանվել է 1926թ. Լենինգրադում:



ՄԱՆԱՆԴՅԱՆ ՀԱԿՈԲ ՀԱՄԱՍԱՍՊԻ

Պատմաբան, բանասեր, աղբյուրագետ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ԽՍՀՄ ԳԱ և ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1873թ. նոյեմբերի 22-ին Ախալցխայում: Սկզբնական կրթությունն ստացել է 1880-1883թթ. ծննդավայրի Կարապետյան վարժարանում: 1883-1893թթ. սովորել է Թիֆլիսի I գիմնազիայում, 1893-1897թթ.՝ Ենայի, Լայպցիգի և Ստրասբուրգի համալսարաններում և ստացել փիլիսոփայության դոկտորի աստիճան: 1898թ. ավարտել է Սանկտ Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների, իսկ 1909թ. Դորպատի համալսարանի իրավաբանական ֆակուլտետները:

1900-1905թթ. Հ.Մանանդյանը դասավանդել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, 1905-1907թթ.՝ Թիֆլիսի առաջին և երկրորդ արական գիմնազիաներում, 1906-1907թթ. Ներսիսյան դպրոցում, 1911-1913թթ. Բաքվի ժողովրդական համալսարանում և 1915-1919թթ՝ առևտրական դպրոցում: 1919թ. դեկտեմբերին հրավիրվել է ԵՊՀ, նշանակվել պատմալեզվագրական ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, 1921-1922թթ. ռեկտոր, 1921-1923թթ.՝ արևելագիտության և պատմագրական ֆակուլտետների դեկան, 1921-1925թթ.՝ հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչ, 1925-1931թթ. նույն ամբիոնի պրոֆեսոր:

1925թ. Հ.Մանանդյանին շնորհվել է պրոֆեսորի կոչում, 1938թ. պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: 1925թ. ընտրվել է Հայաստանի գիտության և արվեստի ինստիտուտի անդամ, 1939թ.՝ ԽՍՀՄ ԳԱ և 1943թ. ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս:

ԵՊՀ-ում նա առաջինն է դասավանդել հայ ժողովրդի հին և միջնադարյան պատմություն: 1931թ. նա ընդհատել է մանկավարժական աշխատանքը և զբաղվել միայն գիտական գործունեությամբ:

Հ.Մանանդյանը հայ պատմագիտության ականավոր ներկայացուցիչներից է: Հեղինակ է հայերեն, ռուսերեն և գերմաներեն ավելի քան 150 աշխատությունների՝ նվիրված հայոց հին և միջնադարյան պատմությանն ու բանասիրությանը, պատմական աշխարհագրությանը, չափագիտությանն ու մշակույթին: Զբաղվել է հունական իմաստասիրական երկերի հայերեն թարգմանություններ, հունաբան դպրոցի գործունեության, հատկապես Դավիթ Անհաղթի իմաստասիրական ժառանգության ուսում-

նասիրությամբ: Այս բնագավառում հայագիտական մնայուն արժեք է «Հունաբան դպրոցը և նրա զարգացման շրջանները» (Վիեննա, 1928) ուսումնասիրությունը: Հայ պատմագիտական մտքի մնայուն գործերից են հին և միջնադարյան Հայաստանի հասարակական-տնտեսական հարաբերություններին նվիրված «Հայաստանի առևտրի և քաղաքների մասին» (ռուս., Եր., 1930, 1954, 1985), «Ֆեոդալիզմը հին Հայաստանում» (Եր., 1934, 1981), «Կշիռները և չափերը հնագույն հայ աղբյուրներում» (Եր., 1930, 1985), «Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները» (Եր., 1936, 1985), «Տիգրան Բ և Հռոմը» (Եր., 1940, 1972, 1977, ռուս. 1943, ֆրանս. 1963) և այլ մենագրություններ:

Ձեռնարկել է «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության» բազմահատոր աշխատության ստեղծումը նպատակ ունենալով շարադրել Հայաստանի մ.թ.ա.VI-մ.թ.XVI դարերի ամբողջական պատմությունը (Հ. I-III, 1945, 1952, 1957, նաև՝ 1977, 1978), որը, սակայն, մնացել է անավարտ: Դեռևս 1902թ., Հր.Աճառյանի աշխատակցությամբ, հրատարակել է XII-XIX դարերի հայկական վկայաբանական գրականության հայտնի բոլոր բնագրերը (Հ. I-II), գիտական հրատարակության է պատրաստել հին հունական իմաստասերների (Նոնոս, Էլիաս, Ձենոն Ստոիկ, Արիստոտել և այլք) երկերի հայերեն թարգմանությունների բնագրերը:

1935թ. Հ.Մանանդյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով, բազմաթիվ մեդալներով, պատվոգրերով:

Հ.Մանանդյանի բրոնզաձույլ կիսանդրին ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի նախասրահում խորհրդանշում է ականավոր գիտնական-մանկավարժի դերը համալսարանի հիմնադրման, կայացման և համալսարանական գիտության զարգացման գործում:

Վախճանվել է 1952թ. փետրվարի 4-ին Երևանում:

ԶԱՎՐԻՅԱՆ ԴԱՎԻԹ ՔՐԻՍՏԱՓՈՐԻ

Քիմիկոս, պրոֆեսոր,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1889թ. հունիսի 23-ին Թիֆլիսում: Միջնակարգ կրթությունն ստացել է ծննդավայրում, իսկ բարձրագույնը Սանկտ Պետերբուրգի համալսարանում, որտեղ աշակերտել է Դ.Մենդելեևին: Դեռևս համալսարանում ուսանելիս Զավրիյանը մեկնել է արտասահման և գիտական հետազոտություններ կատարել Փարիզի համալսարանում: Ավարտելուց հետո աշխատանքի է անցել Պետերբուրգի ճանապարհաշինարարական ինստիտուտում որպես լաբորատորիայի վարիչ և անօրգանական քիմիայի դասախոս ու շարունակել զբաղվել գիտահետազոտական աշխատանքով: Դ.Զավրիանը հիմնականում զբաղվել է անօրգանական քիմիայով, սակայն նրան հետաքրքրել են նաև ֆիզիկական քիմիայի, քիմիական տեխնոլոգիայի, նչպես նաև նավթի երկրաբանությանը վերաբերող հարցեր: Բացի իր ուն մասնագիտությունից՝ նա զբաղվել է նաև հնագիտության ու լեզաբանության հարցերով:

1921թ. Դ.Զավրիյանը Թիֆլիսից փոխադրվել է Երևան և նշանակվել ՊՀ տեխնիկական (բնագիտական) ֆակուլտետի դեկան: Նա մեծ աշխատանք է կատարել այդ ֆակուլտետի համար դասախոսական կադրեր հաաքադրելու, ինչպես և լաբորատոր սարքավորումներ ձեռք բերելու ուղությամբ: 1921-ի վերջերին և 1922-ի սկզբին մի քանի ամիս եղել է ԵՊՀ եկտոր, ապա համալսարանի գործերով մեկնել Մոսկվա ու Պետերբուրգ չի վերադարձել: 1922թ. գարնանից աշխատանքի է անցել Թիֆլիսի ճապարհաշինարարական ինստիտուտում որպես անօրգանական քիմիայի մբիոնի վարիչ: Իր գիտական գործունեության հետագա շրջանում նա երտ կապերի մեջ է եղել ԵՊՀ-ի, Հայաստանի մյուս բարձրագույն ուումնական հաստատությունների և գիտությունների ակադեմիայի հետ:

1939թ. Դ.Զավրիյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման:

Վախճանվել է 1957թ. օգոստոսի 11-ին Թբիլիսիում:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱԿՈԲ ԳԱՐԵԳԻՆԻ

Քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1875թ. դեկտեմբերի 7-ին Շուշիում: Տեղի թեմական դպրոցն ավարտելուց հետո ուսումը շարունակել է Բեռլինի համալսարանում: 1903թ. Հայդելբերգի համալսարանում պաշտպանել է ատենախոսություն և ստացել քիմիական գիտությունների դոկտորի աստիճան: Վերադառնալով Շուշի՝ 1904-1907թթ. քիմիա է դասավանդել տեղի դպրոցներում: Այնուհետև Ստրասբուրգի ու Բեռլինի համալսարաններում զբաղվել է ֆիզիկական քիմիայի ու մանրէաբանության ուսումնասիրությամբ:

1907-1920թթ. Հ.Հովհաննիսյանը Բաքվում ղեկավարել է քիմիա-մանրէաբանական լաբորատորիան: 1917թ. նա ընդունվել է կոմկուսի շարքերը, դարձել եռանդուն քաղաքական գործիչ: 1918թ. եղել է Բաքվի կոմունայում փախստականների գործերի կոմիսար: 1920-1921թթ. աշխատել է Շուշիում և Դիլիջանում, 1921թ.՝ փոխադրվել Երևան և աշխատել ժողկոմխորհում:

1922-1930թթ. Հ.Հովհաննիսյանը եղել է ԵՊՀ ռեկտոր: 1924թ. նա համալսարանում ստեղծել է կենսաքիմիայի ամբիոն, որը հետագայում նրա ղեկավարությամբ մինչև 1937թ. գործել է բժշկական ինստիտուտում: 1925թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1930-1936թթ. աշխատել է որպես բժշկական ինստիտուտի տնօրեն: 1936թ. սեպտեմբերին նշանակվել է ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի կենդանաբանական ինստիտուտի տնօրեն:

Հ.Հովհաննիսյանի գիտական աշխատանքներից հատկապես արժեքավոր են C վիտամինի կառուցվածքի վերաբերյալ ուսումնասիրությունները: Հեղինակ է նաև հրապարակախոսական բազմաթիվ հոդվածների: Բժշկական ինստիտուտի, նրա ամբիոնների և կլինիկաների կազմակերպման, դրանց ամրապնդման և նույնիսկ ինստիտուտի ժամանակակից շենքի կառուցման աշխատանքները սերտորեն կապված են Հ.Հովհաննիսյանի անվան հետ:

Հ.Հովհաննիսյանը գործուն մասնակցություն է ունեցել Հայաստանում քիմիական արդյունաբերության և գիտության զարգացման խնդիրների մշակմանը, աճեցրել բազմաթիվ կադրեր:

Նա բազմիցս եղել է Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմի վերստուգիչ հանձնաժողովի, ինչպես և Հայաստանի Կենտգործկոմի անդամ:

1935թ. արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման:

Հ.Հովհաննիսյանը ստալինյան բռնարարքների զոհերից է: Նրա գիտական և հասարակական գործունեությունն ընդհատվել է 1937թ.:

Վախճանվել է 1941թ. դեկտեմբերի 22-ին աքսորավայրում: Արդարացվել է հետմահու:

ՍԱՆԹՐՈՍՅԱՆ ՄՈՒՇԵՂ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1894թ. հունվարի 1-ին Դիլիջանում: Սկզբնական կրթությունն ստացել է տեղի ծխական դպրոցում, 1917թ. ավարտել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանի լսարանային բաժինը: 1920-1922թթ. աշխատել է Դիլիջանի շրջանային լուսաբաժնի վարիչ, շրջանային գործադիր կոմիտեի նախագահի տեղակալ, ապա՝ նախագահ:

1922-1926թթ. Մ.Սանթրոսյանը սովորել է Մոսկվայի Ն.Կրուպսկայայի անվան կոմունիստական դաստիարակության ակադեմիայում: 1926թ. նշանակվել է ԵՊՀ մանկավարժության ֆակուլտետի դեկան: Շուրջ 20 տարի ղեկավարել է մանկավարժության և հոգեբանության ամբիոնը: 1930-1931թթ. նա եղել է ԵՊՀ ռեկտոր, իսկ 1934թ. նշանակվել Երևանի մանկավարժական ինստիտուտի տնօրեն, 1937թ. ուսուցիչների վերապատրաստման, իսկ 1941-ին դպրոցների գիտահետազոտական ինստիտուտների տնօրեն:

1937թ. Մ.Սանթրոսյանին շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1948թ. ատենախոսության պաշտպանությամբ ստացել է մանկավարժական գիտությունների դոկտորի աստիճան: 1957թ. ընտրվել է ՌԽՖՍՀ մանկավարժական գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ:

Գրել է մի շարք մենագրություններ և գիտական հոդվածներ՝ նվիրված հայ մանկավարժության ու դպրոցի պատմությանը: Առանձնապես կարևոր են՝ «Հայ մեծ լուսավորիչ-մանկավարժ Խ.Աբովյանը» (Եր., 1953), «Մեսրոպ Թաղիադյանը մանկավարժ» (Եր., 1959), «Արևելահայ դպրոցը 19-րդ դարի 1-ին կեսին» (Եր., 1964) աշխատությունները:

1945թ. Մ.Սանթրոսյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման:

Վախճանվել է 1972թ. դեկտեմբերի 14-ին Երևանում:

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՀԱԿ ՍԻՄՈՆԻ

Մանկավարժ, պրոֆեսոր

Ծնվել է 1892թ. դեկտեմբերի 25-ին Զանգեզուրի Տեղ գյուղում: Նախնական կրթությունն ստացել է գյուղի ծխական դպրոցում, իսկ միջնակարգը՝ Գորիսի ուսուցչական սեմինարիայում, որն ավարտելուց հետո մի քանի տարի ուսուցչություն է արել Զանգեզուրի գյուղերում:

1920թ. Ս.Հայրապետյանն ընդունվել է կոմունիստական կուսակցության շարքերը և մասնակցել Զանգեզուրի հեղափոխական շարժումներին: 1921թ. աշխատել է որպես Զանգեզուրի գավառային կոմիտեի նախագահ: 1923թ. գործուղվել է Մոսկվա՝ ուսանելու Ն.Կրուպսկայայի անվան կոմունիստական դաստիարակության ակադեմիայում: 1928թ. աշխատել է ՀԽՍՀ լուսժողկոմատում, ապա վարել Երևանի գավառային լուսավորության բաժնի, Լենինականի և Ապարանի շրջանային լուսավորության բաժնի վարիչի պաշտոնները:

1931-1933թթ. Ս.Հայրապետյանը եղել է ԵՊՀ (այդ թվականներին կոչվում էր մանկավարժական ինստիտուտ) ռեկտոր: 1933թ. ստացել է պրոֆեսորի կոչում և նշանակվել հայկական մանկավարժական ինստիտուտի պատմագրական ֆակուլտետի դեկան: 1936-ից աշխատել է որպես Երևանի ռուսական մանկավարժական ինստիտուտի փոխտնօրեն և մանկավարժության ամբիոնի վարիչ:

Վախճանվել է 1943թ. մայիսի 11-ին Երևանում:

ՄՈՒՇԵՂՅԱՆ ՏԻԳՐԱՆ ՊԵՏՐՈՍԻ

Ֆիզիոլոգ

Ծնվել է 1886թ. օգոստոսի 20-ին Վաղարշապատում: 1906թ. ավարտելով Երևանի արական գիմնազիան ընդունվել է Սանկտ Պետերբուրգի համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի կենսաբանության բաժինը, որն ավարտել է 1912թ. և աշխատանքի անցել նույն բուհի ֆիզիոլոգիայի ամբիոնում:

1919թ. Տ.Մուշեղյանը տեղափոխվել է Երևան և աշխատանքի անցել արական գիմնազիայում որպես ուսմասվար, միաժամանակ՝ կենսաբանության և մաթեմատիկայի դասախոս: 1921թ. նա հրավիրվել է ԵՊՀ՝ դասավանդելու «Կենդանիների ֆիզիոլոգիա», «Բնության դիալեկտիկա», «Բնագիտության դասավանդման մեթոդիկա» դասընթացները: 1922թ. նրա ջանքերով ԵՊՀ-ում կազմակերպվել են կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնը և լաբորատորիան:

1922-1935թթ. նա ղեկավարել է ֆիզիոլոգիայի ամբիոնը: 1933-ից մինչև կյանքի վերջը եղել է ԵՊՀ ռեկտոր՝ միաժամանակ վարելով ՀԽՍՀ մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի բնագիտական բաժանմունքի նախագահի պարտականությունները:

Մեծ է Տ.Մուշեղյանի դերը դպրոցական ուսումնական պլանների, ծրագրերի և դասագրքերի ստեղծման, ինչպես նաև մանկավարժական կադրերի պատրաստման գործում:

Զբաղվել է նաև գիտական աշխատանքով: Նա ցորենից, գարուց, բրնձից և կարտոֆիլից ստացել է ինսուլինանման նյութեր, որոնց ազդեցությունն ուսումնասիրել է կենդանիների և բույսերի վրա:

Վախճանվել է 1935թ. ապրիլի 22-ին Երևանում:

ԵՊՀ ֆիզիոլոգիայի ամբիոնը 1973-ից կրում է Տ.Մուշեղյանի անունը:

ԿՈՍՏԱՆՑԱՆ ՎՌԱՄ ՔՐԻՍՏԱՓՈՐԻ

Տնտեսագետ, պրոֆեսոր

Ծնվել է 1899թ. դեկտեմբերի 14-ին Վաղարշապատում: Սովորել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, ապա՝ Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի տնտեսական իրավունքի ֆակուլտետում և ԽՍՀՄ պետպլանին առընթեր ասպիրանտուրայում: 1920թ. Վ.Կոստանյանը դարձել է կոմկուսի անդամ: Մայիսյան ապստամբության օրերին բանտարկվել է:

Հայաստանում խորհրդային կարգեր հաստատելուց հետո նա եղել է Էջմիածնի գավառային հեղափոխական կոմիտեի անդամ ու հեղկոմի քարտուղար, այնուհետև Էջմիածնի բանդյուղտնտեսչության վարիչ: 1925թ. տեղափոխվել է Երևան, աշխատել որ-

պես Հայաստանի ժողկոմխորհի գործերի կառավարիչ, ապա՝ ֆինժողկոմատի կոլեգիայի անդամ ու ֆինանսական վերահսկողության պետ: 1927թ. Մոսկվայում եղել է ԽՍՀՄ ժողկոմխորհին առընթեր Անդրֆեդերացիայի մշտական ներկայացուցչության ֆինանսական հարցերի գծով խորհրդատու:

ԵՊՀ-ում Վ.Կոստանյանը սկսել է աշխատել 1928-ից. սկզբում դասավանդել է ֆինանսական, ապա՝ տնտեսական քաղաքականության դասընթացներ, այնուհետև եղել է տնտեսական քաղաքականության ու պլանավորման ամբիոնի վարիչ: Դասավանդել է նաև Հայկական մանկավարժական և կոոպերատիվ-տնտեսագիտական ինստիտուտներում:

1935թ. Վ.Կոստանյանին շնորհվել է պրոֆեսորի կոչում: Դասախոսական աշխատանքին զուգընթաց նա եղել է Հայաստանի կենտգործկոմի և Երևանի քաղխորհրդի անդամ, ժողկոմխորհի անդամ և ֆինանսական հարցերի գծով խորհրդատու, լուսժողկոմատի կոլեգիայի անդամ ու գիտության բաժանմունքի վարիչ և այլն: 1935թ. հուլիսից մինչև 1937թ. հունվարը եղել է ԵՊՀ ռեկտոր:

Հեղինակ է 16 գիտական աշխատությունների, որոնք նվիրված են տնտեսական քաղաքականության ու սոցիալիստական շինարարության հարցերին: Նա խմբագրել է Լենինի երկերի երրորդ հատորի հայերեն թարգմանությունը, ինչպես և տնտեսագիտական բուհական մի շարք դասագրքեր:

1937թ. Վ.Կոստանյանը ձերբակալվել է խորհրդային իշխանության դեմ ակտիվ պայքար տանելու շինծու մեղադրանքով և աքսորվել: 1941թ. նոյեմբերի 23-ին վախճանվել է աքսորավայրում: 1955թ. արդարացվել է հետմահու:

Ծննդյան 70-ամյակի կապակցությամբ Էջմիածին քաղաքի փողոցներից մեկը կոչվել է Վռամ Կոստանյանի անունով:

ԵՆԳԻԲԱՐՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ ԱՎԱՆԵՍԻ

Կուսակցական-պետական գործիչ

Ծնվել է 1902թ. օգոստոսի 30-ին Աշտարակի շրջանի Բյուրական գյուղում: Ավարտել է Երևանի ռուսական արական գիմնազիան: 1919թ. մասնակցել է «Սպարտակ» կոմունիստական երիտասարդական կազմակերպության ժողովներին և նույն թվականին ընդունվել կոմունիստական կուսակցության շարքերը:

1920թ. մայիսմեկյան հակակառավարական ցույցին մասնակցելու համար Մ.Ենգիբարյանը բանտարկվել է և դատարանի որոշմամբ արտաքսվել Հայաստանից: Մեկնել է Թիֆլիս, ապա՝ Բաքու, այնուհետև գործուղվել է ուսանելու Մոսկվայի Յա.Սվերդլովի անվան կոմունիստական ակադեմիայում: 1921թ. ավարտելով ինն ամսյա դասընթացը նշանակվել է ՀԿ(բ)Կ Կենտկոմի տրանսպորտային ենթաբաժնի վարիչ: Այնուհետև նշանակվել է Նոր Բայազետի (այժմ՝ Գավառ) կուսակցական գավառային կոմիտեի քարտուղար, իսկ 1923թ. ՀԿԿ Կենտկոմի կազմակերպչական բաժնի վարիչի տեղակալ: 1923-1926թթ. սովորել է Մոսկվայի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետում և ավարտելուց հետո նշանակվել ՀԿԿ ԿԿ կազմբաժնի վարիչի տեղակալ, ապա՝ Երևանի քաղկոմի երկրորդ քարտուղար: 1929թ. գործուղվել է ուսանելու Մոսկվայի Կարմիր պրոֆեսուրայի համաշխարհային տնտեսության և համաշխարհային քաղաքականության ինստիտուտում, որն ավարտելուց հետո, ատենախոսության համար նյութեր հավաքելու նպատակով, 1933թ. վեց ամսով գործուղվել է Գերմանիա, որտեղից վերադառնալով՝ Մ.Ենգիբարյանը նշանակվել է Լենինականի մեքենատրակտորային կայանի քաղբաժնի պետ, ապա՝ Հողժողկոմատի ՄՏ կայանների քաղվարչության պետ: 1935թ. նա աշխատել է ՀԿ(բ)Կ Կենտկոմի արդյունաբերական-տրանսպորտային բաժնի, ապա՝ գյուղատնտեսական բաժնի վարիչ:

1936թ. Մ.Ենգիբարյանը պարգևատրվել է Լենինի շքանշանով:

1937թ. հունվարի 17-ին Մ.Ենգիբարյանը նշանակվել է ԵՊՀ ռեկտոր, սակայն ընդամենը երեք ամիս անց նրան ազատել են աշխատանքից: Նույն թվականի դեկտեմբերի 28-ին ՀԽՍՀ գերագույն դատարանի հատուկ կոլեգիայի որոշմամբ, որպես «ժողովրդի թշնամի», նա դատապարտվել է գնդակահարության, որն ի կատար է ածվել հենց նույն օրը: ՀԽՍՀ դատախազությունը 1955թ. սեպտեմբերի 22-ին կարճել է Մ.Ենգիբարյանի գործը և արդարացրել նրան:

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ՀԵՆՐԻ (ՀԱՐՈՒԹՅՈՒՆ) ԳԱԲՐԻԵԼԻ

Փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1903թ. նոյեմբերի 22-ին Վանի նահանգի Գավաշ գավառի Պատականց գյուղում: Ավարտել է Երևանի թեմական դպրոցը, 1928թ. ԵՊՀ իրավատնտեսագիտական ֆակուլտետը և ստացել տնտեսագետի որակավորում: 1930-1933թթ. սովորել է Մոսկվայի Կարմիր պրոֆեսուրայի ինստիտուտում և ստացել փիլիսոփայության պատմաբանի որակավորում:

1933թ. Հ.Գաբրիելյանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն:

1922թ. եղել է կոմերտմիության Ղամարլուի շրջանային կոմիտեի, այնուհետև Էջմիածնի գավառային կոմիտեի քարտուղար, Հայաստանի կոմերիտմիության կենտկոմի մամուլի բաժնի վարիչ, 1923-1933թթ.՝ «Ավանգարդ» թերթի խմբագիր, 1933-1935թթ.՝ Լենինականի ՄՏԿ բաժնի պետի տեղակալ, 1935-1936թթ. Երևանի մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի տնօրեն, ՀԿԿ ԿԿ կուլտուրայի բաժնի վարիչի տեղակալ, կուսդպրոցի վարիչ, պատմության և գրականության ինստիտուտի տնօրեն, բուհերի վարչության պետ, ԵՊՀ փիլիսոփայության ամբիոնի վարիչ, Հայաստանի գրողների միության քարտուղար, «Գրական թերթի» խմբագիր: Հ.Գաբրիելյանը 1936թ. արժանացել է պրոֆեսորի կոչման: 1937թ. ապրիլ-օգոստոս ամիսներին եղել է ԵՊՀ ռեկտոր, բայց տարին ավարտել է բանտում՝ ԽՄԿԿ շարքերից հեռացված:

1945թ. Հ.Գաբրիելյանը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1941-1948թթ. եղել է ԵՊՀ փիլիսոփայության ամբիոնի պրոֆեսոր, 1948-1955թթ. նախ՝ Վիլնյուսի համալսարանի փիլիսոփայության ամբիոնի վարիչ, ապա՝ նույն ամբիոնի պրոֆեսոր: 1955-1970թթ. եղել է ԵՊՀ փիլիսոփայության ամբիոնի վարիչ, 1970-1978թթ. փիլիսոփայության պատմության և գիտական աթեիզմի ամբիոնի, այնուհետև՝ փիլիսոփայության պատմության ամբիոնի վարիչ, 1978-1981թթ. նույն ամբիոնի պրոֆեսոր:

Հ.Գաբրիելյանը հայագիտության կարևորագույն բնագավառներից մեկի՝ հայ փիլիսոփայության պատմության ուսումնասիրության սկզբնավորողներից է: Հեղինակ է 100-ից ավելի մենագրությունների, գրքույկնե-

րի ու գիտական հոդվածների: Դրանցից առավել հիշատակելի են «Հեգելի զարգացման ուսմունքը և մարքսիզմ-լենինիզմը» (Եր., 1934), «Գիտությունը և նրա դերը» (ռուս., Եր., 1956), «Մարքսիստական տրամաբանությունը որպես դիալեկտիկա և իմացության տեսություն» (ռուս., Եր., 1963), «Հայ փիլիսոփայական մտքի պատմություն», հ. 1-4 (Եր., 1956-1965, մեկ գրքով՝ ռուս., 1972 և հայերեն՝ 1976), «Դավիթ Անհաղթ» (Եր., 1980), «Փիլիսոփայության հանգուցային հիմնահարցերը միջնադարյան հայ փիլիսոփաների մոտ» (ռուս., Եր., 1981) և այլն:

Հ.Գաբրիելյանը մեծ վաստակ ունի փիլիսոփայական կադրերի պատրաստման գործում՝ երկար տարիներ եղել է փիլիսոփայության գծով գիտական աստիճաններ շնորհող խորհրդի նախագահ, ղեկավարել բազմաթիվ ասպիրանտների, նպաստել ԵՊՀ-ում փիլիսոփայության բաժնի, ապա՝ ֆակուլտետի ստեղծմանը:

1963թ. Հ.Գաբրիելյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով:

Վախճանվել է 1981թ. ապրիլի 10-ին Երևանում:

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ ԱՂԱՖՈՆԻ

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս

Ծնվել է 1904թ. փետրվարի 12-ին Կապանի շրջանի Կավարտ գյուղում: Երկու տարի գյուղական դպրոցում սովորելուց հետո 1912թ. ուսումը շարունակել է Շուշիի ռեալական դպրոցում:

1921-1928թթ. կոմերիտական ղեկավար աշխատանք է կատարել Կապանի, Լենինականի (այժմ՝ Գյումրի), Երևանի գավառային և քաղաքային կոմիտեներում: Եղել է ԼԿԵՄ կենտկոմի նախագահության և Անդրերկրկոմի բյուրոյի անդամ: 1928-1929թթ. սովորել է Մոսկվայի Գ.Պլեխանովի անվան ժողովրդական տնտեսության ինստիտուտում, իսկ 1933-1936թթ.՝ Կարմիր պրոֆեսուրայի ագրարային ինստիտուտում: 1929-1937թթ. կատարել է կուսակցական ղեկավար աշխատանք: Եղել է շրջկոմի առաջին քարտուղար Ղուրդուղուլու (այժմ՝ Արմավիր), Միկոյանի (այժմ՝ Եղեգնաձոր) և Երևանի Կիրովյան շրջաննե-

րում: 1926-1937թթ. ՀԿԿ կենտկոմի անդամ էր:

Ա.Արզումանյանը 1937թ. օգոստոսի 7-ին նշանակվել է ԵՊՀ ռեկտոր, բայց ընդամենը մեկուկես ամիս անց ազգայնականներին և հատկապես «ժողովրդի թշնամի, հայտնի ազգայնական» Աղասի Խանջյանին պաշտպանելու մեղադրանքով ազատել են պաշտոնից, գործը հանձնել ՆԳ մարմիններին, իսկ իրեն բանտարկել: Սակայն նա կարողացել է ապացուցել իր անմեղությունը և կարճ ժամանակ անց ազատվել բանտից:

Հայրենական պատերազմի առաջին իսկ օրերից նա կամավոր մեկնել է բանակ, ծառայել մինչև պատերազմի ավարտը:

1946-1952թթ. Ա.Արզումանյանն աշխատել է Բաքվի Ս.Կիրովի անվան պետական համալսարանում որպես դեկան, ապա՝ գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր: Այնուհետև փոխադրվել է Մոսկվա ու աշխատել որպես ԽՍՀՄ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտի սեկտորի վարիչ և տնօրենի տեղակալ: 1956թ. Ա.Արզումանյանին հանձնարարվել է ԽՍՀՄ ԳԱ համաշխարհային էկոնոմիկայի ու միջազգային հարաբերությունների ինստիտուտի կազմակերպումը, որի անփոփոխ տնօրենն էր մինչև կյանքի վերջը:

Ա.Արզումանյանը հեղինակ է շուրջ 100 գիտական աշխատությունների, որոնցից շատերը լույս են տեսել նաև օտար լեզուներով: Ուշագրավ են նրա «Տնտեսագիտական ընտիր երկեր» (Եր., 1971), «Кризис мирового капитализма на современном этапе» (М., 1960), «Борьба двух систем и мировое развитие» (М., 1964) աշխատությունները:

1958թ. Ա.Արզումանյանն ընտրվել է ԽՍՀՄ ԳԱ թղթակից անդամ, 1963-ին՝ ակադեմիկոս, էկոնոմիկայի բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար:

Նա եղել է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր, Սահմանադրական հանձնաժողովի ու Ազգությունների խորհրդի արտաքին գործերի հանձնաժողովի անդամ, խորհրդա-ամերիկյան ինստիտուտի փոխնախագահ, Խորհրդային մեծ հանրագիտարանի գիտական խորհրդի, խորհրդային ու օտարերկրյա մի շարք հրատարակությունների խմբագրական խորհուրդների անդամ:

Պարգևատրվել է Վ.Լենինի շքանշանով ու բազմաթիվ մեդալներով:

Ա.Արզումանյանը վախճանվել է 1965թ. հուլիսի 18-ին Մոսկվայում:

ԴԱԲԱՂՅԱՆ ՆՈՐԱՅՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ

Գրականագետ, պրոֆեսոր

Ծնվել է 1904թ. օգոստոսի 5-ին Վանում: 1914թ. հոր մահից հետո Դաբաղյանների ընտանիքը բնակություն է հաստատել Թիֆլիսում, այնուհետև տեղափոխվել Կարս, ապա՝ Երևան: Նյութական ծանր վիճակի պատճառով մայրը տղային հանձնել է որբանոց:

1922թ. ավարտելով երկրորդ աստիճանի դպրոցը՝ Ն.Դաբաղյանն ընդունվել և 1925թ. ավարտել է ԵՊՀ պատմագրական ֆակուլտետը, իսկ 1932թ. Մոսկվայի Կարմիր պրոֆեսուրայի ինստիտուտը:

Խմբագրել է «Գրական դիրքերում» (1927-1930) և «Խորհրդային գրականություն» (1936-1937) ամսագրերը, «Գրական թերթը» (1930-1936): 1935-1937թթ. եղել է ՀԿԿ Կենտկոմի կուլտուրս բաժնի վարիչ:

1936թ. Ն.Դաբաղյանին շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1937թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին եղել է ԵՊՀ ռեկտոր: Ցավոք, երկրում մոլեգնող տեռորն ու քաղաքական հետապնդումները իրենց բացասական ազդեցությունն էին թողնում նաև կրթական համակարգի վրա: Այդ էր պատճառը, որ ի թիվս այլոց, Ն.Դաբաղյանին ևս հնարավորություն չընձեռվեց երկար աշխատելու այդ պաշտոնում:

Ն.Դաբաղյանը 1920-30-ականների գրական կյանքի աչքի ընկնող դեմքերից էր, Հայաստանի պրոլետարական գրողների ասոցիացիայի անդամ: Գռեհիկ սոցիոլոգիզմի դիրքերից պայքարել է Ե.Չարենցի, Ա.Բակունցի և մյուս նոյեմբերականների դեմ: Ե.Չարենցի արդարացումից հետո՝ 1954-ին, «Եղիշե Չարենց» գրքույկով ջանալով վերագնահատել հանճարեղ բանաստեղծին հետին թվով փորձել է սրբագրել իր և սերնդակիցների՝ ողբերգական հետևանքներով լի կոպիտ սխալներն ու մոլորությունները:

1940-1955թթ. Ն.Դաբաղյանը դասախոսել է ԵՊՀ-ում և Խ.Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտում: Պարբերական մամուլում հրատարակել է գրականագիտական, քննադատական հոդվածներ՝ նվիրված խորհրդային գրականության տեսության հարցերին: Նրա գրական, քննադատական առավել ուշագրավ աշխատություններն են՝ «Ինչ է սպեցիֆիզմը և ինչու են պայքարում նրա դեմ» (Եր., 1928), «Պլեխանովի էսթետիկական հայացքների մասին» (Եր., 1934):

Ն.Դաբաղյանը վախճանվել է 1955թ. հուլիսի 12-ին Երևանում:

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԿԱՄՍԱՐ ԱՐՇԱԿԻ

Պատմաբան

Ծնվել է 1900թ. հունվարի 3-ին Լոռու Ծաթեր գյուղում: Տնտեսական ծանր պայմանները հարկադրել են նրան վաստակի մեկնել Թիֆլիս և ինը տարի աշխատել որպես բանվոր:

Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո Կ.Առաքելյանը վերադարձել է հայրենիք, զբաղվել կոմերիտական աշխատանքով, միաժամանակ լրացրել կրթության պակասը:

1923թ. Կ.Առաքելյանն ընդունվել է ԵՊՀ պատմա-բանասիրական ֆակուլտետ: 1926թ. դարձել է կոմկուսի անդամ: 1927թ. ավարտելով ուսումնառությունը աշխատանքի է անցել ԵՊՀ-ում, ստանձնել ուսանողական գործադիր բյուրոյի քարտուղարի, իսկ այնուհետև կուսակցական կոմիտեի քարտուղարի պարտականությունները:

1930-1931թթ. Կ.Առաքելյանը կուսակցական աշխատանք է կատարել ՀԿԿ Ղամարլուի (հետագայում՝ Արտաշատի) շրջկոմում նախ՝ որպես ագիտ-պրոպագանդայի բաժնի վարիչ, ապա՝ նույն շրջկոմի առաջին քարտուղար: 1931թ. ընդունվել և 1936-ին ավարտել է Բաքվի մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտը: Վերադառնալով Երևան՝ կուսակցական ղեկավար պաշտոններ է զբաղեցրել ՀԿԿ կենտկոմի դպրոցական բաժնում:

1937թ. Կ.Առաքելյանը նշանակվել է ԵՊՀ ռեկտոր, սակայն 1938թ. սկզբներին ենթարկվել է բռնություններ և աքսորվել Սիբիր:

1954թ. վերադառնալով աքսորից արդարացվել է, վերականգնվել են նրա բոլոր իրավունքները, բայց քայքայված առողջության պատճառով չկարողանալով աշխատել՝ անցել է թոշակի:

Կ.Առաքելյանը վախճանվել է 1964թ. հունիսի 8-ին Երևանում:

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ ԲԱԽՇԻ

Մաթեմատիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1902թ. սեպտեմբերի 10-ին Գորիսում: Միջնակարգ կրթությունը ստացել է ծննդավայրում: 1929թ. ավարտել է ԵՊՀ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը: 1930թ. ընդունվել և 1934-ին ավարտել է Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի ասպիրանտուրան:

1934-1936թթ. եղել է ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի դեկան՝ միաժամանակ ԵՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր: 1938թ. նրան շնորհվել է դոցենտի կոչում: 1938-1941թթ. Գ.Պետրոսյանը ԵՊՀ ռեկտորն էր, կատարում էր նաև տեսական ֆիզիկայի ամբիոնի վարիչի պարտականությունները:

1941թ. Գ.Պետրոսյանը կամավոր մեկնել է ռազմաճակատ, վիրավորվել, վերադարձել Երևան և աշխատանքի անցել Հայաստանի գիտությունների նորաստեղծ ակադեմիայում որպես նախագահության գիտական-քարտուղար՝ այդ պաշտոնում աշխատելով մինչև 1949թ.:

1949-1957թթ. Գ.Պետրոսյանը կրկին ստանձնել է ԵՊՀ ռեկտորի պաշտոնը: Նրա ջանքերով համալսարանում հիմնադրվել է միջազգային հարաբերությունների ֆակուլտետ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների պատմության ամբիոն, որը նա ղեկավարել է մինչև 1956թ.: 1955թ. Գ.Պետրոսյանը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1964թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1965թ. ընտրվել է բնագիտության ու տեխնիկայի պատմության միջազգային ակադեմիայի թղթակից անդամ:

Գիտության պատմության խնդիրներով Գ.Պետրոսյանն զբաղվել է դեռևս 1940-ականներից: Նրա աշխատանքները հիմնականում վերաբերում են մաթեմատիկայի, մասնավորապես հայ հին և միջնադարյան մաթեմատիկայի պատմությանը: Նա ուսումնասիրել և արժևորել է հին ու միջին դարերի հայ մաթեմատիկոսների աշխատությունները: Դրա արգասիքն են «Մաթեմատիկան Հայաստանում հին և միջին դարերում» (Եր., 1959), «Միջնադարյան Հայաստանի մաթեմատիկայի պատմությունից (հոդվածներ և հրապարակումներ)» (Եր., 1986) հիմնարար աշխատությունները: Գ.Պետրոսյանը համահեղինակ է նաև «Անանիա Շիրակացու մատենագրությունը» (Եր., 1979) աշխատության, եղել է «Բնագիտու-

թյան և տեխնիկայի պատմությունը Հայաստանում» մատենաշարի հիմնադիրն ու գլխավոր խմբագիրը:

1938-1947 և 1951-1955թթ. ընտրվել է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի, իսկ 1954-1958թթ.՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր:

1967թ. Գ.Պետրոսյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով և բազմաթիվ մեդալներով:

Վախճանվել է 1997թ. դեկտեմբերի 12-ին Երևանում:

ԲՈՒՆԻԱԹՅԱՆ ՀՐԱՉՅԱ ԽԱՉԱՏՈՒՐԻ

Կենսաքիմիկոս, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1907թ. մայիսի 1-ին Նոր Բայազետում (այժմ՝ Գավառ): Ավարտել է տեղի թիվ 1 դպրոցը: 1930թ. ավարտելով ԵՊՀ բժշկական ֆակուլտետը աշխատել է նախ՝ որպես կենսաքիմիայի դասախոս, ապա՝ ղեկավարել Երևանի անասնաբուծական-անասնաբուժական ինստիտուտի, այնուհետև, ավելի քան երկու տասնամյակ, բժշկական ինստիտուտի կենսաքիմիայի ամբիոնը:

1937թ. Հ.Բունիաթյանը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, իսկ 1939թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1939-1941թթ. եղել է Երևանի բժշկական ինստիտուտի գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր, 1942-1946թթ. ԵՊՀ ռեկտոր: Այդ ծանր տարիներին Հ.Բունիաթյանը մեծապես աջակցել է Ալիխանյան եղբայրներին՝ 1942թ. հիմնելու տիեզերական ճառագայթների հետազոտման լաբորատորիա ԵՊՀ-ում և կայան՝ Արագածում, որոնց հիման վրա 1943թ. ստեղծվեց Ֆիզիկայի ինստիտուտը:

1943թ. Հ.Բունիաթյանն ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս և կենսաբանական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, այնուհետև ակադեմիայի ակադեմիկոս-քարտուղար և ապա՝ փոխնախագահ:

1943-ից նա ղեկավարել է նաև ՀԽՍՀ ԳԱ՝ Լ.Օրբելու անվան Ֆիզիոլոգիայի ինստիտուտի կենսաքիմիայի սեկտորը, իսկ 1961-ից մինչև կյանքի վերջը իր հիմնադրած ՀԽՍՀ ԳԱ կենսաքիմիայի ինստիտուտի տնօ-

րենն էր: Նրա գիտական գործունեության հիմնական ուղղություններն են՝ ուղեղի կենսաքիմիա, օքսիդացման պրոցեսներում և նյութափոխանակության նյարդային կարգավորման մեջ առանձին վիտամինների, ֆոսֆատիդների և կենսածին ամինների կենսաքիմիա: Հ.Բունիաթյանի հետազոտությունները հնարավորություն տվեցին կարևորել նիկոտինամիդ դինուկլեոտիդի մասնակցությունը ամինաթթուներից ամոնիակի գոյացման մեխանիզմում և նյութափոխանակության կարգավորման մեջ գամմակարագաթթվի դերը, պարզաբանել այդ ամինաթթվի կենսասինթեզի ու կատաբոլիզմի ուղիները, ուղեղում ամոնիակի գոյացման և չեզոքացման մեխանիզմի հարցերը, կատեխոլամինների ու ֆոսֆոլիպիդների կենսաքիմիական առանձնահատկությունները: Դրանցից շատերը դարձել են առանձին ուղղություններ:

Հ.Բունիաթյանը կենսաքիմիական գիտության հիմնադիրն է Հայաստանում:

Հեղինակ է շուրջ 250 գիտական աշխատությունների: Եղել է կենսաքիմիայի ինստիտուտի կողմից լույս ընծայված «Ուղեղի կենսաքիմիայի հարցերը» գիտական ժողովածուների խմբագիրը: ՀԽՍՀ ԳԱ և ԽՍՀՄ ԳԱ «Նեյրոքիմիա» միջազգային հանդեսի ստեղծումը նույնպես պայմանավորված էր Հ.Բունիաթյանի մեծ հեղինակությամբ:

Նրա ղեկավարությամբ ու խորհրդատվությամբ պաշտպանվել է թեկնածուական 50 և դոկտորական 16 ատենախոսություն:

Հ.Բունիաթյանի նախաձեռնությամբ Երևանում կազմակերպվել են միջազգային գիտաժողովներ՝ նվիրված կենսաքիմիայի, հատկապես նեյրոքիմիայի հրատապ խնդիրներին:

Հ.Բունիաթյանը երկար տարիներ ղեկավարել է Հանրապետության ֆիզիոլոգների, կենսաքիմիկոսների և դեղաբանների ընկերությունները, ակտիվորեն մասնակցել միջազգային կենսաքիմիական գիտաժողովների, զեկուցումներով հանդես եկել արտասահմանյան բազմաթիվ երկրների գիտական կենտրոններում, ընտրվել Գերմանիայի բնախույզների «Լեոպոլդինա» ակադեմիայի անդամ, նյարդաքիմիկոսների միջազգային ընկերության խորհրդի անդամ:

1940թ. Հ.Բունիաթյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է Լենինի, Հոկտեմբերյան հեղափոխության, Աշխատանքային կարմիր դրոշի (2) շքանշաններով:

Վախճանվել է 1981թ. մարտի 19-ին Երևանում:

1982-ից ՀԽՍՀ ԳԱ կենսաքիմիայի ինստիտուտը կոչվում է Հ.Բունիաթյանի անունով:

ՊՈՂՈՍՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳԵՎՈՐԳԻ

Հասարակական-քաղաքական գործիչ

Ծնվել է 1895թ. մարտի 25-ին Թիֆլիսում: 1916թ. Ներսիսյան դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Էջմիածնի Գևորգյան ճեմարան:

1917թ. փետրվարյան բուրժուադեմոկրատական հեղափոխությունից հետո նա Թիֆլիսում աշխատակցել է բոլշևիկյան կուսակցության Թիֆլիսի կոմիտեի օրգան «Բանվորի կռիվը» թերթին:

1921թ. Վրաստանում խորհրդային իշխանության հաստատումից հետո անցել է մանկավարժական և հասարակական-քաղաքական աշխատանքի: Մինչև 1924թ. վարել է 76-րդ աշխատանքային դպրոցի տեսչի պաշտոնը՝ համատեղությամբ աշխատելով նաև Թիֆլիսի ժողկրթբաժնում և ուսուցիչների արհմիությունում: Այնուհետև կուսակցական պաշտոններ է վարել Վրաստանի կոմունիստական կուսակցության Թիֆլիսի քաղաքային կոմիտեում, ապա՝ Վրաստանի կոմկուսի կենտկոմում, կուսակցության Անդրկովկասյան երկրկոմում և այլն: 1932-ից նա միաժամանակ խմբագրել է Վրաստանի կոմկուսի կենտկոմի օրգան «Պրոլետար» հայերեն օրաթերթը:

Վրաստանում ապրած տարիներին Հ.Պողոսյանը մասնակցել է Թիֆլիսի Հայ արվեստի տան աշխատանքներին և գլխավորել Վրաստանի գրողների միության հայկական բաժինը: Սկսած 1922թ.՝ նա մի քանի տարի եղել է Թիֆլիսի «Կարմիր ծիլեր» հայերեն մանկական ամսագրի խմբագիրը: 1920-ական թթ. վերջերին Հ.Պողոսյանը համատեղության կարգով աշխատել է որպես Թիֆլիսի հայկական պետական դրամատիկական թատրոնի տնօրեն ու գեղարվեստական ղեկավար:

1934թ. Հ.Պողոսյանը եղել է ՀԿԿ օրգան «Խորհրդային Հայաստան» թերթի խմբագիր, ապա՝ ՀԿԿ կենտկոմի կուլտուրայի և պրոպագանդայի բաժնի վարիչ, ՀԽՍՀ լուսավորության ժողովրդական կոմիսար, արվեստի գործերի վարչության պետ, ռադիոկոմիտեի նախագահ, իսկ 1946-1948թթ.՝ ԵՊՀ ռեկտոր:

Կուսակցական և պետական պատասխանատու աշխատանքների հետ միասին Հ.Պողոսյանը դասավանդել է Անդրկովկասյան կոմունիստական համալսարանում, ԵՊՀ-ում, կուսակցական դպրոցում, կոնսերվատորիայում և այլուր:

Հ.Պողոսյանը վախճանվել է 1948թ. դեկտեմբերի 3-ին Երևանում:

Երևանի թիվ 82 միջնակարգ դպրոցը կոչվում է Հ.Պողոսյանի անունով:

ԴԱՎԹՅԱՆ ԳԱԳԻԿ ՍՏԵՓԱՆԻ

Ագրոքիմիկոս,
կենսաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1909թ. նոյեմբերի 8-ին Դիլիջանում: 1926թ. տեղի երկրորդ աստիճանի դպրոցն ավարտելուց հետո Գ.Դավթյանը մինչև 1930թ. ուսանել է ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետում: 1929թ. աշխատել է ագրոքիմիայի ամբիոնում որպես լաբորանտ:

1930-1933թթ. գործուղվել է Պարարտանյութերի և ագրոհողագիտության համամիութենական ինստիտուտի Լենինգրադի բաժանմունք որպես ասպիրանտ: Սովորելու տարիներին մասնակցել է Անդրկովկասի բամբակացան շրջանների հողերի քիմիացման համամիութենական արշավախմբի աշխատանքներին: Ասպիրանտուրան ավարտելուց հետո վերադարձել է Հայաստան:

1936թ. Գ.Դավթյանն ընդունվել է ԽՍՀՄ ԳԱ Վ.Դոկուչաևի անվան հողագիտության ինստիտուտի ագրոքիմիայի լաբորատորիայի դոկտորանտուրա: 1940թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1942թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1941թ. նա ԽՍՀՄ ԳԱ Հայկական մասնաճյուղի կենսաբանության ինստիտուտին կից ստեղծել է հողի բերրիության լաբորատորիա, իսկ 1947թ. ագրոքիմիայի լաբորատորիա:

1947թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1950-ին՝ ակադեմիկոս:

1950-1955թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ գյուղատնտեսական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի տեղակալ, ապա՝ ակադեմիկոս-քարտուղար, 1955-1957թթ. ՀԽՍՀ Նախարարների խորհրդի նախագահի տեղակալ, ՀԿԿ Կենտկոմի և Երևանի քաղկոմի անդամ, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր: 1957-1961թթ. եղել է ԵՊՀ ռեկտոր:

1966թ. Գ.Դավթյանն ագրոքիմիայի լաբորատորիայի հիման վրա հիմնել է ՀԽՍՀ ԳԱ ագրոքիմիայի պրոբլեմների և հիդրոպոնիկայի ինստիտուտը, որը ղեկավարել է մինչև կյանքի վերջը:

1967-1971թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս-քարտուղար:

Գ.Դավթյանը ավելի քան 20 տարի ագրոքիմիա է դասավանդել ԵՊՀ-ում և Հայկական գյուղատնտեսական ինստիտուտում:

Հեղինակ է ավելի քան 250 գիտական հոդվածների: Կարևորագույն մե-

նագրություններն են՝ «Հողի քիմիական պարարտացումը» (Եր., 1932), «Կալցիում ցիանամիդ» (Եր., 1932), «Հանքային պարարտանյութերի արդյունավետությունը Հայկական ՍՍՀ և Նախիջևանի ԻՍՍՀ բամբակացան շրջաններում» (Եր., 1934), «Հայաստանի հողերի ֆոսֆորացման ռեժիմը» (Եր., 1946), «Հայկական ՍՍՀ հողերի ագրոքիմիական բնութագիրը» (Եր., 1966):

Նա ակտիվորեն մասնակցել է Հայկական սովետական հանրագիտարանի ստեղծմանը, եղել հանրապետության Գերագույն խորհրդին կից տերմինաբանական կոմիտեի անդամ, «ԳԱ ագրոքիմիական պրոբլեմների և հիդրոպոնիկայի ինստիտուտի հաղորդումներ» ամսագրի խմբագիր:

1956թ. Գ.Դավթյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է Լենինի (2), Աշխատանքային կարմիր դրոշի, «Ժողովուրդների բարեկամության», «Պատվո նշան» շքանշաններով և մի շարք մեդալներով:

Վախճանվել է 1980թ. մարտի 9-ին Երևանում:

1995-ից ՀՀ ԳԱԱ հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտը կոչվում է Գ.Դավթյանի անունով:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԳՈՒՇ ԽԱՉԱՏՈՒՐԻ

Մեխանիկոս,
տեխնիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1912թ. նոյեմբերի 23-ին Երևանում: 1930թ. ընդունվել է Մոսկվայի Վ.Կույբիշևի անվան ռազմաճարտարագիտական ակադեմիա: 1936թ. ավարտելով այն և ստանալով ճարտարագետ-հիդրոշինարարի որակավորում՝ աշխատանքի է անցել Սևան-Զանգուշին վարչությունում որպես ճարտարագետ՝ միաժամանակ դասավանդելով ԵՊԻ-ում:

1937թ. Ն.Հարությունյանն ընդունվել է Լենինգրադի պոլիտեխնիկական ինստիտուտի ասպիրանտուրա: 1941թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և մեկնել ռազմաճակատ: 1945թ. զորացրվել է, վերադարձել Հայաստան և վերսկսել իր գիտամանկավարժական գործունեությունը: 1949թ. ԽՍՀՄ ԳԱ մեխանիկայի ինստիտուտում պաշտպա-

նել է դոկտորական ատենախոսության: 1950թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում, նույն թվականին նա ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս:

1952-1955թթ. Ն.Հարությունյանը եղել է ՀԽՍՀ ԳԱ տեխնիկական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար: 1955թ. նշանակվել է ՀԽՍՀ ԳԱ մաթեմատիկայի և մեխանիկայի ինստիտուտի սողքի և ամրության նորաստեղծ լաբորատորիայի վարիչ: 1959թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ փոխնախագահ:

1945-1951թթ. նա դասավանդել է ԵրՊԻ-ում, 1951-ից ԵՊՀ-ում՝ լինելով տեսական մեխանիկայի ամբիոնի պրոֆեսոր, իսկ 1958-1978թթ.՝ առաձգականության և պլաստիկության տեսության նորաստեղծ (ներկայիս հոծ միջավայրի մեխանիկայի) ամբիոնի վարիչ: 1961թ. նշանակվել է ԵՊՀ ռեկտոր: Նրա նախաձեռնությամբ ԵՊՀ-ում ստեղծվել են բջջաբանության ամբիոնը, ՀԽՍՀ ԳԱ և ԵՊՀ միացյալ հաշվողական կենտրոնը, ամրապնդվել ԵՊՀ գիտական և ուսումնական կապերը Մոսկվայի, Լենինգրադի պետական համալսարանների, ինչպես նաև ԽՍՀՄ և արտասահմանյան այլ առաջնակարգ բուհերի ու գիտական կենտրոնների հետ:

Ն.Հարությունյանը հեղինակ է շուրջ 200 գիտական աշխատությունների և ութ հիմնարար մենագրության: Նրա «Սողքի տեսության մի քանի հարցեր» (Մ., 1952) հիմնարար մենագրությունը թարգմանվել և հրատարակվել է Անգլիայում, Ֆրանսիայում, Չինաստանում, իսկ առանձին գլուխներ՝ նաև Գերմանիայում, Լեհաստանում, Ռումինիայում:

1962-1975թթ. Ն.Հարությունյանը եղել է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի Նախագահության նախագահ:

1975թ. նա տեղափոխվել է Մոսկվա և գլխավորել ԽՍՀՄ ԳԱ մեխանիկայի պրոբլեմային ինստիտուտի առաձգականամածուցիկ մարմինների մեխանիկայի բաժինը՝ զուգահեռաբար ղեկավարելով նաև ՀԽՍՀ ԳԱ մեխանիկայի ինստիտուտի առաձգականամածուցիկության տեսության բաժինը:

Նա ղեկավարել է բազմաթիվ գիտական աշխատանքներ, ստեղծել ուրույն գիտական դպրոց: Երկար տարիներ եղել է ԽՍՀՄ տեսական և կիրառական մեխանիկայի գծով ազգային կոմիտեի նախագահության անդամ, «Հայկական ԽՍՀ ԳԱ տեղեկագիր, մեխանիկա» գիտական պարբերականի գլխավոր խմբագիր, «ԽՍՀՄ ԳԱ տեղեկագիր, պինդ մարմնի մեխանիկա» ամսագրի խմբագրական խորհրդի անդամ: Բազմիցս ընտրվել է ՀԽՍՀ և ԽՍՀՄ Գերագույն խորհուրդների պատգամավոր:

1962թ. Ն.Հարությունյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է Լենինի, Հոկտեմբերյան հեղափոխության, Հայրենական պատերազմի I, II աստիճանի, «Կարմիր աստղ», Աշխատանքային կարմիր դրոշի շքանշաններով:

Վախճանվել է 1993թ. հունվարի 18-ին Մոսկվայում:

ԲԱՏԻԿՅԱՆ ՀՐԱՆՏ ԳԵՎՈՐԳԻ

Գենետիկոս,
կենսաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1909թ. դեկտեմբերի 26-ին Բաքվում: 1926թ. ընդունվել է ԵՊՀ գյուղատնտեսական ֆակուլտետ, 1930թ. Լենինգրադի (այժմ՝ Սանկտ Պետերբուրգ) համամիութենական բուսաբուծության ինստիտուտի ասպիրանտուրա: 1936թ. պաշտպանել է թեկնածուական, 1950թ. դոկտորական ատենախոսություն: 1951թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Մինչև 1937թ. Հ.Բատիկյանն աշխատել է Լենինգրադի համամիութենական բուսաբուծության ինստիտուտում որպես ավագ գիտաշխատող: 1937թ. վերադարձել է Հայաստան և գործուն մասնակցություն ունեցել ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի (Արմֆան) հիմնադրման աշխատանքներին: Այստեղ նա սկզբում աշխատել է որպես գիտական քարտուղար, 1938-1940թթ.՝ Արմֆանի «Տեղեկագրի» խմբագիր, իսկ 1940-1941թթ.՝ նախագահության անդամ, ինչպես նաև տնօրենի՝ ակադեմիկոս Հ.Օրբելու տեղակալ: Միաժամանակ դասախոսել է ԵՊՀ-ում և գյուղատնտեսական ինստիտուտում: 1943-1949թթ. Հ.Բատիկյանը եղել է Հայաստանի ԳԱ գենետիկայի ինստիտուտի ավագ գիտաշխատող:

1950-1980թթ. նա ղեկավարել է ԵՊՀ դարվինիզմի և գենետիկայի ամբիոնը, 1963թ.՝ հիմնադրել և ղեկավարել է նաև բջջաբանության պրոբլեմային լաբորատորիան: 1950-1963թթ. և 1968-1978թթ. եղել է ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի դեկան: Այդ տարիներին նրա ջանքերով ստեղծվել են կենսաքիմիայի, հողագիտության և ագրոքիմիայի, կենսաֆիզիկայի ամբիոնները:

1963-1966թթ. Հ.Բատիկյանը ԵՊՀ ռեկտորն էր:

Հեղինակ է ավելի քան 150 գիտական աշխատությունների, ձեռնարկների և մենագրությունների: Հիշարժան են նրա «Վեգետատիվ և սեռական հիբրիդների համեմատական ուսումնասիրությունը բույսերում» (ռուս., Եր., 1951) մենագրությունը, «Բույսերի գենետիկայի՝ սելեկցիայի հիմունքներով գործնական պարապմունքների ձեռնարկ» (Եր., 1959) աշխատությունը:

Հ.Բատիկյանի ղեկավարությամբ ու խորհրդատվությամբ պաշտպանվել է թեկնածուական 38 և դոկտորական 2 ատենախոսություն:

Հ.Բատիկյանը ավելի քան 30 տարի եղել է ՀԽՍՀ ԳԱ «Հայաստանի կենսաբանական հանդես» ամսագրի խմբագիր, միաժամանակ՝ ԽՍՀՄ Նախարարների խորհրդի՝ գիտության և տեխնիկայի պետական կոմիտեին կից «Մարդը և կենսոլորտը» խորհրդի անդամ:

1961թ. Հ.Բատիկյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման:

Վախճանվել է 1983թ. մարտի 31-ին Երևանում:

ՆԵՐՍԻՍՅԱՆ ՄԿՐՏԻՉ ԳԵՂԱՄԻ

Պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1909թ. նոյեմբերի 25-ին Աշտարակի շրջանի Փարպի գյուղում: Նախնական կրթությունն ստացել է տեղի դպրոցում, այնուհետև ուսումը շարունակել Երևանի Խ.Աբովյանի անվան միջնակարգ դպրոցում, որն ավարտել է 1927թ.: Նույն թվականին ընդունվել և 1931-ին ավարտել է ԵՊՀ պատմագրական ֆակուլտետը:

1931-1937թթ. աշխատել է ՀԿԿ Կենտկոմին կից կուսակցության պատմության ինստիտուտում, 1938-1940թթ.՝ ԽՍՀՄ ԳԱ Հայկական մասնաճյուղի (Արմֆան) պատմության և նյութական կուլտուրայի ինստիտուտում որպես ավագ գիտաշխատող, 1940-1941թթ.՝ տնօրեն:

1941թ. Մ.Ներսիսյանը մեկնել է ռազմաճակատ, մասնակցել Հայրենական պատերազմին, վիրավորվել Կովկասի պաշտպանության համար մղված մարտերից մեկում:

1944-1946թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի տնօրենի տեղակալ, 1946-1950թթ. ՀԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական մասնաճյուղի տնօրենի տեղակալ:

1939թ. Մ.Ներսիսյանը պաշտպանել է թեկնածուական, 1946թ. դոկտորական ատենախոսություն: 1947թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1950թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս և մինչև 1962թ. վարել հասարակական գիտությունների գծով փոխնախագահի պաշտոնը: 1962-1966թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, 1966-1977թթ. ԵՊՀ ռեկտոր: 1977-ից

մինչև կյանքի վերջը աշխատել է ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտում որպես հայ-ռուսական հարաբերությունների պատմության բաժնի վարիչ:

1931-1968թթ. Մ.Ներսիսյանը գիտական գործունեության հետ զբաղվել է նաև մանկավարժական աշխատանքով. հայ ժողովրդի պատմություն է դասավանդել Խ.Աբովյանի անվան հայկական և Վ.Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների մանկավարժական ինստիտուտներում, ԵՊՀ-ում: 1937-1941թթ. եղել է ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան, 1949-1954թթ. հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչ:

Մ.Ներսիսյանը թողել է պատմագիտական հարուստ ժառանգություն՝ հոդվածներ, փաստաթղթերի ժողովածուներ, մենագրություններ, որոնցից գիտական մեծ արժեք ունեն «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850-1870թթ.» (Եր., 1955), «Դեկաբրիստները Հայաստանում» (Եր., 1958), "Из истории русско-армянских отношений" (кн. 1-2, Ер., 1956-1961), "Отечественная война 1812 года и народы Кавказа" (Ер., 1965), "А.В.Суворов и русско-армянские отношения в 1770-1780-х годах" (Ер., 1981) ուսումնասիրությունները:

Անուրանալի է Մ.Ներսիսյանի վաստակը Օսմանյան կայսրության կազմակերպած Հայոց Մեծ եղեռնի պատմության լուսաբանման գործում: Այդ տեսակետից բացառիկ արժեք ունի Ռ.Սահակյանի հետ կազմած և խմբագրած "Геноцид армян в османской империи" (Ер., 1966) փաստաթղթերի և նյութերի ստվարածավալ ժողովածուն:

Մ.Ներսիսյանը գործուն մասնակցություն է ունեցել մի շարք ուսումնական ձեռնարկների և կոլեկտիվ աշխատությունների ստեղծմանը, որոնցից հիշարժան է «Հայ ժողովրդի պատմություն, հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» (Եր., 1972, 1985 և ռուս. 1980) գիրքը:

Մ.Ներսիսյանը մեծ վաստակ ունի նաև գիտական կադրերի պատրաստման գործում: Նրա ղեկավարությամբ ու խորհրդատվությամբ պաշտպանվել է թեկնածուական ու դոկտորական ավելի քան 20 ատենախոսություն:

Մ.Ներսիսյանը հրատարակչական գործի քաջագիտակ կազմակերպիչ էր. նրա նախաձեռնությամբ 1958թ. հիմնադրվել է «Պատմա-բանասիրական հանդես»-ը, որի անփոփոխ գլխավոր խմբագիրն էր մինչև կյանքի վերջը: 1967թ. նա հիմնադրել է նաև «Բանբեր Երևանի համալսարանի» քառամսյա հանդեսը:

Մ.Ներսիսյանը եղել է Հայաստանի կոմկուսի XV, XXIV, XXVI համագումարների պատգամավոր, բազմիցս ընտրվել ՀԿԿ կենտկոմի և Երևանի քաղկոմի անդամ, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի և ԽՍՀՄ Գերագույն խորհրդի VII, VIII, IX գումարումների պատգամավոր:

1961թ. Մ.Ներսիսյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է Լենինի, Աշխատանքային կարմիր

դրոշի, ժողովուրդների բարեկամության շքանշաններով, «Մովսես Խորենացի» և ԵՊՀ ոսկե մեդալներով:

Վախճանվել է 1999թ. հունվարի 28-ին Երևանում:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՍԵՐԳԵՅ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ

Մեխանիկոս,
տեխնիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1922թ. մարտի 17-ին Ալեքսանդրապոլում (այժմ՝ Գյումրի): 1942թ. ավարտել է ԵՊԻ շինարարական մեխանիկայի ֆակուլտետը և դասախոսական աշխատանքի անցել նույն ինստիտուտում: 1945-1946թթ. սովորել է ասպիրանտուրայում: 1946թ. Ս.Համբարձումյանը պաշտպանել է թեկնածուական, 1952թ.՝ Մոսկվայում դոկտորական ատենախոսություն: 1953թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1956թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1965-ին՝ ակադեմիկոս:

1946-1955թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ շինանյութերի և կառուցվածքների ինստիտուտի ավագ գիտաշխատող, սեկտորի վարիչ, փոխտնօրեն: 1943-1948թթ. դասավանդել ԵՊԻ-ում, 1948-ից՝ ԵՊՀ-ում:

1955թ. Ս.Համբարձումյանի գործուն մասնակցությամբ հիմնադրվել է ՀԽՍՀ ԳԱ մաթեմատիկայի և մեխանիկայի ինստիտուտը, որի տնօրենն էր նա 1959-1971թթ.: 1971-1977թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ մեխանիկայի ինստիտուտի տնօրեն: Նրա ջանքերով ակադեմիայում ստեղծվել է ֆիզիկատեխնիկական և մեխանիկայի բաժանմունքը, որի ակադեմիկոս-քարտուղարն էր 1971-1974թթ.:

1974-1977թթ. լինելով ՀԽՍՀ ԳԱ փոխնախագահ, իսկ 1977-1991թթ. ԵՊՀ ռեկտոր, Ս.Համբարձումյանը մեծապես նպաստել է նաև հայագիտության զարգացմանը: Նրա նախաձեռնությամբ առանձին մատենաշարով լույս են տեսել հայ պատմագրության և դրականության կոթողային մի շարք գործեր:

1971-ից Ս.Համբարձումյանը ՀԽՍՀ ԳԱ նախագահության անդամ է, 1992-ից՝ ՀՀ ԳԱԱ մեխանիկայի ինստիտուտի պատվավոր տնօրեն:

Հեղինակ է ավելի քան 200 գիտական աշխատությունների, որոնցում

զարգացրել և արդիականացրել է դեֆորմացվող պլինդ մարմնի մեխանիկայի մի շարք առանցքային դրույթներ: Նա առաջինն է ձևակերպել անիզոտրոպ շերտավոր թաղանթների դասական տեսությունը ընդհանուր անիզոտրոպության դեպքում՝ առաջարկելով բարակապատ կառուցվածքների հաշվարկման արդյունավետ մոդել, հայտնաբերել անիզոտրոպ նյութից կազմված կամայական շերտավոր թաղանթների յուրահատկությունները:

Ս.Համբարձումյանի «Անիզոտրոպ թաղանթների տեսություն» (ռուս., Մ 1961), «Անիզոտրոպ սալերի տեսություն» (ռուս., Մ 1967) մենագրությունները թարգմանվել են անգլերեն, ճապոներեն և հրատարակվել ԱՄՆ-ում՝ 1964թ. և 1969թ., Ճապոնիայում՝ 1975թ.: Նրա՝ սալերի և թաղանթների ճշգրտված տեսությունների արդյունքներն ամփոփված են «Անիզոտրոպ թաղանթների ընդհանուր տեսություն» (ռուս., Մ., 1974) մենագրության մեջ, որը 1991թ. հրատարակվել է նաև ԱՄՆ-ում:

Ս.Համբարձումյանի համահեղինակությամբ հրատարակվել են նաև «Սալերի և թաղանթների մագնիսաառաձգականություն» (ռուս., Մ 1977), «Բարակապատ առաձգական սալերի տատանումներ և կայունություն» (Եր., 1992), «Էլեկտրահաղորդիչ սալերը և թաղանթները մագնիսական դաշտում» (Եր., 1996), «Տարամոդուլ առաձգականության տեսություն» (ռուս. Մ., 1982) աշխատությունները, որոնցից վերջինը 1987թ. հրատարակվել է Չինաստանում: 1999թ. Ս.Համբարձումյանը հրատարակել է «Թաղանթների և սալերի միկրոպոլյար տեսություն» հիմնարար մենագրությունը, որտեղ զարգացրել է գիտական նոր ուղղություն:

Ս.Համբարձումյանի ղեկավարությամբ ու խորհրդատվությամբ պաշտպանվել է թեկնածուական 42 և դոկտորական 11 ատենախոսություն:

Ս.Համբարձումյանը աշխարհի բազմաթիվ համալսարանների պատվավոր դոկտոր է, «Գլոբալ էներգիա» մրցանակ շնորհող միջազգային կոմիտեի, Լենինյան և Պետական մրցանակներ շնորհող կոմիտեների անդամ: Եղել է նաև միջազգային մի շարք գիտական հանդեսների խմբագրական խորհուրդների անդամ: Ս.Համբարձումյանը 2003-ից ՌԴ ԳԱ արտասահմանյան անդամ է,

1985թ. Ս.Համբարձումյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է Լենինի, Հոկտեմբերյան հեղափոխության, Աշխատանքային կարմիր դրոշի, «Պատվո նշան», ՌԴ «Բարեկամություն», Հայ Առաքելական եկեղեցու «Ս.Սահակ-Ս.Մեսրոպ» շքանշաններով, ԵՊՀ ոսկե մեդալով:

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆՈՐԱՅՐ ՀՈՒՆԱՆԻ

Մաթեմատիկոս,
ֆիզիկամաթեմատիկական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
ՀՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1936թ. հուլիսի 17-ին Արթիկի շրջանի Մեղրաշեն գյուղում: 1953թ. ավարտել է տեղի դպրոցը, 1958թ. ԵՊՀ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը: 1958-1959թթ. Ն.Առաքելյանն աշխատել է ԵՊՀ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետում որպես ասիստենտ:

1962թ. Ն.Առաքելյանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1959-1971թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ մաթեմատիկայի և մեխանիկայի ինստիտուտի գիտաշխատող: 1971թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1971-1974թթ. աշխատել է ՀԽՍՀ ԳԱ մաթեմատիկայի և մեխանիկայի ինստիտուտում որպես ավագ գիտաշխատող:

1974թ. Ն.Առաքելյանն ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, իսկ 1990թ.՝ ակադեմիկոս: 1974-1989թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ մաթեմատիկայի և մեխանիկայի ինստիտուտի տնօրենի տեղակալ և բաժնի վարիչ, 1989-1991թթ.՝ տնօրեն: 1989թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1991-1993թթ. Ն.Առաքելյանը եղել է ԵՊՀ ռեկտոր: 1992-1997թթ. ղեկավարել է ԵՊՀ ֆունկցիաների տեսության ամբիոնը, 1997-2006թթ.՝ ՀՀ ԳԱԱ մաթեմատիկայի ինստիտուտը, իսկ 2007-ից ՀՀ ԳԱԱ մաթեմատիկական և տեխնիկական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղարն է:

Ն.Առաքելյանը հիմնարար արդյունքներ է ստացել կոմպլեքս անալիզի, մոտավորությունների տեսության բնագավառում: Հեղինակ է 45 գիտական հոդվածների, համահեղինակ՝ “Степенные ряды: аналитическое продолжение и локализация особенностей” (М., 1991) մենագրության:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 11 ատենախոսություն:

2003թ. Ն.Առաքելյանն արժանացել է ՀՀ գիտության վաստակավոր գործչի կոչման:

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍԻ

Ռադիոֆիզիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Ծնվել է 1936թ. մայիսի 1-ին Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանի Մատաղիս գյուղում: 1953թ. ավարտել է տեղի դպրոցը, 1958թ. ԵՊՀ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը՝ աստղաֆիզիկոսի որակավորմամբ: 1960-1963թթ. Ռ.Մարտիրոսյանը սովորել է ԽՍՀՄ ԳԱ Մոսկվայի Պ.Լեբեդևի անվան ֆիզիկայի ինստիտուտի ասպիրանտուրայում: 1964թ. Մոսկվայում պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1964-1968թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի ավագ գիտաշխատող, 1968-1970թթ.՝ լաբորատորիայի բաժնի վարիչ, 1970-1980թթ. գիտական աշխատանքների գծով փոխտնօրեն: 1980թ. նշանակվել է ՀԽՍՀ ԳԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի տնօրեն և նույն թվականին պաշտպանել դոկտորական ատենախոսություն: 1982թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1986թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1990թ. ակադեմիկոս:

1993-2006թթ. Ռ.Մարտիրոսյանը եղել է ԵՊՀ ռեկտոր, նշանակալի ավանդ բերել համալսարանի՝ եռաստիճան կրթական համակարգին անցնելուն, նպաստել եվրոպական կրթական համակարգին ինտեգրվելու գործընթացին: 2006-ից ՀՀ ԳԱԱ նախագահն է:

Ռ.Մարտիրոսյանը հեղինակ է ավելի քան 200 գիտական աշխատանքների, որոնք վերաբերում են դեցիմետրական տիրույթի քվանտային ուժեղացուցիչների ստեղծմանը և դրանց ռադիոաստղագիտական կիրառություններին, քվանտային էլեկտրոնիկայի համար արհեստական բյուրեղների ստեղծման տեխնոլոգիաների կատարելագործմանը, բարձր զգայնությամբ ընդունիչ համակարգերի մշակմանն ու ներդրմանը: Մասնավորապես առաջարկել է մակարդակների շրջման սխեմա, որը թույլ է տալիս միաժամանակ ուժեղացնել տարբեր հաճախություններով երկու ազդանշաններ: Փորձնականորեն այդ սխեման իրականացրել է 21 սմ և 3 սմ ալիքի երկարությունների համար:

Ռ.Մարտիրոսյանի մշակած ալիքատարային քվանտային ուժեղացուցիչը PATAM-600 մեծ ռադիոաստղագիտակի ընդունող համակարգի զգայու-

նությունը մեծացրել է 14 անգամ, որը թույլ է տվել հետազոտել տիեզերական մի շարք մաղերային աղբյուրների ռադիոճառագայթումը:

Նրա գիտական ղեկավարությամբ Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտում ստեղծված բարձր զգայնության ռադիոընդունիչ սարքերը լայնորեն կիրառվել են բնական պաշարների հետազոտման «Պրիրոդա» և «Օկեան» տիեզերական ծրագրերում, ինչպես նաև ռադիոաստղագիտական և բժշկաբիոլոգիական հետազոտություններում:

Ռ.Մարտիրոսյանը համահեղինակ է "Theoretical Analysis of Spin Lattice Relaxation and Maser Properties of Cr^{3+} -TiO_2" (Gothenburg, 1976), "Methods and Materials for Remote Sensing" (USA, 2004) մենագրությունների:

1965-ից Ռ.Մարտիրոսյանը դասավանդում է ԵՊՀ-ում, 1983թ. նրա նախաձեռնությամբ ԵՊՀ ռադիոֆիզիկայի ֆակուլտետում կազմակերպվել է գերբարձր հաճախությունների ռադիոֆիզիկայի ամբիոն, որը նա ղեկավարել է մինչև 1986թ.: 2006-ից ղեկավարում է իր ստեղծած ԳԲՀ ռադիոֆիզիկայի և հեռահաղորդակցության ամբիոնը:

Նրա ղեկավարությամբ և խորհրդատվությամբ պաշտպանվել է թեկնածուական 9 և դոկտորական 2 ատենախոսություն:

Ռ.Մարտիրոսյանը ԵՊՀ-ում գործող գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի նախագահն է:

1989թ. Ռ.Մարտիրոսյանն արժանացել է Ուկրաինայի Պետական մրցանակի: Պարգևատրվել է «Պատվո նշան» (1981), Հոկտեմբերյան հեղափոխության (1986), ՀՀ «Մեսրոպ Մաշտոց» (1999), ԼՂՀ «Մեսրոպ Մաշտոց» (2005), Իտալիայի Նախագահի (2004), Ֆրանսիայի կառավարության (2005), Հայ Առաքելական եկեղեցու «Ս.Սահակ-Ս.Մեսրոպ» (2007) շքանշաններով և մի շարք մեդալներով:

ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐԱՄ ՀՐԱՉԻԿԻ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

Ծնվել է 1955թ. ապրիլի 12-ին Գորիսում: 1961թ. նրանց ընտանիքը տեղափոխվել է Երևան: Ավարտելով թիվ 19 դպրոցը՝ Ա.Սիմոնյանը 1972թ. ընդունվել ԵՊՀ պատմության ֆակուլտետ: 1977-1981թթ. սովորել է ԽՍՀՄ ԳԱ Մոսկվայի ԽՍՀՄ պատմության ինստիտուտի ասպիրանտուրայում: 1981-1986թթ. Ա.Սիմոնյանը եղել է ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի կրտսեր, ապա՝ ավագ գիտաշխատող: 1983թ. պաշտպանել է թեկնածուական, 2000թ. դոկտորական ատենախոսություն: 2005-ին նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1986-ից Ա.Սիմոնյանն աշխատում է ԵՊՀ-ում: 1986-1990թթ. եղել է ԽՍՀՄ պատմության ամբիոնի ասիստենտ, 1990-2000թթ. Հայոց պատմության ամբիոնի դոցենտ, 2000-ից՝ նույն ամբիոնի պրոֆեսոր, 1993-1995թթ. ԵՊՀ գիտքարտուղար, 1995-2000թթ. ԵՊՀ ուսումնական վարչության պետ, իսկ 2000-2006թթ. հումանիտար ֆակուլտետների ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, այնուհետև՝ նաև ռեկտորի պաշտոնակատար: 2006թ. Ա.Սիմոնյանն ընտրվել է ԵՊՀ ռեկտոր և ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ:

Ա.Սիմոնյանը նաև ԵՊՀ հայագիտական հետազոտությունների նորաստեղծ ինստիտուտի տնօրենն է:

Հեղինակ է շուրջ յոթ տասնյակ գիտական, ուսումնամեթոդական աշխատանքների և «Արևելյան Հայաստանի պրոլետարիատի պատմություն» (Եր., 1988), “Рабочие Закавказья в общероссийском рынке наемного труда в конце XIX-XXвв. (историко-статистический анализ)” (Ер., 1995), «Զանգեզուրի գոյամարտը 1920-1921թթ.» (Եր., 2000), «Զանգեզուրի հերոսամարտը 1917-1920թթ.» (Եր., 2009) մենագրությունների: Գիտական հետազոտությունները վերաբերում են հայ ժողովրդի XIX դ. երկրորդ կեսի և XX դ. պատմության հիմնահարցերին, մասնավորապես՝ պատմական վիճակագրությանը, արդյունաբերական կապիտալի զարգացման տեսությանն ու պատմությանը, ինչպես նաև Արցախի և Զանգեզուրի 1917-1921թթ. պատմության խնդիրներին:

Նա Ա.Համբարյանի հետ միասին Հայաստանում սկիզբ դրեց պատմագիտության մեջ մաթեմատիկական մեթոդների կիրառմանը՝ գիտական աշխատություններում համադրելով պատմագիտական և սոցիոլոգիական հետազոտման մեթոդները:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 6 ատենախոսություն:

Ա.Սիմոնյանը մասնակցել է միջազգային, միութենական և հանրապետական բազմաթիվ գիտաժողովների: Բազմիցս հրավիրվել է Իտալիայի, Բելգիայի, Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի, Իսպանիայի, ԱՄՆ-ի և աշխարհի մի շարք այլ երկրների գիտակրթական կենտրոններ, որտեղ զբաղվել է գիտական աշխատանքով, հանդես եկել դասախոսություններով ու զեկուցումներով:

ԵՊՀ ՊՐՈՌԵԿՏՈՐՆԵՐ ԵՎ ԴԱՍԱԽՈՍՆԵՐ

ԱԲԵՂՅԱՆ ՄԱՆՈՒԿ ԽԱՉԱՏՈՒՐԻ

Լեզվաբան, գրականագետ,
փիլիսոփայական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ



Ծնվել է 1865թ. մայիսի 17-ին Նախիջևանի Աստապատ գյուղում: Ավարտել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանը, 1893-1898թթ. սովորել է Ենայի, Լայպցիգի, Բեռլինի, Փարիզի համալսարաններում:

1898թ. Ենայի համալսարանում ստացել է փիլիսոփայական գիտությունների դոկտորի աստիճան:

1898-1914թթ. Մ.Աբեղյանն աշխատել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում որպես ուսուցիչ, 1914-1919թթ.՝ Թիֆլիսի Ներսիսյան և Հովնանյան դպրոցներում: ԵՊՀ հիմնադրման առաջին իսկ օրերից աշխատանքի է հրավիրվել որպես դասախոս, 1923-1925թթ. եղել պատմագրական ֆակուլտետի դեկան: 1926թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1943թ., երբ հիմնադրվեց ՀԽՍՀ գիտությունների ակադեմիան, Մ.Աբեղյանը հաստատվեց ակադեմիայի հիմնադիր անդամ:

Նրա լեզվաբանական շուրջ 200 աշխատություններում ուսումնասիրված են հայոց լեզվի գրեթե բոլոր բնագավառները: Դրանք վերաբերում են հայոց լեզվի ուղղագրությանը, հնչյունաբանությանը, բառագիտությանը, ձևաբանությանը, տաղաչափությանը: Նա գրել է նաև գրաբարի քերականություն, ուսումնասիրել միջին հայերենով գրված ժողովրդական ստեղծագործությունների լեզուն, կազմել բառարաններ և այլն: Լեզվաբանական կարևոր մենագրություններն են՝ «Աշ-

խարհաբարի քերականություն» (Վաղարշապատ, 1906), «Աշխարհաբարի շարահյուսություն» (Էջմիածին, 1912), «Հայոց լեզվի տեսություն» (Եր., 1931, 1965), «Հայոց լեզվի տաղաչափություն» (Եր., 1933):

Մ.Աբեղյանը զբաղվել է նաև հայ ժողովրդական բանահյուսությամբ: Նա հավաքել, ուսումնասիրել և հրատարակել է ժողովրդական բազմաթիվ ստեղծագործություններ: 1886թ. գրի է առել «Սասունցի Դավիթ» էպոսի պատումներից մեկը, և շարունակել վեպի պատումների հավաքման, ուսումնասիրման ու հրատարակման գործը: Ժողովրդական բանահյուսությանը վերաբերող կարևոր մենագրություններն են «Հայ ժողովրդական առասպելները Մ.Խորենացու «Հայոց պատմության» մեջ» (Վաղարշապատ, 1899), «Ժողովրդական խաղեր» (Վաղարշապատ, 1904), «Հայ ժողովրդական վեպը» (Վաղարշապատ, 1908), «Հին գուսանական-ժողովրդական երգեր» (Եր., 1931):

Մ.Աբեղյանին հետաքրքրել են նաև հայ գրականության պատմության, հատկապես հայ հին և միջնադարյան գրականության խնդիրները: Նա գրել է մի շարք ուսումնասիրություններ հոգևոր երգերի՝ շարականների վերաբերյալ, Գրիգոր Նարեկացու և ուրիշ գրողների մասին: Հայ հին գրականությանը վերաբերող նրա ուսումնասիրությունները ամփոփված են «Հայոց հին գրականության պատմություն» երկհատոր կոթողային աշխատության մեջ (գիրք 1, Եր., 1944, գիրք 2, Եր., 1946): Վերջինս մեկ հատորով տպագրվել է նաև ռուսերեն՝ Մոսկվայում:

Մ.Աբեղյանը զբաղվել է նաև գրական-պատմական և ժողովրդական ստեղծագործությունների բնագրերի հրատարակման գործով: Այդ հրատարակություններից են՝ Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» (Սեթ Հարությունյանի աշխատակցությամբ, 1913թ.), «Սասնա ծռեր» (Կարո Մելիք-Օհանջանյանի աշխատակցությամբ, 3 գիրք, Եր., 1936, 1944, 1951), «Գուսանական-ժողովրդական տաղեր» (Եր., 1940), Կորյունի «Վարք Մաշտոցի» գրքերը (Եր., 1941): Դրանք առայսօր մնում են որպես քննական լավագույն հրատարակություններ:

Երկար տարիներ զբաղվելով մանկավարժական գործունեությամբ՝ նա կրթել և աճեցրել է բազմաթիվ մասնագետներ:

Վախճանվել է 1944թ. սեպտեմբերի 25-ին Երևանում:

Կառավարության որոշմամբ ՀԽՍՀ ԳԱ գրականության ինս-

տիտուտը 1945 թվականից կոչվում է Մ.Աբեղյանի անունով: Մ.Աբեղյանի բրոնզաձույլ կիսանդրին ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի նախասրահում խորհրդանշում է ականավոր գիտնական-մանկավարժի դերը համալսարանական գիտության զարգացման գործում:

ԱԲՈՎՅԱՆ ՍԱՐԳԻՍ ԵՍԱՅՈՒ

Գյուղատնտեսական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,



Ծնվել է 1869թ. փետրվարի 1-ին Ջալալօղլիում (այժմ՝ Ստեփանավան): 1883թ. ավարտել է տեղի ծխական, 1988թ. Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը: Մեկ տարի սովորել է Գևորգյան ճեմարանում: 1892թ. ավարտել է Թիֆլիսի հողաչափների դպրոցը, 1895թ. Լայպցիգի համալսարանի գյուղատնտեսական ֆակուլտետը, իսկ ավելի ուշ Հալլեի համալսարանի ընդհանուր ագրոքիմիայի ֆակուլտետի լրիվ դասընթացները և մասնագիտացել կաթի տեխնոլոգիայի գծով: Լինելով եվրոպական տարբեր երկրներում (Ֆրանսիա, Շվեյցարիա, Հոլանդիա, Նորվեգիա)՝ ծանոթացել է անասնապահական, անասնաբուժական գործին:

1897թ. Ս.Աբովյանը վերադառնալով Ջալալօղլի՝ երկար ժամանակ մեծ ջանքեր է գործադրել Լոռվա գյուղերում կաթնագործական ընկերություններ կազմակերպելու, անասնապահության ու անասնաբուծության նորագույն մեթոդներ ներդնելու ուղղությամբ: Նրան հաջողվել է 1890-ական թվականների վերջերին Շուլավերում բացել պանրագործարան, որը գոյատևել է մի քանի տարի:

1906թ. Ս.Աբովյանն անցել է մանկավարժական աշխատանքի: Նա Թիֆլիսի Գայանյան դպրոցում աշխատել է որպես բնագիտության և մաթեմատիկայի ուսուցիչ, ապա՝ տեսուչ:

1921թ. նա տեղափոխվել է Երևան, վարել մի շարք պատասխանատու պաշտոններ. եղել է ՀԽՍՀ հողժողկոմի տեղակալ, հողժողկոմի կոլեգիայի անդամ, իսկ 1922-1923թթ. լուսավորության ժողովրդական կոմիսար:

1923թ. Ս.Աբովյանը հրավիրվել է ԵՊՀ որպես գյուղատնտեսական ֆակուլտետի դասախոս, եղել նույն ֆակուլտե-

տի ամբիոնի վարիչ, ապա՝ դեկան: Զբաղվել է նաև գիտական աշխատանքով: Նրա գրչին են պատկանում «Կաթնատնտեսության դասընթաց» հայերեն առաջին ձեռնարկը, գիտական և գիտահանրամատչելի մի շարք գրքույկներ ու հոդվածներ:

1930թ., երբ ֆակուլտետի հիմքի վրա ստեղծվեց հայկական գյուղատնտեսական ինստիտուտը, նա նշանակվեց ինստիտուտի տնօրեն և այդ պաշտոնը վարեց մինչև 1937թ., երբ երկրում մոլեգնող բռնարարքների հետևանքով ընդհատվեց նրա աշխատանքային գործունեությունը Երևանում:

Վախճանվել է 1942թ. հունիսի 21-ին:

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՇՈՏ ԳԱՐԵԳԻՆԻ

Աղբյուրագետ-պատմաբան,
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1903թ. հունվարի 31-ին Վայոց ձորի Կեչուտ գյուղում: Նախնական կրթությունը ստացել է Նախիջևանի հայկական դպրոցում, ապա՝ 1916-1917թթ. սովորել Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: 1920-1926թթ. Ա.Աբրահամյանն աշխատել է Վայոց ձորի Խաչիկ գյուղում որպես հոգևոր հովիվ:

1933թ. ավարտել է ԵՊՀ պատմատնտեսագիտական ֆակուլտետը, 1937թ. Մոսկվայի ԽՍՀՄ Կենտգործկոմին կից ասպիրանտուրան: Նույն թվականին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն:

Մասնակցել է Հայրենական պատերազմին: 1948թ. Անանիա Շիրակացուն նվիրված ուսումնասիրությունների շարքի համար նրան շնորհվել է պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան, մեկ տարի անց՝ պրոֆեսորի կոչում:

1944-1949թթ. ղեկավարել է ԵՊՀ հայ ժողովրդի պատմության, իսկ 1968-1974թթ.՝ հնագիտության և աղբյուրագիտության ամբիոնները: 1944 և 1949-1954թթ. խմբագրել է «Էջմիածին» ամսագիրը: 1938-ից, փոքր ընդմիջումներով, մինչև կյանքի վերջը ԵՊՀ պատմության ֆակուլտետում վարել է հայ ժողովրդի պատմության, աղբյուրագիտության և հնագրության դասընթացներ:

Ա.Աբրահամյանը ծավալել է նաև հասարակական ակտիվ գործունեություն: 1944թ. պետական հատուկ հանձնարարու-

թյամբ գործուղվել է Իրան, Իրաք, Լիբանան, Պաղեստին, Եգիպտոս՝ սփյուռքահայության շրջանում հանգանակություն կազմակերպելու «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունն ստեղծելու համար: 1945-1946թթ. մեծ աշխատանք է տարել Մերձավոր Արևելքի երկրներում հայրենադարձությունը կազմակերպելու գործում:

Ա.Աբրահամյանի գրչին են պատկանում շուրջ 250 հոդված, երկու տասնյակից ավելի մենագրություններ, որոնցից հիշարժան են «Անանիա Շիրակացու մատենագրությունը» (Եր., 1944), «Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը» (Եր., 1956), «Հայ գրի և գրչության պատմություն» (Եր., 1959), «Եղիա Կարնեցու «Դիվանը» (Եր., 1967), «Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության», հ. 1 (Եր., 1963), հ.2 (Եր., 1967) գործերը:

Ա.Աբրահամյանը գիտական զեկուցումներով հանդես է եկել միջազգային և միութենական գիտաժողովներում (Դելի, Պրահա, Մոսկվա, Թբիլիսի, Բաքու և այլն):

1963թ. Ա.Աբրահամյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է մարտական և աշխատանքային գերազանցության մեդալներով և ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատվոգրերով:

Վախճանվել է 1983թ. ապրիլի 31-ին Երևանում:

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԲԵՆԻԱՄԻՆ ԼԵՎՈՆԻ

Մեխանիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս

Ծնվել է 1913թ. փետրվարի 16-ին Կարսի մարզի Արդահան քաղաքում: 1920թ. ընտանիքը գաղթել է Ալեքսանդրապոլ (այժմ՝ Գյումրի), ապա 1924թ. տեղափոխվել Երևան: Յոթնամյա կրթությունը ստացել է Երևանի Ալ.Մյասնիկյանի անվան միջնակարգ դպրոցում: Այնուհետև սովորել է Երևանի գեղարվեստական տեխնիկումում, որն ավարտել է 1931թ.:

1933թ. ընդունվել է ԵՊՀ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետ: 1935թ. ուսումը շարունակել է Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մեխանիկամաթեմատի-

կական ֆակուլտետում, որն ավարտել է 1940թ.:

1941-1946թթ. ծառայել է բանակում: Զորացրվելուց հետո 1946-ից, աշխատել է ՀԽՍՀ ԳԱ մաթեմատիկայի և մեխանիկայի սեկտորում որպես կրտսեր գիտաշխատող, գիտությունների ակադեմիայի տեխնիկական գիտությունների բաժանմունքի գիտական քարտուղար, ՀԽՍՀ ԳԱ մաթեմատիկայի և մեխանիկայի ինստիտուտում՝ ավագ գիտաշխատող, գիտական քարտուղար, բաժնի վարիչ, ՀՀ ԳԱԱ մեխանիկայի ինստիտուտում՝ բաժնի վարիչ:

1950թ. պաշտպանել է թեկնածուական, իսկ 1963թ. Լենինգրադի պոլիտեխնիկական ինստիտուտում՝ դոկտորական ատենախոսություն: 1965թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Բ.Աբրահամյանը հեղինակ է բազմաթիվ հոդվածների և մենագրությունների, որոնք վերաբերում են առաձգականության տեսությանը՝ երկրաչափական բարդ ձևի լայնական կտրվածք ունեցող լիսեռների և ձողերի ոլորմանն ու ծռմանը, առաձգականության տեսության խառը եզրային և կոնտակտային խնդիրներին, տարածական ստատիկ և դինամիկ կոնտակտային խնդիրներին, համասեռ և շերտավոր տարածական մարմիններում առաձգական ալիքների տարածմանը: Դասական են համարվում ուղղանկյան և վերջավոր գլանի համար առաձգականության տեսության առաջին եզրային խնդիրների նրա լուծումները:

Շուրջ 30 տարի նա դասավանդել է ԵՊՀ-ում, եղել է Հայաստանի և Ռուսաստանի տեսական և կիրառական մեխանիկայի ազգային կոմիտեների անդամ:

1971թ. Բ.Աբրահամյանն ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1996-ին՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս:

Նա մասնակցել է բազմաթիվ միջազգային գիտաժողովների (ԳՖՀ՝ 1964, ԱՄՆ՝ 1968, Հոլանդիա՝ 1974):

Վախճանվել է 2007թ. մարտի 4-ին Երևանում:

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԼԵՎ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ

Փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1928թ. մարտի 11-ին Ախալքալաքում: Սովորել է Թիֆլիսի թիվ 43 դպրոցում: 1950թ. ավարտել է Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետը:

1950-1956թթ. եղել է մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի գիտաշխատող, 1955-1971թթ. ընդհատումներով՝ ԵՊՀ փիլիսոփայության ամբիոնի դոցենտ, 1956-1958թթ.՝ «Կոմունիստ» թերթի ագիտացիայի և պրոպագանդայի բաժնի վարիչ, 1958-1969թթ. ՀԽՍՀ ԳԱ փիլիսոփայության և իրավունքի սեկտորի գիտաշխատող:

1953թ. Լ.Աբրահամյանը Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան համալսարանում պաշտպանել է թեկնածուական, 1968թ. դոկտորական ատենախոսություն: 1955թ. նրան շնորհվել է դոցենտի, 1971-ին՝ պրոֆեսորի կոչում:

1969-1970թթ. աշխատել է ԵՊՀ փիլիսոփայության, իսկ 1970-1976թթ.՝ դիալեկտիկական մատերիալիզմի և տրամաբանության ամբիոնում: 1976-1978թթ. եղել է ԵրՊԻ փիլիսոփայության ամբիոնի պրոֆեսոր, 1978-1987թթ. մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի տնօրենի տեղակալ, 1987-2008թթ.՝ ԵՊՀ դիալեկտիկական մատերիալիզմի և տրամաբանության (այժմ՝ տեսական փիլիսոփայության և տրամաբանության) ամբիոնի պրոֆեսոր: 2008թ. անցել է կենսաթոշակի:

Լ.Աբրահամյանը հեղինակ է 67 հոդվածի, 14 մենագրության, որոնցից առավել կարևոր են "Тетрадь Sigma. Размышления на философские темы" (Ер., 2008), «Նամակներ մեծ բարոյախոսների մասին» (Եր., 2007), "Беседы о классической философии" (Ер., 2006), "Понять философа" (Ер., 2006), "Другой Кант, Полигнозис" (М., 2004,) "О философских проблемах знаковой теории языка" (Ер., 2001) գրքերը:

Լ.Աբրահամյանը մեծ ներդրում ունի Ի.Կանտի աշխատությունների հայերեն թարգմանության և մեկնաբանման գործում:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 4 ատենախոսություն:

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԼԵՎՈՆ ՀՄԱՅԱԿԻ

Ազգագրագետ,
պատմական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ



Ծնվել է 1947թ. փետրվարի 1-ին Երևանում: 1965թ. ավարտել է թիվ 55 միջնակարգ դպրոցը, 1970թ. ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետը, 1978-ին՝ ԽՍՀՄ ԳԱ Մոսկվայի ազգագրության ինստիտուտի ասպիրանտուրան: 1978թ. Լ.Աբրահամյանը նույն ինստիտուտում պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն ու աշխատանքի անցել ՀԽՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում որպես կրտսեր, ապա՝ ավագ գիտաշխատող:

1990-ից տարբեր ազգագրական դասընթացներ է կարդում ԵՊՀ-ում: Դասավանդել է նաև ԱՄՆ-ի (Պիտսբուրգ՝ 1994, Կալիֆոռնիա՝ 1997, 2008, Կոլումբիա՝ 2001) համալսարաններում: 2005-ից ղեկավարում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արդիականության ազգաբանության բաժինը:

2006թ. Լ.Աբրահամյանն ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ:

Հեղինակ է շուրջ 170 աշխատությունների՝ նվիրված հայ ազգագրության ու առասպելաբանության, արվեստաբանության, հնագույն մշակույթների և հայ արդի հասարակության ազգաբանության հարցերին, որոնցից կարևոր են՝ “Первобытный праздник и мифология” (Ер., 1983), “Беседы у дерева” (М., 2005), “Armenian Identity in a Changing World” (Costa Mesa, 2006) մենագրությունները:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 3 ատենախոսություն:

2009թ. Լ.Աբրահամյանն արժանացել է ՀՀ մշակույթի վաստակավոր գործչի կոչման:

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՄԱՐՏԻՆ ԳՐԻԳՈՐԻ

Ֆիզիկոս,
Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր

Ծնվել է 1949թ. հունիսի 10-ին Երևանում: 1966թ. ավարտել է Երևանի թիվ 32 միջնակարգ դպրոցը, 1971թ. ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետը:

1976թ. պաշտպանել է թեկնածուական, 1986թ. դոկտորական ատենախոսություն: 1979թ. նրան շնորհվել է դոցենտի, 1989-ին՝ պրոֆեսորի կոչում:

1971-1979թթ. Մ.Աբրահամյանը եղել է ԵՊՀ ընդհանուր ֆիզիկայի ամբիոնի ավագ դասախոս, 1979-1984թթ.՝ դոցենտ, 1984-1990թթ.՝ ֆիզիկայի ֆակուլտետի դեկանի տեղակալ, իսկ 1991-1994թթ.՝ ընդհանուր ֆիզիկայի ամբիոնի վարիչ: 1994-1995թթ. վարել է Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական աշխատանքների, իսկ 1995-2000թթ. ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի պաշտոնները:

Մ.Աբրահամյանը հեղինակ է ավելի քան 100 գիտական հոդվածների՝ նվիրված տեսական ֆիզիկայի և աստղաֆիզիկայի հարցերին, ավելի քան մեկ տասնյակ ուսումնական և ուսումնամեթոդական աշխատանքների, այդ թվում՝ «Մեխանիկայի ֆիզիկական հիմունքներ» (Եր., 1997, 2008) «Ընդհանուր ֆիզիկայի խնդիրների ժողովածու» (Եր., 2002), «Ընդհանուր ֆիզիկայի օպտիկա բաժնի խնդիրներ» (Եր., 2003) բուհական դասագրքերի:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 5 ատենախոսություն:

Մ.Աբրահամյանը Ռ.Հովհաննիսյանի հետ մշակել է գալակտիկաների բազմաբաղադրիչ կառուցվածքի տեսությունը, տվել գալակտիկաների պարուրաձև կառուցվածքի ոչ գծային ալիքային մոդելը, առաջարկել աստղերի և ակտիվ գալակտիկաներից չիթային արտանետումների ոչ ստացիոնար մրրկային մոդել:

1990-1991թթ. Մ.Աբրահամյանը գիտական սեմինարներով և դասախոսություններով հանդես է եկել ԶԺՀ Նանկինի, Շանհայի, Սիանի և Պեկինի աստղադիտարաններում և համալսարաններում:

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՋՈՒԼԻԵՏԱ ՀԱՅԿԻ

Բուսաբան,
կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1934թ. մարտի 27-ին Լենինականում (այժմ՝ Գյումրի): 1951թ. ավարտել է Երևանի թիվ 8 դպրոցը, 1956թ. ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետը:

1956-1962թթ. Ջ.Աբրահամյանն աշխատել է ՀԽՍՀ ԳԱ բուսաբանության ինստիտուտում: 1962թ. ընդունվել է ԵՊՀ ասպիրանտուրա: 1965-ից աշխատում է ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի բուսաբանության ամբիոնում: 1966թ. թեկնածուական ատենախոսություն պաշտպանելուց հետո եղել է ասիստենտ, ավագ դասախոս, 1971-ից դոցենտ: 1974թ. ստացել է դոցենտի կոչում: 1990թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1990-ից զբաղեցրել է բուսաբանության ամբիոնի պրոֆեսորի պաշտոն: 2004թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Ջ.Աբրահամյանի գիտական աշխատանքները վերաբերում են մակաբանության, մասնավորապես հողային մանրադիտակային սնկերի կենսաբազմազանության և էկոլոգիայի հարցերին: Ուսումնասիրել է հողի միկոբիոտայի քանակական և որակական կազմի դինամիկան կախված տեխնածին ծանրաբեռնվածության աստիճանից և բնույթից, հետազոտել գյուղատնտեսական որոշ բույսերի արմատային ոլորտի էկրիստրոֆ սնկերի կոմպլեքսները և դրանց ազդեցությունն այդ բույսերի աճման ու զարգացման վրա, հիվանդությունների հարուցիչներից բույսերի պաշտպանության նպատակով սինթետիկ պոլիմերային կոմպոզիցիաների կիրառման նպատակահարմարությունը և դրանց կենսաբանական օգտահանության հնարավորությունը հողի աղտոտումը կանխարգելու համար: Մատենադարանի և ՀՀ որոշ մարզերի գրադարաններում կատարել է սնկերով վարակված ձեռագրերի, գրքերի և փաստաթղթերի սնկաբանական հետազոտություններ և մշակել դրանց դեմ պայքարի արդյունավետ միջոցներ:

Հեղինակ է 110 գիտական աշխատանքների և ուսումնամեթոդական ձեռնարկների, համահեղինակ՝ “Ботаника” (Ер., 1989) և «Ֆիտոպաթոլոգիա» (Եր., 2004) ուսումնական ձեռնարկների:

Զեկուցումներով հանդես է եկել հանրապետական, տարա-

ծաշրջանային և միջազգային բազմաթիվ գիտաժողովներում (Հունգարիա՝ 1978, Տալլին 1989, 1998, Մոսկվա՝ 2002, Սանկտ Պետերբուրգ 2007):

1988թ. Ջ.Աբրահամյանը պարգևատրվել է «Աշխատանքի վետերան» մեդալով:

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՌԱՖԻԿ ԱՇՈՏԻ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1929թ. հոկտեմբերի 12-ին Վայքի Ղուշչի (այժմ՝ Կեչուտ) գյուղում: 1936թ. ընտանիքով տեղափոխվել է Երևան: 1936-1946թթ. սովորել է Երևանի տարբեր դպրոցներում, ավարտել թիվ 23 դպրոցը: 1946-1947թթ. սովորել է Երևանի բժշկական ինստիտուտում, 1947-1952թթ. ԵՊՀ պատմության ֆակուլտետում: Ռ.Աբրահամյանը մեկ տարի եղել է ուսուցիչ, ապա 1954-1957թթ. Մատենադարանի սպասարկման բաժնի վարիչ, 1957-1959թթ. կրտսեր գիտաշխատող:

1959-1962թթ. սովորել է ՀԽՍՀ ԳԱ արևելագիտության սեկտորի ասպիրանտուրայում: 1963-1968թթ. եղել է սեկտորի կրտսեր, 1968-1971թթ.՝ ավագ գիտաշխատող:

1964թ. Ռ.Աբրահամյանը պաշտպանել է թեկնածուական, 1982թ. դոկտորական ատենախոսություն: 1985թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1971-1977թթ. նա եղել է ԵՊՀ Արևելքի պատմության ամբիոնի ավագ դասախոս և նույն ամբիոնի վարիչ, 1978-1980թթ. պատմության ֆակուլտետի ընդհանուր պատմության ամբիոնի ավագ դասախոս, 1980-1985թթ. դոցենտ, իսկ 1988-1998թթ.՝ պրոֆեսոր:

Հեղինակ է շուրջ 80 աշխատությունների, այդ թվում՝ մի քանի դրքերի, որոնցից կարևոր են՝ "Армянские источники XVIII в. об Индии" (Ер., 1968), «Միքայել Նալբանդյանի հնդկական ուղևորությունը» (Եր., 1979), «Վ.Ի.Լենինի և նրան նվիրված աշխատությունների հրատարակումը և տարածումը Արևելքի երկրներում» (Եր., 1989) մենագրությունները: Համահեղինակ է «Համառոտ ուրվագծեր հայ գաղթօջախների պատմության» երկհատորյակի հ.I (Եր., 1964), հ.II (Եր., 1966) և «Հայ ժողովրդի պատմություն» բազմահատորյակի

6-րդ հատորի (Եր., 1981):

1985թ. պարգևատրվել է «1941-1945թթ. Հայրենական պատերազմում հաղթանակի 40 տարին» մեդալով:

Վախճանվել է 1998թ. հուլիսի 16-ին Երևանում:

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՍԱՄՎԵԼ ԱԲՐԱՀԱՄԻ

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ



Ծնվել է 1954թ. հունվարի 3-ին Երևանում: 1961-1971թթ. սովորել է Երևանի թիվ 8, այնուհետև թիվ 55 դպրոցներում, 1971-1976թ.՝ Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական մանկավարժական ինստիտուտի օտար լեզուների ֆակուլտետի անգլիական բաժնում:

1976թ. Ս.Աբրահամյանն ընդունվել ԽՍՀՄ ԳԱ Մոսկվայի միջազգային բանվորական շարժման ինստիտուտի ասպիրանտուրա: 1980թ. Մոսկվայում պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 2008թ. նրան շնորհվել է դոցենտի կոչում:

1980-1991թթ. եղել է ՀԿԿ Կենտկոմի հասարակական-քաղաքական հետազոտությունների ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, ավագ գիտաշխատող, գիտական քարտուղար, 1991-1995թթ. Սփյուռքահայության հետ կապերի կոմիտեի գիտական քարտուղար և գլխավոր մասնագետ, 1995-1997թթ.՝ Գործնական հոգեբանության և սոցիոլոգիայի համալսարանի անգլերենի դասախոս և արտասահմանյան կապերի գծով պրոռեկտոր: 1997-ից աշխատում է ԵՊՀ անգլերենի թիվ 1 ամբիոնում որպես դասախոս, ապա՝ դոցենտ: 1998-2009թթ. եղել է ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի դեկանի տեղակալ: 2009թ. ընտրվել է նույն ֆակուլտետի դեկան:

Հեղինակ է շուրջ 40 գիտական և գիտամեթոդական աշխատությունների՝ նվիրված Անգլիայի երկրագիտության, անգլերենի դասավանդման, ազգային մշակույթի և լեզվագիտակցության հարցերին: Հեղինակ է նաև "English Customs, Traditions and Festivals" (Yerevan, 2008) ուսումնական ձեռնարկի:

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՅԿԱԶ ԻՍԱՀԱԿԻ

Երկրաբանահանքաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ՀԽՍՀ վաստակավոր երկրաբան

Ծնվել է 1914թ. օգոստոսի 23-ին Ղարաբաղի Մաղավուզ գյուղում: Սկզբնական կրթությունը ստացել է Հայրենի գյուղում, ապա՝ Մարտակերտի 7-ամյա դպրոցում: Մինչև 1930թ. աշխատել է Լենինականի (այժմ՝ Գյումրի) տեքստիլ կոմբինատում՝ միաժամանակ ստանալով միջնակարգ կրթություն: 1933-1936թթ. ծառայել է Կարմիր բանակի առաջին հայկական գնդում: 1941թ. ավարտել է ԵՊՀ երկրաբանության ֆակուլտետը և աշխատանքի անցել ՀԽՍՀ ԳԱ երկրաբանության ինստիտուտում որպես կրտսեր գիտաշխատող:

Հ.Ադամյանը մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին, արժանացել մի շարք մարտական շքանշանների ու մեդալների: 1949թ. ավարտելով Մոսկվայի երկրաբանական ինստիտուտի ասպիրանտուրան՝ պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և նշանակվել ՀԽՍՀ ԳԱ երկրաբանության ինստիտուտի գիտքարտուղար:

1950թ. տեղափոխվելով ԵՊՀ՝ աշխատել է երկրաբանության ֆակուլտետի հանքաբանության և պետրոգրաֆիայի ամբիոնի դոցենտ, ֆակուլտետի դեկանի տեղակալ, իսկ 1963-1967թթ.՝ համալսարանի գիտահետազոտական բաժնի վարիչ:

1967-1979թթ. եղել է ԵՊՀ երեկոյան և հեռակա ուսուցման գծով պրոռեկտոր, կյանքի վերջին տարիներին՝ ԵՊՀ պատմության թանգարանի ավագ գիտաշխատող:

Հ.Ադամյանի գիտական հետազոտություններն հիմնականում վերաբերում են Հայաստանի հարավային տարածքի երկրաբանական կառուցվածքին: Այդ աշխատանքներն ամփոփված են Մեղրու շրջանի ալկալային ապարների պետրոգրաֆիային նվիրված նրա մենագրության մեջ, բազմաթիվ հոդվածներում ու հաշվետվություններում: Նա ստեղծել է «Պետրոլոգիա» (Եր., 1970) դասագիրքը, կազմել տարբեր շրջանների խոշոր մասշտաբների երկրաբանական-պետրոգրաֆիական քարտեզներ: Նրա մի շարք աշխատություններ տպագրված են «Հայկական ԽՍՀ երկրաբանություն» բազմահատորյակի 43-րդ և 48-րդ հատորներում:

Նա Հայաստանի լրագրողների միության անդամ էր, ուներ

բանաստեղծական խառնվածք ու դրելու ձիրք, հանդես էր գալիս «Արցախ» գրական ծածկանունով: 1984թ. լույս է տեսել նրա «Քարեր, ծաղիկներ, սեր» արձակ բանաստեղծությունների ժողովածուն:

1967թ. Հ.Ադամյանն արժանացել է ՀԽՍՀ վաստակավոր երկրաբանի կոչման:

Վախճանվել է 1999թ. ապրիլի 5-ին Երևանում:

ԱԴՈՆՑ ՄՈՒՇԵՂ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1910թ. մայիսի 16-ին Բաքվում: 1932թ. ավարտել է Երևանի Հայկական հեռակա մանկավարժական ինստիտուտը, 1948-ին՝ Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետի ասպիրանտուրան: Նույն թվականին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1948-1955թթ. Մ.Ադոնցը ղեկավարել է Ֆիզիկական կուլտուրայի հայկական ինստիտուտի քաղաքատնտեսության ամբիոնը, 1955-1958թթ.՝ ՀԽՍՀ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտի քաղաքատնտեսության սեկտորը: 1958թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, 1961թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1958-1961թթ. Մ.Ադոնցը եղել է Հայաստանի կոմկուսի կենտկոմի քարտուղար, 1962-1966թթ. ՀԽՍՀ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտի տնօրենի տեղակալ, 1966-1989թթ. Տնտեսագիտության և պլանավորման հայկական գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն:

Նա հեղինակ է ավելի քան 100 գիտական ուսումնասիրությունների, որոնցից արժեքավոր են հատկապես «Արևելյան Հայաստանի տնտեսական զարգացումը XIX դարում» (Եր., 1957), «Սոցիալիստական հասարակարգի ազգային եկամուտը» (Եր. 1963), «Հայաստանի ժողովրդական տնտեսությունը և հայ տնտեսագիտական միտքը XX դարի սկզբին» (Եր., 1968), «Միջտնտեսային կոոպերացիան և ագրոարդյունաբերական ինտեգրացիան» (Եր., 1978) մենագրությունները:

Մ.Ադոնցի ղեկավարությամբ նրա սաներից շատերը դարձել են գիտության թեկնածուներ և դոկտորներ:

Նա եղել է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի, Երևանի քաղաքային խորհրդի և շրջանային խորհրդի պատգամավոր, Երևանի խորհրդային շրջկոմի պլենումի անդամ:

Պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով, մեդալներով և ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատվոգրերով:

Մ.Ադոնցը վախճանվել է 1994թ. հունիսի 2-ին Երևանում:

ԱԶԱՏՅԱՆ ՀԱՅԿ ՆԱՀԱՊԵՏԻ

Տնտեսագետ, պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ,
ՀԽՍՀ և Վր. ԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1881թ. սեպտեմբերի 25-ին Ղարաքիլիսայում (այժմ՝ Վանաձոր): Ավարտել է Թիֆլիսի ռեալական դպրոցը:

1905թ. Հ.Ազատյանն ընդունվել է ՌՍԴԲ կուսակցության շարքերը և դարձել նրա մենշևիկյան ֆրակցիայի անդամ: 1905թ. սեպտեմբերին ձերբակալումից խուսափելու համար մեկնել է արտասահման և Փարիզի ազգային գրադարանում զբաղվել հասարակական գիտությունների ուսումնասիրությամբ: 1906թ. վերադարձել է Թիֆլիս ու անցել կուսակցական աշխատանքի: 1908-1911թթ. աշխատել է Բաքվում, ընտրվել է մետաղագործ բանվորների արհեստակցական միության քարտուղար, ապա նաև՝ ՌՍԴԲ(մ)Կ Բաքվի կոմիտեի քարտուղար:

Հայաստանում խորհրդային իշխանություն հաստատվելուց հետո Հ.Ազատյանը փոխադրվել է Երևան և վարել մի շարք պատասխանատու պաշտոններ. եղել է Հայաստանի արհեստակցական միությունների խորհրդի նախագահ, ՀԿ(բ)Կ կենտկոմի քարտուղար, Երևանի համալսարանին առընթեր բանֆակի դեկան, Երևանի քաղաքային խորհրդի նախագահ, 1922-1929թթ.՝ Հայաստանի կենտգործկոմի նախագահի տեղակալ: 1921թ. հրավիրվել է ԵՊՀ, դասավանդել քաղաքատնտեսություն, ագրարային հարց, տնտեսական փուլերի պատմություն առարկաները, ղեկավարել բազմաթիվ ասպիրանտների ու երիտասարդ գիտաշխատողների: 1928թ. Հ.Ազատյանին շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1930թ. Հ.Ազատյանը տեղափոխվել է Մոսկվա ու նշանակվել Լենինի անվան գյուղատնտեսական ակադեմիայի փոխնա-

խագահ, սակայն 1931թ. հունիսին առողջական վիճակի պատճառով տեղափոխվել է Թիֆլիս, ուր և կազմակերպել է նույն ակադեմիայի անդրկովկասյան մասնաճյուղը:

1934 թվականից նա անցել է մանկավարժական աշխատանքի Թիֆլիսի բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ դասավանդելով քաղաքատնտեսություն, դիալեկտիկական ու պատմական մատերիալիզմ, ԽՍՀՄ ժողովուրդների պատմություն: 1956թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ:

Գիտական հոդվածներ ու աշխատություններ գրելու հետ միաժամանակ Հ.Ազատյանը կատարել է նաև թարգմանություններ, խմբագրել Կ.Մարքսի «Կապիտալի» հայերեն առաջին հրատարակության երկրորդ և երրորդ հատորները:

1961թ. Հ.Ազատյանն արժանացել է Վր.ԽՍՀ և ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչումների:

Վախճանվել է 1964թ. նոյեմբերի 13-ին Թբիլիսիում, թաղված է Երևանում:

ԱԶԱՏՅԱՆ ՎԱՂԱՐՇ ԴԱՎԹԻ

Քիմիական գիտությունների թեկնածու, դոցենտ

Ծնվել է 1904թ. հունվարի 14-ին Թիֆլիսում: Ավարտելով Ներսիսյան դպրոցը ընդունվել է ԵՊՀ գյուղատնտեսական ֆակուլտետ, որն ավարտել է 1928թ.: 1930թ. ավարտել է բնագիտական ֆակուլտետի կենսաբանության և 1931-ին՝ նույն ֆակուլտետի քիմիայի բաժինը: 1928-1934թթ. աշխատել է ԵՊՀ-ում որպես դասախոս, քիմիայի ֆակուլտետի առաջին դեկան և պրոռեկտոր:

1940թ. Վ.Ազատյանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն:

1939-1943թթ. նա եղել է ԽՍՀՄ ԳԱ Հայկական մասնաճյուղի (Արմֆան) տնօրեն Հ.Օրբելու տեղակալը: Նրա անմիջական մասնակցությամբ ստեղծվել է Արմֆանի քիմիայի ինստիտուտը (Օրգանական քիմիայի ինստիտուտ), որի տնօրենն էր 1939-1945թթ.: Նրա ակտիվ մասնակցությամբ ստեղծվել է նաև Հայաստանի քիմիական ֆիզիկայի ինստիտուտը:

Հայաստանի քիմիական արդյունաբերության զարգացման գործում մեծ նշանակություն են ունեցել Վ.Ազատյանի ստացած

գիտական արդյունքները քլորոպրենային կաուչուկի, դիքլորբուլթենի, ացետիլենային միացությունների սինթեզի, տարրօրգանական միացությունների կատալիտային ցիկլոօկտատետրաենի ածանցյալների ուսումնասիրման բնագավառում: Նրա անունը սերտորեն կապված է նաև «Հայկական քիմիական ամսագրի» ստեղծման (1947թ.) հետ: Նա երկար տարիներ եղել է ՀԽՍՀ ԳԱ տերմինաբանական խորհրդի փոխնախագահ: Իր բացառիկ լեզվիմացությամբ և լեզվաբանական հարուստ գիտելիքներով մեծապես նպաստել է հայերեն քիմիական տերմինաբանության մշակմանն ու զարգացմանը: Մեծ է նրա ավանդը նաև ռուս-հայերեն քառահատոր և ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարանների ստեղծման գործում: Վ.Ազատյանը զգալիորեն նպաստել է նաև Հայկական հանրագիտարանի ստեղծմանը:

Նա ԽՍՀՄ Մենդելեևյան քիմիական ընկերության ստեղծողներից և ակտիվ ղեկավարներից էր:

Վ.Ազատյանը պարգևատրվել է Կարմիր դրոշի շքանշանով:

Վախճանվել է 1992թ. դեկտեմբերի 28-ին:

ԱԶԳԱԼԴՅԱՆ ԼԵՈՆԻԴ ՌՈՒԲԵՆԻ

Արցախյան ազատագրական շարժման գործիչ, զոհված ազատամարտիկ

Ծնվել է 1942թ. նոյեմբերի 22-ին Թբիլիսիում: 1949-1959թթ. սովորել է Երևանի թիվ 25 դպրոցում: 1960թ. ընդունվել է Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետ, իսկ 1966թ. ավարտել ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետը:

1966-1989թթ. աշխատել է Պետպլանի լազերային տեխնիկայի հաշվողական կենտրոնում, ԵՊՀ կազմում գործող «Լազերային տեխնիկա» գիտաարտադրական միավորումում, «Էներգիա» գիտաարտադրական միավորումում և Ատոմային էլեկտրակայանների համամիութենական գիտահետազոտական ինստիտուտի Երևանի մասնաճյուղում որպես համակարգչային ծրագրավորման և հաշվողական տեխնիկայի գծով բաժնի վարիչ:

1990թ. փետրվարից՝ Արցախյան ազատամարտի առաջին օրերից, Լ.Ազգալդյանը «Անկախության բանակ»-ի հրամանատարն էր: Կազմակերպել է Վարդենիսի և Մեղրու շրջանների

ինքնապաշտպանությունը, մասնակցել ազատագրական մարտերին, այդ թվում՝ Նյուվադի գյուղի առաջին գրոհին: Մայիսի 27-ին Երևանի կայարանամերձ հատվածում և Սովետաշենի (այժմ՝ Նուբարաշեն) արյունալի սադրանքից հետո ծրագրել և իրականացրել է խորհրդային զորքերի Երևան ներթափանցելու խոչընդոտումը:

1990թ. վերջերից Լ.Ազգալդյանը մասնակցել է Գետաշենի ենթաշրջանի, Շահումյանի, այնուհետև Մարտակերտի շրջանների ինքնապաշտպանական և ազատագրական մարտերին: 1991թ. հունիսին համախոհների հետ միասին ստեղծել է «Ազատագրական բանակ» ռազմական կազմավորումը, որի գլխավոր հրամանատար մնաց մինչև կյանքի վերջը:

Լ.Ազգալդյանը զոհվել է 1992թ. հունիսի 21-ին Մարտակերտի շրջանի Տոնաշեն գյուղի մերձակայքում մղված մարտում, թաղված է Երևանում:

Հետմահու արժանացել է ՀՀ և ԼՂՀ «Մարտական խաչ» I աստիճանի շքանշանների:

ԼՂՀ Քաշաթաղի շրջանի Արտաշավ գյուղի միջնակարգ դպրոցը կոչվում է Լ.Ազգալդյանի անունով:

ԱԹԱՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ ՌԱՖԱՅԵԼԻ

Լեզվաբան, փիլիսոփա,
փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Ծնվել է 1932թ. փետրվարի 10-ին Երևանում: 1949-1953թթ. սովորել է Երևանի օտար լեզուների ինստիտուտում: 1956թ. ավարտել է ԵՊՀ ասպիրանտուրան՝ ընդհանուր լեզվաբանություն մասնագիտացմամբ: 1957 թվականից մինչև կյանքի վերջը աշխատել է ԵՊՀ-ում: Էդ.Աթայանը 1957-1962թթ. եղել է ռոմանագերմանական բանասիրության ամբիոնի դասախոս, 1962-1968թթ.՝ ընդհանուր լեզվաբանության ամբիոնի ավագ դասախոս, 1969-1986թթ.՝ նույն ամբիոնի դոցենտ, 1987-1993թթ.՝ լեզուների տիպաբանության, ռուսաց լեզվի տեսության և մեթոդիկայի ամբիոնի վարիչ, 1993-2001թթ.՝ նույն ամբիոնի պրոֆեսոր: 1968-1969թթ. համատեղությամբ ղեկավարել է Երևանի Վ.Բրյուսովի անվան ռուսաց և օտար

լեզուների պետական մանկավարժական ինստիտուտի լեզվաբանության ամբիոնը:

1965թ. Էդ.Աթայանին շնորհվել է բանասիրական գիտությունների թեկնածուի, 1984թ.՝ փիլիսոփայական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: 1986թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1996թ.՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս:

Էդ.Աթայանը թողել է գիտական ու հրապարակախոսական հարուստ ժառանգություն. բազմաթիվ մենագրություններ և շուրջ վեց տասնյակ հոդվածներ: Առավել արժեքավոր են նրա «Կառուցվածքային շարահյուսության առարկան և հիմնական հասկացությունները» (ռուս., Եր., 1968), «Լեզվական ոլորտի կազմակերպման և գործառման հայեցակերպերը» (ռուս., Եր., 1976), «Լեզվական աշխարհի ներքին կերպավորումը և արտաքին վերաբերությունը» (Եր., 1981), «Լեզու և արտալեզվական իրականություն. գոյաբանական համեմատման փորձ» (ռուս., Եր., 1987), «Ազատությունը որպես գաղափար և որպես իրականություն» (ռուս., Եր., 1992) մենագրությունները: 1980-1990-ականներին նա հանդես է եկել նաև հրապարակախոսական բազմաթիվ հոդվածներով:

Էդ.Աթայանն զբաղվել է նաև թարգմանչական գործունեությամբ՝ մայրենի լեզվով հնչեցրել է արևմտաեվրոպական և ռուս ականավոր գրողների ու փիլիսոփաների ամբողջական երկեր կամ դրանց հատվածներ, որոնցից շատերն սպասում են տպագրության:

Էդ.Աթայանը հայկական նշանագիտության հիմնադիրներից է:

1999թ. Էդ.Աթայանը պարգևատրվել է «Մովսես Խորենացի» մեդալով:

Վախճանվել է 2002թ. հունվարի 1-ին Երևանում:

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՌՈՄԱՆ ԲԱԽՇԻԻ

Ֆիզիկոս,
Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր

Ծնվել է 1956թ. մայիսի 14-ին Ադրբ. ԽՍՀ Դաշքեսանի շրջանի Զագլիկ գյուղում: 1973թ. ավարտել է տեղի միջնակարդ

դպրոցը, 1978թ. ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետը և աշխատանքի անցել ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի օպտիկայի ամբիոնում:

1982-1986թթ. Ռ.Ալավերդյանն ուսանել է ԵՊՀ ասպիրանտուրայում, որն ավարտելուց հետո՝ 1987թ., պաշտպանել է թեկնածուական, 2000թ.՝ դոկտորական ատենախոսություն: 2003թ. նրան շնորհվել է դոցենտի, 2008-ին՝ պրոֆեսորի կոչում:

Ռ.Ալավերդյանի գիտական գործունեությունը նվիրված է հեղուկ բյուրեղների ոչ գծային օպտիկայի հատկություններին և հեղուկ բյուրեղներում մակածված անկայունությունների ու կառուցվածքային ֆազային անցումների փորձարարական ուսումնասիրմանը:

Հեղինակ է ավելի քան 60 գիտական հոդվածների, գիտամեթոդական և ուսումնամեթոդական մի շարք հրապարակումների, այդ թվում՝ «Օպտիկական երևույթների ֆիզիկայի խնդիրների ժողովածու» (Եր., 2005) ձեռնարկի:

Ռ.Ալավերդյանի ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 3 ատենախոսություն:

ԱԼԵՔՍԱՆԴՐՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ ԱՐԱՄԻ

Մաթեմատիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության և տեխնիկայի վաստակավոր դործիչ

Ծնվել է 1923թ. մարտի 29-ին Ալեքսանդրապոլում (այժմ՝ Գյումրի): 1945թ. ավարտել է ԵՊՀ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը, 1948-ին՝ Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի ասպիրանտուրան: 1948-1950թթ. աշխատել է ԵՊՀ-ում որպես ավագ դասախոս: 1949թ. Ռ.Ալեքսանդրյանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, իսկ 1955թ. ստացել է դոցենտի կոչում:

1954-1959թթ. նա ղեկավարել է ԵՊՀ դիֆերենցիալ հավասարումների ամբիոնը, 1959-1963թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ հաշվողական կենտրոնի տնօրեն: 1962թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1966թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1963թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ,

1986թ. ակադեմիկոս:

1963-1978թթ. Ռ.Ալեքսանդրյանը եղել է ՀԽՍՀ ԳԱ մաթեմատիկայի ինստիտուտի դիֆերենցիալ հավասարումների և ֆունկցիոնալ անալիզի բաժնի վարիչ, 1966-1967թթ. ԵՊՀ գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր, 1978-1988թթ.՝ ԵՊՀ մաթեմատիկայի ֆակուլտետի դեկան և դիֆերենցիալ հավասարումների ամբիոնի վարիչ:

Ռ.Ալեքսանդրյանի գիտական գործունեության հիմնական ուղղություններն են՝ մասնակի ածանցյալներով դիֆերենցիալ հավասարումներ, ֆունկցիոնալ անալիզի, ընդհանուր և հանրահաշվական տոպոլոգիայի տեսության հարցեր: Նա հեղինակ է բազմաթիվ գիտական հոդվածների և համահեղինակ "Общая топология" (М., 1979) դասագրքի:

1986թ. Ռ.Ալեքսանդրյանն արժանացել է ԽՍՀՄ Պետական մրցանակի: 1983թ. պարգևատրվել է «Պատվո նշան» շքանշանով:

Վախճանվել է 1988թ. մարտի 22-ին Երևանում:

ԱԼԻԽԱՆՈՎ ԱԲՐԱՀԱՄ ԻՍԱՀԱԿԻ

Ֆիզիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր,
ԽՍՀՄ ԳԱ և ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս

Ծնվել է 1904թ. մարտի 4-ին Թիֆլիսում: Դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Լենինգրադի (այժմ՝ Սանկտ Պետերբուրգ) պոլիտեխնիկական ինստիտուտ, որն ավարտել է 1929թ.: 1927-1941թթ. աշխատել է ԽՍՀՄ ԳԱ Լենինգրադի ֆիզիկատեխնիկական ինստիտուտում:

Ա.Ալիխանովի առաջին աշխատությունները նվիրված են ռենտգենակառուցվածքային վերլուծությանը և ռենտգենյան ճառագայթների ֆիզիկային: 1932 թվականից նա զբաղվել է միջուկային և տարրական մասնիկների ֆիզիկայով և ռադիոակտիվության ու միջուկների ռադիոակտիվ ճառագայթման հետազոտման ասպարեզում կատարել մի շարք աշխատանքներ, որոնք այսօր դարձել են դասական:

Ա.Ալիխանյանի և Մ.Կոզոդուևի հետ հայտնաբերել և հետազոտել է գրգռված միջուկներից էլեկտրոն-պոզիտրոնային

զույգերի արձակման երևույթը, Ա.Ալիխանյանի հետ հայտնաբերել ռադիոակտիվ տարրերի β-սպեկտրների տեսքի կախումը տարրի ատոմական համարից և ճշգրտել Ռեզերֆորդի ստացած որոշ արդյունքներ:

1940թ. Ա.Ալիխանովը կազմակերպել է Էլբրուսի տիեզերական ճառագայթների հետազոտման առաջին արշավախումբը: Հայրենական մեծ պատերազմի ամենածանր շրջանում՝ 1942թ., նա Ա.Ալիխանյանի հետ Արագածում հիմնեց գիտական կայան, իսկ ԵՊՀ-ում՝ տիեզերական ճառագայթների ուսումնասիրման լաբորատորիա, որը ԵՊՀ կազմում վերածվեց Ֆիզիկայի գիտահետազոտական ինստիտուտի՝ Ա.Ալիխանովի տնօրինությամբ, իսկ 1944-ին տեղափոխվեց ակադեմիայի համակարգ:

Ա.Ալիխանովն իր գործուն մասնակցությունն է ունեցել ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի ստեղծմանը և նրա հիմնադրման օրից դարձել ՀԽՍՀ ԳԱ իսկական անդամ: Նրա գիտական ղեկավարությամբ 1949թ. ստեղծվեց ԽՍՀՄ առաջին հետազոտական միջուկային ռեակտորը՝ ծանր ջրի կիրառմամբ:

Նա երկար տարիներ ղեկավարել է Մոսկվայի՝ աշխարհում հայտնի տեսական և փորձարարական ֆիզիկայի ինստիտուտը, որտեղ ռեակտորաշինության բնագավառի աշխատանքներին զուգահեռ կատարվել են հիմնարար հետազոտություններ տարրական մասնիկների ֆիզիկայի ասպարեզում:

Ա.Ալիխանովը մեծ ավանդ ունի նաև բարձր էներգիաների ֆիզիկայի բնագավառում կատարվող հետազոտությունների նյութական բազայի զարգացման գործում: Նրա ղեկավարությամբ Մոսկվայում կառուցվել է պրոտոնների արագացուցիչ՝ 7 ԳէՎ էներգիայով, որը դարձավ մոդել Սերպուխով քաղաքում կառուցված պրոտոնների՝ 70 ԳէՎ էներգիայով արագացուցչի համար, և որի նախագիծը մշակվեց Ա.Ալիխանովի ակտիվ մասնակցությամբ: Նա միջուկային ֆիզիկայի և տարրական մասնիկների արագացուցիչների ֆիզիկայի խորհրդային դպրոցի հիմնադիրներից է:

Ա.Ալիխանովն արժանացել է Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման, ԽՍՀՄ Պետական մրցանակի (3), պարգևատրվել Լենինի (3) և Աշխատանքային կարմիր դրոշի շքանշաններով:

Վախճանվել է 1970թ. դեկտեմբերի 8-ին Մոսկվայում:

ԱԼԻԽԱՆՅԱՆ ԱՐՏԵՄ ԻՍԱՀԱԿԻ

Ֆիզիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր,
ԽՍՀՄ ԳԱ թղթակից անդամ, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1908թ. հունիսի 24-ին Գանձակում: 1931թ. ավարտել է Լենինգրադի (այժմ՝ Սանկտ Պետերբուրգ) համալսարանը և աշխատանքի անցել Լենինգրադի ֆիզիկատեխնիկական ինստիտուտում:

1940թ. Ա.Ալիխանյանն արժանացել է ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտորի աստիճանի, 1942-ին՝ պրոֆեսորի կոչման: 1943թ. նա ՀԽՍՀ ԳԱ իսկական անդամ էր:

1930-1943թթ. Լենինգրադի ֆիզիկատեխնիկական ինստիտուտում եղել է գիտաշխատող, ապա՝ լաբորատորիայի վարիչ: 1931-1941թթ. դասախոսել է Լենինգրադի պետական համալսարանում: 1942թ. Ա.Ալիխանովի հետ ԵՊՀ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետում կազմակերպել է տիեզերական ճառագայթների ուսումնասիրման լաբորատորիա, որը 1943թ. համալսարանի կազմում վերածվեց ֆիզիկայի գիտահետազոտական ինստիտուտի: 1943-1973թթ. Ա.Ալիխանյանը, լինելով Երևանի ֆիզիկայի ինստիտուտի տնօրեն, ստեղծել է տիեզերական ճառագայթների ուսումնասիրության բնագավառի գիտնականների մի ամբողջ դպրոց:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին Ա.Ալիխանյանի կատարած մի շարք աշխատանքներ ունեցան սլաշտպանական բացառիկ կարևոր նշանակություն:

1946թ. Ա.Ալիխանյանի ջանքերով ստեղծվել է Մոսկվայի ինժեներաֆիզիկական ինստիտուտի միջուկային ֆիզիկայի ամբիոնը:

1942թ. Ա.Ալիխանովի հետ ստեղծել է Արագածի տիեզերական ճառագայթների հետազոտման կայանը, որտեղ տիեզերական ճառագայթներում հայտնաբերել են լիցքավորված մասնիկների «նեղ» հեղեղներ, մեծ էներգիայով պրոտոնների ուժգին հոսքեր և տիեզերական արագ նեյտրոնների ազդեցությամբ առաջացող պրոտոններ: Ա.Ալիխանյանն առաջինն է նշել տարրական նոր մասնիկների գոյությունը տիեզերական ճառագայթներում: 1950-ականների կեսերին իր աշխատակիցների հետ նա

կատարել է տարրական մասնիկների ուսումնասիրություն: Ա.Ալիխանովի և Մ.Կոզոդուևի հետ հայտնաբերել և հետազոտել է գրգռված միջուկներից էլեկտրոն-պոզիտրոնային զույգերի առաքման երևույթը, Ա.Ալիխանովի հետ սահմանել ռադիոակտիվ տարրերի β-սպեկտրների տեսքի կախումը տարրի ատոմական համարից: Հայտնաբերել է էլեկտրոններ առաքող առաջին արհեստական ռադիոակտիվ սիլիցիում տարրը:

Ա.Ալիխանյանը ստեղծել և կատարելագործել է մեծ էներգիայով մասնիկների հետազոտման սարքեր: Նրա նախաձեռնությամբ ստեղծվել է նաև Երևանի 6 ԳէՎ էներգիայով արագացուցիչը:

1958թ. նա Հայաստանում հիմնադրել է Նոր Ամբերդի կայանը, միաժամանակ ղեկավարել տեսական և փորձարարական ֆիզիկայի Նոր Ամբերդի միջազգային դպրոցը:

Ա.Ալիխանյանն արժանացել է ԽՍՀՄ Պետական (1941, 1948) և Լենինյան (1970) մրցանակների, պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի (2) շքանշանով:

Վախճանվել է 1978թ. փետրվարի 25-ին Մոսկվայում:

ԱԿՈՒՆՑԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ

Քիմիկոս, պրոֆեսոր



Ծնվել է 1869թ. հունվարի 14-ին Շամախիում: 1888թ. ավարտել է Բաքվի ռեալական, իսկ 1895թ. Մոսկվայի թագավորական տեխնիկական ուսումնարանը՝ ստանալով ինժեներ-քիմիկոս-տեխնոլոգի կոչում: 1895-1897թթ. աշխատել է Բաքվում: Կատարելագործվելու նպատակով 1897թ. մեկնել է Գերմանիա: 1901թ. «Ալկոհոլ տեխնոլոգիա», «Նավթի տեխնոլոգիա» և «Գինու տեխնոլոգիա» գրքերի համար Հ.Ակունյանին երկու տարի ժամկետով նշանակվել է պետական թոշակ, և նա գործուղվել է արտասահման՝ նախապատրաստվելու պրոֆեսորական կոչման: Շուտով հայտնի է դարձել, որ դեռևս 1898թ. Հ.Ակունյանը ժնևում եղել է սոցիալ-դեմոկրատական կուսակցության անդամ: Այդ պատճառով 1902թ. նրան զրկել են պետական թոշակից և բարձրագույն դպրոցներում դասախոսելու իրավունքից:

1907-1918թթ. Հ.Ակունյանն աշխատել է Թիֆլիսի Միխայե-

լովսկու քաղաքային արհեստավորական ուսումնարանում որպես տնօրեն: 1919թ. տեղափոխվել է Հայաստան և խորհրդայնացումից հետո նշանակվել բանակի մատակարարման գծով առաջին արտակարգ լիազոր: 1922թ. անցել է մանկավարժական աշխատանքի Երևանի Խ.Աբովյանի անվան միջնակարգ դպրոցում, ինդուստրիալ տեխնիկումում և բանֆակում: 1925թ. նա Խ.Աբովյանի անվան միջնակարգ դպրոցում ստեղծել է Հայաստանում առաջին քիմիական լաբորատորիան:

1924թ. Հ.Ակունյանը հրավիրվել է դասախոսելու ԵՊՀ-ում և ղեկավարել է անօրգանական ու վերլուծական քիմիայի ամբիոնները: Տարիներ անց գլխավորել է Հայկական գյուղատնտեսական և Երևանի բժշկական ինստիտուտների անօրգանական և վերլուծական քիմիայի ամբիոնները:

Հեղինակ է «Որակական անալիզ» (Եր., 1932) և համահեղինակ՝ «Անօրգանական քիմիա», 6 պրակով (Եր., 1931-1936) ձեռնարկների:

1935թ. Հ.Ակունյանին շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Անհիմն հալածանքների հետևանքով 1937թ. հուլիսից ընդհատվել է Հ.Ակունյանի աշխատանքային գործունեությունը Երևանում: Գտնվելով աքսորում՝ 1942-1944թթ. նա աշխատել է Սեմիպալատինսկի մարզի Կազան-Զունկուր գյուղի միջնակարգ դպրոցում որպես ուսուցիչ, իսկ 1944-1947թթ. գլխավորել Բլագովեշչենսկ քաղաքի (Հրեական ինքնավար մարզ) Կալինինի անվան պետական մանկավարժական ինստիտուտի քիմիայի ամբիոնը:

Վախճանվել է 1947թ. օգոստոսի 14-ին Բլագովեշչենսկում:

ԱՂԱԲԵԿՅԱՆ ԿԻՄ ԲԱԳՐԱՏԻ

Գրականագետ,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1938թ. մարտի 15-ին Գորիսի շրջանի Յայջի (այժմ՝ Հարճիս) գյուղում: 1957թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը: Նույն թվականին զորակոչվել է բանակ: 1966թ. ավարտել է ԵՊՀ բանասիրության ֆակուլտետը: 1968-ից աշխատում է նույն ֆակուլտետի խորհրդահայ (այժմ՝ հայ նորագույն) գրականության ամբիոնում:

1973թ. Կ.Աղաբեկյանը պաշտպանել է թեկնածուական, 1994թ.՝ դոկտորական ատենախոսություն: 2006թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Հեղինակ է շուրջ հինգ տասնյակ գիտական ու գրաքննադատական հոդվածների և մի քանի մենագրությունների, ինչպես՝ «Գուրգեն Մահարի» (Եր., 1975), «Երեք դիմանկար» (Եր., 1983), «Հրանտ Մաթևոսյան. Ծմակուտի վիպասքը» (Եր., 1988), «Արդի հայ արձակի զարգացման միտումները (60-80-ական թթ.)» (Եր., 1992), «Հակոբ Օշական. ստեղծագործական աշխարհի արահետներում» (Եր., 2006):

ԽՍՀՄ գրողների միության անդամ է 1978 թվականից:

ԱՂԱԼՈՎՅԱՆ ԼԵՆՍԵՐ ԱԲԳԱՐԻ

Մեխանիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Ծնվել է 1940թ. փետրվարի 3-ին Լեռնային Ղարաբաղի Քոլատակ գյուղում: 1956-1961թթ. սովորել է ԵՊՀ մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետում: Համալսարանն ավարտելուց հետո նույն ֆակուլտետում անցել է աշխատանքի որպես ասիստենտ: 1963-1966թթ. սովորել է ԵՊՀ ասպիրանտուրայում: 1966թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1966-1969թթ. աշխատել է ԵՊՀ բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնում որպես ավագ դասախոս, 1969-ից՝ ՀԽՍՀ ԳԱ մեխանիկայի ինստիտուտի ավագ գիտաշխատող: 1980թ. Լ.Աղալովյանը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1996թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս:

1987-2006թթ. նա եղել է ՀԽՍՀ ԳԱ մեխանիկայի ինստիտուտի տնօրեն, 2006-ից՝ տնօրենի խորհրդական, միաժամանակ՝ ինստիտուտի «Բարակապատ համակարգերի մեխանիկա» բաժնի վարիչ:

Լ.Աղալովյանը 2006-ից դասախոսում է ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետում:

Հեղինակ է “Асимптотическая теория анизотропных пластин и оболочек” (М., 1997), համահեղինակ՝ “Неклас-

сические краевые задачи анизотропных слоистых балок, пластин и оболочек” (Ер., 2005) մենագրությունների և շուրջ 150 գիտական հոդվածների, որոնք վերաբերում են անիզոտրոպ հեծանների, սալերի և թաղանթների ասիմպտոտական տեսության կառուցմանը, առաձգականության տեսության հարթ և տարածական, ստատիկ ու դինամիկ խառը եզրային խնդիրների լուծման, կառուցվածքների հիմքերի և հիմնատակերի հաշվարկի կիրառական եղանակների տեսական հիմնավորման ու հաշվարկի նոր մոդելների առաջադրման, շերտավոր միջավայրերում ալիքների տարածման, կառուցվածքների վրա սեյսմիկ ալիքների ազդեցությունների ուսումնասիրման հարցերին:

Լ.Աղալովյանի ղեկավարությամբ ու խորհրդատվությամբ պաշտպանվել է 12 թեկնածուական և 2 դոկտորական ատենախոսություն:

1991թ. նրա նախաձեռնությամբ ստեղծվել է «Արցախ-Հայաստան» հասարակական-քաղաքական կազմակերպությունը, որի նախագահն էր 1992-1996թթ.:

1990-ից Լ.Աղալովյանը ՀՀ ԳԱԱ մեխանիկայի ինստիտուտում գործող գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի նախագահն է:

1995թ. նա ընտրվել է ՌԴ տեսական և կիրառական մեխանիկայի ազգային կոմիտեի անդամ: Անդամ է նաև «European Association for the Control of Structures-ASC» (2000) ընկերության, «International Applied Mechanics» ամսագրի խմբագրական խորհրդի (2003):

ԱՂԱՑԱՆ ԷԴՈՒԱՐԴ ԲԱԳՐԱՏԻ

Լեզվաբան,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1913թ. մարտի 16-ին Մեղրիում: 1928թ. ավարտել է տեղի 7-ամյա դպրոցը: 1930-1932թթ. աշխատել է Մեղրու կոլտնտեսությունում՝ սկզբում որպես հաշվետար, ապա՝ հաշվապահ: 1933-ից ուսանել է ԵՊՀ պատմագրական ֆակուլտետում՝ միաժամանակ աշխատելով ծխախոտի ֆաբրիկայում որ-

պես հաշվապահ:

1938թ. Էդ.Աղայանն ավարտել է համալսարանը և 1939թ. ընդունվել ասպիրանտուրա: 1941թ. պաշտպանել է թեկնածուական, 1945թ. դոկտորական ատենախոսություն: 1942թ. նրան շնորհվել է դոցենտի, 1946-ին՝ պրոֆեսորի կոչում: 1953թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1982թ.՝ ակադեմիկոս:

1932-ից մինչև կյանքի վերջը աշխատել է ԵՊՀ-ում. 1956-1985թթ. եղել է համալսարանի ընդհանուր լեզվաբանության ամբիոնի վարիչ, 1968-1991թթ.՝ հայագիտական կենտրոնի ղեկավար, 1986-1991թթ. «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի գլխավոր խմբագիր, 1953-1956թթ. ԵՊՀ գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր, 1948-1950թթ. բանասիրության ֆակուլտետի դեկան:

Էդ.Աղայանը տասնամյակներ շարունակ աշխատել է նաև ՀԽՍՀ ԳԱ Հր.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում: 1950-1953թթ. եղել է փոխտնօրեն, 1963-1991թթ. ընդհանուր և համեմատական լեզվաբանության բաժնի վարիչ, 1947-1948թթ. ՀԽՍՀ լուսավորության նախարարության բուհերի վարչության պետ:

Էդ.Աղայանը թողել է գիտական հարուստ ժառանգություն, որը վերաբերում է ընդհանուր լեզվաբանության, հայ լեզվաբանության պատմության, հայոց լեզվի պատմության և համեմատական քերականության, բարբառագիտության, ժամանակակից հայոց լեզվի, Արևելքի գրականության պատմության և այլ հարցերի: Առանձնապես նշանակալից են նրա «Լեզվաբանության ներածություն» (Եր., 1952, 1963, 1967) աշխատությունը, որը ԽՍՀՄ բարձրագույն կրթության նախարարության կողմից երաշխավորվել է որպես միութենական բուհական դասագիրք և հրատարակվել ռուսերեն 1959-ին, «Պատմահամեմատական մեթոդը լեզվաբանության մեջ» (Եր., 1957), «Գրաբարի քերականություն», հ.1 (Եր., 1964), «Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը» (Եր., 1967), «Ընդհանուր և համեմատական բառագիտություն» (Եր., 1984) աշխատությունները. վերջինը 1987թ. վերամշակված հրատարակվել է «Լեզվաբանության հիմունքներ» խորագրով:

Էդ.Աղայանը մեծ ավանդ ունի նաև հայ բառարանագրության բնագավառում. «Արդի հայերենի բացատրական բառա-

ման» (Եր., 1976) երկհատոր գիրքը՝ հայերենի բառապաշարի ընդգրկմամբ (136 հազ. բառ և 11 հազ. դարձվածք) և բառահոդվածների ձևաիմաստային բազմաբնույթ դասդասումներով ու պարզաբանումներով մնում է որպես բառարանագրական բացառիկ ձեռքբերում:

Նա համահեղինակ է հանրակրթական դպրոցի 4-7-րդ դասարանների հայոց լեզվի դասագրքերի, որոնք ունեցել են բազմաթիվ հրատարակություններ: Նրա գիտական վաստակի մաս է կազմում նաև իր ուսուցիչ Հր.Աճառյանի բազմահատոր աշխատությունների խմբագրման, անավարտ հատվածների լրացման և հրատարակության պատրաստման շնորհակալ աշխատանքը:

Էդ.Աղայանը քանիցս մասնակցել է միջազգային գիտաժողովների (Երևան, Մոսկվա, ԱՄՆ, Հնդկաստան և այլն):

Նրա ղեկավարությամբ ու խորհրդատվությամբ պաշտպանվել են բազմաթիվ թեկնածուական ու դոկտորական ատենախոսություններ:

1979-ից մինչև կյանքի վերջը եղել է լեզվաբանության գծով գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի նախագահ: 1953թ. ընտրվել է Երևանի քաղխորհրդի, 1980թ. և 1985թ. ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր:

1970թ. Էդ.Աղայանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի (1983) շքանշանով, «Աշխատանքային արիության» (1945), Խ.Աբովյանի անվան մեդալներով և մի շարք պատվոգրերով:

Վախճանվել է 1991թ. դեկտեմբերի 29-ին Երևանում:

Էդ.Աղայանի բրոնզաձույլ կիսանդրին ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի նախասրահում խորհրդանշում է ականավոր գիտնական-մանկավարժի դերը համալսարանական գիտության զարգացման գործում:

ԱՂԱՅԱՆ ԾԱՏՈՒՐ ՊԱՎԵԼԻ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1911թ. դեկտեմբերի 30-ին Դաշտային Ղարաբաղի Փիփ (Զագլիկ) գյուղում: 1932-1938թթ. սովորել է Մոսկվայի պատմափիլիսոփայական ինստիտուտի պատմության ֆակուլտետում: 1937թ. Ծ.Աղայանը դրսեկությամբ ավարտել է Երևանի հեռակա մանկավարժական ինստիտուտը: 1938-1941թթ. սովորել է Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան համալսարանի պատմության ֆակուլտետի ասպիրանտուրայում, որտեղ էլ 1941թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն:

1941-1948թթ. դասախոսել է Բաքվի մանկավարժական ինստիտուտում և ադրբեջանական պետական համալսարանում, եղել է Ադրբեջանի ԳԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող ու գիտքարտուղար:

1948թ. Ծ.Աղայանը Մոսկվայում պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1948-1951թ. աշխատել ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտում որպես ավագ գիտաշխատող, 1954-1961 և 1972-1979թթ.՝ խորհրդային պատմության բաժնի վարիչ, 1968-1977թթ. հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար: 1950թ. նա ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1963թ.՝ ակադեմիկոս:

1951-1954թթ. նա եղել է ՀԿԿ Կենտկոմի գիտության և մշակույթի բաժնի վարիչ, 1961-1968թթ. ԽՄԿԿ Կենտկոմին առընթեր ՄԼԻ Հայկական մասնաճյուղի տնօրեն, 1950-1961թթ.՝ ԵՊՀ ԽՄԿԿ պատմության ամբիոնի պրոֆեսոր, 1977-1982թթ.՝ նույն ամբիոնի վարիչ:

1949-1951թթ. և 1968-1972թթ. Ծ.Աղայանը վարել է ՀԽՍՀ ԳԱ հասարակական գիտությունների «Տեղեկագրի» (հետագայում՝ «Լրաբերի») գլխավոր խմբագրի պաշտոնը: 1964-1971թթ. ընտրվել է ՀԿԿ Կենտկոմի անդամ, 1963-1971թթ.՝ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր:

Նա մասնակցել է պատմաբանների, բալկանագետների և բուլղարագետների 12-16-րդ միջազգային կոնգրեսների աշխատանքներին:

Ծ.Աղայանը հեղինակ է ավելի քան 400 գիտական հոդվածների և շուրջ 40 մենագրության: Առավել կարևոր են՝ «Արշա-

վիր Մելիքյան: Կյանքն ու գործունեությունը» (Եր., 1969), «Բալկանները և Օսմանյան կայսրության ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի միասնությունը» (Եր., 1970), «Գեհենից վերածնունդ» (Եր., 1975), «Հոկտեմբերը և հայ ժողովրդի ազատագրական պայքարը» (Եր., 1982), «Հայերը Թուրքիայում» (Եր., 1994) աշխատությունները:

Նրա ղեկավարությամբ ու խորհրդատվությամբ պաշտպանվել է թեկնածուական 40 և դոկտորական 10 ատենախոսություն:

1974թ. Ծ.Աղայանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման, 1985թ.՝ հետմահու՝ ՀԽՍՀ Պետական մրցանակի: Պարգևատրվել է «Պատվո նշան» (1955), Աշխատանքային կարմիր դրոշի (1971) շքանշաններով, «Աշխատանքային արիության համար» (1955) և Բուլղարիայի Կիրիլ-Մեթոդիի մեդալներով (1981), ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատվոգրով (1972):

Վախճանվել է 1982թ. դեկտեմբերի 3-ին Երևանում:

ԱՂԱՋԱՆՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ ԽԱՉԱՏՈՒՐԻ

Կենսաքիմիկոս,
կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1937թ. փետրվարի 8-ին Լեռնային Ղարաբաղի Դաղուշեն գյուղում: 1954թ. ավարտել է Շուշիքենդի միջնակարգ դպրոցը: 1955-1960թթ. սովորել է Երևանի անասնաբուծական-անասնաբուժական ինստիտուտում, 1961-1964թթ.՝ ԵՊՀ ասպիրանտուրայում: 1966թ. Ա.Աղաջանյանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1967-1969թթ. աշխատել է ԵՊՀ կենսաքիմիայի ամբիոնում որպես կրտսեր գիտաշխատող, 1969-1990թթ.՝ ավագ գիտաշխատող, 1988-1990թթ՝ գիտահետազոտական լաբորատորիայի վարիչ: 1990թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, նույն թվականին նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1990թ. եղել է կենսաքիմիայի ամբիոնի պրոֆեսոր, 2001-2006թթ. նույն ամբիոնի վարիչ:

Հեղինակ է 106 գիտական աշխատանքների, այդ թվում՝ «Կենսաքիմիայի պրակտիկում» (Եր., 2002), «Կենսաքիմիայի լաբորատոր աշխատանքների ուսումնական ձեռնարկ» (Եր., 2003) գրքերի:

Ա.Աղաջանյանը հետազոտել է արգինազի և պրոլինի կենսասինթեզի ֆերմենտների փոխադարձ կապը: Համեմատական-էվոլյուցիոն տեսանկյունից կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ էվոլյուցիոն և անհատական զարգացման ընթացքում արգինինից պրոլինի կենսասինթեզը կատալիզող ֆերմենտների և ոչ ուրեոթելիկ արգինազի ակտիվության միջև գոյություն ունի լրիվ համապատասխանություն:

Ա.Աղաջանյանը մասնակցել է տարբեր միջազգային գիտաժողովների (Տաշքենդ 1969, Ռիգա՝ 1974, Լենինգրադ 1979, Կիև՝ 1985, Դուբնա՝ 2001, Դամասկոս՝ 2001, Բուդապեշտ՝ 2005, Ստամբուլ՝ 2006 և այլն):

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 14 ատենախոսություն:

ԱՂԱՋԱՆՅԱՆ ԳԵՂԱՄ ԽԱՉԱՏՈՒՐԻ

Գյուղատնտեսական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1891թ. դեկտեմբերի 21-ին Սուրմալուի գավառի Բլուր գյուղում: Միջնակարգ կրթությունն ստացել է Իգդիրում, ապա ընդունվել Երևանի ուսուցչական սեմինարիա, որն ավարտելուց հետո որպես ուսուցիչ և տեսուչ աշխատել է Նախիջևանի գյուղական դպրոցներում:

1921թ. Գ.Աղաջանյանը նշանակվել է Երևան քաղաքի ու գավառի դպրոցների հրահանգիչ, իսկ Դիլիջանի մանկավարժական դասընթացներն ավարտելուց հետո՝ Երևանի ռուսական միջնակարգ դպրոցի ուսուցիչ՝ միաժամանակ աշխատելով մանկավարժական թանգարանում:

1922-1926թթ. Գ.Աղաջանյանը սովորել է ԵՊՀ գյուղատնտեսական ֆակուլտետում, որն ավարտելուց հետո աշխատանքի է անցել մասնավոր երկրագործության ամբիոնում որպես լաբորանտ: 1928թ. ընդունվել է ասպիրանտուրա: 1928-1930թթ. եղել է ԵՊՀ ուսումնական տնտեսության վարիչ: 1930թ. նշանակվել է նորաստեղծ Հայկական գյուղատնտեսական ինստիտուտի ընդհանուր երկրագործության ամբիոնի վարիչ և այն գլխավորել մինչև կյանքի վերջը:

1937թ., առանց ատենախոսության պաշտպանության, նրան շնորհվել է գյուղատնտեսական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան և պրոֆեսորի պաշտոնակատարի կոչում: 1939թ. Մոսկվայում պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1953թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1956թ. ակադեմիկոս:

1941-1951թթ. Գ.Աղաջանյանը եղել է Երևանի գյուղատնտեսական ինստիտուտի ուսումնական և գիտական աշխատանքների գծով փոխտնօրեն, 1955-1956թթ.՝ ՀԽՍՀ ԳԱ գյուղատնտեսական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, 1956-1962թթ. ՀԽՍՀ գյուղատնտեսության նախարարության գիտության գլխավոր վարչության պետ:

Հեղինակ է շուրջ 100 գիտական աշխատությունների, այդ թվում՝ դասագրքի և մի շարք ձեռնարկների: Կարևոր են նրա «Հացահատիկային կուլտուրաները և դրանց մշակության հիմունքները» (Եր., 1951), «Հայաստանի մոլախոտային բուսականությունը և պայքարը նրա դեմ», հ.1-3 (Եր., 1957-1966) գրքերը: Համահեղինակ է «Ընդհանուր երկրագործություն» (Եր., 1934), «Դաշտային կուլտուրաները և նրանց ագրոտեխնիկան», հ.1-3 (Եր., 1957-1960) մենագրությունների:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 30 ատենախոսություն:

Գ.Աղաջանյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է Լենինի, Աշխատանքային կարմիր դրոշի շքանշաններով:

Վախճանվել է 1969թ. սեպտեմբերի 28-ին Երևանում:

ԱՂԲԱԼՅԱՆ ՆԻԿՈԼ ՊՈՂՈՍԻ

Գրականագետ, մանկավարժ, հրապարակախոս, հասարակական-քաղաքական գործիչ

Ծնվել է 1873թ. ապրիլի 1-ին Թիֆլիսում: 1892թ. ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը և ընդունվել Էջմիածնի Գևորգյան ճեմարան, որտեղ սովորել է երկու տարի: Այնուհետև տարբեր տարիներ կարճ ժամանակով եղել է Մոսկվայի, Լոզանի, Սորբոնի համալսարանների ունկնդիր, սակայն չի ավարտել՝ ազգային-քաղաքական գործունեության նվիրվելու

պատճառով: Զբաղվել է քաղաքական, գրական-մշակութային գործունեությամբ, ինչպես նաև ուսուցչությամբ՝ Կաղզվանում, Ագուլիսում, Շուշիում, Թեհրանում, Ալեքսանդրիայում, Բեյրութում: Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության գործուն անդամներից էր. 1918-1920թթ. ընտրվել է Հայաստանի Հանրապետության Ազգային խորհրդի, ապա՝ պառլամենտի անդամ:

Գրական գործունեությունն սկսել է «Մուրճ» ամսագրում: 1896-1899թթ. այստեղ տպագրել է երեք տասնյակից ավելի գրախոսական, հոդված, գրականագիտական ուսումնասիրություն: 1900-1910թթ. ճանաչված քննադատ էր, քաղաքական գործիչ, Հայ գրողների կովկասյան ընկերության նախագահի (Հով.Թումանյան) անփոփոխ տեղակալը:

Մեծ է նրա դերը հայ գրական-մշակութային գործիչների և մասնավորապես Սայաթ-Նովայի հոբելյանական հանդիսությունների կազմակերպման գործում: Նա ամենուր դասախոսություններ էր կարդում Սայաթ-Նովայի մասին և հընթացս կատարում նրա երգերը, որոնցից մի քանիսը նոտագրվել և փոխանցվել են սերունդներին:

Ն.Աղբալյանը Առաջին Հանրապետության օրերին Երևանում ստեղծեց Հայաստանի գրողների ընկերությունը: Նա ճանաչված հրապարակախոս էր, փայլուն հռետոր: Անդրադարձել է XXդ. առաջին կեսի հասարակական-քաղաքական կյանքի գրեթե բոլոր խնդիրներին:

Հայաստանի Հանրապետության հանրային կրթության և արվեստի նախարարի (1919թ. օգոստոս-1920թ. մայիս) պաշտոնում մեծ աշխատանք է ծավալել մշակույթի, գիտության և ազգային կրթության նկատմամբ պետական մոտեցում ձևավորելու ուղղությամբ: Ն.Աղբալյանի ստորագրած հրամանով ու ջանքերով էլ իրականացավ համալսարան ստեղծելու մասին մինչ այդ ընդունված որոշումը:

1920թ. Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո Ն.Աղբալյանը չհեռացավ հայրենիքից, սակայն շուտով ձերբակալվեց: Կացնի «դատավճռից» նրան ազատեց 1921թ. Փետրվարյան հեղափոխությունը:

Ն.Աղբալյանը աշխատակցել է «Մուրճ», «Վտակ», «Զանգակ», «Գործ», «Հորիզոն», «Նոր հոսանք», «Արև», «Ազատամարտ», «Ռազմիկ», «Հառաջ», «Վեմ», «Սիոն», «Հայրենիք», «Ազդակ» և այլ պարբերականների, եղել է «Ազատա-

մարտիկ»-ի խմբագիր (մեկ տարի, 1917), «Հորիզոնի» և «Նոր հոսանքի» խմբագիրներից մեկը: Ավյուռքում հրատարակվել են գրականության և լեզվի խնդիրներին նվիրված նրա աշխատությունները:

Ն.Աղբալյանի «Բանասերի հուշագիրը» (Բեյրութ, 1937-1938), «Դասախոսություններ հայ մատենագրության մասին» (Բեյրութ, 1951), «Սայաթ-Նովայի հետ» (Բեյրութ, 1966), «Մտածումներ» հրապարակախոսական հոդվածների ժողովածուն (Բեյրութ, 1967), «Պատմություն հայոց գրականության» (Բեյրութ, 1970) աշխատությունները լուրջ ավանդ են հայ գրականության պատմության, հայոց լեզվի ուսումնասիրության բնագավառներում:

Վախճանվել է 1947թ. օգոստոսի 15-ին Բեյրութում:

Ն.Աղբալյանի բրոնզաձույլ կիսանդրին ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի նախասրահում խորհրդանշում է ականավոր գիտնական-մանկավարժի դերը համալսարանի հիմնադրման գործում:

ԱՃԱՌՅԱՆ ՀՐԱՉՅԱ ՀԱԿՈԲԻ

Հայագետ, լեզվաբան, պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1876թ. մարտի 8-ին Կոստանդնուպոլսում: Ավարտել է տեղի Կեդրոնական վարժարանը, ապա 1895թ. մեկնել է Փարիզ, սովորել Սորբոնի համալսարանում:

1898թ. եկել է Անդրկովկաս և նվիրվել մանկավարժական ու գիտական գործունեության: Որպես ուսուցիչ աշխատել է Էջմիածնում, Շուշիում, Նոր Բայազետում: ԵՊՀ-ն հիմնադրվելիս նա հրավիրվել է որպես հայագիտական, լեզվաբանական ու արևելագիտական առարկաների դասախոս: 1943թ., երբ ստեղծվեց Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիան, Հր.Աճառյանը հաստատվեց ակադեմիայի հիմնադիր անդամների թվում:

Նրա լեզվաբանական աշխատությունների մեջ ուսումնասիրված են հայոց լեզվի գրեթե բոլոր բնագավառները: Դրանք Մ.Աբեղյանի համաբնույթ աշխատությունների հետ միասին դարձան հայերենի ուսումնասիրության գիտական հիմքերը,

որոնց վրա զարգանում է հայերենագիտությունը նաև այժմ: Դեռևս 1898թ. առանձին հոդվածներով քննության առնելով մի շարք բարբառներ (Ասլանբեգի, Ղարաբաղի, Վանի) նա ամբողջացնում է իր բարբառագիտական հետազոտությունները և 1909թ. ֆրանսերենով հրատարակում «Հայ բարբառների դասակարգումը» աշխատությունը: Հր.Աճառյանը 1925-1954թթ. հրատարակած Մարաղայի, Ագուլիսի, Նոր Ջուղայի, Նոր Նախիջևանի, Ղարաբաղի, Համշենի, Պոլսի, Առտիալի ու Վանի բարբառներին նվիրված մենագրություններում մեծ ուշադրություն է դարձրել հայերեն բարբառների հարուստ բառագանձին:

Հր.Աճառյանի հետազոտությունների կարևոր բնագավառներից մեկը եղել է հայերենի բառաքննությունը: Դրան նվիրված նրա մեծագույն գործն է վեց հատորից բաղկացած «Հայերեն արմատական բառարանը» (Եր., 1926-1932, յոթերորդ հատորն է հավելվածը, որ լույս է տեսել 1935թ.): «Արմատական բառարանը» լիակատար ցանկն է շուրջ 11 հազար հայերեն արմատական բառերի՝ նրանց բացատրությամբ, քերականական տեղեկություններով ու ստուգաբանությամբ: Այն Անտուան Մեյեի հավաստմամբ իմաստաբանական-ստուգաբանական եզակի բառարան է, որտեղ հայերենի արմատները բնութագրված են հնդեվրոպական հիմք լեզվի, ցեղակից և հարևան լեզուների հետ ունեցած առնչությունների, բառակազմական հնարավորությունների և գավառաբարբառներում նրանց դրսևորումների համապատկերում:

Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության արդյունքները նա ամփոփել է «Հայոց լեզվի պատմություն» երկհատոր աշխատության մեջ (Ա մաս, 1940, Բ մաս, 1951):

Հայերենի պատմահամեմատական ուսումնասիրությանն է նվիրված նրա «Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների» տասը հատորանոց մենագրությունը: Ամփոփելով վերջին շուրջ մեկ հարյուրամյակում հայերենի համեմատական ու պատմական քերականությանը նվիրված ուսումնասիրությունների, ինչպես նաև սեփական հետազոտությունների արդյունքները՝ Հր.Աճառյանն այս աշխատության մեջ քննարկվող բարդ խնդիրների իր լուծումներն է առաջարկել:

«Հայոց անձնանունների բառարանը», հայ գրերի պատմությանն ու տեսությանը նվիրված աշխատությունները, հայ հին մատենագրությանը, նոր գրականության պատմությանը նվիր-

ված ուսումնասիրությունները՝ որպես Հր.Աճառյանի տքնաջան աշխատանքի արդասիքներ, իրենց հաստատուն տեղն ունեն հայոց լեզվի և խոսքի մշակույթի ուսումնասիրության բնագավառում:

Բազմահարուստ գիտելիքները և բազում լեզուների իմացությունը հնարավորություն էին տալիս նրան տարբեր ժամանակներում տարբեր դասընթացներ վարելու լեզվաբանության ներածություն, հայոց լեզվի պատմություն, համեմատական քերականություն, գրաբար, բարբառագիտություն, հայ հին մատենագրություն, հնդեվրոպական լեզուների համեմատական քերականություն, ֆրանսերեն, պարսկերեն, արաբերեն, սանսկրիտ և այլն:

Երբ համալսարանում բացվեց արևելյան լեզուների բաժինը, նա ստանձնեց նաև արևելյան լեզուների ամբիոնի ղեկավարությունը և պարսկերենի, պարսից լեզվի պատմության, արաբերենի դասավանդումը:

Վախճանվել է 1953թ. ապրիլի 16-ին Երևանում:

ՀԽՍՀ կառավարության որոշմամբ ԳԱ լեզվի ինստիտուտը կոչվել է Հր.Աճառյանի անունով:

Հր.Աճառյանի բրոնզաձույլ կիսանդրին ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի նախասրահում խորհրդանշում է ականավոր գիտնական-մանկավարժի դերը համալսարանական գիտության զարգացման գործում:

ԱՃԵՄՅԱՆ ՇԱՀԵ ԱՐՄԵՆԻ

(ավազանի անունը՝ Հովհաննես)
Արքեպիսկոպոս,
բանասիրության և փիլիսոփայության դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1926թ. հուլիսի 24-ին Հալեպում: Ավարտել է ծննդավայրի Հայկազյան վարժարանը, այնուհետև 1938թ.՝ Մխիթարյան հայրերի վարժարանը, 1945թ.՝ Հալեպի ֆրանսիական քոլեջը, 1947թ.՝ Կիլիկիո կաթողիկոսության Անթիլիասի դպրեվանքը, 1951թ. Բրյուսելի համալսարանը:

1960թ. պաշտոնավարության է հրավիրվել Երուսաղեմ և 1965թ. ձեռնադրվել եպիսկոպոս: 1975թ. նշանակվել է Մայր աթոռ Ս.Էջմիածնի ներկայացուցիչը Եկեղեցիների համաշ-

խարհային խորհրդում: Եղել է Հայոց պատրիարքարանի պաշտոնական հանդեսի՝ «Սիոն» ամսագրի խմբագիր: 1982թ. հիմնել է Ջիթենյաց լեռան Հայ Աստվածաշնչի կենտրոնը: 1995-2005թթ. եղել է ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի հիմնադիր դեկանը:

Շ.Աճեմյանը դասախոսական գործունեություն է ծավալել Անթիլիասի, Բեյրութի կրթօջախներում՝ և Դպրեվանքում: Դասավանդել է նաև Հովակիմյան-Մանուկյան վարժարանում, Փոլատջյան ճեմարանում:

Հեղինակ է բազմաթիվ գրքերի և շուրջ 150 հոդվածի, որոնք տպագրվել են «Հասկ», «Սիոն» և «Էջմիածին» հանդեսներում: Գրքերից հիշատակելի են հատկապես «Գիրք սաղմոսաց Դավթի» (Երուսաղեմ, 1988), «Մայր ցուցակ Հայ Աստվածաշնչի ձեռագիրներու» (Լիզպոն, 1992), «Քերականություն արաբերեն լեզուի» (Բեյրութ, 1951), «Արիստոտելի ստորոգութեանց երկի Դաւիթ Անյաղթի մեկնութիւնը», «Հայերեն Աստուածաշունչը» (Եր., 2006) և այլն: 2001թ. սկիզբ է դրել «Աճեմյան մատենաշարին», որով հրատարակվել են բազմաթիվ հետազոտություններ ու սկզբնաղբյուրներ:

Շ.Աճեմյանը վախճանվել է 2005թ. հուլիսի 13-ին Երևանում, թաղված է Էջմիածնում:

ԱՄԱՏՈՒՆԻ ԱՆԴՐԵՅ ՅՈԼԱԿԻ

Ֆիզիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1928թ. հոկտեմբերի 1-ին Լենինգրադում (այժմ՝ Սանկտ Պետերբուրգ): 1950թ. ավարտել է Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանը:

1950թ. Ա.Ամատունին դասավանդել է Երևանի ռուսական մանկավարժական ինստիտուտում, 1952-ից՝ ԵՊՀ տեսական ֆիզիկայի ամբիոնում: Այնուհետև եղել է Մոսկվայի Վ.Ստեկլովի անվան մաթեմատիկայի ինստիտուտի ասպիրանտ և 1956թ. պաշտպանել թեկնածուական ատենախոսություն:

1956-ից Ա.Ամատունին Երևանի Ֆիզիկայի ինստիտուտի ավագ դիտաշխատող էր, 1958թ. ընդգրկվել է Երևանի սինքրոտրոնի Ֆիզիկական նախագիծը ստեղծող խմբում:

1960-1964թթ. նա համահեղինակների հետ կատարել է անցումային ճառագայթմանը նվիրված մի շարք հիմնարար աշխատանքներ: 1965թ. ստացել է կարևոր արդյունքներ բարձր էներգիաներով մեզոնների ֆոտոծնման տեսության բնագավառում և զարգացրել դաշտի քվանտային տեսության ոչ գծային հավասարումների լուծման ֆունկցիոնալ վերլուծության մեթոդը:

Նրա ջանքերով ԵՊՀ Ֆիզիկայի ֆակուլտետի միջուկային ֆիզիկայի ամբիոնը 1970-ից դարձավ Երևանի Ֆիզիկայի ինստիտուտի բազային ամբիոն, որտեղ կադրեր էին պատրաստվում նաև «Արուս» էլեկտրոնային արագացուցչի համար:

1975թ. Ա.Ամատունին պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1983թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1965-1973թթ. նա եղել է Երևանի Ֆիզիկայի ինստիտուտի փոխտնօրեն, 1973-1992թթ. տնօրեն, կազմակերպել է Արադածի տիեզերական ճառագայթների հետազոտման կայանի տեխնիկական վերազինման ծրագրի մշակումն ու իրագործումը, մասնակցել Նոր Ամբերդի միջազգային փորձարարական և տեսական ֆիզիկայի դպրոցի կազմակերպմանը:

1970-ականների վերջերին Ա.Ամատունին մասնակցել է «ԱՆԻ» բարձրլեռնային կայանի եզակի սարքավորման նախագծման և կառուցման աշխատանքներին: 1990-ականներից զբաղվել է լիցքավորված մասնիկների արագացման նոր մեթոդների հետազոտմամբ, միջուկային էներգետիկայի, ինչպես նաև Հայկական ատոմակայանի շահագործման անվտանգության հարցերով:

1973-2000թթ. Ա.Ամատունին եղել է «Տարրական մասնիկների և միջուկի ֆիզիկա» մասնագիտությամբ գիտական աստիճաններ շնորհող մասնագիտացված խորհրդի նախագահ, ԽՍՀՄ ԳԱ միջուկային ֆիզիկայի և էլեկտրամագնիսական փոխազդեցությունների խորհուրդների անդամ: 1996թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս:

1990թ. Ա.Ամատունին արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի, Հոկտեմբերյան հեղափոխության, ՌԴ «Բարեկամություն» շքանշաններով և բազմաթիվ պատվոգրերով:

Վախճանվել է 1999թ. հոկտեմբերի 10-ին Մոսկվայում, թաղված է Երևանում:

ԱՑՎԱՋՑԱՆ ՆՈՐԻԿ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ

Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր



Ծնվել է 1941թ. մարտի 2-ին Եղեգնաձորի շրջանի Մալիշկա գյուղում: 1958թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը, 1965-ին ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետը: 1965-1966թթ. ծառայել է խորհրդային բանակում: 1970թ. Ն.Այվազյանն ավարտել է ԽՍՀՄ ԳԱ պետության և իրավունքի ինստիտուտի ասպիրանտուրան, նույն տարում Մոսկվայում պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1975թ. նրան շնորհվել է դոցենտի կոչում:

1970-1971թթ. Ն.Այվազյանն աշխատել է ՀԽՍՀ ԳԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտում որպես կրտսեր գիտաշխատող, 1971-ից՝ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պետական իրավունքի և սովետական շինարարության ամբիոնում որպես դասախոս:

1987թ. Մոսկվայում պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1988թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1989-2006թթ. Ն.Այվազյանը ԵՊՀ սահմանադրական և միջազգային իրավունքի, 2006-ից՝ սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչն է:

Հեղինակ է «Հայկական ԽՍՀ իրավասությունը ԽՍՀՄ-ի կազմում» (Եր., 1972), “Компетенция союзной республики и конституционный механизм ее осуществления” (Ер., 1985), “Конституционные основы государственного управления в союзной республике” (Ер., 1988), «Իրավական պետության հորիզոններում» (Եր., 1993), «Սահմանադրության էությունը և բովանդակությունը» (Եր., 2005) մենագրությունների և ավելի քան յոթ տասնյակ գիտական հոդվածների, որոնք հրատարակվել են ինչպես հայրենական, այնպես էլ ռուսալեզու և ֆրանսալեզու հանդեսներում:

Ն.Այվազյանի ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 18 ատենախոսություն:

ԱՆԱՆՅԱՆ ԳԱՌՆԻԿ ԳՈՒՐԳԵՆԻ

Գրականագետ,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ



Ծնվել է 1934թ. հունիսի 22-ին Իջևանում: 1952թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը, 1958թ. ԵՊՀ բանասիրության ֆակուլտետը: 1958-1959թթ. աշխատել է Իջևանի շրջանային թերթում որպես գրական աշխատող, 1959-1961թթ. ՀԼԿԵՄ Իջևանի շրջկոմի առաջին քարտուղար: 1961-1964թթ. Գ.Անանյանը սովորել է ԵՊՀ ասպիրանտուրայում: 1965թ. պաշտպանել է թեկնածուական, 1982թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1983թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1965 թվականից Գ.Անանյանն աշխատել է ԵՊՀ-ում որպես դասախոս, 1977-1985թթ. զբաղեցրել է նաև Համալսարանի հրատարակչության տնօրենի պաշտոնը: 1985-1996թթ. նա բանասիրության ֆակուլտետի դեկանն էր, 1987-2000թթ. ժուռնալիստիկայի ամբիոնի վարիչը, իսկ 1999-ից ժուռնալիստիկայի ֆակուլտետի հիմնադիր դեկանը: 2006թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ:

Գ.Անանյանը հեղինակ է 30 գրքի, 100 գիտական, ավելի քան 200 հրապարակախոսական հոդվածների: Նրա գիտական հետազոտությունների արդյունք են «Սովետահայ գրականության կեսդարյա ուղին» (Եր., 1970), «Հայ գրականությունը «Մուրճ» ամսագրում» (Եր., 1972), «Սովետահայ պոեզիան Մեծ հայրենականի տարիներին» (Եր., 1973) ուսումնասիրությունները, «Որոնումներ» (Եր., 1974), «Հոդվածներ» (Եր., 1981) ժողովածուները, հայոց հին և միջնադարյան հրապարակախոսությանը նվիրված ակնարկները և այլն: Նրա ղեկավարությամբ շուրջ մեկուկես տասնյակ ասպիրանտներ ու հայցորդներ պաշտպանել են թեկնածուական ատենախոսություն:

1974 թվականից Գ.Անանյանը ԽՍՀՄ դրողների միության, 1986-ից՝ Հայաստանի ժուռնալիստների միության անդամ էր:

Վախճանվել է 2007թ. նոյեմբերի 20-ին Երևանում:

ԱՆԺՈՒՐ (ՋԵԲՈՏԱՐՅԱՆ) ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԳԵՎՈՐԳԻ

Ֆիզիկոս, պրոֆեսոր,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1885թ. ապրիլի 21-ին Նոր Նախիջևանում: Ավարտել է տեղի ռեալական դպրոցը: 1902-1905թթ. սովորել և ավարտել է Սանկտ Պետերբուրգի տեխնոլոգիական ինստիտուտը: Երեք տարի սովորել է Լոզանի (Շվեյցարիա) համալսարանում: 1912թ. ավարտել է Սորբոնի (Փարիզ) համալսարանը, 1925-1928թթ. Փարիզի ռադիոէլեկտրականության բարձրագույն դպրոցը ռադիոինժեների մասնագիտությամբ:

1912-1920թթ. զբաղվել է մանկավարժական գործունեությամբ Հյուսիսային Կովկասի և Անդրկովկասի տարբեր քաղաքներում: 1920թ. եկել է Հայաստան և աշխատանքի անցել արական գիմնազիայում: 1921թ. հրավիրվել է ԵՊՀ, որտեղ կազմակերպել է ֆիզիկայի լաբորատորային գործիքներ, սարքեր և այլ հարմարանքներ պատրաստող արհեստանոց, իսկ 1922թ. ստեղծել է ֆիզիկայի լաբորատորիա և ինքն էլ ղեկավարել այն: Այնուհետև կազմակերպել է մի շարք այլ լաբորատորիաներ, այդ թվում՝ էլեկտրառադիոլաբորատորիա, որի հիման վրա հետագայում ստեղծվեցին մի քանի ինքնուրույն լաբորատորիաներ: 1923-ից անցել է դասախոսական աշխատանքի: 1925թ. գործուղվել է Փարիզի համալսարան և կատարելագործվել Մարի Կյուրի-Սկլադովսկայի ռադիոակտիվության լաբորատորիայում: Երևան վերադառնալուց հետո՝ 1928-1950թթ., կրկին աշխատել է ԵՊՀ-ում:

Հ.Անժուրը գրել է մի շարք արժեքավոր գիտական աշխատություններ էլեկտրամագնիսական էներգիայի ճառագայթման, պինդ մարմնի մեխանիկայի, օպտիկայի տարբեր հարցերի վերաբերյալ, ինչպես նաև էլեկտրականության դասընթաց և լաբորատոր աշխատանքների ու փորձերի ձեռնարկ:

1938թ. Հ.Անժուրին շնորհվել է պրոֆեսորի կոչում, և նա նշանակվել է նոր կազմակերպված էլեկտրականության և տատանումների ֆիզիկայի ամբիոնի վարիչ:

Հայրենական պատերազմի տարիներին էլեկտրառադիոլաբորատորիայում նրա ղեկավարությամբ ռազմական նպատակներով կատարվել են մի շարք հետազոտական աշխատանքներ:

Զբաղվել է գիտության և տեխնիկայի, մասնավորապես ռադիոգործի մասսայականացման աշխատանքներով:

1941թ. Հ.Անժուրն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման:

Վախճանվել է 1958թ. դեկտեմբերի 4-ին Երևանում:

ԱՋԻՔԳՅՈԶՅԱՆ ՍԻՄՈՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ

Երկրաբանահանքաբանական գիտությունների թեկնածու, ավագ գիտաշխատող, զոհված ազատամարտիկ



Ծնվել է 1939թ. փետրվարի 6-ին Ռումինիայի Գալաց քաղաքում: 1946թ. ծնողների հետ հայրենադարձվել է: Սովորել է Երևանի թիվ 24 միջնակարգ դպրոցում: 1955թ. ընդունվել է ԵՊՀ երկրաբանության ֆակուլտետ, որն ավարտել է 1960թ. ինժեներ-երկրաբանի որակավորմամբ:

1970թ. Ս.Աչիքգյոզյանը Մոսկվայում պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1984թ. նրան շնորհվել է ավագ գիտաշխատողի կոչում:

1960-1991թթ. աշխատել է ՀԽՍՀ ԳԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտում, հեղինակել 70-ից ավելի գիտական աշխատություններ, զբաղվել թարգմանություններով: Շուրջ 11 տարի դասախոսել է ԵՊՀ-ում: Զբաղվել է հանրապետության գունավոր և ազնիվ մետաղների հանքավայրերի հեռանկարային ուսումնասիրությամբ: 1988թ. երկրաշարժից հետո նա աղետի գոտում ղեկավարել է երկրաշարժաբանների միջազգային ջոկատը:

1989թ. ՀՀՇ առաջին համագումարում Ս.Աչիքգյոզյանն ընտրվել է արտաքին հարաբերությունների հանձնաժողովի անդամ, 1990թ. Երևանի քաղխորհրդի պատգամավոր, մասնակցել ՀԽՍՀ Գերագույն խորհրդի աշխատանքներին՝ էկոլոգիայի հանձնաժողովի կազմում:

1989թ. Ս.Աչիքգյոզյանը միակ որդու հետ՝ «Արաբո» կամավորական ջոկատի կազմում սկսեց պայքարը հանուն իր ժողովրդի արդար դատի: Տարիքով ամենամեծն էր ջոկատում, որի համար նրան «Դեդ» էին կոչում: Բոլորի համար նա և՛ մարտական ընկեր էր, և՛ հայր, և՛ պաշտպան:

1989թ. մասնակցել է Հայաստանի սահմանամերձ շրջանների պաշտպանական գործողություններին, ապա մեկնել Արցախ (Շահումյանի շրջան)՝ ստանձնելով Մարտունաշենի պաշտպանության ջոկատի հրամանատարությունը: Շուրջ 7 ամիս մաքառող, անկոտրում Մարտունաշենի հերոսամարտում նա լիովին դրսևորեց իր մարդկային բարձր արժանիքները՝ «Արաբո» ջոկատի մյուս կտրիճների հետ կենաց և մահու կռիվ մղելով խորհրդային բանակի և ադրբեջանական "ՕՄՕՀ"-ի դեմ:

1991թ. ապրիլի 29-30-ին «Օղակ» տխրահռչակ օպերացիայի իրագործման ժամանակ Մարտունաշենը շրջապատված էր տասնյակ տանկերով, զրահամեքենաներով և ուղղաթիռներով: Սակավաթիվ արաբոյականները անհավասար պայքար մղելով խորհրդային բանակի և մինչև ատամները զինված ադրբեջանական "ՕՄՕՀ"-ի դեմ՝ կարողացան ապահովել խաղաղ բնակչության նահանջը: Վիրավորված Ս.Աչիքգյոզյանը, չլքելով մարտական դիրքը, իր գնդացրի թնդյուններով ու խրոխտ երգով ոգևորում էր մարտնչող ընկերներին:

Ցավոք, չուտով տանկերի կրակոցներն ընդմիշտ լռեցրին նրա երգը...

Արցախում ցուցաբերած հերոսության համար Ս.Աչիքգյոզյանը հետմահու պարգևատրվել է ՀՀ I աստիճանի «Մարտական խաչ» շքանշանով և «Զորավար Անդրանիկ» մեդալով:

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐԱՄ ՀՄԱՅԱԿԻ

Տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1945թ. ապրիլի 12-ին Թբիլիսիում: 1963թ. ավարտել է Կիրովականի (այժմ՝ Վանաձոր) Պուշկինի անվան դպրոցը, 1968թ.՝ ԵՊՀ մաթեմատիկայի ֆակուլտետը և նույն տարում ընդունվել ՀԽՍՀ ԳԱ և ԵՊՀ հաշվողական կենտրոնի ասպիրանտուրա, ապա գործուղվել Լենինգրադի (այժմ՝ Սանկտ Պետերբուրգ) պետական համալսարան:

1972թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ստացել ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի աստիճան: 1988թ. ատենախոսության պաշտպանությամբ ստացել է տեխնիկական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: 1991թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1972-1989թթ. աշխատել է ՀԽՍՀ ԳԱ և ԵՊՀ հաշվողական կենտրոնում որպես ավագ գիտաշխատող, սեկտորի վարիչ, բաժնի վարիչ, փոխտնօրեն:

1989-2002թթ. եղել է ՀՊՃՀ ալգորիթմական լեզուների և ծրագրավորման ամբիոնի վարիչ, իսկ 2002 թվականից՝ ԵՊՀ տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի վարիչն է:

Ա.Առաքելյանը հրատարակել է շուրջ 150 գիտական աշխատանք, այդ թվում՝ «Երկխոսական տեղեկատվական համակարգերի օպտիմալացման մեթոդներ» (ռուս., Եր., 1985), «Տվյալների բազաների ռելյացիոն մոդելներ» (ռուս., Եր., 2001) մենագրությունները:

Գիտական ուղղություններն են՝ խաղերի տեսություն, գործույթների հետազոտում, ժամանակային շարքերի վերլուծություն, մաթեմատիկական մոդելավորում:

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԲԱԲԿԵՆ ՆԻԿՈԼԱՅԻ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1912թ. փետրվարի 1-ին Հոկտեմբերյանի շրջանի Մրգաշատ գյուղում: 1933-1938թթ. սովորել է ԵՊՀ պատմության ֆակուլտետում, 1938-1941թթ. պատմության ինստիտուտի ասպիրանտուրայում: 1941թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին: 1954թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1957թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1946-1949թթ. Բ.Առաքելյանը եղել է ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, 1949-1959թթ. բաժնի վարիչ, 1959-1990թթ. հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն, այնուհետև պատվավոր տնօրեն:

1949-ից նա գլխավորել է Գառնիի, 1962-ից՝ Արմավիրի, իսկ 1970-ից՝ Արտաշատի հնագիտական պեղումները:

1968-1990թթ. Բ.Առաքելյանը համատեղությամբ դասախոսել է ԵՊՀ-ում, աճեցրել բազմաթիվ կադրեր: 1968թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1974թ.՝ ակադեմիկոս: 1983-

1990թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ պատմության և տնտեսագիտության բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար:

Հեղինակ է շուրջ 100 գիտական հոդվածների և գրքերի: Կարևոր աշխատություններն են՝ «Հայկական բարձրաքանդակները IV-VII դդ.» (Եր., 1949), «Գառնի I» (ռուս., Եր., 1951), «Գառնի II» (ռուս., Եր., 1957), «Գառնի III» (Եր., 1962), «Քաղաքները և արհեստները Հայաստանում IX-XIII դդ.», հ.I (Եր., 1958), հ.II (Եր., 1964), «Ակնարկներ հին Հայաստանի արվեստի պատմության» (Եր., 1976) մենագրությունները:

Բ.Առաքելյանի ջանքերով ՀԽՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտը հրատարակել է մատենաշարեր. «Հնագիտական պեղումները Հայաստանում» (22 պրակ), «Հայաստանի հնագիտական հուշարձաններ» (14 պրակ), «Դիվան հայ վիմագրության» (6 պրակ), «Հայ ազգագրություն և բանահյուսություն» (18 հատոր), «Հայ ժողովրդական հեքիաթներ» (13 հատոր) և այլն: Բ.Առաքելյանը՝ որպես հեղինակ և խմբագիր, գործուն մասնակցություն է ունեցել «Հայ ժողովրդի պատմություն» 8-հատորյակի II և III հատորների ստեղծմանը:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 9 ատենախոսություն:

Բազմիցս զեկուցումներով հանդես է եկել միջազգային գիտաժողովներում (Մոսկվա, Փարիզ, Լիսաբոն, Լոնդոն, Հռոմ, Կահիրե և այլն):

1965թ. Բ.Առաքելյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման, 1978թ. և 1986թ. ՀԽՍՀ Պետական մրցանակի: Պարգևատրվել է «Կարմիր դրոշ», Հայրենական մեծ պատերազմի II աստիճանի, «Կարմիր աստղ», Աշխատանքային կարմիր դրոշի շքանշաններով և բազմաթիվ մեդալներով:

Վախճանվել է 2004թ. օգոստոսի 16-ին Երևանում:

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՄԱՐՏԻՐՈՍ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1915թ. մարտի 24-ին Ելիզավետպոլի նահանգի Նյուզգեր գյուղում (այժմ՝ Ադրբեջանի Շամխորի շրջան): 1932թ. ավարտել է յոթնամյա դպրոցը և ընդունվել Կիրովաբադի ինտերնացիոնալ մանկավարժական տեխնիկում: 1935-1939թթ. սովորել է Մոսկվայի Վ.Լենինի անվան պետական մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետում: 1939թ. ընդունվել է նույն ինստիտուտի ասպիրանտուրա, ապա զորակոչվել Կարմիր բանակ, մասնակցել Հայրենական մեծ պատերազմին, երկու անգամ ծանր վիրավորվել և մինչև 1968թ. եղել զինվորական ծառայության մեջ՝ հասնելով գնդապետի աստիճանի:

1948թ. Մ.Առաքելյանը, ավարտելով ասպիրանտուրան, պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և անցել աշխատանքի ռազմաուսումնական հաստատություններում: Երկար տարիներ դասախոսել է Լենինգրադի (այժմ՝ Սանկտ Պետերբուրգ) թիկունքի և տրանսպորտի ռազմական ակադեմիայի ԽՄԿԿ պատմության ամբիոնում, որը ղեկավարել է 1959-1968թթ.: 1968թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն և անցել աշխատանքի ԵՊՀ ԽՄԿԿ պատմության ամբիոնում: 1970թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Հեղինակ է շուրջ 50 գիտական աշխատությունների, այդ թվում՝ 12 մենագրության, որոնցից առավել կարևոր են «Աղատագրական մեծ միսիա» (Եր., 1970), «Խաղաղության և սոցիալական առաջադիմության քաղաքականությունը» (Եր., 1978), “Интернациональная миссия советской армии и современность” (Л., 1969), «Մեծ հաղթանակի 40 ամյակը» (Եր., 1985) գրքերը:

Մ.Առաքելյանը պարգևատրվել է «Կարմիր աստղ» (1945) և Հայրենական պատերազմի II աստիճանի (1945, 1985) շքանշաններով, «Մարտական ծառայության համար», «ԽՍՀՄ զինված ուժերի վետերան» (1977), «1941-1945թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» (1945), «Աշխատանքի վետերան» (1986) մեդալներով:

Վախճանվել է 1986թ. հունվարի 10-ին Երևանում:

ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ ԱՌՈՒՍՏԱՄԻ

Փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1910թ. փետրվարի 7-ին ԼՂՀ Շահումյանի շրջանի Էրքեջ գյուղում: 1923թ. ավարտել է տեղի յոթնամյա դպրոցը, այնուհետև Կիրովաբադի մանկավարժական տեխնիկումը, 1940թ. Բաքվի համալսարանի պատմության ֆակուլտետը: Համալսարանն ավարտելուց հետո նույն տարում զորակոչվել է խորհրդային բանակ, մասնակցել Հայրենական մեծ պատերազմին:

1945թ. ընդունվել է ԵՊՀ ասպիրանտուրա: 1950թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1958թ. ստացել է դոցենտի կոչում:

1948-1963թթ. Մ.Առուստամյանն աշխատել է ԵՊՀ ԽՄԿԿ պատմության ամբիոնի դոցենտ: 1969թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, 1972թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1973-1983թթ. եղել է ԵՊՀ գիտական կոմունիզմի ամբիոնի վարիչ:

Մ.Առուստամյանը հեղինակ է 80-ից ավելի գիտական աշխատությունների՝ 5 մենագրության, դասագրքերի, ուսումնամեթոդական ձեռնարկների և բազմաթիվ հոդվածների: Հիշարժան են նրա "Закономерности развития мировой системы социализма" (Ер., 1980), «Սոցիալիստական երկրների համագործակցությունը և զարգացման մակարդակների աստիճանական հավասարեցումը» (Եր., 1971), «ՏՓԽ-ի անդամ սոցիալիստական երկրների ինտեգրացիայի մասին» (Եր., 1974) մենագրությունները:

Մ.Առուստամյանը պարգևատրվել է Հայրենական պատերազմի II աստիճանի շքանշանով, մեդալներով, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատվոգրերով:

Վախճանվել է 1995թ. հուլիսի 21-ին Երևանում:

ԱՍԱԹԻԱՆԻ ԹԻՆԱ ԼԵՎԱՆԻ

Ֆիզիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1918թ. մարտի 12-ին Թիֆլիսում: 1935թ. ավարտել է տեղի թիվ 8 դպրոցը, 1940թ.՝ Թբիլիսիի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետը: Ուսումնառությունը շարունակել է Լենինգրադի (այժմ՝ Սանկտ Պետերբուրգ) ֆիզիկատեխնիկական ինստիտուտի ասպիրանտուրայում՝ ակադեմիկոս Ա.Ի.Ալիխանովի ղեկավարությամբ:

1945թ. Թ.Ասաթիանին պաշտպանել է թեկնածուական, 1971թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1973թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1989թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1996-ին՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս:

1944 թվականից եղել Երևանի ֆիզիկայի ինստիտուտի ավագ գիտաշխատող, այնուհետև՝ լաբորատորիայի վարիչ, իսկ 1987-ից՝ առաջատար գիտաշխատող:

1960-2000թթ. աշխատել է ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի միջուկային ֆիզիկայի ամբիոնում, դասավանդել մասնագիտական մի շարք դասընթացներ:

Հեղինակ է ավելի քան 150 աշխատանքների, որոնք վերաբերում են տիեզերական ճառագայթների ֆիզիկայի, գիտափորձերի մեթոդիկայի և բարձր էներգիաների մասնիկների ֆիզիկայի բնագավառներին:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 12 ատենախոսություն:

1970թ. Թ.Ասաթիանին արժանացել է Լենինյան մրցանակի, 1980թ.՝ ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի, 1987թ.՝ Թբիլիսիի պատվավոր քաղաքացու կոչումների:

ԱՍԱՏՐՅԱՆ ԳԱՌՆԻԿ ՍԵՐՈԲԻ

Արևելագետ,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր



Ծնվել է 1953թ. մարտի 7-ին Թեհրանում: Ավարտել է Լենինականի (այժմ՝ Գյումրի) Պ.Դուրյանի անվան դպրոցը, 1976թ. ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի քրդագիտության բաժինը: 1976-1981թթ. սովորել է ԽՍՀՄ ԳԱ արևելագիտության ինստիտուտի Լենինգրադի բաժանմունքի ասպիրանտուրայում:

1984թ. Գ.Ասատրյանը պաշտպանել է թեկնածուական, 1991թ.՝ դոկտորական ատենախոսություն: 2002թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1984-1989թթ. ղեկավարել է ՀԽՍՀ ԳԱ արևելագիտության ինստիտուտի արևելյան բանասիրության բաժինը, 1989 թվականից դասախոսում է ԵՊՀ-ում, 1997-ից գլխավորում է իրանագիտության ամբիոնը:

1984-2000թթ. տարբեր տարիների որպես հրավիրված դասախոս 1-3 ամսով աշխատել է Կոպենհագենի, Արհուսի, Ուպսալայի համալսարաններում: 2003-ի ամռանը և 2005-ի աշնանը Գ.Ասատրյանը դասախոսությունների շարք է կարդացել Բուդապեշտի Կենտրոնաեվրոպական և Թեհրանի համալսարաններում, ինչպես նաև Iranology Foundation գիտամշակութային կենտրոնում:

Նա հեղինակ է շուրջ 160 հոդվածի և մեկ տասնյակ մենագրությունների, այդ թվում՝ «Բախտիարների ազգագրությունը» (անգլ., Կոպենհագեն, 1987), «Բախտիարների պոեզիան» (անգլ., Կոպենհագեն, 1995), «Իրանի զրադաշտականների ազգագրությունը և մշակույթը» (անգլ., Կոպենհագեն, 2001), «Միջին պարսկերենի և պարթևերենի դերբայական համակարգը» (ռուս., Եր., 1989) գործերը:

1993 թվականից հրատարակում է «Իրան-Նամէ» հայկական արևելագիտական հանդեսը: Նրա խմբագրությամբ են հրատարակվում "Acta Kurdica" (Curzon Press: London) և "Iran and the Caucasus" (Brill: Leiden-Boston) միջազգային արևելագիտական պարբերականները:

1996թ. Գ.Ասատրյանը Երևանում հիմնադրել և ղեկավարում է իրանագիտության կովկասյան կենտրոնը, ղեկավարել է Իրանի Իսլամական Հանրապետության կառավարության և Kashanica Foundation-ի կողմից կազմակերպված իրանական

քոչվոր հանրույթների դաշտային ուսումնասիրության երկու արշավախումբ (վերջինը՝ 2005թ. հուլիս-օգոստոս ամիսներին): ԻԻՀ կառավարության հրավերով հատուկ փորձագետի կարգավիճակով մասնակցել է Իրանի քրդաբնակ տարածքների, Ատրպատականի և Բելուջիստանի էթնոժողովրդագրական պատկերի և ներքին քաղաքական ներուժի ուսումնասիրությանը նվիրված քննարկումներին:

Գ.Ասատրյանը կազմակերպել է միջազգային չորս գիտական համաժողով (Թեհրան, 1998), (Երևան, 1999), (Երևան, 2004), (Երևան, 2007):

ԱՍԱՏՐՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ ՎԱՀԱՆԻ

Փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1929թ. օգոստոսի 25-ին Թիֆլիսում: Սովորել է տեղի թիվ 32 արական միջնակարգ դպրոցում: 1953թ. ավարտել է ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետը:

1957-1962թթ. Մ.Ասատրյանն աշխատել է Տոմսկի բժշկական ինստիտուտում որպես փիլիսոփայության ավագ դասախոս: 1962-1968թթ. եղել է Տոմսկի մանկավարժական ինստիտուտի փիլիսոփայության ամբիոնի վարիչ: 1968-1970թթ. աշխատել է ԵՊՀ փիլիսոփայության, իսկ 1970-1984թթ. դիալեկտիկական մատերիալիզմի և տրամաբանության ամբիոնում որպես դոցենտ:

1982թ. Մ.Ասատրյանը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1984թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1984-2008թթ. եղել է ԵՊՀ դիալեկտիկական մատերիալիզմի և տրամաբանության (այժմ՝ տեսական փիլիսոփայության և տրամաբանության) ամբիոնի պրոֆեսոր: 2008-ից աշխատում է Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայում որպես պրոֆեսոր:

Մ.Ասատրյանը հեղինակ է 30 հոդվածի, 6 մենագրության, որոնցից կարևոր արժեք են ներկայացնում հատկապես «Փիլիսոփայության մեթոդաբանական առանձնահատկությունների մասին» (Եր., 1985), «Օրենք և պայման» (Եր., 1989), «Մարքսիզմ-լենինիզմը գիտության մեթոդաբանության տեսանկյունից. Քննական վերլուծություն» (Եր., 2000), «Էքստրապոլյա-

ցիայի մեթոդի ճանաչողական նշանակությունը» (համահեղինակ՝ Եր., 2002), «Փիլիսոփայության ներածություն: Ուսումնական ձեռնարկ» (Եր., 2004) աշխատությունները:

Մ.Ասատրյանի ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 3 ատենախոսություն:

ԱՍԱՏՐՅԱՆ ՄԱՆՎԵԼ ԵԳՈՐԻ

Լեզվաբան,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1926թ. ապրիլի 26-ին Էջմիածնի շրջանի Արագած գյուղում: 1939թ. ավարտել է ծննդավայրի յոթնամյա դպրոցը, 1942թ. Էջմիածնի մանկավարժական ուսումնարանը, 1951թ՝ ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժինը:

1942-1944թթ. աշխատել է որպես ուսուցիչ, 1954 թվականից՝ ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի ամբիոնում որպես դասախոս:

1954թ. Մ.Ասատրյանը պաշտպանել է թեկնածուական, 1970թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1973թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1990-1995թթ. եղել է ԵՊՀ հայոց լեզվի պատմության ամբիոնի վարիչ:

Մ.Ասատրյանը համալսարանում դասավանդել է հայոց լեզվի ձևաբանություն և բարբառագիտություն:

Առավել կարևոր են՝ «Ժամանակակից հայերենի ձևաբանության հարցեր» (3 հատորով), «Բայի սեռերը ժամանակակից հայերենում» (Եր., 1959), «Ուրմիայի (Խոյի) բարբառը» (Եր., 1968), «Լոռու խոսվածքը» (Եր., 1968) մենագրությունները և «Ժամանակակից հայոց լեզու. շարահյուսություն. պարզ նախադասություն» (Եր., 1987) բուհական դասագիրքը:

Մ.Ասատրյանը վախճանվել է 2000թ. հունվարի 25-ին Երևանում:

ԱՍԱՏՈՒՐ (ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ) ԳԵՈՐԳ ԿՈՍՏԱՆԴԻՆԻ

Արևելագետ, մանկավարժ, թարգմանիչ



Ծնվել է 1868թ. հուլիսի 19-ին Թիֆլիսում: Ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը: Բարձրագույն կրթություն է ստացել Պետերբուրգում՝ արևելյան լեզուների և հնագիտության ինստիտուտներում: 1884 թվականից Գ.Ասատուրն աշխատել է սկզբում Թիֆլիսում, ապա՝ Պետերբուրգում՝ բանկի կենտրոնական վարչությունում, այնուհետև հայկական դպրոցներում՝ որպես ուսուցիչ և վերատեսուչ: Նա սկսել է գրել վաղ հասակից: Առաջին բանաստեղծությունը «Աղբյուր» ամսագրում լույս է տեսել 1887թ.: «Աղբյուր» և «Տարազ» պարբերականներից բացի՝ ստեղծագործական աշխատանք է ծավալել նաև «Մուրճ», «Ազգագրական հանդես» պարբերականներում: Խորհրդային կարգեր հաստատվելուց հետո Գ.Ասատուրը եկել է Հայաստան և ձեռնամուխ եղել գիտամանկավարժական և թարգմանչական գործունեության: 1921թ. հրավիրվել է ԵՊՀ և տասը տարի պատմագրական ֆակուլտետում կարդացել վրաց և պարսից լեզուների, ինչպես նաև Մերձավոր Արևելքի ու Անդրկովկասի գրականության պատմության դասընթացներ:

Գ.Ասատուրի գրչին են պատկանում «Հայավանդը», «Նմուշներ վրաց պոեզիայից», «Անհետացած Թիֆլիսը» արձակ, ինչպես նաև «Արևելքի լեգենդները» չափածո երկերը: Նա Սայաթ-Նովայի լավագույն գիտակներից էր և մեծ վաստակ ունի բանաստեղծի ստեղծագործությունների լուսաբանման, անհայտ երգերի հայտնաբերման, կենսագրական ու տեքստաբանական շատ խնդիրների լուծման ասպարեզում: Գ.Ասատուրը հայտնի է նաև որպես թարգմանիչ: Հին վրացերեն բնագրից թարգմանել է Շոթա Ռուսթավելու «Ընձենալորը» ստեղծագործությունը: Պարսկերենից նրա թարգմանությունների թվին է պատկանում Ֆիրդուսու «Ռոստամ և Զոհրաբ» պոեմը:

Գ.Ասատուրը վախճանվել է 1937թ. հոկտեմբերի 7-ին Թբիլիսիում:

ԱՍԼԱՆՅԱՆ ԱՇՈՏ ՏԻԳՐԱՆԻ

Երկրաբանահանքաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ



Ծնվել է 1919թ. փետրվարի 7-ին Քարվանսարա (այժմ՝ Իջևան) քաղաքում: 1936թ. ընդունվել է ԵՊՀ աշխարհաերկրաբանական ֆակուլտետ, որն ավարտելուց հետո՝ 1941-1943թթ., մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին և ծանր վիրավորվելուց հետո զորացրվել:

1944թ. ընդունվել է ՀԽՍՀ ԳԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի ասպիրանտուրա: 1947թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն:

1957թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1960թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1965թ. Ա.Ասլանյանն ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1986թ.՝ ակադեմիկոս:

1944-1955թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի ավագ գիտաշխատող և հնէաբանության ու շերտագրության բաժնի վարիչ: 1954-1961թթ. աշխատել է ՀԽՍՀ Նախարարների խորհրդի երկրաբանական վարչությունում որպես գլխավոր ինժեներ, 1961-1965թթ.՝ վարչության պետ: 1965-1966թթ. նա եղել է ԵրՊԻ ռեկտոր, 1966-1975թթ.՝ ՀԽՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության նախարար, 1975-1983թթ.՝ ՀԽՍՀ ԳԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի տնօրեն:

1981-1989թթ. դասախոսել է ԵՊՀ-ում և ԵրՊԻ-ում՝ վարելով ընդհանուր ու կիրառական երկրաբանության ամբիոնների վարիչի պաշտոնը:

Ա.Ասլանյանն ընտրվել է ՀԽՍՀ VII և VIII գումարումների Գերագույն խորհրդի պատգամավոր:

Հեղինակ է շուրջ 120 աշխատության, որոնցից կարևորագույնը «Հայաստանի ռեգիոնալ երկրաբանություն» (Եր., 1961) մեծարժեք մենագրությունն է:

1961թ. Ա.Ասլանյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է Հայրենական պատերազմի II աստիճանի, Աշխատանքային կարմիր դրոշի

(3), Ժողովուրդների բարեկամության շքանշաններով ու մեդալներով:

Վախճանվել է 1989թ. մարտի 17-ին Երևանում:

ԱՍԼԱՆՅԱՆ ԼԵՎՈՆ ՍՈՒՐԵՆԻ

Ֆիզիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր

Ծնվել է 1952թ. դեկտեմբերի 10-ին Երևանում: 1970թ. ավարտել է թիվ 60 դպրոցը, 1976թ. ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետը: 1974 թվականից Լ.Ասլանյանը մասնագիտացել է օպտիկայի ամբիոնում: 1976թ. ընդունվել է Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի նպատակային ասպիրանտուրա: 1980-ից աշխատում է ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի օպտիկայի ամբիոնում որպես կրտսեր, այնուհետև՝ ավագ գիտաշխատող, 1989-ից՝ դոցենտ:

1980թ. պաշտպանել է թեկնածուական, 2004թ. դոկտորական ատենախոսություն: 2004թ. նրան շնորհվել է դոցենտի, 2008-ին՝ պրոֆեսորի կոչում:

Լ.Ասլանյանը հեղինակ է 75 գիտական հոդվածների, դասագրքերի և ուսումնական ձեռնարկների, այդ թվում՝ «Ոչ գծային ֆիզիկայի ներածություն» (համահեղինակ, Եր., 2006) դասագրքի, «Տատանումների և ալիքների տեսության ներածություն» (Եր., 2008) ուսումնական ձեռնարկի:

Գիտական հետաքրքրությունների շրջանակը. ոչ գծային ֆիզիկա, լազերային ֆիզիկա, մակերևութային և ծավալային ոչ գծային էլեկտրամագնիսական ալիքներ, ուժեղ ոչ գծայնություններ, անհամասեռ անիզոտրոպ միջավայրերի գծային և ոչ գծային օպտիկա:

ԱՍԼԱՆՅԱՆ ՀԱՅԿԱԶ ԳԱԲՐԻԵԼԻ

Փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ



Ծնվել է 1903թ. մայիսի 1-ին Երևանի Նահանգի Սուրմալու գավառի Կողբ գյուղում: 1915թ. Հայոց մեծ եղեռնի հետևանքով ընտանիքի հետ միասին գալթել է Երևան: Շուտով զրկվելով ծնողներից՝ քրոջ հետ տեղավորվել է Էջմիածնի որբանոցում:

1923-1926թթ. Հ.Ասլանյանը սովորել է Անդրկովկասի կոմունիստական համալսարանում, 1926-1929թթ.՝ նույն համալսարանի ասպիրանտուրայում:

1929-1931թթ. նա դասախոսել է Թիֆլիսի բարձրագույն ուսումնական հաստատություններում: 1931-1953թթ. հաջորդաբար ղեկավարել է Երևանի անասնաբուժական-անասնաբուծական ինստիտուտի, Երևանի ռուսական մանկավարժական ինստիտուտի, ԵՊՀ և ՀԿԿ Կենտկոմին առընթեր հանրապետական կուսակցական դպրոցի փիլիսոփայության ամբիոնները: Հայրենական պատերազմի տարիներին ղեկավարել է նաև «Կոմունիստ» և «Սովետական Հայաստան» թերթերի պրոպագանդայի բաժինը: 1944-1948 և 1956-1969թթ. Հ.Ասլանյանը ղեկավարել է ՀԽՍՀ ԳԱ փիլիսոփայության, ապա՝ փիլիսոփայության և իրավունքի բաժանմունքը:

1966թ. Հ.Ասլանյանը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1967թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1969-1978թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի պատմական մատերիալիզմի և գիտական կոմունիզմի բաժնի վարիչ, 1958-1961թթ.՝ ՀԽՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հասարակական գիտություններ) հանդեսի խմբագիր:

Հեղինակ է ավելի քան 50 գիտական աշխատությունների, որոնցից հարկ է նշել "Идея прогресса в буржуазной философии истории" (Ер., 1965) մենագրությունը և «Դիալեկտիկական մատերիալիզմ» (Եր., 1930) դասագիրքը:

1963թ. Հ.Ասլանյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատվոգրերով:

Վախճանվել է 1980թ. հոկտեմբերի 6-ին Երևանում:

ԱՍԼԱՆՅԱՆ ՎԻԼԵՆ ՄԿՐՏՉԻ

Ֆիզիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1932 թ. փետրվարի 18-ին Թիֆլիսում: 1950թ. ավարտել է տեղի թիվ 71 դպրոցը, 1955թ. ԵՊՀ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը: 1957-1960թթ. սովորել է Լենինգրադի (այժմ՝ Սանկտ Պետերբուրգ) բարձրամոլեկուլային միացությունների ինստիտուտի ասպիրանտուրայում և 1962թ. նույն ինստիտուտում պաշտպանել թեկնածուական ատենախոսություն:

1973թ. Վ.Ասլանյանը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1974թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1960թ. Վ.Ասլանյանը ստեղծել է մոլեկուլային կենսաֆիզիկայի կենտրոն ՀԽՍՀ ԳԱ կենտրոնական ֆիզիկատեխնիկական լաբորատորիայում, որի հիման վրա հետագայում ստեղծվեց Փորձարարական կենսաբանության ինստիտուտը: 1965թ. նա հիմնադրել է ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի մոլեկուլային ֆիզիկայի և կենսաֆիզիկայի (այժմ՝ մոլեկուլային ֆիզիկայի) ամբիոնը և այն ղեկավարել մինչև կյանքի վերջը:

Հեղինակ է ավելի քան 100 գիտական աշխատանքների: Սկսելով որպես կենսապոլիմերների օպտիկական հատկություններն ուսումնասիրող տեսաբան՝ Վ.Ասլանյանն էական ներդրում է կատարել պարույրային մակրոմոլեկուլների օպտիկական ակտիվության ուսումնասիրության ոլորտում: Նրա հետազոտությունների շնորհիվ սպեկտրաբևեռաչափությունը դարձավ կենսապոլիմերների ուսումնասիրման գործուն մեթոդ:

Վ.Ասլանյանը մի շարք կարևոր արդյունքներ է ստացել ԴՆԹ-լիգանդ կոմպլեքսների կառուցվածքի ուսումնասիրության բնագավառում, պարզաբանել լիգանդների ազդեցության տակ ԴՆԹ-ի պարույրի կայունությունը և կոնֆորմացիոն փոփոխությունները:

1975-ից նրա ղեկավարությամբ ամբիոնում կատարվել են պոլիմերային նյութերի ծերացման և դրանց կյանքի տևողության ուսումնասիրություններ՝ ԽՍՀՄ արդյունաբերական, պաշտպանության և տիեզերքի հարցերով զբաղվող գերատեսչությունների հետաքրքրությունների շրջանակներում:

Նրա ղեկավարությամբ ու խորհրդատվությամբ պաշտպան-

վել է թեկնածուական 25 և դոկտորական 4 ատենախոսություն:

Վ.Ասլանյանը վախճանվել է 1989թ. օգոստոսի 17-ին Երևանում:

ԱՎԱԳՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ ՌՈՒՍՏԱՄԻ

Աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1942թ. մայիսի 17-ին Իրանի Սպահան քաղաքում: 1960թ. ավարտել է Արտաշատի թիվ 2 միջնակարգ դպրոցը, 1966թ. ԵՊՀ աշխարհագրության ֆակուլտետը:

1966-1969թթ. Ա.Ավագյանն աշխատել է Հայաստանի երկրաբանական վարչությունում, 1969-ից՝ ԵՊՀ-ում: 1976թ. պաշտպանել է թեկնածուական, 2001թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1982թ. նրան շնորհվել է դոցենտի, 2006թ. պրոֆեսորի կոչում: 2007-ից ԵՊՀ սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի վարիչն է:

Ա.Ավագյանը հեղինակ է գիտական շուրջ 30 հոդվածի, դպրոցական 4 և բուհական 2 դասագրքերի, ուսումնամեթոդական ձեռնարկների և մի քանի մենագրության, որոնցից առավել կարևոր են՝ «Հայաստանի Հանրապետության ընդերքի ռեսուրսների աշխարհագրական գնահատականը» (Եր., 2000), «Մաթեմատիկական մոդելների կիրառումը աշխարհագրության մեջ» (Եր., 2000), «Մարդ-բնություն փոխհարաբերության ռեգիոնալ խնդիրները» (Եր., 2000):

ԱՎԱԳՅԱՆ ԱՐԾՐՈՒՆ ԱԲԳԱՐԻ

Գրականագետ,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1942թ. մարտի 13-ին Երևանում: 1959թ. ավարտել է Քանաքեռի Խ.Աբովյանի անվան միջնակարգ դպրոցը: 1959-1961թթ. աշխատել է Երևանի լուսատեխնիկական գործարանում: 1961-1964թթ. ծառայել է խորհրդային բանակում: 1964թ. Ա.Ավագյանն ընդունվել և 1968-ին ավարտել է ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի ժուռնալիստիկայի բաժինը: 1968-ից աշխատում է ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի խորհրդահայ

(այժմ՝ հայ նորագույն) գրականության ամբիոնում նախ՝ որպես ավագ լաբորանտ, ասիստենտ, ապա՝ դասախոս:

1977թ. Ա.Ավագյանը պաշտպանել է թեկնածուական, 1998թ.՝ դոկտորական ատենախոսություն: 2006թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 2000 թվականից Ա.Ավագյանը հայ բանասիրության ֆակուլտետի դեկանն է:

Հրատարակած կարևոր գրքերն են՝ «Կոստան Զարյան. կյանքը և գործը» (Եր., 1998), «Պատկերազարդ պատմություն Շահան Շահնուրի» (Եր., 2004) մենագրությունները և «Սփյուռքահայ դասական պատմվածք» (Եր., 2007) ձեռնարկը: Գիտական մամուլում և տարբեր ժողովածուներում նա հրապարակել է հայ նորագույն և սփյուռքահայ գրականության տարաբնույթ խնդիրներին վերաբերող մի շարք հոդվածներ:

2000 թվականից Ա.Ավագյանը Հայաստանի գրողների միության անդամ է:

ԱՎԱԳՅԱՆ ԳՐԻԳՈՐ ԵՐԵՄԻ

Աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս



Ծնվել է 1928թ. սեպտեմբերի 23-ին Գրոզնիում: 1934թ. ընտանիքով տեղափոխվել է Ադր. ԽՍՀ Աղսուի շրջանի Հնդար հայկական գյուղը: Նախնական կրթությունն ստացել է տեղի թերի միջնակարգ դպրոցում: 1946թ. ավարտել է Հարևան Գյուրջևան գյուղի միջնակարգ դպրոցը, 1952թ. ԵՊՀ աշխարհագրության ֆակուլտետը:

1952-1957թթ. Գ.Ավագյանն աշխատել է Երևանի թիվ 13, իսկ 1957-1958թթ. թիվ 32 դպրոցներում:

1961թ. պաշտպանել է թեկնածուական, 1971թ. դոկտորական ատենախոսություն: 1962թ. նրան շնորհվել է դոցենտի, 1972թ. պրոֆեսորի կոչում:

1958-1961թթ. եղել է ուսուցիչների կատարելագործման ինստիտուտի գիտաշխատող, 1961-1975թթ. ԵՊՀ դասախոս, իսկ 1976թ.՝ ԵԺՏԻ տնտեսական աշխարհագրության ամբիոնի վարիչ:

1991թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, 1996թ. ակադեմիկոս:

Հեղինակ է բազմաթիվ գիտական հոդվածների, տասնյակ մենագրությունների, բուհական ձեռնարկների, դպրոցական դասագրքերի: Առավել կարևոր են՝ «Եվրոպա (կապիտալիստական երկրների տնտեսական և քաղաքական աշխարհագրություն)» (Եր., 1966), «Լատինական Ամերիկա» (Եր., 1968), «Սովետական Հայաստանի գյուղատնտեսությունը (տնտեսա-աշխարհագրական ուսումնասիրություն)» (Եր., 1970), «Հայկական ՍՍՀ բնակչությունը (տնտեսա-աշխարհագրական ուսումնասիրություն)» (Եր., 1975), "Люди и горы (история, теория и практика)" (М., 1989) աշխատությունները:

Նրա ղեկավարությամբ կազմվել են չորս խոշորամասշտաբ և բազմաթիվ փոքրամասշտաբ քարտեզներ ու ատլասներ:

Գ.Ավագյանը մասնակցել է բազմաթիվ գիտաժողովների (Մոսկվա, Օդեսա, Բաքու, Աշխաբադ, Տաշքենդ, Թբիլիսի, Տալլին, Լոնդոն, Լոս Անջելես):

1990-1995թթ. եղել է ՀՀ ԳԽ պատգամավոր, 1995-1999թթ. ՀՀ ԱԺ պատգամավոր, 1992-2005թթ. «Պարմանի» հիմնադրամի հիմնադիր նախագահ, 1976-1987թթ. ԽՍՀՄ բարձրագույն կրթության նախարարության գիտամեթոդական կենտրոնական խորհրդի անդամ:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 5 ատենախոսություն:

Գ.Ավագյանը պարգևատրվել է Խ.Աբովյանի անվան մեդալով:

Վախճանվել է 2005թ. դեկտեմբերի 4-ին Երևանում:

ԱՎԱԳՅԱՆ ՌՈԲԵՐՏ ՀՈՎՍԵՓԻ

Ֆիզիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Ծնվել է 1931թ. մարտի 28-ին Երևանում: 1949թ. ավարտել է թիվ 25 դպրոցը, 1954թ. ԵՊՀ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը և աշխատանքի է անցել նույն ֆակուլտետի փորձարարական ֆիզիկայի ամբիոնում որպես լաբորանտ:

1965թ. Ռ.Ավագյանը պաշտպանել է թեկնածուական, 1981թ. դոկտորական ատենախոսություն: 1984թ. նրան շնորհվել է

պրոֆեսորի կոչում: 1986թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1996թ.՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս:

1957-ից Ռ.Ավագյանն աշխատում է Երևանի Ֆիզիկայի ինստիտուտում: 1960-1974թթ. և այնուհետև պարբերաբար դասավանդել է ԵՊՀ-ում:

Հեղինակ է ավելի քան 200 գիտական հոդվածների: Նրա աշխատանքները վերաբերում են Երևանի 6 ԳէՎ-ոց էլեկտրոնային սինքրոտրոնի բևեռացված ֆոտոնային փնջերի ստացմանը, տարբեր բյուրեղային ռադիատորներում կանալացման պայմաններում էլեկտրոնների ճառագայթման հետազոտմանը, նոր տիպի ճառագայթման բացահայտմանը (քվազիչերենկովյան ճառագայթում): Փորձնականորեն ուսումնասիրել է ֆոտոծնման ռեակցիաներում նուկլոնային ռեզոնանսների ստացումը, չափել նուկլոնների և միջուկների վրա պիոնների ծնման կտրվածքի անհամաչափության աստիճանը: Զբաղվում է բժշկության մեջ ախտորոշման և թերապիայի համար օգտագործվող իզոտոպների արտադրության տեխնոլոգիայի մշակմամբ:

Ռ.Ավագյանն իր գիտափորձերն ու գիտափորձարարական հետազոտությունները կատարել է Շվեյցարիայի (CERN), Գերմանիայի (HERMES-DESY) միջուկային հետազոտությունների կենտրոններում:

Նրա ղեկավարությամբ ու խորհրդատվությամբ պաշտպանվել է թեկնածուական 30 և դոկտորական 1 ատենախոսություն:

2003թ. Ռ.Ավագյանը պարգևատրվել է «Անանիա Շիրակացի» մեդալով:

ԱՎԱԳՅԱՆ ՌՈԼԱՆԴ ՄԱՄԻԿՈՆԻ

Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

Ծնվել է 1944թ. սեպտեմբերի 18-ին Ադր. ԽՍՀ Շահումյանի շրջանի Գետաշեն գյուղում: 1962թ. ավարտել է Երևանի թիվ 8 դպրոցը, 1968թ.՝ ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետը:

1968 թվականից Ռ.Ավագյանն աշխատում է ԵՊՀ-ում որպես ասիստենտ, ավագ դասախոս:

1973թ. պաշտպանել է թեկնածուական, 1990թ. դոկտորա-

կան ատենախոսություն: 1979թ. նրան շնորհվել է դոցենտի, 1991թ. պրոֆեսորի կոչում:

1991-1995թթ. նա համատեղությամբ աշխատել է Իջևանի քոլեջ-համալսարանում որպես ֆիզիկայի ամբիոնի վարիչ, այնուհետև բնագիտական ֆակուլտետի դեկան: 2000-2006թթ. եղել է ԵՊՀ տեսական ֆիզիկայի ամբիոնի վարիչ: 2006-ից ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի դեկանն է: Նույն թվականին ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ:

Ռ.Ավագյանը երեք ուսումնական ձեռնարկների և ավելի քան 80 գիտական հոդվածների հեղինակ է: Գիտական աշխատանքները վերաբերում են գրավիտացիայի Այնշտայնի տեսության և այլընտրանքային տեսությունների հետազոտմանն ու զարգացմանը, դրանց աստղաֆիզիկական և կոսմոլոգիական կիրառություններին, քվանտային մեխանիկայի հարցերին և այլն:

Զեկուցումներով հանդես է եկել միջազգային գիտաժողովներում (ԳՖՀ, ՌԴ): Համատեղ աշխատանքներ է կատարել Բռնոյի (Չեխիա), Ռոստոկի, Ենայի (Գերմանիա) համալսարաններում, Պոտսդամի աստղաֆիզիկայի կենտրոնական ինստիտուտում (Գերմանիա), Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտում (Դուբնա):

ԱՎԱԳՅԱՆ ՍԱՐԳԻՍ ՆԱԶԱՐԻ

Քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1918թ. մարտի 16-ին Գուգարքի շրջանի Դարբաս գյուղում: 1936թ. ավարտել է Կիրովականի (այժմ՝ Վանաձոր) թիվ 1 միջնակարգ դպրոցը և ընդունվել ԵՊԻ քիմիատեխնոլոգիական ֆակուլտետ: 1941թ. մեկնել է ռազմաճակատ: Պատերազմի ավարտից հետո ընդունվել է ԵՊՀ ասպիրանտուրա:

1946-ից Ս.Ավագյանն աշխատել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետում որպես ասիստենտ, ապա՝ ավագ դասախոս: 1953թ. պաշտպանել է թեկնածուական, 1967թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1969թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1973-1975թթ. նա եղել է քիմիայի ֆակուլտետի դեկան, 1975-1984թթ. Երևանի Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, 1984-1989թթ. ԵՊՀ անօրգանական քի-

միայի ամբիոնի վարիչ:

Հեղինակ է ավելի քան 100 գիտական աշխատանքների, որոնք նվիրված են անցման շարքի մետաղների նոր՝ օլիֆենային, դիօլիֆենային խելատային կոմպլեքս միացությունների սինթեզին և հետազոտմանը:

Նա բազմիցս հրավիրվել է միջազգային գիտաժողովների Իռլանդիա, Կանադա, Բրազիլիա, Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետություն և այլն:

Ս.Ավագյանը պարգևատրվել է «Կարմիր աստղ» շքանշանով, մեդալներով և ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատվոգրով:

Վախճանվել է 1995թ. ապրիլի 3-ին Երևանում:

ԱՎԱԳՅԱՆՑ ԳԵԴԵՈՆ ՄՈՎՍԵՍԻ

Ռադիոֆիզիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ

Ծնվել է 1919թ. ապրիլի 12-ին Սամարղանդ քաղաքում: Միջնակարգ կրթություն ստանալուց հետո ընդունվել է Տաշքենդի պետական համալսարան, որն ավարտել է 1942թ.: 1948-1950թթ. եղել է ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի Պ.Լեբեդևի անվան ֆիզիկայի ինստիտուտի (Մոսկվա) ասպիրանտ:

1950թ. Գ.Ավագյանցը, պաշտպանելով թեկնածուական ատենախոսություն, վերադարձել է Տաշքենդ և աշխատանքի անցել Ուզբեկստանի ԳԱ ֆիզիկատեխնիկական ինստիտուտում որպես ավագ գիտաշխատող կիսահաղորդիչների ֆիզիկայի բնագավառում: 1956-1965թթ. նա ղեկավարել է Տաշքենդի պետական համալսարանի տեսական ֆիզիկայի ամբիոնը:

1958-ին նա պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1960թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1965թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ և տեղափոխվել Երևան: Նա ԵՊՀ-ում հիմնադրել է կիսահաղորդիչների և դիէլեկտրիկների ֆիզիկայի ամբիոնը, որը համատեղությամբ ղեկավարել է մինչև 1972թ. և 1975-1977թթ: Այդ տարիներին նա համալսարանի կիսահաղորդչային նյութերի և սարքերի ֆիզիկայի պրոբլեմային լաբորատորիայի գիտական ղեկավարն էր, 1965-1984թթ.՝ ՀԽՍՀ

ԳԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի կիսահաղորդչային էլեկտրոնիկայի բաժնի վարիչը և ԳԱ կիսահաղորդիչների գծով գիտական խորհրդի ղեկավարը:

Գ.Ավագյանցի գիտական գործունեության մեջ առանձնահատուկ տեղ է զբաղեցնում ուժեղ էլեկտրական դաշտերի առկայությամբ կիսահաղորդիչներում էլեկտրոնների տաքացման և սառեցման երևույթների հետազոտումը:

Գ.Ավագյանցի գիտական հետազոտությունները վերաբերում են բացասական դիմադրությամբ սարքերում ընթացող ֆիզիկական երևույթներին, հզոր տրանզիստորների նախագծման ֆիզիկական սկզբունքներին և դրանց հաշվարկներին: Տ-դիոդների բնագավառում իր աշակերտների հետ կատարած աշխատանքները ստացել են լայն գիտական ճանաչում: Հզոր տրանզիստորների նախագծման և ԵՊՀ-ում դրանց փորձնական նմուշների իրականացման գործում նրա աշխատանքները հիմք են հանդիսացել Հայաստանի ռադիոէլեկտրոնային արդյունաբերության մեջ այդ ուղղության զարգացման համար:

Գ.Ավագյանցը ավելի քան 250 գիտական աշխատանքների ու մի քանի գյուտերի հեղինակ է: Հրատարակել է «Կիսահաղորդիչների ֆենոմենոլոգիական տեսություն» (ռուս., Եր., 1960) մենագրությունը:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական ավելի քան 20 ատենախոսություն:

Վախճանվել է 1984թ. հուլիսի 10-ին Դոնի Ռոստովում:

ԱՎԴԱԼԲԵԳՅԱՆ ԹԱԴԵՎՈՍ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Պատմաբան, բանասեր, տնտեսագետ



Ծնվել է 1885թ. հոկտեմբերի 3-ին Պարսկաստանի Մակու քաղաքում, որտեղ ստացել է սկզբնական կրթություն: 1907թ. ավարտել է Գևորգյան ճեմարանը: Մինչև 1913թ. եղել է նույն կրթօջախի ուսուցիչ:

Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումից հետո, 1921-1922թթ., Թ.Ավդալբեգյանն աշխատել է Հայպետհրատում: 1921թ. հրավիրվել է դասախոսելու Երևանի համալսարանում: Հասարակագիտական և պատմագրական ֆակուլտետներում դասավանդել է հայ հասարակական մտքի

պատմություն և տնտեսական զարգացման պատմություն, վարել հասարակագիտական ֆակուլտետի դեկանի տեղակալի պաշտոնը և եղել համալսարանի վարչության անդամ: 1925թ. դասավանդել է Երևանի կուսդպրոցում:

1926-1930թթ. եղել է Հայաստանի գիտության և արվեստի ինստիտուտի անդամ: Այնուհետև զբաղվել է գրական-գիտական աշխատանքով:

Թ.Ավդալբեգյանը զբաղվել է պատմաբանասիրական ու տնտեսագիտական խնդիրներով՝ ստեղծելով մի շարք ինքնատիպ ու մնայուն գործեր: Նա արժեքավոր ուսումնասիրություններ է գրել 18-րդ դարի հայ ազատագրական շարժումների վերաբերյալ («Հայ ազատագրական շարժման երկու հոսանք 18-րդ դարի վերջում», «Շահամիր Շահամիրյանն ու Հնդկահայոց համայնական ինքնավարությունը 18-րդ դարում» և այլն): Նրա գրչին են պատկանում հայ գրականության պատմությանը վերաբերող մի շարք հետաքրքիր աշխատություններ՝ նվիրված Խ.Աբովյանի, Մ.Նալբանդյանի, Հովհ.Թումանյանի, Մուրացանի, Ա.Թոխմախյանի ստեղծագործություններին:

Թ.Ավդալբեգյանի տնտեսագիտական հետազոտությունները վերաբերում են Հայաստանի տնտեսական զարգացման պատմությանը («Հայ չինականի և գեղջկուհու աշխատավարձը 5-րդ դարում», «Մի գաղտնիք հայ վիմական արձանագրությունների մեջ ու նրա նշանակությունը Հայաստանի տնտեսական զարգացման պատմության համար» (Եր., 1927), «Հաս, սակ, բաժ» և այլն) և տնտեսագիտության տեսությանը («Կարլ Մարքսի տնտեսական զարգացման թեորիան» (Եր., 1926)) և այլն:

Թ.Ավդալբեգյանը մասնակցել է 1934-1935թթ. հրատարակված «Ռուս-Հայերեն նոր բառարանի» կազմման աշխատանքներին, ինչպես նաև կազմել է «Ռուս-Հայերեն տնտեսագիտական տերմինների բառարան»-ը (Եր., 1964): Նա կատարել է մարքսիզմի դասականների երկերի հայերեն թարգմանություններ, հատկապես պետք է նշել «Կապիտալի» բարձրորակ թարգմանությունը գերմաներեն բնագրից:

Թ.Ավդալբեգյանն ուժերի ծաղկման շրջանում զոհ դարձավ երկրում ծավալված բռնարարքներին:

Վախճանվել է 1937թ. հունվարի 26-ին: Արդարացվել է հետմահու:

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱԻԴԱ ԱՎԵՏԻՍԻ

Քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Ծնվել է 1938թ. դեկտեմբերի 10-ին Երևանում: 1955թ. ավարտել է թիվ 15 դպրոցը, 1960թ. ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը: 1961-1964թթ. Ա.Ավետիսյանը եղել է Մոսկվայի ԽՍՀՄ ԳԱ Ն.Զելինսկու անվան ինստիտուտի ասպիրանտ և 1964թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1968թ. ստացել է դոցենտի կոչում:

1965-1967թթ. աշխատել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի օրգանական քիմիայի ամբիոնում որպես ասիստենտ, 1967-1975թթ. դոցենտ: 1979-2000թթ. եղել է օրգանական քիմիայի ամբիոնի վարիչ: 1984-ից քիմիայի ֆակուլտետի դեկանն է:

1975թ. Ա.Ավետիսյանը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1976թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1996թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս: 2005-ից նա քիմիայի ֆակուլտետում գործող գիտահետազոտական լաբորատորիայի գիտական ղեկավարն է:

Հեղինակ է ավելի քան 500 գիտական աշխատանքների, այդ թվում՝ 120 հեղինակային արտոնագրի, որոնք նվիրված են թթվածին, ազոտ, ծծումբ պարունակող նոր հետերոցիկլային և կենսաբանորեն ակտիվ միացությունների սինթեզի մեթոդների մշակման, նրանց քիմիական փոխարկումների ուսումնասիրման և «կառուցվածք-հատկություն» (քիմիական, կենսաբանական) փոխկապակցության ուսումնասիրման խնդիրներին:

Ա.Ավետիսյանի ղեկավարությամբ ու խորհրդատվությամբ պաշտպանվել է թեկնածուական ավելի քան 35 և դոկտորական 4 ատենախոսություն:

1999թ. Ա.Ավետիսյանը պարգևատրվել է «Անանիա Շիրակացի» մեդալով, 2004թ. արժանացել ՀՀ Նախագահի մրցանակի:

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐԱ ԿԱՐԱՊԵՏԻ

Ֆիզիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1950թ. մայիսի 27-ին Երևանում: 1967թ. ավարտել է Երևանի թիվ 10 դպրոցը, 1972թ. ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետը և նույն թվականին աշխատանքի անցել տեսական ֆիզիկայի ամբիոնում որպես ասիստենտ: 1979թ. Ա.Ավետիսյանը պաշտպանել է թեկնածուական, 1994թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1980թ. նրան շնորհվել է դոցենտի, 2005թ.՝ պրոֆեսորի կոչում:

2001-2006թթ. եղել է ԵՊՀ պրոռեկտոր, 2006-2007թթ. ԵՊՀ ակադ. Վ.Համբարձումյանի անվան աստղաֆիզիկայի ամբիոնի վարիչ: 2008-ից նա ԵՊՀ Վ.Համբարձումյանի անվան աստղադիտարանի տնօրենն է և ԵՊՀ աստղաֆիզիկայի ամբիոնի պրոֆեսոր:

Ա.Ավետիսյանը հետազոտել է նեյտրոնային աստղերի ընդերքում ջերմաստիճանի բաշխման, դրանց շուրջ մագնիսոլորտի գոյացման և կայունության հարցերը, բաբախիչների կոհերենտ ռադիոճառագայթման ֆիզիկական մեխանիզմները, էլեկտրոն-պոզիտրոնային զույգերի ծնման մի շարք պրոցեսներ՝ մատնանշելով դրանց հնարավոր աստղաֆիզիկական կիրառությունները: Ստացված արդյունքներն ամփոփված են վեց տասնյակ աշխատանքներում:

Հեղինակ է նաև «Դասական մեխանիկա» (Եր., 2004) բուհական դասագրքի, բուհերում և միջնակարգ դպրոցներում ֆիզիկայի դասավանդման մեթոդներին, ուրդիական ծրագրերին և դասագրքերի ստեղծմանն առնչվող 30 գիտամեթոդական աշխատանքների, ինչպես նաև ՀՀ կրթական համակարգի բարեփոխումների հարցերին և դրանց ծրագրային նորարարությանը նվիրված 50 հոդվածի: Միջազգային կրթական ծրագրերի փոխանակման շրջանակում նա 4-ամսյա հետազոտական և դասախոսական գործունեություն է ծավալել Վիրջինիայի և Կալիֆորնիայի համալսարաններում:

Ա.Ավետիսյանը եղել է ՀՀ ԳԽ գիտության և կրթության հանձնաժողովի փորձագետ (1991-1995), մասնակցել «ՀՀ կրթության մասին», «ՀՀ լեզվի մասին» օրենսդրական նախագծերի ստեղծմանը:

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐԱ ՍԵՐԳԵՅԻ

Մեխանիկոս,
Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

Ծնվել է 1958թ. սեպտեմբերի 14-ին Թալինում: 1975թ. ավարտել է տեղի թիվ 1 դպրոցը, 1980թ. ԵՊՀ մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետի մեխանիկայի բաժինը:

1980-1982թթ. Ա.Ավետիսյանն աշխատել է արդյունաբերական շինարարության նախարարությունում որպես ճարտարագետ: 1983-1985թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ մեխանիկայի ինստիտուտի ասպիրանտ, 1986թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և մինչև 1988թ. աշխատել նույն ինստիտուտում որպես կրտսեր գիտաշխատող, 1988-1996թթ.՝ ավագ գիտաշխատող:

1988-1995թթ. Ա.Ավետիսյանը համատեղությամբ դասախոսել է Երևանի պետական մանկավարժական ինստիտուտում:

1996-2000թթ. նա եղել է ՀՀ ԿԳ նախարարության միջնակարգ կրթության վարչության պետ, 2000-ից՝ մասնագիտական կրթության և գիտության հարցերի գծով ՀՀ ԿԳ փոխնախարար: 2005-ից դասավանդում է ԵՊՀ-ում:

1998թ. Ա.Ավետիսյանը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 2006-ին ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ:

Հեղինակ է ավելի քան 40 գիտական հրապարակումների, որոնք վերաբերում են հոծ միջավայրի մեխանիկային, գծային էլեկտրաառաձգականության և ոչ գծային էլեկտրամագնիսաառաձգականության երևույթներին:

1994-2005թթ. եղել է ՀՀ ԳԱԱ «Մեխանիկա» տեղեկագրի գլխավոր խմբագիր:

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԶԱՎԵՆ ՎԱՍԻԼԻ

Գրականագետ,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1933թ. նոյեմբերի 16-ին Իջևանի շրջանի Խաչթառակ գյուղում: Տեղի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո 1955-ին ավարտել է Զոգուևի (Ուկրաինա) ռազմական օդաչուների բարձրագույն ուսումնարանը և ծառայության անցել Մոսկվայի հակաօդային պաշտպանությունում:

Զ.Ավետիսյանը 1958թ. զորացրվելուց հետո ընդունվել է ԵՊՀ բանասիրության ֆակուլտետ, որն ավարտել է 1963թ.: Մանկավարժական աշխատանքի է անցել Հայրենի գյուղում որպես ուսուցիչ, երեկոյան միջնակարգ դպրոցի տնօրեն: 1967թ. ընդունվել է ՀԽՍՀ ԳԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ասպիրանտուրան:

1970թ. պաշտպանել է թեկնածուական, 1986թ. դոկտորական ատենախոսություն: 2002թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1968 թվականից Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում եղել է ավագ, ապա առաջատար գիտական աշխատող, գրականության տեսության բաժնի վարիչ:

1996 թվականից աշխատում է ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի հայ գրականության ամբիոնում:

Հեղինակ է բազմաթիվ հոդվածների, ավելի քան 10 մենագրության: Առավել կարևոր են՝ «Թումանյանի ստեղծագործական լաբորատորիան» (Եր., 1973), «Գեղարվեստական մտածողության հետքերով» (Եր., 1985), «Հայ պատմավեպի պոետիկան» (Եր., 1986), «Մարդը Ե դարի հայ գրականության մեջ» (Անթիլիաս, 1994), «Նորագույն գրականության զարգացման միտումները» (Եր., 2003) և բուհական ու դպրոցական 7 դասագրքերի:

Զ.Ավետիսյանը 1986 թվականից գրողների միության անդամ է:

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀԱՄԼԵՏ ԿԱՐՈՅԻ

Ֆիզիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1945թ. դեկտեմբերի 5-ին Երևանում: 1962թ ավարտել է թիվ 10 դպրոցը, 1967թ. ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետը:

1968-1971թթ. Հ.Ավետիսյանն աշխատել է ՀԽՍՀ ԳԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտում, 1971-ից՝ ԵՊՀ-ում:

1973թ. պաշտպանել է թեկնածուական, 1983թ. դոկտորական ատենախոսություն: 1991-ին նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Հ.Ավետիսյանը հեղինակ է շուրջ 150 գիտական աշխատանքների, այդ թվում՝ "Relativistic Nonlinear Electrodynamics" (NY, 2006) մենագրության: 1970-ից զբաղվում է ոչ գծային էլեկտրադինամիկայով, մասնավորապես՝ լազերային արագացուցիչների և ռենտգենյան լազերների ստեղծման խնդիրներով: Զարգացրել է հզոր լազերային դաշտերում «ազատ-ազատ» էլեկտրոնային անցումների ոչ գծային ուղղությունը: Նրա աշխատանքներից մի քանիսն ընդգրկվել են ամերիկյան ֆիզիկական հանրագիտարանում:

1990թ. Հ.Ավետիսյանի ղեկավարությամբ ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետում բացվել է «Պլազմայի ֆիզիկա» մասնագիտացումը և պլազմայի ֆիզիկայի գիտահետազոտական լաբորատորիան, որը 2008-ից քվանտային էլեկտրոնիկայի ամբիոնի հետ վերաճել է ԵՊՀ ուժեղ դաշտերի ֆիզիկայի կենտրոնի:

Նրա ղեկավարությամբ ու խորհրդատվությամբ պաշտպանվել է թեկնածուական 15 և դոկտորական 2 ատենախոսություն:

2002թ. Հ.Ավետիսյանն արժանացել է ՀՀ Նախագահի մրցանակի:

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀՐԱՆՏ ԱԼԵՔՍԱՆԻ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Ծնվել է 1927թ. մարտի 10-ին Ղարաքիլիսայում (այժմ՝ Վանաձոր): Ավարտելով տեղի միջնակարգ դպրոցը 1944-1949թթ. սովորել է ԵՊՀ պատմության ֆակուլտետում: 1949-1954թթ. կատարել է կուսակցական աշխատանք: 1954-1971թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ նախագահության գիտքարտուղար, 1964-1967թթ.՝ նաև ակադեմիայի կոորդինացիոն խորհրդի փոխնախագահ, 1967-1971թթ.՝ գիտական կադրերի պատրաստման խորհրդի նախագահ: 1971-1979թթ. Հ.Ավետիսյանը ՀԽՍՀ ԳԱ գլխավոր գիտքարտուղարի տեղակալ էր, 1979-2002թթ. պատմության ինստիտուտի տնօրեն, 2002-2004թթ. պատվավոր տնօրեն և ՀՀ ԳԱԱ հումանիտար գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար: 1979-2003թթ. համատեղությամբ դասավանդել է ԵՊՀ-ում:

1960թ. Հ.Ավետիսյանը պաշտպանել է թեկնածուական, 1967թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1991թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1986թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1996թ.՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս:

Հեղինակ է 17 մենագրության և 70 հոդվածի, համահեղինակ՝ կոլեկտիվ բազմաթիվ աշխատությունների և դպրոցական դասագրքերի: Կարևորագույն աշխատություններից են՝ «Հայաստանի կոմերիտմիությունը սոցիալիստական ինդուստրացման համար մղվող պայքարում (1926-1932)» (Եր., 1959), “Комсомол Закавказья под знаменем пролетарского интернационализма” (Ер., 1968), “Брест-Литовск: как были отторгнуты Турцией Карс, Ардаган и Батум” (Ер., 1994), «Հայկական հարցը 1918 թվականին» (Եր., 1997), «Հայոց ազգային միասնության հաղթանակը. 1918 թվականի մայիս» (Եր., 1998):

Հ.Ավետիսյանը զեկուցումներով հանդես է եկել միջազգային մի շարք գիտաժողովներում (ԱՄՆ, ՌԴ, Լեհաստան, Իտալիա, Հունգարիա, Շվեյցարիա, Ֆրանսիա):

Նրա ղեկավարությամբ և խորհրդատվությամբ պաշտպանվել է թեկնածուական 20 և դոկտորական 3 ատենախոսություն:

1967թ. Հ.Ավետիսյանը պարգևատրվել է «Պատվո նշան» շքանշանով, 2003թ.՝ «Մովսես Խորենացի» մեդալով:

Վախճանվել է 2004թ. նոյեմբերի 9-ին Երևանում:

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ ԱԲԳԱՐԻ

Երկրաբանահանքաբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր,
ՀԽՍՀ վաստակավոր երկրաբան

Ծնվել է 1918թ. հոկտեմբերի 18-ին Ալեքսանդրապոլում (այժմ՝ Գյումրի): 1936թ. ավարտել է տեղի թիվ 1 միջնակարգ դպրոցը, 1941թ. ԵՊՀ երկրաբանության ֆակուլտետը:

1954թ. Վ.Ավետիսյանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն:

1946-1954թթ. աշխատել է ՀԽՍՀ ԳԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտում, 1954-ից ԵՊՀ երկրաբանության ֆակուլտետի ընդհանուր և կիրառական երկրաբանության ամբիոնում որպես դոցենտ: 1968-1976թթ. եղել է նույն ամբիոնի վարիչ, 2000թ. պրոֆեսոր: 1960թ. ՀԽՍՀ ԳԱ երկրաբանական ինստիտուտի, երկրաբանական վարչության և ԵՊՀ համալիր արշավախմբի կազմում կատարել է Վեդի գետի ավազանի մանրակրկիտ երկրաբանահետազոտական և քարտեզագրական աշխատանքներ: 1972-1988թթ. զբաղվել է ՀԽՍՀ կենտրոնական հրաբխային բարձրավանդակի և միջլեռնային գոգավորությունների ու հնահովիտների ստորերկրյա ջրերի որոնման, հետախուզման և շահագործական պաշարների գնահատման գիտամեթոդական հարցերով, կազմել է ջրային պաշարների տեղաբաշխման քարտեզներ: Նրա հետազոտությունները ներկայացված են շուրջ երկու տասնյակ գիտաարտադրական հաշվետվությունների, երեք մենագրությունների, վեց քարտեզների և տպագրված ութսուն գիտական հոդվածների տեսքով:

Վ.Ավետիսյանը զեկուցումներով հանդես է եկել հանրապետական, համամիութենական և միջազգային գիտաժողովներում:

1970թ. Վ.Ավետիսյանն արժանացել է ՀԽՍՀ վաստակավոր երկրաբանի կոչման: Պարգևատրվել է Հայրենական պատերազմի I աստիճանի շքանշանով, բազմաթիվ մեդալներով, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատվոգրով:

Վախճանվել է 2007թ. հոկտեմբերի 12-ին Երևանում:

ԱՎԵՏՅԱՆ ԷԴՄՈՆԴ ԳԵՂԱՄԻ

Լեզվաբան, փիլիսոփա,
բանասիրական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր

Ծնվել է 1929թ. նոյեմբերի 10-ին Ուզբեկստանի Անդիժան քաղաքում:

1956թ. ավարտել է ԵՊՀ բանասիրության ֆակուլտետը: 1956-1961թթ. աշխատել է ռուսաց լեզվի և գրականության ուսուցիչ: 1961-1964թթ. սովորել է համալսարանի ասպիրանտուրայում: 1966թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն:

1965-ից Էդ.Ավետյանն աշխատել է ԵՊՀ ընդհանուր լեզվաբանության ամբիոնում սկզբում որպես դասախոս, ապա՝ ավագ դասախոս, 1971-ից՝ դոցենտ: Երբեք չփորձելով թաքցնել իր համոզմունքները՝ 1982թ. այլախոհության մեղադրանքով զրկվել է համալսարանում դասավանդելու իրավունքից: 1986-1989թթ. աշխատել է Հանրապետական ուսումնամեթոդական կաբինետում ավագ մեթոդիստի պաշտոնով: 1991-ին վերահաստատվել է Էդ.Ավետյանի դասախոսելու իրավունքը, և նա շարունակել է աշխատանքը ԵՊՀ ընդհանուր լեզվաբանության ամբիոնում: 1992թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1994թ. ստանձնել է ամբիոնի վարիչի պարտականությունները:

Նրա գիտական ուսումնասիրությունների արդյունքներն ամփոփված են շուրջ քսան մեծարժեք հոդվածներում ու մենագրություններում՝ «Լեզվական նշանի բնույթը» (ռուս., Եր., 1968), «Իմաստ և նշանակություն» (ռուս., Եր., 1979), «Նշանագիտություն և լեզվաբանություն» (ռուս., Եր., 1989)):

Էդ.Ավետյանը հայկական նշանագիտության հիմնադիրներից է: Իր առաջին իսկ հրապարակումներով նա մեծ հետաքրքրություն է առաջացրել ոչ միայն Հայաստանի, այլև ԽՍՀՄ-ի ու արտասահմանի գիտական շրջաններում: Երկարամյա դասախոսական աշխատանքի ընթացքում նա վարել է ընդհանուր լեզվաբանության, լեզվափիլիսոփայության պատմության, գեղարվեստական թարգմանության տեսության և այլ դասընթացներ:

Ուշագրավ են 1980-1990-ականներին Էդ.Ավետյանի՝ մամուլում հրատարակած հրապարակախոսական հոդվածները. դրանցով հեղինակը ներկայանում է որպես անհատ և քաղաքացի: Անցած կյանքի ուղղու փիլիսոփայական իմաստավորման

ձգտումն է արտահայտված վերջին տարիներին լույս տեսած նրա գրքերում. «Վերադարձի օղակ» (ռուս., Եր., 1998, 2003), «Բանտային բանաստեղծություններ» (ռուս., Եր., 2002):

Էդ.Ավետյանը վախճանվել է 2002թ. դեկտեմբերի 6-ին Երևանում:

ԱՎԵՏՅԱՆ ԿՈԼՅԱ ԹՈՐԳՈՄԻ

Ֆիզիկոս,
Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու,
դոցենտ



Ծնվել է 1931թ. մարտի 18ին, Սպիտակի շրջանի Սարահարթ գյուղում: 1949թ. ավարտել է Սպիտակի թիվ 2 դպրոցը և ընդունվել ԵՊՀ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետ:

1955թ. Կ.Ավետյանն ավարտելով ԵՊՀ-ն՝ աշխատանքի է անցել ընդհանուր ֆիզիկայի ամբիոնում: 1957թ. տեղափոխվել է նյութի կառուցվածքի ամբիոն և զբաղեցրել սկզբում ասիստենտի, այնուհետև ավագ դասախոսի պաշտոն:

1960թ. ընդունվել է Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի ասպիրանտուրա: 1984թ. պաշտանել է թեկնածուական ատենախոսություն: 1985թ. նրան շնորհվել է դոցենտի կոչում: 1963-ից Կ.Ավետյանը դասավանդում է ԵՊՀ-ում:

Հեղինակ է շուրջ 60 գիտական հրապարակումների, համահեղինակ՝ «Ատոմային ֆիզիկայի սլրակտիկում» (Եր., 1965), «Ատոմային ֆիզիկա (լաբորատոր աշխատանքներ)» (Եր., 2006) ուսումնական ձեռնարկների:

1980-1982թթ. Պ.Բեզիրգանյանի և Կ.Ավետյանի ջանքերով հաջողվել է նախագծել, պատրաստել և փորձարկել մի համակարգ, որը հնարավորություն է տալիս հաշված րոպեների ընթացքում ձևավորել և մոնիտորի էկրանին ցուցադրել բյուրեղային կառուցվածքի արատները: ԵՊՀ-ն Լենինգրադի «Բուրեվեստնիկ» գիտաարտադրական ձեռնարկության հետ համատեղ պատրաստել և Խորհրդային Միության մի շարք գիտական կենտրոնների է տրամադրել մոտ մեկ տասնյակ այդպիսի համակարգեր: Այդ աշխատանքների համար 1984թ. Կ.Ավետյանն իր գործընկերների հետ միասին արժանացել է ՀԽՍՀ Պետական մրցանակի:

ԱՎՋՅԱՆ ՀԵՆՐԻԿ ՄԵՍՐՈՊԻ

Երկրաբանահանքաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1930թ. օգոստոսի 1-ին Գորիսում: 1953թ. ավարտել է ԵՊՀ երկրաբանության ֆակուլտետը: 1953-1956թթ. սովորել է Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի ասպիրանտուրայում: 1958թ. Հ.Ավչյանը պաշտպանել է թեկնածուական, 1972թ. դոկտորական ատենախոսություն: 1983թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1956-1979թթ. Հ.Ավչյանն աշխատել է Մոսկվայի համամիութենական երկրաֆիզիկական հետախուզական մեթոդների գիտահետազոտական ինստիտուտում որպես ճարտարագետ, կրտսեր գիտաշխատող, 1958-1979թթ. նաև նույն ինստիտուտի լաբարատորիայի վարիչ: Նա մշակել է լեռնային ապարների ֆիզիկական հատկությունների համալիր ուսումնասիրման լաբորատոր մեթոդներ և անիզոտրոպ ծակոտկեն միջավայրի դեֆորմացման տեսությունը:

1979 թվականից Հ.Ավչյանը եղել է ԵՊՀ երկրաբանության ֆակուլտետի օգտակար հանածոների հանքավայրերի որոնման և հետախուզման երկրաֆիզիկական մեթոդների ամբիոնի պրոֆեսոր, իսկ 1984-1993թթ.՝ նույն ամբիոնի վարիչ:

Հեղինակ է ավելի քան 100 գիտական հոդվածների, տասնյակ գիտաարտադրական հաշվետվությունների և 4 մենագրության, այդ թվում՝ «Նստվածքային ապարների ֆիզիկական հատկությունները բարձր ճնշման ու ջերմաստիճանի պայմաններում» (ռուս., Մ., 1972) մենագրությունը: Համահեղինակ է «Նստվածքային ապարների պետրոֆիզիկան խորքային պայմաններում» (ռուս., Մ 1979), «Նստվածքային ապարների և օգտակար հանածոների ֆիզիկական հատկությունները» (ռուս., Մ., 1976, 1984) մենագրությունների:

Նա ավելի քան 10 տարի եղել է ԽՍՀՄ ԳԱ-ին կից երկրամագնիսականության, երկրակեղևի և վերին մանթիայի ուսումնասիրման խորհրդի անդամ:

Հ.Ավչյանը վախճանվել է 1993թ. նոյեմբերի 24-ին Մոսկվայում:

ԱՐԱՐԱՏՅԱՆ (ԱՐԱՐԱՏՈՎ) ՔՐԻՍՏԱՓՈՐ ԳԵՐԱՍԻՄԻ

Հրետանու գեներալ-մայոր

Ծնվել է 1876թ. հունիսի 18-ին Նալչիկ քաղաքում: Կրթությունը ստացել է Թիֆլիսի կադետական դպրոցում, ապա 1894թ. բացառիկ հաջողությամբ ավարտել է Սանկտ Պետերբուրգի Միխայլովյան հրետանային ուսումնարանը: Ավարտական արարողությանը ներկա եղած Ալեքսանդր III կայսրը Քրիստափոր Արարատյանին անձամբ պարգևատրել է խորհրդանշական ոսկե զենքով՝ կովկասյան սուսերով՝ «Գեներալ Մոիսեյ Արղութինսկի-Դոլգորուկիին՝ Կովկասի փոխարքա կոմս Ալեքսեյ Երմոլովից» մակագրությամբ:

1894-1904թթ. Քրիստափոր Արարատյանը ծառայել է Կովկասյան գրենադերյան հրետանային բրիգադում, մասնակցել 1904-1905թթ. ռուս-ճապոնական պատերազմին, աչքի ընկել խիզախությամբ, ստացել շտաբս կապիտանի աստիճան և իր առաջին շքանշանը:

Հետագայում ուսումը շարունակել է Ցարսկոյե Սելոյի (այժմ՝ Պուշկինո) բարձրագույն հրամանատարական դպրոցում, որն ավարտելով՝ 1914թ. մեկնել է ռազմաճակատ: Արիաբար կռվել է Հարավարևմտյան, Հյուսիսարևմտյան և Կովկասյան ռազմաճակատներում, արժանացել Սբ.Ստանիսլավի II և III աստիճանի, Սբ.Աննայի IV աստիճանի, Սբ.Գեորգիի IV աստիճանի շքանշանների և մեդալների՝ բրիգադի հրետանու հրամանատարի պաշտոնից հասնելով գնդապետի աստիճանի: 1916-1917թթ. ծառայել է ռումինական բանակում որպես ռուսական հրետանային միսիայի հրահանգիչ:

1918թ. Քրիստափոր Արարատյանը եկել է Հայաստան և նշանակվել հայկական կորպուսի հրետանային բրիգադի հրամանատար: Մասնակցել է Սարդարապատի հերոսամարտին, հմտորեն ղեկավարել հրետանու գործը, որի համար նրան շնորհվել է գեներալ-մայորի կոչում:

1919թ. ապրիլից մինչև 1920թ. մայիսը նա Հայաստանի Առաջին Հանրապետության պաշտպանության նախարարն էր: 1920թ. հոկտեմբերին Կարսը թուրքերին հանձնելիս նա գերի է ընկել: 1921թ. հատուկ միջնորդությամբ ազատվել է և նշանակվել Հայկական հրաձգային դիվիզիայի հրամանատարի տեղակալ:

1925-1927թթ. սովորել է Մոսկվայի Ֆրունզեի անվան ակադեմիայում: 1927-ին վերադառնալով Հայաստան՝ նշանակվել է

ԵՊՀ զինվորական ամբիոնի վարիչ, որտեղ զինվորական պատրաստություն էին անցնում մայր բուհի և նրանից առանձնացած մյուս բուհերի ուսանողները: Ամբիոնի վարիչի պաշտոնում Ք.Արարատյանը դրսևորել է դասախոսական կադրերի ընտրության, ուսումնական ծրագրերի ստեղծման, պրակտիկ զինվորական պարապմունքների անցկացման մեծ հմտություն և իր գիտելիքներն ի սպաս դրել բարձրագույն կրթության գործին:

Ք.Արարատյանը հայրենիքին և ժողովրդին անսակարկ ծառայողի լավագույն օրինակ է, իսկական հերոս, որը, սակայն, արժանացավ Սարդարապատի հերոսներ Մ.Սիլիկյանի, Դ.Բեկ-Փիրումյանի, Ա.Բակունցի և մյուսների ճակատագրին:

1937թ. դեկտեմբերի 10-ին մի խումբ զինվորականների, որոնց թվում և Ք.Արարատյանին, Ավանի ձորում գնդակահարելուց առաջ փորձել են կապել նրանց աչքերը, բոլորը միաբերան հրաժարվել են՝ ասելով. «Մենք մահվան աչքերին շատ ենք նայել: Կրակե՛ք ...»:

ԱՐԵՇՅԱՆ ԳՐԻԳՈՐ ՀԱԿՈԲԻ

Բժիշկ, պրոֆեսոր,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1881թ. հունվարի 7-ին Թիֆլիսի Նահանգի Աղբուլաղ գյուղում: Նախնական կրթությունն ստացել է Թելավի շրջանի Սացխենիսի դպրոցում, իսկ միջնակարգը՝ Թիֆլիսի գիմնազայում, որն ավարտել է 1902թ: 1903թ. Սանկտ Պետերբուրգի ռազմաբժշկական ակադեմիայում մեկ տարի սովորելուց հետո առողջական վատ վիճակի պատճառով տեղափոխվել է Կիև և ուսումը շարունակել տեղի համալսարանի բժշկական ֆակուլտետում:

1909թ. աշխատանքի է անցել Կիևի պրոֆ. Պիսեմսկու կլինիկայում, սակայն 1911թ. զորակոչվել է և մինչև 1913թ. ծառայել Վարշավայի ռազմական օկրուգում որպես գնդի բժիշկ: Զորացրվելուց հետո վերադարձել է Թիֆլիս, սակայն Առաջին համաշխարհային պատերազմի առաջին օրերին կրկին զորակոչվել և գործուղվել է Կովկասյան ռազմաճակատ: 1916թ. հիվանդության պատճառով եկել է Թիֆլիս և 3 տարի աշխատել

որպես օրդինատոր: 1919թ. Գ.Արեշյանը հրավիրվել է Երևան, որտեղ նրա ջանքերով հիմնադրվել է Հայաստանի առաջին մանկաբարձագինեկոլոգիական բաժանմունքը: 1920թ. նա կազմակերպել է մանկաբարձական դպրոց, որտեղ դասավանդել է մանկաբարձություն և գինեկոլոգիա:

Գ.Արեշյանի մանկավարժական և գիտահասարակական գործունեության բուռն շրջանը կապված է Երևանի համալսարանի հետ: Նա հիմնել և ղեկավարել է ԵՊՀ մանկաբարձության և կանանց հիվանդությունների ամբիոնը, ինչպես նաև հանրապետության առժողկոմատի՝ մոր և մանկան առողջության պահպանման բաժինը:

1928թ. Գ.Արեշյանին շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1930-1935թթ. մնալով ամբիոնի վարիչի պաշտոնում՝ միաժամանակ ստանձնել է Երևանի նորաստեղծ բժշկական ինստիտուտի բուժպրոֆիլակտիկ ֆակուլտետի դեկանի պարտականությունները:

1932թ. Գ.Արեշյանը Երևանում կազմակերպել է մանկաբարձության և գինեկոլոգիայի գիտահետազոտական ինստիտուտ, զբաղվել Հայաստանում այդ տարիներին լայն տարածում գտած հիվանդությունների, մասնավորապես մալարիայի հետևանքով կանանց մոտ առաջացած ախտաբանական պրոցեսների պարզաբանմամբ ու բուժմամբ:

1935թ. նա արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման:

Վախճանվել է 1957թ. ապրիլի 23-ին Երևանում:

1957-ից Գ.Արեշյանի անունով է կոչվում Երևանի մանկաբարձության և գինեկոլոգիայի կլինիկան:

ԱՐԵՇՅԱՆ ՍԱԼՈՄԵ ԳՐԻԳՈՐԻ

Բանասիրական գիտությունների դոկտոր,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1913թ. հունվարի 5-ին Թիֆլիսում: 1934թ. ավարտել է Լենինգրադի (այժմ՝ Սանկտ Պետերբուրգ) պատմության, փիլիսոփայության, գրականության և լեզվի ինստիտուտը, 1937թ. Լենինգրադի պետական համալսարանի ասպիրանտուրան:

1938-1940թթ. Ս.Արեշյանը եղել է ԽՍՀՄ ԳԱ Լենինգրադի արևելագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, 1940-1941թթ.՝ ավագ գիտաշխատող, ապա՝ գրականագիտության և փիլիսոփայության բաժանմունքի գիտական քարտուղար: 1941թ. տեղափոխվել է Երևան և աշխատանքի անցել ԵՊՀ-ում: 1942-1944թթ. բանասիրության ֆակուլտետի դեկանի տեղակալն էր:

1943-1946թթ. Ս.Արեշյանը եղել է ՀԿԿ Կենտկոմի պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի վարիչի տեղակալ, «Կոմունիստ» թերթի (ռուս.) խմբագիր, 1949-1950թթ.՝ ԵՊՀ գիտքարտուղար, 1950-1953թթ.՝ գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր, 1954-ից ՀԽՍՀ ԳԱ գրականության ինստիտուտի ավագ գիտաշխատող:

1939թ. Ս.Արեշյանը պաշտպանել է թեկնածուական, 1958թ. ԽՍՀՄ ԳԱ Լենինգրադի արևելագիտության ինստիտուտում՝ դոկտորական ատենախոսություն:

Նա զբաղվել է հայ-ռուսական գրական կապերի ուսումնասիրմամբ: Ուշագրավ են նրա «Ռուս գրողները Հայաստանի մասին» (ռուս. և հայ., Եր., 1946), «Հայ մամուլը և ցարական գրաքննությունը» (ռուս., Եր., 1957), «Լև Տոլստոյ» (Եր., 1960) մենագրությունները:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 3 ատենախոսություն:

Նա եղել է խաղաղության կողմնակիցների համամիութենական IV կոնֆերանսի, ինչպես նաև 1945-ին Փարիզում կայացած Կանանց I միջազգային կոնգրեսի պատգամավոր:

1964թ. Ս.Արեշյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է «Կովկասի պաշտպանության համար», «1941-1945թթ. Հայրենական մեծ պատերազմի ժամանակ աշխատանքային արիության համար» մեդալներով:

Վախճանվել է 1966թ. դեկտեմբերի 29-ին Երևանում:

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ԱՆԴՐԵԱՍ ՀՈՎՍԵՓԻ

Նյարդաբան, հոգեբույժ,
բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1880թ. դեկտեմբերի 18-ին Լեռնային Ղարաբաղի Թաղավարդ գյուղում: Սկզբնական կրթությունն ստացել է Շուշիի ծխական դպրոցում, ապա սովորել է Մոսկվայի Լազարյան ճեմարանում, այնուհետև Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետում, որն ավարտել է 1903թ.: Մինչև 1904թ. աշխատել է նույն համալսարանի թերապևտիկ կլինիկայում, ապա նշանակվել Կոստրոմայի մարզի երկու տեղամասերի և հիվանդանոցների վարիչ, սակայն շուտով զորակոչվել է և մինչև 1906թ. ծառայել որպես գնդի բժիշկ: Զորացրվելուց հետո աշխատանքի է անցել Մոսկվայի Վ.Ռոտի նյարդային հիվանդությունների կլինիկայում:

Մոսկվայում է նա կատարել իր գիտական առաջին ուսումնասիրությունները, որոնցից առավել արժեքավորները հրատարակվել են Ս.Կորսակովի անվան նյարդաախտաբանության և հոգեբուժության հարցերին նվիրված գիտական հանդեսում: Նա ուսումնասիրել է գիգանտիզմին, սուր բազմակի նևրիտին, ուղեղի հավելումներին ու գանգի հիմի ուռուցքներին, ցրված սկլերոզին վերաբերող հարցեր:

«Գլխուղեղի և ողնուղեղի բազմակի սկլերոզ» վերտառությամբ աշխատությունը նա 1914թ. պաշտպանել է որպես դոկտորական ատենախոսություն: 1925թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1914թ. Ա.Արզումանյանը զորակոչվել և Սիբիրյան գնդի կազմում մասնակցել է ավստրո-գերմանական ճակատի ռազմական գործողություններին: Պատերազմում աչքի ընկած ծառայությունների համար 1915թ. պարգևատրվել է մի շարք մարտական շքանշաններով:

1926թ. Ա.Արզումանյանը հրավիրվել է ԵՊՀ, հիմնադրել բժշկական ֆակուլտետի նյարդաբանության և հոգեբուժության ամբիոնը, որը ղեկավարել է մինչև կյանքի վերջը: Նշված ամբիոնից բացի՝ հանրապետական կլինիկական հիվանդանոցում հիմնադրել է նաև առաջին նյարդային բաժանմունքը: Այդ տարիներին նրա գրած աշխատանքներից որոշակի հետաքրքրություն են ներկայացնում մալարիայի բարդություններին նվիրված ուսումնասիրությունները:

Ա.Արզումանյանը վախճանվել է 1931թ. ապրիլի 24-ին Երևանում:

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՄԱԿԻՉ ՎԱՀԱՆԻ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր



Ծնվել է 1919թ. հոկտեմբերի 25-ին պատմական Ուտիքի Բարսու գյուղում: Սկզբնական կրթությունն ստացել է տեղում, այնուհետև սովորել Գանձակի մանկավարժական տեխնիկումը: 1938թ. ընդունվել է ԵՊՀ պատմության ֆակուլտետ: 1941թ. կամավոր մեկնել է ռազմաճակատ, դեկտեմբերին ծանր վիրավորվել, ստացել 4-ամսյա արձակուրդ: Այդ ընթացքում ավարտել է համալսարանը և 1942թ. հուլիսին կրկին մեկնել ռազմաճակատ, մասնակցել բազմաթիվ մարտերի, այդ թվում՝ Բեռլինի դրավմանը և Պրահայի ազատագրմանը:

1946թ. Մ.Արզումանյանն ընդունվել է ԵՊՀ ասպիրանտուրա: 1948թ. պաշտպանել է թեկնածուական, 1963թ. դոկտորական ատենախոսություն: 1964թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1946-1950 և 1960-1961թթ. Մ.Արզումանյանը դասախոսել է ԵՊՀ-ում, 1951-1954թթ. աշխատել է ԽՄԿԿ Կենտկոմին կից ՄԼԻ հայկական մասնաճյուղում, 1954-1959թթ. ՀԿԿ Կենտկոմին կից կուսակցական դպրոցում: 1962-1979թթ. եղել է Երևանի Վ.Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների պետական մանկավարժական ինստիտուտի ԽՄԿԿ պատմության ամբիոնի վարիչ, 1979-ից մինչև կյանքի վերջը Հայկական սովետական հանրագիտարանի գլխավոր խմբագիր:

Մ.Արզումանյանը հեղինակ է ավելի քան 300 հոդվածի, 20 մենագրության և համահեղինակ կոլեկտիվ բազմաթիվ աշխատությունների: Կարևորագույն մենագրություններից են՝ «Բոլշևիկների գործունեությունը և հեղափոխական շարժումները Հայաստանում 1907-1917թթ.» (Եր., 1959), «Հայաստան. 1914-1917թթ.» (Եր., 1969թ.), «Արհավիրքից վերածնունդ» (Եր., 1973թ.), «Նանսենը և Հայաստանը» (Եր., 1985), «Դարավոր գոյամարտ» (Եր., 1989):

Պարգևատրվել է մարտական մի շարք մեդալներով:

Վախճանվել է 1988թ. հուլիսի 20-ին Երևանում:

1989թ. Մ.Արզումանյանը հետմահու արժանացել է ՀԽՍՀ Պետական մրցանակի:

ԱՐԻՍՅԱՆ ԼԵՎՈՆ ԵՂԻԱՑԻ

Փիլիսոփա, պրոֆեսոր,
կուսակցական-պետական գործիչ

Ծնվել է 1903թ. հունվարի 19-ին Վանում: Նախնական կրթությունը ստացել է տեղի Երամյան հայկական դպրոցում: Փրկվելով Մեծ եղեռնից՝ 1916-1917թթ. սովորել է Կիսլովոդսկի առաջին արական գիմնազիայում, 1917-1918թթ.՝ Թիֆլիսի Լիսիցյան գիմնազիայում, 1919-1920թթ. Երևանի Խ.Աբովյանի անվան արական գիմնազիայում, 1922-1925թթ. Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի հասարակական գիտությունների ֆակուլտետում:

1921-1922թթ. Լ.Արիսյանը եղել է Երևանի կոմերիտմիության քաղկոմի քարտուղար, 1925-1928թթ. Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմի պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի մամուլի սեկտորի վարիչ: 1927թ. հրավիրվել է ԵՊՀ որպես դասախոս և միաժամանակ մինչև 1928թ. եղել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր: 1928-1931թթ. սովորել և աշխատել է Մոսկվայում: 1933-1934թթ. եղել է ՀԽՍՀ լուսավորության ժողովրդական կոմիսար, 1934-1936թթ. Հայաստանի կոմկուսի Կենտկոմի պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի վարիչ: 1936-ին կրկին նշանակվել է ՀԽՍՀ լուսավորության ժողովրդական կոմիսար և համատեղությամբ դասախոսել ԵՊՀ-ում:

Լ.Արիսյանը հեղինակ է գիտական մի շարք հետազոտությունների, որոնցից առանձնապես հիշատակելի է «Из истории познания» (Եր., 1957) աշխատությունը:

Լ.Արիսյանի կյանքն ընդհատվել է 1938թ. ստալինյան բռնարարքների հետևանքով: Արդարացվել է հետմահու:

ԱՐԽԻՊՅԱՆՑ ԽԱՉԱՏՈՒՐ ԴԱՎԹԻ

Բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1877թ. հոկտեմբերի 12-ին Թիֆլիսում: Միջնակարգ կրթություն ստանալուց հետո ընդունվել է Ժնևի համալսարանի բժշկական ֆակուլտետ, ապա ուսումը շարունակել Փարիզի, իսկ այնուհետև Բեռլինի համալսարանում: Վերադառնալով Ռուսաստան՝ Խ.Արխիպյանցը պետական քննու-

թյուններ է հանձնել Մոսկվայի համալսարանում և բժիշկ աշխատելու իրավունք ստացել: Բժշկական գործունեությունն սկսել է որպես համաճարակագետ: 1909-ից՝ շուրջ երեք տարի, աշխատել է կլինիկաբակտերիոլոգիական ինստիտուտում, միաժամանակ դասախոսություններ կարդացել բժիշկների համար:

1913թ. Խ.Արխիպյանցը հանձնել է բժշկության դոկտորի գիտական աստիճան ստանալու համար սահմանված քննություններ, իսկ 1922թ. Մոսկվայում պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, նույն թվականին ստացել պրոֆեսորի կոչում և նշանակվել բժիշկների վերապատրաստման ինստիտուտի հիգիենայի ամբիոնի ասիստենտ: Երկու տարի անց գործուղվել է արտասահման՝ մասնագիտության մեջ խորանալու և ժամանակակից գիտական նվաճումներին ծանոթանալու:

1926թ. Խ.Արխիպյանցը հրավիրվել է Երևան և յոթ տարի ղեկավարել ԵՊՀ բժշկական ֆակուլտետի ընդհանուր և փորձարարական հիգիենայի ամբիոնը: 1933-ից նա աշխատել է Լենինգրադում:

Խ.Արխիպյանցը հեղինակ է «Դեռատիզացիա» խորագիրը կրող մենագրության և հիգիենայի տարբեր հարցերին վերաբերող բազմաթիվ գիտական աշխատությունների:

Վախճանվել է 1943թ. սեպտեմբերի 8-ին Լենինգրադում:

ԱՐԾՐՈՒՆԻ ՎԱՀԱՆ ՄԱՐԳԱՐԻ

Բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ



Ծնվել է 1857թ. հունիսի 10-ին Նոր Բայազետում (այժմ՝ Գավառ): Մինչև 8-րդ դասարանը սովորել է Թիֆլիսի 1-ին գիմնազիայում, այնուհետև մեկնել է Փարիզ և 1885թ. ավարտել Փարիզի համալսարանի բժշկական ֆակուլտետը:

1889թ. Վ.Արծրունին վերադարձել է Թիֆլիս և նշանակվել քաղաքի սանիտարական բժիշկ, միաժամանակ աշխատել քաղաքային բուժարանում որպես քիթ-կոկորդի և ականջի հիվանդությունների բժիշկ, ըստ որում՝ աղքատ հիվանդներին բուժել է անվճար: 1892-1893թթ. նա խոլերայի համաճարակի դեմ մղվող պայքարի ակտիվ կազմակերպիչներից էր:

Քաղաքացիական պատերազմի տարիներին Վ.Արծրունին Պյատիգորսկում կարմիրբանակայինների համար ստեղծված

թիվ 15 վարակիչ հիվանդությունների հոսպիտալի գլխավոր բժիշկն էր: 1920թ. նա Թիֆլիսի զինվորական հոսպիտալներում աշխատել է որպես խորհրդատու և փորձագետ, եղել է Հայաստանի Կարմիր խաչի ընկերության վարչության փոխնախագահ, հետագայում՝ նախագահ:

1922-ից նա ղեկավարել է նախ՝ ԵՊՀ բժշկական ֆակուլտետի, ապա բժշկական ինստիտուտի անատոմիայի ամբիոնները:

1926թ. Վ.Արծրունուն շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1936թ. նա ստացել է բժշկական գիտությունների դոկտորի աստիճան:

Նա լայն գործունեություն է ծավալել նաև դպրոցականների առողջապահության ասպարեզում և իրավամբ համարվում է դպրոցական հիգիենայի հիմնադիրներից մեկը Հայաստանում: Նրա նախաձեռնությամբ մի շարք դպրոցներում մտցվեց առողջապահության և ֆիզկուլտուրայի դասավանդում:

Վ.Արծրունին հրատարակել է շուրջ 30 բժշկական հանրամատչելի գրքույկներ, «Առողջապահիկ թերթ»-ը (1903-1905): Դպրոցներում կատարած երկարամյա ուսումնասիրությունների հիման վրա հրատարակել է նաև «Դպրոցական առողջապահություն» (1895) արժեքավոր աշխատությունը: 1922թ. նա ապակետիպով հրատարակել է «Մարդակազմություն» դասագիրքը: Հեղինակ է նաև «Պատրանք» և «Աղջիկը» վեպերի:

Մեծ են նրա ծառայությունները նաև բժշկական տերմինաշինության ասպարեզում: 1924թ. նա հարատարակել է «Ռուս-լատին-հայ բժշկագիտական տերմինների բառարան» մեծարժեք աշխատությունը, որը շարունակում է մնալ ուսանողների և բժիշկների սեղանի գիրքը:

1930թ. Վ.Արծրունին արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման, պարգևատրվել է «Աշխատանքային արիության համար» (1943) մեդալով:

Վախճանվել է 1947թ. հուլիսի 29-ին Երևանում:

Վ.Արծրունու բրոնզաձույլ կիսանդրին ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի նախասրահում խորհրդանշում է ականավոր գիտնական-մանկավարժի դերը համալսարանական գիտության և կրթության սկզբնավորման գործում:

ԲԱԲԱՅԱՆ ԱՐԱՔՍԻ ԹՈՎՄԱՍԻ

Քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1906թ. մայիսի 5-ին Երևանում: 1929թ. ավարտել է ԵՊՀ գյուղատնտեսական և 1937-ին՝ ԵՊԻ քիմիայի ֆակուլտետները: Ուսումնառությանը զուգահեռ աշխատել է Երևանի անասնաբուծական-անասնաբուժական ինստիտուտում: 1942-1956թթ. նա եղել է նույն ինստիտուտի օրգանական քիմիայի ամբիոնի վարիչ:

Ա.Բաբայանի գիտական գործունեությունը, սկսած 1935-ից, կապված է եղել ԽՍՀՄ ԳԱ Հայկական մասնաճյուղի քիմիայի ինստիտուտի հետ (1957-ից՝ ՀԽՍՀ ԳԱ օրգանական քիմիայի ինստիտուտ), որտեղ 1949-1953թթ. եղել է գիտական աշխատանքների գծով փոխտնօրեն, 1955-1957թթ.՝ բաժնի վարիչ, 1957-ից մինչև կյանքի վերջը ղեկավարել է ամինամիացությունների լաբորատորիան: 1961-1972թթ. միաժամանակ դասավանդել է ԵՊՀ-ում: 1945թ. ստացել է դոկտորի գիտական աստիճան, նույն թվականին՝ պրոֆեսորի կոչում: 1956թ. Ա.Բաբայանն ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1968-ին՝ ակադեմիկոս:

Ա.Բաբայանը հեղինակ է շուրջ 70 հեղինակային իրավունքի, ավելի քան 400 գիտական աշխատանքների, այդ թվում՝ «Քառատեղակալված ամոնիումային աղերի ներմոլեկուլային վերախմբավորումներ» (ռուս., Եր., 1976) մենագրության:

Նրա վաղ շրջանի աշխատանքները նվիրված են ացետիլենային γ-գլիկոլների սինթեզին, որը գրականության մեջ հայտնի է «Ֆավորսկի-Բաբայանի ռեակցիա» անունով: Հետագա աշխատանքները հիմնականում նվիրված են ամինների և ամոնիումային միացությունների հետազոտմանը: Մեծ արժեք է ներկայացնում Հոֆմանի ռեակցիայի գործնական կիրառության հնարավորության հայտնաբերումը: Ա.Բաբայանը պարզաբանել է բազմահակոգենալկիլ խումբ պարունակող չորրորդային ամո-

նիումային աղերի ջրահիմնային ճեղքման ռեակցիայի մեխանիզմը, առաջարկել β, γ և α, β չհագեցած խմբեր պարունակող համապատասխան աղերի վերախմբավորման-ճեղքման ռեակցիաներ, որոնք կարող են օգտագործվել կետոնների, կարբոնաթթուների էսթերների և ենամինների սինթեզի համար:

Ա.Բաբայանը Հայաստանում ստեղծել է քիմիկոսների իր դպրոցը՝ այդ թվում գիտության դոկտորներ և 50-ից ավելի թեկնածուներ:

Նա եղել է «Հայկական քիմիական ամսագրի» գլխավոր խմբագիր, Խորհրդային կանանց կոմիտեի անդամ, ՀԽՍՀ II-IV գումարումների Գերագույն խորհրդի պատգամավոր:

1961թ. Ա.Բաբայանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի, Ժողովուրդների բարեկամության, «Պատվո նշան» շքանշաններով:

Վախճանվել է 1993թ. փետրվարի 13-ին Երևանում:

ԲԱԳԴՈԵՎ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԳԵՈՐԳԻԻ

Մեխանիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ



Ծնվել է 1933թ. հուլիսի 9-ին Թիֆլիսում: 1950թ. ավարտել է Երևանի թիվ 30 դպրոցը, 1955թ.՝ Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետը: Ա.Բագդոևը ուսումը շարունակել է նույն բուհի ասպիրանտուրայում: 1958թ. Մոսկվայում պաշտպանել է թեկնածուական, իսկ 1972թ. դոկտորական ատենախոսություն: 1993թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 2000թ. նա ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ:

1971-ից Ա.Բագդոևը աշխատում է ՀՀ ԳԱԱ մեխանիկայի ինստիտուտում: Նա երկար տարիներ դասավանդել է Հայաստանի տարբեր բուհերում, 1975-1980թթ. ԵՊՀ-ում: Նրա մանկավարժական գործունեությունը կապված է նաև Գորիսի պետական համալսարանի հետ (2000-ից), որտեղ նա ստեղծել է մեխանիկայի ինքնատիպ գիտական դպրոց:

Ա.Բագդոևը հեղինակ է շուրջ 350 գիտական հոդվածների, երեք մենագրության: Նրա գիտական հետազոտությունները վերաբերում են գծային, ոչ գծային, եռաչափ, կապակցված դաշտերում ալիքների տարածմանը, դիֆրակտային, կաուստիկայի ալիքների եզակի կետերի և մոդուլման խնդիրների, ինչպես նաև տարածական մեթոդով մագնիսական սալերի տատանման խնդիրների լուծմանը:

Ա.Բագդոևի կարևորագույն արդյունքը դիֆրակցիայի և կաուստիկայի երկչափ ալիքային խնդիրներում Պուանկարե-Լայթհիլլ-Գոի մեթոդի ընդհանրացումն է: Նրա ուսումնասիրությունները նվիրված են նաև էլեկտրամագնիսական դաշտերում բարակ սալերի և թաղանթների տատանումների հետազոտման վերլուծական և թվային մեթոդների գծային և ոչ գծային մոդելների զարգացմանը, ինչպես նաև հոծ միջավայրում խառը եզրային ոչ ստացիոնար խնդիրների լուծմանը:

Ա.Բագդոևի ղեկավարությամբ ու խորհրդատվությամբ պաշտպանվել է թեկնածուական 14 և դոկտորական 3 ատենախոսություն:

ԲԱԴԱԼՅԱՆ ԴԱՎԻԹ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Ֆիզիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1942թ. հունվարի 17-ին Երևանում: 1959թ. ավարտել է թիվ 29 դպրոցը, 1964թ. ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետը, 1969թ.՝ ԽՍՀՄ ԳԱ բյուրեղագիտության ինստիտուտի (Մոսկվա) ասպիրանտուրան:

1963 թվականից Դ.Բադալյանն աշխատել է ԵՊՀ նյութի կառուցվածքի ամբիոնում որպես ասիստենտ: 1970թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, 1981թ. նրան շնորհվել է դոցենտի կոչում: 1971-1981թթ. եղել է ավագ դասախոս, 1981-2000թթ.՝ դոցենտ: 1993թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 2002թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Դ.Բադալյանը հեղինակ է ավելի քան 80 գիտական և գիտամեթոդական աշխատանքների, այդ թվում՝ «Մոլեկուլյար ֆիզի-

կայի լաբորատոր փորձերի ձեռնարկ» (Եր., 1977), «Լաբորատոր աշխատանքներ մեխանիկայից և էլեկտրադինամիկայից» (Եր., 1983), «Ֆիզիկայի ուղեցույց մաթեմատիկայի ֆակուլտետի ուսանողների համար» (Եր., 2006) ուսումնական ձեռնարկների:

Գիտական աշխատանքները հիմնականում նվիրված են ոչ կարգավորված համակարգերի տեսական հետազոտմանը, լիոտրոպ հեղուկ բյուրեղներում տեղի ունեցող ֆազային անցումների ուսումնասիրությանը: Կառուցել է մոտակա կարգի երևույթների վիճակագրական տեսություն բազմաբաղադրիչ համաձուլվածքների, մոլեկուլային և հեղուկ բյուրեղների համար: Ստացել է ճշգրիտ արդյունքներ Ֆիբոնաչիի քվազիպարբերական ցանցերի ազատ էներգիայի, սլատահական ցրող պոտենցիալներից կազմված միաչափ շղթաների դիմադրության համար:

ԲԱԴԱԼՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ ՀԱԿՈԲԻ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1905թ. նոյեմբերի 18-ին Նախիջևանի Փորադաշտ գյուղում: Մանուկ հասակում զրկվել է ծնողներից: Նախնական կրթությունը ստացել է գյուղում: 1927-1929թթ. ծառայել է Կարմիր բանակում: 1927-1928թթ. սովորել է Բաթումի կապի ռազմական դպրոցում, 1929-1931թթ. Երևանի բանֆակում:

1937թ. Խ.Բադալյանն ավարտել է ԵՊՀ պատմության ֆակուլտետը, իսկ 1940թ. ասպիրանտուրան: 1941-1942թթ. մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին: 1942թ. ավարտել է Թելավի հետևակային ռազմական դպրոցը, տեղափոխվել Երևան և մինչև 1946թ. կատարել զինկոմիսարիատի տարբեր հանձնարարություններ:

1945թ. Խ.Բադալյանը պաշտպանել է թեկնածուական, 1965թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1947թ. նրան շնորհվել է դոցենտի, 1967թ. պրոֆեսորի կոչում:

1939-1985թթ. կարճ ընդմիջումներով աշխատել է ԵՊՀ-ում որպես դասախոս, 1947-1957թթ. դոցենտ, 1957-1979թթ. ընդհանուր պատմության ամբիոնի վարիչ, 1979-1985թթ.՝ Հայագիտական կենտրոնի ավագ գիտաշխատող: 1985-ից անցել է վաստակած հանգստի:

Հեղինակ է շուրջ 100 գիտական հոդվածների և գրքերի, որոնցից առավել կարևոր են՝ «Անգլո-ամերիկյան գիշատիչ քաղաքականությունը Հայաստանում 1919-1920թթ.» (Եր., 1951), «Հայկական հարցը Սան-Ստեֆանոյի պայմանագրում և Բեռլինի միջազգային կոնֆերանսում 1878թ.» (Եր., 1955), «Հայաստանը ռուս-թուրքական պատերազմում 1877-1878թթ.» (Եր., 1959), «Գերմանա-թուրքական օկուպանտները Հայաստանում 1918թ.» (Եր., 1962), "Турецко-германская экспансия в Закавказье 1914-1918гг." (Ер., 1980) գրքերը:

Խ.Բաղալյանը պարգևատրվել է մարտական մեդալներով:

Վախճանվել է 1992թ.մայիսի 4-ին Երևանում:

ԲԱԴԱԼՅԱՆ ՀԱՅԿ ՎԱՂԱՐՇԱԿԻ

Մաթեմատիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1915թ. հունվարի 22-ին Աբովյանի շրջանի Նոր գյուղում: 1932թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը, 1936թ. Երևանի էլեկտրատեխնիկական տեխնիկումը, 1941թ.՝ ԵՊՀ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը, 1947-ին՝ Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի ասպիրանտուրան:

1947թ. Հ.Բաղալյանը պաշտպանել է թեկնածուական, իսկ 1956թ. Մոսկվայում՝ դոկտորական ատենախոսություն: 1951թ. նրան շնորհվել է դոցենտի, 1960թ.՝ պրոֆեսորի կոչում:

1947-1957թթ. Հ.Բաղալյանը ղեկավարել է Երևանի ռուսական մանկավարժական ինստիտուտի մաթեմատիկայի ամբիոնը, 1957-ից աշխատել է ԵՊՀ-ում: 1978-1988թթ. եղել է ԵՊՀ մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետի մաթեմատիկական անալիզի ամբիոնի վարիչ, 1988-1997թթ.՝ պրոֆեսոր, 1997-2004թթ. պրոֆեսոր-խորհրդատու:

Հեղինակ է 90 գիտական ուսումնասիրությունների և մենագրությունների, այդ թվում՝ "Квазистепенной ряд и квазианалитические классы функций" (М., 1990), "Quasipower Series and Quasianalytic Classes of Functions" (USA, 2002):

Հ.Բաղալյանի գիտական գործունեության հիմնական ուղ-

ղություններն են՝ անվերջ դիֆերենցելի ֆունկցիաների տեսություն, Մյունցի համակարգի բազմանդամներով մոտարկումներ, թեյլորյան տիպի բանաձևեր, փաթեթի տիպի ինտեգրալային ձևափոխություններ, օրթոգոնալ համակարգեր:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 5 ատենախոսություն:

Հ.Բաղալյանը պարգևատրվել է մի շարք մեդալներով:

Վախճանվել է 2004թ. հոկտեմբերի 27-ին Երևանում:

ԲԱԴԱԼՅԱՆ ՍՄԲԱՏ ԱՂԱԼՈՅԻ

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1907թ. դեկտեմբերի 11-ին Սիսիանի շրջանի Բռնակոթ գյուղում: Սկզբնական կրթությունն ստացել է Սիսիանում, ապա ավարտել է Գորիսի մանկավարժական տեխնիկումը, իսկ 1934թ.՝ Երևանի մանկավարժական ինստիտուտի պատմագրական ֆակուլտետը: Սիսիանի դպրոցներում աշխատել է որպես ուսուցիչ, եղել է ժողկրթբաժնի, ապա՝ կուսշրջկոմի բաժնի վարիչ:

Ս.Բաղալյանը մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին, արժանացել շքանշանների ու մեդալների: 1943-1947թթ. սովորել է ԵՊՀ ասպիրանտուրայում: 1948թ. պաշտպանել է թեկնածուական, 1963-ին՝ դոկտորական ատենախոսություն: 1964 թվականից, որպես պրոֆեսոր, դասավանդել է ԵՊՀ-ում և բժշկական ինստիտուտում: 1971-1977թթ. ԵՊՀ քաղաքատնտեսության ամբիոնի վարիչն էր, տնտեսագիտության գծով ԵՊՀ-ում գործող գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի նախագահը: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է շուրջ 20 թեկնածուական ատենախոսություն:

Ս.Բաղալյանը հեղինակ է գիտական բազմաթիվ հոդվածների ու գրքերի, որոնցից կարևոր են՝ «Մտավոր և ֆիզիկական աշխատանքի հակադրության ոչնչացման և նրանց էական տարբերությունների վերացման մասին» (Եր., 1959), «Սոցիալիստական սեփականության ձևերի զարգացման մասին» (Եր., 1960), «Արտադրությունն ու սպառումը սոցիալիզմի ժամանակ» (Եր., 1963) հետազոտությունները:

1967թ. Ս.Բաղալյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման:

Վախճանվել է 1986թ. հունվարի 20-ին Երևանում:

ԲԱԴԱԼՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ ՄԻՔԱՅԵԼԻ

Բուսաբան,

կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1958թ. հուլիսի 1-ին Երևանում: 1975թ. ավարտել է Երևանի թիվ 118 միջնակարգ դպրոցը, 1980թ. ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետը: 1981-1983թթ. սովորել է Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի ասպիրանտուրայում: 1988թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն:

1983-1988թթ. Ս.Բաղալյանը եղել է ԵՊՀ բուսաբանության ամբիոնի կրտսեր գիտաշխատող, 1988-1992թթ. գիտաշխատող, 1992-1993թթ.՝ ավագ գիտաշխատող, 1993-2002թթ. առաջատար գիտաշխատող, գիտական խմբի ղեկավար: 2000թ. նրան շնորհվել է դոցենտի կոչում: 2002-2005թթ. նա նույն ամբիոնի գլխավոր գիտաշխատող էր, 1999-2005թթ. Մ.Հերացու անվան Երևանի պետական բժշկական համալսարանի դոցենտ, 2000-2005թթ.՝ ԵՊՀ դոցենտ, 2005-ից ԵՊՀ պրոֆեսոր, սնկերի կենսաբանության և կենսատեխնոլոգիայի լաբորատորիայի գիտական ղեկավար:

1998թ. Ս.Բաղալյանը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 2005թ նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Եղել է գիտական երկարաժամկետ գործուղումներում (ՌԴ, Գերմանիա, Ֆրանսիա, Կանադա, Իտալիա, ԱՄՆ, Բելգիա):

Հեղինակ է 153 գիտական հրապարակումների, 1 ուսումնամեթոդական ձեռնարկի, 3 մենագրության, այդ թվում՝ "Систематика, биоэкология и физиологическая активность ложноопенка серно-желтого (Nematoloma fasciculare)" (Ep., 1993), «Վիրահայոց լեռների կենտրոնական մասի անտառներում տարածված մակրոսկոպիկ սնկերը և դրանց դեղաբանական նշանակությունը» (համահեղինակ, Եր., 2008):

ԲԱԴԻԿՅԱՆ ԽԱՉԻԿ ԳԱԲՐԻԵԼԻ

Լեզվաբան,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1932թ. մարտի 15-ին Շիրակի մարզի Ծաղկաշեն գյուղում: 1951թ. ավարտել է Լենինականի (այժմ՝ Գյումրի) թիվ 7 միջնակարգ դպրոցը, 1955թ.՝ տեղի Մ.Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտի լեզվագրական ֆակուլտետը:

1955թ. Խ.Բադիկյանն աշխատել է ՀԽՍՀ Բասարգեչարի շրջանի Ծովակ գյուղի միջնակարգ դպրոցում որպես ուսմասվար, 1957-1962թթ.՝ Հոկտեմբերյանի շրջանի Մարգարա, ապա՝ Եղեգնուտ գյուղերի միջնակարգ դպրոցներում: 1962-1965թթ. սովորել է ՀԽՍՀ ԳԱ Հր.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ասպիրանտուրայում, 1966-1969թթ. աշխատել է նույն ինստիտուտում որպես ավագ գիտաշխատող: 1969թ. Խ.Բադիկյանը աշխատել է ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի ամբիոնում որպես ավագ դասախոս, ապա՝ դոցենտ, իսկ 1991-ից՝ պրոֆեսոր:

1973-1976թթ. եղել է ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի դեկանի տեղակալ: 1985-1997թթ. դասավանդել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում:

1967թ. Խ.Բադիկյանը պաշտպանել է թեկնածուական, 1989թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1991թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Խ.Բադիկյանը հեղինակ է բազմաթիվ հոդվածների, շուրջ մեկուկես տասնյակ գիտական ու մեթոդական մենագրական աշխատանքների, բուհական դասագրքերի, որոնցից առավել կարևորներն են՝ «Ժամանակակից հայերենի պարզ նախադասության շարադասությունը» (Եր., 1976), «Ժամանակակից հայերենի շարադասությունը և նրա ուսուցումը» (Եր., 1984), «Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները» (Եր., 1986), «Դարձվածային ոճաբանություն» (Եր., 2000), «Ուսումնական դարձվածաբանական բառարան» (Եր., 2002), «Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն» (համահեղինակ, Եր., 2003):

Խ.Բադիկյանի ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 5 ատենախոսություն:

1987թ. պարգևատրվել է «Աշխատանքի վետերան» մեդալով:

ԲԱԶՅԱՆ ՍԱՀԱԿ ՄԻՐԶՈՅԻ

Գրականագետ,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1914թ. հունվարի 13-ին Շատախ գավառի Ճնուկ գյուղում: Նախնական կրթությունը ստացել է Միջագետքի հայկական դպրոցներից մեկում: 1921թ. ներգաղթել է Խորհրդային Հայաստան և հաստատվել Արտաշատ գյուղում: Յոթնամյա դպրոցն ավարտելուց հետո՝ 1928-1932թթ., սովորել է Երևանի բանֆակի ինդուստրիալ ֆակուլտետում, այնուհետև՝ ԵՊՀ լեզվագրական ֆակուլտետում: 1936-1939թթ. ուսանել է ասպիրանտուրայում: 1942թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն:

1939-1942թթ. Ս.Բազյանը ԵՊՀ հայ գրականության ամբիոնի ավագ դասախոս էր, 1945-1951թթ.՝ բանասիրության ֆակուլտետի դեկանի տեղակալ, 1951-1957թթ.՝ նույն ֆակուլտետի դեկան, 1947-1951թթ. միաժամանակ՝ ՀԽՍՀ ԳԱ գրականության ինստիտուտի ավագ գիտաշխատող: 1940-ականներին «Գրական թերթի» քննադատության բաժնի վարիչն էր, 1939-ից՝ ԽՍՀՄ ԳՄ անդամ, 1960-ից՝ Լենինգրադի ԳՄ խորհրդի անդամ:

Ս.Բազյանը 1969թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1970թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Նա հեղինակ է գիտական բազմաթիվ հոդվածների և աշխատությունների. ուշագրավ են «Երեք ուրվագիծ» (Եր., 1941), «Միքայել Նալբանդյան» (Եր., 1955), «Աբովյանի գրական ժառանգությունը» (Եր., 1966), «Աբովյանի բանաստեղծական աշխարհը» (Եր., 1977), «Աբովյանը առակախոս-բանաստեղծ և դրամատուրգ» (Եր., 2005) մենագրությունները: Նա մեծ ջանքեր է ներդրել հայ դասական գրողների երկերի լիակատար ժողովածուների խմբագրման ու հրատարակման գործում (Հ.Պարոնյան, Ռաֆֆի, Հ.Սվաճյան, Ե.Օտյան և այլն):

1970թ. Ս.Բազյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է «Աշխատանքային արիության համար» և այլ մեդալներով ու ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատվոգրերով:

Վախճանվել է 1985թ. հունիսի 26-ին Երևանում:

ԲԱԼԱՅԱՆ ԲՈՐԻՍ ՊԱՎԵԼԻ

Արևելագետ,
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1921թ. հունիսի 22-ին Բաքվում: Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Կարմիր բանակի օտար լեզուների ռազմական ինստիտուտ (Մոսկվա), որն ավարտելուց հետո գործուղվել է Իրան, որտեղ Անդրկովկասի զինվորական օկրուգի շտաբի հանձնարարությամբ 1942-1946թթ. կատարել է զինվորական հրամանատարության հատուկ առաջադրանքներ: 1946-1950թթ. Բ.Բալայանը Անդրկովկասի զինվորական օկրուգի շտաբի սպա էր: Այնուհետև ավարտել է Թբիլիսիի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը, որտեղ և սկսել է դասավանդել պարսկերեն: 1959թ. ՀԽՍՀ ԳԱ հրավերով նա տեղափոխվել է Երևան, դարձել ԳԱ արևելագիտության բաժանմունքի, ավելի ուշ արևելագիտության ինստիտուտի գիտաշխատող:

1963թ. Բ.Բալայանը պաշտպանել է թեկնածուական, 1986թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1991թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1973-1978թթ. եղել է ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի դեկան: Այնուհետև աշխատել է ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտում՝ միաժամանակ դասավանդելով հնագույն և նոր շրջանի պատմություն Վ.Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների ինստիտուտում:

1995 թվականից Բ.Բալայանը «Հայկական բանակ» ռազմական-գիտական ամսագրի ռուսական բաժնի խմբագիրն էր: Հեղինակ է 200-ից ավելի գիտական հոդվածների և “Международные отношения Ирана в 1813-1828 гг.” (Ер., 1967), “Восстание племен на Юге Ирана (1922-1930)” (Ер., 1974), “Кровь на алмазе «Шах»: трагедия А.С.Грибоедова” (Ер., 1983), “Дипломатическая история русско-иранских войн и присоединения Восточной Армении к России” (Ер., 1988) գրքերի:

Պարգևատրվել է ԽՍՀՄ շքանշաններով և ՀՀ մեդալներով:

Բ.Բալայանը վախճանվել է 2005թ. հունիսի 21-ին Երևանում:

ԲԱԼԱՅԱՆ ՊԱՎԵԼ ԲՈՐԻՍԻ

Լեզվաբան,
մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

Ծնվել է 1950թ. նոյեմբերի 17-ին Թբիլիսիում: 1959թ. ընտանիքի հետ տեղափոխվել է Երևան: 1967թ. ավարտել է Երևանի թիվ 122 միջնակարգ դպրոցը և նույն տարում ընդունվել ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի ռուսաց լեզվի և գրականության բաժին, որն ավարտել է 1972թ.:

1972-1977թթ. Պ.Բալայանն աշխատել է ԵրՊԻ ռուսաց լեզվի ամբիոնում որպես դասախոս, 1977-1993թթ. ԵՊՀ արտասահմանյան քաղաքացիների նախապատրաստական ֆակուլտետում որպես ռուսաց լեզվի ավագ դասախոս: 1980-1984թթ. գործուղվել է Կատմանդուի համալսարան (Նեպալ) որպես ռուսաց լեզվի դասախոս: 1993-2002թթ. եղել է ԵՊՀ հումանիտար ֆակուլտետների ռուսաց լեզվի ամբիոնի ավագ դասախոս, 1997-2002թթ. ռուս բանասիրության ֆակուլտետի դեկանի տեղակալ:

2001թ. Պ.Բալայանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 2002թ. նրան շնորհվել է դոցենտի կոչում: 2002-2003թթ. ղեկավարել է ԵՊՀ բնագիտական ֆակուլտետների ռուսաց լեզվի ամբիոնը: 2003-ից ռուս բանասիրության ֆակուլտետի դեկանն է:

Հեղինակ է 24 գիտական աշխատանքների, այդ թվում՝ 10 հոդված, 4 ուսումնական ձեռնարկ, որոնք վերաբերում են ռուսաց լեզվի ձևաբանությանը, շարահյուսության և լեզվի դասավանդման մեթոդիկային, ինչպես նաև լեզվաբանության տեսական հիմնախնդիրներին:

Մասնակցել է միջազգային և հանրապետական գիտաժողովների:

2007թ. Պ.Բալայանը պարգևատրվել է ՌԴ Պուշկինի անվան մեդալով:

ԲԱԼԱՍԱՆՅԱՆ ՍԵՐԳԵՅ ԻՇԽԱՆԻ

Երկրաբանահանքաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ



Ծնվել է 1925թ. սեպտեմբերի 25-ին Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Քյութուկ գյուղում: Ավարտելով Բաքվի թիվ 177 դպրոցը՝ 1945թ. ընդունվել և 1950թ. ավարտել է ԵՊՀ երկրաբանության ֆակուլտետը: 1950-1953թթ. սովորել է Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի ասպիրանտուրայում, որտեղ 1953թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն:

1953 թվականից Ս.Բալասանյանն աշխատել է ԵՊՀ հանքաբանության և պետրոգրաֆիայի ամբիոնում որպես ավագ դասախոս, այնուհետև՝ դոցենտ: 1962թ. Մոսկվայում պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1964թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1962-1965թթ. վարել է երկրաբանության ֆակուլտետի դեկանի, իսկ 1963-1998թթ. հանքաբանության և պետրոգրաֆիայի ամբիոնի վարիչի պաշտոնները: 1998թ. նրան շնորհվել է ԵՊՀ ամբիոնի պատվավոր վարիչի կոչում:

Ս.Բալասանյանը հեղինակ է ավելի քան 100 գիտական աշխատանքների, կազմել է ՀՀ մագմատիկ ֆորմացիաների առաջին քարտեզը, հրատարակել երկու մենագրություն «Հայաստանի մագմատիզմի ընդհանուր գծերը» (Եր., 1967) և «Հայաստանի մագմատիկ ֆորմացիաները» (Եր., 1975):

1970թ. Ս.Բալասանյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման, 1999թ. պարգևատրվել է «Անանիա Շիրակացի» մեդալով:

Վախճանվել է 2003թ. հոկտեմբերի 3-ին Երևանում:

ԲԱԼՅԱՆ ՍՈՂՈՄՈՆ ՊՈՂՈՍԻ

Աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ վաստակավոր երկրաբան

Ծնվել է 1917թ. մարտի 14-ին Ալեքսանդրապոլում (այժմ՝ Գյումրի): 1935թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը, 1940թ.՝ ԵՊՀ աշխարհագրության ֆակուլտետը: Այնուհետև

աշխատանքի է անցել Երևանի Նորագավթի միջնակարգ դպրոցում որպես տնօրեն: 1940թ. զորակոչվել է բանակ, մասնակցել Հայրենական մեծ պատերազմին:

1945 թվականից Ս.Բալյանը գիտական աշխատանքի է անցել ՀԽՍՀ ԳԱ էկոնոմիկայի սեկտորում: 1949թ. տեղափոխվել է երկրաբանության ինստիտուտ: Նույն տարում պաշտպանել է թեկնածուական, 1967թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1968թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1951 թվականից մինչև կյանքի վերջը՝ ավելի քան կես դար, աշխատել է ԵՊՀ-ում: 1969-1997թթ. եղել է ԵՊՀ քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի հիմնադիր վարիչը:

Ս.Բալյանը հեղինակ է շուրջ 120 գիտական հոդվածների, քարտեզների, մենագրությունների: Նրա գիտական ուսումնասիրությունները նվիրված են ռեգիոնալ գեոմորֆոլոգիայի հարցերին, լավատակ ջրերի խնդրին, պլեյստոցենյան սառցապատումներին, հնէաշխարհագրությանը, նորագույն տեկտոնիկային, կիրառական գեոմորֆոլոգիային և գեոմորֆոլոգիական քարտեզագրմանը: Նրա հետազոտությունների յուրատեսակ հանրագումարն է «Հայկական լեռնաշխարհի ու հարակից մարզերի կառուցվածքային գեոմորֆոլոգիան» (Եր., 1969) աշխատությունը:

1970թ. Ս.Բալյանն արժանացել է ՀԽՍՀ վաստակավոր երկրաբանի կոչման: Պարգևատրվել է «Ալեքսանդր Նևսկի», «Կարմիր Աստղ» և «Պատվո նշան» շքանշաններով և բազմաթիվ մեդալներով:

Վախճանվել է 2002թ. մայիսի 15-ին Երևանում:

ԲԱԿԼԱՎԱՋՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳԵՂԱՄԻ

Բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1922թ. օգոստոսի 18-ին Թուրքիայի Բուրսա քաղաքում: Միջնակարգ կրթությունը ստացել է Բուլղարիայի Բուրգաս քաղաքում, որտեղ ավարտել է իտալական դպրոց և գիմնազիա: 1946թ. հայրենադարձվել է և 1946-1951թթ. սովորել Երևանի բժշկական ինստիտուտում: 1952-1954թթ. ուսումնառությունը շարունակել է ՀԽՍՀ ԳԱ Լ.Օրբելու անվան ֆիզիո-

լոգիայի ինստիտուտի ասպիրանտուրայում:

1955թ. Հ.Բակլավաջյանը պաշտպանել է թեկնածուական, 1966թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1971թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1961թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1986թ.՝ ակադեմիկոս:

1960-ից ղեկավարել է ՀԽՍՀ ԳԱ Լ.Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի վեգետատիվ նյարդային համակարգի լաբորատորիան, իսկ 1972-1986թթ.՝ նաև ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի Տ.Մուշեղյանի անվան մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնը: Նրա նախաձեռնությամբ ամբիոնին կից ստեղծվել է գիտական լաբորատորիա:

Հ.Բակլավաջյանը հեղինակ է 300 գիտական աշխատությունների, 10 մենագրության, մի շարք գիտահանրամատչելի գրքույկների և ուսումնամեթոդական ձեռնարկների, որոնք նվիրված են ենթատեսաթումբ-ընդերային ռեֆլեքսային աղեղի նեյրոնային կազմավորման, ինքնավար նյարդային համակարգի կարգավորման լիմբիական մեխանիզմների, երկարավուն ուղեղի և ողնուղեղի վեգետատիվ ֆունկցիաների ենթատեսաթմբային կարգավորման նեյրոնային կազմակերպման, կոճղեզային չնչառական կենտրոնի ակտիվության ենթատեսաթմբային կարգավորման նյարդաքիմիական մեխանիզմների ուսումնասիրմանը: Ուշադրության են արժանի նրա “Вегетативная регуляция электрической активности мозга” (Л., 1967), “Центральные механизмы “гомеостаза” (в кн.: “Частная физиология нервной системы” (Л., 1983)), “Нейронная организация гипоталамо-висцеральной рефлекторной дуги” (Л., 1988), “Нейронная организация амигдало-висцеральной рефлекторной дуги” (Դոնեցկ, 1996) աշխատությունները:

Նրա նախաձեռնությամբ ու ղեկավարությամբ Դիլիջանում պարբերաբար հրավիրվել են հանրապետական և միութենական գիտական նստաշրջաններ, գիտաժողովներ նվիրված վեգետատիվ նյարդային համակարգի ֆիզիոլոգիայի հարցերին:

Հ.Բակլավաջյանի ղեկավարությամբ ու խորհրդատվությամբ պաշտպանվել է թեկնածուական 27 և դոկտորական 4 ատենախոսություն:

Հ.Բակլավաջյանը եղել է միութենական “Нейрофизиология” և «Экспериментальная и клиническая медицина» հանդեսների խմբագրական խորհրդի անդամ, «Վեգետատիվ

նյարդային համակարգի ֆիզիոլոգիա» հատորի պատասխանատու խմբագիր, ֆիզիոլոգիայի բազմահատոր ձեռնարկի 3 հատորների հեղինակ, ՀՀ ԳԱԱ բժշկակենսաբանական պրոբլեմային խորհրդի անդամ, ուղեղի ուսումնասիրության և նեյրոգիտությունների միջազգային կազմակերպությունների, ԱՊՀ ֆիզիոլոգների ասոցիացիայի կենտրոնական խորհրդի և այլ գիտական խորհուրդների անդամ:

1941–1944թթ. Հ.Բակլավաջյանը Բուլղարիայում ընդհատակյա ակտիվ գործունեություն է ծավալել ֆաշիզմի դեմ:

1981թ. արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է «Պատվո նշան» շքանշանով, Բուլղարիայի Ժողովրդական Հանրապետության շքանշաններով ու մեդալներով:

Հ.Բակլավաջյանը վախճանվել է 2001թ. հուլիսի 9-ին Երևանում:

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱԼԵՔՍԱՆ ՍՏԵՓԱՆԻ

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ

Ծնվել է 1953թ. հունվարի 29-ին Կամո (այժմ՝ Գավառ) քաղաքում: 1970թ. ավարտել է Երևանի թիվ 41 դպրոցը:

1971-1972թթ. Ա.Բաղդասարյանն աշխատել է ԵՊՀ տպարանում որպես գրաշար: 1973-1975թթ. ծառայել է խորհրդային բանակում: 1975-1980թթ. սովորել է ԵՊՀ պատմության ֆակուլտետի փիլիսոփայության բաժնում, 1976-1978թթ. նաև հասարակական մասնագիտությունների ֆակուլտետում՝ ստանալով հոգեբանի մասնագիտություն:

1999թ. Ա.Բաղդասարյանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, իսկ 2006-ին նրան շնորհվել է դոցենտի կոչում:

1981-1987թթ. աշխատել է ԵՊՀ փիլիսոփայության պատմության ամբիոնում որպես ավագ լաբորանտ, 1987-ից՝ դիալեկտիկական մատերիալիզմի և տրամաբանության (այժմ՝ տեսական փիլիսոփայության և տրամաբանության) ամբիոնում որպես դասախոս, ասիստենտ, 2004-ից դոցենտ: 2002-2004թթ. եղել է փիլիսոփայության, սոցիոլոգիայի և հոգեբանության ֆակուլտետի, իսկ 2004-2009թթ.՝ փիլիսոփայու-

թյան և հոգեբանության ֆակուլտետի դեկանի տեղակալ:

2009թ. Ա.Բաղդասարյանն ընտրվել է փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի դեկան: 2001-ից դասավանդում է նաև Էջմիածնի Գևորգյան ճեմարանում:

Հեղինակ է շուրջ 30 աշխատության, այդ թվում՝ «Հայ-ֆրանսիական փիլիսոփայական առնչությունների պատմությունից» (Եր., 1998) գրքի, համահեղինակ է հանրակրթական դպրոցի 10-րդ դասարանի «Հայոց եկեղեցու պատմություն» (Եր., 2005) դասագրքի:

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ԲԱԽՇԻԻ

Աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ

Ծնվել է 1918թ. նոյեմբերի 5-ին Գորիսում: Ավարտել է տեղի մանկավարժական տեխնիկումը և 1935-1937թթ. դասավանդել Սիսիանի շրջանի Դարբաս գյուղի դպրոցում: 1937թ. ընդունվել է ԵՊՀ երկրաբանա-աշխարհագրական ֆակուլտետ: 1941թ. հուլիսին զորակոչվել է Կարմիր բանակ, դեկտեմբերին՝ զորացրվել: 1942թ. ավարտել է ԵՊՀ-ն և մինչև 1944թ. աշխատել Անդրկովկասյան ճակատի հիդրոմետ ծառայության հայկական վարչությունում որպես աէրոլոգ, ավելի ուշ՝ ինժեներ-սինոպտիկ: 1942թ. ընդունվել է ԵՊՀ ասպիրանտուրա:

1946թ. Ա.Բաղդասարյանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և աշխատանքի ընդունվել ՀԽՍՀ ԳԱ տնտեսագիտության սեկտորում: 1949թ. գործուղվել է ԽՍՀՄ ԳԱ Մոսկվայի աշխարհագրության ինստիտուտի դոկտորանտուրա: 1952թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1960թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1971թ. նա ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ: 1958թ. նրա անմիջական ջանքերով ՀԽՍՀ ԳԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտում ստեղծվել է աշխարհագրության սեկտոր, որի ղեկավարն էր երկար տարիներ: Սեկտորը աշխատանքներ է ծավալել կլիմայագիտության, ջրաբանության, գեոմորֆոլոգիայի, լանդշաֆտագիտության, ռեկրեացիոն աշխարհագրության և այլ ուղղություններով: Նրա հետազոտություններում հատուկ տեղ են գրավել բնության

պահպանության և միջավայրի էկոլոգիական խնդիրները:

Ա.Բաղդասարյանը միջազգային աշխարհագրական XX (Լոնդոն) և XXI (Դելի) կոնգրեսներում ընտրվել է ՄԱՄ ազգային ատլասների, իսկ XXV (Փարիզ) կոնգրեսում՝ ՄԱՄ զբոսաշրջության և ուղևորությունների հանձնաժողովի թղթակից անդամ: 1954-1975թթ. եղել է Հայկական աշխարհագրական ընկերության նախագահ, 1964-1976թթ. ԽՍՀՄ աշխարհագրական ազգային կոմիտեի անդամ, միջազգային աշխարհագրական ընկերության անդամ:

1948-1968թթ. դասավանդել է ԵՊՀ-ում, Երևանի մանկավարժական ինստիտուտում: Աշխատել է ՀԽՍՀ ԳԱ տնտեսագիտության, ապա՝ երկրաբանության ինստիտուտում որպես ավագ գիտաշխատող, բաժնի վարիչ (1949-1991):

Հեղինակ է գիտական բազմաթիվ հոդվածների և մենագրությունների, որոնցից են՝ «Արեգակի էներգիայի ռեսուրսները և նրանց օգտագործման հեռանկարները Սովետական Հայաստանում» (Եր., 1957), “Климат Армянской ССР” (Ер., 1958): Կազմել և հրատարակել է Հայաստանի տարածքի ուղղաձիգ կլիմայական և ագրոբիոկլիմայական գոտիների քարտեզները:

Ա.Բաղդասարյանը եղել է ՀԽՍՀ ԳԱ Երկրի մասին գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի տեղակալ, Հայկական սովետական հանրագիտարանի խմբագրական խորհրդի անդամ, ՅՈՒՆԷՍԿՕ-ի ծրագրի հանրապետական կոմիտեի նախագահ և այլն:

Վախճանվել է 1991թ. ապրիլի 3-ին Երևանում:

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ ԵՐՎԱՆԴԻ

Մեխանիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Ծնվել է 1936թ. հունվարի 13-ին Ապարանի շրջանի Ծաղկահովիտ գյուղում: 1953թ. ավարտել է Ապարանի միջնակարգ դպրոցը, 1958թ. ԵՊՀ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը: 1958-1964թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ մեխանիկայի ինստիտուտի գիտաշխատող: 1964թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ստացել տեխնիկական գիտությունների թեկնածուի

գիտական աստիճան: 1964-1979թթ. աշխատել է ՀԽՍՀ ԳԱ մեխանիկայի ինստիտուտում որպես առաջատար գիտաշխատող, 1978-1998թթ. մագնիսաառաձգականության բաժնի վարիչ: 1978թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1979թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1978-1979թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ մեխանիկայի ինստիտուտի տնօրեն: 1990թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1994-ին՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս:

1988-2001թթ. Գ.Բաղդասարյանը եղել է ԵՊՀ մաթեմատիկական մեթոդների և մոդելավորման ամբիոնի վարիչ, 1992-1994թթ.՝ կիրառական մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի դեկան, 1994-1998թթ.՝ Հայկական պետական մանկավարժական ինստիտուտի ռեկտոր, 1998-2002թթ. ՀՀ Բարձրագույն որակավորման հանձնաժողովի նախագահ, 2002-2007թթ.՝ ԵՊՀ ռեկտորի խորհրդական, 2007-ից՝ ԵՊՀ մաթեմատիկական մեթոդների և մոդելավորման ամբիոնի պրոֆեսոր:

Գ.Բաղդասարյանը հեղինակ է ավելի քան 200 գիտական աշխատությունների, այդ թվում՝ “Ряды Фурье” (Ер., 1982), և “Операционное исчисление” (Ер., 1982) ուսումնամեթոդական աշխատանքների և համահեղինակ՝ “Колебания и устойчивость магнитоупругих систем” (Ер., 1999), “Магнитоупругость тонких оболочек и пластин” (М., 1977), “Электропроводящие пластинки и оболочки в магнитном поле” (М., 1996), “Электромагнитоупругие волны” (Ер., 2006) մենագրությունների: Գ.Բաղդասարյանն առաջարկել է շերտավոր անիզոտրոպ սալերի և թաղանթների ոչ գծային ստիպողական, պարամետրական և ֆլատերային տատանումների հետազոտման արդյունավետ հաշվարկային սխեմաներ և վերլուծական մեթոդներ, բարակ մարմիններում փոխկապակցված մեխանիկական և էլեկտրամագնիսական պրոցեսների նկարագրման ու հետազոտման ընդհանուր տեսություններ, մշակել մագնիսաակտիվ միջավայրերում փոխկապակցված մագնիսաառաձգական ալիքների տարածման հետազոտման տեսական հիմքերը և ապացուցել նոր տիպի մակերևութային ալիքների և տատանումների գոյությունը:

Նրա ղեկավարությամբ ու խորհրդատվությամբ պաշտպանվել են շուրջ երկու տասնյակ թեկնածուական և դոկտորական ատենախոսություններ:

Նա ՌԴ տեսական և կիրառական մեխանիկայի ազգային կոմիտեի արտասահմանյան անդամ է:

ԲԱՑԲՈՒՐԴՅԱՆ ՎԱՀԱՆ ԱՌԱՔԵԼԻ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1933թ. սեպտեմբերի 11-ին Ախալցխայում: 1951թ. ավարտել է Երևանի թիվ 10 դպրոցը, 1957թ.՝ ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի արևելագիտության բաժինը:

1959-1961թթ. Վ.Բայբուրդյանն աշխատել է ՀԽՍՀ ԳԱ արևելագիտության ինստիտուտում որպես կրտսեր գիտաշխատող, 1961-1964թթ. սովորել է ԽՍՀՄ ԳԱ Մոսկվայի արևելագիտության ինստիտուտի ասպիրանտուրայում: 1966-1977թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ արևելագիտության ինստիտուտի գիտական քարտուղար, 1977-1980թթ. ավագ գիտաշխատող, ապա՝ բաժնի վարիչ:

1965թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: Պատմական գիտությունների դոկտոր է 1977-ից: 1971թ. նրան շնորհվել է դոցենտի, 1979թ. պրոֆեսորի կոչում:

1980-1987թթ. Վ.Բայբուրդյանը եղել է Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ընդհանուր պատմության ամբիոնի վարիչ, 1987-1992թթ. գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր, միաժամանակ 1988-1989թթ. ռեկտորի պաշտոնակատար: 1992-1998թթ. ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան էր Իրանի Իսլամական Հանրապետությունում: 1995թ. նրան շնորհվել է արտակարգ և լիազոր դեսպանի դիվանագիտական աստիճան: 1998 թվականից ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Իրանի բաժնի վարիչն է: 2001-2008թթ. եղել է ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի վարիչ: 2008 թվականից նույն ամբիոնի պրոֆեսոր է:

Վ.Բայբուրդյանը հեղինակ է հարյուրից ավելի հոդվածների և բազմաթիվ մենագրությունների, որոնցից առավել կարևորներն են՝ «Թուրք-իրանական հարաբերությունները 1900-1914թթ.» (Եր., 1974), “International Trade and the Armenian Marchants in the Seventheenth Century” (New Delhi, 2004), “Армянская колония Новой Джульфы в XVIIв.” (Ер., 1969), «Քրդերը, Հայկական հարցը և հայ-քրդական հարաբերությունները պատմության լույսի ներքո» (Եր., 2008), «Իրանի պատմություն (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը)» (Եր., 2005):

ԲԱՇԻՆՋԱՂՅԱՆ ԶԱՔԱՐ ԳԵՎՈՐԳԻ

Տնտեսագետ, պրոֆեսոր,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1895թ. մարտի 26-ին Թիֆլիսում: 1913թ. ավարտել է տեղի 3-րդ արական գիմնազիան և ընդունվել Սանկտ Պետերբուրգի համալսարանի իրավաբանության ֆակուլտետ: 1917թ. համալսարանն ավարտելուց հետո զորակոչվել է բանակ: 1918-1919թթ. աշխատել է Թիֆլիսի դատական մարմիններում:

1921թ. Վրաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո նշանակվել է կարևորագույն գործերի քննիչ, այնուհետև Վր.ԽՍՀ Գերագույն հեղափոխական տրիբունալի հետաքննչական բաժնի պետ: 1926-1928թթ. աշխատել է Անդրֆեդերացիայի ֆինանսական մարմիններում՝ միաժամանակ մանկավարժական աշխատանք կատարելով Թիֆլիսի ճանապարհաշինարարական տեխնիկումում:

1927-1930թթ. Զ.Բաշինջաղյանն աշխատել է Անդրկովկասի կոմունիստական համալսարանում որպես քաղաքատնտեսության դասախոս և ուսումնական մասի պրոռեկտորի օգնական: 1930-1933թթ. սովորել է Մոսկվայի Կարմիր պրոֆեսուրայի տնտեսագիտության ինստիտուտում, որն ավարտելուց հետո վերադարձել է Թիֆլիս և մինչև 1936թ. աշխատել Անդրկովկասի երկրամասային կոմիտեում, ժողովրդական կոմիսարների խորհրդում: 1936թ. փոխադրվել է Հայաստան և աշխատել ՀԿԿ Կենտկոմում, ՀԽՍՀ արդարադատության ժողովրդական կոմիսարիատում և այլն:

1936-1971թթ. Զ.Բաշինջաղյանը եղել է ԵՊՀ քաղաքատնտեսության դասախոս և քաղաքատնտեսության ամբիոնի վարիչ: Այդ առարկան դասավանդել է նաև Երևանի մի քանի այլ ուսումնական հաստատություններում: 1937-ին նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1944-1947թթ. նա միաժամանակ արտասահմանի հետ մշակութային կապերի ընկերության Հայաստանի վարչության պետի տեղակալն էր: 1947-1949թթ. եղել է ԵՊՀ գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր, 1956-1957թթ.՝ տնտեսագիտության ֆակուլտետի դեկան:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 20 ատենախոսություն:

Զ.Բաշինջաղյանի գիտական և գիտահանրամատչելի գրքերը, գրքույկներն ու հոդվածները վերաբերում են տնտեսագիտության, գրականության, արվեստի և մշակույթի հարցերին: Նա հեղինակ է Կ.Մարքսի և Ֆ.Էնգելսի գիտական կենսագրությունների (Եր., 1968 և Եր., 1970), ինչպես նաև համահեղինակ՝ «Մինչմոնոպոլիստական կապիտալիզմ» (Եր., 1971) քաղաքատնտեսության ուսումնական ձեռնարկի:

1958թ. Զ.Բաշինջաղյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է Լենինի (2) շքանշանով:

Վախճանվել է 1971թ. մարտի 2-ին Երևանում:

ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ ՎԻԳԵՆ ԳՐԻԳՈՐԻ

Ֆիզիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր

Ծնվել է 1944թ. մարտի 18-ին Մառնեուլում (Վր.ԽՍՀ): 1962թ. ավարտելով տեղի միջնակարգ դպրոցը՝ ընդունվել է ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետ, որն ավարտել է 1967թ.: 1968թ. աշխատել է ՀԽՍՀ ԳԱ օրգանական քիմիայի ինստիտուտում: 1969-1971թթ. սովորել է նույն ինստիտուտի ասպիրանտուրայում:

1972թ. Վ.Բարխուդարյանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ստացել քիմիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 1975թ. աշխատել է ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի մոլեկուլային ֆիզիկայի ամբիոնում որպես ավագ գիտաշխատող, 1980-ից եղել է նույն ամբիոնի դոցենտ:

2000թ. նա պաշտպանել է դոկտորական ատենախոսություն և ստացել ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: 2006-ին նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Վ.Բարխուդարյանը հեղինակ է շուրջ 80 գիտական աշխատությունների, 6 ուսումնամեթոդական աշխատանքների, այդ թվում՝ «Մակրոմոլեկուլները լուծույթներում» (Եր., 2008) և

«Մոլեկուլային ֆիզիկա» (Եր., 2005) ձեռնարկների: Հիմնական աշխատանքները նվիրված են պոլիմերների ծերացման մոլեկուլային պրոցեսների հետազոտմանը: Մասնավորապես հետազոտել է տարբեր արտաքին գործոնների ազդեցությունը պոլիէթիլենի մոլեկուլային բնութագրերի վրա և ապացուցել, որ պոլիմերի ծերացման պրոցեսի մեխանիզմը և կոնֆորմացիոն փոփոխությունների օրինաչափություններն այդ բոլոր գործոնների ազդեցության տակ նույնն են:

ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ ԲԱԽՇԻԻ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
ՀՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1927թ. սեպտեմբերի 22-ին Վր.ԽՍՀ Մառնեուլի շրջանի Աղքյորփի գյուղում: Տեղի դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է ԵՊՀ պատմության ֆակուլտետ, 1950թ. ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի ասպիրանտուրա:

1954թ. Վ.Բարխուդարյանը պաշտպանել է թեկնածուական, 1968թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1973թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1986թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1994թ.՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս:

1955թ. Վ.Բարխուդարյանը եղել է Հայաստանի պատմության թանգարանի գիտաշխատող: 1958թ. տեղափոխվել է ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտ և զբաղվել հայ գաղթավայրերի պատմության հարցերով: 1959-1963թթ. վարել է նույն ինստիտուտի գիտքարտուղարի պաշտոնը, 1967-1990թթ. եղել է փոխտնօրեն համատեղությամբ գլխավորել հայ գաղթավայրերի պատմության բաժինը: 1990թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ նախագահության ակադեմիկոս-քարտուղար, 2000թ.՝ նաև փոխնախագահ, 2004-ից՝ ակադեմիկոս-քարտուղար:

Վ.Բարխուդարյանի երկարատև աշխատանքի արդյունք է «Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմությունը (1779-1861թթ.)» (Եր., 1967-1985) երկհատոր մենագրությունը, որը հրատարակվել է նաև ռուսերեն (Եր., 1996): Նրա նա-

խաՃեռնությամբ ու խմբագրությամբ հրատարակվել են հայ գաղթավայրերին նվիրված «Հայ-հունգարական պատմական և մշակութային կապերի պատմությունից» (Եր., 1983), «Հայ ազատագրական շարժումները և հայկական գաղթավայրերը» (Եր., 1985), «Էջեր հայ գաղթավայրերի պատմությունից» (Եր., 1996) ուսումնասիրությունների ժողովածուները:

Վ.Բարխուդարյանի գիտական հետաքրքրությունների մյուս ուղղությունը հայ-ռուսական քաղաքական, տնտեսական և մշակութային հարաբերությունների պատմությունն է: Նրա ուշադրության կենտրոնում են եղել նաև հայ պատմագիտության խնդիրները, որոնց նվիրված աշխատությունները առանձին գրքով հրատարակվել են «Պատմության հարցեր» (Եր., 2008) խորագրով: Նա կարևոր դեր է ունեցել «Հայ ժողովրդի պատմություն» ակադեմիական հրատարակության 8-հատորյակի ստեղծման գործում: Համահեղինակ և խմբագիրն է 1993-2001թթ. հրատարակված հայոց պատմության դպրոցական դասագրքերի, որոնցում նոր և նորագույն շրջանի պատմության շատ հարցեր լուսաբանվել են նորովի:

1975-2007թթ. Վ.Բարխուդարյանը դասավանդել է ԵՊՀ-ում: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 5 ատենախոսություն:

Նա եղել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի նախագահ, բազմաթիվ միջազգային գիտաժողովների կազմակերպիչ: Անդամ է Մայր աթոռ Ս.Էջմիածնի հոգևոր խորհրդի:

2003թ. Վ.Բարխուդարյանն արժանացել է ՀՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է ՀՀ «Մեսրոպ Մաշտոց» և Հայ Առաքելական եկեղեցու «Ս.Սահակ-Ս.Մեսրոպ» շքանշաններով ու մեդալներով:

ԲԱՐՍԵՂՅԱՆ ԽԻԿԱՐ ՀԱԿՈԲԻ

Լրագրող,
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ կուլտուրայի վաստակավոր գործիչ

Ծնվել է 1918թ. հունիսի 7-ին Գորիսի շրջանի Շինուհայր գյուղում: Ավարտել է տեղի 7-ամյա դպրոցը, ընդունվել Գորիսի գյուղատնտեսական տեխնիկում: 1937-1941թթ. ուսանել է Երևանի Խ.Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետում: Հայրենական պատերազմի առաջին օրերին կամավոր մեկնել է ռազմաճակատ: 1942թ. օգոստոսից 89-րդ հայկական Թամանյան դիվիզիայի շարքերում մասնակցել է Հյուսիսային Կովկասում և Ղրիմում մղված մարտերին: Այդ օրերին ռազմաճակատի զինվորական թերթերում հանդես է եկել մարտական գործողություններն ու հայ մարտիկների սխրագործությունները լուսաբանող բազմաթիվ հոդվածներով ու ակնարկներով:

Խ.Բարսեղյանը 1945-1948թթ. աշխատել է «Խորհրդային Հայաստան» թերթի խմբագրությունում որպես կուսակցական-կազմակերպչական բաժնի վարիչ, 1948-1949 և 1952-1953թթ.՝ Լենինականի «Բանվոր» թերթի խմբագիր, 1949-1952թթ.՝ ՀԿԿ Կենտկոմի մամուլի, ռադիոյի և հրատարակչությունների բաժնի վարիչ, 1953-1954թթ.՝ «Սովետական Հայաստան» թերթի խմբագրի տեղակալ, 1954-1961թթ.՝ ՄԼԻ հայկական մասնաճյուղի տնօրենի տեղակալ, ապա՝ տնօրեն, 1967-1970թթ.՝ «Հայաստան» հրատարակչության տնօրեն, 1970-1984թթ.՝ ՀԽՍՀ ԳԱ գիտական ինֆորմացիայի սեկտորի վարիչ, 1984-1990թթ.՝ ԳԱ հրատարակչության տնօրեն, 1990-ից մինչև կյանքի վերջը՝ ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի առաջատար դիտաշխատող: 1950-1971թթ. դասավանդել է ԵՊՀ-ում, 1971-ից՝ Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտում:

1950թ. Խ.Բարսեղյանը պաշտպանել է թեկնածուական, 1964թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1966թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Խ.Բարսեղյանը հեղինակ է շուրջ 60 գրքի, գիտական բազմաթիվ հոդվածների: Նրա աշխատություններից հարկ է նշել «Բոլշևիկյան հայ պարբերական մամուլի պատմություն» (երկու գրքով, Եր., 1958), «Կրակների միջով» (Եր., 1982), «Մարքսիզմի տարածումը Հայաստանում» (երկու գրքով, Եր., 1967,

1975), «Այսպես ապրեցին» (Եր., 1958) գրքերը, Ավ.Իսահակյանին, Հովհ.Շիրազին և այլոց նվիրված հուշագրությունները: Համահեղինակ է ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի հրատարակած «Հայ ժողովրդի պատմություն» ութհատորյակի:

Նրա ղեկավարությամբ ու խորհրդատվությամբ պաշտպանվել է 15 թեկնածուական և 5 դոկտորական ատենախոսություն:

Խ.Բարսեղյանը եղել է Հայաստանի կոմկուսի կենտկոմի անդամ: Բազմիցս ընտրվել է Երևանի, Լենինականի քաղաքային ու շրջանային խորհուրդների, ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավոր:

1987թ. արժանացել է ՀԽՍՀ կուլտուրայի վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է բազմաթիվ շքանշաններով, Խ.Աբովյանի անվան և այլ մեդալներով, ՀՀ Գերագույն խորհրդի պատվոգրերով:

Խ.Բարսեղյանը վախճանվել է 1996թ. հունվարի 11-ին Երևանում:

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԽԱՉԱՏՈՒՐԻ

Լեզվաբան,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1920թ. հոկտեմբերի 25-ին ՀՀ Թալինի շրջանի Մաստարա գյուղում: Ավարտելով տեղի յոթնամյա և Թալինի միջնակարգ դպրոցները՝ 1938թ. ընդունվել է ԵՊՀ լեզվագրական ֆակուլտետ: 1941-ին 4-րդ կուրսից զորակոչվել է բանակ, մասնակցել Հայրենական մեծ պատերազմին: Երրորդ անգամ ծանր վիրավորվելուց հետո 1943թ. զորացրվել է, շարունակել ուսումնառությունը և 1944թ. ավարտել համալսարանը: 1945-1948թթ. սովորել է ԵՊՀ ասպիրանտուրայում: 1952թ. պաշտպանել է թեկնածուական, 1981-ին՝ դոկտորական ատենախոսություն: 1955թ. նրան շնորհվել է դոցենտի, իսկ 1984-ին՝ պրոֆեսորի կոչում:

1946-1948թթ. Հովհ.Բարսեղյանը եղել է ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի, այնուհետև՝ մինչև 1958թ., Երևանի հեռակա պետական մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի ամբիոնի դասախոս: 1958թ. նա կրկին տեղափոխվել է ԵՊՀ և 1969-ին ընտրվել հայոց լեզվի ամբիոնի վարիչ: 1977-1985թթ. եղել է

բանասիրության ֆակուլտետի դեկան, 1985-1990թթ. Հայոց լեզվի պատմության ամբիոնի հիմնադիր-վարիչ:

Հովհ.Բարսեղյանը հեղինակ է մի քանի տասնյակ գիտական հոդվածների, ավելի քան 20 մենագրության, այդ թվում՝ «Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն» (Եր., 1953), «Մանուկ Աբեղյանի հինգ հոլովի տեսությունը և նրա հին ու նոր քննադատությունները» (Եր., 1967), «Հայերենի խոսքի մասերի տարբերակման տեսությունները» (Եր., 1975), «Հայերենի խոսքի մասերի ուսմունքը» (Եր., 1980): Սկսած 1964թ. նրա խմբագրությամբ, լրացումներով ու մեկնություններով պարբերաբար լույս է տեսնում «Տերմինաբանական ուղեցույցը» (վերջինը՝ Եր., 2006):

Հովհ.Բարսեղյանը նաև հմուտ բառարանագիր է (տե՛ս «Հայերեն ուղղագրական-ուղղախոսական տերմինաբանական բառարան», Եր., 1973): Նա պրոֆեսորներ Թ.Խ.Հակոբյանի և Ստ.Տ.Մելիք-Բախշյանի հետ համահեղինակ է հինգհատորյա «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանի» (Եր., 1986-2001): Գործընկերների վախճանվելուց հետո նա է խմբագրել ու հրատարակության պատրաստել հիշյալ բառարանի վերջին երկու ստվարածավալ հատորները: 2003թ. այդ եզակի բառարանն արժանացել է ՀՀ Նախագահի մրցանակի: Հովհ.Բարսեղյանի համահեղինակությամբ են կազմվել հանրակրթական դպրոցի 4-րդ (Եր., 1970) և 5-7-րդ (Եր., 1965) դասարանների «Հայոց լեզու» դասագրքերը:

Հովհ.Բարսեղյանը 1969-1972թթ. եղել է ԵՊՀ կուսկոմիտեի առաջին քարտուղար: 1955-ից նա կատարել է ՀԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր տերմինաբանական կոմիտեի, իսկ 1992-ից՝ ՀՀ կառավարությանն առընթեր լեզվի պետական տեսչության Հայերենի բարձրագույն խորհրդի գիտքարտուղարի պարտականությունները:

1970թ. Հովհ.Բարսեղյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է «Պատվո նշան» (1981), Հայրենական մեծ պատերազմի II աստիճանի (1985) շքանշաններով, «Մովսես Խորենացի» և բազմաթիվ այլ մեդալներով:

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՏԱՐԻԵԼ ԿԱՐԱՊԵՏԻ

Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1939թ հոկտեմբերի 28-ին Էջմիածնում: 1957թ. ավարտել է Երևանի թիվ 57 միջնակարգ դպրոցը, 1959թ. Երևանի թիվ 1 տեխնիկումը: 1959-1962թթ. ծառայել է խորհրդային բանակում: 1962-1967թթ. սովորել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում, 1967-1970թթ.՝ ԵՊՀ ասպիրանտուրայում:

1970թ. աշխատանքի է անցել ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնում որպես դասախոս:

1972թ. Տ.Բարսեղյանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1973-ից քաղաքացիական իրավունքի ամբիոնում աշխատել է որպես ավագ դասախոս, 1977-ից՝ դոցենտ, 1988-ից՝ ամբիոնի վարիչ:

1990-1998թթ. եղել է ՀՀ Գերագույն դատարանի նախագահ, 1998-2002թթ.՝ ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի դոցենտ: 2002-ից նույն ամբիոնի վարիչն է:

2006թ. Տ.Բարսեղյանը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 2007թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Հեղինակ է «Մատակարարի պատասխանատվության մի քանի հարցեր» (Եր., 1976), «Տնտեսական կազմակերպությունների հարաբերություններում կիրառվող գույքային պատասխանատվության արդյունավետությունը» (Եր., 1988), «Գույքային պատասխանատվության էվոլյուցիան և արդիական հիմնահարցեր» (Եր., 2006) մենագրությունների, «Քաղաքացիական իրավունք» (Եր., 2000, 2004, 2006), «Գործարարական իրավունք» (Եր., 2007) դասագրքերի, համահեղինակ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք», 2-րդ (Եր., 2001, 2008) և 3-րդ (Եր., 2003, 2009) հատորների, մեթոդական բազմաթիվ նյութերի և շուրջ 30 գիտական հոդվածների:

Տ.Բարսեղյանի ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 8 ատենախոսություն:

ԲԵԳԼԱՐՅԱՆ ՆԱԴԵԺԴԱ ՊԵՏՐՈՍԻ

Կենսաբան,
կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1927թ. ապրիլի 16-ին Երևանում: 1934-1943թթ. սովորել է Երևանի Խ.Աբովյանի անվան դպրոցում, 1943-1944թթ. Երևանի թիվ 28 դպրոցում: 1949թ. Ն.Բեգլարյանն ավարտել է ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետը: 1949-1952թթ. եղել է նույն ֆակուլտետի ասպիրանտ: 1953թ. պաշտպանել է թեկնածուական, 1974թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1956թ. նրան շնորհվել է դոցենտի, 1976թ. պրոֆեսորի կոչում:

1952-ից Ն.Բեգլարյանն աշխատել է ԵՊՀ գենետիկայի և բջջաբանության ամբիոնում որպես դասախոս, 1954-ից՝ դոցենտ, 1980-1991թթ.՝ ամբիոնի վարիչ:

Ն.Բեգլարյանի գիտական աշխատանքները վերաբերում են էվոլյուցիոն տեսությանը և գենետիկայի մակածված մուտագենեզի խնդիրներին: Նա զբաղվել է բարձրակարգ բույսերի ժառանգականության վրա ֆիզիոլոգիապես ակտիվ նյութերի (հատկապես բուսական հորմոնների) ազդեցության համեմատական ուսումնասիրությամբ: Բացահայտել է բուսական հորմոնների (մասնավորապես գիբբերելաթթվի) գենետիկական ակտիվությունը և նրա դերը բույսերի ժառանգականության պրոցեսներում: Ստացել է գյուղատնտեսական առաջատար մշակաբույսերի և դեկորատիվ ծաղկաձևերի բազմաթիվ մուտանտ ձևեր, մշակել գյուղատնտեսության պրակտիկայում գիբբերելաթթվի կիրառման արդյունավետ մեթոդ, որը ներդրվել է հանրապետության մի շարք տնտեսություններում՝ տնտեսական զգալի արդյունավետությամբ:

Հեղինակ է շուրջ 100 գիտական և գիտահանրամատչելի հոդվածների և 6 մենագրության, այդ թվում՝ «Էվոլյուցիոն տեսություն» (Եր., 1998) և «Ընդհանուր կենսաբանություն» (Եր., 2004) դասագրքերի:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 5 ատենախոսություն:

1986-1991թթ. Ն.Բեգլարյանը եղել է ԵՊՀ-ում գործող «Գենետիկա» մասնագիտության գծով գիտական աստիճաններ շնորհող խորհրդի նախագահ:

ԲԵԴԵԼՅԱՆ ՀՈՎԱԿԻՄ ՂԱԶԱՐԻ

Բուսաբան,
կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1874թ. օգոստոսի 25-ին Եկատերինոդար (այժմ՝ Կրասնոդար) քաղաքում: Ավարտել է Դոնի Ռոստովի հայկական հոգևոր սեմինարիան, ապա՝ Մոսկվայի Կ.Տիմիրյազևի անվան գյուղատնտեսական ակադեմիան: Այնուհետև կատարելագործվել է Մյունխենի, Փարիզի, Բեռլինի և Կոպենհագենի համալսարաններում:

1904թ. Հ.Բեդելյանը Փարիզում պաշտպանել է ատենախոսություն և ստացել կենսաբանական գիտությունների դոկտորի աստիճան:

Հ.Բեդելյանն աշխատել է Սանկտ Պետերբուրգի գիտական կենտրոններում, 1904-1918թթ. Յալթայի բուսաբանական այգում, 1918-1920թթ. որպես բուսաբանության պրոֆեսոր՝ Դոնի Ռոստովի համալսարանում:

1923թ. Հ.Բեդելյանը հրավիրվել է ԵՊՀ, որտեղ հիմնադրել և մինչև կյանքի վերջը ղեկավարել է բույսերի ֆիզիոլոգիայի ամբիոնը: 1925թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Հեղինակն է «Բույսերի անատոմիա» (Եր., 1935) և «Բույսերի ֆիզիոլոգիա» (Եր., 1940) առաջին հայալեզու դասագրքերի: Տիրապետելով մի շարք լեզուների՝ երկար տարիներ աշխատել է բուսաբանական բազմալեզու բառարանի ստեղծման վրա, որը, սակայն, մահվան պատճառով մնացել է անավարտ:

Հ.Բեդելյանը ճանաչված գիտնական էր: Իր գործունեության ընթացքում մասնակցել է մի շարք երկրներում կազմակերպված գիտարշավների, եղել Սառուցյալ օվկիանոսի կղզիներում, Ցեյլոնում, Հնդկաստանում, Եգիպտոսում և այլուր:

Վախճանվել է 1940թ. օգոստոսի 16-ին Երևանում:

ԲԵԶԻՐԳԱՆՅԱՆ ՊԵՏՐՈՍ ՀԱԿՈԲԻ

Ֆիզիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր,
ՀԽՍՀ բարձրագույն դպրոցի վաստակավոր գործիչ



Ծնվել է 1916թ. դեկտեմբերի 15-ին Ախալքալակի շրջանի Ալաստան գյուղում: 1938թ. ընդունվել է ԵՊՀ, որտեղից

1941թ. զորակոչվել է գործող բանակ և մասնակցել Մեծ Հայրենականին: 1946թ. շարունակել է կրթությունը և 1948թ. ավարտել Համալսարանը:

Սովորել է Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի ասպիրանտուրայում և 1954թ. պաշտպանել թեկնածուական ատենախոսություն:

1954-ից Պ.Բեզիրգանյանն աշխատանքի է անցել ԵՊՀ-ում: 1959թ. նրան շնորհվել է դոցենտի կոչում: 1960-1987թթ. ղեկավարել է պինդ մարմնի ֆիզիկայի ամբիոնը, որը նրա նախաձեռնությամբ 1964թ. ստեղծված պրոբլեմային լաբորատորիայի և 1978թ. հիմնադրված ռենտգենյան հետազոտությունների ճյուղային լաբորատորիայի հետ մեկտեղ դարձավ ռենտգենյան հետազոտությունների առաջատար գիտական կենտրոն:

1969թ. Պ.Բեզիրգանյանը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1971թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Պ.Բեզիրգանյանի ղեկավարությամբ և անմիջական մասնակցությամբ իրագործված գիտական հետազոտություններն ընդգրկում են ռենտգենյան ճառագայթների ինտերֆերենցի և դիֆրակցիայի, բյուրեղային ցանցի կառուցվածքի ուսումնասիրման նոր եղանակների մշակման, գիտության և տեխնիկայի տարբեր ասպարեզներում կարևոր նշանակություն ունեցող եզակի սարքերի ու սարքավորումների ստեղծման և այլ բնագավառներ:

ԽՍՀՄ-ում Պ.Բեզիրգանյանի ղեկավարությամբ են սկսվել առաջին ռենտգենաինտերֆերաչափական հետազոտությունները, մշակվել և պատրաստվել մեծ լուծունակությամբ ռենտգենյան ինտերֆերաչափեր: 1980-1982թթ. նրա գլխավորությամբ ստեղծվել է բյուրեղների կառուցվածքային անկատարությունների ռենտգենադիֆրակտային տեղագրական պատկերները տեսանելի դարձնող եզակի մի համակարգ, որի համար 1985թ. Պ.Բեզիրգանյանին և նրա գործընկերներին շնորհվել է ՀԽՍՀ Պետական մրցանակ:

Պ.Բեզիրգանյանը հեղինակ է շուրջ 300 գիտական աշխատանքների, 30-ից ավելի գյուտերի, 2 մենագրության, մի շարք դասագրքերի և ուսումնական ձեռնարկների:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 40 ատենախոսություն:

1985թ. Պ.Բեզիրգանյանն արժանացել է ՀԽՍՀ բարձրագույն դպրոցի վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է մի շարք մեդալներով և ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատվոգրերով:

Վախճանվել է 1994թ. հունիսի 15-ին Տամբով քաղաքում:

ԲԵՑԼԵՐՑԱՆ ՆՈՐԱՑՐ ՄԱՆՎԵԼԻ

Քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ բարձրագույն դպրոցի վաստակավոր գործիչ



Ծնվել է 1929թ. հուլիսի 14-ին Կահիրեում (Եգիպտոս): 1947թ. ավարտել է տեղի Գալուստյան ազգային վարժարանը: Նույն թվականին ծնողների հետ ներգաղթել է Խորհրդային Հայաստան: 1953թ. ավարտել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը և աշխատանքի նշանակվել ֆիզիկական և կոլոիդային քիմիայի ամբիոնում որպես ասիստենտ, 1975-1976թթ.՝ դոցենտ:

1963թ. Ն.Բեյլերյանը պաշտպանել է թեկնածուական, 1975թ. դոկտորական ատենախոսություն: 1977թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1976-2000թթ. Ն.Բեյլերյանը եղել է ֆիզիկական և կոլոիդային քիմիայի ամբիոնի վարիչ, միաժամանակ՝ պոլիմերային պրոցեսների կինետիկայի պրոբլեմային լաբորատորիայի գիտական ղեկավար: 2001-ից նա ամբիոնի պատվավոր վարիչ է:

Նրա գիտական հետազոտությունները ընթացել են մի շարք հիմնարար ուղղություններով, որոնցից առավել կարևոր են՝ պերօքսիդ-ամին համակարգերը որպես ազատ ռադիկալների աղբյուր և ռադիկալային պոլիմերացման հատուկ հարուցիչներ, կոնդենսացված ֆազում լազերաքիմիա, Հայաստանի որոշ հողերի կատալիտային և ֆոսֆատազային ակտիվության կինետիկական մեթոդով ուսումնասիրություն, շրջված միջֆազային կատալիզ և այլն:

Հեղինակ է ավելի քան 630 գիտական հոդվածների, 30 հեղինակային արտոնագրերի և դասագրքերի: Դրանցից առավել կարևոր է «Քիմիական կինետիկա» (հ.1, Եր., 1978, հ.2, Եր., 1980) դասագիրքը:

1976-ից ԽՍՀՄ Նախարարների խորհրդի՝ գիտության և տեխնիկայի պետական կոմիտեին կից պերօքսիդների քիմիայի գիտական խորհրդի անդամ է, 1991-ից՝ ԽՍՀՄ ԳԱ ընդհանուր և տեխնիկական քիմիայի բաժանմունքին կից ֆիզիկաքիմիական մեխանիկայի սեկցիայի անդամ:

Նրա ղեկավարությամբ ու խորհրդատվությամբ պաշտպանվել է թեկնածուական 50 և դոկտորական 7 ատենախոսություն:

1981թ. Ն.Բեյլերյանն արժանացել է ՀԽՍՀ բարձրագույն դպրոցի վաստակավոր գործչի կոչման: 1970թ. պարգևատրվել է «Աշխատանքային արիության համար» մեդալով:

ԲՈՑՆԱԳՐՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ ՌՈՒԲԵՆԻ

Աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր



Ծնվել է 1938թ. հունվարի 14-ին Թբիլիսիում, որտեղ և 1956թ. ավարտել է թիվ 78 միջնակարգ դպրոցը: 1962թ. ավարտելով Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի աշխարհագրության ֆակուլտետը՝ մինչև 1966թ. աշխատել է ԽՍՀՄ ԳԱ Կալինինգրադի օվկիանոսագիտության ինստիտուտի ատլանտյան բաժանմունքում: 1966-1969թթ. սովորել է Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի ասպիրանտուրայում, 1969թ. պաշտպանել թեկնածուական ատենախոսություն, իսկ 1973թ. նրան շնորհվել է դոցենտի կոչում:

1970 թվականից Վ.Բոյնագրյանն աշխատում է ԵՊՀ-ում: 1996թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 2006թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: Նույն թվականից քարտեզագրության ու գեոմորֆոլոգիայի ամբիոնի վարիչն է:

Հեղինակ է շուրջ 170 գիտական հոդվածների և մի քանի մենագրությունների, որոնցից առավել կարևոր են. “Озера Армянского нагорья ”(Ер., 2007), “Склоны и склоновые процессы Армянского нагорья ” (Ер., 2007) աշխատությունները:

Վ.Բոյնագրյանի ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 3 ատենախոսություն:

ԲՈՇՆԱՂՅԱՆ ՊԵՐՃ ՍԵՐԳԵՅԻ

Երկրաբանահանքաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ՀԽՍՀ վաստակավոր երկրաբան

Ծնվել է 1920թ. սեպտեմբերի 1-ին Նոր Բայազետում (այժմ՝ Գավառ): 1938թ. ավարտել է Երևանի թիվ 4 միջնակարգ դպրոցը, 1948թ.՝ ԵՊՀ երկրաբանության ֆակուլտետը:

Զորրորդ կուրսից Պ.Բոշնաղյանը զորակոչվել է բանակ, ավարտել հետևակային ռազմական ուսումնարանը, ստացել լեյտենանտի կոչում և ծառայության անցել 89-րդ Հայկական Թամանյան դիվիզիայում: Մասնակցել է Կովկասի, Թաման թե-

բակղզու, Կերչի, Սևաստոպոլի, Վարշավայի ազատագրման համար մղված մարտերին և Բեռլինի գրավմանը:

1948 թվականից աշխատել է ՀԽՍՀ ԳԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտում, 1950-ից՝ ԵՊՀ երկրաբանության ֆակուլտետի ընդհանուր և կիրառական երկրաբանության ամբիոնում:

1955թ պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1956թ. նրան շնորհվել է դոցենտի կոչում:

1952-1955թթ. և 1961-1962թթ. Պ.Բոշնաղյանը եղել է ԵՊՀ տնտեսական աշխատանքների գծով պրոռեկտոր, 1959-1961թթ՝ երկրաբանության ֆակուլտետի դեկան, 1965-1968թթ՝ դեկանի տեղակալ, 1966-1968թթ. և 1992-1997թթ. ընդհանուր և կիրառական երկրաբանության ամբիոնի վարիչ: 1997թ. աշխատել է պրոֆեսորի պաշտոնում:

Պ.Բոշնաղյանը մասնակցել է հանրապետության տարբեր շրջաններում կատարվող ճարտարագիտաերկրաբանական հետախուզական և կառույցների նախագծերի հիմնավորման աշխատանքներին. Կապանի հանքային դաշտի ճարտարագիտաերկրաբանկան պայմանների բազմակողմանի գնահատում և քարտեզագրում, Վանաձորի հեռանկարային նոր գլխավոր հատակագծի հիմնավորում, երկրաշարժի գոտու երկրաշարժակայուն և այլ արդիական հիմնախնդիրների ուսումնասիրություն: Որպես երկրաբան-փորձագետ տվել է եզրակացություն Ագարակի, Ազատի, Արթիկի և Մարմարիկի ջրամբարներից տեղի ունեցող ֆիլտրացման կորուստների պատճառների, ինչպես նաև Սևանա լճից ստորերկրյա արտահոսքի, նրա էկոլոգիական վիճակի վերաբերյալ:

Հեղինակ է ավելի քան 50 գիտական աշխատանքների, այդ թվում՝ մեկ մենագրության:

1999-2003թթ. Պ.Բոշնաղյանն ընտրվել է ՀՀ Ազգային ժողովի երկրորդ գումարման պատգամավոր, երկար տարիներ ղեկավարել է ՀՀ պատերազմի վետերանների կոմիտեն: 1996-ից մինչև կյանքի վերջը ՀՀ պատերազմի, աշխատանքի, զինված ուժերի և իրավապահ մարմինների վետերանների միության խորհրդի նախագահն էր, ԱՊՀ անդամ երկրների վետերանների հասարակական կազմակերպությունների միջազգային միությունը համադասող խորհրդի նախագահության անդամ:

1971թ. Պ.Բոշնաղյանն արժանացել է ՀԽՍՀ վաստակավոր

երկրաբանի կոչման: Պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի, Հայրենական պատերազմի I աստիճանի, «Կարմիր աստղ» (2) շքանշաններով ու բազմաթիվ մեդալներով: Ֆրանսիայի իշխանությունների կողմից նրան շնորհվել է «Փարիզ քաղաք» անվանական մեդալ:

Պ.Բոշնաղյանը վախճանվել է 2004թ. հունվարի 5-ին Երևանում:

ԲՐՈՒՏՅԱՆ ԳԵՈՐԳ ԱԲԵԼԻ

Փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս

Ծնվել է 1926թ. մարտի 24-ին Իջևանի շրջանի Սևքար գյուղում: 1942թ. ավարտել է Թբիլիսիի թիվ 81 հայկական դպրոցը, 1948թ.՝ ԵՊԻ շինարարական ֆակուլտետը, 1950թ. ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետը: 1948-1951թթ. Գ.Բրուտյանը սովորել է Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի ասպիրանտուրայում: 1951թ. պաշտպանել է թեկնածուական, 1961թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1951-ին նրան շնորհվել է դոցենտի, 1963թ. պրոֆեսորի կոչում:

1951-1962թթ. Գ.Բրուտյանն աշխատել է ԵՊՀ փիլիսոփայության ամբիոնում որպես դոցենտ: 1962-1970թթ. եղել է Երևանի Վ.Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների մանկավարժական ինստիտուտի փիլիսոփայության ամբիոնի վարիչ, 1970-1986թթ.՝ ԵՊՀ դիալեկտիկական մատերիալիզմի և տրամաբանության (այժմ՝ տեսական փիլիսոփայության և տրամաբանության) ամբիոնի վարիչ:

1971թ. Գ.Բրուտյանն ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1982թ. ակադեմիկոս: 1977-1994թթ. եղել է փիլիսոփայության և բանասիրության, 1994-1995թթ. և 1998-2002թթ. հումանիտար գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, 1994-2002թթ.՝ նաև փոխնախագահ: 2007-ից նախագահության խորհրդական է, ԵՊՀ պրոֆեսոր:

Գ.Բրուտյանը հեղինակ է շուրջ 200 հոդվածի, 70 գրքի, որոնցից առավել կարևոր են՝ «Տրամաբանության դասընթաց» (Եր., 1957, 1967, 1976, 1987), «Մաթեմատիկական տրամաբա-

նության փիլիսոփայական ներածություն» (Եր., 1968), «Տրամաբանությունը, լեզուն և փաստարկումը փիլիսոփայական գիտելիքի տեսանկյունից» (անգլ., Լիսաբոն, 1998), «Հայագիտություն և մետահայագիտություն», գիրք I (Եր., 2004), «Տրամաբանականը բանասիրականի հայելիում» (ռուս., Եր., 2007) աշխատությունները:

Նրա ղեկավարությամբ ու խորհրդատվությամբ պաշտպանվել է թեկնածուական շուրջ 30 և մի քանի դոկտորական ատենախոսություն:

Շուրջ 30 տարի եղել է փիլիսոփայության գծով գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի նախագահ:

Գ.Բրուտյանը կազմակերպել է միջազգային մի շարք գիտաժողովներ, մասնակցել միջազգային ավելի քան 30 գիտաժողովի, հրապարակային դասախոսություններ կարդացել աշխարհի ավելի քան 35 համալսարաններում և գիտական կենտրոններում:

Գ.Բրուտյանը Համաշխարհային գիտական ակադեմիայի ցմահ անդամ է (Մեծ Բրիտանիա, 1990), Լոնդոնի դիվանագիտական ակադեմիայի հիմնադիր անդամ (Մեծ Բրիտանիա, 2000), Փիլիսոփայության միջազգային ակադեմիայի հիմնադիր անդամ, նախագահ (2001), արժանացել է մի շարք երկրների համալսարանների և ինստիտուտների պատվավոր պրոֆեսորի կոչման և միջազգային բազմաթիվ պարգևների: 1966թ. նրան շնորհվել է Մեծ Մասերտոնի (Նոր Զելանդիա) պատվավոր քաղաքացու կոչում:

Պարգևատրվել է Ժողովուրդների բարեկամության շքանշանով (1986), «Աշխատանքային արիության համար» (1970), «Աշխատանքի վետերան» (1983), «1941-1945թթ. Հայրենական մեծ պատերազմում հաղթանակի 50 տարին» (1995) մեդալներով:

ԲՐՈՒՏՅԱՆ ԼԻԼԻԹ ԳԵՈՐԳԻ

Լեզվաբան,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1953թ. օգոստոսի 7-ին Երևանում: 1970թ. ավարտել է թիվ 55 դպրոցը, 1975թ. ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի ռոմանագերմանական լեզուների բաժինը: 1975-1979թթ.

սովորել է ԵՊՀ ասպիրանտուրայում: 1980թ. պաշտպանել է թեկնածուական, 1992թ. դոկտորական ատենախոսություն: 2003թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1979-1991թթ. Լ.Բրուտյանն աշխատել է ԵՊՀ օտար լեզուների ամբիոնում (1984-ից՝ որպես դոցենտ), 1991-2006թթ. անգլիական բանասիրության ամբիոնում (1994-ից՝ որպես պրոֆեսոր), 1997-ից՝ ընդհանուր և համեմատական լեզվաբանության ամբիոնում: 2006 թվականից ԵՊՀ ռուսաց լեզվաբանության, տիպաբանության և հաղորդակցման տեսության ամբիոնի վարիչն է: 1984-1995թթ. աշխատել է նաև ՀՀ ԳԱԱ Հր.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում որպես ավագ, ապա՝ առաջատար գիտաշխատող: 1994-1995թթ. աշխատել է ԱՄՆ-ում: 1994-1996թթ. եղել է ՀՀ ԳԱԱ օտար լեզուների ամբիոնի վարիչ:

Հեղինակ է 80 աշխատության, այդ թվում՝ 7 մենագրության, որոնցից կարևոր են "Говорите: мне интересно, или мы и наши дети" (Ер., 1999), «Դավիթ Անհաղթի լեզվաբանական հայացքները» (Եր., 1999), «Ներակայման տեսության հիմունքները» (Եր., 2002), "Топонимы Северной Америки" (Ер., 2005), "Язык и гендер" (Ер., 2008):

Զեկուցումներով հանդես է եկել միջազգային գիտաժողովներում (Ռուսաստան, ԱՄՆ, Հոլանդիա, Ֆինլանդիա, Իսպանիա, Լատվիա, Բելառուս և այլն):

ԲՈՒՆԻԱԹՅԱՆ ՄՆԱՑԱԿԱՆ ՌՈՒԲԵՆԻ

Մաթեմատիկոս,
Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու,
դոցենտ

Ծնվել է 1932թ. հունվարի 10-ին Նոր Բայազետի շրջանի Փաշաքյանդ (այժմ՝ Գավառ քաղաքի Հացառատ թաղամաս) գյուղում: 1949թ. ավարտել է Նոր Բայազետի Հ.Սարուխանյանի անվան միջնակարգ դպրոցը, 1954թ.՝ ԵՊՀ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը: 1954-1956թթ. եղել է Նոր Բայազետի շրջանի ժողկրթության բաժնի դպրոցական տեսուչ և մաթեմատիկայի ուսուցիչ: 1956թ. աշխատանքի է անցել ՀԽՍՀ ԳԱ մաթեմատիկայի և մեխանիկայի ինստիտուտում որպես

կրտսեր գիտաշխատող, ապա գործուղվել Մոսկվա՝ ԽՍՀՄ ԳԱ Հաշվողական կենտրոն՝ ստաժավորման: 1959թ. հրավիրվել է աշխատանքի Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտ, որտեղ զբաղվել է մշակվող տարբեր մեքենաների մաթեմատիկական ապահովման հարցերով: 1961-1970թթ. ղեկավարել է ծրագրավորման ավտոմատացման լաբորատորիան, որտեղ մեծ աշխատանք է ծավալել հայրենական «Նաիրի-1», «Նաիրի-C», «Նաիրի-2» և «Նաիրի-3» ԷՀՄ-երի տրամաբանությունն ու ծրագրային ապահովումը մշակելու ուղղությամբ:

1972թ. Մ.Բունիաթյանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1980թ. նրան շնորհվել է դոցենտի կոչում:

1965-ից նա գիտահետազոտական աշխատանքին զուգընթաց զբաղվել է դասախոսական աշխատանքով, 1970թ. տեղափոխվել է ԵՊՀ, որտեղ նրա ջանքերով ստեղծվել է ԷՀՄ և ծրագրավորման ամբիոն, որն էլ ղեկավարել է մինչև 1986թ.: 1987-1993թթ. Մ.Բունիաթյանը եղել է ԵՊՀ տնտեսական աշխատանքների գծով պրոռեկտոր:

Հեղինակ է երկու մենագրության, գիտական ու գիտամեթոդական մի շարք հոդվածների:

1972թ. Մ.Բունիաթյանն արժանացել է ԽՍՀՄ Պետական մրցանակի, 1965թ. պարգևատրվել ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատվոգրով:

Վախճանվել է 1999թ. նոյեմբերի 1-ին Երևանում:

2002-ից Գավառի թիվ 8 միջնակարգ դպրոցը կոչվում է Մ.Բունիաթյանի անունով:

ԲՈՒՆԻԱԹՅԱՆ ՆԻԿՈՂԱՅՈՍ ԳԱԲՐԻԵԼԻ

Ճարտարապետ, գիտնական, մանկավարժ

Ծնվել է 1878թ. օգոստոսի 24-ին Թիֆլիսում: Միջնակարգ կրթությունն ստացել է Բաքվի ռեալական ուսումնարանում: 1907թ. ավարտել է Օդեսայի գեղարվեստական ուսումնարանը, 1914թ.՝ Սանկտ Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիայի ճարտարապետական ֆակուլտետը՝ ճարտարապետ-նկարչի որակավորմամբ: 1920թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1914թ. սկսած Ն.Բունիաթյանը պարբերաբար զբաղվել է Անիի և Շիրակի հուշարձանների, իսկ ավելի ուշ՝ 1930թ., նաև Գառնի ամրոցի և հատկապես հեթանոսական տաճարի չափագրմամբ ու վերականգնման նախագծով: Նրա չափագրություններն իրենց ճշգրտությամբ, կատարման վարպետությամբ բարձրարվեստ և ուսանելի գործեր են:

Ալ.Թամանյանի հրավերով Ն.Բունիաթյանը 1924թ. տեղափոխվել է Երևան՝ մշտական բնակության: Աշխատել է որպես ինժեներ-շինարար, նախագծող ճարտարապետ, գիտնական, մանկավարժ, 1924-1938թթ.՝ նաև Երևանի գլխավոր ճարտարապետ:

Ն.Բունիաթյանի նախագծերով Երևանում, Լենինականում և Հայաստանի ուրիշ քաղաքներում ու բնակավայրերում, իսկ նախահեղափոխական շրջանում՝ նաև Ռուսաստանում, կառուցվել է 70-ից ավելի շենք:

1924թ. Ն.Բունիաթյանը հրավիրվել է ԵՊՀ՝ նորաբաց տեխնիկական (շինարարական) ֆակուլտետում դասախոսություններ կարդալու նախագծման ու ճարտարապետության պատմության վերաբերյալ: Եղել է նույն ֆակուլտետի դեկան:

Ալ.Թամանյանի հետ համագործակցության ժամանակ «ազգայնական ճարտարապետության» ավանդույթները խորհրդային շինարվեստի մեջ բերելու և այլ անհիմն մեղադրանքներով Ն.Բունիաթյանը 1937թ. ձերբակալվել է և մեկ տարի անց, թոքախտի սրման ու այլ հանգամանքների բերումով, ազատվել:

1940թ. նշանավոր ճարտարապետ Կ.Հալաբյանի միջնորդությամբ նա հրավիրվել է Մոսկվա՝ ԽՍՀՄ ճարտարապետության ակադեմիայի ինստիտուտ, որտեղ վարել է դեկանի, ապա՝ փոխտնօրենի պաշտոն:

Ն.Բունիաթյանի ստեղծագործական տաղանդը փայլել է ճարտարապետական արվեստի բոլոր բնագավառներում՝ նախագծման, կառուցման, չափագրությունների: Լինելով ճարտարապետական մասնագիտական կադրերի պատրաստման գործի հիմնադիրներից մեկը Հայաստանում՝ նա մեծ ջանք է գործադրել կադրերի աճեցման և վարպետության մակարդակի բարձրացման ուղղությամբ:

Հեղինակ է «Հեթանոսական տաճար Տրդատի պալատին կից Գառնի ամրոցում» (ռուս., Եր., 1933), համահեղինակ՝

“Архитектура Армении (I-XIX вв.)” (М., 1950) գրքերի:

Իր կյանքի վերջին տարիներին Ն.Բունիաթյանը մասնակցել է «Հայկական ճարտարապետության պատմություն» բազմահատոր աշխատության ստեղծմանը, որը, սակայն, մնացել է անավարտ:

Ն.Բունիաթյանը վախճանվել է 1943թ. դեկտեմբերի 13-ին Մոսկվայում:

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԱՐՇԱԼՈՒՅՍ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ

Երկրաբանահանքաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1912թ. հունիսի 14-ին Կարսի մարզի Նախիջևան գյուղում: 1930թ. ավարտել է Երևանի թիվ 4 դպրոցը, 1938թ. ԵՊՀ երկրաբանաաշխարհագրական ֆակուլտետը՝ երկրաբանություն մասնագիտությամբ: 1938թ. ընդունվել է Մոսկվայի երկրաբանական-հետախուզական ինստիտուտի ասպիրանտուրա:

1943թ. Ա.Գաբրիելյանը պաշտպանել է թեկնածուական, 1953թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1954թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1956թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1982-ին՝ ակադեմիկոս:

1940-1983թթ. աշխատել է ԵՊՀ երկրաբանության ֆակուլտետում որպես դոցենտ, այնուհետև՝ պրոֆեսոր, ամբիոնի վարիչ: 1983-1993թթ. եղել է ՀՀ ԳԱԱ Երկրի մասին գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար:

Հիմնական մենագրություններն են. “Третичные отложения Котайкского района Арм.ССР” (Ер., 1947), “Основные вопросы тектоники Армении” (Ер., 1959), “Палеоген Ереванского бассейна, палеогеновые отложения юго-европейской части СССР” (М., 1960), “Геология Армянской ССР” (Ер., т.1, 1960, т.2, 1964), “Палеоген и неоген Армянской ССР” (Ер., 1964): Հեղինակ է 140 գիտական հոդվածների:

Ա.Գաբրիելյանը «Տեղեկագիր ՀՀ ԳԱԱ Գիտություններ Երկրի մասին» ամսագրի պատասխանատու խմբագիրն էր, միջազգային տեկտոնական և միուլթենական չերտագրական գիտահամակարգող խորհուրդների անդամ:

1961թ. Ա.Գաբրիելյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման, 1965թ. պարգևատրվել «Պատ-

վո նշան» շքանշանով:

Վախճանվել է 1993թ. մայիսի 5-ին Երևանում:

ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Հայաստանի երկրաբանության կաբինետը կրում է Ա.Գաբրիելյանի անունը:

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ՀՈՎՆԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ

Բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ



Ծնվել է 1876թ. օգոստոսի 23-ին Շուշիում: Ավարտել է տեղի գիմնազիան, այնուհետև սովորել Մոսկվայի Լազարյան ճեմարանում, իսկ 1904թ. ավարտել է Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետը:

Մինչև 1909թ. Հ.Գաբրիելյանն աշխատել է Մոսկվայի մանկական հիվանդանոցում: Այնուհետև տեղափոխվելով Բաքու մինչև 1914թ. նավթագործ բանվորների շրջանում գործել է որպես մանկաբույժ: 1914-1920թթ. եղել է Բաքվի մանկական հիվանդանոցի սուր վարակիչ հիվանդությունների բաժանմունքի վարիչ: 1920թ. Բաքվի համալսարանում հիմնադրել է մանկաբուժության ամբիոն՝ այն ղեկավարելով մինչև 1936թ.: 1926թ. Հ.Գաբրիելյանը մանկաբուժության ամբիոն է հիմնադրել և ղեկավարել նաև Երևանի համալսարանի բժշկական ֆակուլտետում: 1930թ. արժանացել է պրոֆեսորի կոչման: 1936-ից մինչև կյանքի վերջը եղել է Երևանի բժշկական ինստիտուտի մանկական հիվանդությունների ամբիոնի վարիչ:

Հ.Գաբրիելյանը մեծ ջանքեր է ներդրել մանկաբույժ մասնագետների պատրաստման գործում ինչպես Հայաստանում, այնպես էլ Ադրբեջանում: Նա ուսումնասիրություններ է կատարել այնպիսի հիվանդությունների բուժման եղանակների ուղղությամբ, ինչպիսիք են բրուցելյոզը, տուբերկուլյոզը, մալարիան, մենինգիտը, կարմրուկը և այլն:

Հ.Գաբրիելյանը հեղինակ է 43 գիտական աշխատությունների, որոնք վերաբերում են մանկաբուժության կարևոր խնդիրներին: Նրա գործունեությամբ Հայաստանում սկիզբ դրվեց մանկաբուժության գիտահետազոտական աշխատանքներին: Նրա մի շարք հետազոտություններ նվիրված են Հայաստանի հանքային ջրերի ու առողջարանների ուսումնասիրմանը:

Գիտամանկավարժական գործունեությունից բացի Հ.Գաբ-

րիելյանը կատարել է նաև զգալի հասարակական աշխատանք, մասնակցել համաճարակների դեմ մղվող պայքարին:

1946թ. արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի, «Կարմիր աստղ» շքանշաններով և մի շարք մեդալներով:

Վախճանվել է 1946թ. օգոստոսի 26-ին Երևանում:

Հ.Գաբրիելյանի անունով է կոչվում Երևանի մանկական առաջին կլինիկական հիվանդանոցը:

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ՀՐԱՉՅԱ ԿԱՐԱՊԵՏԻ

Աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1919թ. հունիսի 14-ին Գյումրիում, որտեղ էլ ստացել է միջնակարգ կրթություն: 1941թ. ավարտել է Երևանի Խ.Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի աշխարհագրության ֆակուլտետը: Գյումրիի մի շարք դպրոցներում ուսուցիչ աշխատելուց հետո 1946-ից դասախոսել է Մ.Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտում՝ դառնալով աշխարհագրական ֆակուլտետի կազմակերպիչ ու դեկան:

1949թ. պաշտպանել է թեկնածուական, 1965թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1968թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1953 թվականից Հ.Գաբրիելյանն անընդմեջ աշխատել է ԵՊՀ-ում: 1968-1970թթ. եղել է ԵՊՀ աշխարհագրության ֆակուլտետի դեկան, իսկ 1979-1989թթ.՝ ֆիզիկական աշխարհագրության ամբիոնի վարիչ:

Հեղինակ է 150 գիտական աշխատանքների՝ հոդվածներ, ուսումնական ձեռնարկներ, բուհական և դպրոցական դասագրքեր, չուրջ երեք տասնյակ մենագրություններ, որոնք նվիրված են դինամիկ գեոմորֆոլոգիային, հողմահարման պրոցեսներին, գետային և ջրային էրոզիային, աշխարհագրական թաղանթի բաղադրիչներին, լանդշաֆտներին և Հայկական լեռնաշխարհի բնությանը: Կարևորագույն մենագրություններն են՝ «Հայկական լեռնաշխարհ» (Եր., 2002), «Երկրագնդի ջրային ոլորտը» (Եր., 1987), «Երկրի լանդշաֆտային թաղանթը» (Եր., 2000), «Աշխարհագրական և երկրաբանական գծանկարչություն» (Եր., 1991), «Անդրկովկասի բնությունը և ջրային էրոզիան» (Եր., 1978):

Հ.Գաբրիելյանը վախճանվել է 2003թ. ապրիլի 3-ին Երևանում:

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ՄԻՇԱ ՍԱՐԳՍԻ

Մեխանիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր

Ծնվել է 1937թ. հունիսի 12-ին Երևանում: 1954թ. ավարտել է Երևանի թիվ 36 միջնակարգ դպրոցը, ընդունվել ԵՊՀ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետ: 1959թ. համալսարանն ավարտելուց հետո աշխատանքի է անցել ԵՊՀ մեխանիկայի (այժմ՝ տեսական մեխանիկայի) ամբիոնում որպես ասիստենտ: 1961-1964թթ. սովորել է ասպիրանտուրայում: 1966թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1972թ. նրան շնորհվել է դոցենտի կոչում:

1965թ. Մ.Գաբրիելյանն աշխատանքի է անցել ՀԽՍՀ ԳԱ մաթեմատիկայի և մեխանիկայի ինստիտուտում, այնուհետև հրավիրվել է ԵՊՀ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի տեսական մեխանիկայի ամբիոն որպես ավագ դասախոս: 1965-1974թթ. նա եղել է նաև մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետի դեկանի տեղակալ, 1982-1993թթ.՝ տեսական մեխանիկայի ամբիոնի վարիչ:

1986թ. Մ.Գաբրիելյանը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1988թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Մ.Գաբրիելյաը հեղինակ է շուրջ 65 գիտական հոդվածների, որոնք նվիրված են մեխանիկական համակարգերի օպտիմալ կայունացման և ղեկավարման, դիֆերենցիալ խաղերի տեսության, շարժման կայունության տեսության, բաշխված պարամետրերով համակարգերի օպտիմալ ղեկավարման և կայունացման, ստոխաստիկ դիֆերենցիալ խաղերի, կոնտինուում հզորությամբ մեխանիկական համակարգերի օպտիմալ ղեկավարման հարցերին: Համահեղինակ է «Տեսական մեխանիկայի խնդիրների լուծման ուղեցույց» (Եր., 1969, 1972, 1974, 2001) քառահատոր ժողովածուի և «Տեսական մեխանիկայի դասընթաց» (Եր., 2001) ձեռնարկի:

Մ.Գաբրիելյանը զեկուցումներով բազմիցս հանդես է եկել միջազգային գիտաժողովներում:

Նրա ղեկավարությամբ ու խորհրդատվությամբ պաշտպանվել է թեկնածուական 9 և դոկտորական 1 ատենախոսություն:

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ՅՈՒՐԻ ՄԻՇԱՅԻ

Լեզվաբան,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1952թ. հոկտոմբերի 1-ին Շիրակի մարզի Անի շրջկենտրոնում: 1969թ. ավարտել է միջնակարգ դպրոցը, 1969-1973թթ. սովորել ԵրՊԻ Գյումրու մասնաճյուղում: 1973-1975թթ. ծառայել է խորհրդային բանակում: 1976-1977թթ. աշխատել է Երևանի ԵԲԿ գործարանում որպես գծագրող: 1977-1982թթ. սովորել է ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի գերմաներեն լեզվի և գրականության բաժնում:

1982-1985թթ. աշխատել է ԵՊՀ գերմանական բանասիրության ամբիոնի լաբորանտ, 1985-1988թթ. սովորել ասպիրանտուրայում:

1988թ. Յու.Գաբրիելյանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1989թ. նրան շնորհվել է դոցենտի կոչում:

1989-1991թթ. եղել է ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի դեկանի տեղակալ, 1991-1995թթ. ընդհանուր և համեմատական լեզվաբանության ամբիոնի վարիչ, իսկ 1999 թվականից՝ գերմանական բանասիրության ամբիոնի վարիչ: 2001թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, իսկ 2006թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Յու. Գաբրիելյանը հեղինակ է շուրջ 60 գիտական աշխատանքների, այդ թվում՝ 3 մենագրության, 10 դասագրքի և ուսումնամեթոդական ձեռնարկների, բառարանների, հոդվածների: Առավել կարևոր են «Հայերենի ցեղակցության հարցը» (Եր., 1991), «Հայերենը և նախահնդեվրոպական լեզուն» (Եր., 2001) մենագրությունները, «Գերմաներեն լեզվի տիպաբանություն» (Եր., 2006), «Գերմաներենի քերականություն» (Եր., 2008) դասագրքերը, Գերմաներեն-Հայերեն (Աուգսբուրգ, 1998), Հայերեն-գերմաներեն (Աուգսբուրգ, 2000) բառարանները:

Յու. Գաբրիելյանը դասախոսություններով հանդես է եկել Ֆրանկֆուրտի, Հայդելբերգի և Մանհայմի համալսարաններում: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 5 ատենախոսություն:

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ՎԱՉԳԵՆ ԱՐՇԱԼՈՒՅՍԻ

Գրականագետ,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1937թ. հունվարի 20-ին Էջմիածնի շրջանի Ալիբեկլու (այժմ՝ Արտիմեդ) գյուղում: 1955թ. ավարտել է Էջմիածնի մանկավարժական ուսումնարանը, 1960թ.՝ ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժինը:

1964թ. Վ.Գաբրիելյանը պաշտպանել է թեկնածուական, 1979թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1981թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1960-1966թթ. աշխատել է «Երևանի համալսարան» բազմատիրաժ թերթի խմբագրությունում, 1966-ից՝ ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի խորհրդահայ (այժմ՝ հայ նորագույն) գրականության ամբիոնում: 1981-ից նույն ամբիոնի վարիչն է: 1996-2000թթ. եղել է բանասիրության ֆակուլտետի դեկան:

Վ.Գաբրիելյանը մամուլում սկսել է հանդես գալ 1960-ից: 1962թ. լույս է տեսել նրա «Իմ կանաչ, հլնավուրց թթենի» արձակ բանաստեղծությունների ժողովածուն: 1978-ից գրողների միության անդամ է:

Վ.Գաբրիելյանը հեղինակ է հարյուրից ավելի հոդվածների, տասնյակից ավելի գրքերի, որոնցից առավել կարևորներն են. «Դիմանկարներ (սփյուռքահայ գրողներ)» (Եր., 1976), «Դանիել Վարուժան. կյանքը և գործը» (Եր., 1978), «Դասականների ժամանակը» (Եր., 1997), «Գրականության մեր ժամանակը» (Եր., 2006), «Սփյուռքահայ գրականություն» (բուհական ձեռնարկ, Եր., 1987, 2008):

Վ.Գաբրիելյանը լուրջ ներդրում ունի ինչպես սփյուռքահայ գրողների (Վ.Թեքեյան, Դ.Վարուժան, Մ.Իշխան) երկերի, այնպես էլ տարբեր հեղինակների չափածո («Ցեղին սիրտը», Եր., 1991) և արձակ ստեղծագործությունների ժողովածուների («Սփյուռքահայ պատմվածք», Եր., 1984, 1986) հրատարակության գործում:

2007թ. Վ.Գաբրիելյանը պարգևատրվել է ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալով:

ԳԱԼԻԿՅԱՆ ՀՐԱՆՏ ԱՎԵՏԻՍԻ

Իրավագետ, պրոֆեսոր, հասարակական գործիչ

Ծնվել է 1889թ. մարտի 5-ին Վանում: Նախնական կրթությունն ստացել է Հայրենի քաղաքում: 1908 -1912 թթ. սովորել է Կ.Պոլսի համալսարանի իրավաբանական ֆակուլտետում: Այստեղ նա որոշ ժամանակ արևմտահայ գրող և հասարակական գործիչ, օրենսգետ-իրավաբան Գրիգոր Զոհրապի հետ և նրա ղեկավարությամբ մասնակցել է դատական մի շարք բարդ գործերի քննության, ձեռք բերել իրավաբանական փորձ և հմտություն: Այնուհետև Վանում և Կովկասում աշխատել է որպես իրավագետ-խորհրդական և միաժամանակ աչքի ընկել որպես հմուտ լրագրող:

1908-1922թթ. Հ.Գալիկյանը եղել է Հնչակյան կուսակցության անդամ: 1919թ. վերադարձել է Կ.Պոլիս և աշխատել որպես «Երկիր» օրաթերթի խմբագիր:

1922թ. Հ.Գալիկյանը եկել է Խորհրդային Հայաստան և արդարադատության մարմիններում վարել մի շարք պատասխանատու պաշտոններ. եղել է արդարադատության ժողկոմատի դատական բարձրագույն վերահսկողության բաժնի վարիչ (1922-1923թթ.), գլխավոր դատարանի անդամ և նախագահի տեղակալ (1923-1925թթ.), գերագույն դատարանի քաղաքացիական վճռաբեկ կոլեգիայի նախագահ և նախագահի տեղակալ (1926-1930թթ.), այնուհետև՝ ՀԽՍՀ դատախազի տեղակալ՝ քաղաքացիական գործերի գծով:

1924թ. Հ.Գալիկյանը դասախոսական աշխատանքի է հրավիրվել ԵՊՀ իրավատնտեսագիտության ֆակուլտետում, այնուհետև նշանակվել է համալսարանի տնտեսական իրավունքի ամբիոնի վարիչ և վարել քաղաքացիական իրավունքի, տնտեսական իրավունքի դասընթացները: 1934-1936թթ. եղել է իրավագիտության ֆակուլտետի դեկան: 1936թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Հ.Գալիկյանը թողել է իրավագիտական մի շարք աշխատություններ՝ «Պրոլետարիատի դիկտատուրան և խորհրդային դատարանը» (Եր., 1924), «Կանանց աշխատանքի պաշտպանությունը» (Եր., 1930), «Ժառանգական իրավունքի մասին» (Եր., 1931), «Ամուսնության և ընտանիքի իրավունք» (Եր.,

1933), «Սովետական դատարանը» (Եր., 1936) և այլ գործեր:

Կյանքն ընդհատվել է 1938թ. մայիսի 18-ին՝ ստալինյան բռնաճնշումների հետևանքով: Արդարացվել է հետմահու:

ԳԱԼՍՏՅԱՆ ՍԵՐԳԵՅ ԱՇՈՏԻ

Լեզվաբան,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր



Ծնվել է 1929թ. նոյեմբերի 1-ին Կապանի շրջանի Կեմանց գյուղում: 1947թ. ավարտել է Երևանի թիվ 40 միջնակարգ դպրոցը, 1952թ.՝ ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժինը:

1957-1962թթ. Ս.Գալստյանը եղել է ՀԽՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտի գիտաշխատող, 1962-1966թթ. ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի ամբիոնի ավագ դասախոս, 1967-1987թթ.՝ դոցենտ, իսկ 1987-ից՝ պրոֆեսոր: 1964-1970թթ. և 1980-1981թթ. եղել է ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի դեկանի տեղակալ, 1972-1979թթ.՝ արտասահմանյան քաղաքացիների նախապատրաստական ֆակուլտետի դեկան, 1971-1980թթ.՝ նույն ֆակուլտետում իր հիմնադրած հայոց լեզվի ամբիոնի վարիչ:

1956թ. Ս.Գալստյանը պաշտպանել է թեկնածուական, 1986թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1987-ին նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Կարևոր աշխատություններն են՝ «Ակնարկներ աշխարհաբարի պատմության» (Եր., 1963), «Հայոց լեզու» (Եր., 1968), «Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում» (Եր., 1978), «Լեզվաբանական բառարան» (համահեղինակ, Եր., 1975), «Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան» (համահեղինակ, Եր., 1975):

ԳԱՍՊԱՐՅԱՆ ՆԻԿՈԼԱՅ ԳԱՐԵԳԻՆԻ

Մաթեմատիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու,
դոցենտ,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1908թ. ապրիլի 25-ին Լեռնային Ղարաբաղի Մեծ Թաղլար գյուղում: 1928թ. ավարտել է Երևանի թիվ 32 դպրոցը, 1928-1932թթ. սովորել է ԵՊՀ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետում, 1941թ. ավարտել է Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի ասպիրանտուրան:

1941թ. նրա պաշտպանած թեկնածուական ատենախոսությամբ հիմք դրվեց երկրաչափական հետազոտություններին Հայաստանում: 1942թ. նրան շնորհվել է դոցենտի կոչում:

1933-1944թթ. Ն.Գասպարյանն աշխատել է ԵՊՀ-ում որպես ասիստենտ, 1944-1972թթ. հանրահաշվի և երկրաչափության ամբիոնի վարիչ, 1949-1953թթ.՝ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի դեկան:

Նրա գիտական հետազոտությունները հիմնականում վերաբերում են կոնգրուենցիաների աֆինական տեսությանը:

1970թ. Ն.Գասպարյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման:

Վախճանվել է 1972թ. մարտի 23-ին Երևանում:

ԳԱՍՊԱՐՅԱՆ ՍԵԴԱ ՔԵՐՈԲԻ

Լեզվաբան,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1946թ. հունիսի 30-ին Երևանում: 1963թ. ավարտել է Երևանի թիվ 14 դպրոցը և ընդունվել ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի անգլերեն լեզվի և գրականության բաժին: 1968թ. աշխատանքի է անցել համալսարանի ռոմանագերմանական բանասիրության ամբիոնում:

1979-1982թթ. Ս.Գասպարյանը սովորել է Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի նպատակային ասպիրանտուրայում և 1983թ. նույն բուհում պաշտպանել թեկնածուական ատենախոսություն: 1989թ. ստացել է դոցենտի կոչում, նույն տարում ընդունվել է դոկտորանտուրա և գոր-

ծուղվել Մոսկվայի պետական համալսարան, որտեղ 1994թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն:

1993-ից Ս.Գասպարյանը ղեկավարում է ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնը: 2002թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Ս.Գասպարյանը հեղինակ է ավելի քան 60 գիտական, գիտամեթոդական և ուսումնամեթոդական աշխատությունների, հոդվածների, բուհական դասագրքերի ու ձեռնարկների՝ "Academic English (for Linguists)" (Եր., 2002), "English for University Students" (Եր., 2005), "English Style in Action" (Եր., 2008): Հատկապես արժեքավոր են նրա "Фигура сравнения в функциональном освещении" (Ер., 2000), "Лингвопоэтика образного сравнения" (Ер., 1991, 2008) մենագրությունները:

Աշխատանքները վերաբերում են լեզվի և ոճի տեսական ու կիրառական հարցերին, լեզվապոետիկայի, տեքստի մեկնաբանության և թարգմանության տեսության խնդիրներին:

Ս.Գասպարյանի նախաձեռնությամբ կազմակերպվել են հանրապետական ու միջազգային բազմաթիվ գիտաժողովներ: Զեկուցումներով հանդես է եկել Անգլիայում, Իսպանիայում, Արգենտինայում, Ռուսաստանում:

2003-ից Անգլերենի ուսումնասիրության եվրոպական ընկերության վարչության անդամ է և անգլիագիտական հետազոտությունների "European Journal of English Studies" հանդեսի խմբագրական-խորհրդատվական հանձնախմբի անդամ: Նա հիմնադիր նախագահն է Անգլերենի ուսումնասիրության հայկական ասոցիացիայի, որը գործում է Եվրոպական Դաշնության շրջանակներում: Նրա հիմնադրմամբ ու խմբագրությամբ 2005-ից Հայաստանում հրատարակվում է անգլիագիտական հետազոտությունների "Armenian Folia Anglistika" միջազգային հանդեսը:

Նրա ղեկավարությամբ և խորհրդատվությամբ պաշտպանվել է թեկնածուական 16 և դոկտորական 1 ատենախոսություն:

Ս.Գասպարյանը ԵՊՀ-ում գործող գիտական աստիճաններ շնորհող գերմանական լեզուների մասնագիտական խորհրդի նախագահն է:

ԳԱՍՊԱՐՅԱՆ ՖԵՐԴԻՆԱՆԴ ՎԱՉԳԵՆԻ

Ֆիզիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1950թ. մարտի 9-ին Երևանում: 1967թ. ավարտել է թիվ 11 միջնակարգ դպրոցը, իսկ 1972թ. ԵՊԻ կիրեռնետիկայի ֆակուլտետը:

1972-1978թթ. աշխատել է ՀԽՍՀ ԳԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտում, իսկ 1978-ից աշխատում է ԵՊՀ-ում:

1981թ. Ֆ.Գասպարյանը պաշտպանել է թեկնածուական, 1995թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1986թ. նրան շնորհվել է դոցենտի, 2003-ին պրոֆեսորի կոչում:

Հեղինակ է շուրջ 120 գիտական հոդվածների և համահեղինակ՝ 6 մենագրությունների, որոնցից հարկ է նշել. "Methods and Materials for Remote Sensing. Infrared Photo-Detectors, Radiometers and Arrays" (Boston /New York/ London, 2004), "Пороговые характеристики фотодетекторов, ИК-радиометры и основные материалы современной фотоэлектроники" (Ер., 2000), "Кремниевые фотоприемники" (Ер., 1989), «Ժամանակակից միկրոէլեկտրոնիկայի պրոբլեմներ. Լիցքային կապով սարքեր» (Եր., 1986) աշխատությունները:

Ֆ.Գասպարյանի գիտական հետաքրքրությունների հիմնական ուղղությունները կիսահաղորդիչներում և կիսահաղորդիչ սարքերում ֆլուկտուացիոն երևույթներն են, սպեկտրի ինֆրակարմիր և ուլտրամանուշակագույն տիրույթի ֆոտոընդունիչները, կիսահաղորդչային արեգակնային տարրերը, գազային, քիմիական և կենսաբանական սենսորները:

ԳԱՐԵԳԻՆՅԱՆ ԳՐԻԳՈՐ ԼԵՎՈՆԻ

Լեզվաբան,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր



Ծնվել է 1927թ. հոկտեմբերի 20-ին Բուլղարիայի Սլիվեն քաղաքում: 1934-1936թթ. սովորել է Փարիզի ֆրանսիական դպրոցներից մեկում, 1936թ. նրանց ընտանիքը ներգաղթել է Հայրենիք: 1944թ. Գ.Գարեգինյանն ավարտել է Երևանի թիվ 21 դպրոցը, 1948թ.՝ Երևանի Վ.Բրյուսովի անվան մանկավար-

ժական ինստիտուտի օտար լեզուների ֆակուլտետի ֆրանսիական բաժինը:

1949-1952թթ. աշխատել է Երևանի գյուղատնտեսական ինստիտուտում որպես ֆրանսերենի դասախոս, 1950-1953թթ.՝ ակադեմիկոս Հր.Աճառյանի մոտ, 1955-1960թթ. գիտական աշխատանք է կատարել ՀԽՍՀ ԳԱ Հր.Աճառյանի լեզվի ինստիտուտում, 1966-ից եղել է ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի դոցենտ, իսկ 1990-ից՝ պրոֆեսոր, 1971-1973թթ.՝ ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի դեկանի տեղակալ:

1959թ. Գ.Գարեգինյանը պաշտպանել է թեկնածուական, 1988-ին՝ դոկտորական ատենախոսություն: 1990թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Կարևոր մենագրություններն են՝ «Շաղկապները ժամանակակից հայերենում» (Եր., 1963), «Ժամանակակից հայոց լեզու. բարդ նախադասություն» (Եր., 1984): Համահեղինակ է «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան»-ի (հ.1, Եր., 1969):

Պարգևատրվել է «Աշխատանքային արիության համար» մեդալով:

Գ.Գարեգինյանը վախճանվել է 1992թ. նոյեմբերի 25-ին Երևանում:

ԳՅՈՒԼԲՈՒԴԱՂՅԱՆ ԼԻՊԱՐԻՏ ՎԱՂԱՐՇԱԿԻ

Քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1912թ. հուլիսի 23-ին Սուրմալու գավառի Կողբ գյուղում: 1917թ. նրանց ընտանիքը գաղթել է Երևան, ապա վերաբնակվել ներկայիս Արմավիրի մարզի Մեծ Շահրիար (այժմ՝ Նալբանդյան) գյուղում: 1930թ. Խ.Աբովյանի անվան միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո Լ.Գյուլբուդաղյանը շուրջ չորս տարի եղել է շրջանային թերթի պատասխանատու քարտուղար: 1934-1939թթ. սովորել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետում, որն ավարտել է 1939թ.: Այնուհետև ընդունվել է ՀԽՍՀ ԳԱ օրգանական քիմիայի ինստիտուտի ասպիրանտուրա:

Լ.Գյուլբուդաղյանը մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին: 1946թ. զորացրվելուց հետո աշխատանքի է անցել ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի օրգանական քիմիայի ամբիոնում

որպես դասախոս:

1951թ. նա պաշտպանել է թեկնածուական, 1973-ին՝ դոկտորական ատենախոսություն: 1974թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Նրա առաջին աշխատանքները նվիրված են պարասալիցիլի բենզոյական թթվի էսթերների սինթեզին և դրանց հետագա փոխարկումներին, որոնք մասամբ հիմք հանդիսացան հետագայում ՀԽՍՀ ԳԱ նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտում ներդրված «Գանգլերոն» և «Քվատերոն» դեղամիջոցների սինթեզի համար: Լ.Գյուլբուդաղյանն իր աշակերտների հետ իրականացրել է խինոլինային շարքի բնական միացությունների, ինչպես և արդեն կիրառություն գտած սինթետիկ դեղամիջոցների կառուցվածքին համապատասխան թթվածին, ազոտ, ծծումբ պարունակող բազմաթիվ հետերոցիկլային միացությունների սինթեզ, մասնավորապես մշակել է հետերոցիկլային միացությունների և դրա բազմաթիվ ածանցյալների ստացման մատչելի եղանակներ:

Լ.Գյուլբուդաղյանը հեղինակ է շուրջ 200 գիտական աշխատանքների, 30 հեղինակային իրավունքի, ինչպես նաև «Քիմիայի հրաշալիքներ» (Եր., 1955), «Հրաշալի նյութեր» (Եր., 1965) գիտահանրամատչելի գրքերի և «Օրգանական քիմիայի պրակտիկում» (Եր., 1961, 1974, 1984) ուսումնական ձեռնարկի:

Լ.Գյուլբուդաղյանը պարգևատրվել է Հայրենական պատերազմի II աստիճանի, «Կարմիր աստղ», Աշխատանքային կարմիր դրոշի շքանշաններով ու մեդալներով:

Վախճանվել է 2003թ. մայիսի 15-ին Երևանում:

ԳՅՈՒԼԲՈՒԴԱՂՅԱՆ ՍԻՐԱՔ ՎԱՂԱՐՇԱԿԻ

Հեղվաբան,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր



Ծնվել է 1915թ. սեպտեմբերի 7-ին Սուրմալուի գավառի Կողբ գյուղում: 1917թ. ընտանիքը գաղթել է Երևան, ապա տեղափոխվել Ներկայիս Արմավիրի մարզի Մեծ Շահրիար (այժմ՝ Նալբանդյան) գյուղ, որտեղ էլ նա ստացել է նախնական կրթությունը:

1934թ. Ս.Գյուլբուդաղյանն ավարտել է Արմավիրի մանկավարժական ուսումնարանը և զբաղվել ուսուցչությամբ: 1938թ. ընդունվել է ԵՊՀ բանասիրության ֆակուլտետ, 1941-

ին զորակոչվել է բանակ և մինչև 1945թ. մասնակցել Հայրենական մեծ պատերազմին: Զորացրվելուց հետո շարունակել է ուսումը և 1946-ին ավարտել ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժինը: 1946-1950թթ. աշխատել է Երևանի ժողկրթության մեթոդկաբինետում որպես հայոց լեզվի մեթոդիստ: 1954-1956թթ. նա դասավանդել է Գյումրու մանկավարժական ինստիտուտում, 1956-ից մինչև կյանքի վերջը աշխատել է ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի ամբիոնում:

1951թ. Ս.Գյուլբուդաղյանը պաշտպանել է թեկնածուական, 1977թ. դոկտորական ատենախոսություն: 1978-ին նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Հեղինակ է «Թվական անունը ժամանակակից հայերենում» (Եր., 1964), «Միակազմ նախադասությունները ժամանակակից հայերենում» (Եր., 1967), «Ալ.Շիրվանզադեի լեզվական մշակույթը» (Եր., 1966) մենագրությունների, «Ժամանակակից հայերենի շարահյուսություն. պարզ նախադասություն» բուհական դասագրքի (1988), «Ակնարկներ հայոց լեզվի մեթոդիկայի» (Եր., 1970) ձեռնարկի:

Ս.Գյուլբուդաղյանը պարգևատրվել է Խ.Աբովյանի անվան և մի շարք այլ մեդալներով:

Վախճանվել է 1997թ. հոկտեմբերի 17-ին Երևանում:

ԳՅՈՒԼԻՔԵՎԽՅԱՆ ՀԱՅԿ ԳԱԲՐԻԵԼԻ

Փիլիսոփա, գրականագետ, պրոֆեսոր, հասարակական գործիչ

Ծնվել է 1885թ. դեկտեմբերի 25-ին Շուշիում: Ավարտել է տեղի ռեալական դպրոցը և 1906թ. մեկնել Գերմանիա, որտեղ մինչև 1913թ. ուսանել է Ենայի համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետում, իսկ այնուհետև՝ Լայպցիգի, Յուրիխի և Հայդելբերգի համալսարաններում: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, որպես ռուսահպատակ, մեկուսացվել է ռազմագերիների ճամբարում, որտեղից ազատվել է 1918թ.: Գերմանիայում եղած տարիներին մասնակցել է «Սպարտակ Բունդե» կազմակերպության գործունեությանը: Վերադառնալով հայրենիք՝ վարել է կուսակցական ու վարչական մի շարք պաշտոններ. եղել է «Կոմունիստ» թերթի (ռուս.)

խմբագիր, Ալեքսանդրապոլի (այժմ՝ Գյումրի) կուսակցական գավկոմի բաժնի վարիչ, իսկ 1924թ. ընտրվել է ՀԿԿ Կենտկոմի անդամ, նշանակվել բաժնի վարիչ և «Կոմունիստ», «Վերելք» հանդեսների խմբագիր: 1920-30-ականներին նա հաճախակի հանդես է եկել դասական և նորագույն գրականության առնչությունների մասին հոդվածներով ու ելույթներով:

1923թ. Հ.Գյուլիքևխյանը հրավիրվել է ԵՊՀ, որտեղ աշխատել է շուրջ 10 տարի: 1924-1927թթ. եղել է ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր: 1929թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1932թ. նշանակվել է մարքսիզմ-լենինիզմի նորաստեղծ գիտահետազոտական ինստիտուտի, իսկ հետագայում՝ Հայաստանի պատմության և գրականության ինստիտուտի տնօրեն: 1939-1947թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ գրականության ինստիտուտի ավագ գիտաշխատող, իսկ կյանքի վերջին տարիներին դասավանդել է ռուսական մանկավարժական ինստիտուտում:

Հ.Գյուլիքևխյանի գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է փիլիսոփայության, գեղագիտության, գրականության, դրամատուրգիայի, թատրոնի տեսության ու պատմության բազմաթիվ հարցեր:

Նա թողել է գրականագիտական բազմաթիվ հոդվածներ, որոնցից հատկապես արժեքավոր են «Հայրենասիրության գաղափարը Խ.Աբովյանի մոտ», «Ռաֆֆու «Կայծերը», «Ի.Ճավճավաձեի ստեղծագործության մասին», «Կլասիկ ժառանգությունը և սովետահայ գրականությունը», «Դիտողություններ սովետական դրամատուրգիայի մասին», «Շեքսպիրը նախասովետական հայ քննադատության մեջ» և այլն:

Հ.Գյուլիքևխյանը ստալինյան բռնարարքների շրջանում շատերի պես ենթարկվել է հալածանքների, ապա արդարացվել է:

Վախճանվել է 1951թ. սեպտեմբերի 29-ին Երևանում:

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԿՈՆՍՏԱՆՏԻՆԻ

Ռադիոֆիզիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, դոցենտ

Ծնվել է 1966թ. ապրիլի 6-ին Երևանում: 1983թ. ավարտել է Երևանի թիվ 30 միջնակարգ դպրոցը: 1984-1986թթ. ծառա-

յել է խորհրդային զինված ուժերում: 1990թ. ավարտել է ԵՊՀ ռադիոֆիզիկայի ֆակուլտետը:

2000թ. Ալ.Գրիգորյանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 2005թ. նրան շնորհվել է դոցենտի կոչում:

1990-1993թթ. աշխատել է ԵՊՀ ռադիոֆիզիկայի ֆակուլտետում որպես ուսումնական լաբորատորիայի վարիչ: 1993-2000թթ. եղել է ԵՊՀ ռադիոֆիզիկայի ֆակուլտետի ասիստենտ, 2000-2006թթ.՝ ԵՊՀ ուսումնական վարչության պետ, միաժամանակ՝ ալիքային պրոցեսների տեսության ամբիոնի դոցենտ: 2006-ից աշխատում է որպես ԵՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, նաև մանկավարժության ամբիոնի դոցենտ:

Հեղինակ է գերխիտ երկնային մարմինների ֆիզիկային վերաբերող 25 գիտական հոդվածների և բարձրագույն կրթության կառավարման խնդիրներ լուսաբանող 20 աշխատանքի:

Ալ.Գրիգորյանը 2005-ից անդամ է Ակադեմիական ճանաչման և շարժունակության ազգային տեղեկատվական կենտրոնի խորհրդի, 2006-ից՝ Բոլոնիայի գործընթացի սկզբունքների իրականացման ազգային աշխատախմբի, 2008-ից՝ կրթության որակի ապահովման ազգային աշխատախմբի, 2009-ից՝ մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի խորհրդի:

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՌՆԻԿ ԼԵՎՈՆԻ

Քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1941թ. մարտի 15-ին Իրանում: 1956թ. ավարտել է ՀԽՍՀ Արտաշատի շրջանի Մխչյան գյուղի միջնակարգ դպրոցը, 1961թ.՝ ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետը: 1962-1965թթ. սովորել է ասպիրանտուրայում: 1971թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, 1973թ. ստացել ավագ գիտաշխատողի կոչում

1961-1963թթ. Գ.Գրիգորյանն աշխատել է ՀԽՍՀ ԳԱ նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտում, 1963-1994թթ. ՀԽՍՀ ԳԱ քիմիական ֆիզիկայի ինստիտուտում: 1990թ. պաշտպանել է ատենախոսություն: 1994-ից նա դասավանդում է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետում: 2006թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Գ.Գրիգորյանի գիտական գործունեությունը վերաբերում է «պինդ նյութ-գազ» ֆազերի սահմանին ընթացող բարդ ռեակցիաների կինետիկայի և մեխանիզմի հետազոտմանը: Ուսումնասիրել է մի շարք հետերոգեն ռեակցիաների մեխանիզմներ, բացահայտել ջրածնի պերօքսիդի հետերոգեն քայքայման ռադիկալային մեխանիզմը և ցույց տվել, որ այդ պրոցեսում մակերևույթի վրա առաջացած ռադիկալները կարող են անցնել գազի ծավալ և այնտեղ մասնակցել շղթաների ինչպես հարուցման, այնպես էլ շարունակման ռեակցիաներին: Նա պարզել է, որ ածխաջրածինների օքսիդացումը պինդ նյութերի մակերևույթին կարող է ընթանալ շղթայական մեխանիզմով նաև ցածր ջերմաստիճաններում: Այդ ռեակցիաներն օգտագործել է բարձր ակտիվության կատալիզատորներ ստանալու, ադսորբենտների մակերևույթների մոդիֆիկացման, նուրբ թաղանթների աճեցման և այլ նպատակներով:

Գ.Գրիգորյանը հեղինակ է ավելի քան 80 աշխատանքի, մի քանի գյուտի, մասնակցել է միջազգային գիտաժողովների:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 7 ատենախոսություն:

1970թ. պարգևատրվել է «Մարտական արիության համար» մեդալով:

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԷԴՎԱՐԴ ԽՈՍՐՈՎԻ

Մեխանիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր



Ծնվել է 1938թ. հունվարի 21-ին Երևանում: 1955թ. ավարտել է Երևանի թիվ 37 դպրոցը, 1967թ. ԵՊՀ մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետի մեխանիկայի բաժինը և աշխատանքի անցել որպես ասիստենտ: 1969-1972թթ. սովորել է Օդեսայի ինժեներաշինարարական ինստիտուտի ասպիրանտուրայում: 1973թ. Էդ.Գրիգորյանն աշխատել է ՀԽՍՀ ԳԱ մեխանիկայի ինստիտուտում, 1978-ից՝ ԵՊՀ-ում: 1990-1996թթ. եղել է մեխանիկայի ֆակուլտետի դեկան, 2000-2002թթ. հոծ միջավայրի մեխանիկայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար, 2002-ից՝ հոծ միջավայրի մեխանիկայի, այնուհետև՝ մեխանիկայի ամբիոնի պրոֆեսոր:

1977թ. Էդ.Գրիգորյանը պաշտպանել է թեկնածուական, 1994թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1980թ. նրան շնորհվել է դոցենտի, իսկ 2002-ին՝ պրոֆեսորի կոչում:

Էդ.Գրիգորյանը հեղինակ է շուրջ 80 գիտական աշխատանքների՝ նվիրված առաձգականության մաթեմատիկական տեսության կոնտակտային և խառը խնդիրներին, առաձգական կառուցվածքների կոնտակտային փոխազդեցությունների և լարումների բաշխման յուրահատկությունների բացահայտմանը, միջավայրերում ալիքների տարածման օրինաչափությունների հետազոտմանը, առաձգական և էլեկտրաառաձգական միջավայրերում անհամասեռության և խառը պայմանների դեպքում ալիքների դիֆրակցիայի ու ճառագայթման խնդիրների ուսումնասիրությանը:

Էդ.Գրիգորյանի ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 12 ատենախոսություն:

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԿԱՌԼԵՆ ՎԱՂԱՐՇԱԿԻ

Էկոլոգ,

կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1946թ. մայիսի 26-ին Գորիսի շրջանի Խոզնավար գյուղում: 1964թ. ավարտել է Տեղ գյուղի միջնակարգ դպրոցը, 1971թ. ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետը: Աշխատել է նույն ֆակուլտետի հողագիտության ու ագրոքիմիայի (այժմ՝ էկոլոգիայի և բնության պահպանության) ամբիոնում որպես լաբորանտ, գիտաշխատող, ավագ գիտաշխատող, գլխավոր գիտաշխատող և պրոֆեսոր: 1997-ից ԵՊՀ էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի վարիչն է:

1981թ. Կ.Գրիգորյանը Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանում պաշտպանել է թեկնածուական, 1990թ.՝ դոկտորական ատենախոսություն: 2004թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Հեղինակ է ավելի քան 70 գիտական, գիտահանրամատչելի հոդվածների, 1 դասագրքի, 11 ուսումնամեթոդական աշխատանքների: Դրանք նվիրված են շրջակա միջավայրի վրա լեռնամետալուրգիական և քիմիական ձեռնարկությունների գործունեության վնասակար ազդեցության, ոռոգման նպատակով ալտոտված ջրերի օգտագործման նպատակահարմարության,

դրանցում տեխնածին նյութերի խտությունների թույլատրելի սահմանների որոշման, ինչպես նաև ջրերի, հողերի և մշակաբույսերի աղտոտվածության աստիճանի, դրանցում ծանր մետաղների պարունակության թույլատրելի սահմանների որոշման նպատակով արտաբջջային ֆերմենտների ակտիվության օգտագործման հնարավորության հարցերին:

Համահեղինակ է «Մարդկային զարգացման հիմունքներ» (Եր., 2004), «Բնական ջրերի անալիզի մեթոդները» (Եր., 2006), «Բնապահպանություն և աստվածաբանություն» (Եր., 2007) գրքերի:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 6 ատենախոսություն:

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԱՐԱՏ ԱՐԻՍԻ

Երկրաբանահանքաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Ծնվել է 1940թ. հունվարի 1-ին Արտաշատի շրջանի Այգեստան գյուղում: 1957թ. ավարտել է գյուղի միջնակարգ դպրոցը: 1960թ. ընդունվել և 1966-ին ավարտել է ԵՊՀ երկրաբանության ֆակուլտետը:

1966թ. աշխատել է ՀԽՍՀ երկրաբանական վարչությունում որպես ինժեներ-երկրաֆիզիկոս, ապա տեղափոխվել ԵՊՀ երկրաբանության ֆակուլտետ որպես ասիստենտ: 1967թ. ընդունվել է ԵՊՀ հեռակա ասպիրանտուրա և գործուղվել Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի երկրաբանության ֆակուլտետ:

1973թ. Մ.Գրիգորյանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1976թ. նրան շնորհվել է դոցենտի կոչում: 1976-1981թթ. և 1990-1995թթ. եղել է ԵՊՀ օդտակար հանածոների ու հանքավայրերի որոնման և հետախուզման երկրաֆիզիկական մեթոդների ամբիոնի վարիչ, 1980-2008թթ.՝ երկրաբանության ֆակուլտետի դեկան: 2008 թվականից աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկանն է:

Մ.Գրիգորյանը հեղինակ է 75 գիտական հոդվածների, ուսումնամեթոդական ձեռնարկների և հաշվետվությունների: Նա գիտական զեկուցումներով հանդես է եկել Եվրոպայի երկրաֆիզիկոսների միջազգային համաժողովներում (Դուբ-

լին՝ 1978թ., Կանն՝ 1979թ., Վենետիկ՝ 1981թ.): 1987-1988թթ. նա մասնակցել է Խորհրդային Միության կողմից Սիբիրյում նախագծվող ատոմակայանի շինհրապարակի ընտրության աշխատանքներին որպես գլխավոր մասնագետ:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 3 ատենախոսություն:

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԱՐՏԻՆ ԳԵՎՈՐԳԻ

Մաթեմատիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր

Ծնվել է 1954թ. մարտի 23-ին Արթիկի շրջանի Գեղաձոր գյուղում: 1971թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը, 1976թ. ԵՊՀ մաթեմատիկայի ֆակուլտետը: 1978-ից աշխատանքի է անցել ԵՊՀ-ում:

1980թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, իսկ 1984թ. նրան շնորհվել է դոցենտի կոչում:

1981-ից Մ.Գրիգորյանն աշխատում է ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետում. 1981-1983թթ. ասիստենտի, 1983-2000թթ. դոցենտի պաշտոններում: 1996թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, 2000-ից աշխատել պրոֆեսորի պաշտոնում, իսկ 2002թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 2005 թվականից Մ.Գրիգորյանը ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնի վարիչն է:

Հեղինակ է ավելի քան 80 գիտական և գիտամեթոդական աշխատանքների, որոնք նվիրված են տարբեր ֆունկցիոնալ տարածություններում ինչպես դասական, այնպես էլ ընդհանուր օրթոնորմալ համակարգերով գծային և ոչ գծային մոտարկումների հարցերին: Նա ուսումնասիրել է դասական և ընդհանուր օրթոնորմալ համակարգերով Ֆուրյեի շարքերի զուգամիտության, ֆունկցիոնալ տարբեր տարածություններում պայմանական և ոչ պայմանական ներկայացման համակարգերի, բազիսների ու քվազիբազիսների, ինչպես նաև օրթոգոնալ ունիվերսալ շարքերի գոյության հարցեր:

Մ.Գրիգորյանը զեկուցումներով հանդես է եկել միջազգային տարբեր գիտաժողովներում: 1993-1994թթ. նա մեկական ամսով գիտական աշխատանքի է հրավիրվել Մադրիդի ինքնա-

վար համալսարանի մաթեմատիկայի բաժանմունք, որտեղ նրան շնորհվել է նույն համալսարանի պրոֆեսորի կոչում:

Մ.Գրիգորյանի ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 5 ատենախոսություն:

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՌՈՄԵՆ ՊԵՏՐՈՍԻ

Ֆիզիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր



Ծնվել է 1945թ. հունվարի 3-ին Երևանում: Սովորել է թիվ 25 միջնակարգ դպրոցում, որն ավարտել է 1963թ.: 1970թ. ավարտել է Մոսկվայի ինժեներաֆիզիկական ինստիտուտի փորձարարական և տեսական ֆիզիկայի ֆակուլտետը և աշխատանքի անցել Երևանի ֆիզիկայի ինստիտուտում: 1972-1975թթ. սովորել է Երևանի ֆիզիկայի ինստիտուտի, ապա՝ ԽՍՀՄ ԳԱ ֆիզիկայի ինստիտուտի ասպիրանտուրայում:

1978թ. Ռ.Գրիգորյանը պաշտպանել է թեկնածուական, 1993թ.՝ դոկտորական ատենախոսություն: 2007թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

2000-ից Ռ.Գրիգորյանը դասավանդում է ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի միջուկային ֆիզիկայի ամբիոնում:

Նա հեղինակ է «Միջուկային ռեակտորների տեսության հիմունքները» (Եր., 2008) մենագրության և համահեղինակ “Цветные кварки и глюоны (теоретико-групповой и теоретико-полевой подходы)” (Ер., 2006) մենագրության, երկու ուսումնական ձեռնարկների և ավելի քան 50 գիտական հոդվածների նվիրված դաշտի քվանտային տեսությանը, տարրական մասնիկների ֆիզիկայի և կիսահաղորդչային նանոկառուցվածքների ստացման տեխնոլոգիաներին:

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍԵՐԳԵՅ ԿՈՍՏԱՆԴԻ

Քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1938թ. հուլիսի 17-ին Լեռնային Ղարաբաղի Հաթերք գյուղում: 1954թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը, 1959թ.՝ ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը և աշխատանքի անցել ԵՊՀ ֆիզիկական քիմիայի ամբիոնում որպես լաբորանտ: 1961-1963թթ. սովորել է ԵՊՀ ասպիրանտուրայում: 1966թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1964-1967թթ. եղել է ասիստենտ, 1967-1972թթ.՝ ավագ դասախոս, 1972-1987թթ. դոցենտ, 1967-1969թթ.՝ նաև դեկանի տեղակալ:

1986թ. Ս.Գրիգորյանը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1987թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1989-2007թթ. եղել է ԵՊՀ անօրգանական քիմիայի ամբիոնի վարիչ:

Ս.Գրիգորյանը հեղինակ է ավելի քան 220 գիտական աշխատությունների՝ նվիրված ջրային լուծույթներում հիդրոպերօքսիդների հետ ամինամիացությունների ու մետաղիոնների փոխազդեցությունների տեսությանը և կիրառական խնդիրներին: Հեղինակն է «Ֆիզիկական և կոլոիդային քիմիա» (Եր., 1983), «Ընդհանուր քիմիա» (Եր., 2002) դասագրքերի, համահեղինակ՝ «Ընդանուր քիմիայի պրակտիկում» (Եր., 2003, 2007) ուսումնական ձեռնարկի, «Հայկական քիմիական անվանակարգության բարեփոխման հիմնախնդիրը» մենագրության (Եր., 1998), տասնյակ ուսումնամեթոդական աշխատանքների:

1994-1999թթ. եղել է ԵՊՀ-ում գործող անօրգանական քիմիայի գծով գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի նախագահ:

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆԱ ՀՐԱՆՏԻ

Ֆիզիոլոգ,

կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1937թ. փետրվարի 2-ին Երևանում: 1954թ. ավարտել է Երևանի թիվ 55 միջնակարգ դպրոցը: 1954-1960թթ. սովորել է Երևանի պետական բժշկական ինստիտուտում: 1962-1963թթ. աշխատել է Մոսկվայի հոգեբանության ինստի-

տուտում: 1963-1966թթ. եղել է Հայկական մանկավարժական ինստիտուտի հոգեբանության ամբիոնի ասպիրանտ: 1963-1976թթ. աշխատել է ՀԽՍՀ ԳԱ Լ.Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտում, որտեղ 1971թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն:

1976-ից Վ.Գրիգորյանը ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի Տ.Մուշեղյանի անվան մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնի ավագ գիտաշխատող է, 1983-ից՝ դոցենտ, 2001-ից՝ պրոֆեսոր:

1999թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 2005թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Վ.Գրիգորյանը զբաղվում է հոգեկանի կենսաբանական պրոբլեմներով, ուղեղի գործառական վիճակների, մոնոտոն աշխատանքի նյարդաֆիզիոլոգիական հիմքերի, մտավոր գործունեության հոգեֆիզիոլոգիական մեխանիզմների ուսումնասիրությամբ:

Հեղինակ է ավելի քան 130 գիտական հոդվածների, մեթոդական ձեռնարկների և «Հոգեֆիզիոլոգիա» (Եր., 2008) դասագրքի:

Վ.Գրիգորյանի ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 3 ատենախոսություն:

ԳՐԻՆ ԷԼԴԱ ԱՇՈՏԻ

Հոգեբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր

Ծնվել է 1928թ. մարտի 10-ին Թիֆլիսում: 1943թ. ավարտել է Երևանի թիվ 8 դպրոցը, 1947թ.՝ Ռուսական մանկավարժական ինստիտուտի օտար լեզուների ֆակուլտետը: 1955թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և աշխատանքի անցել ԵՊՀ-ում: 1971թ. նրան շնորհվել է դոցենտի, 2003թ. պրոֆեսորի կոչում:

Է.Գրինը հիմնականում զբաղվում է հոգեկազմաբանության, սոցիալական հոգեբանության և իրավաբանական հոգեբանության հարցերով: Հեղինակ է 100-ից ավելի հոդվածների, բազմաթիվ մենագրությունների, դասագրքերի, ուսումնական ձեռնարկների, որոնցից առավել կարևորներն են «Գերմաներենի հնչյունային կազմի յուրացման առանձնահատկությունները հայկական դպրոցում» (Եր., 1959), «Խառնվածք» (Եր., 2002),

«Դատահոգեբանական փորձաքննություն» (Եր., 2002), «Դատական գործունեության հոգեբանություն» (Եր., 2002), «Մեղք, ապաշավանք, կատարսիս» (Եր., 2005), «Հոգեբանությունը քրեակատարողական գործունեությունում» (Եր., 2007): Հեղինակ է նաև գեղարվեստական գրքերի, որոնք տպագրվել են հայերեն, ռուսերեն, անգլերեն, չեխերեն և այլ լեզուներով:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 3 ատենախոսություն:

1947թ. Է.Գրինը պարգևատրվել է «1941-1945թթ. Հայրենական մեծ պատերազմի ժամանակ աշխատանքային արիության համար» մեդալով:

ԳՐՁԵԼՅԱՆ ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍԱԴԱՆԻ

Գյուղատնտես

Ծնվել է 1884թ. հունվարի 5-ին Թիֆլիսի Նահանգի Գորիի գավառի Սուրամ ավանում: Սկզբնական կրթությունն ստացել է Սուրամի, ապա Գորիի ծխական դպրոցներում, միջնակարգ կրթությունը Ներսիսյան դպրոցում, որն ավարտել է 1902թ.: Մասնագիտական կրթությունն ստացել է Մոնպելիեի (Ֆրանսիա) գյուղատնտեսական դպրոցում, որն ավարտել է 1910թ. ինժեներ-գյուղատնտեսի որակավորմամբ:

1911թ. Գ.Գրձելյանն աշխատանքի է անցել Թիֆլիսի Հայոց գյուղատնտեսական ընկերությունում, որի հանձնարարությամբ Փամբակի Մեծ Ղարաքիլիսա ավանում (այժմ՝ Վանաձոր) կազմակերպել է ցուցադրական դաշտ և բանջարանոց ու պայքար ծավալել բույսերի վնասատուների դեմ: Այստեղ առաջին անգամ նա է հիմք դրել լոլիկի մշակությանը, ինչպես նաև կազմակերպել երկամյա գյուղատնտեսական դասընթացներ:

1912թ. Գ.Գրձելյանը հրավիրվել է Երևան և նշանակվել գյուղատնտեսության դեպարտամենտի այգեգործության և գինեգործության ավագ մասնագետ: 1916թ. ընտրվել է Թիֆլիսի Հայոց գյուղատնտեսական ընկերությունների նախագահ: Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո աշխատանքի է անցել Հայկոոպում որպես գյուղատնտեսական բաժնի վարիչ: 1921թ. նշանակվել է սկզբում այգեգործության ավագ մասնագետ, ապա՝ գյուղբաժնի վարիչ:

1922թ. Գ.Գրձելյանը հրավիրվել է ԵՊՀ գյուղատնտեսական

ֆակուլտետում ֆիթոպաթոլոգիայի դասախոսություններ կարդալու, իսկ 1923թ. նշանակվել է այգեգործության ամբիոնի վարիչ: Այդ պաշտոնում նա աշխատել է մինչև 1937թ.: 1936թ. նշանակվել է գյուղատնտեսական ինստիտուտի այգեգործական ֆակուլտետի դեկան: Այնուհետև աշխատել է ՀԽՍՀ ԳԱ այգեգինեգործական ինստիտուտում որպես սեկտորի վարիչ և գիտական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ, ապա Ղափանում՝ որպես գյուղատնտես-այգեգործ և այլն:

Գ.Գրձելյանը ենթարկվել է ստալինյան բռնաճնշումների, հետագայում արդարացվել է:

1956-1961թթ. նա եղել է ՀԽՍՀ գյուղատնտեսության նախարարության գիտության գլխավոր վարչության ավագ տեսուչ, մինչև 1966թ. Հայկական գյուղատնտեսական ինստիտուտի այգեգործության ամբիոնի վարիչ, իսկ 1966-ից՝ նույն ամբիոնի դոցենտ:

Գ.Գրձելյանը խաղողագործության վերաբերյալ հրատարակել է գիտական և գիտահանրամատչելի բազմաթիվ աշխատանքներ, այդ թվում՝ «Այգեգործություն» (մաս I, Եր., 1934), «Խաղողի վազի ցրտահարությունը և նրա դեմ պայքարելու միջոցները» (Եր., 1955), «Այգեգործության բերքատվության բարձրացման մի քանի խնդիրներ» (Եր., 1957), «Այգեգործություն: Վազի բալմացման եղանակները և այգու մշակությունը» (Եր., 1957):

Վախճանվել է 1977թ. օգոստոսի 31-ին Երևանում:

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԵՂԱՄ ԳՐԻԳՈՐԻ

Մաթեմատիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

Ծնվել է 1958թ. ապրիլի 29-ին Երևանում: 1975թ. ավարտել է ԵՊՀ-ին կից ֆիզիկամաթեմատիկական գիշերօթիկ դպրոցը, 1980թ.՝ ԵՊՀ մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետը: 1982թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1988թ. նրան շնորհվել է դոցենտի կոչում:

1980-1983թթ. Գ.Գևորգյանը ղեկավարել է ԵՊՀ մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետի Հավանականությունների

տեսության և մաթեմատիկական վիճակագրության ուսումնական լաբորատորիան, միաժամանակ դասախոսել նույն ֆակուլտետում: 1983-1992թթ. աշխատել է որպես ԵՊՀ օպտիմալ կառավարման տեսության և մոտավոր մեթոդների ամբիոնի դոցենտ: 1992թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 2003թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1992-1997թթ. Գ.Գևորգյանը եղել է օպտիմալ կառավարման տեսության և մոտավոր մեթոդների ամբիոնի պրոֆեսոր: 2000թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ: 1997-2004թթ. ղեկավարել է ԵՊՀ մաթեմատիկական անալիզի ամբիոնը: 2002-2004թթ. եղել է ՀՀ ԳԱԱ գիտակազմակերպական վարչության պետ, 2004-2008թթ. ԵՊՀ մաթեմատիկայի ֆակուլտետի դեկան: 2008-ից նա ԵՊՀ գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր է:

Նրա գիտական գործունեությունը հիմնականում վերաբերում է օրթոգոնալ համակարգերին և հարմոնիկ անալիզին: Ստացել է մի շարք կարևոր արդյունքներ եռանկյունաչափական և Ֆրանկլինի օրթոգոնալ համակարգերով ֆունկցիաների ներկայացման բնագավառում:

Գ.Գևորգյանը հեղինակ է 61 գիտական հոդվածների, համահեղինակ՝ «Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր» (Եր., 2001) հանրակրթական դպրոցի 9-րդ և 10-րդ դասարանների դասագրքերի, ինչպես նաև «Մաթեմատիկական անալիզի խնդրագիրք» (Եր., 2005) աշխատության:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 6 ատենախոսություն:

Գ.Գևորգյանն արժանացել է ԽՍՀՄ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության նախարարության (1981) և «Հայաստան» համահայկական հիմնադրամի (1994) մրցանակների:

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԷՄԻԼ ՍՈՍԻ

Կենսաֆիզիկոս,
կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

Ծնվել է 1947թ. հունիսի 27-ին Երևանում: 1965թ. ավարտել է Երևանի թիվ 19 միջնակարգ դպրոցը, 1970թ՝ ԵՊՀ կեն-

սաբանության ֆակուլտետի կենսաֆիզիկայի բաժինը: 1970-1973թթ. Է.Գևորգյանը եղել է ԵՊՀ կենսաֆիզիկայի ամբիոնի ասպիրանտ: 1974թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, 1983թ.՝ ստացել դոցենտի կոչում: 1974-ից աշխատել է ԵՊՀ-ում որպես լաբորանտ, կրտսեր գիտաշխատող, ավագ գիտաշխատող, դոցենտ:

1990թ. Է.Գևորգյանը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1992-1994թթ. աշխատել է կենսաֆիզիկայի ամբիոնում որպես պրոֆեսոր, 1994-2000թթ.՝ նույն ամբիոնի վարիչ: 2002թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1994-2005թթ. նա եղել է ամբիոնում գործող «Ենթաբջջային կառուցվածքների կենսաֆիզիկա» գիտահետազոտական լաբորատորիայի գիտական ղեկավար, իսկ 2005-ից՝ ԵՊՀ «Կառուցվածքային կենսաֆիզիկա» միջֆակուլտետային գիտահետազոտական լաբորատորիայի համաղեկավար: 2000-ից ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի դեկանն է:

2006թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ:

Է.Գևորգյանի գիտական գործունեությունը նվիրված է հորմոնների ազդեցության մոլեկուլային մեխանիզմների պարզաբանմանը, մասնավորապես տարաբնույթ հորմոնների միջոցով գենոմի ակտիվացման պրոցեսներում կորիզաթաղանթի, կորիզային մատրիքսի լիպոդների, քրոմատինի հիմնական բաղադրամասերի, հատկապես ոչ հիստոնային սպիտակուցների և ԴՆԹ-ի կառուցվածքա-ֆունկցիոնալ փոփոխությունների հայտնաբերմանն ու ուսումնասիրմանը: Է.Գևորգյանի ստացած տվյալները վկայում են հորմոնների միջոցով հարուցված սպիտակուցների մակածման և մոդիֆիկացման պրոցեսների փոխկապվածությունը և թույլ են տալիս նորովի դիտարկել թիրախ-բջիջներում հորմոնների ազդեցության մոլեկուլային մեխանիզմները:

Է.Գևորգյանը 180-ից ավելի հրատարակումների հեղինակ է, որոնցից 6-ը ուսումնական և ուսումնամեթոդական ձեռնարկներ են՝ «Մոլեկուլային և բջջային կենսաբանության մեթոդների ակնարկ» (Եր., 2006), «Սննդամթերքի ֆիզիկաքիմիական հատկությունները» (Եր., 2007) և այլն:

Է.Գևորգյանը բազմիցս եղել է երկարաժամկետ գիտական գործուղումներում (Իտալիա՝ 1977-1978, Չինաստան՝ 1987-1988, Ֆրանսիա՝ 1995), հանդես եկել դասախոսություններով ու գիտական զեկուցումներով: Նա ՀՀ ԳԱԱ «Հայաստանի

կենսաբանական հանդես»-ի գլխավոր խմբագիրն է:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 7 ատենախոսություն:

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀԱՄԼԵՏ ԱՄԲԱԿՈՒՄԻ

Փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Ծնվել է 1927թ. հուլիսի 10-ին Երևանում: 1944թ. ավարտել է թիվ 25 դպրոցը, 1944-1945թ. սովորել է Մոսկվայի Բաումանի անվան բարձրագույն տեխնիկական ուսումնարանում: Երկրորդ կուրսում ընդհատել է ուսումնառությունն ու ընդունվել ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետ, որն ավարտել է 1950-ին:

1956-1962թթ. Հ.Գևորգյանն աշխատել է ՀԽՍՀ ԳԱ փիլիսոփայության սեկտորում որպես ավագ գիտաշխատող, 1962-1969թթ.՝ սեկտորի գիտահետազոտական խմբի գիտական ղեկավար, 1969-1992թթ.՝ ՀԽՍՀ ԳԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի բաժնի վարիչ, 1992-1996թթ. ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի տնօրենի պաշտոնակատար, 1992-ից՝ գիտաթեմատիկ խմբի գիտական ղեկավար: 1962-1980թթ. նա համատեղությամբ դասավանդել է ԵՊՀ-ում:

1970թ. Հ.Գևորգյանը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1972թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1996թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս:

Հ.Գևորգյանը հեղինակ է շուրջ 180 աշխատությունների, այդ թվում՝ 11 մենագրության, գրքերի և բրոշյուրների, որոնցից առավել կարևոր են "Вероятное и достоверное знание" (Ер., 1965), «Գիտելիքի ժամանակակից տեսության ակնարկ» (Եր., 1977), "Очерк исторической методологии науки" (Ер., 1987), "Национальная культура с точки зрения философии истории" (Ер., 1992), «Փիլիսոփայություն. Պատմություն. Մշակույթ» (Եր., 2005) գրքերը:

Նրա ղեկավարությամբ ու խորհրդատվությամբ պաշտպանվել է թեկնածուական 13 և դոկտորական 2 ատենախոսություն:

2004 թվականից ԵՊՀ-ում գործող փիլիսոփայության գծով

գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի նախագահն է:

2003թ. Հ.Գևորգյանը պարգևատրվել է «Մովսես Խորենացի» մեդալով:

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՌՈՒԴՈԼՖ ԳՐԻԳՈՐԻ

Երկրաբանահանքաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1935թ. հունիսի 15-ին Կիրովականում (այժմ՝ Վանաձոր): 1953թ. ավարտել է Երևանի թիվ 25 դպրոցը, 1953թ. ԵՊՀ երկրաբանության ֆակուլտետը:

1959-1961թթ. Ռ.Գևորգյանն աշխատել է ՀԽՍՀ Ժողտնտխորհում և Հայկական երկրաբանական վարչությունում որպես ավագ ինժեներ: Սովորել է ԽՍՀՄ ԳԱ Վ.Վերնադսկու անվան երկրաքիմիայի և անալիտիկ քիմիայի ինստիտուտի ասպիրանտուրայում, որտեղ 1965թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1966-1978թթ. աշխատել է ԵրՊԻ-ում որպես գիտահետազոտական բաժնի գիտքարտուղար և երկրաբանության, հետախուզման տեխնիկայի ամբիոնի դոցենտ:

1967-1968թթ. Ռ.Գևորգյանը վերապատրաստվել է Ֆրայբերգի լեռնային ակադեմիայում (Գերմանիա): 1978-1993թթ. նա եղել է Վ.Վերնադսկու անվան երկրաքիմիայի և անալիտիկ քիմիայի ինստիտուտի Հայկական գիտահետազոտական երկրաքիմիայի իր մասնակցությամբ հիմնադրված մասնաճյուղի տնօրեն:

1993թ. Ռ.Գևորգյանն աշխատել է սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության երկրաքիմիական կենտրոնի տնօրեն, իսկ 1993-1994թթ.՝ նույն կենտրոնի գլխավոր տնօրենի տեղակալ, 1993-1996թթ. ՀՀ արտակարգ իրավիճակների վարչությունում որպես միջազգային կապերի բաժնի վարիչ: 1994 թվականից դասախոսում է ԵՊՀ երկրաբանության ֆակուլտետում: 1997-ից ԵՊՀ միներալոգիայի, պետրոլոգիայի և երկրաքիմիայի ամբիոնի վարիչն է:

1995թ. Ռ.Գևորգյանը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 2004թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Ռ.Գևորգյանն ուսումնասիրել է Փամբակի ալկալիական ապարների զանգվածի պետրոլոգիական, երկրաքիմիական

առանձնահատկությունները, օֆիոլիտային ասոցիացիայի ապարների պետրոլոգիական, երկրաքիմիական և ծագումնաբանական յուրահատկությունները, դրանց հետ կապված՝ գունագեղ քարերը և հատկապես բնական ալմաստների բյուրեղների երևակումները:

Հեղինակ է 170 գիտական աշխատանքների, մի շարք ուսումնամեթոդական ձեռնարկների ու գրքերի, այդ թվում՝ «Ընդհանուր միներալոգիայի դասընթաց (լաբորատոր աշխատանքներ)» (Եր., 1977), «Միներալոգիայի լաբորատոր աշխատանքների ձեռնարկ» (Եր., 1999), «Միներալների առաջացման պրոցեսներ» (Եր., 2002), «Միներալոգիայի հիմունքներ» (Եր., 2004), «Հայաստանի օֆիոլիտային պալեօվկիանոսյան կեղևը (Հարավային Կովկաս)» (Եր., 2002):

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 5 ատենախոսություն:

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՉԳԵՆ ԱՍՔԱՆԱԶԻ

Լեզվաբան, գրաբարագետ, գրող,
բանասիրական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր

Ծնվել է 1923թ. մարտի 31-ին Հրազդանում: 1940թ. ավարտել է Երևանի թիվ 13 միջնակարգ դպրոցը և նույն տարում ընդունվել ԵՊՀ լեզվագրական ֆակուլտետ:

1941-1943թթ. Վ.Գևորգյանը մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին, ծանր վիրավորվել է և զորացրվել: Կրթությունը շարունակել է բանասիրության ֆակուլտետում: 1945թ. ավարտել է համալսարանը և 1946թ. ընդունվել ԵՊՀ ասպիրանտուրա:

1950թ. Վ.Գևորգյանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և մինչև 1984թ. գրաբար է դասավանդել ԵՊՀ Հայոց լեզվի ամբիոնում, իսկ 1985-ից մինչև կյանքի վերջը՝ Հայոց լեզվի պատմության ամբիոնում: 1952թ. նրան շնորհվել է դոցենտի, 1991թ.՝ պրոֆեսորի կոչում:

1994-1995 ուստարում Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի հրավերով Վ.Գևորգյանը գրաբար է դասավանդել Երուսաղեմի Ալեք և Մարի Մանուկյանների անվան ժառանգավորաց վարժարանում և ընծայարանում:

Նա հայտնի էր նաև իր բանասիրական, բանաստեղծական-թարգմանչական գործունեությամբ: Հայ գրականության և

մշակույթի մեջ լուրջ ներդրում են Գր.Նարեկացու «Մատյան ողբերգության» (Եր., 1970, 1979, 1996) և «Տաղերի» (Եր., 1979) նրա աշխարհաբար թարգմանությունները: Նա թարգմանել է նաև «Լերմոնտով, բանաստեղծություններ և պոեմներ» գիրքը, ինչպես նաեւ «Դև» պոեմը: Հեղինակ է «Լերմոնտով» (Եր., 1956) չափածո ողբերգության, ինչպես նաև մի շարք գիտական հոդվածների:

Վ.Գևորգյանը պարգևատրվել է Հայրենական մեծ պատերազմի I աստիճանի շքանշանով, «1941-1945թթ. Հայրենական մեծ պատերազմում հաղթանակի 20 տարին» և այլ մեդալներով:

Վ.Գևորգյանը վախճանվել է 2002թ. մայիսի 15-ին Երևանում:

Նրա անունով է կոչվում ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի լսարաններից մեկը:

ԴԱԼՅԱՆ ԵՎԱ ԲԵՆՈՑԻ

Ֆիզիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր

Ծնվել է 1949թ. փետրվարի 27-ին Երևանում: 1966թ. ավարտել է թիվ 76 դպրոցը, 1971թ. ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետը: 1971-1975թթ. աշխատել է ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի մոլեկուլային ֆիզիկայի ամբիոնում որպես լաբորանտ, 1975-1987թթ.՝ ամբիոնին կից գիտահետազոտական լաբորատորիայի կրտսեր գիտաշխատող:

1987թ. Ե.Դալյանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1987-1994թթ. եղել է ավագ գիտաշխատող, 1994-2005թթ. դոցենտ: 2006-ից Ե.Դալյանը ԵՊՀ մոլեկուլային ֆիզիկայի ամբիոնի վարիչն է:

2003թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 2007թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Հեղինակ է շուրջ 100 գիտական աշխատանքների, որոնք նվիրված են ԴՆԹ-ի ջերմակայունության և կոնֆորմացիայի վրա արտաքին տարբեր գործոնների ազդեցության, հայտնի հակաուռուցքային դեղանյութերի և պոտենցիալ հակաուռուցքային միացությունների, ինչպես նաև նոր սինթեզված պորֆիրինների և մետաղապորֆիրինների՝ ԴՆԹ-ի հետ փոխազդեցության մոլեկուլային մեխանիզմների պարզաբանման հարցերին:

Աշխատել է որպես հրավիրված հետազոտող Ֆլորենցիայի (Իտալիա, 1998), Տորոնտոյի (Կանադա, 2003, 2004) համալսարաններում:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 2 ատենախոսություն:

ԴԱՆԱԳՈՒԼՅԱՆ ԱԼԻՏԱ ՍԵՐԳԵՅԻ

Ֆիզիկոս,
Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1937թ. հունվարի 4-ին Նոր Բայազետում (այժմ՝ Գավառ): 1953թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը, 1958-ին՝ ԵՊՀ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը: 1958թ. ընդունվել է ԵՊՀ ասպիրանտուրա և 1959-ին ուսումնառությունը շարունակել է Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանին կից միջուկային ֆիզիկայի գիտահետազոտական ինստիտուտում:

1961թ. Ա.Դանագուլյանն աշխատանքի է անցել ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետում:

1964թ. պաշտպանել է թեկնածուական, 1993թ. դոկտորական ատենախոսություն: 1974թ. նրան շնորհվել է դոցենտի, 2003թ. պրոֆեսորի կոչում:

1993-ից աշխատել է ԵՊՀ միջուկային ֆիզիկայի ամբիոնում որպես պրոֆեսոր, 2002-2005թթ. եղել է այդ ամբիոնի վարիչ:

Ա.Դանագուլյանը հեղինակ է «Միջուկային ֆիզիկայի ընդհանուր պրակտիկում» (Եր., 1984), «Միջուկային ֆիզիկայի հատուկ պրակտիկում» (Եր., 1985, 2005), «Միջուկային ֆիզիկա և տարրական մասնիկներ» (Եր., 2006) ուսումնական ձեռնարկների:

Գիտական գործունեությունն սկսել է 1958-ից. զբաղվել է միջուկային սպեկտրադիտման խնդիրներով՝ դեֆորմացված և գնդաձև ռադիոակտիվ միջուկների տրոհման սխեմաների ուսումնասիրությամբ: Հայտնաբերել է նոր իզոտոպ՝ ^{138}Nd և նոր իզոմեր՝ ^{139m}Nd: 1993-ից համագործակցում է Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի (ՌԴ, Դուբնա), իսկ 2004-ից՝ Թոմաս Ջեֆերսոնի (ԱՄՆ) լաբորատորիաների հետ:

Ա.Դանագուլյանի ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 3 ատենախոսություն:

ԴԱՆՂՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ ՏԻԳՐԱՆԻ

Քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1907թ. նոյեմբերի 15-ին Կոտայքի շրջանի Թեջրաբակ (այժմ՝ Ջորաղբյուր) գյուղում: 1930թ. ավարտել է Երևանի Մյասնիկյանի անվան միջնակարգ դպրոցը և երկու տարի զբաղվել ուսուցչական աշխատանքով: 1932թ. Մ.Դանղյանն ընդունվել և 1936-ին ավարտել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը, ընդունվել ասպիրանտուրա և երկու տարի անց պաշտպանել թեկնածուական, 1949թ. դոկտորական ատենախոսություն: 1951թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Աշխատանքները վերաբերում են բազմաֆունկցիոնալ Y-լակտոնների սինթեզին և դրանց քիմիական հատկությունների ուսումնասիրմանը:

Մ.Դանղյանը շուրջ երեսուն տարի գլխավորել է ԵՊՀ օրգանական քիմիայի ամբիոնը, դասավանդել «Օրգանական քիմիա» հիմնարար առարկան: 1951-1962թթ. և 1967-1971թթ. եղել է քիմիայի ֆակուլտետի դեկան:

Նրա ղեկավարությամբ ու խորհրդատվությամբ պաշտպանվել է թեկնածուական 36 և դոկտորական 5 ատենախոսություն:

1965թ. Մ.Դանղյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է «Պատվո նշան», Հոկտեմբերյան հեղափոխության շքանշաններով, մեդալներով ու պատվոգրերով:

Վախճանվել է 1984թ. հուլիսի 11-ին Երևանում:

ԴԱՆԻԵԼՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ ԱՇՈՏԻ

Մաթեմատիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1946թ. օգոստոսի 9-ին Երևանում: 1964թ. ավարտել է Երևանի թիվ 42 միջնակարգ դպրոցը, 1969թ. ԵՊՀ մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետը, 1972-ին՝ Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի ասպիրանտուրան:

1972-ից Էդ.Դանիելյանն աշխատում է ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետում: 1973թ. պաշտպանել է թեկնածուական, 1981թ. դոկտորական ատենախոսություն: 1974թ.

նրան շնորհվել է դոցենտի, 1984-ին՝ պրոֆեսորի կոչում:

1982-1986թթ. ղեկավարել է ԵՊՀ օպտիմալ կառավարման տեսության և մոտավոր մեթոդների ամբիոնը, իսկ 1986-ից նա հավանականությունների տեսության և մաթեմատիկական վիճակագրության ամբիոնի վարիչն է:

Էդ.Դանիելյանը հեղինակ է 180 գիտական հոդվածների և 10 մենագրության, այդ թվում՝ "Frequency Distributions in Biomolecular Systems and Growing Networks" (Finland, 2007), համահեղինակ՝ "Optimization of Functionals on Classes of Distributions with Moments՝ Constraints", Part I (Finland, 2002), "Массовое обслужване и приоритетни системи на обслуживане" (Блгария, 1973), "Приоритетные системы обслуживания" (М., 1973), որոնք նվիրված են հուսալիության տեսությանը, կանոնավոր փոփոխվող ֆունկցիաներին, մաթեմատիկական վիճակագրությանը, բաշխումների դասերում մոմենտային սահմանափակումների պայմաններում օպտիմալացմանը, կենսաինֆորմատիկայում մաթեմատիկական մեթոդներին:

Էդ.Դանիելյանի ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 35 ատենախոսություն:

ԴԱՆԻԵԼՅԱՆ ՖԵԼԻՔՍ ԴԱՆԻԵԼԻ

Կենդանաբան,
կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր



Ծնվել է 1938թ. հունվարի 21-ին Երևանում: 1955թ. ավարտել է Երևանի թիվ 10 դպրոցը: 1957-1962թթ. սովորել է ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետում: 1960-ից աշխատել է կենդանաբանության ամբիոնում որպես ավագ լաբորանտ, ասիստենտ, ավագ դասախոս, դոցենտ, պրոֆեսոր: 2004-ից նույն ամբիոնի վարիչն է:

1969թ. ԽՍՀՄ ԳԱ Լենինգրադի կենդանաբանության ինստիտուտում պաշտպանել է թեկնածուական, 1988թ.՝ Ուկր.ԽՍՀ ԳԱ Կիևի կենդանաբանության ինստիտուտում՝ դոկտորական ատենախոսություն: 1971թ. նրան շնորհվել է դոցենտի, 2002թ. պրոֆեսորի կոչում:

Ֆ.Դանիելյանը հեղինակ է ավելի քան 170 գիտական աշխատանքների, 1 մենագրության և 8 ուսումնական ձեռնարկների ու դասագրքերի, որոնք վերաբերում են ողնաշարավոր

կենդանիների կուսածնության առաջացման, սողունների էկոլոգիայի, էկոլոգիական կենսաքիմիայի, կենդանիների կարիոլոգիայի, ինչպես նաև կենդանիների պահպանության և պոպուլյացիոն գենետիկայի, կենդանական աշխարհի կարգաբանության հարցերին: Համահեղինակ է "Прыткая ящерица" (М., 1976) և «Սողուններ» (Եր., 2007) ձեռնարկների:

Նրա ղեկավարությամբ ու խորհրդատվությամբ պաշտպանվել է թեկնածուական 7 և դոկտորական 1 ատենախոսություն:

ԴԱՎԹՅԱՆ ՄԻՍԱԿ ԱՐՇԱՄԻ

Կենսաքիմիկոս,
կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ



Ծնվել է 1934թ. հոկտեմբերի 14-ին Սոֆիայում (Բուլղարիա): Մինչև 5-րդ դասարան սովորել է Սոֆիայի հայկական ազգային վարժարանում: 1946թ. Մ.Դավթյանը հայրենադարձվել է և 1952թ. ավարտել Երևանի թիվ 10 միջնակարգ դպրոցը: 1952-1958թթ. սովորել է Երևանի պետական բժշկական ինստիտուտում: Մեկ տարի աշխատել է ՀԽՍՀ Թալինի շրջանում որպես տեղամասային բժիշկ: 1960-1963թթ. սովորել է ԽՍՀՄ ԲԳԱ Մոսկվայի կենսաբանական և բժշկական քիմիայի ինստիտուտի ասպիրանտուրայում, որտեղ 1963թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: Այնուհետև աշխատանքի է անցել ՀԽՍՀ ԳԱ կենսաքիմիայի ինստիտուտում, որտեղ 1970թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1972թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1971-2000թթ. Մ.Դավթյանը եղել է ԵՊՀ կենսաքիմիայի ամբիոնի վարիչ: 1971-ից կենսաքիմիայի պրոբլեմային (ներկայումս՝ գիտահետազոտական) լաբորատորիայի ղեկավարն է: 1978-1985թթ. և 1996-1999թթ. նա եղել է ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի դեկան, 1985-1989թթ.՝ ԵՊՀ բնագիտական ֆակուլտետների ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, 1990-1991թթ. առաջին պրոռեկտոր: 1989-1990թթ. նա ՀԽՍՀ ժողովրդական կրթության նախարարն էր, 1999-2002թթ. Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ռեկտորը:

1986թ. Մ.Դավթյանն ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1996թ. ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս: 2006-ից նա ԵՊՀ կենսաքիմիայի ամբիոնի վարիչն է:

Նրա գիտական հետազոտությունները նվիրված են ազոտ պարունակող միացությունների, հատկապես ամինաթթուների փոխանակության ու համապատասխան ֆերմենտների ակտիվության կարգավորման հիմնահարցերին: Նա առաջարկել է ամինաթթուների դեզամինացման պրոցեսում պերօքսիսոմների կարևորության վերաբերյալ նոր տեսակետ, հիմնավորել բջիջներում ամոնիակի փոքր կոնցենտրացիայի պահպանման անհրաժեշտությունն ամինաթթուների դեզամինացման իրականացման համար և այդ գործում գլյուտամինի և միզանյութի կենսասինթեզի նշանակությունը: Մ.Դավթյանը հիմնավորել է բնության մեջ նոր՝ ոչ ուռեոթելիկ արգինազի գոյությունը և պարզել նրա կարևոր դերը նյութափոխանակության մեջ: Նա հայտնաբերել է գլխուղեղում օրնիտինային ցիկլի 5 ֆերմենտներից 3-ը, որոնք ապահովում են նյութափոխանակության կարևոր կարգավորիչ ազոտի մոնօքսիդի անխափան սինթեզն արգինինից: Մ.Դավթյանը հիմնավորել է նաև նոր տեսակետ էվոլյուցիոն և անհատական զարգացման ընթացքում ուրեոթելիզմի ձևավորման մեխանիզմում՝ լյարդում, ուրեոթելիկ արգինազի մակածման վճռորոշ դերի մասին: Նա ապացուցել է, որ արտակարգ պայմաններում (քաղց, իոնացնող ճառագայթներ) օրգանիզմներում բջիջների բաղադրամասերի քայքայման ընդհանուր ֆոնի վրա խթանվում է պաշտպանիչ որոշ սպիտակուցների սինթեզը:

Մ.Դավթյանն ավելի քան 300 հոդվածների, հեղինակային վկայականների, ակնարկային գիտական հոդվածների հեղինակ է: Բազմիցս հանդես է եկել զեկուցումներով միջազգային գիտաժողովներում (Փարիզ, Օքսֆորդ, Լոս-Անջելես, Լյուբլին, Մոսկվա, Բրատիսլավա, Բուդապեշտ, Սանկտ Պետերբուրգ, Տորոնտո): Գիտական հետազոտություններ է կատարել և դասախոսություններ կարդացել մի շարք առաջավոր համալսարաններում ու գիտական կենտրոններում (Փարիզ, Լոս-Անջելես, Լյուբլին, Մոսկվա, Բրատիսլավա):

Մ.Դավթյանի նախաձեռնությամբ 1974թ. ԵՊՀ-ում կազմակերպվել է կենսաքիմիայի բաժին: 1978թ. Երևանում կազմակերպել է համամիութենական գիտաժողով՝ նվիրված կյանքի ծագման և էվոլյուցիոն կենսաքիմիայի հարցերին:

Մ.Դավթյանի ղեկավարությամբ ու խորհրդատվությամբ

պաշտպանվել է ավելի քան 70 թեկնածուական և 4 դոկտորական ատենախոսություն:

1977-ից Մ.Դավթյանը ԵՊՀ-ում գործող կենսաքիմիայի և կենսաֆիզիկայի գծով գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի նախագահն է:

Նա եղել է «Կենսաբանություն» միջբուհական հանդեսի խմբագիր, կենսաքիմիկոսների համամիութենական կենտրոնական խորհրդի, ինչպես նաև ԽՍՀՄ ԳԱ «Մարդու և կենդանիների կենսաքիմիա» և «Կյանքի ծագումը և էվոլյուցիոն կենսաքիմիա» պրոբլեմային խորհուրդների անդամ:

1981թ. Մ.Դավթյանին շնորհվել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչում:

ԴԱՐԲԻՆՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ ՎԱՐԴԱՆԻ

Քիմիկոս,
տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1908թ. դեկտեմբերի 25-ին Ալեքսանդրապոլում (այժմ՝ Գյումրի): Միջնակարգ դպրոցն ավարտել է 1925թ. Թիֆլիսում: 1929թ. ավարտել է ԵՊՀ գյուղատնտեսական, իսկ 1931թ. դրսեկությամբ՝ Երևանի մանկավարժական ինստիտուտի քիմիայի ֆակուլտետը: Դեռ ուսանողական տարիներին Մ.Դարբինյանն աշխատել է ԵՊՀ-ում որպես տեխնիկ-լաբորանտ, ապա՝ դասախոսել քիմիայի ֆակուլտետում: 1954թ. ընտրվել է վերլուծական քիմիայի ամբիոնի վարիչ, իսկ 1963-ից մինչև կյանքի վերջը եղել անօրգանական քիմիայի ամբիոնի վարիչ:

1939-ին պաշտպանել է թեկնածուական, իսկ 1953-ին Մոսկվայում՝ դոկտորական ատենախոսություն: 1954թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1938-ից Մ.Դարբինյանը համատեղությամբ աշխատել է նաև լեռնամետալուրգիական գիտահետազոտական ինստիտուտում որպես լաբորատորիայի վարիչ: 1962-ից մինչև կյանքի վերջը նա եղել է Քարերի և սիլիկատների գիտահետազոտական ինստիտուտի քարերի ձուլման ու ջերմաքիմիական վերամշակման բաժնի վարիչ:

Մ.Դարբինյանը հեղինակ է ավելի քան 100 գիտական աշխատանքների, ստացել է հեղինակային իրավունքի տասնյակ ար-

տոնագրեր: Հայտնի են նրա ուսումնասիրությունները մագնեզիումի և դրա աղերի, կալցիումի, բարիումի, ստրոնցիումի վակուումային ջերմակարբիդային եղանակների մշակման բնագավառում: Մ.Դարբինյանն առաջարկել է Քաջարանի և Դաստակերտի մոլիբդենային հանքերի և խտույթների համալիր մշակման նոր հիդրոմետալուրգիական ավտոկլավային տեխնոլոգիական սխեմա, կատարել հետազոտություններ Ալավերդու պղնձաձուլական կոմբինատի խարամներից երկաթի, սիլիկահողի, դյուրահալ մետաղների ստացման ուղղությամբ: Նրա ղեկավարած խումբը հետազոտություններ է կատարել Հայաստանի սիլիկատային ապարների մշակման բնագավառում, սինթեզվել են տարբեր ապակիներ և քիմիապես կայուն, կիրառական մեծ նշանակություն ունեցող շինանյութեր՝ սիտալներ ու պետրոսիտալներ, փրփրեցրած քար և այլն: Նա հետազոտել է կալցիումի կարբիդի և ցիանամիդի, ինչպես նաև պերլիտից ցեոլիտների ստացումը, ուսումնասիրել հազվագյուտ տարրերի՝ քիմիայում իոնափոխանակային քրոմատոգրաֆիայի կիրառման և այդ տարրերի բաժանման եղանակների մշակման հարցեր:

1967թ. Մ.Դարբինյանին շնորհվել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչում:

Վախճանվել է 1969թ. ապրիլի 17-ին Երևանում:

ԴԵՄՅՈԽԻՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՊԵՏՐԻ

Երկրաբան-ինժեներ,
երկրաբանահանքաբանական գիտությունների թեկնածու

Ծնվել է 1905թ. հունիսի 5-ին Սմոլենսկի նահանգի Իզդիշկովո գյուղում: Սկզբնական կրթությունը ստանալով Սմոլենսկի գիմնազիայում՝ ընդունվել է Մոսկվայի լեռնային ակադեմիա, որն ավարտել է 1927թ.: Նույն թվականին աշխատանքի է անցել Պյատիգորսկում որպես լեռնային ինժեներ-հիդրոերկրաբան: 1931թ. տեղափոխվել է Հայաստան, որտեղ էլ ապրել է մինչև կյանքի վերջը:

1936-1939թթ. Ա.Դեմյոխինը հետախուզական աշխատանքներ է կատարել Ջերմուկում և Դիլիջանում: Նրա հետազոտությունների շնորհիվ ՀԽՍՀ առաջատար առողջարան Արզնին ապահովվել է հանքային բարձրորակ ջրերով, ստացել համամիութենական նշանակություն:

1945թ. «Ջերմուկ» գրքույկի համար Ա.Դեմյոխինն ստացել է երկրաբանահանքաբանական գիտությունների թեկնածուի աստիճան:

Ա.Դեմյոխինը Հայաստանում գիտական երկրաբանության և ինժեներական երկրաբանության հիմնադիրն է, կազմել է Երևանի և Լենինականի (այժմ՝ Գյումրի) կոմպլեքսային երկրաբանական քարտեզները և կատարել միկրո-սեյսմո-շրջանացում: 1937-1950թթ. դասախոսել է ԵՊՀ երկրաբանական ֆակուլտետում: Եղել է երկրաբանական վարչության գլխավոր ինժեներ, 1941-1951թթ.՝ ՀԽՍՀ ԳԱ երկրաբանության ինստիտուտի տնօրեն:

Ա.Դեմյոխինն ուներ հետաքրքրությունների լայն շրջանակ: Արզնի գյուղի մոտ նա առաջինն է գտել պալեոլիթին պատկանող նյութեր, Գեղամա լեռներում՝ էնեոլիթի դարաշրջանի ժայռապատկերներ, իսկ Կարմիր բլուրի տարածքում նրա հայտնաբերած ուրարտական արձանագրության բեկորն առիթ է դարձել այդ կարևոր հնավայրի հնագիտական պեղումների համար:

Ա.Դեմյոխինը պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով և «Աշխատանքային գերազանցության համար» մեդալով:

Վախճանվել է 1953թ. հուվարի 7-ին Երևանում:

ԴԻԼՈՅԱՆ ՎԱԼՏԵՐ ԱՐՏԱՇԵՍԻ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր



Ծնվել է 1930թ. հունիսի 17-ին Նոր Բայազետում (այժմ՝ Գավառ): 1947թ. ընդունվել և 1953-ին ավարտել է ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետը: 1953-1954թթ. ուսանել է Մոսկվայի Մ Լոմոնոսովի անվան պետական համալսարանին առընթեր հասարակագիտական գիտությունների դասախոսների պատրաստման դասընթացներում: 1955-1961թթ. աշխատել է ԽՍՀՄ ԳԼԱՎԼԻՏ-ում: 1962թ. վերադարձել է Երևան և սովորել ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի ասպիրանտուրայում:

1963թ. Վ.Դիլոյանը պաշտպանել է թեկնածուական, 1974-ին՝ դոկտորական ատենախոսություն: 1977թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1963-ից աշխատել է ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտում նախ՝ որպես կրտսեր, ապա՝ ավագ գիտաշխատող:

1971-ից անցել է գիտամանկավարժական աշխատանքի՝ ղեկավարելով Խ.Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտի ընդհանուր պատմության ամբիոնը: 1979թ. տեղափոխվել է ԵՊՀ և մինչև 1998թ. ղեկավարել ընդհանուր պատմության ամբիոնը, այնուհետև եղել նույն ամբիոնի պրոֆեսոր:

Վ.Դիլոյանը հեղինակ է ավելի քան 100 գիտական հոդվածների, մենագրությունների, որոնք նվիրված են միջին դարերի և նոր շրջանի պատմության տարաբնույթ խնդիրներին: Դրանք հրատարակվել են ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն: Հատկապես ուշագրավ են նրա «Լազարյանների հասարակական-քաղաքական գործունեության պատմությունից» (Եր., 1966) և «Արևելյան Հայաստանը 19-րդ դարի առաջին երեսնամյակին և հայ-ռուսական հարաբերությունները» (Եր., 1989) մենագրությունները: Համահեղինակ է ՀԽՍՀ ԳԱ «Հայ ժողովրդի պատմություն» բազմահատորյակի 5-րդ հատորի: Վ.Դիլոյանի թարգմանությամբ հրատարակվել են Ն.Ադոնցի «Հայկական հարցի լուծման շուրջ» (Եր., 1989) աշխատությունը և գեղարվեստական մի քանի վեպ: Համահեղինակ է հանրակրթական դպրոցի «Միջին դարերի պատմություն» (Եր., 2000), «Հայոց պատմությունը համաշխարհային պատմության համատեքստում» (Եր., 2002) դասագրքերի:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 7 ատենախոսություն:

1999թ. Վ.Դիլոյանը պարգևատրվել է «Մովսես Խորենացի» մեդալով:

Վախճանվել է 2005թ. մայիսի 12-ին Երևանում:

ԴՈՒՄԱՆՅԱՆ ՎԱՀՐԱՄ ԺՈՐԱՅԻ

Մաթեմատիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, դոցենտ

Ծնվել է 1962թ. սեպտեմբերի 9-ին Երևանում: 1969-1975թթ. սովորել է Երևանի թիվ 66 միջնակարգ դպրոցում, իսկ 1975-1979թթ.՝ թիվ 3 միջնակարգ դպրոցում: 1984թ. ավարտել է ԵՊՀ կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետը: 1984-1986թթ. եղել է ԽՍՀՄ ԳԱ Վ.Ստեկլովի անվան մաթե-

մատիկական ինստիտուտում (Մոսկվա) ԵՊՀ-ի գործուղված ստաժոր-հետազոտող, 1987-1990թթ.՝ նույն ինստիտուտի ասպիրանտ:

1990թ. Վ.Դումանյանը Մոսկվայում պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 2006-ին նրան շնորհվել է դոցենտի կոչում:

1990-1995թթ. աշխատել է ԵՊՀ մաթեմատիկական մեթոդների և մոդելավորման ամբիոնում որպես ասիստենտ: 1995-ից նույն ամբիոնի դոցենտ է: 1996-2000թթ. եղել է ԵՊՀ ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի դեկանի տեղակալ, 2000-ից նույն ֆակուլտետի դեկանն է:

Հեղինակ է 20 գիտական և մեթոդական աշխատանքների, որոնք վերաբերում են մասնական ածանցյալներով դիֆերենցիալ հավասարումների եզրային խնդիրներին, ոչ ստացիոնար խնդիրների լուծումների կայունացման հարցերին, եզրի մոտ լուծումների վարքին, ֆունկցիոնալ տարածություններին:

1991թ. Վ.Դումանյանը հրավիրվել է Գերմանիա, զեկուցումներով հանդես եկել Թրիրի, Բոննի, Օլդենբուրգի, Դյուսելդորֆի և Սաարբրյուկենի համալսարաններում: Գիտահետազոտական աշխատանք է կատարել Ս.Բանախի անվան Միջազգային մաթեմատիկական կենտրոնում (Լեհաստան, 1998թ.), Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանում (1995թ.) և Թրիրի համալսարանում (Գերմանիա, 1991, 2002, 2006): Զեկուցումներով հանդես է եկել միջազգային մի շարք գիտաժողովներում (ՀՀ, ՌԴ, Գերմանիա, Տաջիկստան):

ԴՈՒՐԳԱՐՅԱՆ ԱՆԱՀԵԼՈ ՀԱԿՈԲԻ

Քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1928թ. փետրվարի 15-ին Վր.ԽՍՀ Բոգդանովկայի շրջանի Գանձա գյուղում: 1945թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը, 1951թ.՝ ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը և որպես ասիստենտ աշխատանքի նշանակվել օրգանական քիմիայի ամբիոնում:

1958թ. Ա.Դուրգարյանը պաշտպանել է թեկնածուական, 1972թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1974թ. նրան

շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Հեղինակ է շուրջ 125 գիտական աշխատանքների ու հեղինակային իրավունքների, «Բարձրամոլեկուլային միացությունների քիմիա» (Եր., 2004) ուսումնական ձեռնարկի:

1960-ականներից զբաղվելով իոնական պոլիմերման և համապոլիմերման հարցերով՝ նա մոնոմերների շարքը համալրել է նոր դասի միացություններով՝ նիտրիլներով: Նրա կողմից արտածվել են ելային խառնուրդի բաղադրությունից համապոլիմերի բաղադրության կախումը և համապոլիմերի մակրոմոլեկուլում մոնոմերային միավորների բաշխումն արտահայտող բանաձևեր, որոնցում հաշվի են առնված տարբեր ռեակցիաների ազդեցությունը: Ա.Դուրգարյանը ճշգրտել է համապոլիմերի բաղադրության Կ.Այվինի արտածած բանաձևը: Նրա արտածած բանաձևերի օգնությամբ քանակական կապ է հաստատվել համապոլիմերի բաղադրության ու լուծիչի կոնցենտրացիայի, ինչպես նաև մոնոմերի հավասարակշռային կոնցենտրացիայի ու լուծիչի կոնցենտրացիայի միջև:

Ա.Դուրգարյանի կողմից սինթեզվել են բազմաթիվ նոր պոլիմերներ, որոնք ունեն իոնափոխանակիչ, կոմպլեքսագոյացնող, կիսահաղորդչային, ֆոտոլյումինեսցենտ հատկություններ:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 4 ատենախոսություն:

ԴՈՒՐԳԱՐՅԱՆ ԱՐՇԱԿ ՀԱԿՈԲԻ

Ֆիզիկոս,
Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր



Ծնվել է 1923թ. հոկտեմբերի 1-ին Վր.ԽՍՀ Բոգդանովկայի շրջանի Գանձա գյուղում: Սկզբնական կրթություն ստանալուց հետո 1938թ. ընդունվել է Թբիլիսիի մանկավարժական ուսումնարան և ավարտել այն 1941թ.: Նույն տարում զորակոչվել է բանակ, մասնակցել Հայրենական մեծ պատերազմին և 1943թ. վիրավորվելով՝ զորացրվել: Մեկ տարի աշխատել է Գանձայի միջնակարգ դպրոցում որպես մաթեմատիկայի և ֆիզիկայի ուսուցիչ:

1949թ. Ա.Դուրգարյանն ավարտել է ԵՊՀ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը և աշխատանքի անցել համալսարանում որպես ասիստենտ: 1958թ. ավարտել է Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի ասպիրանտուրան, պաշտպանել թեկնածուական ատենախոսություն, ապա աշխատել է ԵՊՀ ընդհանուր ֆիզիկայի ամբիոնում որպես ավագ դասախոս, 1961-ից՝ դոցենտ, 1964-ից՝ նույն ամբիոնի վարիչ: 1968թ. տեղափոխվել է պինդ մարմնի ֆիզիկայի ամբիոն: 1972-1975թթ. եղել է ֆիզիկայի ֆակուլտետի դեկանի տեղակալ: 1983թ. Մոսկվայում պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1984թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1987-ից մինչև կյանքի վերջը եղել է պինդ մարմնի ֆիզիկայի ամբիոնի վարիչ:

Ա.Դուրգարյանը ստեղծել է բյուրեղներում ուլտրաձայնի կլանման ուսումնասիրման բաղադրիչ ձողի՝ ներկայումս դասական համարվող մեթոդը, հայտնագործել բյուրեղների՝ դիսլոկացիաներով պայմանավորված միկրոպլաստիկության երևույթը գերմանիումի և սիլիցիումի բյուրեղներում, ինչպես նաև դրանցում ֆոտոձայնային երևույթը, բացահայտել դիսլոկացիաների թռիչքաձև շարժման օրինաչափությունները, հայտնագործել ուլտրաձայնի դիսլոկացիոն կլանման սպեկտրը՝ սկզբնավորելով սպեկտրադիտման նոր ուղղություն:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 4 ատենախոսություն:

Ա.Դուրգարյանը պարգևատրվել է Հայրենական պատերազմի II աստիճանի շքանշանով, մարտական մեդալներով և ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատվոգրով:

Վախճանվել է 1989թ. սեպտեմբերի 27-ին Երևանում:

ԵԶԵԿՅԱՆ ԼԵՎՈՆ ԿՈՐՅՈՒՆԻ

Լեզվաբան,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1941թ. հունիսի 13-ին Լվովում: 1958թ. ավարտել է Վ.ԽՍՀ Բոդդանովկայի շրջանի Գոնդուրայի միջնակարգ դպրոցը, 1965թ.՝ ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժինը:

1970-1974թթ. աշխատել է ԵՊՀ բանասիրության ֆակուլտետում որպես դեկանի տեղակալ:

1971թ. պաշտպանել է թեկնածուական, 1990թ. դոկտորական ատենախոսություն: 1975թ. նրան շնորհվել է դոցենտի, 1991թ. պրոֆեսորի կոչում: 1991-ից հայոց լեզվի ամբիոնի վարիչն է:

Լ.Եզեկյանի աշխատանքները վերաբերում են հայոց լեզվի տեսության, ոճագիտության, խոսքի մշակույթի հիմունքների և թարգմանության տեսության հարցերին:

Առավել կարևոր են «Րաֆֆու ստեղծագործությունների լեզուն և ոճը» (Եր., 1975), «Հրանտ Մաթևոսյանի խոսքարվեստի մի քանի հարցեր» (Եր., 1986), «Գրական աշխարհաբարը և արևելահայ պատմվածքի լեզուն» (Եր., 1990) մենագրությունները, «Հայոց լեզվի ոճագիտություն» (Եր., 2003) և «Հայոց լեզու» (Եր., 2005) բուհական դասագրքերը:

Լ.Եզեկյանի ղեկավարությամբ և խորհրդատվությամբ պաշտպանվել է թեկնածուական 18 և դոկտորական 2 ատենախոսություն:

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ (ԱՐՏՈ) ՄԻՔԱՅԵԼԻ

Հասարակական-քաղաքական գործիչ,
պատմական գիտությունների դոկտոր,
ՀԽՍՀ կուլտուրայի վաստակավոր գործիչ

Ծնվել է 1899թ. հունիսի 23-ին Ջալալօղլիում (այժմ՝ Ստեփանավան): Տեղի ծխական դպրոցն ավարտելուց հետո ուսումնառությունը շարունակել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, որն ավարտել է 1919թ.:

1923-1925թթ. սովորել է Անդրկովկասյան կոմունիստական համալսարանում, 1925-1928թթ.՝ Մոսկվայի Կարմիր պրոֆեսուրայի ինստիտուտում:

1928թ. Ա.Եղիազարյանը հրավիրվել է ԵՊՀ և մինչև 1929թ. աշխատել որպես ուսումնական մասի պրոռեկտոր ու քաղաքատնտեսության դասախոս, միաժամանակ եղել ՀԽՍՀ լուսժողկոմի տեղակալ, 1929-1931թթ. լուսժողկոմ:

1931-1933թթ. Ա.Եղիազարյանը ուսումը շարունակել է Կարմիր պրոֆեսուրայի ինստիտուտում: 1934-1936թթ. եղել է լուսժողկոմ, 1956-1961թթ.՝ ՀԽՍՀ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտի, իսկ 1961-ից՝ ԽՄԿԿ Կենտկոմին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական մասնաճյուղի ավագ գիտաշխատող:

1960թ. Ա.Եղիազարյանը պաշտպանել է թեկնածուական, 1969թ.՝ դոկտորական ատենախոսություն:

1928-1936թթ. նա եղել է ՀԿԿ Կենտկոմի անդամ, 1934-1936թթ. ՀԿԿ Կենտկոմի բյուրոյի անդամության թեկնածու, 1928-1936թթ. Հայաստանի և Անդրկովկասյան ֆեդերացիայի Կենտգործկոմի անդամ, 1959-1965թթ.՝ ՀԿԿ վերստուգիչ հանձնաժողովի անդամ:

Ա.Եղիազարյանի գրչին են պատկանում մի շարք աշխատություններ՝ նվիրված կուլտուրական շինարարությանը, ազգային հարցի տեսությանը, սոցիալիստական ազգերի զարգացման օրինաչափություններին:

1961թ. նա արժանացել է ՀԽՍՀ կուլտուրայի վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է Լենինի շքանշանով (1967):

Անհատի պաշտամունքի շրջանում ենթարկվել է հալածանքների, ապա՝ արդարացվել:

Ա.Եղիազարյանը վախճանվել է 1974թ. մարտի 16-ին Երևանում:

ԵՂՈՅԱՆ ՌԱՅԱ ՎԱՀԱՆԻ

Քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1936թ. փետրվարի 22-ին Երևանում: 1953թ. ավարտել է թիվ 44 դպրոցը, 1958թ. ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը և աշխատանքի նշանակվել ՀԽՍՀ ԳԱ նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտում:

1959-ից եղել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի ֆիզիկական քիմիայի ամբիոնի, 1961-1965թթ.՝ ամբիոնին կից լաբորատորիայի ավագ լաբորանտ, 1965թ.՝ ամբիոնի ասիստենտ: 1965-ից դասախոսական աշխատանքի հետ համատեղ զբաղվում է գիտական գործունեությամբ: 2000-ից ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի պրոֆեսոր է:

1975թ. Ռ.Եղոյանը պաշտպանել է թեկնածուական, 1998թ. դոկտորական ատենախոսություն: 1978թ. նրան շնորհվել է դոցենտի, 2003թ. պրոֆեսորի կոչում:

Ռ.Եղոյանը հեղինակ է շուրջ 70 գիտական հոդվածների, 2 հեղինակային իրավունքի և 5 ուսումնամեթոդական աշխատանքների:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 2 ատենախոսություն:

ԵՆԳՈՅԱՆ ՓԱՅԼԱԿ ԻՍԱՀԱԿԻ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1921թ. մայիսի 9-ին Արթիկի շրջանի Ղոլղաթ (այժմ՝ Գեղանիստ) գյուղում: Ավարտելով ութնամյա դպրոցը՝ ուսումը շարունակել է Լենինականի (այժմ՝ Գյումրի) թիվ 10 միջնակարգ դպրոցում: 1939թ. ընդունվել է ԵՊՀ պատմության ֆակուլտետ: 1941թ. գործուղվել է Մոսկվայի ռազմաքաղաքական դպրոց, որն ավարտել և մեկնել է ռազմաճակատ: 1944թ. հոկտեմբերին ծանր վիրավորվել է: Ապաքինվելուց հետո վերադարձել է ռազմաճակատ և որպես քաղաշխատող մասնակցել պատերազմական գործողություններին մինչև 1945թ. մայիսը:

1946թ. Փ.Ենգոյանը ուսումը շարունակել է ԵՊՀ-ում: 1948թ. ավարտել է պատմության ֆակուլտետը և ընդունվել ասպիրանտուրա: 1952թ. պաշտպանել է թեկնածուական, 1967-ին՝ դոկտորական ատենախոսություն: 1956թ. նրան շնորհվել է դոցենտի, 1970-ին՝ պրոֆեսորի կոչում:

1951-ից Փ.Ենգոյանն աշխատել է ԵՊՀ ԽՄԿԿ պատմության ամբիոնում՝ վարելով ասիստենտի, դոցենտի, իսկ 1970-ից մինչև կյանքի վերջը՝ ամբիոնի վարիչի պաշտոններ:

Մանկավարժական աշխատանքին զուգընթաց՝ նա զբաղվել է նաև գիտական գործունեությամբ: Հեղինակ է հինգ տասնյակից ավելի աշխատությունների, այդ թվում՝ «Հայաստանի ինդուստրացման մասին» (Եր., 1958), «Հայաստանը ինդուստրացման ուղիով (1926-1958)» (Եր., 1967), «Բոլշևիկների ստրատեգիան և տակտիկան Հոկտեմբերյան հեղափոխության ժամանակաշրջանում» (Եր., 1973), «Երևանի համալսարանը Մեծ հայրենականի տարիներին» (Եր., 1975), «Բոլշևիկյան կուսակցության ստրատեգիան և տակտիկան օտարերկրյա ռազմական ինտերվենցիայի և քաղաքացիական պատերազմի ժամանակաշրջանում» (Եր., 1979) գրքերի:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 10 ատենախոսություն:

Փ.Ենգոյանը եղել է ԵՊՀ կուսկոմի առաջին քարտուղար, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր, ՀԿԿ Երևանի քաղաքային կոմիտեի անդամ:

Պարգևատրվել է «Կարմիր աստղ» շքանշանով և մեդալներով:

Վախճանվել է 1978թ. դեկտեմբերի 12-ին Երևանում:

ԵՍԱՅԱՆ ԱՂԱՍԻ ԱՐՇԱԿԻ

Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1914թ. օգոստոսի 25-ին Դիլիջանի շրջանի Շամախյան գյուղում: Սկսել է աշխատել փոքր հասակից՝ բանվոր, ցրիչ, հեռագրիչ, գործավար, վիճակագիր-տնտեսագետ, իրավախորհրդատու: Առանց աշխատանքից կտրվելու Ա.Եսայանն ստացել է տարրական, միջնակարգ ու բարձրագույն կրթություն: 1939թ. ընդունվել է Համամիութենական հեռակա իրավաբանական ինստիտուտ, 1941թ. փոխադրվել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ, որն ավարտել է 1943թ.:

Ա.Եսայանն այնուհետև գործուղվել է Մոսկվա՝ սովորելու ԽՍՀՄ արտաքին գործերի նախարարության բարձրագույն դպրոցում: 1947թ. ավարտելով դիվանագիտական դպրոցը՝ աշխատանքի է նշանակվել նախ՝ ԽՍՀՄ, ապա՝ ՀԽՍՀ արտգործնախարարությունում, որտեղ մինչև 1951թ. վարել է կցորդի և 2-րդ

քարտուղարի պաշտոններ:

1948թ. Ա.Եսայանը Մոսկվայում պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1949թ. աշխատանքի է անցել ԵՊՀ-ում որպես ավագ դասախոս, ապա՝ դոցենտ: 1957-1965թթ. եղել է իրավագիտության ֆակուլտետի դեկան:

1962թ. նա Մոսկվայում պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1964թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1963-1971թթ. Ա.Եսայանը եղել է ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության, իսկ 1971-1981թթ.՝ պետական իրավունքի, սովետական շինարարության և միջազգային իրավունքի ամբիոնի վարիչ:

Հեղինակ է շուրջ 40 աշխատության, որոնցից առավել կարևոր են՝ «Հայկական հարցը և միջազգային դիվանագիտությունը» (Եր., 1965), «Հայաստանի միջազգային-իրավական դրությունը (1920-1922թթ.)» (Եր., 1967), «Սովետական քաղաքացիության մի քանի հարցեր», «Իրավասուբյեկտության և իրավահաջորդության մի քանի հարցեր միջազգային իրավունքի տեսության մեջ», «Դիվանագիտության և արտաքին հարաբերությունների մարմինները» (Եր., 1968) մենագրությունները:

1965թ. Ա.Եսայանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է մի շարք մեդալներով և ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատվոգրով:

Վախճանվել է 1983թ. հուլիսի 8-ին Երևանում:

ԵՍԱՅԱՆ ԱՐԱՄ ՄԻՔԱՅԵԼԻ

Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1891թ. մայիսի 23-ին Երևանում: Տեղի արական գիմնազիան ավարտելուց հետո 1914-1918թթ. իրավաբանական բարձրագույն կրթություն է ստացել Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան համալսարանում: 1918թ. վերադարձել է Երևան, որտեղ վարել է մի շարք պատասխանատու պաշտոններ՝ ՀԽՍՀ Գերագույն հեղափոխական տրիբունալի քննիչ, հեղափոխական տրիբունալի նախագահ, գերագույն դատարանի անդամ, սոցիալական ապահովության, մատակարարման, արդարադատության ժողկոմատների պատասխանատու աշխատող:

1926թ. Ա.Եսայանը հրավիրվել և մինչև կյանքի վերջը դասավանդել է ԵՊՀ-ում: 1945թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1947թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Նա քսան տարի անընդմեջ ղեկավարել է համալսարանի քաղաքացիական իրավունքի ամբիոնը, երկար տարիներ գլխավորել ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության իրավաբանական բաժինը:

Ա.Եսայանը հայ իրավագիտությունը հարստացրել է «Մուլքադարական իրավունքը Հայաստանում» (Եր. 1948), «Գյուղացիական ծխի ունեցվածքի ժառանգման հարցերի մասին», «Հեղինակային իրավունք», «Սովետական Հայաստանի առաջին հինգ տարիների քաղաքացիական օրենսդրության պատմություն» և այլ աշխատություններով:

Վախճանվել է 1957թ. սեպտեմբերի 14-ին Երևանում:

ԵՍԱՅԱՆ ԶԱՊԵԼ ՄԿՐՏՉԻ

Գրող, հրապարակախոս, գրականագետ

Ծնվել է 1878թ. փետրվարի 5-ին Կ.Պոլսի Սկյուտար թաղամասում: Նախնական կրթությունը ստացել է տեղի Ս.Խաչ վարժարանում: 1895թ. վերջերին տեղափոխվել է Փարիզ և աշխատակցել է Գվիդոն Լուսինյանի ֆրանսերեն-հայերեն բառարանին՝ իբրև սրբագրիչ և խմբագիրներից մեկը, միաժամանակ Սորբոնի համալսարանում լսել գրականության դասընթացներ: Փարիզում նա մտերմացել է հայ մտավորականների մի լայն շրջանակի հետ Արշակ Չոպանյան, Երվանդ Օտյան, Էդգար Շահին, Սիամանթո և ուրիշներ:

1909թ. Կիլիկիայի հայերի ջարդից անմիջապես հետո նա Պոլսի Հայոց պատրիարքարանի հանձնախմբի կազմում մեկնել է դեպքերի վայր, ականատես եղել ազգակիցների ողբերգությանը և իր տպավորությունները ներկայացրել «Ավերակներու մեջ» (Կ.Պոլիս, 1911) գրքում:

Հայոց Մեծ եղեռնի տարիներին Միջին Արևելքի երկրներում Զ.Եսայանը կազմակերպել է հայ տարագիրների և որբերի հավաքման, նրանց խնամքի ու տեղափոխման գործը: Այդ շրջանում էլ նա գրել է «Վերջին բաժակը» (Փարիզ, 1916), «Հոգիս աքսորյալ» (Վիեննա, 1922) վիպակները, որոնցում իր վճռական բողոքն է արտահայտել հայոց ազգային մեծ ողբերգության առիթով:

Զ.Եսայանը ֆրանսիական և այլ երկրների պարբերականներում տարբեր լեզուներով հրատարակել է հայոց Մեծ եղեռնի

մասին բազմաթիվ հոդվածներ, մի շարք նովելներ, պատմվածքներ և ակնարկներ: Երկար ժամանակ եղել է Հայաստանի օգնության կոմիտեի Փարիզի մասնաճյուղի անդամ և աշխատակցել Փարիզում լույս տեսնող «Երևան» թերթին:

Զ.Եսայանի լավագույն ստեղծագործություններից են «Նահանջող ուժերը» (Եր., 1926), «Պրոմեթեոս ազատագրված» (Մարսել, 1927), «Սիլիհտարի պարտեզները» (Եր., 1935), «Մուրադի ճամփորդությունը» (Եր., 1990) գործերը:

1933թ. խորհրդային կառավարության հրավերով Զ.Եսայանը եկել է Երևան և աշխատանքի անցել ԵՊՀ արտասահմանյան գրականության ամբիոնում՝ վարելով եվրոպական և մասնավորապես ֆրանսիական գրականության դասընթացը:

Զ.Եսայանը 1930-ականների գրական կյանքի եռանդուն ու աղնիվ մասնակիցներից էր, խորությամբ հասկանում էր տիրող մթնոլորտի ողբերգական հետևանքները և համարձակորեն պաշտպանում էր Ե.Չարենցին, Ա.Բակունցին և գրականության մյուս առաջատարներին: Ստոր մատնությունների զոհ դարձավ, բանտարկվեց ու աքսորվեց, կրեց անլուր տառապանքներ...

Զ.Եսայանի գործունեությունն ընդհատվեց 1937թ., կյանքը՝ ավելի ուշ 1943-ին Բաքվի բանտում:

ԽՍՀՄ զինվորական կոլեգիան, որ շատերի հետ կայացրել էր Զ.Եսայանի մահավճիռը, 1957թ. հետմահու արդարացրեց նրան՝ ճանաչելով անմեղ:

ԵՍԱՅԱՆ ԼԵՎՈՆ ԳԱՐԵԳԻՆԻ

Կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀԽՍՀ բարձրագույն դպրոցի վաստակավոր գործիչ

Ծնվել է 1930թ. հուլիսի 16-ին Երևանում: 1948թ. ավարտել է Երևանի Խ.Աբովյանի անվան միջնակարգ դպրոցը, 1954թ. ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետը:

1954-ից Լ.Եսայանն աշխատանքի է ընդունվել նույն բուհում, սկզբում որպես ասիստենտ, ապա՝ ավագ դասախոս և դոցենտ:

1962-1964թթ. նա եղել է ԵՊՀ երեկոյան և հեռակա ուսուցման աշխատանքների գծով պրոռեկտոր:

1968թ. Լ.Եսայանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1969թ. նրան շնորհվել է դոցենտի կոչում: 1970թ. ընտրվել է ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի ադրոքիմիայի և հողագիտության ամբիոնի վարիչ:

1972-ից մինչև կյանքի վերջը նա եղել է ԵՊՀ բնագիտական ֆակուլտետների ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր: Մեծ է նրա ավանդը ԵՊՀ ուսումնական գործի կազմակերպման ու ղեկավարման գործում:

Լ.Եսայանը հեղինակ է ավելի քան 50 գիտական հոդվածների: Նա տվել է Արարատյան դաշտի ոռոգման ջրերի ագրոքիմիական բնութագիրը:

Եղել է երքաղխորհրդի պատգամավոր, ՀԿԿ Մյասնիկյանի շրջկոմի անդամ:

1981թ. Լ.Եսայանն արժանացել է ՀԽՍՀ բարձրագույն դպրոցի վաստակավոր գործչի կոչման:

Վախճանվել է 1984թ. դեկտեմբերի 18-ին Երևանում:

ԵՍԱՅԱՆ ՍՏԵՓԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ

Հնագետ,
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1929թ. նոյեմբերի 21-ին Երևանում: 1948թ. ավարտել է Երևանի թիվ 8 դպրոցը, 1953թ.՝ ԵՊՀ պատմության ֆակուլտետը: 1953-1956թթ. աշխատել է Երևանի էքսկուրսիոն վարչությունում: 1956-1959թթ. եղել է Հայաստանի պատմության պետական թանգարանի գիտաշխատող, 1959-1983թթ. ՀԽՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող, 1983-2001թթ. ԵՊՀ հնագիտության ամբիոնի վարիչ, իսկ 2001-2006թթ.՝ նույն ամբիոնի պրոֆեսոր:

1962թ. Ստ.Եսայանը պաշտպանել է թեկնածուական, 1974թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1989-ին նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Դեռևս ուսանողական տարիներից մասնակցել է Կարմիր բլուրի (1949-1967), Դվինի (1950-1959), Լճաշենի (1956-1959) պեղումներին: Ինքնուրույն արշավախումբ է գլխավորել Իջևան-Տավուշի (1960-1971), Այգևանի (1971-1987), Օշականի (1984) պեղումների ժամանակ:

Երկարամյա պեղումների արդյունքներն ամփոփված են նրա 150-ից ավելի հոդվածներում և ութ մենագրություններում: Դրանցից առավել կարևոր են «Հին Հայաստանի զենքը և ռազմական գործը» (ռուս., Եր., 1966), «Հյուսիսարևելյան Հայաստանի հնագույն ցեղերի մշակույթը» (Եր., 1976), «Հին Հայաստանի քանդակը» (Եր., 1980), «Հին Հայաստանի բրոն-

զե դոտինները» (գերմ., Մյունխեն, 1985), «Հին Հայաստանի սպառազինությունը» (ռուս., Եր., 1986), «Օշական I» (համահեղինակ, ռուս., Եր., 1988) աշխատությունները:

Ստ.Եսայանը բազմիցս մասնակցել է հանրապետական, համամիութենական և միջազգային գիտաժողովների:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 8 ատենախոսություն:

Վախճանվել է 2006թ. հունիսի 30-ին Երևանում:

ԵՐԵՄՅԱՆ ՍՈՒՐԵՆ ՏԻԳՐԱՆԻ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1908թ. ապրիլի 10-ին Թիֆլիսում: 1936թ. ավարտել է ԵՊՀ պատմագրական ֆակուլտետը: 1936-1938թթ. սովորել է ԽՍՀՄ ԳԱ արևելագիտության ինստիտուտի Լենինգրադի բաժանմունքի ասպիրանտուրայում և պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1938-1941թթ. եղել է նույն ինստիտուտի ավագ գիտաշխատող:

1941թ. Ս.Երեմյանը տեղափոխվել է Երևան և աշխատանքի անցել ԽՍՀՄ ԳԱ Հայկական բաժանմունքի (Արմֆան) պատմության և նյութական մշակույթի ինստիտուտում որպես գիտքարտուղար, իսկ 1941-1942թթ.՝ տնօրենի պաշտոնակատար:

1941-1956թթ. նա համատեղությամբ դասավանդել է ԵՊՀ-ում, Խ.Աբովյանի անվան մանկավարժական և Վ.Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների ինստիտուտներում: 1942թ. եղել է ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, 1945-1964թթ. ղեկավարել ինստիտուտի Հայաստանի հին և միջին դարերի պատմության բաժինը: 1953-1958թթ. նույն ինստիտուտի տնօրենն էր, իսկ 1971-1992թթ. հին Հայաստանի պատմության բաժնի վարիչը:

1953թ. Ս.Երեմյանը Մոսկվայում պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1955թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1953թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1963-ին՝ ակադեմիկոս, իսկ 1965-1968թթ. ՀԽՍՀ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար:

Ս.Երեմյանը հեղինակ կամ համահեղինակ է «Հայ ժողովր-

դի պատմություն» ակադեմիական հրատարակության Ա հատորի (Եր., 1951), «Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի» (Եր., 1963) մենագրության, «Հայ ժողովրդի պատմություն» ակադեմիական 8-հատորյակի առաջին երկու հատորների (Եր., 1971, 1984): "Очерки истории СССР" (М., 1958) գրքում նա գրել է Հայաստանի և Աղվանքի VI-VII դդ. պատմությանը նվիրված բաժինները: Հեղինակ է 1963թ. լույս տեսած ՀԽՍՀ ատլասի շուրջ մեկ տասնյակ պատմական քարտեզների:

Նա եղել է "Вестник древней истории" միութենական հանդեսի, «Հայկական սովետական հանրագիտարան»-ի խմբագրական խորհուրդների անդամ:

1961թ. Ս.Երեմյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման, 1985-ին՝ ՀԽՍՀ Պետական մրցանակի: Պարգևատրվել է Հոկտեմբերյան հեղափոխության, Աշխատանքային կարմիր դրոշի, «Պատվո նշան» շքանշաններով:

Վախճանվել է 1992թ. դեկտեմբերի 17-ին Երևանում:

ԵՐԶՆԿՅԱՆ ԵԼԵՆԱ ԼԵՎՈՆԻ

Բանասիրական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր

Ծնվել է 1953թ. հունիսի 5-ին Երևանում: 1970թ. ավարտել է Երևանի թիվ 55 միջնակարգ դպրոցը, 1975թ. ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի անգլիական բաժինը և ընդունվել ԵՊՀ ասպիրանտուրա, ապա գործուղվել Մոսկվայի Մ.Թորեզի անվան օտար լեզուների պետական մանկավարժական ինստիտուտ:

1979թ. Ե.Երզնկյանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1984թ. նրան շնորհվել է դոցենտի, 2009թ. պրոֆեսորի կոչում:

1979-ից աշխատում է ԵՊՀ օտար լեզուների ամբիոնում որպես դասախոս, 1982-ից դոցենտ, 1993-ից՝ անգլերեն լեզվի թիվ 2 ամբիոնի վարիչ:

Հեղինակ է ավելի քան 100 գիտական աշխատանքների, որոնք նվիրված են լեզվաբանության, մասնավորապես բառագիտության և իմաստաբանության արդի խնդիրներին, ինչպես նաև գիտելիքների գնահատման և թեստավորման հարցերին:

Կարևորագույն աշխատություններն են՝ "Дейктическая семантика слова" (Ер., 1988) մենագրությունը և "A Book in Reading Comprehension -1, 2, 3" (Yerevan, 1995, 1996, 2000)

ուսումնական ձեռնարկը:

Համահեղինակ է "Armenian-English Dictionary" (50000 բառ և բառակապակցություն)" (Yerevan, 2002, 2006) բառարանի:

ԵՐԻՑՅԱՆ ԽՈՐԵՆ ԱՀԱՐՈՆԻ

Գյուղատնտեսական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ

Ծնվել է 1882թ. հունվարի 15-ին Սանահին գյուղում: Նախնական կրթությունն ստացել է Թիֆլիսի Արղությանի գիշերօթիկ դպրոցում, այնուհետև՝ 1900թ., ավարտել է Թիֆլիսի այգեգործական դպրոցը և մինչև 1906թ. աշխատել Անդրկովկասի տարբեր հիմնարկություններում: 1906-1909թթ. սովորել է Լայպցիգի գյուղատնտեսական ինստիտուտում:

1909-1910թթ. Խ.Երիցյանը Թավրիզի Հայկական կենտրոնական դպրոցի տնօրենն էր: 1910-1918թթ. Թիֆլիսում վարել է տարբեր պաշտոններ գյուղատնտեսության բնագավառում: 1918թ. աշխատանքի է անցել Գանձակում որպես գավառական գյուղատնտես, ապա նշանակվել Երևանի հողագործության գլխավոր վարչության գլխավոր գյուղատնտես, այնուհետև մինչև 1928թ.՝ հողագործության ժողովրդական կոմիսարիատի հողբաժնի վարիչ:

1923թ. Խ.Երիցյանը հրավիրվել է ԵՊՀ, նշանակվել անասնաբուծության ամբիոնի վարիչ: Մինչև կենսաթոշակի անցնելը դասախոսել է ԵՊՀ-ում, Երևանի գյուղատնտեսական ինստիտուտում և այլ բուհերում:

1929թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում, իսկ 1937թ., առանց ատենախոսության պաշտպանության՝ գյուղատնտեսական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

1945թ. Խ.Երիցյանը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, նույն թվականին ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ:

Նա արժեքավոր ուսումնասիրություններ է կատարել գյուղատնտեսական կենդանիների արոտային շրջանի, մատղաշների աճեցման, կերերի նախապատրաստման և անասնաբուծության բնագավառի այլ գործնական հարցերի շուրջ: Հեղինակ է բազմաթիվ գիտական աշխատությունների, գիտահանրամատչելի գրքերի և ձեռնարկների:

1944թ. Խ.Երիցյանը պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով:

Վախճանվել է 1956թ. մայիսի 5-ին Երևանում:

ԵՐԻՑՅԱՆ ՀՈՄԵՐՈՍ ՍՈՒՐԵՆԻ

Ֆիզիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1938թ. հունիսի 12-ին Սանահին գյուղում: 1955թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը, 1961թ.՝ ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետը:

1961թ. աշխատել է ՀԽՍՀ ԳԱ ֆիզիկայի ինստիտուտում, 1962-ից՝ ՀԽՍՀ ԳԱ կենտրոնական գիտահետազոտական ֆիզիկատեխնիկական լաբորատորիայում որպես ավագ տեխնիկ-լաբորանտ, 1968-1970թթ. ՀԽՍՀ ԳԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտում որպես կրտսեր գիտաշխատող:

1970թ. Հ.Երիցյանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և աշխատանքի անցել ԵՊՀ-ում որպես ավագ դասախոս, 1975-ից՝ դոցենտ:

1991թ. նա պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, նույն թվականին նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Հ.Երիցյանը հեղինակ է գիրոտրոպ միջավայրերի էլեկտրադինամիկային վերաբերող ավելի քան 90 գիտական հոդվածների և "Оптика гиротропных сред и холестерических жидких кристалов" (Ер., 1988) մենագրության:

Կանխատեսել է օպտիկական անշրջելիությունը գիրոտրոպ միջավայրերում և ալիքային վեկտորների մակերևույթների բացության հնարավորությունը բացասական բաղադրիչ պարունակող դիէլեկտրական տենզորով նկարագրվող միջավայրերում: Գիտական աշխատանքները նվիրված են այդ երկու տիպի միջավայրերի օպտիկայի կառուցմանը:

Հեղինակ է նաև ֆիզիկայի դասավանդման մեթոդիկային վերաբերող մի շարք հոդվածների ու ձեռնարկների: Զբաղվում է նաև թարգմանչական աշխատանքով, հրատարակել է «Հոգու թռիչք» (Եր., 2002) խորագրով բանաստեղծությունների ժողովածուն:

ԶԱՐՅԱՆ ԿՈՍՏԱՆ ՔՐԻՍՏԱՓՈՐԻ

Հայ դասական գրող, հրապարակախոս, մանկավարժ



Ծնվել է 1885թ. փետրվարի 2-ին Շամախիում: Միջնակարգ կրթությունն ստացել է Փարիզում: 1901թ. ավարտելով դպրոցը՝ վերադարձել է Անդրկովկաս: 1905-1910թթ. սովորել է Բրյուսելի համալսարանում, մասնագիտացել գրականության և փիլիսոփայության գծով: Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին մեկնել է Կ.Պոլիս, որտեղ Դ.Վարուժանի և Հ.Օշականի հետ հիմնել է «Մեհյան» հանդեսը:

1914թ. հոկտեմբերին Կ.Զարյանն ընտանիքով հեռացել է Կ.Պոլսից և հաստատվել Իտալիայում: 1920թ. կրկին վերադարձել է Կ.Պոլիս և 1922թ. հիմնել «Բարձրավանք» հանդեսը:

1922թ. Կ.Զարյանը տեղափոխվել է Երևան, աշխատանքի անցել ԵՊՀ-ում՝ դասավանդելով եվրոպական գրականությունների բաղդատական պատմություն: 1924թ. մեկնել է Եվրոպա. սկսել է աստանդական կյանքի մի երկարատև շրջան (եվրոպական երկրներ, Միացյալ Նահանգներ, Մերձավոր Արևելք): Տարբեր վայրերում հրատարակել է հանդեսներ, համալսարաններում դասավանդել է հայագիտություն:

1962թ. ընտանիքով կրկին վերադարձել է Հայաստան: Պաշտոնավարել է Ե.Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում որպես ավագ գիտաշխատող, մասնակցել է գրական կյանքին, իր խորհուրդներով օգնել երիտասարդ գրողներին ու գրականագետներին:

Իր առաջին բանաստեղծությունները Կ.Զարյանը գրել է ֆրանսերեն և ռուսերեն: 1913թ. Հռոմում լույս է տեսել նրա անդրանիկ գիրքը «Երեք երգեր...» խորագրով պոեմը իտալերեն թարգմանությամբ, 1922թ. Կ.Պոլսում՝ հայերեն առաջին բանաստեղծական ժողովածուն «Օրերի պսակը»: Կ.Զարյանի կարևոր ստեղծագործություններից են՝ «Բանկոսոլը և մամութի ոսկորները», «Նավը լերան վրա» (Բոստոն, 1943, Եր., 1963, Վենետիկ, 1998) վեպերը, «Անցորդը և իր ճամբան»

հուշագրությունը, «Երկրներ և աստվածներ» էսսեների շարքը, «Տատրագոմի հարսը» (Եր., 1965) պոեմը և չափածո ու արձակ ուրիշ գործեր, գեղագիտության և գրականության վերաբերյալ բազմաթիվ հոդվածներ:

Կ.Զարյանը վախճանվել է 1969թ. դեկտեմբերի 11-ին Երևանում:

ԶԱՔԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ ԵԳՈՐԻ

Կենսաֆիզիկոս,
կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1937թ. փետրվարի 18-ին Ապարանի շրջանի Եղիպատրուշ գյուղում: 1955թ. ավարտել է Շահումյանի շրջանի Դավթաշեն գյուղի միջնակարգ դպրոցը: Նույն տարում ընդունվել է ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետ և 3-րդ կուրսից գործուղվել սովորելու Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի կենսաֆիզիկայի բաժանմունքում, որն ավարտել է 1964թ.: 1964-1967թթ. սովորել է նույն բուհի ասպիրանտուրայում:

1967թ. Ա.Զաքարյանը պաշտպանել է թեկնածուական, 1995թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1977թ. նրան շնորհվել է դոցենտի, 2003-ին՝ պրոֆեսորի կոչում:

1968-ից աշխատում է ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի կենսաֆիզիկայի ամբիոնում:

Ա.Զաքարյանը հեղինակ է «Ազատ ռադիկալային գործընթացների և թաղանթային կառույցների կենսաֆիզիկա» (Եր., 2003) ուսումնական ձեռնարկի, համահեղինակ՝ "Advances in Planar Lipid Bilayers and Liposomes" (New York-Amsterdam, 2005) մենագրության և շուրջ 150 գիտական հոդվածների, որոնք վերաբերում են ազատ ռադիկալային և հակաօքսիդանտային պրոցեսներին, ինչպես նաև արհեստական թաղանթներին: Այդ հետազոտությունների հիման վրա առաջ է քաշվել քիմիալյումինեսցենտային եղանակով կենսահամակարգերում ազատ ռադիկալային և հակաօքսիդանտային պրոցեսների ուսումնասիրման վերաբերյալ նոր սկզբունք:

Ա.Զաքարյանի ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 4 ատենախոսություն:

ԶԱՔԱՐՅԱՆ ՍԵՅՐԱՆ ԱՐՏՈՒՇԱՅԻ

Փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1958թ. հոկտեմբերի 6-ին Կապանում: 1975թ. ավարտել է տեղի թիվ 27 դիշերօթիկ դպրոցը, 1977-1979թթ. ծառայել է խորհրդային բանակում: 1984թ. ավարտել է ԵՊՀ փիլիսոփայության և սոցիոլոգիայի ֆակուլտետը: 1988թ. Ս.Զաքարյանը պաշտպանել է թեկնածուական, 2000թ. դոկտորական ատենախոսություն: 1992թ. նրան շնորհվել է դոցենտի, 2005թ. պրոֆեսորի կոչում:

1987-1992թթ. աշխատել է ԵՊՀ փիլիսոփայության պատմության ամբիոնում որպես ասիստենտ, 1992-2004թթ. դոցենտ, 2001-ից փիլիսոփայության պատմության ամբիոնի վարիչն է:

Ս.Զաքարյանը հեղինակ է ավելի քան 50 գիտական հոդվածների և մի շարք գրքերի, որոնցից առավել կարևոր են. «Հայ իմաստասերներ (Գրիգոր Տաթևացի)» (Եր., 1998), «Մարդու հիմնահարցը 13-15-րդ դարերի հայ փիլիսոփայության մեջ» (Եր., 1999), «Փիլիսոփայության պատմություն» (Եր., 2000, 2007), «Գարեգին Նժդեհ (փիլիսոփայական ճեպանկար)» (Եր., 2001), «Հայկական Վերածննդի հարցը (մեթոդաբանական վերլուծություն)» (Եր., 2006) մենագրությունները հիմնականում նվիրված հայ փիլիսոփայության և մշակույթի պատմությանը:

Ս.Զաքարյանի ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 3 ատենախոսություն:

ԶԱՔԱՐՅԱՆ ՎԱՆԻԿ ՍՈՒՐԵՆԻ

Մաթեմատիկոս,
Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
ՀՀ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վաստակավոր գործիչ

Ծնվել է 1936թ. մարտի 21-ին Մեղրիում: 1954թ. ավարտել է Երևանի թիվ 40 միջնակարգ դպրոցը, 1959թ. ԵՊՀ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը: 1959-1962թթ. սովորել է ԵՊՀ ասպիրանտուրայում: 1963թ. Վ.Զաքարյանը պաշտպանել է թեկնածուական, 1976թ. դոկտորական ատենախո-

սություն: 1970թ. նրան շնորհվել է դոցենտի, 1979թ.՝ պրոֆեսորի կոչում: 1990թ. Վ.Զաքարյանն ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1996թ.՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս:

1962-1965թթ Վ.Զաքարյանն աշխատել է ԵՊՀ բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնում որպես ասիստենտ: 1965-1970թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ մաթեմատիկայի և մեխանիկայի ինստիտուտի գիտաշխատող: 1970-1971թթ. ղեկավարել է ԵՊՄԻ մաթեմատիկական անալիզի ամբիոնը, իսկ 1971-1977թթ. եղել նույն ինստիտուտի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր: 1977-ից ԵՊԻ մաթեմատիկայի ամբիոնի վարիչն է:

Վ.Զաքարյանի գիտական աշխատանքները վերաբերում են մերոմորֆ ֆունկցիաների եզրային արժեքների, դրանց աճի գնահատականների ուսումնասիրմանը: Նա հեղինակ է ավելի քան 100 գիտական հոդվածների, համահեղինակ «Միավոր շրջանում մերոմորֆ ֆունկցիաների դասեր և նրանց եզրային արժեքներ» (ռուս., Մ., 1993) մենագրության:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 11 ատենախոսություն:

Մեծ է Վ.Զաքարյանի ներդրումը Հայաստանում շախմատի զարգացման ասպարեզում, որի համար 2003թ. նա արժանացել է ՀՀ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վաստակավոր գործչի կոչման: 1993-2004թթ. եղել է Հայաստանի շախմատի ֆեդերացիայի նախագահ:

Վ.Զաքարյանը պարգևատրվել է «Մովսես Խորենացի» (1999) և «Անանիա Շիրակացի» (2003) մեդալներով:

ԶՈԼՅԱՆ ՍՈՒՐԵՆ ՏԻԳՐԱՆԻ

Լեզվաբան,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1955թ. ապրիլի 16-ին Երևանում: 1972թ. ավարտել է Երևանի թիվ 8 միջնակարգ դպրոցը, 1977թ՝ ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի ռուսաց լեզվի և գրականության բաժինը:

1982թ. Ս.Զոլյանը պաշտպանել է թեկնածուական, 1989թ. դոկտորական ատենախոսություն: 1983թ. նրան շնորհվել է դոցենտի, 1990թ. պրոֆեսորի կոչում:

1977թ. աշխատել է ԵՊՀ-ում որպես ավագ լաբորանտ,

1979թ. դասախոս, 1983թ. դոցենտ, 1988-1992թթ. ռուսաց լեզվի (արտասահմանցի ուսանողների և ասպիրանտների համար) ամբիոնի վարիչ:

1990թ. Ս.Զոլյանն ընտրվել է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր, մինչև 1995թ. եղել Արցախի հարցերի հատուկ հանձնաժողովի քարտուղար: 1995-1997թթ. ԵՊՀ ընդհանուր լեզվաբանության և ռուսաց լեզվի ամբիոնների պրոֆեսոր էր, 1998-ից՝ Եվրախորհրդի լեզվական հարցերի հանձնաժողովի ազգային համակարգող, 2001թ.՝ Եվրախորհրդի ժամանակակից լեզուների եվրոպական կենտրոնի կառավարող մարմնի անդամ, իսկ 2003-ից՝ նաև Եվրախորհրդի փոքրամասնությունների կամ տարածաշրջանային լեզուների խարտիայի ԵԽ փորձագետների կոմիտեի անդամ:

1997-ից Ս.Զոլյանը Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի ռեկտորն է:

Հեղինակ է 126 գիտական հոդվածների և մի քանի մենագրությունների, որոնցից առավել կարևոր են "О соотношении языкового и поэтического смыслов" (Ер., 1985), "Шаракан. Из армянской поэзии V-XVвв." (Ер., 1990), "Семантика и структура поэтического текста" (Ер., 1991), "Нагорный Карабах-проблема и конфликт" (Ер., 2001), "Семантика и поэтика поэтического перевода-заметки об армянской поэзии в зеркале русских переводов" (Ер., 2007) աշխատությունները:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 3 ատենախոսություն:

2004թ. Ս.Զոլյանը պարգևատրվել է Իտալիայի Հանրապետության «Իտալիայի հետ համերաշխության աստղ» շքանշանով:



ԶՈՀՐԱԲՅԱՆ ԷԴԻԿ ԱՐՏԵՄԻ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1939թ. մայիսի 5-ին Ղափանի շրջանի Բաղաբուրջ գյուղում: 1956թ. ավարտել է Ղափանի թիվ 1 միջնակարգ դպրոցը: 1956-1959թթ. սովորել է Երևանի լեռնամետալուրգիական տեխնիկումում: 1959-1962թթ. ծառայել է բանակում: 1967թ. ավարտել է ԵՊՀ պատմության ֆակուլտետը: 1973թ.

պաշտպանել է թեկնածուական, 1987թ. դոկտորական ատենախոսություն: 1978թ. նրան շնորհվել է դոցենտի, 1988-ին պրոֆեսորի կոչում:

1968 թվականից աշխատում է ԵՊՀ-ում: 1969-1974թթ. եղել է ԽՄԿԿ պատմության ամբիոնի ասիստենտ, 1974-1978թթ.՝ ավագ դասախոս, 1978-1988թթ.՝ դոցենտ, 1988-1993թթ. քաղաքական պատմության ամբիոնի պրոֆեսոր, 1993-2000թթ. միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի վարիչ, 1998-2008թթ՝ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դեկան: 2008-ից միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի վարիչն է:

Է.Զոհրաբյանի գործուն մասնակցությամբ կազմավորվել է ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնը, ինչպես նաև միջազգային հարաբերությունների ֆակուլտետը: Առանձնապես մեծ է նրա ներդրումը Հայաստանի միջազգային հարաբերությունների և հայ դիվանագիտության պատմության վերաբերյալ մի շարք դասընթացների ստեղծման և ծրագրերի մշակման գործում:

Է.Զոհրաբյանի ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 20 ատենախոսություն:

Նա հեղինակ է ավելի քան վեց տասնյակ հոդվածների, 6 մենագրության: Պատմագիտության մեջ լուրջ ներդրում են «Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները (1920-1922)» (Եր., 1979), «Սովետական Ռուսաստանը և հայ-իրանական հարաբերությունները (1920-1922)» (Եր., 1985), «1920թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները» (Եր., 1997), «Ազգամիջյան կռիվները Երևանի նահանգում 1918թ.» (Եր., 2000), «Նախիջևանյան հիմնահարցը և Հայաստանի «դաշնակիցները» (1918-1920)» (Եր., 2002) մենագրությունները:

ԶՈՐՑԱՆ ՀԱԿՈԲ ՆՇԱՆԻ

Տնտեսագետ, պատմաբան,
փիլիսոփայության դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1894թ. օգոստոսի 25-ին Տրապիզոնի նահանգի Օրդու գյուղաքաղաքում: 1900-1908թթ. սովորել է ծննդավայրի, իսկ 1908-1912թթ. Կ.Պոլսի Պերպերյան վարժարանում,

1919-1920թթ. Լոզանի (Շվեյցարիա) համալսարանի փիլիսոփայության, իսկ 1920-1925թթ. Բեռլինի համալսարանի քաղաքատնտեսության ֆակուլտետում, մասնագիտացել սոցիոլոգիայի, քաղաքատնտեսության, փիլիսոփայության ու պատմագիտության մեջ:

Հ.Զորյանը Ս.Թեհլերյանի հետ գործուն մասնակցություն է ունեցել Թալեաթ փաշայի սպանությանը (1921թ. մարտի 15-ին): Ուսանողության տարիներին մասնակցել է Գերմանիայի ուսանողական սոցիալիստական շարժմանը, մասնակցել ՀՕԿ-ի և նշանավոր հայասեր Յոհաննես Լեփսիուսի «Գերմանահայկական ընկերության» աշխատանքներին:

1925թ. Հ.Զորյանը Բեռլինի համալսարանում պաշտպանել է ատենախոսություն և ստացել փիլիսոփայության դոկտորի աստիճան: 1926թ. ընտրվել է ՀԽՍՀ գիտության և արվեստի ինստիտուտի թղթակից անդամ, 1931թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1925թ. աշնանը Հ.Զորյանը հրավիրվել է ԵՊՀ և մինչև 1937թ. այստեղ դասավանդել հայ ժողովրդի պատմություն և քաղաքատնտեսություն: 1929-1937թթ. եղել է հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչ, 1931-1937թթ.՝ պատմության ֆակուլտետի դեկան: 1927-1929թթ. համատեղությամբ վարել է նաև Հանրային գրադարանի, 1932-1935թթ.՝ Կուլտուրայի պատմության ինստիտուտի և 1936-1937թթ. Հայաստանի պատմության պետական թանգարանի տնօրենի պաշտոնները: Գործուն մասնակցություն է ունեցել մարքսիստ-պատմաբանների հանրապետական ընկերության ստեղծման (1928) աշխատանքներին, եղել նրա առաջին նախագահը: Զգալի է նրա ավանդը պատմաբան մասնագետների պատրաստման գործում:

Հ.Զորյանի ուսումնասիրությունները վերաբերում են հին և միջնադարյան Հայաստանի հասարակական-տնտեսական պատմությանը: Նրա գիտական պատկառելի ժառանգության մեջ առանձնակի արժեք ունեն «Ֆեոդալական Հայաստանի գյուղացիական շարժումները X դարում» (Եր., 1928), «Ներդասակարգային պայքարը Հայ Արշակունիների թագավորության վերջին շրջանում» (Եր., 1936), «Արտաշատի, Վաղարշապատի և Դվինի պրոբլեմը» (Եր., 1935), «Արաբների հարկային քաղաքականությունը ավատատիրական Հայաստանում» (Եր., 1927), «Արաբական շրջանում ֆեոդալական Հայաստանի քաղաքի և գյուղի միջև ստեղծված հակադրությունը» (Եր., 1927-1928) և այլն:

1937թ. Հ.Զորյանը անհիմն մեղադրանքներով ենթարկվել է բռնաճնշումների և ձերբակալվել:

Վախճանվել է 1942թ. բանտում: Արդարացվել է հետմահու:

ԶՈՒԲՅԱՆ ԳԵՎՈՐԳ ԴԱՎԹԻ

Աշխարհագրագետ-օդերևութաբան,
աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1912թ. սեպտեմբերի 1-ին Երևանում: 1929թ. միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո աշխատանքի է անցել Գորիսի շրջանի Տաթև գյուղի դպրոցում որպես մաթեմատիկայի և աշխարհագրության ուսուցիչ:

1932թ. Գ.Զուբյանն ընդունվել և 1937թ. ավարտել է Մոսկվայի հիդրոօդերևութաբանական ինստիտուտը: 1937-1962թթ. աշխատել է Սամարայում, ապա՝ Մոսկվայում՝ եղանակի կանխատեսումների կենտրոնական ինստիտուտում որպես օդերևութաբան, բաժնի վարիչ: Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին:

1946թ. Գ.Զուբյանը պաշտպանել է թեկնածուական, 1956թ. դոկտորական ատենախոսություն: 1962թ. աշխատանքի է անցել ՀԽՍՀ ԳԱ աշխարհագրության բաժնում: 1965թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1964-1977թթ. ղեկավարել է ԵՊՀ ֆիզիկական աշխարհագրության ամբիոնը, 1977-1981թթ. աշխատել նույն ամբիոնի պրոֆեսորի պաշտոնում:

Գ.Զուբյանը հեղինակ է չորս տասնյակից ավելի գիտական աշխատությունների, որոնք նվիրված են եղանակի կանխատեսումների տեսական և կիրառական հիմնահարցերին: Ունենալով երկար տարիների գիտապրակտիկ փորձ՝ նա եղել է ԽՍՀՄ-ում ճանաչված օդերևութաբան:

Գ.Զուբյանը գիտական վերլուծություններ է կատարել հատկապես ստրատոսֆերայում և տրոպոսֆերայում ընթացող գլոբալ դինամիկ պրոցեսների բացահայտման ուղղությամբ: Նա խորապես ուսումնասիրել է բևեռային և մերձարևադարձային օդային զանգվածների, ցիկլոնների, անտիցիկլոնների, մթնոլորտային ճակատների ձևավորման առանձնահատկությունները, հիմնավորել դրանց շարժման օրինաչա-

փությունները և կանխատեսման մեթոդները: Նրա մի շարք աշխատություններ թարգմանվել են անգլերեն, ֆրանսերեն, չինարեն, ճապոներեն, բուլղարերեն: Հատկապես կիրառական մեծ արժեք են ներկայացնում օդերևութաբանական վերլուծությունների ժամանակ մթնոլորտային ճնշման տեղագրական քարտեզների օգտագործման նրա մշակած մեթոդները, որոնք մտել են ԽՍՀՄ «Եղանակի կարճաժամկետ կանխատեսումներ» ձեռնարկի մեջ:

Առանձնապես արժեքավոր է Գ.Զուբյանի «Հայաստանի մթնոլորտի մասին» (Եր., 1969) աշխատությունը, որն էական նշանակություն ունի հյուսիսային կիսագնդի բարեխառն և մերձարևադարձային գոտիների աէրոկլիմայագիտական ռեժիմի բնութագրումների համար:

Մեծ է նրա վաստակը օդերևութաբանության և սինոպտիկայի բնագավառի բարձրորակ մասնագետների պատրաստման գործում:

Գ.Զուբյանի խմբագրությամբ հրատարակվել են ԽՍՀՄ եղանակի կանխատեսումների կենտրոնական ինստիտուտի բազմաթիվ գիտական աշխատություններ և սինոպտիկական օդերևութաբանությանը նվիրված մենագրություններ, ուսումնական և մեթոդական ձեռնարկներ: Երկար տարիներ եղել է ԽՍՀՄ-ում միակ «Օդերևութաբանություն և ջրաբանություն» մասնագիտական ամսագրի խմբագրական խորհրդի անդամ:

1970թ. Գ.Զուբյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման:

Վախճանվել է 1981թ. օգոստոսի 16-ին Երևանում:

ԶՈՒՐԱԲՅԱՆ ՍԱՐԳԻՍ ՇԱՐԲԱԹԻ

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1902թ. նոյեմբերի 15-ին Նոյեմբերյանի շրջանի Ղալաչա (այժմ՝ Բերդավան) գյուղում: 1913թ. տեղափոխվել է Թիֆլիս և ընդունվել Ներսիսյան դպրոց:

1922 թվականից անցել է գիտամանկավարժական գործունեության ԽՍՀՄ տարբեր քաղաքներում: 1938-1940թթ. Ս.Զուրաբյանը եղել է ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի դեկան:

Նա մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին, որի ավարտից հետո կրկին անցել է գիտամանկավարժական աշխատանքի:

1951թ. Ս.Զուրաբյանը Մոսկվայում պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: Նույն տարում նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1969 թվականից մինչև կյանքի վերջն աշխատել է ԵՊՀ-ում որպես քաղաքատնտեսության ամբիոնի պրոֆեսոր:

Հեղինակ է գիտական բազմաթիվ աշխատությունների՝ հոդվածներ, գրքույկներ, գրքեր, այդ թվում՝ «Մ.Նալբանդյանի սոցիալ-տնտեսագիտական հայացքները» (Եր., 1940), «Հայ տնտեսագիտական մտքի զարգացման ուրվագծեր» (Եր. 1959), «Կապիտալիզմի բնույթի փոփոխման առասպելը» (Եր., 1960), «Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսության զարգացումը 50 տարում» (Եր., 1971):

1965թ. Ս.Զուրաբյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման:

Վախճանվել է 1982թ. դեկտեմբերի 1-ին Երևանում:

1997 թվականից ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան քաղաքի նախակրթարանը կոչվում է «Սարգիս Զուրաբյան վարժարան»:

ԷԴԻԼՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ ՄԵՍՐՈՊԻ

Փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1885թ. դեկտեմբերի 25-ին Քարվանսարայում (այժմ՝ Իջևան): Սովորել է տեղի թեմական դպրոցում, 1896-ին ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը: 1896-1903թթ. սովորել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: 1904թ. մեկնել է Եվրոպա, սովորել Ենայի և Լայպցիգի (Գերմանիա), ապա և Բեռնի (Շվեյցարիա) համալսարաններում:

1909թ. Գ.Էդիլյանը պաշտպանել է ատենախոսություն և ստացել փիլիսոփայական գիտությունների դոկտորի աստիճան: 1912թ. նրա ատենախոսությունը «Քննադատություն Ցիլլերի ձևական աստիճանների» խորագրով, հայերեն տպագրվել է Էջմիածնում՝ մեծ համբավ ու ճանաչում բերելով հեղինակին նաև հայկական միջավայրում: Մանկավարժական գործունեությունն սկսել է Գևորգյան ճեմարանում, որտեղ աշխատել է 1909-1914թթ., այնուհետև մինչև 1919թ. աշխատել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում:

1920թ. Գ.Էդիլյանը հրավիրվել է ԵՊՀ որպես դասախոս, իսկ 1921թ. նշանակվել մանկավարժական ֆակուլտետի դեկան: 1934թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1934-1937թթ. աշխատել է Հայկական մանկավարժական ինստիտուտում:

Հայոց մեծ Եղեռնի օրերին Գ.Էդիլյանը ծավալել է ազգանվեր բուռն գործունեություն: 1916թ. նա ստանձնել է Կովկասի գաղթականական որբանոցների տեսչի պաշտոնը, կազմակերպել անապաստան երեխաների կրթության ու դաստիարակության գործը: Ընդհանուր մանկավարժական հոգեբանության, դասավանդման մեթոդիկայի ուսումնական ծրագրերի ու ձեռնարկների ստեղծման հետ միասին նա զբաղվել է նաև գեղարվեստական երկի հոգեբանական վերլուծության, դատական հոգեբանության, ինչպես նաև հայկական տառատեսակների ու դրանց դյուրընթեռնելիության հարցերով:

Գ.Էդիլյանը հեղինակ է հոդեբանությանը, մանկավարժությանը, մայրենի լեզվի դասավանդման մեթոդիկային, մանկավարժական մտքի պատմությանը, հայ գրականության պատմությանը, նոր ու նորագույն գրականությանը վերաբերող 100-ից ավելի գիտական հոդվածների և մի շարք արժեքավոր դրքերի, որոնցից առավել կարևորներն են՝ «Դասավանդման ձևեր» (Վաղարշապատ, 1913), «Դասավանդման խնդիրներ» (Էջմիածին, 1914), «Հայոց լեզվի մեթոդիկա» (Թիֆլիս, 1923), «Ձեռագրի ուսուցման մեթոդիկա» (Եր., 1927), «Լեզվի մեթոդիկա» (Եր., 1930), «Հոգեբանության ուրվագծեր» (Եր., 1958) աշխատությունները:

Գ.Էդիլյանի գործունեությունը ընդհատվեց 1937թ.: Նա ևս դարձավ ստալինյան բռնաճնշումների զոհը:

Վախճանվել է 1942թ. հունվարի 18-ին Օմսկում: Արդարացվել է հետմահու:

ԷԴՈՅԱՆ ՀԵՆՐԻԿ ԱՆՏՈՆԻ

Գրականագետ, բանաստեղծ,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1940թ. օգոստոսի 31-ին Երևանում: 1957թ. ավարտել է Երևանի թիվ 39 միջնակարգ դպրոցը, մինչև 1962թ. ծառայել է խորհրդային բանակում: 1967թ. ավարտել է ԵՊՀ բանասիրության ֆակուլտետը, 1970թ. ԽՍՀՄ ԳԱ Մոսկվայի Մ.Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտի ասպիրանտուրան: 1971 թվականից աշխատում է ԵՊՀ-ում որպես գիտաշխատող, 1973 թվականից՝ դասախոս:

1974թ. Հ.Էդոյանը պաշտպանել է թեկնածուական, 1990թ. դոկտորական ատենախոսություն: 1979թ. նրան շնորհվել է դոցենտի, 1991թ. պրոֆեսորի կոչում: 1986-2008թթ. եղել է ԵՊՀ արտասահմանյան գրականության և գրականության տեսության ամբիոնի վարիչ:

Հեղինակ է 60-ից ավելի գիտական աշխատանքների:

Հ.Էդոյանը մասնակցել է միջազգային մի շարք դիտաժողովների, դասախոսություններ կարդացել ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Գերմանիայում: 1995-1996թթ. դասավանդել է Բեյրութի Հայագիտական բարձրագույն հիմնարկությունում և Հայկազյան համալսարանում:

Հ.Էդոյանի ղեկավարությամբ պաշտպանվել է ավելի քան 20 թեկնածուական ատենախոսություն:

1960-ականներից սկսած՝ բանաստեղծություններ է հրատարակել հանրապետական և միութենական հանդեսներում, գրական անթոլոգիաներում: Հեղինակ է «Անդրադարձումներ» (Եր., 1977), «Քայլեր և ստվերներ» (Բեյրութ, 1996), «Հետգրություն» (Եր., 2001), «Երեք օր առանց ժամանակի» (Եր., 2005) ժողովածուների, «Եղիշե Չարենցի պոետիկան» (Եր., 1986) մենագրության:

Հ.Էդոյանի ստեղծագործությունները թարգմանվել են բազմաթիվ լեզուներով՝ անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իտալերեն, իսպաներեն և այլն:

Հ.Էդոյանի թարգմանությամբ լույս են տեսել «Ոսկե լոտոս» (Եր., 1980), «Հին Արևելքի պոեզիա» (Եր., 1982), «Մեռյալների գիրք» (Եր., 2004), «Աստվածների ժամանակը» (Եր., 2007) ժողովածուները:

1975-ից Հ.Էդոյանը գրողների միության անդամ է, 2005թ. արժանացել է ՀՀ Նախագահի մրցանակի:



ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՎՌԱՄՇԱՊՈՒՀ ՍԱՄՍՈՆԻ

Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՌԽՖՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1900թ. հոկտեմբերի 2-ին Նախիջևանի Օրդուբադի շրջանի Վերին Ագուլիս գյուղում: Ծննդավայրում նախնական կրթություն ստանալուց հետո մինչև 1914թ. սովորել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, ապա՝ Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, որն ավարտել է 1920թ.: Աշխատել է Թիֆլիսի տարբեր գերատեսչություններում: 1922թ. դրծուղվել է Մոսկվա, ընդունվել Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի հասարակական գիտությունների ֆակուլտետի իրավաբանական բաժին, որն ավարտել է 1925թ.: Այնուհետև ընդունվել է ԽՍՀՄ ԳԱ ասպիրանտուրա՝ ուսումը զուգակցելով աշխատանքի հետ. սկզբում եղել է ՌԽՖՍՀ Գերագույն դատարանի կոդիֆիկացիոն մասի, ապա՝ քաղաքացիական խորհրդատու, հետո՝ արդարադատության ժողկոմի խորհրդատու, ժողկոմատի բաժնի վարիչ:

Երկար տարիներ պատասխանատու պաշտոններ է վարել դատախազական մարմինների համակարգում. ԽՍՀՄ գլխավոր դատախազին առընթեր դատախազ, ԽՍՀՄ դատախազության բողոքների բաժնի պետ, անչափահասների գործերով խմբի պետ, ընդհանուր հսկողության բաժնի դատախազ: 1948-1949թթ. նա ՀԽՍՀ դատախազն էր:

1927-ից Վ.Թադևոսյանը դասախոսել է Մոսկվայի պետական համալսարանի իրավաբանության ֆակուլտետում, Մոսկվայի իրավաբանության ինստիտուտում, ռազմաիրավաբանության ակադեմիայում, Մոսկվայի այլ բուհերում, 1948-1949թթ.՝ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում: Նա է մշակել իրավաբանական բուհերում դասավանդվող «Դատախազական հսկողությունը ԽՍՀՄ-ում» դասընթացը, գրել դասընթացի դասագիրքը և առաջին անգամ դասավանդել այն ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում:

1947թ. Վ.Թադևոսյանը՝ որպես ԽՍՀՄ-ի կողմից գլխավոր

մեղադրողի օգնական, Տոկիոյում մասնակցել է ճապոնական գլխավոր զինվորական հանցագործների դատավարությանը: Հետպատերազմյան տարիներին նա աշխատել է ԽՍՀՄ ԳԱ պետության և իրավունքի ինստիտուտում որպես քաղաքացիական իրավունքի և դատավարության սեկտորի վարիչ, ապա՝ ինստիտուտի տնօրենի տեղակալ: 1974-ից մինչև կյանքի վերջը եղել է նույն ինստիտուտի ավագ գիտաշխատող-խորհրդատու:

1948թ. Վ.Թադևոսյանը պաշտպանել է թեկնածուական, 1958-ին՝ դոկտորական ատենախոսություն: 1962թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Հեղինակ է ավելի քան 100 գիտական հոդվածների, մենագրությունների, որոնցից առավել կարևորներն են «Ամուսնության և ընտանիքի մասին նոր օրենսդրությունը» (ռուս., Մ., 1972), «Անչափահասների իրավունքների պահպանությունը» (ռուս., Մ., 1974), «Ընտանիքը և օրենքը» (ռուս., Մ., 1974), «Երիտասարդների քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները» (ռուս., Մ., 1974):

Վ.Թադևոսյանը բազմիցս մասնակցել է միջազգային գիտաժողովների, հանդես եկել զեկուցումներով Հունգարիայում, Ռումինիայում, Չեխոսլովակիայում, Լեհաստանում, Հարավսլավիայում, Ֆրանսիայում, Բելգիայում և այլ երկրներում:

Նրա ղեկավարությամբ ատենախոսություններ են պաշտպանել մեկ տասնյակից ավելի ասպիրանտներ:

1974թ. Վ.Թադևոսյանն արժանացել է ՌԽՖՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման:

Վախճանվել է 1979թ. օգոստոսի 18-ին Մոսկվայում:

ԹԱԹՈՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ

Բանասեր, դոցենտ,
ՈՒԿՐ.ԽՍՀ մշակույթի վաստակավոր գործիչ

Ծնվել է 1922թ. մարտի 17-ին Ուկրաինայի Սլավյանսկ քաղաքում: Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո զորակոչվել է բանակ, մասնակցել Հայրենական մեծ պատերազմին: 1943թ. ծանր վիրավորվել և 1944թ. օգոստոսին հաշմանդամության պատճառով զորացրվել է:

1949թ. Գ.Թաթոսյանն ավարտել է ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի ռուսաց լեզվի և գրականության բաժինը և ըն-

դունվել ասպիրանտուրա: Ոչ մեծ ընդմիջումներով դասավանդել է ԵՊՀ ռուսաց լեզվի ամբիոնում: 1957թ. եղել է ավագ դասախոս, 1962-1968թթ.՝ օտարերկրյա քաղաքացիների նախապատրաստական ֆակուլտետի ռուսաց լեզվի ամբիոնի վարիչ, իսկ 1967թ. մինչև կյանքի վերջը՝ ռուս գրականության ամբիոնի դոցենտ:

Մանկավարժական գործունեության հետ մեկտեղ Գ.Թաթոսյանն զբաղվել է գիտական աշխատանքով. հեղինակ է բազմաթիվ գիտական, գրական-քննադատական հոդվածների: Նրա գիտական հետաքրքրությունների մեջ առանձնահատուկ տեղ է գրավել Վ.Բրյուսովի թարգմանչական գործունեությունը: Նա մեծ եռանդ է ներդրել ինչպես հայ պոետների ստեղծագործությունների (Ավ.Իսահակյան (1970), Ե.Չարենց (1973), Սայաթ-Նովա (1989)) ռուսերեն ժողովածուները, այնպես էլ հայ գրականագետների (Ա.Սիմոնովա (1965), Տ.Հախումյան (1956)) գրական-քննադատական երկերի ժողովածուները կազմելու և խմբագրելու գործում:

Գ.Թաթոսյանը լուրջ վաստակ ունի հայ-ուկրաինական մշակութային կապերի զարգացման գործում: Այդ տեսակետից բացառիկ արժեք ունեն «Սովետահայ պոեզիա» (ուկր., Կիև, 1980), «Հայ դասական պոեզիա» (ուկր., Կիև, 1988) ժողովածուները, որոնք կազմել, խմբագրել և ծանոթագրել է Վ.Կոչևսկու հետ:

1977թ. Գ.Թաթոսյանն արժանացել է Ուկր.ԽՍՀ մշակույթի վաստակավոր գործչի կոչման:

Վախճանվել է 2000թ. օգոստոսին Երևանում:

ԹԱԼԱԼՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ

Մաթեմատիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Ծնվել է 1928թ. սեպտեմբերի 22-ին Ախուրյանի շրջանի Գետք գյուղում: 1946թ. ավարտել է Լենինականի (այժմ՝ Գյումրի) թիվ 7 միջնակարգ դպրոցը, 1951թ.՝ ԵՊՀ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը: 1952-1956թթ. սովորել է ԽՍՀՄ ԳԱ Մոսկվայի Վ.Ստեկլովի անվան մաթեմատիկայի

ինստիտուտի ասպիրանտուրայում:

1956թ. Ա.Թալալյանը պաշտպանել է թեկնածուական, իսկ 1962թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1958թ. նրան շնորհվել է դոցենտի, իսկ 1965-ին՝ պրոֆեսորի կոչում: Նույն թվականին նա ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, իսկ 1994թ.՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս:

1956-1971թթ. Ա.Թալալյանն աշխատել է ՀԽՍՀ ԳԱ մաթեմատիկայի և մեխանիկայի ինստիտուտում որպես գիտաշխատող, 1971-ից ՀԽՍՀ ԳԱ մաթեմատիկայի ինստիտուտի հիմնադրման օրից, ղեկավարել է այդ ինստիտուտի իրական անալիզի բաժինը, 1991-1996թթ.՝ եղել է նույն ինստիտուտի տնօրեն:

Ա.Թալալյանը ԵՊՀ-ում դասավանդել է 1956-ից: 1966-1968թթ., 1970-1973թթ. և 1988-1991թթ. եղել է ԵՊՀ մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետի դեկան և ղեկավարել մաթեմատիկական անալիզի ամբիոնը: Նրա նախաձեռնությամբ ստեղծվել է կիրառական մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետը, բացվել են նոր ամբիոններ: Նա պատրաստել է գիտության տասնյակից ավելի թեկնածուներ:

Ա.Թալալյանի գիտական գործունեության հիմնական ուղղություններն են՝ օրթոգոնալ համակարգեր, բազիսներ, ներկայացման և միակության հարցեր ըստ եռանկյունաչափական, Հաարի և Ուոլշի համակարգերի: Նա հեղինակ է շուրջ 60 գիտական հոդվածների:

2003թ. պարգևատրվել է «Անանիա Շիրակացի» մեդալով:

ԹԱԽՏԱՋՅԱՆ ԱՐՄԵՆ ԼԵՈՆԻ

Բուսաբան,
կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ԽՍՀՄ ԳԱ և ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1910թ. հունիսի 10-ին Շուշիում: 1929-1930թթ. սովորել է ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետում: 1932թ. ավարտել է Թիֆլիսի մերձարևադարձային կուլտուրաների համամիութենական ինստիտուտը:

1932-1935թթ. Ա.Թախտաջյանը եղել է Հայաստանի բնապատմական թանգարանի գիտաշխատող, 1935-1943թթ.

ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի կենսաբանության ինստիտուտի ավագ գիտաշխատող, 1938-1948թթ.՝ ԵՊՀ մորֆոլոգիայի և կարգաբանության ամբիոնի վարիչ, 1943թ. ՀԽՍՀ ԳԱ բուսաբանության ինստիտուտի էվոլյուցիոն մորֆոլոգիայի և հնէաբանության բաժնի վարիչ, 1944-1948թթ. ՀԽՍՀ ԳԱ բուսաբանության ինստիտուտի տնօրեն, բույսերի կարգաբանության և աշխարհագրության բաժնի հիմնադիր, 1949-1961թթ. Լենինգրադի (այժմ՝ Սանկտ Պետերբուրգ) պետական համալսարանի բարձրակարգ բույսերի ամբիոնի պրոֆեսոր, 1951-1954թթ.՝ նույն համալսարանի կենսաբանության և հողագիտության ֆակուլտետի դեկան, 1954-1988թթ.՝ Լենինգրադի Վ.Կոմարովի անվան բուսաբանության ինստիտուտի հնէաբուսաբանության բաժնի վարիչ, 1963-1988թթ.՝ նույն ինստիտուտի բարձրակարգ բույսերի ֆլորայի, կարգաբանության և էվոլյուցիայի բաժնի վարիչ, 1977-1986թթ.՝ նաև Վ.Կոմարովի անվան բուսաբանության ինստիտուտի տնօրեն:

1943թ. Ա.Թախտաջյանը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1944թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1945թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1971թ.՝ ակադեմիկոս, 1966թ.՝ ԽՍՀՄ ԳԱ թղթակից անդամ, 1972-ին՝ ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս:

Ա.Թախտաջյանը հեղինակ է շուրջ 400 աշխատության, այդ թվում՝ 20 մենագրության, որոնք հրատարակվել են աշխարհի տարբեր լեզուներով: Առավել կարևոր են՝ "Высшие растения" (M., 1956), "Die Evolution der Angiospermen" (Yena, 1959), "Система и филогения цветковых растений" (M., 1966), "Flowering Plants: Origin and Dispersal" (Edinburgh, 1969), "Floristic Regions of the World" (California, 1986) և այլն:

Ա.Թախտաջյանի խմբագրությամբ հրատարակվել են "Красная книга СССР", "Жизнь растений" "Флора Армении" և այլ բազմահատոր աշխատություններ ու բազմաթիվ տեղեկագրեր:

Ա.Թախտաջյանը XX դ. մեծագույն բուսաբաններից է և նշանակալի դեր է խաղացել Հայաստանում և Ռուսաստանում բուսաբանական գիտության մի շարք ճյուղերի զարգացման ու կայացման ուղղությամբ:

Նա իրավամբ համարվում է բարձրակարգ բույսերի ֆիլոգենիայի խոշորագույն մասնագետ:

Ա.Թախտաջյանը մի շարք երկրների (ՌԴ, ԱՄՆ,

Գերմանիա, Նորվեգիա և այլն) ակադեմիաների իսկական անդամ է: Նա եղել է "Ботанический журнал" ամսագրի գլխավոր խմբագիր:

Ա.Թախտաջյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի (1967), Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչումների, ԽՍՀՄ Պետական մրցանակի (1981), պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի (1975), ժողովուրդների բարեկամության շքանշաններով, բազմաթիվ մեդալներով և ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատվոգրով (1947):

ԹԱՄԱԶՅԱՆ ԱՂԱՍԻ ԽԱՉԱՏՈՒՐԻ

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր

Ծնվել է 1930թ. հունվարի 20-ին Ալավերդու շրջանի Ճոճկան գյուղում: Սկզբնական կրթությունն ստացել է տեղում և 1947թ. ավարտել է Շնող գյուղի միջնակարգ դպրոցը: 1947-1948թթ. աշխատել է Ճոճկան գյուղի դպրոցի ուսուցիչ: 1953թ. ավարտել է ԵՊՀ պատմության ֆակուլտետը:

1953-1954թթ. Ա.Թամազյանը սովորել է Մոսկվայի դասախոսների պատրաստման մեկամյա դասընթացներում: 1963թ. ընդունվել է ԵՊՀ ասպիրանտուրա:

1967թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1969թ. նրան շնորհվել է դոցենտի, 2007թ. պրոֆեսորի կոչում:

1954-1959թթ. աշխատել է ՀԼԿԵՄ Լենինյան շրջկոմի I քարտուղար, 1959-1963թթ.՝ Երևանի թիվ 18 դպրոցի տնօրեն, 1964-ից՝ ԵՊՀ գիտական կոմունիզմի (այժմ՝ քաղաքագիտության) ամբիոնում:

Ա.Թամազյանը հեղինակ է ավելի քան 60 գիտական հոդվածների, բրոշյուրների և «Վ.Ի.Լենինը սոցիալիստական հեղափոխության օբյեկտիվ նախադրյալների մասին» (Եր., 1966), «Օբյեկտիվը և սուբյեկտիվը հեղափոխական պրոցեսում» (Եր., 1974), «Միջազգային լարվածության թուլացումը և համաշխարհային հեղափոխական պրոցեսի զարգացումը» (Եր., 1977), "XXVI съезд КПСС и некоторые проблемы единства революционных сил" (Ер., 1983), «Համաշխարհային հեղափոխական պրոցեսի շարժիչ ուժերի փոխգործողությունը արդի պայմաններում» (Եր., 1989) մենագրությունների: Համահեղինակ է «Գիտական կոմունիզմ» (Եր., 1966), «Քաղաքա-

գիտության ներածություն» (Եր., 1996), «Քաղաքագիտություն» (Եր., 2006) ուսումնական ձեռնարկների:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 4 ատենախոսություն:

1985թ. պարգևատրվել է «Աշխատանքի վետերան» մեդալով:

ԹԱՄԱՆՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ

ԽՍՀՄ ճարտարապետական ակադեմիայի ակադեմիկոս, ՀԽՍՀ ժողովրդական ճարտարապետ

Ծնվել է 1878թ. մարտի 4-ին Եկատերինոդար (այժմ՝ Կրասնոդար) քաղաքում: Միջնակարգ կրթությունն ստացել է տեղի ռեալական ուսումնարանում: 1898թ. ընդունվել է Սանկտ Պետերբուրգի գեղարվեստների ակադեմիային կից բարձրագույն գեղարվեստական ուսումնարանի ճարտարապետության դասարան, որն ավարտել է 1904թ. ճարտարապետ-նկարչի որակավորմամբ: Ուսման տարիներին Ալ.Թամանյանն ակադեմիայի կողմից բազմիցս գործուղվել է ուսումնասիրելու և չափագրելու Սանկտ Պետերբուրգի և Մոսկվայի ռուսական դասական ճարտարապետության հուշարձանները:

Ալ.Թամանյանի առաջին ինքնուրույն աշխատանքը (1906թ.) կապված է Սանկտ Պետերբուրգի՝ 18-րդ դարի վերջին ճարտարապետ Յու.Ֆելտենի նախագծով կառուցված Հայկական եկեղեցու վերակազմության նախագծի հետ, որի իրականացումը դրսևորեց հեղինակի՝ որպես բարեխիղճ հետազոտողի հատկությունները, նաև նրա արտակարգ նուրբ ճաշակն ու դասական ճարտարապետության խոր իմացությունը:

Ալ.Թամանյանի ստեղծագործական և շինարարական տաղանդն առանձնապես արտահայտվել է Յարոսլավլի տոնավաճառի համակառույցի, կոմս Վ.Կոչուբեյի առանձնատան և իշխան Ս.Շչերբատովի բնակելի տան կառույցներում: Վերջին կառույցը հեղինակին բերել է ոսկե մեդալ և մեծ փառք: 1914թ. Ալ.Թամանյանն ընտրվել է Գեղարվեստների ակադեմիայի ճարտարապետության ակադեմիկոս, իսկ 1917թ. նույն ակադեմիայի նախագահ:

1918թ. վերջին Ալ.Թամանյանը եկել է Հայաստան և նշանակվել Հայաստանի Հանրապետության գլխավոր ճարտարապետի վարչության, Հնության և գեղարվեստից պահպանման

հանձնաժողովի, ինչպես նաև պետական հիմնարկների շենքի կառուցման շինարարական հանձնաժողովի նախագահ: Այդ բոլոր պաշտոնները նա վարել է նաև բոլշևիկների իշխանության հաստատումից հետո (1920թ. դեկտեմբերի 2-ից մինչև 1921թ. փետրվարի 18-ը): Փետրվարյան ապստամբությունից հետո, ապրիլի 22-ին, նա հեռացել է Պարսկաստան, հաստատվել Թավրիզում, որտեղ նկարիչ Հ.Կոջոյանի հետ միասին բացել է գեղարվեստական ստուդիա: Թավրիզի քաղաքապետարանի կողմից որպես ճարտարապետ հրավիրվել է աշխատանքի: Այստեղ նա նախագծել է մի շարք անհատական տներ ու հասարակական շինություններ, գործուն մասնակցություն ունեցել քաղաքի կառուցապատման աշխատանքներին: Հայաստանի բոլշևիկյան կառավարության կրկնակի հրավերից հետո Ալ.Թամանյանը 1923թ. մարտին վերադարձել է Հայաստան:

Երևանում իր գործունեության առաջին տարիներին Ալ.Թամանյանը նախագծել և կառուցել է իտալական Վերածնության շրջանի ճարտարապետական ոճով մի քանի շենք (Ազգային գրադարան, ֆիզիոթերապևտիկ ինստիտուտ և այլն): Այս նույն տարիներին նա զբաղվել է նաև հայկական ճարտարապետության ուսումնասիրությամբ և հուշարձանների պահպանման գործով:

Ուսումնասիրելով Տեկորի, Զվարթնոցի, Անիի և այլ պատմական հուշարձաններ ու ժողովրդական ճարտարապետության նմուշներ՝ Ալ.Թամանյանը կարողացավ գտնել դրանց օգտագործման մեթոդը ժամանակակից պայմաններում: Նա երբեք չկրկնեց հինը, բայց չմերժեց այն՝ պատմական կամուրջ գցելով հայ ժողովրդի անցած շրջանի մշակույթի և նորի միջև: Օգտվելով Տեկորի և Զվարթնոցի ճարտարապետական ծավալատարածական կոմպոզիցիոն լուծումներից և ձևակազմության օրինաչափություններից, հեռու մնալով մեխանիկական ընդօրինակումից՝ նա ստեղծեց կառավարական տան և օպերային թատրոնի ճարտարապետական սյունակարգերը, դրանց հատակագծային և ծավալային ուրույն կոմպոզիցիաները: Ալ.Թամանյանը վերակենդանացրեց հայկական զարդաքանդակի արվեստը՝ նրան հաղորդելով նոր բովանդակություն:

Միշտ մտահոգված լինելով բարձրորակ նախագծող և կառուցող կադրեր ստեղծելու հարցով, նա ճարտարապետական նախագծման դասեր է տվել ԵՊՀ տեխնիկական ֆակուլտետում:

Ալ.Թամանյանի ճարտարապետական հանճարի մեծագույն դրսևորումը եղել ու մնում է Երևանի գլխավոր հատակագծի

ստեղծումը, որի աշխատանքները նա սկսել էր դեռ 1923թ. առաջ և շարունակել մինչև կյանքի վերջը:

Նրա նախագծով է կառուցվել Կառավարական տունը, որի համար ականավոր ճարտարապետը 1942թ. հետմահու արժանացել է ԽՍՀՄ Պետական մրցանակի: Իսկ Երևանի օպերայի և բալետի թատրոնի նախագիծը Փարիզի 1937թ. համաշխարհային ցուցահանդեսում շահել է Մեծ ոսկե մեդալ: Թամանյանի ստեղծագործությունների ազդեցությամբ Հայաստանում ստեղծվել է թամանյանական ճարտարապետական դպրոց: Անգնահատելի է Ալ.Թամանյանի ստեղծագործության նշանակությունը Հայաստանի նորագույն ճարտարապետության կազմավորման և զարգացման գործում:

1926թ. Ալ.Թամանյանն արժանացել է ՀԽՍՀ ժողովրդական ճարտարապետի կոչման:

Վախճանվել է 1936թ. փետրվարի 20-ին Երևանում:

ԹԱՄՐԱԶՅԱՆ ՀՐԱՆՏ ՍՄԲԱՏԻ

Գրականագետ-քննադատ,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ



Ծնվել է 1926թ. սեպտեմբերի 6-ին Իջևանի շրջանի Աչաջուր գյուղում: 1943թ. ավարտել է ծննդավայրի միջնակարգ դպրոցը: 1943-1948թթ. սովորել է ԵՊՀ բանասիրության ֆակուլտետում: 1951թ. ավարտել է ԵՊՀ ասպիրանտուրան:

1952-1955թթ. աշխատել է Հայաստանի պետական հրատարակչությունում որպես ավագ խմբագիր:

1955թ. Հ.Թամրազյանը պաշտպանել է թեկնածուական, 1963թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1964թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1968-1980թթ. նա եղել է ԵՊՀ խորհրդահայ գրականության, իսկ 1980-2001թթ.՝ հայ գրականության ամբիոնի վարիչ:

1986թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1996թ.՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս:

Հեղինակ է ավելի քան 300 գիտական հոդվածների և ուսումնասիրությունների, 40 մենագրության, ուսումնական ձեռնարկների, դպրոցական ու բուհական դասագրքերի:

Նրա «Խմբապետ Շավարշը պատմական դարաշրջանի լույսի տակ» (Եր., 1962) ուսումնասիրությունը նոր հուն բացեց հայ գրականագիտական մտածողության մեջ:

Հ.Թամրազյանը կարևոր դերակատարություն է ունեցել արևմտահայ քնարերգուների, մանավանդ Մեծ եղեռնին զոհ դարձած հայ բանաստեղծների ստեղծագործության արժևորման, ինչպես նաև 1930-ականներին զոհված կամ բռնադատված տաղանդավոր գրողների իրավունքների վերականգնման գործում: Նրա ջանքերով են համալսարանում կազմակերպվել «Չարենցյան ընթերցումներ» գիտական նստաշրջանները, որոնց նյութերը հրապարակվել են համանուն յոթ հատորներում:

Գիտության ասպարեզում ցուցաբերած ծառայությունների, ինչպես նաև 9-րդ դասարանի «Հայ գրականություն» դասագրքի վերամշակված հրատարակության համար 1974թ. նա արժանացել է ՀԽՍՀ Պետական մրցանակի:

Առավել կարևոր մենագրություններն են՝ «Շիրվանզադե. կյանքը և գործը» (Եր., 1961), «Սիամանթո» (Եր., 1964, 1969, 2004), «Հովհաննես Թումանյան. բանաստեղծը և մտածողը» (Եր., 1995), «Հայ քնարերգուներ» (գիրք Ա, Բ, Եր., 1999), «Հայ քննադատություն» գրքի երեք հատորները:

1970թ. Հ.Թամրազյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման, 1986թ. պարգևատրվել է Ժողովուրդների բարեկամության շքանշանով: 1953 թվականից Հ.Թամրազյանը գրողների միության անդամ էր:

Վախճանվել է 2001թ. փետրվարի 9-ին Երևանում:

2006 թվականից Իջևանի շրջանի Աչաջուր գյուղի միջնակարգ դպրոցը կոչվում է Հրանտ Թամրազյանի անունով:

ԹԱՌԱՑԱՆ ՎԵՐԳԻՆԵ ՄԱԿԱՐԻ

Քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1905թ. նոյեմբերի 6-ին Թիֆլիսում: 1924թ. ընդունվել և 1929-ին ավարտել է Թիֆլիսի պետական համալսարանի մանկավարժական ֆակուլտետի քիմիա-դեղագործության բաժինը: 1929-ից աշխատել է Երևանում, ժողտնտխորհի

կենտրոնական քիմիական լաբորատորիայում, որտեղ շուրջ երկու տարի զբաղվել է հանքանյութերի անալիզով:

1933թ. Վ.Թառայանն աշխատել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի ընդհանուր քիմիայի ամբիոնում որպես ասիստենտ, 1935-1938թթ.՝ ԽՍՀՄ ԳԱ Հայկական մասնաճյուղում: 1938թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1939թ. նրան շնորհվել է դոցենտի կոչում:

1938-1942թթ., 1946-1954թթ. և 1962-1977թթ. Վ.Թառայանը եղել է ԵՊՀ վերլուծական քիմիայի ամբիոնի վարիչ, իսկ 1961-1964թթ. քիմիայի ֆակուլտետի դեկան:

Վ.Թառայանը ձեռնարկել է նոր գիտական աշխատանքներ մերկուրոմիացությունների վերականգնող հատկությունների ուսումնասիրության ուղղությամբ, մշակել բազմաթիվ տարրերի և իոնների որոշման նոր եղանակներ, ստեղծել ծավալային անալիզի նոր եղանակ՝ մերկուրոռեդուկտոմետրիան:

1954թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1956թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: Նույն թվականին ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ:

1967-ից Վ.Թառայանը զբաղվել է նաև հազվագյուտ տարրերի, ազնիվ մետաղների միկրոքանակների որոշման լուծահանման-լուսաչափական նոր եղանակների ուսումնասիրությամբ: Առանձին հիշատակման են արժանի նրա աշխատությունները՝ նվիրված հիմնային ներկանյութերի և հետերոպոլիթթուների փոխազդեցության համալիր ուսումնասիրությանը:

Վ.Թառայանը հեղինակ է ավելի քան 200 աշխատության և “Аналитическая химия рения” (Ер., 1966), “Меркуроредуктометрия. Меркуроредуктометрия как редуктометрический метод объемного анализа” (Ер., 1980) մենագրությունների:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է շուրջ 30 թեկնածուական ատենախոսություն:

1965-ից նա ԽՍՀՄ ԳԱ վերլուծական քիմիայի գիտական խորհրդի անդամ էր, գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի նախագահ, «Հայկական սովետական հանրագիտարանի» խորհրդի անդամ:

1961թ. Վ.Թառայանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է «Պատվո նշան» շքանշանով:

Վախճանվել է 1985թ. ապրիլի 16-ին Երևանում:

ԹՈԹՈՎԵՆՑ ՎԱՀԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ

Հայ դասական գրող, հրապարակախոս, մանկավարժ

Ծնվել է 1894թ. հուլիսի 18-ին Արևմտյան Հայաստանի Խարբերդ գավառի Մեղիրե քաղաքում: Նախնական կրթությունն ստացել է Խարբերդի ազգային կենտրոնական վարժարանում: Աշակերտական տարիներին Վ.Թոթովենցը կատարում է գրական առաջին փորձերը, խմբագրում «Աստղիկ» խմորատիպ ամսաթերթը: 1907թ. «Արևելյան մամուլում» տպագրվում է նրա առաջին բանաստեղծությունը, Պոլսում՝ «Ավերակ» (1908) և «Սրինգ» (1909) գրքույկները:

1908թ. թուրքական սահմանադրությունից հետո Թոթովենցն անցել է Եվրոպա, ապա՝ Ամերիկա: Ընդունվել է Վիսքոնսինի համալսարան, որտեղ ունկնդրել է գրականության, փիլիսոփայության, պատմության դասընթացներ:

1915թ. նա եկել է Անդրկովկաս և կամավոր մեկնել ռազմաճակատ. կռվել է Վանում, Էրզրումում: Նա զորավար Անդրանիկի մտերիմներից էր, նրա թիկնապահ-թարգմանիչը:

Պատերազմից հետո Վ.Թոթովենցը մեկնել է Ամերիկա, որտեղ ապրում էին նրա հարազատները: 1922թ. վերադարձել է Հայրենիք և նվիրվել խորհրդահայ մշակույթին: Խմբագրել է «Շեշտ» երգիծական պարբերականը (1923):

1924-1932թթ. Վ.Թոթովենցն աշխատել է ԵՊՀ-ում, մինչև 1928թ. եղել է համալսարանի գիտական քարտուղարը: Դասավանդել է անգլերեն և արտասահմանյան գրականություն:

Նրա կոչումը, սակայն, գրականությունն էր: Նրա առաջին պատմվածքների ու վեպերի նյութն առնված էր Հայրենի Խարբերդից ու ամերիկյան իրականությունից, պատերազմի ընթացքում և Եղեռնի տարիներին հայ ժողովրդի կրած տառապանքներից: Բեղմնավոր էր Թոթովենցի գրիչը խորհրդային տարիներին. մեկուկես տասնամյակի ընթացքում նա գրել է պիեսներ, վեպեր, վիպակներ, տասնյակ պատմվածքներ, ֆելիետոններ, որոնցից առավել ուշագրավ են՝ «Կյանքը հին հռոմեական ճանապարհի վրա» (Եր., 1933, ռուս.՝ 1963, անգլ. 1971) ինքնակենսագրական վեպը, «Հովնաթան որդի Երեմիայի» (Եր., 1934) վիպակը և այլն: Նրա ստեղծագործությունների հիման վրա են նկարահանվել «Սպիտակ անուրջներ» և «Կտոր մը երկինք» գեղարվեստական կինոնկարները:

Վ.Թոթովենցը զոհ դարձավ ստալինյան բռնարարքներին.

բանտարկվել է 1936-ին, 1938-ին գնդակահարվել է: Արդարացվել է հետմահու (1954):

ԹՈՎՄԱՍՅԱՆ ԱՐՇԱԿ ԹՈՎՄԱՍԻ

Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ վաստակավոր իրավաբան

Ծնվել է 1913թ. մայիսի 1-ին Արևմտյան Հայաստանի Բիթլիսի վիլայեթի Սուրբ Խաչ գյուղում: 1915թ. Մեծ եղեռնի հետևանքով հայրենազուրկ դարձած ծնողների հետ Արաբիայի ու Միջագետքի անապատներում, Իրաքում դեգերելուց հետո Ա.Թովմասյանը 1922թ. հաստատվել է Արարատի շրջանի Արարատ գյուղում: Ավարտելով միջնակարգ դպրոցը և Էջմիածնի մանկավարժական տեխնիկումը՝ 1930-1933թթ. աշխատել է Հոկտեմբերյանի դպրոցներում:

1933-1937թթ. Ա.Թովմասյանը սովորել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում: 1937թ. դասախոսական աշխատանքի է անցել նույն ֆակուլտետում, շուրջ կես դար ղեկավարել քրեական իրավունքի ամբիոնը:

1946 թվականից Ա.Թովմասյանը իրավաբանական գիտությունների թեկնածու էր, 1973-ից՝ իրավաբանական գիտությունների դոկտոր: Նույն թվականին նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Հեղինակ է «Սովետական քրեական իրավունք» (Եր., 1988) հինգհատորյա դասագրքի, «Հանցակազմի սուբյեկտիվ կողմը» (Եր., 1964), «Անալոգիան քրեական իրավունքում» (Եր., 1956) ձեռնարկների, «Հին և միջնադարյան հայ քրեական իրավունքը» (երկու հատորով, Եր., 1962, 1977), «Սովետական արդարադատության և սոցիալիստական օրինականության հարցերի շուրջ» (Եր. 1960) մենագրությունների, մի շարք այլ գրքերի, տասնյակ գիտական հոդվածների:

1942-1954թթ. Ա.Թովմասյանը եղել է իրավագիտության ֆակուլտետի դեկան:

Գիտամանկավարժական գործունեությանը զուգահեռ՝ նա մի քանի տարի աշխատել է դատական-դատախազական մարմիններում: Մեծ է նրա ներդրումը քրեական և քրեադատավարական օրենսդրական ակտերի նախագծերի սլաորաստման գործում:

1967թ. Ա.Թովմասյանն արժանացել է ՀԽՍՀ վաստակավոր իրավաբանի կոչման:

Վախճանվել է 1996թ. հուլիսի 20-ին Երևանում:

ԹՈՐԱՄԱՆՅԱՆ ԹՈՐՈՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ

Ճարտարապետ, հնագետ,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1864թ. սեպտեմբերի 18-ին Արևմտյան Հայաստանի Շապին Գարահիսար քաղաքում, որտեղ ստացել է սկզբնական կրթությունը: Վաղ հասակում զրկվելով ծնողներից՝ 1884թ. Թ.Թորամանյանը մեկնել է Կ.Պոլիս և զբաղվել քարգործությամբ ու հյուսնությամբ: Նրան հաջողվել է աշխատանքի անցնել հայտնի ճարտարապետ Սարգիս Պալյանի մոտ և վերջինիս աջակցությամբ 1888-1893թթ. սովորել Կ.Պոլսի Կայսերական գեղարվեստից վարժարանի ճարտարապետական բաժանմունքում:

Մասնագիտական կրթությունն ավարտելուց հետո որպես ճարտարապետ աշխատել է Կ.Պոլսում: 1895թ. Համիդյան ջարդերից մազապուրծ՝ ապաստանել է Բուլղարիայում և 1900թ. տեղափոխվել Ռումինիայի Գալաց քաղաք: Այդ տարիներին Թ.Թորամանյանը նախագծել և կառուցել է մի շարք բնակելի ու հասարակական շենքեր: Միաժամանակ զբաղվել է ճարտարապետության պատմության ու տեսության հարցերով և այդ նպատակով 1900-1902թթ. շրջագայել մի շարք երկրներում, ի վերջո հաստատվել Փարիզում: Սորբոնի համալսարանում լսել է դասախոսություններ, բանասեր Կ.Բասմաջյանի հետ մշակել Անին հետազոտելու ծրագիր:

1903թ. Թ.Թորամանյանը եկել է Անի և նյութական ծանրագույն պայմաններում սկսել հայ ճարտարապետության ուսումնասիրությունը: 1904թ. գարնանը Զվարթնոցում ղեկավարել է վարդապետ Խաչիկ Դադյանի ձեռնարկած պեղումները, իսկ ամռանը վերադարձել Անի, մասնակցել Ն.Մառի ղեկավարած հնագիտական արշավախմբի աշխատանքներին: Թ.Թորամանյանը մշակել է Անիի մի շարք կիսականգուն և ավերակ հուշարձանների վերակազմության նախագծերը, գրել դրանց պատմությունն ու պատրաստել հրատարակության:

Թ.Թորամանյանը տարիներ շարունակ զբաղվել է Զվարթնոցի ավերակների ուսումնասիրությամբ ու վերակազմությամբ:

Անիին և Զվարթնոցին վերաբերող ուսումնասիրությունների զգալի մասը Թ.Թորամանյանը պարբերաբար հրատարակել է 1905-1913թթ.: Այդ աշխատություններում նա բացահայտել է հայ միջնադարյան ճարտարապետության (4-14-րդ դդ.) զարգացման հիմնական փուլերը, անժխտելի փաստերով ապացուցել հայկական ճարտարապետության ինքնուրույնությունը և նրա ձևերի ու լուծումների ազդեցությունը մի շարք երկրների ճարտարապետական դպրոցների վրա:

1924թ. ԵՊՀ-ում բացվել է տեխնիկական (հետագայում՝ շինարարական) ֆակուլտետ, որտեղ դասավանդելու է հրավիրվել նաև Թ.Թորամանյանը: Նա մշակել և կարդացել է «Ճարտարապետության պատմություն» դասընթացը:

Հսկայական է Թ.Թորամանյանի դերը հայ ժողովրդի նյութական և հոգևոր մշակույթի ուսումնասիրության բնագավառում: Նա ոչ միայն միջազգային ճանաչման աստիճանի բարձրացրեց մեր պատմական ճարտարապետությունը, այլև չափագրելով ու փաստագրելով բազմաթիվ հուշարձաններ՝ փաստորեն դրանք փրկեց կորստից:

1942-1948թթ. երկու հատորով հրատարակվել է Թ.Թորամանյանի «Նյութեր հայկական ճարտարապետության պատմության» խորագրով աշխատությունը:

1933թ. Թ.Թորամանյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման:

Վախճանվել է 1934թ. մարտի 1-ին Երևանում:

ՀԽՍՀ ԳԱ Նախագահությունը 1969թ. սահմանել է Թ.Թորամանյանի անվան հուշամեդալ: Թ.Թորամանյանի անունով է կոչվում Երևանի փողոցներից մեկը:

ԹՈՐԳՈՄՅԱՆ ՎՐՈՒՅՐ ԽԱՉԱՏՈՒՐԻ

Մաթեմատիկոս, դոցենտ,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1905թ. դեկտեմբերի 25-ին Նոր Բայազետում (այժմ՝ Գավառ): 1924թ. ավարտել է Երևանի Ալ.Մյասնիկյանի անվան միջնակարգ դպրոցը, 1929թ.՝ ԵՊՀ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը:

1925-1927թթ. Վ.Թորգոմյանն աշխատել է Երևանի դպրոցնե-

րում որպես մաթեմատիկայի ուսուցիչ, 1927-1930թթ. ԵՊՀ-ում որպես լաբորանտ և ասիստենտ, 1930-1937թթ. ավագ դասախոս, 1937-1941թթ. դոցենտ, 1941-1943թթ.՝ մաթեմատիկական անալիզի ամբիոնի վարիչ: Դասավանդել է մաթեմատիկական անալիզ, դիֆերենցիալ երկրաչափություն, մաթեմատիկական ֆիզիկայի հավասարումներ, Ֆուրյեի շարքեր և այլն: 1934-1975թթ. միաժամանակ եղել է ԵրՊԻ բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնի վարիչ:

1965թ. Վ.Թորգոմյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման:

Վախճանվել է 1979թ. օգոստոսի 26-ին Երևանում:

ԹՈՐՈՍՅԱՆ ԹՈՐՈՍ ՇԱՀԵՆԻ

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր



Ծնվել է 1950թ. հուլիսի 23-ին Երևանում: 1967թ. ավարտել է թիվ 35 դպրոցը, 1973թ. ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետը: 1973-1976թթ. սովորել է ՀԽՍՀ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտուրայում: 1978թ. պաշտպանել է թեկնածուական, 1985թ. դոկտորական ատենախոսություն: 1989թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1976-1979թթ. Թ.Թորոսյանն աշխատել է ՀԽՍՀ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտում որպես կրտսեր գիտաշխատող, 1983-ին՝ ավագ գիտաշխատող: 1979-1992թթ. եղել է ինստիտուտի գիտնական քարտուղար: 1992-ից ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչն է:

Թ.Թորոսյանը հեղինակ է շուրջ 120 աշխատության, այդ թվում 18 մենագրության, որոնցից առավել կարևոր են՝ «Հայաստան-Թուրքիա. առևտրատնտեսական կապեր» (Եր. 2001), «Միջազգային տնտեսագիտություն» (Եր., 2003, 2005, 2009), «Առևտրի համաշխարհային կազմակերպության անդամակցության ազդեցությունը Հայաստանի արտաքին առևտրատնտեսական համակարգի վրա» (Եր., 2004) աշխատությունները:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 16 ատենախոսություն: Թ.Թորոսյանը վերապատրաստման դասընթացներ է անցել Հունգարիայի, Գերմանիայի, ԱՄՆ-ի, Հունաստանի, Թուրքիայի համալսարաններում:

ԹՈՔՄԱՋՅԱՆ ՀԱՍՄԻԿ ԱՐՄԵՆԱԿԻ

Բանասիրական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր

Ծնվել է 1923թ. հոկտեմբերի 30-ին Լենինականում (այժմ՝ Գյումրի): Ավարտելով Երևանի թիվ 19 միջնակարգ դպրոցը՝ 1944թ. ընդունվել է Երևանի պետական ռուսական մանկավարժական ինստիտուտի օտար լեզուների ֆակուլտետ: 1948 թվականից աշխատել է նույն բուհում որպես անգլերենի դասախոս, 1950-1953թթ.՝ Երևանի օտար լեզուների պետական մանկավարժական ինստիտուտում:

Հ.Թոքմաջյանը 1953թ. ընդունվել և 1957թ. ավարտել է Մոսկվայի Վ.Պոտյոմկինի անվան քաղաքային մանկավարժական ինստիտուտի ասպիրանտուրան: 1961թ. Մոսկվայում պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: Այնուհետև գիտամանկավարժական գործունեություն է ծավալել ԵՊՀ-ում՝ դրսևորելով մասնագիտական բարձր գիտելիքներ և մանկավարժական մեծ հմտություն: 1963-1965թթ. ղեկավարել է ԵՊՀ օտար լեզուների, իսկ 1976-1981թթ. ռոմանագերմանական բանասիրության ամբիոնները: 1992թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Հ.Թոքմաջյանը հեղինակ է գիտական բազմաթիվ հոդվածների և ուսումնական ձեռնարկների: Նրա «Անգլերենի դասագիրք»-ը (համահեղինակ Ե.Մխիթարյան, Եր., 1984) և «Ժամանակակից անգլերեն լեզվի քերականություն» (Եր., 1995) ձեռնարկը, ըստ էության, անգլերենի առաջին բուհական դասագրքերն են մեր Հանրապետությունում:

Հ.Թոքմաջյանը վախճանվել է 1997թ. հունվարի 16-ին Երևանում:

ԹՌՉՈՒՆՑԱՆ ԱՐՄԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ

Կենսաֆիզիկոս,
կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

Ծնվել է 1956թ. ապրիլի 29-ին Երևանում: 1973թ. ավարտել է Երևանի թիվ 132 դպրոցը, 1978թ. ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետը: 1978-1981թթ. սովորել է ԵՊՀ ասպիրանտուրայում: 1981թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն:

1981-ից Ա.Թուչունյանն աշխատում է ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի կենսաֆիզիկայի ամբիոնում որպես կրտսեր, ավագ, այնուհետև առաջատար գիտաշխատող, 1993-ից՝ պրոֆեսոր: 2001թ. նա նշանակվել է ՀՀ ԿԳ նախարարության գիտության և գիտամանկավարժական կադրերի պատրաստման վարչության պետ, 2002թ.՝ ՀՀ ԲՈՀ-ի պետ:

1990թ. Ա.Թուչունյանը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 2002թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 2006թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ:

Ա.Թուչունյանը հեղինակ է շուրջ 250 գիտական աշխատությունների: Նրա գիտական գործունեությունն ուղղված է բակտերիաների թաղանթներում տեղափոխիչ համակարգերի ու ֆերմենտային ակտիվության հետազոտմանը, որի արդյունքում ձևավորվել է զուգորդող թաղանթներում ֆերմենտային ու տեղափոխիչ համակարգերի փոխազդեցության ու սպիտակուցային գերհամալիրների վերաբերյալ նոր պատկերացում: Նա հիմնավորել է տեղափոխիչ համակարգերի ներթաղանթային ուղղակի փոխազդեցության սկզբունքը, առաջադրել բակտերիաներում պրոտոնակալիումական պոմպի մոդել, ցույց տվել ֆերմենտային այդպիսի համալիրներում էներգիայի փոխանցման հնարավորությունը և բացահայտել երկթիոլ-երկսուլֆիդային փոխակերպմամբ էներգիայի փոխանցման մեխանիզմը, դրանում օքսիդավերականգնողական համարժեքների, իսկ փոխազդեցության հարցում նաև ցիստեինային ամինաթթվական մնացորդների դերն ու այդ փոխազդեցության կարգավորման գործոնները: Մշակել է օքսիդավերականգնողական պոտենցիալի միջոցով նյութափոխանակության կարգավորման տեսություն:

Վերջին տարիների հետազոտությունները նվիրված են նաև բակտերիաներում մոլեկուլային ջրածնի արտադրության ուսումնասիրմանը, որը կարևոր է էներգիայի նոր աղբյուրների ստացման համար:

Նրա ղեկավարությամբ ու խորհրդատվությամբ պաշտպանվել է թեկնածուական 12 և դոկտորական 1 ատենախոսություն:

Ա.Թուչունյանը զեկուցումներով հանդես է եկել միջազգային գիտաժողովներում (ԱՄՆ, Բելգիա, Գերմանիա, Իսպանիա, Իտալիա, Հունգարիա, Պորտուգալիա, Սլովենիա, Ռուսաստան, Ֆինլանդիա, Ֆրանսիա և այլն): 1991-1992թթ. դա-

սախոսություններ է կարդացել ու սեմինարներ վարել ԱՄՆ-ի, Բելառուսի, Ճապոնիայի, Իտալիայի, Մեծ Բրիտանիայի, ՌԴ համալսարաններում ու գիտական կենտրոններում:

Անդամ է ԱՄՆ-ի մանրէաբանության և կենսաֆիզիկական ընկերությունների, Եվրոպական կենսաէլեկտրամագնիսական ասոցիացիայի, Կենսաֆիզիկայի միջազգային միության և այլն:

2003թ. Ա.Թուչունյանն արժանացել է ՀՀ Նախագահի մրցանակի, 2007թ. պարգևատրվել է ՌԴ Մ.Լոմոնոսովի շքանշանով:

ԹՈՒԹՈՒՆՋՅԱՆ ՀՈՎՍԵՓ ՄՈՎՍԵՍԻ

Հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1918թ. սեպտեմբերի 10-ին Ալեքսանդրիայում (Եգիպտոս): 1937թ. ավարտել է Կահիրեի Գալուստյան ազգային վարժարանը, 1940թ.՝ ֆրանսիական լիցեյը, 1947թ. Կահիրեի ամերիկյան համալսարանը: 1947թ. Հ.Թութունջյանը հայրենադարձվել է և 1948թ. ընդունվել ասպիրանտուրա:

1956թ. նա Մոսկվայում պաշտպանել է թեկնածուական, 1967թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1972թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1948-1994թթ. Հ.Թութունջյանն աշխատել է ԵՊՀ-ում: Նրա ջանքերով 1976թ. հիմնադրվել է ԵՊՀ հոգեբանության ամբիոնը, իսկ 1979թ.՝ ինժեներական հոգեբանության լաբորատորիան:

Հեղինակ է ավելի քան 100 գիտական հոդվածների և 4 մենագրության՝ նվիրված տարիքային, սպորտային, մանկական ու մանկավարժական, ինչպես նաև ստեղծագործական և փորձարարական հոգեբանությանը: Մենագրություններն են «Հանրի Վալլոնի հոգեբանական կոնցեպցիան» (ռուս., Եր., 1966), «Երեխայի հոգեբանության հարցեր» (Եր., 1980), «Սովետահայ հոգեբանություն: Ընտիր էջեր» (Եր., 1988), «Հոգեբանական էտյուդներ» (Եր., 1991):

Հ.Թութունջյանը Ֆրանսիայի հոգեբանական ընկերության, ԱՄՆ-ի մտավոր զարգացման ու հոգեբանական ուսումնասիրությունների ինստիտուտի, Բրազիլիայի Սան Պաուլո մասնաճյուղի գիտական խորհուրդների և ԽՍՀՄ հոգեբանական ընկերության անդամ էր:

Պարգևատրվել է «Ս.Մեսրոպ-Ս.Սահակ» շքանշանով, «Աշ-

խատանքային արիության», Խ.Աբովյանի անվան մեդալներով:

Հ.Թուխարյանը վախճանվել է 1994թ. նոյեմբերի 13-ին Երևանում:

ԹՈՒՄԱՆՅԱՆ ԲԵՆԻԿ ԵՍԱՅԻ

Աստղաֆիզիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1917թ. մայիսի 1-ին Լոռու Դսեղ գյուղում: Միջնակարգ կրթությունն ստացել է Թիֆլիսում: 1935թ. ընդունվել է ԵՊՀ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետ: 1940թ. ավարտել է մաթեմատիկայի բաժինը և աշխատանքի անցել նույն ֆակուլտետի մաթեմատիկական անալիզի ամբիոնում որպես ասիստենտ: 1940թ. ընդունվել է ասպիրանտուրա:

1941թ. Բ.Թումանյանը զորակոչվել է բանակ, մասնակցել Հայրենական մեծ պատերազմին: Զորացրվելով 1946-ին՝ վերադարձել է համալսարան և շարունակել ուսումն ասպիրանտուրայում:

1950թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և աշխատանքի անցել ԵՊՀ աստղաֆիզիկայի ամբիոնում որպես դոցենտ: 1958թ. ԵՊՀ-ում կազմակերպվել է արհեստական արբանյակների դիտման կայան՝ Բ.Թումանյանի ղեկավարությամբ:

Հեղինակ է հարյուրից ավելի գիտական աշխատությունների, որոնց զգալի մասը վերաբերում է հայ աստղագիտության պատմության հարցերին: Նրա բարձրարժեք աշխատությունը «Հայ աստղագիտության պատմություն» երկհատորյակն է, որը 1970թ. արժանացել է բնագիտության և տեխնիկայի պատմության ԽՍՀՄ ազգային կոմիտեի դիպլոմի:

1970թ. նա պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1972թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1974-ից մինչև կյանքի վերջը ֆիզիկայի ֆակուլտետի դեկանն էր:

Բ.Թումանյանի գրչին են պատկանում «Տոմարի պատմություն» (Եր., 1972), «Երկրակենտրոն և արևակենտրոն համակարգերը Հայաստանում» (Եր., 1973), «Լուսին» (Եր., 1979) մենագրությունները: Հեղինակ է բազմաթիվ դիտահանրամատչելի գրքերի և հոդվածների, համահեղինակ՝ «Ընդհանուր աստղա-

գիտություն» (Եր., 1960), «Աստղագիտություն» (Եր., 1978) ուսումնական ձեռնարկների:

1975թ. Լեհաստանի կառավարության կողմից արժանացել է «Նիկոլայ Կոպեռնիկ» հուշամեդալի:

1979թ. Բ.Թումանյանին շնորհվել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչում: Պարգևատրվել է Խ.Աբովյանի անվան մեդալով, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատվոգրերով:

Վախճանվել է 1980թ. փետրվարի 10-ին Երևանում:

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՐԱՆՈՍԻ

Տնտեսագետ, պրոֆեսոր,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ



Ծնվել է 1904թ. նոյեմբերի 5-ին Շիրակի Սվանվերդի (այժմ՝ Լուսաղբյուր) գյուղում: Գյումրիի ծխական դպրոցն ավարտելուց հետո սովորել է հողաչափների վարժարանում: 1933թ. Լենինականի (այժմ՝ Գյումրի) կոոպերատիվ ինստիտուտն ավարտելուց հետո ընդունվել է ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետ: 1938-ից մինչև կյանքի վերջը դասախոսել է նույն ֆակուլտետում:

1945թ. Հ.Թումանյանին շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1946-1968թթ. Հ.Թումանյանը եղել է ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի ժողովրդական տնտեսության պլանավորման և ճյուղային էկոնոմիկայի ամբիոնի վարիչ:

Մեծ է Հ.Թումանյանի վաստակը ինչպես Հայաստանի տնտեսության զարգացման պատմության, սոցիալիստական տնտեսության պլանավորման կատարելագործման, արտադրության արդյունավետության բարձրացման, միջճյուղային կապերի բարելավման հիմնախնդիրների լուծման, այնպես էլ տնտեսագետ կադրերի պատրաստման գործում:

Ուշագրավ են նրա «Ժողովրդական տնտեսության պլանաչափ զարգացման օրենքի մասին» (Եր., 1954), «Հայաստանի տնտեսական զարգացման պատմություն» (Եր., 1960), «Հայաստանի սոցիալիստական էկոնոմիկայի զարգացումը» (Եր., 1962), «ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության բալանսը» (Եր., 1970) աշխատությունները:

Նրա ղեկավարությամբ ու խորհրդատվությամբ թեկնածուական և դոկտորական ատենախոսություններ են պաշտպա-

նել բազմաթիվ տնտեսագետներ:

1966թ. Հ.Թումանյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման:

Վախճանվել է 1968թ. հուլիսի 4-ին Երևանում:

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ ԳԱԼՈՒՍՏԻ

Բուսաբան,
գյուղատնտեսական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1886թ. փետրվարի 16-ին Ղրիմի Կարասուբազար քաղաքում: 1905թ. ավարտել է Երևանի գիմնազիան, 1911թ.՝ Մոսկվայի համալսարանը, 1914թ.՝ Մոսկվայի գյուղատնտեսական ինստիտուտը:

1914թ. վերադառնալով Հայաստան Մ.Թումանյանն աշխատել է Զանգեզուրում և այլ շրջաններում: 1924թ. նա հրավիրվել է ԵՊՀ, ղեկավարել երկրագործության ամբիոնը: 1926-1927թթ. մեծ աշխատանք է կատարել Հայաստանում դաշտավարության ուսումնասիրման ուղղությամբ: 1929թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1930-1949թթ. եղել է Հայկական գյուղատնտեսական ինստիտուտի բուսաբանության ամբիոնի վարիչ: 1934-1935թթ. ղեկավարել է Սևանի սելեկցիոն դաշտավարությունն ուսումնասիրող արշավախմբերի աշխատանքները:

1937թ. Մ.Թումանյանն ստացել է գյուղատնտեսական գիտությունների դոկտորի աստիճան: 1943թ. հաստատվել է Հայաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս:

1944թ. նրա նախաձեռնությամբ կազմակերպվել է ՀԽՍՀ գյուղնախարարության երկրագործության գիտահետազոտական ինստիտուտը, որտեղ մինչև 1950թ. նրա ղեկավարությամբ իրականացվել են բազմաթիվ ուսումնասիրություններ սելեկցիայի ու ագրոտեխնիկայի, բույսերի ձևագոյացման ու բույսերի պաշտպանության բնագավառներում:

Մ.Թումանյանը հեղինակ է 50 գիտական աշխատությունների: Նրա կարևոր աշխատություններից են «Բամբակի մշակությունը» (Եր., 1924), «Շարքացանը և նրա նշանակությունը» (Եր., 1925), «Հացաբույսերի որոշիչ (հասկավորներ)» (Եր.,

1933) և այլն: Մ.Թումանյանի ուսումնասիրությունները հնարավորություն են տվել ճշտելու մշակովի ցորենի ծագման ու զարգացման հարցերը, և նպաստել Հայաստանում ցորենի հինավուրց տեղական սորտերի բարելավմանը: Մ.Թումանյանն ուսումնասիրել է նաև դաշտային բույսերի ձևառաջացումը, բույսերի բիոցենոզը, հայտնաբերել դրանց օնտոգենետիկ զարգացման օրինաչափությունները:

1935-1937թթ. նա ընտրվել է Անդրկովկասյան Ֆեդերացիայի Կենտգործկոմի անդամ, 1944-1947թթ. եղել ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահի տեղակալ:

1935թ. Մ.Թումանյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման, պարգևատրվել է «Պատվո նշան» (1935) և Աշխատանքային կարմիր դրոշի (1943) շքանշաններով:

Վախճանվել է 1950թ. հուլիսի 25-ին Երևանում:

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՍԱՐԳԻՍ ՔՐԻՍՏԱՓՈՐԻ

Մաթեմատիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, դոցենտ

Ծնվել է 1923թ. փետրվարի 14-ին Մոսկվայում: 1940թ. ավարտել է Մոսկվայի թիվ 172 դպրոցը: 1941թ. նրանց ընտանիքը տեղափոխվել է Երևան: 1942-1943թթ. ծառայել է բանակում, մասնակցել Մեծ հայրենականին: 1944թ. ընդունվել է ԵՊՀ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետ, որն ավարտել է 1949թ.: Նույն տարում ընդունվել է ՀԽՍՀ ԳԱ ասպիրանտուրա, գործուղվել Մոսկվայի Վ.Ստեկլովի անվան մաթեմատիկական ինստիտուտ: 1953թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1956թ. նրան շնորհվել է դոցենտի կոչում:

1952-ից Ս.Թումանյանն աշխատել է ԵՊՀ-ում որպես ավագ դասախոս, դոցենտ, 1956-1957թթ. ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի դեկան, 1961-1965թթ.՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր: 1966-1987թթ. եղել է ՀԽՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության փոխնախարար:

Նրա գործուն մասնակցությամբ համալսարանում ստեղծվել է հավանականությունների տեսության և մաթեմատիկական վիճակագրության՝ հանրապետությունում միակ ամբիո-

նը: Վարել է հավանականությունների տեսության և մաթեմատիկական վիճակագրության ընդհանուր և մասնագիտական, բարձրագույն հանրահաշվի և բարձրագույն մաթեմատիկայի դասընթացներ:

Ս.Թումանյանի հետազոտությունները վերաբերում են վիճակագրական X^2 հայտանիշի բաշխման ու հզորության հարցերին: Նա ստացել է մի շարք կարևոր արդյունքներ փորձառական խտության առավելագույն շեղման վերաբերյալ, սահմանային թեորեմներ Պուասոնի օրենքի մասին: Նրա առաջին աշխատանքը X^2 հայտանիշի վերաբերյալ ստացել է միջազգային ճանաչում:

Վախճանվել է 1987թ. ապրիլի 23-ին Երևանում:

ԺԱՄԿՈՉՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ ՍԵՐՈԲԻ

(ավագանի անունը Անդրանիկ)
Եպիսկոպոս

Ծնվել է 1971թ. նոյեմբերի 12-ին Էջմիածնում: 1988թ. ավարտել է Էջմիածնի Վահան Ռշտունու անվան միջնակարգ դպրոցը, 1995թ.՝ Գևորգյան ճեմարանը: 1992թ. ձեռնադրվել է սարկավագ, իսկ 1995թ.՝ կուսակրոն քահանա: 1998թ. մեկնել է Գերմանիա՝ երաժշտական կրթություն ստանալու: 2002թ. ընդունվել է Հալլե-Վիթենբերգի Մարտին Լյութերի անվան համալսարանի իրավաբանության ֆակուլտետ՝ մասնագիտանալով պետական-եկեղեցական իրավունքի գծով: 2002-2004թթ. ուսանել է Մյունսթերն-Վեստֆալեն քաղաքի Վիլհելմ համալսարանում և ստացել կանոնական իրավունքի արտոնագիր: 2006թ. նոյեմբերի 19-ին ձեռնադրվել է եպիսկոպոս:

1995-ից ծառայել է Մայր տաճարում որպես լուսարարապետի օգնական: 1995-1998թթ. դասավանդել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում:

1998թ. հիմնադրել է Գերմանիայի Սաքսոնիա-Անհալթի հայ համայնքը և մինչև 2004թ. եղել նրա հոգևոր հովիվը: 1999-2000թթ. հիմնել է համայնքի կիրակնօրյա վարժարանը և «Հայկական ալիք» երկլեզու ռադիոհաղորդաժամը:

2004թ. նշանակվել է ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի դեկան, 2007թ.՝ նաև «Աճեմյան բարեգործական հիմնադրամ»-ի տնօրեն:

Հեղինակ է մի շարք հոդվածների և «Կոմիտաս» (Եր., 2007) մենագրության:

ԺԱՄԿՈՉՅԱՆ ՀԱՅԿԱԶ ԳԵՎՈՐԳԻ

Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1909թ. հոկտեմբերի 10-ին Խարբերդի նահանգի Մալաթիա քաղաքում: Մեծ եղեռնից փրկվել է հրաշքով: Նախնական կրթությունն ստացել է Բեյրութի ամերիկյան որբանոցի վարժարանում (1918-1924), այնուհետև տեղափոխվել է Ֆրանսիա: Փարիզում, Վալանսում և Բրյուսելում աշխատել է որպես բանվոր, գործուն մասնակցություն ունեցել Ֆրանսիայի և Բելգիայի բանվորական շարժումներին, եղել Ֆրանսիայի կոմկուսի Վալանսի հայկական բաժանմունքի քարտուղար:

1929թ. հունիսին ներգաղթել է Խորհրդային Հայաստան, աշխատել Վաղարշապատում որպես արհմիութենական շրջանային կոմիտեի նախագահ:

1930-1931թթ. Հ.Ժամկոչյանը սովորել է Երևանի պետական մանկավարժական ինստիտուտի պատմատնտեսագիտական ֆակուլտետում, 1931-1935թթ. ԵՊՀ պատմագրական ֆակուլտետի պատմության բաժնում, 1935-1938թթ.՝ ԵՊՀ ասպիրանտուրայում: Ուսումնառությանը զուգընթաց դասավանդել է տարբեր ուսումնական հաստատություններում, եղել ասիստենտ ԵՊՀ-ում: 1938-ից մինչև կյանքի վերջն աշխատել է ԵՊՀ Հայ ժողովրդի պատմության ամբիոնում որպես դասախոս: Այդ ընթացքում 1941-1942թթ. եղել է նաև Հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչ, 1941-1943թթ. և 1945-1955թթ.՝ պատմության ֆակուլտետի դեկան:

1941թ. Հ.Ժամկոչյանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1943թ. նրան շնորհվել է դոցենտի կոչում:

Հեղինակ է պատմաբանասիրական բնույթի մի շարք արժեքավոր ուսումնասիրությունների՝ «XII-XIII դարերի ազդեցությունը «Սասունցի Դավիթ» էպոսի տարբերակներում» (Եր., 1939), ««Պատմութիւն վասն ազգին Նեստորեայ» երկի հեղինակը» (Եր., 1946), «Անի քաղաքի XIII դարի երկու արձանագրության մասին» (Եր., 1955), «Ֆրիկի երեք տաղերի մասին» (Եր., 1956):

Լայն ճանաչում ունի Հ.Ժամկոչյանի Հայ ժողովրդի պատմության «Հայաստանը նախնադարյան համայնական հասա-

րակության և ստրկատիրության շրջանում» բուհական դասագրքի առաջին պրակը (Եր., 1961), որը հետագայում մաս է կազմել նաև բուհական քառահատոր (Եր., 1963) և երկհատոր (Եր., 1975) դասագրքերի, ունեցել առանձին հրատարակություն:

1970թ. Հ.Ժամկոչյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման:

Վախճանվել է 1981թ. մարտի 4-ին Երևանում:

ԻՇԽԱՆՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ ԱՎԵՏԻՍԻ

Լեզվաբան, մատենագետ,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր



Ծնվել է 1922թ. մարտի 9-ին Երևանում: 1939թ. ավարտել է Երևանի թիվ 19 միջնակարգ դպրոցը և նույն տարում ընդունվել ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժին: 1940թ. զորակոչվել է բանակ, մասնակցել Հայրենական մեծ պատերազմին: 1946թ. շարունակել է ուսումը Համալսարանում և ավարտել այն 1949թ.: 1950-1954թթ. սովորել է Մոսկվայի գրադարանային ինստիտուտի հեռակա բաժնում:

1949-1961թթ. աշխատել է Երևանի Ալ.Մյասնիկյանի անվան հանրային գրադարանում, 1961-1963թթ.՝ Մաշտոցի անվան մատենադարանում: 1956թ. դասավանդել է Հայկական հեռակա մանկավարժական ինստիտուտում:

1962թ. Ռ.Իշխանյանը պաշտպանել է թեկնածուական, 1973թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1978թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1963-1985թթ. եղել է ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի ամբիոնի դասախոս, ապա՝ դոցենտ, 1978-ից՝ պրոֆեսոր: 1985-1992թթ. աշխատել է հայոց լեզվի պատմության ամբիոնում: 1991-1995թթ. եղել է Հայաստանի Ազգային գրադարանի տնօրեն: 1990թ. ընտրվել է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր:

Ռ.Իշխանյանի հեղինակությամբ լույս են տեսել բազմաթիվ հոդվածներ ու մի շարք գրքեր, այդ թվում՝ «Ա.Բակունցի լեզվական արվեստը» (Եր., 1965), «Հայ մատենագիտության պատմություն» (ՀՀ. 1-3, 1964-1968), «Արդի հայերենի հոլովումը և խոնարհումը» (Եր., 1971), «Արևելահայ բանաստեղծության լեզվի պատմություն» (Եր., 1978), «Արդի հայերենի շարահյուսություն» (Եր., 1986) մենագրությունները:

Ռ.Իշխանյանը պարգևատրվել է Հայրենական մեծ պատերազմի II աստիճանի շքանշանով, «1941-1945թթ. Հայրենական

մեծ պատերազմում հաղթանակի 20 տարին», Խ.Աբովյանի անվան մեդալներով:

Վախճանվել է 1995թ. փետրվարի 6-ին Երևանում:

ԻՍԱՀԱԿՅԱՆ ԱԲԳԱՐ ԻՍԱՀԱԿԻ

Բժիշկ, մանկավարժ,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1885թ. հունիսի 10-ին Թիֆլիսում: Սկզբնական կրթությունն ստացել է տեղի 2-րդ գիմնազիայում, ապա ընդունվել Օդեսայի համալսարանի բժշկական ֆակուլտետ, որն ավարտելուց հետո՝ 1911թ., աշխատել է նույն համալսարանի ընդհանուր ախտաբանության և մանրէաբանության լաբորատորիայում, ապա Վոզնեսենսկ քաղաքում որպես հիգիենա-բակտերիաբանական լաբորատորիայի վարիչ:

1914թ. Ա.Իսահակյանը վերադարձել է Թիֆլիս և շուտով զորակոչվել բանակ: Էջմիածնում զինվորական բժշկի պաշտոնում նա կարևոր աշխատանքներ է ձեռնարկել մալարիայի, որովայնային տիֆի և այլ հիվանդությունների դեմ պայքարելու ուղղությամբ, մեծ օգնություն է ցույց տվել Արևմտյան Հայաստանից գաղթած հայ ազգաբնակչությանը, գործուն մասնակցություն ունեցել որբերի ու հիվանդների խնամքի ու բուժման կազմակերպմանը:

1920թ. Հայաստանի բժշկա-սանիտարական գլխավոր վարչության առաջարկությամբ նա ձեռնամուխ է եղել քիմիկա-բակտերիաբանական ինստիտուտի կազմակերպման գործին: Արդեն 1921թ. այդ ինստիտուտը պատրաստել է Հայաստանում ծաղկի առաջին պատվաստանյութը: 1920թ. Լ.Հովհաննիսյանի և Ա.Իսահակյանի խմբագրությամբ լույս է տեսել «Մալարիա» գիտահասարակական հանդեսը, 1923թ. նա Հայաստանում հայտնաբերել է մալթացան տենդը (բրուցելոզ) և նախազգուշական միջոցառումներ մշակել այդ հիվանդության դեմ պայքարելու համար:

Ա.Իսահակյանը զգալի աշխատանք է կատարել ԵՊՀ բժշկական ֆակուլտետի կազմակերպման գործում: Նա հիմնադրել և մինչև 1951թ. ղեկավարել է միկրոբիոլոգիայի ամբիոնը (1930-ից Երևանի բժշկական ինստիտուտի կազմում): 1929թ. Ա.Իսահակյանին շնորհվել է պրոֆեսորի կոչում: Նա մաս-

նակցել է նաև սանհիգիենիկ գիտահետազոտական և Անասնաբուծական-անասնաբուժական ինստիտուտների հիմնադրմանը տարիներ շարունակ ղեկավարելով առաջինի մանրէաբանական բաժանմունքը, և երկրորդի՝ միկրոբիոլոգիայի ամբիոնը:

Հեղինակ է 40 գիտական աշխատությունների: Նրա ղեկավարությամբ պատրաստվել են բազմաթիվ մասնագետներ:

1940թ. Ա.Իսահակյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման:

1951թ. հիվանդության պատճառով անցել է կենսաթոշակի:

Վախճանվել է 1977թ. փետրվարի 14-ին Երևանում:

ԼԵՈ (ԲԱԲԱԽԱՆՅԱՆ ԱՌԱՔԵԼ ԳՐԻԳՈՐԻ)

Պատմաբան, հրապարակախոս, պրոֆեսոր

Ծնվել է 1860թ. ապրիլի 14-ին Շուշիում: Սկզբնական կրթությունն ստացել է տեղի թեմական և գավառական դպրոցներում: Հոր մահից հետո, հնարավորություն չունենալով շարունակել ուսումը, անցել է աշխատանքի: Լեոն իր գրական աշխատանքներն սկսել է 1870-ականների վերջերից: Տասնամյակներ շարունակ աշխատակցել է «Մշակ», «Արձագանք», «Մուրճ», «Հորիզոն», «Տարազ» և այլ թերթերի ու հանդեսների: Նա գրել է պատմվածքներ, վեպեր, վիպակներ, իր ուժերը փորձել թատրերգության ասպարեզում:

1924թ. Խորհրդային Հայաստանի կառավարության հրավերով նա Թիֆլիսից եկել է Երևան և աշխատանքի անցել ԵՊՀ-ում, որտեղ կարդացել է հայոց պատմության դասընթաց: Նրա դասախոսությունները տպագրվել են ձեռագրի իրավունքով և Հ.Մանանդյանի դասախոսությունների հետ միասին դարձել հայոց պատմության համալսարանական առաջին դասագրքերը:

ԵՊՀ-ում հայագիտական առարկաների դասավանդումը գիտական մակարդակի վրա դնելու գործում Հ.Մանանդյանի, Մ.Աբեղյանի, Հր.Աճառյանի և ուրիշների հետ միասին մեծ երախտիք ունի նաև Լեոն:

1925թ. Լեոյին շնորհվել է պրոֆեսորի կոչում: Նույն թվականին նա դարձել է ՀԽՍՀ գիտության և արվեստի ինստիտուտի (1930թ-ից՝ ՀԽՍՀ գիտությունների ինստիտուտ) իսկական անդամ:

Մեծ է Լեոյի վաստակը հայ հասարակական մտքի, հայ գրականության ու մշակույթի պատմության ուսումնասիրության բնագավառում: Նա առաջինն էր, որ հանգամանորեն ուսումնասիրեց հայ հասարակական մտքի ականավոր ներկայացուցիչներ Ստեփանոս Նազարյանցի և Գրիգոր Արծրունու կյանքն ու գործունեությունը, փորձեց ցույց տալ նրանց տեղն ու դերը հասարակական-քաղաքական և մտավոր զարգացման ասպարեզում:

Առավել արժեքավոր են վաստակաշատ գիտնականի պատմագիտական աշխատությունները: Բազմամյա աշխատանքի արդյունք է նրա՝ փաստական հարուստ նյութով, պատմագիտական ընդհանրացումներով հագեցած, պարզ ու գրավիչ լեզվով գրված «Հայոց պատմությունը»: Ստվարածավալ այս աշխատության առաջին հատորը (Թիֆլիս, 1917) նվիրված է Հայաստանի հին շրջանի պատմությանը՝ սկսած Հնագույն ժամանակներից մինչև 5-րդ դար, երկրորդ հատորում (Եր., 1947) շարադրված է 5-11-րդ դարերի պատմությունը, երրորդ հատորում (Եր., 1946) լուսաբանվում է հայ ժողովրդի վիճակը 16-18-րդ դարերում:

Լեոն առաջին պատմաբաններից էր, որ ձեռնամուխ եղավ հայ ժողովրդի նոր և նորագույն շրջանների պատմության ուսումնասիրությանը՝ հայ ազատագրական շարժումների, հայկական հարցի, Առաջին համաշխարհային պատերազմի և հայ ժողովրդի մեծ ողբերգության հետ կապված հարցերին:

Նրա երկերի ժողովածուն 10 հատորով հրատարակվել է 1966-1987թթ.:

Լեոն վախճանվել է 1932թ. սեպտեմբերի 14-ին Երևանում:

Լեոյի բրոնզաձույլ կիսանդրին ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի նախասրահում խորհրդանշում է ականավոր գիտնականմանկավարժի դերը համալսարանական գիտության ու կրթության զարգացման գործում:

ԼԻՍԻՑՅԱՆ ՍՏԵՓԱՆ ԴԱՆԻԵԼԻ

Պատմաբանասիրական գիտությունների թեկնածու,
պրոֆեսոր,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1865թ. սեպտեմբերի 22-ին Թիֆլիսում: 1884թ. ավարտելով տեղի գիմնազիան՝ 1885-1887թթ. սովորել է Օդեսայի, 1887-1889թթ.՝ Վարշավայի համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետում: 1889թ. Ստ.Լիսիցյանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն:

1889թ. աշխատանքի է անցել Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: 1894-1915թթ. հայոց պատմություն է դասավանդել Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում: 1911-1924թթ. իր կնոջ հիմնադրած գիմնազիայում զբաղվել է կազմակերպչական աշխատանքնե-

րով: 1921-1922թթ. դասախոսել է Թիֆլիսի պոլիտեխնիկական ինստիտուտում: 1924թ. հրավիրվել է ԵՊՀ, ղեկավարել ֆիզիկական աշխարհագրության ամբիոնը:

1928 թվականից եղել է Հայաստանի պատմության պետական թանգարանի ազգագրության բաժնի վարիչ: Ղեկավարել է գիտական արշավախմբեր, գրառել ազգագրական բազմաթիվ նյութեր, հայթայթել թանգարանային շուրջ 1000 ցուցանմուշ:

1941թ. Ստ.Լիսիցյանին շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Ստ.Լիսիցյանը լայն հետաքրքրությունների տեր գիտնական-մանկավարժ էր՝ բանասեր, ազգագրագետ, աշխարհագրագետ, պատմաբան, թարգմանիչ, Հայաստանում ազգագրության և աշխարհագրական ընկերության հիմնադիր: 1904-1911թթ. նա ճամփորդել է Եվրոպայում, ուսումնասիրել Կ.Պոլսի, Վիեննայի Մխիթարյան միաբանության գրադարանում և Բեռլինի թանգարանում եղած հայագիտական նյութերը: Մասնակցել է Հ.Լինչի «Արմենիա» աշխատության ռուսերեն թարգմանությանը, լեհերենից հայերեն է թարգմանել Հ.Սենկևիչի «Յո երթաս» վեպը:

Ստ.Լիսիցյանը հեղինակ է Հայաստանի պատմությանը, ֆիզիկական աշխարհագրությանը և ազգագրությանը նվիրված բազմաթիվ ուսումնական ծրագրերի, դասագրքերի և մենագրությունների: Կարևորագույն մենագրությունն է «Զանգեզուրի հայերը» (Եր., 1969): Անգնահատելի է Հովհ.Թումանյանի և Լ.Շանթի համահեղինակությամբ Ստ.Լիսիցյանի կազմած մայրենի լեզվի «Լուսաբեր» դասագրքի նշանակությունը: Նա խմբագրել և հրատարակել է «Աղբյուր-Տարազ» հանդեսը, «Հասկեր» մանկական ամսագիրը:

1945թ. Ստ.Լիսիցյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով:

Վախճանվել է 1947թ. հունվարի 4-ին Երևանում:

Ստ.Լիսիցյանի անունով են կոչվում Հայաստանի պատմության պետական թանգարանի ազգագրության բաժինը և Երևանի թիվ 34 դպրոցը:

ԼԵՎՈՆՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ ՋԻՎԱՆՈՒ

Գեղարվեստագետ, գրականագետ,
ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ

Ծնվել է 1872թ. նոյեմբերի 6-ին Ալեքսանդրապոլում (այժմ՝ Գյումրի)՝ անվանի աշուղ-բանաստեղծ Ջիվանու ընտանիքում: Նախնական կրթությունն ստացել է տեղի Ս.Փրկիչ եկեղեցու չորեքդասյան թեմական դպրոցում: 1897թ. տեղափոխվել է Պետերբուրգ և ընդունվել արվեստների ակադեմիա: 1902թ. ավարտելով այն՝ հրավիրվել է Գևորգյան ճեմարան՝ դասավանդելու գեղարվեստի տեսություն և նկարչություն: Այդ տարիներին նա Կոմիտասի հետ հիմնադրել է «Գեղարվեստ» հանդեսը (1908-1922թթ.), որը նշանակալից դեր է խաղացել հայ արվեստագիտական մտքի և պարբերական մամուլի պատմության մեջ:

Նրա գիտական լայն հետաքրքրություններն ընդգրկում են հայ մշակույթի երեք բնագավառ՝ աշուղագիտություն, թատրոնի և արվեստի պատմություն, պարբերական մամուլի և տպագրության պատմություն: Կյանքի վերջին տարիներին Գ.Լևոնյանը դասավանդել է ԵՊՀ-ում և ԵԹԻ-ում:

Նշանավոր մենագրություններն են «Պաղտասար Դպիր՝ քերական, բանաստեղծ, երաժիշտ 18-րդ դարում» (Եր., 1927), «Հայ ժողովրդական և աշուղական երգերը. համեմատական տեսություն» (Եր., 1930), «Սայաթ-Նովա. քննական ուսումնասիրություն» (Եր., 1931), «Աշուղ Ջիվանի. կյանքի և գործի ուրվագիծը» (Եր., 1936), «Աշուղները և նրանց արվեստը» (Եր., 1944), «Հայոց պարբերական մամուլը. պատմական տեսություն՝ սկզբից մինչև մեր օրերը (1794-1894)», «Հայ գիրքը և տպագրության արվեստը. պատմական տեսություն՝ սկզբից մինչև 20-րդ դարը» (Եր., 1946, 1958):

1932թ. Գ.Լևոնյանն արժանացել է ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործչի կոչման:

Վախճանվել է 1947թ. սեպտեմբերին 28-ին Երևանում:



ԽԱՆԶԱԴՅԱՆ ՅՈԼԱԿ ԽՈՐԵՆԻ

Գրականագետ, քննադատ, թարգմանիչ

Ծնվել է 1886թ. մարտի 23-ին Ղարաքիլիսայում (այժմ՝ Վանաձոր): Նախնական կրթությունը ստացել է տեղի ուսումնարանում: 1905թ. ավարտել է Մոսկվայի Լազարյան ճեմարանը, 1912թ. Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան համալսարանի իրավաբանական ֆակուլտետը:

Յ.Խանզադյանը գրական ասպարեզ է իջել 1910-ական թվականներին: Նրա առաջին հրապարակումները լույս են տեսել իր ճեմարանական դասընկերներ Վահան Տերյանի, Ալեքսանդր Մյասնիկյանի, Պողոս Մակինցյանի, Կարապետ Կուսիկյանի հետ հրատարակած «Գարուն» ալմանախում: Լինելով բազմագիտակ ու նրբաճաշակ գրականագետ՝ Յ.Խանզադյանը մասնակցել է Մ.Գորկու և Վ.Բրյուսովի կազմած ու խմբագրած հայ գրականության անթոլոգիաների ստեղծմանը:

Մոսկվայից տեղափոխվելով Բաքու Յ.Խանզադյանն աշխատակցել է «Բաքվի ձայն» թերթին, «Գործ» ամսագրին:

1922թ. նա հրավիրվել է ԵՊՀ, նշանակվել հասարակական ֆակուլտետի դեկան, ապա երկար տարիներ գլխավորել ռուս գրականության ամբիոնը, բացառիկ վարպետությամբ կարդացել ռուս և անտիկ գրականության դասընթացներ:

Յ.Խանզադյանը լինելով ժամանակի եռանդուն քննադատներից մեկը՝ հաճախ հանդես է եկել «Գրասեր» ծածկանունով: Նրա հրատարակած հոդվածները վերաբերում են գրականության պատմության ու տեսության, գեղագիտության ու ընթացիկ հայ գրականության տարաբնույթ հարցերին:

Դասախոսական բեղմնավոր գործունեության հետ մեկտեղ Յ.Խանզադյանը զբաղվել է նաև գիտահետազոտական և գրական-ստեղծագործական աշխատանքով: Մ.Նալբանդյանի, Ռաֆֆու, Գ.Սունդուկյանի, Ալ.Շիրվանզադեի, Հ.Հովհաննիսյանի, Հովհ.Թումանյանի, Ալ.Ծատուրյանի, Վ.Տերյանի և հայ մյուս դասականների ստեղծագործություններին նվիրված նրա ու-

սումնասիրություններն ու քննադատական հոդվածները այսօր էլ պահպանում են իրենց գիտական ու պատմաճանաչողական արժեքը: Կյանքի վերջին տարիներին Ց.Խանդաղյանը զբաղվել է Վ.Ի.Լենինի երկերի հայերեն թարգմանությամբ:

Վախճանվել է 1935թ. սեպտեմբերի 19-ին Երևանում:

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԺՅՈՒԼՎԵՌՆ ԲԱՂԴԱՍԱՐԻ

Ֆիզիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր

Ծնվել է 1940թ. հունվարի 1-ին Մարտունու շրջանի Վաղաշեն գյուղում: 1958թ. ավարտել է Մարտունու միջնակարգ դպրոցը, 1964թ. ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետը: 1965թ. Ժ.Խաչատրյանն աշխատանքի է անցել ԵՊՀ ընդհանուր ֆիզիկայի ամբիոնում որպես ասիստենտ: 1973թ. Լենինգրադում (այժմ՝ Սանկտ Պետերբուրգ) պաշտպանել է թեկնածուական, 1993թ. Մոսկվայում՝ դոկտորական ատենախոսություն: 1981թ. նրան շնորհվել է դոցենտի, 2004թ. պրոֆեսորի կոչում:

Ժ.Խաչատրյանը հեղինակ է շուրջ 60 գիտական հոդվածների և համահեղինակ մի քանի ձեռնարկի «Մեխանիկայի ֆիզիկական հիմունքները» (Եր., 2001), «Օպտիկայի լաբորատոր աշխատանքների ձեռնարկ» (Եր., 2001), «Էլեկտրականության լաբորատոր աշխատանքների մեթոդական ցուցումներ» (Եր., 1984):

Ժ.Խաչատրյանի գիտական աշխատանքները նվիրված են գերբարձր հաճախության ռադիոչափական մեթոդներով մթնոլորտի ջրապարունակության ուսումնասիրմանը: Նա առաջարկել է մեթոդ, որը հնարավորություն է ընձեռում մեծ բարձրությունների վրա թռչող արհեստական արբանյակներից գերբարձր հաճախության ռադիոալիքների և օպտիկական դիտարկումների միջոցով որոշել մթնոլորտում ջրային գոլորշիների պարունակությունը: Ցույց է տվել, որ մթնոլորտում ալիքատարի առաջացման համար կարևոր է ոչ միայն բեկման ցուցչի փոփոխությունը, այլ նաև օդային շերտի հաստությունը, որտեղ փոփոխվում է բեկման ցուցիչը: Նրա ղեկավարությամբ տեսականորեն ապացուցվել և փորձով հիմնավորվել է, որ «օդ-ջրի մակերևույթ» համակարգի ռադիոճառագայթման ինտենսիվության հորիզոնական բաղադրիչը խիստ կախված է մթնոլորտում ջրային գոլորշիների ուղղաձիգ բաշխման պրոֆիլից:

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԻՇԽԱՆ ԳՎԻԴՈՆԻ

Մաթեմատիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր



Ծնվել է 1947թ. հունվարի 19-ին Մարտունի քաղաքում: 1964թ. ավարտել է ծննդավայրի թիվ 1 միջնակարգ դպրոցը, 1969թ. ԵՊՀ մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետը:

1971-1989թթ. Ի.Խաչատրյանն աշխատել է ՀԽՍՀ ԳԱ մաթեմատիկայի ինստիտուտում: 1977թ. պաշտպանել է թեկնածուական, 1988թ. դոկտորական ատենախոսություն: 1982թ. նրան շնորհվել է ավագ գիտաշխատողի, 1991թ.՝ պրոֆեսորի կոչում: 1989-ից նա ԵՊՀ դիֆերենցիալ հավասարումների ամբիոնի վարիչն է:

Ի.Խաչատրյանը հեղինակ է 32 գիտական հոդվածների, "Пространства с операцией предела" (Ер., 1999) մենագրության, ինչպես նաև համահեղինակ՝ «Բանախյան հանրահաշիվներ և սպեկտրալ տեսություն» (Եր., 2008) ուսումնական ձեռնարկի:

Ի.Խաչատրյանի գիտական ուսումնասիրությունների հիմնական ուղղություններն են՝ դիֆերենցիալ օպերատորների սպեկտրային տեսության ուղիղ և հակադարձ խնդիրներ, ֆունկցիոնալ անալիզի հիմքերին վերաբերող և բազմությունների տեսության հետ կապված հարցեր:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 6 ատենախոսություն:

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԳՈՒՐԳԵՆԻ

Քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1948թ. հունվարի 11-ին Էջմիածնում: 1965թ. ավարտել է Երևանի թիվ 122 միջնակարգ դպրոցը, 1970թ. ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը:

1974թ. Կիևի պետական համալսարանում պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, իսկ 1990թ. ստացել դոցենտի կոչում:

1974-1976թթ. Հ.Խաչատրյանը եղել է ԵՊՀ գիտահետազոտական մասի կրտսեր գիտաշխատող, 1976-1983թթ. հատուկ մաքրության նյութերի և քիմիական ռեակտիվների համամի-

ուլթենական գիտահետազոտական ինստիտուտի անօրգանական նյութերի երևանյան բաժնի ավագ գիտաշխատող, սեկտորի վարիչ, լաբորատորիայի վարիչ: 1983-ից ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի վերլուծական քիմիայի ամբիոնի վարիչն է:

1998թ. Հ.Խաչատրյանը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 2007թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Հեղինակ է ավելի քան 200 գիտական հոդվածների՝ նվիրված հիմնային օրգանական ներկանյութերի կիրառմամբ ազնիվ մետաղների, հազվագյուտ և ցրված տարրերի փոքր քանակների որոշմանը, կենսաբանորեն ակտիվ նյութերի բաժանման, մաքրման և որոշման համար հիբրիդային հանքապոլիմերային նոր սորբենտների ստեղծմանը:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 9 ատենախոսություն:

2005թ. Հ.Խաչատրյանն արժանացել է ՀՀ Նախագահի մրցանակի:

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՏԵԼԵՄԱԿ ՍՈՒՐԵՆԻ

Հնագետ,
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1932թ. ապրիլի 27-ին Երևանում: 1948թ. ավարտել է Երևանի թիվ 30 միջնակարգ դպրոցը, 1956թ.՝ Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի պատմության ֆակուլտետը:

1963թ. Տ.Խաչատրյանը պաշտպանել է թեկնածուական, 1975թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1979թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1956-1976թթ. նա Հայաստանի պատմության պետական թանգարանի գիտաշխատող էր, այնուհետև հնագիտության բաժնի վարիչ: 1973-1975թթ. դասավանդել է ԵՊՀ հնագիտության, ազգագրության և աղբյուրագիտության ամբիոնում: 1976-1982թթ. եղել է ԵՊՀ հնագիտության և ազգագրության ամբիոնի վարիչ, 1982-1987թթ. Հայաստանի պատմության պետական թանգարանի տնօրեն, 1987-1989թթ.՝ ՀԽՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի առաջատար գիտաշխատող:

Տ.Խաչատրյանի աշխատանքները վերաբերում են Շիրակի բրոնզի և վաղ երկաթի դարաշրջանի մշակույթի ուսումնասի-

րությանը: 1960-1988թթ. նա ղեկավարել է Շիրակի հնագիտական արշավախումբը և պեղումներ կատարել Արթիկում, Վարդաձորում, Սպանդարյանում ու Հառիճում:

Հեղինակ է շուրջ 50 հոդվածի և «Հին Արթիկի մշակույթը» (ռուս., Եր., 1963), "Древняя культура Ширака III-I тыс. до н.э." (Ер., 1975) մենագրությունների և «Արթիկի դամբարանադաշտը» կատալոգի (ռուս., Եր., 1979):

Վախճանվել է 1989թ. փետրվարի 27-ին Երևանում:

ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ ԿԱՐՈ ԷՐԱՆԻ

Քիմիկոս,
տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1909թ. փետրվարի 27-ին Սասուն գավառի Ջրաշեն գյուղում: 1915թ., Մեծ եղեռնից մազապուրծ՝ Խաչատուրյանների ընտանիքը գաղթել է Ալեքսանդրապոլ (այժմ՝ Գյումրի): 1920-1930թթ. ավարտելով տեղի միջնակարգ դպրոցը՝ ընդունվել է Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի քիմիայի ֆակուլտետ: Ավարտելուց հետո ուսումը շարունակել է նույն բուհի ասպիրանտուրայում:

1941թ. Կ.Խաչատուրյանը Լենինգրադում (այժմ՝ Սանկտ Պետերբուրգ) պաշտպանել է թեկնածուական, 1951թ. դոկտորական ատենախոսություն: 1958-ին նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1945-1959թթ. եղել է Լենինգրադի Ն.Կռիլովի անվան ռազմածովային ակադեմիայի ջերմադինամիկայի և այրման տեսության ամբիոնի պետ: 1959թ. հրավիրվել է Երևան և նշանակվել ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի ֆիզիկական քիմիայի ամբիոնի պրոֆեսոր: 1960-1964թթ. նա քիմիայի ֆակուլտետի տեսական քիմիայի ամբիոնի վարիչն էր: 1964թ. կազմակերպել է քիմիական ֆիզիկայի և մոլեկուլի կառուցվածքի ամբիոնը և այն ղեկավարել է մինչև 1984թ.: 1966-1977թթ. Կ.Խաչատուրյանը ԵՊՀ գիտական աշխատանքների գծով պրոռեկտորն էր:

Հեղինակ է «Տեսական քիմիայի հիմունքներ» (Եր., 1974) ուսումնական երկհատոր ձեռնարկի, ջերմադինամիկային վերաբերող "Основы термодинамики и теория горения" (Л., 1951-1955) եռահատոր մենագրության: Գիտական աշխա-

տանքները վերաբերում են հեղուկների և լուծույթների մակերևութային լարվածության ջերմադինամիկայի և հրթիռային շարժիչներում այրման պրոցեսների տեսության հարցերին:

1967թ. Կ.Խաչատուրյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Նրան շնորհվել է Բրատիսլավայի և Լյուբլինի համալսարանների պատվավոր պրոֆեսորի կոչում: Պարգևատրվել է բազմաթիվ շքանշաններով ու մեդալներով:

Կ.Խաչատուրյանը վախճանվել է 1993թ. մարտի 29-ին Երևանում:

ԽԱՉԻԿՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ ԵՐԵՄԻ

Աստղաֆիզիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս



Ծնվել է 1928թ. դեկտեմբերի 16-ին Երևանում: 1946թ. ավարտել է Երևանի թիվ 20 դպրոցը, 1951թ. ԵՊՀ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը:

1951-1952թթ. Էդ.Խաչիկյանն աշխատել է ՀԽՍՀ ԳԱ Բյուրականի աստղադիտարանում: 1952-1955թթ. եղել է ԵՊՀ, ապա՝ Լենինգրադի պետական համալսարանի տեսական աստղաֆիզիկայի ամբիոնի ասպիրանտ, որտեղ էլ 1957թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1968թ. նրան շնորհվել է դոցենտի կոչում:

1955-1980թթ. Էդ.Խաչիկյանը եղել է Բյուրականի աստղադիտարանի գիտական քարտուղար, լաբորատորիայի վարիչ: 1975թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1982թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1968-1982թթ. եղել է ԵՊՀ դոցենտ, 1980-1985թթ.՝ ֆիզիկայի ֆակուլտետի դեկան, 1985-ից՝ Բյուրականի աստղադիտարանի առաջատար գիտաշխատող, բաժնի վարիչ, 1999-2003թթ.՝ տնօրեն, 2003-ից՝ գլխավոր գիտաշխատող, տնօրենի խորհրդական:

1996թ. Էդ.Խաչիկյանն ընտրվել է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս:

1968-2007թթ. դասախոսել է ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի աստղաֆիզիկայի ամբիոնում:

1955թ. նա հայտնաբերել է խեցգետնաձև միգամածության ճառագայթման բևեռացման բարձր աստիճանը և նրա մագնի-

սական դաշտի համասեռությունը, ինչպես նաև անիզոտրոպ նյութի ժայթքում Հաբլի միգամածության միջուկից: 1967-1968թթ. և 1973թ. Էդ.Խաչիկյանը հայտնաբերել է մի շարք նոր ակտիվ գալակտիկաներ, Գ.Վիդմանի հետ հայտնաբերել ժայթքում Մարգարյան-6 գալակտիկայի միջուկից և Վ.Համբարձումյանի ու Ն.Ենգիբարյանի հետ առաջարկել այդ երևույթը բացատրելու տեսական մոդել:

1991թ. Էդ.Խաչիկյանը Բուենոս-Այրեսում ընտրվել է Միջազգային աստղագիտական միության «Գալակտիկաներ» հանձնաժողովի նախագահ: Զեկուցումներով հանդես է եկել Ուկրաինայի, Բուլղարիայի, Իտալիայի, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի, Իրանի և այլ երկրների համալսարաններում:

Էդ.Խաչիկյանը պարգևատրվել է «Պատվո նշան» շքանշանով (1979), «1941-1945թթ. Հայրենական պատերազմում աշխատանքային արիության համար» մեդալով (1947), ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատվոգրով (1967):

ԽԼՂԱԹՅԱՆ ՎԱՐԱԶԴԱՏ ԵՐԵՄԻ

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր



Ծնվել է 1930թ. օգոստոսի 20-ին Ախուրյանի շրջանի Ճլոխան (այժմ՝ Բենիամին) գյուղում: 1934թ. տեղափոխվել է Երևան: 1949թ. ավարտել է Երևանի թիվ 41 միջնակարգ դպրոցը, 1954թ. ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետը: 1954-1957թթ. սովորել է ասպիրանտուրայում:

1958թ. Վ.Խլղաթյանը պաշտպանել է թեկնածուական, 1970թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1962թ. նրան շնորհվել է դոցենտի, 1973թ. պրոֆեսորի կոչում:

1958-1961թթ. նա եղել է ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի «Ֆինանսներ և վարկ» ամբիոնի դասախոս, 1961-1975թթ. նույն ամբիոնի վարիչ, 1975-1980թթ. նորաստեղծ ԵԺՏԻ գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր, 1980-1991թթ.՝ ֆինանսահաշվային ֆակուլտետի դեկան, 1991-2002թթ. «Ընդհանուր ֆինանսներ և վարկ» ամբիոնի պրոֆեսոր:

Վ.Խլղաթյանի գիտական ուսումնասիրությունները վերաբերում են տնտեսագիտության և ֆինանսական պլանավորման բնագավառում մաթեմատիկական մեթոդների կիրառմանը:

Հեղինակ է շուրջ 80 գիտական աշխատանքների, այդ թվում՝ 12 մենագրության: Դրանցից են՝ «Շահույթի և շահութաբերության մաթեմատիկական մոդելավորումը» (Եր., 1967), «Արտադրության շահութաբերությունը և դրա որոշման մաթեմատիկական մեթոդները» (Եր., 1968), «Ձեռնարկության արտադրության շահութաբերությունը և օպտիմալ պլանավորումը» (Եր., 1970), «Արտադրության շահութաբերությունը» (Եր., 1974), «ՍՍՀՄ ֆինանսավարկային սիստեմը» (Եր., 1983) մենագրությունները:

Վ.Խլղաթյանի ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 22 ատենախոսություն:

Պարգևատրվել է Վ.Լենինի 100-ամյակի հոբելյանական (1970) և «Անանիա Շիրակացի» (2000) մեդալներով:

Վախճանվել է 2002թ. մայիսի 8-ին Երևանում:

ԽՈՋԱՆԵԹՅԱՆ ԶԵԲԵԹ ԱՂԱՋԱՆԻ

Մաթեմատիկոս, պրոֆեսոր

Ծնվել է 1885թ. դեկտեմբերի 31-ին Նախիջևան քաղաքում: 1905թ. ավարտել է Երևանի գիմնազիան: 1906-1912թթ. սովորել է Տոմսկի տեխնոլոգիական ինստիտուտի քիմիական ֆակուլտետում, 1912-1914թթ.՝ Սանկտ Պետերբուրգի տեխնոլոգիական ինստիտուտի քիմիայի ֆակուլտետում և այն ավարտել ինժեներ-տեխնոլոգի որակավորմամբ: 1915-1918թթ. ծառայել է ցարական, ասա՝ Կարմիր բանակում որպես ինժեներ, ռադիոդպրոցի դասատու, ռադիոկայանի պետ:

1922թ. Զ.Խոջանեթյանը հրավիրվել է ԵՊՀ, որտեղ աշխատել է մինչև կյանքի վերջը: 1930-ից դասավանդել է նաև Երևանի այլ բուհերում: 1933թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1938-1943թթ. եղել է ԵՊՀ բարձրագույն հանրահաշվի ամբիոնի վարիչ:

Զ.Խոջանեթյանը վախճանվել է 1943թ. հունվարի 5-ին Երևանում:

ԽՐԼՈՊՅԱՆ ԳԵՎՈՐԳ ՏԻԳՐԱՆԻ

Փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1927թ. օգոստոսի 18-ին Հալեպում: 1946թ. ավարտել է տեղի «Ալեպո Քոլեջ»-ը, 1951թ.՝ ԵՊՀ բանասիրության ֆակուլտետը: Այնուհետև սովորել է ՀԽՍՀ ԳԱ փիլիսոփայության սեկտորի ասպիրանտուրայում:

1960թ. Գ.Խրլոպյանը պաշտպանել է թեկնածուական, 1974թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1964թ. նրան շնորհվել է դոցենտի, 1975թ. պրոֆեսորի կոչում: 1962-1970թթ. եղել է ԵՊՀ փիլիսոփայության, 1970-1975թթ. փիլիսոփայության պատմության ամբիոնի դոցենտ, 1975-1977թթ. նույն ամբիոնի պրոֆեսոր, 1977-1979թթ՝ ամբիոնի վարիչ, 1979-1983թթ.՝ Վանաձորի մանկավարժական ինստիտուտի ռեկտոր, 1983-1988թթ՝ ՀԽՍՀ հեռուստատեսության և ռադիոյի պետական կոմիտեի փոխնախագահ:

Գ.Խրլոպյանը գիտամանկավարժական գործունեություն է ծավալել նաև արտասահմանյան մի շարք կրթօջախներում. 1967-1968թթ. եղել է Բեյրութի Հայկազյան հայագիտական համալսարանի, 1990-1992թթ.՝ Լա Վերնի (ԱՄՆ) համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչ:

Հեղինակ է գիտական բազմաթիվ հոդվածների և գրքերի, որոնցից առավել կարևոր են «Անանիա Շիրակացու աշխարհայացքը» (Եր., 1964), «Ժամանակակից կրոնները» (Եր., 1965), «Հայ սոցիալական իմաստասիրության պատմություն» (Եր., 1978), «Բուհական դաստիարակության սոցիալ-հոգեբանական հարցեր» (Եր., 1979), «Ցեղասպանագիտություն» (Բեյրութ, 2006) աշխատությունները:

1986թ. Գ.Խրլոպյանին շնորհվել է Լա Վերնի համալսարանի պատվավոր դոկտորի կոչում: 1999թ. պարգևատրվել է «Ս.Սահակ-Ս.Մեսրոպ» շքանշանով:

1989-ից բնակվում է ԱՄՆ-ում:

ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ ԱԼՖՐԵԴ ՀԱՅԿԻ

Ֆիզիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր

Ծնվել է 1935թ. մարտի 12-ին Մոսկվայում: 1953թ. ավարտել է Երևանի թիվ 20 դպրոցը, 1959թ. Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետը: 1965թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն:

Ա.Խուդավերդյանի գիտական գործունեությունն սկսել է Երևանի ֆիզիկայի ինստիտուտի միջուկային սպեկտրադիտման լաբորատորիայում:

1975թ. նա տեղափոխվել է ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետ, որտեղ մինչև 2002թ. եղել է միջուկային ֆիզիկայի ամբիոնի վարիչ, այնուհետև՝ ամբիոնի պրոֆեսոր:

1978թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1980թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Ա.Խուդավերդյանի ղեկավարությամբ Երևանի Ավանի աղի հանքի ստորգետնյա կայանում գերծանր ատոմային միջուկների գրանցման նպատակով ստեղծվել է ցածր ֆոնային լաբորատորիա:

Նրա ջանքերով ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետում բացվել է «Միջուկային էներգետիկա» մասնագիտությունը, և միջուկային ֆիզիկայի ամբիոնում սկսվել է ռեակտորների ֆիզիկայի գծով կադրերի պատրաստումը:

Հեղինակ է շուրջ 110 գիտական հոդվածների, “Экспериментальные методы физики атомного ядра и элементарных частиц” (Ер., 1988) մենագրության, համահեղինակ՝ “Основы физики и эксплуатации реакторной установки ААЭС” (Мецамор, 2000) մենագրության և “Физика ядерных реакторов” (Ер., 2006) ուսումնական ձեռնարկի: Նրա համահեղինակությամբ հրատարակվել է նաև ուսումնական ձեռնարկ ՀԱԷԿ-ի շահագործող անձնակազմի համար:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 5 ատենախոսություն:

1980թ. Ա.Խուդավերդյանն արժանացել է ՀԽՍՀ Պետական մրցանակի:

Վախճանվել է 2005թ. հունիսի 26-ին Երևանում:

ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ ԼԵՆԴՐՈՒՇ ԱՐՇԱԿԻ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Ծնվել է 1927թ. մայիսի 1-ին Գորիսի շրջանի Շինուհայր գյուղում: 1946թ. ավարտել է Երևանի թիվ 1 միջնակարգ դպրոցը, 1951թ.՝ ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետը: 1952-1955թթ. Լ.Խուրշուդյանը սովորել է ասպիրանտուրայում, ապա անցել աշխատանքի ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտում որպես ավագ գիտաշխատող: 1956թ. պաշտպանել է թեկնածուական, 1966թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1980թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1990թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1996թ.՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս:

1974-1977թթ. Լ.Խուրշուդյանը եղել է Խ.Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտի գիտական կոմունիզմի, իսկ 1977-ից մինչև կյանքի վերջը՝ ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի վարիչ:

Լ.Խուրշուդյանը հեղինակ է ավելի քան 100 գիտական աշխատությունների, որոնցից առավել կարևոր են «Սովետական Ռուսաստանը և հայկական հարցը» (Եր., 1977), «Հայ քաղաքական կուսակցությունների պատմության և գաղափարախոսության մի քանի հարցեր» (Եր., 1985), «Դաշնակցություն կուսակցության քաղաքականության լուսաբանումը սովետական պատմագրության մեջ» (Եր., 1988), «Հայկական հարցը» (Եր., 1995), «Հայոց ազգային գաղափարախոսություն» (Եր., 1999), «Հայաստանի բաժանումը 1920 թվականին» (Եր., 2002) մենագրությունները:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 8 ատենախոսություն:

Նա հայ պատմագիտական միտքը ներկայացրել է միջազգային բազմաթիվ գիտաժողովներում ու նստաշրջաններում (Բոստոն, Լոս-Անջելես, Թեհրան, Բեյրութ, Բուենոս-Այրես և այլն):

Լ.Խուրշուդյանը վախճանվել է 1999թ. հունիսի 7-ին Երևանում:

ԿԱՆԱՅԱՆ ՀԱՅԿ ՄԿՐՏՉԻ

Ակնաբույժ, դոցենտ,
ՀԽՍՀ վաստակավոր բժիշկ



Ծնվել է 1875թ. փետրվարի 16-ին Իգդիրում: Ինը տարեկանում ընդունվել է Երևանի ռուսական գիմնազիան և միջնակարգ կրթություն ստանալուց հետո 1893թ., ընդունվել Սանկտ Պետերբուրգի ռազմաբժշկական ակադեմիա: Հիվանդության պատճառով վերադարձել է հայրենիք և մանկավարժական աշխատանքի անցել Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: Այնուհետև ընդունվել է Օդեսայի համալսարանի բժշկական ֆակուլտետ, որն ավարտել է 1904թ. և երկու տարի եղել ականավոր ակնաբույժ պրոֆ. Վ.Ֆիլատովի կլինիկայի ավագ օրդինատոր: Հ.Կանայանը երկար տարիներ աշխատել է Քիշնևում, Վլադիկավկազում և Բաքվում, այնուհետև տեղափոխվել է Երևան, աշխատել Երևանի քաղաքային բուժարանում: 1925թ. հրավիրվել է ԵՊՀ և բժշկական ֆակուլտետում հիմնադրել աչքի հիվանդությունների ամբիոն: 1929թ. նրան շնորհվել է դոցենտի կոչում:

Ակնաբույժ մասնագետների պատրաստման գործում էական նշանակություն է ունեցել Կրյուկովի և Օդինցովի «Աչքի հիվանդությունների մասին» դասագրքի նրա հայերեն թարգմանությունը:

Հ.Կանայանը եղել է բազմաշնորհ ու հարուստ փորձ ունեցող ակնաբույժ: Նա բարձր հմտությամբ է կատարել աչքի վիրահատությունները: Հայաստանի շրջանների ազգաբնակչության մեջ աչքի հիվանդություններով տառապողներին հայտնաբերելու և ժամանակին բժշկելու նպատակով 1920-1930-ականներին կազմակերպել է բժշկական մի շարք միջոցառումներ:

1947թ. Հ.Կանայանն արժանացել է ՀԽՍՀ վաստակավոր բժշկի կոչման:

Վախճանվել է 1950թ. օգոստոսի 10-ին Երևանում:

ԿԱՐԱԳՅԱՆ ԿԱՐՊԻՍ ՊՈՂՈՍԻ

Տնտեսագիտության թեկնածու, պրոֆեսոր,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1908թ. հոկտեմբերի 20-ին Կ.Պոլսի մերձակա հայաբնակ Պարտիզակ գյուղում: 1915թ. Մեծ եղեռնի ժամանակ գյուղի բնակչությունը տեղահանվել է և ապաստան գտել Սիրիայում: 1919թ. Կ.Կարագյանը վերադարձել է գյուղ, երկու տարի անց մշտական բնակություն հաստատել Կ.Պոլսում և տեղի հայկական դպրոցում ստացել միջնակարգ կրթություն: 1925թ. ներգաղթել է հայրենիք, բնակություն հաստատել Երևանում: 1926թ. աշխատանքի է անցել Երևանի փայտամշակման ֆաբրիկայում որպես հաշվետար, այնուհետև՝ ՀԽՍՀ աշխժողկոմատում՝ որպես հաշվապահ: 1933թ. ավարտել է Լենինականի (այժմ՝ Գյումրի) կոոպերատիվ-տնտեսագիտական ինստիտուտը և աշխատանքի անցել Հայկոոպում որպես տնտեսագետ, ապա՝ գլխավոր հաշվապահ:

1938-ից Կ.Կարագյանը համատեղությամբ դասավանդել է ԵՊՀ հաշվապահական հաշվառման ամբիոնում: 1941-1942թթ. եղել է ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի դեկան, 1942-1953թթ. Հայկոոպի գլխավոր հաշվապահ և վարչության անդամ: 1953թ. դարձել է ԵՊՀ հիմնական աշխատող:

1957թ. Կ.Կարագյանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1959թ. նրան շնորհվել է դոցենտի կոչում: 1962թ. ընտրվել է ԵՊՀ հաշվապահական հաշվառման ամբիոնի վարիչ, իսկ 1966թ. նշանակվել ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի դեկան: 1969թ. ԵՊՀ գիտխորհրդի որոշմամբ հաստատվել է պրոֆեսորի պաշտոնում:

1975թ. Կ.Կարագյանը տեղափոխվել է նորաստեղծ ԵԺՏԻ՝ վարելով ամբիոնի վարիչի պաշտոն:

Հեղինակ է «Սպառողական կոոպերացիայի ծագումը և զարգացումը Հայաստանում» (Եր., 1957) մենագրության և «Հաշվապահական հաշվառման տեսություն» (Եր., 1964) ուսումնական ձեռնարկի, որն ունեցել է 4 հրատարակություն:

1966թ. Կ.Կարագյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման:

Վախճանվել է 1992թ. նոյեմբերի 26-ին Երևանում:

ԿԱՐԱԽԱՆՅԱՆ ՌՈԲԵՐՏ ԿԱՐԱՊԵՏԻ

Ֆիզիկոս,
Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր



Ծնվել է 1945թ. սեպտեմբերի 25-ին Ախալքալաքում: 1962թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը, 1967թ. ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետը և աշխատանքի անցել ԵՊՀ պինդ մարմնի ֆիզիկայի ամբիոնում որպես լաբորանտ: 1969թ. Ռ.Կարախանյանն ընդունվել է ԽՍՀՄ ԳԱ բյուրեղագիտության ինստիտուտի ասպիրանտուրա (Մոսկվա), որն ավարտել է 1972թ. և աշխատանքի անցել ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի պինդ մարմնի ֆիզիկայի ամբիոնում որպես ասիստենտ: 1975թ. Ռ.Կարախանյանը պաշտպանել է թեկնածուական, ատենախոսություն: 1977-1983թթ. աշխատել է որպես ավագ դասախոս, 1983-2001թթ. դոցենտ: 1994թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 2003թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1979-1982թթ. դասախոսել է Ալժիրի Բատնա քաղաքի համալսարանական կենտրոնում:

Ռ.Կարախանյանի գիտական գործունեությունը նվիրված է էլեկտրոնների դիֆրակցիայի միջոցով նյութի բյուրեղային կառուցվածքի ուսումնասիրությանը, էլեկտրոնների դինամիկական ցրման երևույթների հետազոտմանը, նանոչափային նյութերի էլեկտրոնամանրադիտակային ուսումնասիրմանը: Նա հայտնաբերել է Կիկուչի-էլեկտրոնների կրկնակի դիֆրակցիայի երևույթը միաբյուրեղներում և ցույց տվել, որ Կիկուչի-գծերը որոշակի ձևով համապատասխանում են բյուրեղներում Բրիլյուենի գոտիների սահմաններին վերագրվող էլեկտրոնային վիճակներին:

Հեղինակ է շուրջ 90 գիտական հոդվածների, «Բյուրեղագիտություն» (Եր., 2001) և «Բյուրեղաֆիզիկա» (Եր., 2008) ուսումնական ձեռնարկների, համահեղինակ՝ «Ատոմային ֆիզիկա» (Եր., 2006) ձեռնարկի:

ԿԱՐԱՑԱՆ ՀԱՄԼԵՏ ՍՈՒՐԵՆԻ

Ֆիզիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

Ծնվել է 1945թ. հուլիսի 10-ին Իջևանի շրջանի Աչաջուր գյուղում: 1962թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը, 1968թ. ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետը:

1968թ. Հ.Կարայանն ընդունվել է ՀԽՍՀ ԳԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի ասպիրանտուրա, սակայն զորակոչվել է զինծառայության: 1970թ. զորացրվել է և գիտական աշխատանքի անցել նույն ինստիտուտում:

1976թ. նա պաշտպանել է թեկնածուական, 1986-ին՝ Մոսկվայում՝ դոկտորական ատենախոսություն: 1988-ին նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: Նույն թվականին տեղափոխվել է ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի օպտիկայի ամբիոն որպես պրոֆեսոր:

1991-1994թթ. Հ.Կարայանը համատեղությամբ եղել է Իջևանի պետական քոլեջ-համալսարանի հիմնադիր ռեկտոր, իսկ 1994-1996թթ. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրեն:

2006թ. նա ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ:

Հեղինակ է ավելի քան 130 գիտական և գիտահանրամատչելի հոդվածների, 5 արտոնագրի, համահեղինակ "Физическое и математическое моделирование динамики процессов в приземной атмосфере и оптико-электронные методы их исследований" (Ер., 2009) մենագրության:

Հ.Կարայանի գիտական ուսումնասիրությունները ներառում են կիսահաղորդիչների և կիսահաղորդչային սարքերի ֆիզիկան, կիսահաղորդչային էլեկտրոնիկան և էներգետիկան, բազմարժեք էլեկտրոնիկան և տրամաբանությունը, օպտոէլեկտրոնիկան և էկոլոգիական ճարտարագիտությունը, նեյրոինֆորմատիկան, քվանտային հաշվարկներն ու քվանտային համակարգիչները: Նրա ջանքերով հիմնվել են միկրոէլեկտրոնային սարքերի օպտիմիզացման ճյուղային (ք. Աբովյան, «Պոլիստոր» ԳԱՄ, 1981) և սուբմիկրոնային տեխնոլոգիաների մոդելավորման (ԵՊՀ, 1991) լաբորատորիաները:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 13 ատենախոսություն:

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԼՅՈՒԴՎԻԳ ՄՆԱՑԱԿԱՆԻ

Փիլիսոփայական և իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՌԴ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1925թ. մայիսի 1-ին Թալինի շրջանի Նոր Արթիկ գյուղում: 1937թ. նրանց ընտանիքն արտաքսվել է Ղազախստան: 1943թ. Լ.Կարապետյանն ավարտել է միջնակարգ դպրոցը, 1949թ.՝ Ալմա Աթայի իրավաբանական ինստիտուտը, իսկ 1951-ին՝ Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետը:

1951–1959թթ. Ղազախստանում և Դաղստանում զբաղվել է իրավաբանական և մանկավարժական աշխատանքով: 1962թ. ավարտել է Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի ասպիրանտուրան և պաշտպանել թեկնածուական ատենախոսություն: 1966թ. նրան շնորհվել է դոցենտի կոչում: 1962-1969թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ փիլիսոփայության և իրավունքի բաժնի գիտաշխատող, միաժամանակ՝ 1963-1968թթ. ԵՊՀ գիտական կոմունիզմի ամբիոնի դոցենտ, 1969-1979թթ. Հայաստանի կոմկուսի կենտկոմի դասախոսական խմբի ղեկավար, 1983-1989թթ.՝ ԵՊՀ գիտական կոմունիզմի ամբիոնի վարիչ, 1979-1990թթ. ԵՊՀ գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր:

1990թ. նա ընտրվել է ԽՍՀՄ Սահմանադրական վերահսկողության կոմիտեի անդամ, իսկ դրա լուծարումից հետո եղել ՌԴ Սահմանադրական դատարանի խորհրդական:

1974թ. Լ.Կարապետյանն ստացել է փիլիսոփայական գիտությունների դոկտորի, իսկ 1996թ.՝ իրավաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: 1981թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Հեղինակ է 200 հոդվածի, տասնյակից ավելի մենագրությունների, այդ թվում՝ «Գիտական կառավարում և ժողովրդավարություն» (ռուս., Մ., 1979), «Պատմական ճշմարտություն և ազգային փորձ» (Եր., 1991), «Բազմազգ պետությունը և ժողովուրդների իրավական կարգավիճակը» (ռուս., Մ., 1996):

Նա եղել է ԽՍՀՄ սոցիոլոգիական ասոցիացիայի հայկական մասնաճյուղի նախագահ, ընտրվել Երևանի քաղխորհրդի պատգամավոր:

2000թ. Լ.Կարապետյանն արժանացել է ՌԴ գիտության

վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է «1941-1945թթ. Հայրենական պատերազմի տարիներին աշխատանքային արիության համար», «Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 30 տարին» և այլ մեդալներով ու ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատվոգրով:

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ ԱՎԵՏԻՍԻ

Ֆիզիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ



Ծնվել է 1942թ. հունիսի 24 ին Երևանում: 1959թ. ավարտել է Երևանի թիվ 57 դպրոցը և ընդունվել ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետ: 1963թ. տեղափոխվել է Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարան, 1965թ. ավարտել է ֆիզիկայի ֆակուլտետը և ընդունվել նույն համալսարանի ասպիրանտուրա: 1969-1975թթ. աշխատել է ԵՊՀ տեսական ֆիզիկայի, իսկ 1975-ից՝ պինդ մարմնի ֆիզիկայի ամբիոնում որպես դասախոս:

1975թ. պաշտպանել է թեկնածուական, 1990թ. դոկտորական ատենախոսություն: 1975թ. նրան շնորհվել է դոցենտի, 2002թ. պրոֆեսորի կոչում:

1992-1994թթ. Ա.Կիրակոսյանը եղել է ՀՀ Լուսավորության առաջին փոխնախարար՝ շարունակելով համատեղությամբ դասավանդել ԵՊՀ-ում, 1994-2000թթ.՝ պինդ մարմնի ֆիզիկայի ամբիոնի պրոֆեսոր: 2000-ից՝ նույն ամբիոնի վարիչն է, 2005-ից՝ նաև պինդ մարմնի ֆիզիկայի գիտահետազոտական լաբորատորիայի գիտական ղեկավարը:

2006թ. Ա.Կիրակոսյանն ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ:

Նրա գիտական գործունեության բնագավառը պինդ մարմնի և կիսահաղորդիչների տեսությունն է: Ուսումնասիրել է չափային քվանտացված էլեկտրոնային համակարգերի օպտիկական, կինետիկական և մագնիսական հատկությունները: Կանխատեսել է նոր ֆիզիկական երևույթներ, որոնք չափային քվանտացման պայմաններում քվազիմասնիկների դիսպերսային օրենքների առանձնահատկությունների հետևանք

են (մասնավորապես՝ «պարամագնիս-դիամագնիս» չափային անցման հնարավորությունը քվանտային թաղանթներում, մակերևութային անհարթությունների ցրումներով պայմանավորված օպտիկական կլանում):

Հեղինակ է շուրջ 130 գիտական աշխատանքների, «Պինդ մարմնի ֆիզիկայի ներածություն» (հ. I, Եր., 1998, հ. II, Եր., 1999) մենագրության: Համահեղինակ է ավագ դպրոցի «Ֆիզիկա-9», «Ֆիզիկա-10» (Եր., 2000), հանրակրթական դպրոցի «Ֆիզիկա-7» (Եր., 2007), «Ֆիզիկա-8» (Եր., 2008), «Ֆիզիկա և աստղագիտություն-9» (Եր., 2009) դասագրքերի և մեթոդական ձեռնարկների:

Ա.Կիրակոսյանի ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 9 ատենախոսություն:

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ ՍԱՐԻԲԵԿԻ

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1919թ. փետրվարի 24-ին Անիի շրջանի Մարալիկ գյուղում: Սկզբնական կրթությունն ստացել է տեղի յոթնամյա դպրոցում: 1934-ից ուսումը շարունակել է Լենինականի (այժմ՝ Գյումրի) գյուղատնտեսական տեխնիկումում, որն ավարտել է 1938թ. և աշխատանքի անցել որպես մաթեմատիկայի ուսուցիչ: 1940թ. զորակոչվել է, մասնակցել Մեծ Հայրենականին հասնելով մինչև Քյոնիգսբերգ, երկու անգամ ծանր վիրավորվել:

1945թ. Ա.Կիրակոսյանն ընդունվել է ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետ: 1949թ. ավարտել և ուսումնառությունը շարունակել է ասպիրանտուրայում:

1953թ. պաշտպանել է թեկնածուական, 1973-ին՝ դոկտորական ատենախոսություն: 1976թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1960-1970թթ. եղել է ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի դեկանի տեղակալ, 1968-1975թթ. ժողտնտեսության պլանավորման ամբիոնի վարիչ: 1975թ. նա ստանձնել է նորաստեղծ ԵԺՏԻ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի պաշտոնը, միաժամանակ՝ մինչև 1991թ. ղեկավարել նույն ինստիտուտի ժողտնտեսության պլանավորման ամբիոնը:

Ա.Կիրակոսյանը հեղինակ է գիտական բազմաթիվ աշխատությունների, որոնցից առավել կարևոր են՝ «Ժողովրդա-

տնտեսական պլանի ցուցանիշների համակարգը» (Եր., 1957), «Տնտեսության պլանաչափ զարգացումը որպես սոցիալիստական երկրների ընդհանուր օրինաչափություն» (Եր., 1961), «Ինքնարժեքի պլանավորման հիմնական հարցերը» (Եր., 1967), «Արդյունաբերական արտադրանքի մեծածախ գների պլանավորումը» (Եր., 1969), «Նյութատեխնիկական մատակարարման պլանաչափ զարգացումը Սովետական Հայաստանում» (Եր., 1973) մենագրությունները և «ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության պլանավորում» (Եր., 1962, 1963, 1965) եռահատոր ուսումնական ձեռնարկը:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 30 ատենախոսություն:

Պարգևատրվել է «Աշխատանքային արիության համար» և մարտական մեդալներով:

Ա.Կիրակոսյանը վախճանվել է 1995թ. փետրվարի 26-ին Երևանում:

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԳՐԻԳՈՐ ԵՂԻՇԻ

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1936թ. փետրվարի 29-ին Թալինի շրջանի Աշնակ գյուղում: 1953թ. ավարտել է տեղի դպրոցը, 1965թ. ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետը, 1971թ.՝ ասպիրանտուրան և պաշտպանել թեկնածուական ատենախոսություն:

1971-1975թթ. Գ.Կիրակոսյանն աշխատել է ԵՊՀ քաղաքատնտեսության ամբիոնում: Այնուհետև տեղափոխվել է ԵԺՏԻ, որտեղ մինչև 1989թ. աշխատել է որպես քաղաքատնտեսության ամբիոնի դոցենտ:

1990թ. Գ.Կիրակոսյանը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1991թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1989-1991թթ. եղել է ԵԺՏԻ քաղաքատնտեսության ամբիոնի վարիչ, 1991-1993թթ. ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, իսկ 1993-2006թթ. ռեկտոր: 2006 թվականից նույն բուհի տնտեսագիտության տեսության ամբիոնի վարիչն է: Եղել է տնտեսագիտության գծով գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի նախագահ:

Հեղինակ է 110 գիտական աշխատանքների, որոնցից մասնավորապես ուշադրության են արժանի «Աշխատուժի ծախսե-

րի փոխհատուցման ձևերը սոցիալիզմի ժամանակ» (Եր., 1980), «Անձնական պահանջմունքները և աշխատուժի ծախսերի փոխհատուցումը» (Եր., 1984), «Անցումային տնտեսության վերափոխումները» (Եր., 2002) մենագրությունները: Համահեղինակ է «Տնտեսագիտական ուսմունքների պատմություն» (Եր., 2002), «Տնտեսագիտական բացատրական բառարան» (Եր., 1999) գրքերի:

1995թ. Գ.Կիրակոսյանը պարգևատրվել է «Անանիա Շիրակացի» մեդալով:

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԼԵՎՈՆ ՄԱՐՏԻՆԻ

Գրականագետ,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1928թ. դեկտեմբերի 20-ին Երևանում: 1943-1945թթ. սովորել է Երևանի հրետանային դպրոցում, ապա Թբիլիսիի հրետանային ուսումնարանում: Ծառայել է խորհրդային բանակում մինչև 1950թ.: 1953թ. դրսեկությամբ ավարտել է Երևանի ռուսաց և օտար լեզուների մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը:

1969թ. Լ.Կիրակոսյանը պաշտպանել է թեկնածուական, 1982թ.՝ դոկտորական ատենախոսություն: 2003թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1950-ից եղել է ժուռնալիստների, իսկ 1977-ից՝ գրողների միության անդամ:

1950-1952թթ. Լ.Կիրակոսյանն աշխատել է Երևանի ռադիոկոմիտեում որպես թղթակից, 1952-1960թթ. «Կոմսոմոլեց» (ռուս.) թերթի գրական աշխատող, բաժնի վարիչ, խմբագրի տեղակալ, 1960-1980թթ. «Կոմունիստ» (ռուս.) թերթի գիտության, կուլտուրայի և դպրոցների բաժնի վարիչ, 1969-ից՝ թերթի գլխավոր խմբագրի տեղակալ: 1980-1991թթ. եղել է ՀԿԿ Կենտկոմի դաղափարական բաժնի վարիչի տեղակալ՝ մամուլի գծով: 1991-2009թթ. դասավանդել է ԵՊՀ ռուս բանասիրության ֆակուլտետում, միաժամանակ՝ 1999-2009թթ. Ռուս-Հայկական (Սլավոնական) պետական համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետում՝ լինելով այդ ֆակուլտետի հիմնադիրներից մեկը: 2003թ. նրան շնորհվել է նույն համալսարանի պատվավոր պրոֆեսորի կոչում:

Լ.Կիրակոսյանի գիտական աշխատությունները նվիրված են հայ և ռուս գրականության խնդիրներին, մամուլի և գրականության տեսության հարցերին:

Հեղինակ է ավելի քան 100 գիտական աշխատությունների, ինչպես նաև հրապարակախոսական հոդվածների ժողովածուների և մեթոդական ձեռնարկների: Առավել կարևոր են «Բանաստեղծը, իրադարձությունները և ճակատագիրը» (ռուս., Եր., 1972), «Մարդը և սխրանքը, հայ պատերազմական արձակի պաթոսը» (ռուս., Եր., 1975), «Անհատի կոնցեպցիան և գրականության հերոսը» (ռուս., Եր., 1982), «Ժամանակի դիմագծերը» (ռուս., Եր., 1985), «Ժուռնալիստիկայի բանաձևերը, կամ ժուռնալիստիկան բոլորի համար» (ռուս., Եր., 2009) գրքերը:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 8 ատենախոսություն:

Լ.Կիրակոսյանը եղել է պահեստի մայոր:

Վախճանվել է 2009թ. հունվարի 16-ին Երևանում:

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ՋՈՆ ՍԱՀԱԿԻ

Պատմաբան-միջազգայնագետ,
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1929թ. մայիսի 6-ին Երևանում: 1946թ. ընդունվել և 1951-ին ավարտել է ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետը: 1951-1954թթ. սովորել է ասպիրանտուրայում՝ սկզբում ԵՊՀ ընդհանուր պատմության ամբիոնում, ապա՝ ԽՍՀՄ արևելագիտության ինստիտուտում (Մոսկվա): Այստեղ էլ նրան շնորհվել է պատմագիտության թեկնածուի գիտական աստիճան: Գիտական ու մանկավարժական գործունեությանը զուգընթաց 1962-1966թթ. Ջ.Կիրակոսյանն զբաղեցրել է ՀԿԿ Կենտկոմի պրոպագանդայի բաժնի վարիչի տեղակալի, 1966-1969թթ.՝ ՀԽՍՀ ռադիոհեռուստատեսկոմի նախագահի, 1969-1975թթ. ՀԿԿ Կենտկոմի գիտության և ուսումնական հաստատությունների բաժնի վարիչի, 1975-1985թթ.՝ ՀԽՍՀ արտաքին գործերի նախարարի պաշտոնները, ընտրվել ՀԽՍՀ VII-IX գումարումների Գերագույն խորհրդի պատգամավոր: 1966 թվականից ՀԿԿ Կենտկոմի անդամ էր:

1965թ. Ջ.Կիրակոսյանը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1969թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1972թ. նրա աշխատասիրությամբ տպագրվել է «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923թթ.)» ժողովածուն: 1978-1980թթ. լույս է տեսել նրա երկհատոր «Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը» արժեքավոր ուսումնասիրությունը, որի առաջին հատորը թարգմանվել ու տպագրվել է նաև ռուսերեն: Ջ.Կիրակոսյանի գիտական գործունեության պսակը «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ» հիմնարար մենագրությունն է (Եր., 1982, 1983), որը թարգմանվել է բուլղարերեն և անգլերեն: Այս աշխատության համար հեղինակը հետմահու արժանացել է ՀԽՍՀ Պետական մրցանակի:

1967թ. Ջ.Կիրակոսյանը դասախոսական աշխատանքի է անցել ԵՊՀ ընդհանուր պատմության ամբիոնում: 1979 թվականից մինչև իր անժամանակ մահը նա ղեկավարել է ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի Արևելքի երկրների պատմության ամբիոնը: 1978թ. մասնակցել է ՄԱԿ-ի 33-րդ նստաշրջանի աշխատանքներին:

1971թ. Ջ.Կիրակոսյանը պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով:

Վախճանվել է 1985թ. հունիսի 20-ին Մոսկվայում, թաղված է Երևանում:

ԿՈՂԲԵՏԼՅԱՆՑ ԵՐՎԱՆԴ ԳԵՎՈՐԳԻ

Մաթեմատիկոս-ինժեներ,
գիտության դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1888թ. փետրվարի 9-ին Նոր Նախիջևանում: 1912թ. ավարտել է Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանը:

1912-1920թթ. Ե.Կողբետլյանցն աշխատել է Մոսկվայի տարբեր բուհերում և Կրասնոդարի պոլիտեխնիկական ինստիտուտում: 1920թ. հրավիրվել է ԵՊՀ և մինչև 1921թ. եղել ԵՊՀ վերակազմության խորհրդի նախագահը, համալսարանի առաջին խորհրդի կազմում ընտրված երեք անդամներից մեկը:

1921թ. Ե.Կողբետլյանցը մեկնել է արտասահման: 1923թ. Սորբոնի համալսարանում պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1921-1927թթ. դասավանդել է Սորբոնի հա-

մալսարանում՝ լինելով նաև Ֆրանսիայի երկրաֆիզիկոսների միության նախագահ: 1933-1938թթ. նա հիմնադրել և ղեկավարել է Թեհրանի համալսարանի մաթեմատիկայի և երկնային մեխանիկայի ամբիոնները, 1938-1942թթ. ղեկավարել Ֆրանսիական բանակի հրետանու գյուտարարական գիտական խորհուրդը: 1942-1953թթ. աշխատել է ԱՄՆ-ի Լեյթի և Կոլումբիայի համալսարաններում, 1953-1964թթ.՝ IBM ֆիրմայում:

Ե.Կողբետլյանցը հեղինակ է շուրջ 100 գիտական հոդվածների և մենագրությունների: Աշխատանքները վերաբերում են ինտեգրալ հավասարումներին, օրթոգոնալ բազմանդամներին, թվային անալիզին, ձգողականության և մագնիսականության տեսություններին, կիրառական երկրաբանությանը և այլն: Հեղինակ է Երկրի մագնիսականության չափման ճշգրիտ սարքերի, անալոգային տեխնիկայի, գիրոսկոպական սարքերի վերաբերյալ մի շարք գյուտերի: Նա «Ստրետչ» մակնիշի էլեկտրոնային հաշվիչ մեքենաների հեղինակներից է: Եղել է Նյու-Յորքի գիտությունների ակադեմիայի Ռոկֆելերի ինստիտուտի և մի շարք երկրների ակադեմիաների անդամ:

Ե.Կողբետլյանցը վախճանվել է 1972թ. ԱՄՆ-ում:

ԿՈՋՈՅԱՆ ՀԱԿՈԲ ԿԱՐԱՊԵՏԻ

Գեղանկարիչ, մանկավարժ,
ՀԽՍՀ ժողովրդական նկարիչ

Ծնվել է 1883թ. դեկտեմբերի 15-ին Ախալցխայում: Սովորել է Վլադիկավկազի քաղաքային վարժարանում: 1900թ. ավարտել է վարժարանը, մեկնել Մոսկվա և 1900-1901թթ. աշակերտել ոսկերիչ-փորագրիչ Պրուսովին:

1905-1907թթ. Հ.Կոջոյանը սովորել է Մյունխենի գեղարվեստի ակադեմիայում, ապա երկու տարի ապրել Փարիզում: 1909թ. վերադարձել է Վլադիկավկազ և զորակոչվել բանակ: 1912-1914թթ. աշխատել է Մոսկվայում: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին կրկին զորակոչվել է բանակ:

1918թ. Հ.Կոջոյանը հաստատվել է Հայաստանում և նույն թվականին Ն.Մառի հնագիտական արշավախմբի հետ մասնակցել Անիի պեղումներին: Հայոց մայրաքաղաքում անցկացրած օրերի տպավորությունները հետագայում արտահայտվել են նրա «Անիի սվերակները» (1919) նկարում: 1920թ. հուլիսին

Հ.Կոջոյանը ճարտարապետ Ալ.Թամանյանի նախագծով ստեղծել է Հայաստանի Հանրապետության զինանշանը:

1921թ. փետրվարյան ապստամբության պարտությունից հետո Հ.Կոջոյանը հեռացել է Պարսկաստան և հաստատվել Թավրիզում: 1922թ. Խորհրդային Հայաստանի կառավարության հրավերով նկարիչը վերադարձել է Երևան:

Ճարտարապետ Կ.Հալաբյանի և նկարիչ Ս.Առաքելյանի հետ Հ.Կոջոյանն աշխատել է ռուսաստանյան հեռագրական գործակալության հայկական բաժանմունքի (ԱրմԿավՌՕՍՏԱ) արվեստանոցում, թողարկել ագիտացիոն պլակատներ և ծաղրանկարներ: 1923թ. նկարչի աշխատանքը Մոսկվայում արժանացել է առաջին կարգի դիպլոմի:

1924-1930թթ. Հ.Կոջոյանը ԵՊՀ տեխնիկական ֆակուլտետում ապագա ճարտարապետներին դասավանդել է նկարչություն, իսկ 1930-ից շարունակել է աշխատանքը նորաստեղծ ԵՐՊԻ-ում:

1925թ. նա մի շարք նշանավոր նկարիչների հետ իրականացրել է «Խորհրդային Հայաստանի հինգ տարին» ժողովածուի ձևավորումը, մասնակցել ՀԽՍՀ պետական զինանշանի էսքիզների ցուցահանդեսին:

1920-ականներին նրա ստեղծած նշանավոր գործերից է «Սասունցի Դավիթ» գրաֆիկական աշխատանքը: Հետագայում ևս շարունակել է ստեղծագործել գրքային գրաֆիկայի ասպարեզում. 1925թ. նկարազարդել է Ստ.Զորյանի «Հազարան բլբուլ» հեքիաթը, առաջին մանկական պատկերազարդ հրատարակությունները՝ Հ.Թումանյանի «Գիքորը» և «Տերն ու ծառան», 1933թ.՝ Ե.Չարենցի «Գիրք ճանապարհին» ու Ա.Բակունցի «Սև ցելերի սերմնացանը», 1934թ.՝ Մ.Գորկու «Բանաստեղծություններ և լեգենդներ» ժողովածուն և այլն: Նրա նկարազարդումները 1934թ. ներկայացվել են խորհրդային գրողների առաջին համագումարի առթիվ Մոսկվայում բացված ցուցահանդեսում՝ նկարչին բերելով լայն ճանաչում: Այդ շրջանում նրա գործերը ներկայացվել են խորհրդային գրաֆիկայի միջազգային մի շարք ցուցահանդեսներում (Լոնդոն, Ֆիլադելֆիա, Դանցիգ):

1939թ. Հ.Կոջոյանը մասնակցել է Մոսկվայում բացված հայկական արվեստի տասնօրյակի ցուցահանդեսին և պարգևատրվել Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով: 1941թ. նա ստեղծել է Հ. Ստեփանյանի «Սասունցի Դավիթ» օպերայի դե-

կորացիաների էսքիզները: 1945թ. նա նկարազարդել է Սայաթ-Նովայի խաղերի ժողովածուն: 1945-1954թթ. դասավանդել է Երևանի գեղարվեստի ինստիտուտում:

1954թ. և 1958թ. Երևանում, 1959թ. Թբիլիսիում, Բաքվում, Մոսկվայում, Լենինգրադում, 1982թ. Սոֆիայում և Պլովդիվում կազմակերպվել են նրա ստեղծագործությունների անհատական ցուցահանդեսներ: Հ.Կոջոյանի վերջին տարիների լավագույն ստեղծագործություններից են Հ.Թումանյանի «Փարվանա» լեգենդի նկարազարդումները:

Հ.Կոջոյանը վախճանվել է 1959թ. ապրիլի 24-ին Երևանում:

Հ.Կոջոյանի ստեղծագործությունները պահվում են Հայաստանի ազգային պատկերասրահում, Սանկտ Պետերբուրգի ռուսական թանգարանում, Մոսկվայի՝ Արևելքի ժողովուրդների արվեստի թանգարանում, Կիևի ռուսական արվեստի թանգարանում և նկարչի՝ 1973թ. Երևանում ստեղծված տուն-թանգարանում:

ԿՐՑՈՒՉԿՑԱՆ ԳԱԳԻԿ ՑՈՒՐԻ

Ֆիզիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

Ծնվել է 1946թ. դեկտեմբերի 30-ին Երևանում: 1963թ. ավարտել է թիվ 25 դպրոցը: Նույն թվականին ընդունվել է ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետ: 1968թ. Գ.Կրյուչկյանն ավարտել է համալսարանը և աշխատանքի անցել ՀԽՍՀ ԳԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտում որպես կրտսեր գիտաշխատող: 1970թ. ընդունվել է Մոսկվայի ԽՍՀՄ ԳԱ Պ.Լեբեդևի անվան Ֆիզիկական ինստիտուտի ասպիրանտուրան: 1974թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն:

1986թ. Գ.Կրյուչկյանը ԽՍՀՄ ԳԱ Պ.Լեբեդևի անվան ֆիզիկայի ինստիտուտում պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1992թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 2006թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ:

1989թ. եղել է ՀԽՍՀ ԳԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի առաջատար գիտաշխատող, 1992-ից՝ քվանտային ինֆորմատիկայի լաբորատորիայի վարիչ:

1988-ից Գ.Կրյուչկյանը համատեղությամբ աշխատել է ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի տեսական ֆիզիկայի ամբիոնում, 1992թ.՝ օպտիկայի ամբիոնի պրոֆեսորի պաշտոնում: 2001-ից նա աշխատում է ԵՊՀ տեսական ֆիզիկայի ամբիոնում՝ համատեղելով աշխատանքը Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի լաբորատորիայի վարիչի պաշտոնի հետ:

Գ.Կրյուչկյանը հեղինակ է ավելի քան 125 գիտական աշխատանքների, որոնք վերաբերում են լազերային դաշտում ատոմական համակարգերի քվանտային էլեկտրադինամիկային, քվանտային օպտիկայի և սեղմված վիճակների հիմնարար և կիրառական խնդիրներին, թակարդված սառը իոնների լազերային ֆիզիկային, լազերային տեխնոլոգիաներում համակարգչային մոդելավորման ու բարձր արդյունավետությամբ հաշվարկների կիրառություններին, քվանտային ինֆորմացիոն տեխնոլոգիաներում լազերային ֆիզիկայի կիրառմանը:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 7 ատենախոսություն:

2002թ. Գ.Կրյուչկյանն արժանացել է ՀՀ Նախագահի մրցանակի:

ՀԱԽՈՒՄՅԱՆ ՍԵՄՅՈՆ ՏԻԳՐԱՆԻ

Գրականագետ,
բանասիրական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր

Ծնվել է 1930թ. փետրվարի 17-ին Երևանում: Թիվ 8 և թիվ 20 դպրոցներում ստանալով միջնակարգ կրթություն՝ 1947թ. ընդունվել և 1952-ին ավարտել է ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի ռուսաց լեզվի և գրականության բաժինը, ապա՝ ուսումնառությունը շարունակել ասպիրանտուրայում, որն ավարտել է Մոսկվայում:

1956թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1965թ. նրան շնորհվել է դոցենտի, 1991-ին՝ պրոֆեսորի կոչում:

1956-ից Ս.Հախումյանը ռուսաց լեզու և գրականություն է դասավանդել ԵՊՀ մասնագիտական տարբեր կուրսերում: 1963-ից եղել է ԵՊՀ գիտական քարտուղար, 1965-1972թթ. և 1989-2000թթ.՝ հումանիտար ֆակուլտետների ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, 1972-1973թթ. Երևանի Վ.Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների պետական մանկավարժական ինստիտուտի ռեկտոր, 1973-ից՝ ՀԽՍՀ լուսավորության, 1988-ից՝ ժողովրդական կրթության նախարար, 2000-2006թթ.՝ ԵՊՀ ռեկտորատի խորհրդական: 2006թ. անցել է կենսաթոշակի:

Նա հեղինակ է շուրջ 150 աշխատությունների՝ նվիրված հայոց և ռուսաց լեզուների փոխառնչություններին, ռուս-հայկական գրական կապերին, ռուս գրականության և գեղարվեստական թարգմանության հարցերին, ինչպես նաև կրթական-դաստիարակչական խնդիրներին: Համահեղինակ է «Մաքսիմ Գորկին և Հայաստանը» (ռուս., Եր., 1968) մենագրության, «Ռուս-հայերեն դարձվածաբանական բառարան»-ի (Եր., 1975):

Ս.Հախումյանը 1971-ից գրողների միության անդամ է: Նրա գրչին են պատկանում «Դիմանկարի նրբագծեր» (ռուս., Եր., 1999), «Խոհեր եղելությանց» (ռուս., Եր., 2002) և «Անցյալից» (ռուս., Եր., 2006) հուշախառն էսսեների, էսքիզների,

հոդվածների և ելույթների ժողովածուները:

Հելինակ է նաև հայկական հանրակրթական դպրոցի 8-10-րդ դասարանների ռուսաց լեզվի դասագրքերի, որոնք 1988թ. արժանացել են ՀԽՍՀ Պետական մրցանակի:

Ս.Հախումյանը եղել է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի IX-XI գումարումների պատգամավոր, բազմիցս ընտրվել ՀԿԿ Կենտկոմի անդամ:

Պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի (2) շքանշանով, 2000թ.՝ «Մովսես Խորենացի» և այլ մեդալներով:

ՀԱԽՈՒՄՅԱՆ ՏԻԳՐԱՆ ՍԻՄՈՆԻ

Գրականագետ,
բանասիրական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր,
ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ

Ծնվել է 1894թ. հունվարի 17-ին Երևանում: 1912թ. ավարտել է Բաքվի ռեալական ուսումնարանը, 1917թ. Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան համալսարանի պատմաբանասիրական և իրավաբանական ֆակուլտետները: Մինչև 1920թ. աշխատակցել է Թիֆլիսի հայկական թերթերին, եղել է «Ժողովրդի ձայն» և «Մշակ» լրագրերի խմբագիր: Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո՝ 1921թ. տեղափոխվել է Երևան, որտեղ սկզբում աշխատել է ՀԽՍՀ լուսժողկոմատի քաղլուսավորության գլխավոր վարչությունում, ապա՝ «Մաճկալ» ու «Խորհրդային Հայաստան» թերթերի և «Վերելք» հանդեսի խմբագրություններում, միաժամանակ 1923-1931թթ. եղել է դասապաշտպան: 1941-1958թթ. կատարել է գիտամանկավարժական աշխատանք դասավանդելով ԵՊՀ-ում, Խ.Աբովյանի անվան հայկական մանկավարժական, Վ.Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների, ինչպես և գեղարվեստաթատերական ինստիտուտներում:

1951թ. Տ.Հախումյանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, իսկ 1961թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Տ.Հախումյանի գրչին են պատկանում «Անտոն Չեխով. նրա կյանքը և ստեղծագործությունը» (Եր., 1944), «Ալեքսանդր Սերգեևիչ Գրիբոյեդով. նրա կյանքն ու ստեղծագործությունը» (Եր., 1945), «Ասք սովետական դյուցազունների

մասին» (Եր., 1945), «Դ.Դեմիրճյանի դրամատուրգիան» (Եր., 1958), աշխատությունները: Նա հեղինակ է նաև բազմաթիվ գիտական հոդվածների ու արժեքավոր հուշերի՝ նվիրված դրականության, թատերագիտության, թարգմանչական արվեստի խնդիրներին ու մշակույթի նշանավոր գործիչներին, որոնց մի զգալի մասը տեղ է գտել «Գրական հոդվածներ և հիշողություններ» ռուսերեն երկհատորյակում (Եր., 1966, 1970) և հայերեն «Հուշեր» (Եր., 1987) ժողովածուում:

Տ.Հախումյանը հեղինակ է բանաստեղծությունների և մեկուկես տասնյակ դրամաների: Դեռևս 1931թ. Երևանի Գ.Սունդուկյանի անվան պետական ակադեմիական թատրոնը բեմադրել է նրա «Թշնամին» պիեսը, իսկ առանձին ստեղծագործություններ բեմադրվել են Երևանի, Թբիլիսիի, Բաքվի, Ռոստովի, Լենինականի թատրոններում: Տ.Հախումյանի բանաստեղծությունների առաջին ժողովածուն (Ե.Չարենցի ընտրությամբ) լույս է տեսել 1923թ. Երևանում, իսկ «Երկու ամիս ռազմաճակատում» ճակատային օրագիրը՝ 1946թ.:

1934-ից եղել է գրողների միության անդամ:

1943թ. Տ.Հախումյանն արժանացել է ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է «Պատվո նշան» շքանշանով (1939) և մի շարք մեդալներով:

Վախճանվել է 1973թ. մարտի 25-ին Երևանում:

ՀԱԿՈԲՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՐՇԱԿԻ

Ֆիզիկոս,
քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ

Ծնվել է 1890թ. դեկտեմբերի 25-ին Ալեքսանդրապոլում (այժմ՝ Գյումրի): Սկզբնական կրթությունն ստացել է հայրենի քաղաքում: 1909թ. ընդունվել է Սանկտ Պետերբուրգի պոլիտեխնիկական ինստիտուտի մեխանիկայի բաժինը և 1917թ. ավարտել «Թերմոդինամիկա և տեսական մեխանիկա» մասնագիտությամբ:

1917-1920թթ. Ա.Հակոբյանը Ալեքսանդրապոլի միջնակարգ դպրոցներում դասավանդել է ֆիզիկա, մաթեմատիկա, կիրառական մեխանիկա: 1920թ. հրավիրվել է ԵՊՀ և դասախոսել մինչև

1930թ. դառնալով տեխնիկական ֆակուլտետի հիմնադիր-կազմակերպիչներից մեկը: 1928-1929թթ. եղել այդ ֆակուլտետի դեկան: 1930-1939թթ. հիմնադրել և ղեկավարել է ԵՊԻ տեսական մեխանիկայի, 1939-1954թթ.՝ թերմոդինամիկայի և ջերմատեխնիկայի ամբիոնները: 1936-1944թթ. եղել է ԵՊԻ գիտական և ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրեն:

1936թ. Ա.Հակոբյանը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, 1937թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում, իսկ 1943թ. հաստատվել է ՀԽՍՀ ԳԱ հիմնադիր կազմի ակադեմիկոս:

1928-1940թթ. նա Երևանի սեյսմիկ կայանի կազմակերպիչն էր և վարիչը, իսկ 1943-ից՝ ՀԽՍՀ ԳԱ ֆիզիկամաթեմատիկական բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի տեղակալը, ակադեմիայի բառարանագիտական հանձնաժողովի նախագահը:

Ա.Հակոբյանի գիտական հետազոտությունները վերաբերում են դասական և կիրառական ջերմադինամիկայի տարբեր հարցերի: Հեղինակ է շուրջ 30 գիտական հոդվածների և «Տեսական մեխանիկա» (մաս 1, Եր., 1941, մաս 2, Եր., 1964), «Թերմոդինամիկա» (Եր., 1952) մենագրությունների և բուհական դասագրքերի: Նրա սաներից շատերը դարձել են անվանի գիտնականներ:

1941թ. Ա.Հակոբյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության և տեխնիկայի վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է Լենինի (2) շքանշանով:

Վախճանվել է 1971թ. մայիսի 14-ին Երևանում:

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՇԱԿ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Ֆիզիոլոգ,
բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1886թ. հոկտեմբերի 12-ին Լեռնային Ղարաբաղի Վարդաշատ գյուղում: 1906թ. Բաքվի գիմնազիան ավարտելուց հետո Ա.Հակոբյանն ընդունվել է Բեռլինի համալսարանի բժշկական ֆակուլտետ: 1911թ. ավարտելով համալսարանը՝ աշխատանքի է անցել Կիևի հիվանդանոցներից մեկում: 1914թ. գործուղվել է Բեռլին՝ նյարդային հիվանդություններ և ֆիզիոթերապիայի գծով վերապատրաստվելու:

Առաջին համաշխարհային պատերազմի սկզբին զորակոչվել է գործող բանակ, ծառայել որպես գնդի կրտսեր, այնուհետև՝ ավագ բժիշկ: 1917թ. տեղափոխվել է Կովկաս և ծառայել որպես զինվորական բժիշկ: 1918թ. Ա.Հակոբյանն աշխատել է Բաքվում, մեկ տարի անց տեղափոխվել Երևան, աշխատել որպես բժիշկ, ապա՝ զինվորական հոսպիտալում որպես նեյրոախտաբան:

Ա.Հակոբյանը գործուն մասնակցություն է ունեցել ԵՊՀ բժշկական ֆակուլտետի հիմնադրմանը, եղել ֆակուլտետի դեկան: Նա հիմնադրել է ֆիզիոլոգիայի ամբիոնը և ղեկավարել այն մինչև 1936թ.: 1936թ. դարձել է բժշկական գիտությունների դոկտոր, 1939թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1924թ. Ա.Հակոբյանը Երևանում կազմակերպել և ղեկավարել է նյարդային հիվանդությունների առաջին բաժանմունքը, որի հիմքի վրա հետագայում ստեղծվեց նյարդային ախտաբանության կլինիկան: 1936թ. մինչև կյանքի վերջը նա բժշկական ինստիտուտի նյարդային հիվանդությունների ամբիոնի վարիչն էր: Նրա անմիջական նախաձեռնությամբ 1923թ. հանրապետական հիվանդանոցում ստեղծվել է ֆիզիոթերապևտիկ կաբինետ, իսկ 1930-ին՝ ֆիզիոթերապիայի և կուրորտաբանության գիտահետազոտական ինստիտուտը, որի տնօրենն էր մինչև 1950թ.: Ա.Հակոբյանը զբաղվել է նաև Արզնու, Ջերմուկի, Կիրովականի և այլ առողջարանների ստեղծման խնդիրներով: Բարձր գնահատականի են արժանի Հայրենական պատերազմի տարիներին նրա մատուցած ծառայությունները. առաջին իսկ օրերից նա եղել է Հայաստանի շարժական հոսպիտալների վարչության պետ:

Ա.Հակոբյանը հեղինակն է «Ֆիզիոլոգիա» (Եր., 1922) գրքի և համահեղինակ՝ «Հայաստանի առողջարանների ու հանգստյան տների տեղեկատու» (Եր., 1935) ձեռնարկի: Պատերազմի տարիների նրա աշխատություններից հատուկ հետաքրքրություն է ներկայացնում Գ.Միրզոյանի հետ հրատարակած «Պերիֆերիկ ներվային համակարգության տրավմատիկ վնասվածքներ» համառոտ ձեռնարկը, որը մեծ օգնություն էր շարժական հոսպիտալներում աշխատող բժիշկներին:

Ա.Հակոբյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման, պարգևատրվել Լենինի և «Կարմիր աստղ» շքանշաններով:

Վախճանվել է 1960թ. օգոստոսի 12-ին Երևանում:

Երևանի կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության ԳՀ ինստիտուտը կոչվել է Ա.Հակոբյանի անունով:

ՀԱԿՈԲՅԱՆ ԹԱԴԵՎՈՍ ԽԱՉԱՏՈՒՐԻ

Պատմաբան-աշխարհագրագետ,
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1917թ. հունիսի 15-ին Կապանի շրջանի Լեռնաձոր գյուղում, որտեղ էլ ստացել է սկզբնական կրթությունը: 1940թ. ավարտել է ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետը: 1942-1943թթ. մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին:

1962թ. Թ.Հակոբյանը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, իսկ 1963թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1962-1986թթ. եղել է ԵՊՀ տնտեսական աշխարհագրության ամբիոնի վարիչ, իսկ 1955-1957թթ. և 1963-1965թթ. աշխարհագրության ֆակուլտետի դեկան:

Թ.Հակոբյանի գիտական ուսումնասիրությունները վերաբերում են Հայաստանի պատմական աշխարհագրությանը, պատմական Հայաստանի քաղաքներին, աշխարհագրության պատմությանը, Հայաստանի և հարակից շրջանների տեղանուններին:

Հեղինակ է բուհական և դպրոցական դասագրքերի, ուսումնական ձեռնարկների, քարտեզների, գիտական բազմաթիվ հոդվածների և մենագրությունների: Կարևորագույններից են «Երևանի պատմություն» (հհ. 1-4, Եր., 1959-1971), «Անիի պատմություն» (Եր., 1980), «Հայաստանի պատմական աշխարհագրություն» (Եր., 1984) և «Աշխարհագրության համառոտ պատմություն» (Եր., 1976) աշխատությունները: Առանձնապես մեծ է նրա դերը «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան» (հհ.1-5, Եր., 1986-2001) աշխատության ստեղծման գործում: 2003թ. այն արժանացել է ՀՀ Նախագահի մրցանակի:

1968թ. Թ.Հակոբյանին շնորհվել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչում:

Վախճանվել է 1989թ. հոկտեմբերի 16-ին Երևանում:

ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱԿՈԲ ՎԱՀԱՆԻ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1927թ. փետրվարի 12-ին Հոկտեմբերյանի շրջանի Արմավիր գյուղում: 1944թ. ավարտել է Երևանի թիվ 48 դպրոցը, իսկ 1950-ին՝ ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետը:

1950-ից աշխատել է հայկական ռադիոյի արտասահմանյան հաղորդումների խմբագրությունում որպես խմբագիր, 1957-1962թթ. ԵՊՀ գիտական գրադարանի վարիչ, 1980-1983թթ. օտարերկրյա քաղաքացիների նախապատրաստական ֆակուլտետի դեկան: 1954-2006թթ. Հ.Հակոբյանը դասավանդել է ԵՊՀ-ում, ընդ որում նաև ռուսերենով, ֆրանսերենով, անգլերենով: 1962-1963թթ. եղել է Վ.Բրյուսովի անվան մանկավարժական ինստիտուտի պրոռեկտոր, 1968-1975թթ. «Հայկական սովետական հանրագիտարանի» գլխավոր խմբագրության պատասխանատու քարտուղար:

2002թ. Հ.Հակոբյանը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 2007թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Հեղինակ է շուրջ յոթ տասնյակ գիտական հոդվածների և մի շարք գրքերի, որոնցից առավել կարևորներն են՝ «Նորագույն պատմություն. ԱՄՆ, Անգլիա, Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա (1918-1998թթ.)» (Եր., 1998), «Հայրենիք վերադառնալու գաղափարը և ժամանակակից միջազգային իրավունքը» (Եր., 2000), «Տարագիր հայության հայրենիք վերադառնալու պահանջի պատմական և իրավական հիմքերը» (Եր., 2002), «Խորհրդա-գերմանական հարաբերությունները երկրորդ աշխարհամարտի նախօրեին» (Եր., 2007) աշխատությունները: Հրատարակել է նաև «Արցախ» (Եր., 1993) պատմաէպիկական պոեմը:

Վախճանվել է 2009թ. հունիսի 12-ին Երևանում:

ՀԱԿՈԲՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԱԿՈԲԻ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1876թ. օգոստոսի 16-ին Վանում: Սկզբնական կրթությունը ստացել է Վանի Հայնկույսներ թաղամասի վարժարանում, իսկ միջնակարգը՝ 1890-1899թթ. Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: 1899-1904թթ. սովորել է Վիսքոնսինի (ԱՄՆ) համալսարանի պատմագրական ֆակուլտետում: Պաշտպանելով ատենախոսություն ստացել է դոկտորի գիտական աստիճան և իրավունք՝ որպես պրոֆեսոր դասավանդելու տեղի համալսարանում:

Հովհ.Հակոբյանը Բոստոնում և Նյու Յորքում հիմնադրել և խմբագրել է «Ձայն հայրենյաց» և «Արաքս» ազգային-քաղաքական շաբաթաթերթերը: «Վարդ Շահենի» ծածկանունով ամերիկահայ պարբերականներում տպագրել է բազմաթիվ հոդվածներ և գրական-գեղարվեստական ստեղծագործություններ: Անգլերենով հրատարակել է «Հայերի ռուսացումը» (Բոստոն, 1905) ուսումնասիրությունը: Գործուն մասնակցություն է ունեցել ռամկավար-ազատական կուսակցության ստեղծմանը և ընտրվել կուսակցության կենտրոնական վարչության անդամ: 1912թ. նշանակվել է Կարինի Սանասարյան վարժարանի տեսուչ:

Հրաշքով փրկվելով Մեծ եղեռնից ապաստան է գտել Ռումինիայում, ապա տեղափոխվել Հյուսիսային Կովկաս, Թիֆլիս, Կ.Պոլիս, Ալեքսանդրիա, Կահիրե, զբաղվել մանկավարժական գործունեությամբ, խմբագրել «Վան-Տոսպ», «Վերջին լուր», «Ժողովրդի ձայն», «Արև» և այլ ազգային, գրական, քաղաքական թերթեր: 1927թ. նոյեմբերին Հովհ.Հակոբյանը Խորհրդային Հայաստանի կառավարության առաջարկով տեղափոխվել է Երևան, որտեղ վարել է «Մելքոնյան ֆոնդի» պատասխանատու գործադիր քարտուղարի պաշտոնը: 1928թ. հրավիրվել է դասավանդելու ԵՊՀ-ում: Եղել է ընդհանուր պատմության ամբիոնի պրոֆեսոր և դասավանդել Մերձավոր Արևելքի երկրների պատմություն: 1935թ. ընտրվել է ՀԽՍՀ պատմության և գրականության ինստիտուտի անդամ:

Հեղինակն է «Ազգերու պատմություն» (հհ. 1-3, Կ.Պոլիս, 1912), «Գերման դավը Կովկասի մեջ» (Թիֆլիս, 1917), «Թուրքիա Գերման ճանկերուն մեջ» (Թիֆլիս, 1918) և այլ ուսումնասիրությունների: Հայագիտական մեծ արժեք է ներկայացնում

հայերի և Հայաստանի մասին նրա կազմած ու թարգմանած «Ուղեգրություններ» բացառիկ ժողովածուն, որից լույս են տեսել միայն 1-ին (Եր., 1932) և 6-րդ (Եր., 1934) հատորները: 1937թ. հունիսին գիտնականի ձերբակալության և 1938թ. հուլիսին իրականացված գնդակահարության պատճառով նրա ծրագրած 10-հատորյա այդ վիթխարի գործը, դժբախտաբար, մնաց անավարտ: Ավելին, անհետ կորան արդեն տպագրության պատրաստ մի քանի հատորի նյութերը:

1956թ. ապրիլի 28-ին ԽՍՀՄ Գերագույն դատարանը չեղյալ է հայտարարել 1938թ. հուլիսի 18-ի դատավճիռը, և Հովհ.Հակոբյանի գործը, հանցակազմի բացակայության պատճառով, կարճվել է:

ՀԱԿՈԲՅԱՆ ՀՐԱՆՏ ԽԱՉԱՏՈՒՐԻ

Փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1927թ. դեկտեմբերի 17-ին Նոր Բայազետի շրջանի Սարուխան գյուղում: 1944թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը, 1948թ.՝ Կամոյի (այժմ՝ Գավառ) մանկավարժական տեխնիկումը, 1950թ.՝ Երևանի Խ.Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի պատմության, 1956թ. բանասիրության ֆակուլտետը, ընդունվել նույն ինստիտուտի ասպիրանտուրա:

1973թ. պաշտպանել է թեկնածուական, 1989-ին՝ դոկտորական ատենախոսություն: 1978թ. նրան շնորհվել է դոցենտի, իսկ 1991թ.՝ պրոֆեսորի կոչում:

1944-1946թթ. Հ.Հակոբյանն աշխատել է Սարուխանի կոլտնտեսությունում, 1946-1963թթ.՝ Վարդենիսի և Կամոյի շրջանների դպրոցներում որպես ուսուցիչ, տնօրեն:

1962թ. նշանակվել է Կամոյի կուսշրջկոմի ագիտացիայի և պրոպագանդայի բաժնի վարիչ:

Հ.Հակոբյանը եղել է ԵՊԻ փիլիսոփայության ամբիոնի ավագ դասախոս, դոցենտ, 1985-1991թթ. ԵՊՀ գիտական աթեիզմի պատմության և տեսության միջբուհական ամբիոնի վարիչ, 1991-2000թթ. կրոնի պատմության և տեսության ամբիոնի վարիչ, 1993-2006թթ.՝ Գավառի պետհամալսարանի հիմնադիր ռեկտոր: 2006թ. ընտրվել է նույն բուհի խորհրդի նախագահ:

Հեղինակ է հոդվածների և մենագրությունների: Մենա-

գրությունները են՝ «Հայ աթեիստական մտքի պատմությունից (Ռաֆֆի)» (Եր., 1983), «Աթեիստական դաստիարակության մի քանի հարցեր» (Եր., 1988), «Հայ հեղափոխական-դեմոկրատների փիլիսոփայական հայացքները» (Եր., 1989), «Եղեռնի դատապարտումը Ռաֆֆու երկերում» (Եր., 1989):

Պարգևատրվել է «Աշխատանքի վետերան» մեդալով (1987):

ՀԱԿՈԲՅԱՆ ՆԻԿՈԼԱՅ ՍԱՐԳՍԻ

Ֆիզիոլոգ,

Կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1930թ. դեկտեմբերի 25-ին Ադր.ԽՍՀ Խանլարի շրջանի Զովդար գյուղում: 1947թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը: 1949-1954թթ. ուսանել է Ստավրոպոլի գյուղատնտեսական ինստիտուտի զոոտեխնիկական ֆակուլտետում: 1959թ. ընդունվել է Մոսկվայի Կ.Տիմիրյազևի անվան ակադեմիայի ասպիրանտուրան և ավարտել 1962թ.՝ պաշտպանելով թեկնածուական ատենախոսություն: 1965թ. ստացել է դոցենտի կոչում: 1963թ. աշխատել է ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնում որպես ավագ դասախոս, 1965-1982թթ. դոցենտ:

1982թ. Ն.Հակոբյանը Կիևում պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1986թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1982-1986թթ. եղել է մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնի պրոֆեսոր, 1986-1991թթ.՝ ամբիոնի վարիչ: 1991-ից նույն ամբիոնի պրոֆեսոր է:

Ն.Հակոբյանը հեղինակ է «Ուղեղի էլեկտրաֆիզիոլոգիական հետազոտություններ թթվածնաքաղցի պայմաններում» (Եր., 1987) մենագրության, «Բարձրագույն նյարդային գործունեություն» (Եր., 1999) առաջին հայերեն դասագրքի, «Ընդհանուր էնդոկրինոլոգիա» (Եր., 2004) դասագրքի, 135 գիտական հոդվածների ու թեզիսների, որոնք վերաբերում են ուղեղի տարբեր բաժինների, մասնավորապես լիմբիական համակարգի առանձին գոյացությունների նեյրոնային ակտիվությանը թթվածնային անբավարարության պայմաններում:

ՀԱԿՈԲՅԱՆ ՌԱՖԻԿ ՍԵՐԳԵՅԻ

Ֆիզիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր

Ծնվել է 1955թ. նոյեմբերի 20-ին Սիսիանում: 1973թ. ավարտել է ԵՊՀ-ին կից ֆիզիկամաթեմատիկական դպրոցը, 1978թ. ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետը և աշխատանքի անցել ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի օպտիկայի ամբիոնում որպես լաբորանտ: 1981-1984թթ. սովորել է ԵՊՀ ասպիրանտուրայում: 1985թ. Ռ.Հակոբյանը պաշտպանել է թեկնածուական, 1995թ. դոկտորական ատենախոսություն: 1993թ. նրան շնորհվել է դոցենտի, 2002-ին՝ պրոֆեսորի կոչում: 1993-2002թթ. եղել է ԵՊՀ օպտիկայի ամբիոնի դոցենտ, 2002-ից՝ պրոֆեսոր: 2007-ից նույն ամբիոնի վարիչն է:

Հեղինակ է 80 գիտական հոդվածների և 2 արտոնագրի, համահեղինակ՝ «Մակածված փուլային անցումներ և հիդրոդինամիկական անկայունություններ հեղուկ բյուրեղներում» մենագրության (Եր., 2000) և «Ոչ գծային ֆիզիկայի ներածություն» (Եր., 2006) դասագրքի:

Ռ.Հակոբյանի աշխատանքների հիմնական գիտական ուղղություններն են իզոտրոպ ու անիզոտրոպ հեղուկների լուսահիդրոդինամիկան, հեղուկ բյուրեղների ջերմամեխանիկան, պոլիմերներում դիսպերսված հեղուկ բյուրեղներում ղեկավարվող դիֆրակտային ցանցերի՝ լազերներով մակածման դինամիկան և առանձնահատկությունները:

ՀԱԿՈԲՅԱՆ ՍԱՐԳԻՍ ԱՐՇԱԿԻ

Ֆիզիոլոգ,
կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1915թ. մայիսի 15-ին Ելիզավետպոլի նահանգի Զովդար գյուղում: Սկզբնական կրթությունն ստացել է տեղի դպրոցում, ապա՝ Գանձակի գյուղատնտեսական տեխնիկումում: 1934-1939թթ. սովորել է Բաքվի պետական համալսարանում, ապա՝ տեղի բժշկական ինստիտուտում, որն ավարտելուց հետո աշխատանքի է անցել Բաքվի պետական համալսարանում

որպես ասիստենտ: Այնուհետև Ս.Հակոբյանը գործուղվել է Մոսկվայի ուղեղի ինստիտուտ, որտեղ կատարել է գիտական հետազոտություններ՝ նվիրված գլխուղեղի կենսահոսանքների ծագման մեխանիզմների պարզաբանմանը: Մասնակցել է Հայրենական պատերազմին, վիրավորվել և զորացրվել: 1944թ. Մոսկվայում պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և աշխատանքի անցել Բաքվի համալսարանի, բժշկական և ֆիզկուլտուրայի ինստիտուտների ֆիզիոլոգիայի ամբիոններում որպես ասիստենտ, ապա՝ դոցենտ, միաժամանակ՝ Բաքվի արյան փոխներարկման ինստիտուտի լաբորատորիայի վարիչ:

1949թ. Ս.Հակոբյանը տեղափոխվել է ԵՊՀ և աշխատել որպես մարդու ու կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնի վարիչ: 1949-1954թթ. համատեղությամբ եղել է Երևանի արյունաբանության և արյան փոխներարկման ինստիտուտի բաժնի վարիչ: 1955թ. նա Մոսկվայում պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1956թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Ս.Հակոբյանը հեղինակ է շուրջ 300 գիտական աշխատանքների, այդ թվում՝ «Արյան կորստի և հեմոտրանսֆուզիոն շոկի պայմաններում նյարդային համակարգի դերը մարսողության մեջ» (Եր., 1959), «Բարձրագույն նյարդային գործունեությունը հեմոտրանսֆուզիոն շոկի և արյան կորստի դեպքում» (Եր., 1961) և այլ մենագրությունների: Ուսումնասիրել է իոնացնող ճառագայթման, թրթռման, աղմուկի, թթվածնաքաղցի և այլ գործոնների ազդեցության պայմաններում օրգանիզմի որոշ համակարգերի նյութափոխանակության փոփոխությունները և վեգետատիվ ֆունկցիաների կենսառիթմերը: Ս.Հակոբյանին հաջողվել է մշակել արյանը փոխարինող նոր հակաշոկային հեղուկ՝ «ԱՐՄԻՊԿ»:

Նա աշխատել է Պրահայի և Տիրանայի համալսարաններում: Կարևոր դեր է ունեցել Տիրանայի համալսարանի և բժշկական ինստիտուտի ֆիզիոլոգիայի ամբիոնների հիմնադրման գործում: Տիրանայում ալբաներեն հրատարակվել է ֆիզիոլոգիայի դասընթացի նրա դասախոսությունների երկհատորյակը:

Ս.Հակոբյանի ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 10 ատենախոսություն:

Երկար տարիներ եղել է ֆիզիոլոգների համամիութենական ընկերության կենտրոնական վարչության անդամ:

1964թ. Ս.Հակոբյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է «Պատվո նշան»

չքանչանով, բազմաթիվ մեդալներով և պատվոգրերով:
Վախճանվել է 2005թ. մարտի 21-ին Մոսկվայում:

ՀԱԿՈԲՅԱՆ ՍԻՄՈՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ

Գրականագետ, պրոֆեսոր

Ծնվել է 1880թ. Ելիզավետպոլում (Գանձակ): 1899թ. ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը: 1902-1907թթ. բարձրագույն կրթություն է ստացել Շվեյցարիայում: 1909-1913թթ. ապրել է Շվեյցարիայում, Ավստրիայում, Բուլղարիայում: 1913-1918թթ. վերադառնալով Անդրկովկաս ծավալել է հրատարակչական ու խմբագրական լայն գործունեություն: 1918-1924թթ. Փարիզում զբաղվել է արևմտաեվրոպական գրականության ուսումնասիրությամբ, գրել մի շարք հոդվածներ: 1922-1924թթ. Վիեննայում, ապա՝ Բեռլինում խմբագրել է «Արեգ» հանդեսը:

1924թ. Ս.Հակոբյանը հրավիրվել է ԵՊՀ և դասավանդել արտասահմանյան գրականություն: 1929թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում, այնուհետև նա ստանձնել է արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչի պարտականությունները: 1931թ. նշանակվել է պատմագրական ֆակուլտետի դեկանի պաշտոնում, որը վարել է մինչև 1938թ., երբ ստալինյան բռնաբարքների հետևանքով ընդհատվեց նրա գործունեությունը:

Ս.Հակոբյանը հմուտ դասախոս էր և գիտական-հետազոտող: Նա թողել է գրականագիտական զգալի ժառանգություն եվրոպական և հայ գրականության վերաբերյալ: Առավել արժեքավոր են նրա «Եվրոպական գրականության պատմության գլխավոր էջեր» (մաս 1-2, Եր., 1936) և առանձին գրողներին նվիրված մենագրությունները՝ «Պետրոս Դուրյան» (Վիեննա, 1922), «Արփիար Արփիարյան» (Վիեննա, 1922), «Վահան Տերյան» (Բեռլին, 1923), «Եղիշե Չարենց» (Վիեննա, 1924):

Ս.Հակոբյանը վախճանվել է 1942թ.: Արդարացվել է հետմահու:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԳՈՀԱՐ ՀԱՄԱՋԱՍՊԻ

Մաթեմատիկոս,
Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու,
դոցենտ,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1907թ. հունիսի 22-ին Թիֆլիսում: 1924թ. ավարտել է տեղի թիվ 70 միջնակարգ դպրոցը, 1929թ. Լենինգրադի համալսարանի մաթեմատիկայի ֆակուլտետը: 1938թ. Գ.Համբարձումյանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1949թ. նրան շնորհվել է դոցենտի կոչում:

1929-1946թթ. Լենինգրադի պետական համալսարանում աշխատելուց հետո Գ.Համբարձումյանը տեղափոխվել է Երևան: 1946-1967թթ. աշխատել է ԵրՊԻ կիրառական մաթեմատիկայի ամբիոնում, իսկ 1967-1979թթ. ղեկավարել ԵՊՀ մեխանիկա-մաթեմատիկական ֆակուլտետի հավանականությունների տեսության և մաթեմատիկական վիճակագրության ամբիոնը:

Գ.Համբարձումյանը հեղինակ է 20 գիտական հոդվածների, 2 դասագրքի՝ «Հավանականությունների տեսություն» (Եր., 1961) և «Պատահական պրոցեսներ» (Եր., 1965): Նրա հետազոտությունները հավանականությունների տեսության և մաթեմատիկական վիճակագրության բնագավառում վերաբերում են Պուասոնի կորերին, անկախ փորձերին և մարկովյան շղթաներում տեղեկատվության քանակի որոշմանը, ինչպես նաև մարկովյան գծային պրոցեսների տեսությանը:

1967թ. Գ.Համբարձումյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման:

Վախճանվել է 1979թ. հունիսի 26-ին Երևանում:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՌՈՒԲԵՆ ՎԻԿՏՈՐԻ

Մաթեմատիկոս,
Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս

Ծնվել է 1941թ. հոկտեմբերի 28-ին Ելաբուգա քաղաքում (ՌԴ, Թաթարական ԻՀ): 1957թ. ավարտել է Երևանի թիվ 8 միջնակարգ դպրոցը և ընդունվել Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան

պետական համալսարանի մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետ, որն ավարտել է 1962թ.: Այնուհետև Ռ.Համբարձումյանը մեկ տարի եղել է ՀԽՍՀ ԳԱ հաշվողական կենտրոնի, իսկ 1963-ից՝ ՀԽՍՀ ԳԱ մաթեմատիկայի ինստիտուտի գիտաշխատող: 1967թ. նա պաշտպանել է թեկնածուական, 1976թ. դոկտորական ատենախոսություն: Նույն թվականին նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1981-ից Ռ.Համբարձումյանը գլխավորում է այդ ինստիտուտի հավանականությունների տեսության բաժինը: 1979-1986թթ. եղել է ԵՊՀ հավանականությունների տեսության ամբիոնի վարիչ: 1982թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1986թ.՝ ակադեմիկոս:

Ռ.Համբարձումյանի գիտական ուսումնասիրությունները վերաբերում են պատահական պրոցեսների, ինտեգրալային երկրաչափության և ստոխաստիկ երկրաչափության հիմնախնդիրներին:

Հեղինակ է շուրջ 50 գիտական հոդվածների և "Combinatorial Integral Geometry" (USA, 1982), "Factorization Calculus and Geometric Probability" (Cambridge, 1990) մենագրությունների, համահեղինակ՝ "Введение в стохастическую геометрию" (М., 1989) աշխատության:

1987-ից Ռ.Համբարձումյանը դասավանդում է Հայաստանի Ամերիկյան համալսարանում: Նա ՀՀ ԳԱԱ «Տեղեկագիր. մաթեմատիկա» ամսագրի գլխավոր խմբագիրն է:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՎԻԿՏՈՐ ՀԱՄԱՍԱՍՊԻ

Աստղաֆիզիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր,
ԽՍՀՄ ԳԱ և ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ



Ծնվել է 1908թ. սեպտեմբերի 18-ին Թիֆլիսում: 1924-1928թթ. ավարտել է Լենինգրադի (այժմ՝ Սանկտ Պետերբուրգ) պետական համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը: 1928-1931թթ. սովորել է ԽՍՀՄ ԳԱ գլխավոր աստղադիտարանի (Պուլկովո) ասպիրանտուրայում: 1935թ., առանց ատենախոսության պաշտպանության, նրան շնորհվել է ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտորի աստիճան:

1931-1944թթ. Վ.Համբարձումյանն աշխատել է Լենինգրադի համալսարանում որպես դոցենտ, պրոֆեսոր, ապա՝ իր իսկ հիմնադրած՝ ԽՍՀՄ-ում առաջին աստղաֆիզիկայի ամբիոնի վարիչ, 1940-ից՝ գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր:

1943թ. Հ.Օրբելու և Վ.Համբարձումյանի ջանքերով Երևանում հիմնադրվեց ՀԽՍՀ գիտությունների ակադեմիան. Վ.Համբարձումյանը դարձավ նրա հիմնադիր անդամներից մեկը և առաջին փոխնախագահը: 1947թ. նա ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ նախագահ և շուրջ կես դար ղեկավարել այն:

1946թ. Վ.Համբարձումյանը հիմնադրել է ԵՊՀ աստղաֆիզիկայի ամբիոնը և Բյուրականի աստղադիտարանը, որտեղ կատարված հետազոտությունները կանխորոշեցին 20-րդ դարի երկրորդ կեսի աստղաֆիզիկայի զարգացման հիմնական ուղղությունները: Մեծ է նրա վաստակը Հայաստանում ֆիզիկայի ու մաթեմատիկայի զարգացման, բնական ու տեխնիկական գիտությունների բնագավառում հետազոտությունների մակարդակի բարձրացման, նոր, ժամանակակից գիտական ուղղությունների ստեղծման և բարձրորակ մասնագետների պատրաստման գործում: Նա մեծապես նպաստել է Հայաստանում ռադիոէլեկտրոնիկայի, քիմիական, մեքենաշինական, լեռնային արդյունաբերության զարգացմանը:

Համաշխարհային գիտության պատմության մեջ նոր էջ են բացել Վ.Համբարձումյանի ներդրումները տեսական աստղաֆիզիկայի, աստղերի և միգամածությունների ֆիզիկայի, աստղային դինամիկայի, արտագալակտիկական աստղագիտության, աստղերի և գալակտիկաների էվոլյուցիայի հետազոտության բնագավառում: Մի շարք սկզբունքներ, այդ թվում ինվարիանտության հակադարձ խնդիրների լուծման սկզբունքը, կոչվում են Վ.Համբարձումյանի անունով: Նա մշակել է աստղային համակարգերի վիճակագրական մեխանիկայի հիմունքները, հայտնագործել աստղակույտերի աստիճանական քայքայման երևույթը և առաջադրել աստղակույտերի տարիքի որոշման սկզբունք:

Կրկնակի աստղերի նկատմամբ նոր մեթոդների կիրառման միջոցով հիմնավորել է Գալակտիկայի տարիքի կարճ (հարյուր միլիարդ տարի) սանդղակը: Նրա մշակած շատ գաղափարներ դուրս են եկել աստղաֆիզիկայի շրջանակներից՝ ստանալով ընդհանուր մեթոդաբանական նշանակություն, և խթանել գիտության այլ բնագավառների զարգացումը:

1948-1950թթ. Վ.Համբարձումյանն ընտրվել է Միջազգային

աստղագիտական միության փոխնախագահ, 1961-1964թթ.՝ նախագահ, 1968-1972թթ.՝ գիտական ընկերությունների միջազգային խորհրդի նախագահ:

Վ.Համբարձումյանը հիմնադրել է «Աստղաֆիզիկա» հանդեսը և մինչև 1986թ. եղել նրա գլխավոր խմբագիրը, նաև «Հայկական սովետական հանրագիտարանի» առաջին գլխավոր խմբագիրը և խմբագրական խորհրդի նախագահը:

1948-ից նա Հայաստանի կոմկուսի կենտկոմի անդամ էր, 1958թ.՝ ԽՍՀՄ III-X գումարումների Գերագույն խորհրդի պատգամավոր:

1993-ից մինչև կյանքի վերջը եղել է ՀՀ ԳԱԱ պատվավոր նախագահ:

Վ.Համբարձումյանի բացառիկ վաստակը համաշխարհային գիտության զարգացման մեջ թե՛ հայրենիքում, թե՛ արտասահմանում գնահատվել է ըստ արժանվույն: 1946թ. և 1950թ. նա արժանացել է ԽՍՀՄ Պետական մրցանակների, 1995թ.՝ ՌԴ Պետական մրցանակի: Ընտրվել է ԱՄՆ-ի, Անգլիայի, Բելգիայի, Ավստրիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Կանադայի, Ավստրալիայի, Իտալիայի, Հունաստանի, Լեհաստանի և այլ երկրների գիտությունների ակադեմիաների և գիտական ընկերությունների պատվավոր անդամ, բազմաթիվ համալսարանների պատվավոր դոկտոր:

Վ.Համբարձումյանը Սոցիալիստական աշխատանքի կրկնակի հերոս էր: Պարգևատրվել է Լենինի (5), Հոկտեմբերյան հեղափոխության, «Պատվո նշան», Աշխատանքային կարմիր դրոշի (2) շքանշաններով, ԵՊՀ ոսկե մեդալով: Նրան շնորհվել է նաև ՀՀ Ազգային հերոսի կոչում:

Վախճանվել է 1996թ. օգոստոսի 12-ին Բյուրականում:

Վ.Համբարձումյանի անվամբ են կոչվում ՀՀ ԳԱԱ Բյուրականի աստղադիտարանը, ԵՊՀ ընդհանուր ֆիզիկայի և աստղաֆիզիկայի ամբիոնը, «Գիտելիք» ընկերությունը, Երևանի թիվ 12 հանրակրթական դպրոցը:

Նրա բրոնզաձույլ կիսանդրին ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի նախասրահում խորհրդանշում է ականավոր գիտնականմանկավարժի դերը համալսարանական գիտության զարգացման գործում:

ՀԱՅՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ ԱՐՄԵՆԱԿԻ

Գրականագետ,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1913թ. սեպտեմբերի 18-ին Ղափանի շրջանի Ծավ գյուղում: Տարրական կրթությունն ստացել է տեղի դպրոցում: 1922թ. տեղափոխվել է Ալեքսանդրապոլ (այժմ՝ Գյումրի), ավարտել միջնակարգ դպրոցն ու աշխատանքի անցել տեքստիլ գործարանում: Գ.Հայրյանի բանաստեղծական նախափորձերը տպագրվել են «Մանածագործ» թերթում:

1938թ. ավարտելով Մոսկվայի ժուռնալիստիկայի համամիութենական ինստիտուտը՝ Գ.Հայրյանը աշխատանքի է անցել «Սովետական Հայաստան» օրաթերթի խմբագրությունում: 1941-1946թթ. ծառայել է խորհրդային բանակում: 1949-ին ավարտել է Մոսկվայի կուսակցական բարձրագույն դպրոցը: Մինչև 1954թ. «Պրավդա»-ի սեփական թղթակիցն էր Հայաստանում, 1954-1961թթ. եղել է ՀԿԿ Կենտկոմի պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի վարիչ, 1961-1966թթ.՝ ՀԽՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության նախարար:

1965թ. Գ.Հայրյանը պաշտպանել է թեկնածուական, 1968թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1969թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1967-1979թթ. նա եղել է Հայաստանի կինեմատոգրաֆիայի պետական կոմիտեի նախագահ, 1979 թվականից՝ «Սովետական գրող» հրատարակչության տնօրեն: 1949-1975թթ. (ընդմիջումներով) դասախոսել է ԵՊՀ-ում: 1962-1971թթ. ժուռնալիստիկայի ամբիոնի վարիչն էր:

Գեղարվեստական, գրականագիտական բազմաթիվ գրքերի հեղինակ է: Հրատարակել է բանաստեղծությունների ժողովածուներ, արձակ գործեր: Հիշարժան են նրա «Նոր հերոսի որոնման ճանապարհին» (Եր., 1965), «Գրականության գլխավոր պրոբլեմը» (Եր., 1969), «Սերո Խանզադյան» (Եր., 1975) գրականագիտական ուսումնասիրությունները, «Փառք և տառապանք» (Եր., 1999) հիշողությունների գիրքը:

Գ.Հայրյանի սցենարով նկարահանվել են «Ասք մեծ ճշմարտության մասին» (1968), «Սիլվա Կապուտիկյան» (1978) և այլ վավերագրական, ինչպես նաև «Հեղկոմի նախագահը» (1977) գեղարվեստական ֆիլմերը:

Գ.Հայրյանը 1954-1974թթ. եղել է ՀԿԿ Կենտկոմի անդամ,

ՀԽՍՀ 4-9-րդ գումարումների Գերագույն խորհրդի պատգամավոր:

Պարգևատրվել է Հոկտեմբերյան հեղափոխության շքանշանով և մի շարք մեդալներով:

Վախճանվել է 1999թ. նոյեմբերի 8-ին Երևանում:

ՀԱՋԻԵ ՋՆԴԻ ՋԱՈՒԱՐԻ

Բանագետ, գրականագետ, գրող,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1908թ. մարտի 18-ին Կարսի մարզի Յամանչաիր գյուղում: Ազգությամբ եզդի է: 1933թ. ավարտել է ԵՊՀ բանասիրության ֆակուլտետը, այնուհետև սովորել ՀԽՍՀ նյութական կուլտուրայի պատմության ինստիտուտի ասպիրանտուրայում: 1940թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն:

1936-1959թթ. Հ.Ջնդին աշխատել է ՀԽՍՀ ԳԱ գրականության ինստիտուտում, համատեղությամբ՝ Երևանի քրդական մանկավարժական տեխնիկումում (1930-1938), «Ռյա-Թազա» քրդերեն թերթում (1930-1935, 1955-1957): 1959-ից ՀԽՍՀ ԳԱ արևելագիտության սեկտորի ավագ գիտաշխատող էր: 1964թ., առանց ատենախոսության պաշտպանության, նրան շնորհվել է բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան, 1966-ին՝ պրոֆեսորի կոչում: 1968-1976թթ. դասավանդել է ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետում:

Հեղինակ է գիտական բազմաթիվ աշխատությունների, որոնցից առավել կարևոր են «Քրդական ժողովրդական հեքիաթներ» (հայ., Եր., 1952), «Քրդական ժողովրդական վիպերգեր» (Եր., 1960), «Քրդական ժողովրդական երգեր» (Եր., 1975) գրքերը:

Հ.Ջնդին Խորհրդային Հայաստանում քրդական գրականության հիմնադիրներից է: 1932-1966թթ. եղել է ՀԳՄ քուրդ գրողների մասնաճյուղի նախագահը: Կուրմանջիով լույս են տեսել նրա «Նոր առավոտ» (Եր., 1947) պատմվածքների ժողովածուն, «Օգնություն» (Եր., 1967) վեպը և այլ ստեղծագործություններ:

Հ.Ջնդիի թարգմանությամբ կուրմանջիով լույս են տեսել Հովհ.Թումանյանի, Ավ.Իսահակյանի, Սայաթ-Նովայի, Գ.Սունդուկյանի, Ալ.Շիրվանզադեի, Դ.Դեմիրճյանի և շատ այլ հայ

գրողների ստեղծագործություններ: Համահեղինակ է մայրենի լեզվով առաջին՝ «Կուրմանջիի քերականություն» (Եր., 1936) դասագրքի:

1974թ. Հ.Ջնդին արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է Ժողովուրդների բարեկամության և «Պատվո նշան» շքանշաններով:

Վախճանվել է 1990թ. մայիսի 1-ին Երևանում:

ՀԱՍՐԱԹՅԱՆ ԷԶՐԱՍ ՀԱՍՐԱԹԻ

Ֆիզիոլոգ,
բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ԽՍՀՄ ԳԱ թղթակից անդամ, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1903թ. մայիսի 31-ին Արևմտյան Հայաստանում՝ Բիթլիսի նահանգի Խլաթի գավառի Մեծք գյուղում:

1926թ. ավարտել է ԵՊՀ գյուղատնտեսական, իսկ 1930թ. բժշկական ֆակուլտետը: 1930-1938թթ. եղել է ԽՍՀՄ ԳԱ Լենինգրադի (այժմ՝ Սանկտ Պետերբուրգ) ֆիզիոլոգիայի ինստիտուտի ավագ գիտաշխատող, իսկ 1935-1941թթ.՝ Վ.Բեխտերևի անվան ուղեղի ինստիտուտի կենտրոնական նյարդային համակարգի բաժնի վարիչ, միաժամանակ՝ մանկավարժական ինստիտուտի ֆիզիոլոգիայի ամբիոնի վարիչ: 1941-1943թթ. Է.Հասրաթյանը դասախոսել է Տաշքենդի բժշկական ինստիտուտում: 1944-1950թթ. ղեկավարել է ԽՍՀՄ ԳԱ նյարդային համակարգի պլաստիկության լաբորատորիան: 1950-1952թթ. եղել է Մոսկվայի բարձրագույն նյարդային գործունեության ինստիտուտի տնօրեն, 1953-1960թթ.՝ ԽՍՀՄ ԳԱ ֆիզիոլոգիայի ինստիտուտի ԿՆՀ-ի լաբորատորիայի վարիչ, իսկ 1950-1960թթ՝ միաժամանակ՝ Մոսկվայի բժշկական ինստիտուտի ֆիզիոլոգիայի ամբիոնի վարիչ: 1960-ից աշխատել է բարձրագույն նյարդային գործունեության և նյարդաֆիզիոլոգիայի ինստիտուտի տնօրեն և պայմանական ռեֆլեքսների լաբորատորիայի վարիչ:

Է.Հասրաթյանը 1936թ. ստացել է բժշկական գիտությունների դոկտորի գիտական աստիճան, 1938թ.՝ պրոֆեսորի կոչում, 1939թ. ընտրվել է ԽՍՀՄ ԳԱ թղթակից անդամ, 1947-ին՝ ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս:

Նրա գիտական աշխատանքների հիմնական բնագավառը

բարձրագույն նյարդային գործունեության ուսումնասիրությունն էր: Նյարդային համակարգի հարմարողական պլաստիկության վերաբերյալ գիտնականի հետազոտությունները համաշխարհային ճանաչում են ստացել: Նա հիմնավորել է արգելակման պրոցեսի բուժիչ և պաշտպանիչ դերը, մշակել նոր մեթոդ՝ վնասվածքային, այրվածքային, ջերմային շոկի կանխորոշման և բուժման համար:

Է.Հասրաթյանի առաջարկած հակաշոկային հեղուկները մեծ կիրառություն գտան Հայրենական մեծ պատերազմի տարիներին: Նրա ղեկավարությամբ գիտական մկրտություն են ստացել շատ հայ երիտասարդ ֆիզիոլոգներ, որոնք հետագայում Հայաստանում հիմք դրեցին ֆիզիոլոգիայի զարգացմանը:

Նա եղել է "Журнал высшей нервной деятельности им. академика Павлова" ամսագրի գլխավոր խմբագիր, արտասահմանյան բազմաթիվ գիտական հանդեսների խմբագրական խորհուրդների անդամ, «Ինտերմոզգ» միջազգային գիտական կազմակերպության նախագահ:

1974թ. Է.Հասրաթյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է Լենինի (2), Աշխատանքային կարմիր դրոշի, «Կարմիր աստղ» շքանշաններով, 1963թ.՝ Պավլովի անվան ոսկե, 1975թ. Պուրկինյեի անվան մեդալներով:

Վախճանվել է 1981թ. ապրիլի 24-ին Մոսկվայում:

ՀԱՍՐԱԹՅԱՆ ՄՈՐՈՒՍ (ՄԱՐԳԱՐ) ՍՏԵՓԱՆԻ

Պատմական և բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ



Ծնվել է 1902թ. սեպտեմբերի 10-ին Սիսիանի շրջանի Ախլաթյան գյուղում: 1918թ. Բաքվում ավարտել է միջնակարգ դպրոցը: 1922-1925թթ. կոմերիտական ղեկավար աշխատանք է կատարել Սիսիանում և Դիլիջանում: 1930թ. ավարտել է ԵՊՀ պատմագրական ֆակուլտետը: 1930-1932թթ. սովորել է Լենինգրադի (այժմ՝ Սանկտ Պետերբուրգ) արևելագիտության ինստիտուտի ասպիրանտուրայում: 1932-1934թթ. Մ.Հասրաթյանը եղել է ՀԽՍՀ Նյութական մշակույթի պատմության ինս-

տիտուտի փոխտնօրեն, 1934-1936թթ. ՀԿԿ Կենտկոմին առընթեր կուսպատմության ինստիտուտի փոխտնօրեն և Հայաստանի հեղափոխության թանգարանի տնօրեն: 1935թ. նրան շնորհվել է պատմական գիտությունների թեկնածուի, իսկ 1942թ.՝ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 1935թ. ստացել է դոցենտի կոչում: 1963-ին ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ:

1937-1938թթ. Մ.Հասրաթյանը Մատենադարանի տնօրենն էր: 1938-1940թթ. բռնադատվել է: 1940-1942թթ. եղել է Հայաստանի պատմական հուշարձանների պահպանության կոմիտեի գիտաշխատող, 1942-1946թթ.՝ Արմֆան-ի, ապա ՀԽՍՀ ԳԱ գրականության ինստիտուտի գիտաշխատող, 1943-1946թթ. նաև ՀԽՍՀ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի գիտքարտուղար, 1946-1947թթ.՝ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտքարտուղար, 1947-1954թթ.՝ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող:

1934-1938թթ. և 1950-1953թթ. Մ.Հասրաթյանը դասավանդել է ԵՊՀ-ում: 1953-1979թթ. եղել է Երևանի Խ.Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտի դոցենտ, 1957-1960թթ. պրոռեկտոր, 1960-1969թթ.՝ հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչ: 1965-1966թթ. դասավանդել է Բեյրութի Հայկազյան քոլեջում: 1965-1975թթ. եղել է Հայաստանի պատմության պետական թանգարանի տնօրեն:

Մ.Հասրաթյանի աշխատությունները վերաբերում են հայ ժողովրդի միջնադարյան պատմության, հնագիտության, բանասիրության, արվեստի հիմնախնդիրներին: Հատկապես մեծ է նրա ներդրումը սայաթնովագիտության բնագավառում: Կատարել է տեքստաբանական վերլուծություններ ու ճշգրտումներ, գեղարվեստորեն թարգմանել մեծ երգչի թուրքերեն ու վրացերեն խաղերը: Նրա առաջաբանով, խմբագրությամբ ու ծանոթագրություններով է 1963թ. լույս տեսել Սայաթ-Նովայի հայերեն, թուրքերեն ու վրացերեն խաղերի ժողովածուն:

Մ.Հասրաթյանը հեղինակ է «Պատմահնագիտական ուսումնասիրություններ» (Եր., 1985), “Цицернаванк” (М., 1990), «Հոդվածների ժողովածու» (Եր., 1995) գրքերի, “Очерки истории СССР” (М., 1955)-ում տպագրված “Армения в конце XVв.-начале XVIIв. աշխատության, համահեղինակ՝ «Հայաստանի հուշարձաններ» (Բեյրութ, 1975) գրքի և «Հայ ժողովրդի պատմություն» դպրոցական առաջին դասագրքի (Եր., 1951):

1961թ. Մ.Հասրաթյանն արժանացել է ՀԽՍՀ դիտության վաստակավոր գործչի կոչման:

Վախճանվել է 1979թ. փետրվարի 25-ին Երևանում

ՀԱՍՐԱԹՅԱՆ ՄՈՒՐԱԴ ՄԱՐԳԱՐԻ

Ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
ՀՀ վաստակավոր ճարտարապետ



Ծնվել է 1935թ. հունիսի 20-ին Երևանում: 1952թ. ավարտել է Խ.Աբովյանի անվան միջնակարգ դպրոցը, 1958թ.՝ ԵՊԻ շինարարական ֆակուլտետի ճարտարապետական բաժինը: 1969թ. պաշտպանել է թեկնածուական, 1993թ. դոկտորական ատենախոսություն: 2003թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1958-1964թթ. Մ.Հասրաթյանը եղել է «Երևաննախագիծ» ինստիտուտի ավագ գիտաշխատող: 1964 թվականից աշխատել է ՀԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտում որպես գիտաշխատող, գիտքարտուղար, 1988-ից՝ ճարտարապետության բաժնի վարիչ: 2001-ից աշխատում է ԵՊՀ պատմության ֆակուլտետում որպես պրոֆեսոր: 2006թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ:

Մ.Հասրաթյանն առաջինն է գիտականորեն ուսումնասիրել Արցախի և վաղ միջնադարյան հայկական մի շարք հուշարձաններ, մասնագիտական ուսումնասիրության առարկա դարձրել Թբիլիսիի հայկական եկեղեցիները: Զբաղվում է նաև հայ-վրացական, հայ-բյուզանդական և հայ-իրանական ճարտարապետական առնչություններով:

Կարևոր մենագրություններն են՝ «Սյունիքի 17-18-րդ դարերի ճարտարապետական համալիրները» (Եր., 1973), «Հայկական ճարտարապետություն. Արցախի դպրոցը» (Եր., 1992), «Հայաստան. Քրիստոնեական ճարտարապետության 1700 տարին» (Եր., 2001), “Очерк армянской архитектуры” (М., 1985), “Армянская архитектура раннего христианства” (М., 2000):

Համահեղինակ է «Սովետական Հայաստանի ճարտարապետությունը» (ռուս., Մ., 1972), «Գանձասար» (անգլ., իտալ., Միլան, 1987), «Սաղմոսավանք» (Եր., 2002), «Կեչառիս-1000» (Եր., 2004), «Հայկական ճարտարապետության պատմություն» (հ. 3, Եր., 2004) գրքերի:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 2

ատենախոսություն:

1970թ. պարգևատրվել է «Աշխատանքային արիության համար» մեդալով:

2007թ. Մ.Հասրաթյանն արժանացել է ՀՀ վաստակավոր ճարտարապետի կոչման:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ ՇՈՒՐԱՑԻ

Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1964թ. մարտի 8-ին Երևանում: 1981թ. ավարտել է Երևանի թիվ 77 միջնակարգ դպրոցը, 1986թ. ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետը: Նույն թվականին ընդունվել է ԽՍՀՄ ԳԱ պետության և իրավունքի ինստիտուտի ասպիրանտուրա և 1989թ. պաշտպանել թեկնածուական ատենախոսություն:

1989-ից Ա.Հարությունյանն աշխատել է ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետում որպես սահմանադրական և միջազգային իրավունքի ամբիոնի դասախոս: 1993-1997թթ. սովորել է ՌԴ նախագահին կից պետական կառավարման ակադեմիայի դոկտորանտուրայում և պաշտպանել դոկտորական ատենախոսություն: 1996-1998թթ. եղել է ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի դեկանի տեղակալ, 2000-2002թթ.՝ Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի իրավաբանական ֆակուլտետի դեկան, 2002-2006թթ. ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ռեկտոր: 2006-ից աշխատում է որպես ՀՀ մարդու իրավունքների պաշտպան:

Հեղինակ է շուրջ 70 գիտական հոդվածների, 7 մենագրության, 1 դասագրքի և 1 ուսումնական ձեռնարկի, համահեղինակ՝ 2 դասագրքի: Կարևորագույն մենագրություններն են՝ “Институт президента Республики Армения” (Ер., 1996), «Հայաստանի Հանրապետության մունիցիպալ իրավունք» (Եր., 2004), «Եվրոպական միություն» (Եր., 2005), “Институт президента в постсоветских республиках. Конституция и политическая реалность” (Ер., 2006), “Грамматика свободы: проблемы постсоветского реализма” (Ер., 2007):

Ա.Հարությունյանի ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 20 ատենախոսություն:

Մասնակցել է վերապատրաստման դասընթացների Փարիզ-12 (Ֆրանսիա), Կենտրոնական-Եվրոպական (Հունգարիա),

Նոթինգեմի (Մեծ Բրիտանիա) համալսարաններում և մի շարք միջազգային գիտաժողովների (Բուդապեշտ՝ 2002, Լուվեն՝ 2002, Վիեննա՝ 2006, Բեռլին՝ 2006, Աթենք 2007, Մոսկվա՝ 2007, Երևան 2007, Հռոմ՝ 2007, Բրատիսլավա՝ 2008, Ստոկհոլմ՝ 2008):

Ա.Հարությունյանը 1997-2001թթ. եղել է ՀՀ նախագահին կից Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի անդամ, 2001-2005թթ., որպես ՀՀ նախագահի ներկայացուցիչ, մասնակցել է գործող Սահմանադրության բարեփոխումներին: 2002-ից ԵԽ «Ժողովրդավարություն իրավունքի միջոցով» Եվրոպական (Վենետիկի) հանձնաժողովի ՀՀ փոխանորդ ներկայացուցիչն է, 2003 թվականից՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի նախագահը:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԲԱԲԿԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ



Ծնվել է 1941թ. մարտի 4-ին Երևանում: 1958թ. ավարտել է թիվ 72 դպրոցը, 1962թ. ԵՊՀ պատմության ֆակուլտետը, 1977թ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի հեռակա բաժինը: 1963-1966թթ. սովորել է ԵՊՀ ասպիրանտուրայում:

1968թ. Բ.Հարությունյանը պաշտպանել է թեկնածուական, 1993թ.՝ դոկտորական ատենախոսություն: 2005թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 2006թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ:

1966թ. Բ.Հարությունյանը եղել է հայ ժողովրդի պատմության ամբիոնի լաբորանտ, 1967-1994թթ. դասախոս, ավագ դասախոս, դոցենտ, 1994-ից պրոֆեսոր, 1970-1971թթ. ԵՊՀ արտասահմանյան քաղաքացիների նախապատրաստական ֆակուլտետի դեկան, 1985-1988թթ.՝ Երևանի համալսարանի հրատարակչության տնօրեն, 1993-2003թթ.՝ պատմության ֆակուլտետի դեկան, 1997-2000թթ. նաև Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնի վարիչ: 2003-ից նա հայոց պատմության ամբիոնի վարիչն է, իսկ 2007-2008թթ. եղել է նաև ՀՀ ԳԱԱ նախագահության ակադեմիկոս-քարտուղար:

Բ.Հարությունյանը հեղինակ է 3 մենագրության, 5 ուսումնամեթոդական աշխատանքների, շուրջ 100 գիտական հոդվածների և 250 քարտեզների: Կարևոր աշխատություններն են՝ ««Աշխարհացույցը» և չորս Հայքերի խնդիրը» (Եր., 1997), «Հայաստանի, հայ-իրանական հարաբերությունների և Առաջավոր Ասիայի հնագույն պատմության մի քանի խնդիրների շուրջ (մ.թ.ա. VII-VI դդ.)» (Եր., 1998), «Մեծ Հայքի վարչաքաղաքական բաժանման համակարգը ըստ «Աշխարհացույց»-ի» (մաս Ա, Եր., 2001), Հայոց պատմության ուսումնական ատլասի Ա և Բ հատորները (2003, 2008): Խմբագիրն ու համահեղինակ է Ազգային ատլասի Բ հատորի (Եր., 2008), դպրոցական դասագրքերի (Եր., 2007-2008) և այլն:

1994թ. Բ.Հարությունյանը դասավանդել է Բեյրութի համազգային հայագիտական բարձրագույն դպրոցում, իսկ 1995-1996թթ.՝ ԱՄՆ-ի Միչիգանի Դիզբորն համալսարանում: Բոստոնի ազգային արխիվում և Ֆրանսիայի Մոնպելիե-3 համալսարանում (1992, 2002, 2008) զբաղվել գիտահետազոտական աշխատանքով:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 6 ատենախոսություն:

Գիտական զեկուցումներով հանդես է եկել հանրապետական և միջազգային գիտաժողովներում (Մոսկվա, Սանկտ Պետերբուրգ, Լոս Անջելես, Բոստոն, Մոնպելիե, Բեռլին, Աշխաբադ, Երևան, Ստեփանակերտ, Թեհրան, Սպահան):

2006թ. Բ.Հարությունյանը պարգևատրվել է «Մովսես Խորենացի» մեդալով:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱԳԻԿ ԳԱՐՈՒՇԻ

Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1948թ. մարտի 23-ին Կոտայքի շրջանի Գեղաշեն գյուղում: 1965թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը, 1970թ. ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետը: 1970-1973թթ. սովորել է ԵՊՀ ասպիրանտուրայում:

1974թ. Գ.Հարությունյանը պաշտպանել է թեկնածուական, 1999թ. Մոսկվայում՝ դոկտորական ատենախոսություն: 1978թ. նրան շնորհվել է դոցենտի, 2004թ. պրոֆեսորի կոչում: 1977-1978թթ. Գ.Հարությունյանը եղել է Բելգրադի համալսարանի

ստաժոր, 1973-1975թթ. ԵՊՀ, 1975-1982թթ. ԵԺՏԻ դասախոս, իսկ 1982-1987թթ. ՀԿԿ Կենտկոմի դասախոսական խմբի անդամ, 1987-1990թթ.՝ ՀԿԿ Կենտկոմի սոցիալ-տնտեսագիտական բաժնի վարիչ: 1990թ. ընտրվել է ՀՀ ԳԽ պատգամավոր և ԳԽ նախագահի տեղակալ, 1991թ.՝ ՀՀ փոխնախագահ, 1991-1992թթ. միաժամանակ կատարել է ՀՀ վարչապետի պարտականությունները:

1996-ից Գ.Հարությունյանը ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահն է և ՀՀ սահմանադրական իրավունքի կենտրոնի խորհրդի նախագահը:

Հեղինակ է ավելի քան 120 գիտական հոդվածների և 20 մենագրության, որոնցից առավել կարևորներն են՝ «Սահմանադրական վերահսկողություն (համեմատական վերլուծություն)» (Եր., 1997), «Դատական իշխանություն. համակարգային գործակցության եվրոպական զարգացումների փորձից» (Եր., 2002), «Սահմանադրական մշակույթ. պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները» (Եր., 2005, անգլ. 2009): Համահեղինակ է "The Constitutional Review and Its Development in the Modern World (A Comparative Constitutional Analysis)" (Yer., 1999), "Конституционное право: Энциклопедический словарь" (M., 2006) գրքերի:

1997 թվականից Գ.Հարությունյանը «Սահմանադրական արդարադատություն» միջազգային ամսագրի խմբագրական խորհրդի նախագահն է, 1998թ. նոյեմբերից՝ Սահմանադրական իրավունքի միջազգային ասոցիացիայի անդամ:

1998թ. Գ. Հարությունյանին շնորհվել է դատավորի բարձրագույն որակավորման դաս:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԷԴՎԱՐԴ ԱՐԶՈՒՄԱՆԻ

Փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր



Ծնվել է 1947թ. օգոստոսի 3-ին Աշտարակի շրջանի Արագյուղում: 1966թ. ավարտել է Երևանի թիվ 15 միջնակարգ դպրոցը: 1966-1968թթ. ծառայել է խորհրդային բանակում: 1969-1974թթ. սովորել է ԵՊՀ պատմության ֆակուլտետի փիլիսոփայության բաժնում:

1975թ. Էդ.Հարությունյանն աշխատել է նույն ֆակուլտետի փիլիսոփայության պատմության ամբիոնում որպես ավագ

լաբորանտ, իսկ 1976-ին անցել է դասախոսական աշխատանքի պատմական մատերիալիզմի, բարոյագիտության և գեղագիտության (այժմ՝ սոցիալական փիլիսոփայության և բարոյագիտության) ամբիոնում որպես ասիստենտ: 1982թ. պաշտպանել է թեկնածուական, 2001թ.՝ դոկտորական ատենախոսություն: 2006-ին նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1993-1994թթ. միաժամանակ եղել է «Երկիր» թերթի գլխավոր խմբագիր: 2001-ից ԵՊՀ սոցիալական փիլիսոփայության և բարոյագիտության ամբիոնի վարիչն է: Նա համահեղինակ ու խմբագիրն է «Անցումային հասարակություն. սոցիոմշակութային փոխակերպումներ» մատենաշարի (6 պրակ):

Էդ.Հարությունյանը հեղինակ է 250 գիտական և հրապարակախոսական հոդվածների, ինչպես նաև 4 մենագրության՝ «Անձի ակտիվության պրոբլեմը սոցիալիզմի պայմաններում» (Եր., 1985), «Անցումային հասարակությունը որպես տրանսֆորմացիոն գործունեության համակարգ» (Եր., 2000), «Քաղաքական համակարգի զարգացման հիմնախնդիրները անցումային Հայաստանում» (Եր., 2003), «Ազգային ինքնություն և կյանքի մշակույթ» (Եր., 2004):

Էդ.Հարությունյանի ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 6 ատենախոսություն:

1996թ. մասնակցել է Սոցինտեռնի համագումարին (Նյու Յորք), «Ազգային դաղափարախոսություն» համահայկական գիտաժողովին (1995, Երևան) և «Հայագիտության արդի վիճակը և զարգացման հեռանկարները» (2003, Երևան) միջազգային գիտաժողովին:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԼՅՈՒԴՄԻԼԱ ՀԱԿՈԲԻ

Սոցիոլոգ,
Փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1941թ. նոյեմբերի 13-ին Երևանում: 1958թ. ավարտել է Երևանի թիվ 71 միջնակարգ դպրոցը, 1963թ. ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետը: 1971թ. պաշտպանել է թեկնածուական, իսկ 1986թ.՝ Մոսկվայում՝ դոկտորական ատենախոսություն: 1988թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1963-ից դասախոսում է ԵՊՀ-ում: 1976-1980թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի կի-

բառական սոցիոլոգիական հետազոտությունների լաբորատորիայի վարիչ: 1980-1984թթ. ղեկավարել է ԵՊՀ սոցիոլոգիական հետազոտությունների լաբորատորիան, 1984-2004թթ. կիրառական սոցիոլոգիայի ամբիոնը: 2004-2008թթ. եղել է ԵՊՀ սոցիոլոգիայի նորաստեղծ ֆակուլտետի դեկան:

Լ.Հարությունյանը ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի պրոֆեսոր է և Սոցիալական իրավունքի եվրոպական կոմիտեի ընտրված անդամ:

Նա եղել է հրավիրյալ պրոֆեսոր Ջորջ Մեյսոնի համալսարանում (ԱՄՆ, 1991թ., 2000թ.), ժողովրդագրական հետազոտությունների ազգային ինստիտուտում (Ֆրանսիա, 1975թ., 1985թ.), Հասարակական և տնտեսական գիտությունների մոսկովյան բարձրագույն դպրոցում (1994-1997թթ.), առաջատար հետազոտությունների չվեդական կոլեգիայում (2008թ.): Դասախոսել է Կոնեկտիկուտի (ԱՄՆ), Ֆրանկֆուրտի կիրառական գիտությունների (Գերմանիա), Տրենտեի (Կանադա), Սորբոնի Փարիզ-7 և Դենիս Դիդրո (Ֆրանսիա) համալսարաններում, Լոնդոնի տնտեսագիտության դպրոցում:

1989թ. Լ.Հարությունյանն ընտրվել է Ժողովրդական պատգամավորների համագումարի պատգամավոր և 1989-1991թթ. աշխատել որպես ԽՍՀՄ Գերագույն խորհրդի անդամ:

Նա հեղինակ է 80 հոդվածի, բուհական 10 ձեռնարկի և մենագրությունների: Առավել կարևոր են «Սոցիալական աշխատանք» (ռուս., Եր., 1995), «Սոցիալական քաղաքականությունը Հայաստանում. անցյալի և ապագայի միջև» (Եր., 1997), «Սոցիալական քաղաքականությունը և կյանքի որակը Հայաստանում» (Եր., 1997) գրքերը: Համահեղինակ է «Ռազմական սոցիոլոգիա» (Եր., 2005), «Կովկասյան երկիրը. Կոնֆլիկտների բեռը և փոփոխությունների ժամանակը» (ռուս., Եր., 2007) ուսումնական ձեռնարկների:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 22 ատենախոսություն:

Լ.Հարությունյանը «Կանայք Հայոց» ամսագրի գլխավոր խմբագիրն է:

Պարգևատրվել է ՀՀ «Մովսես Խորենացի» (1999) և ԼՂՀ «Մխիթար Գոշ» (2001) մեդալներով:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԵՆՐԻԿ ԱՐՏԱՎԱԶԴԻ

Լեզվաբան,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1937թ. նոյեմբերի 3-ին Ախուրյանի շրջանի Արևիկ գյուղում: 1954թ. ավարտել է Լենինականի (այժմ՝ Գյումրի) Գ.Սունդուկյանի անվան միջնակարգ դպրոցը, 1960թ.՝ Մ.Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտի պատմալեզվագրական ֆակուլտետը:

1960-1964թթ. աշխատել է Լենինականի դպրոցներում որպես ուսուցիչ, 1964-ից՝ ՀԽՍՀ ԳԱ Հր.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում որպես կրտսեր գիտաշխատող, 1967-ից՝ ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի ամբիոնի ավագ դասախոս, ապա՝ դոցենտ, 1989-ից՝ պրոֆեսոր: 1981-1985թթ. եղել է ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի դեկանի տեղակալ, իսկ 1991-ից մինչև կյանքի վերջը՝ ԵՊՀ ոչ մասնագիտական ֆակուլտետների հայոց լեզվի ամբիոնի վարիչ:

Հ.Հարությունյանը 1968թ. պաշտպանել է թեկնածուական, 1988թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1989թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Կարևոր մենագրություններն են՝ «Անդեմ նախադասությունները ժամանակակից հայերենում» (Եր., 1969), «Ածական անուն. դերանուն» (Եր., 1976), «Կառավարումը ժամանակակից հայերենում» (Եր., 1983), «Գեղարվեստական խոսք» (Եր., 1986):

Հ.Հարությունյանը վախճանվել է 1992թ. մայիսի 7-ին Երևանում:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԶԻԿ ԿԱՐԱՊԵՏԻ

Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1956թ. հոկտեմբերի 10-ին Լենինականում (այժմ՝ Գյումրի): 1975թ. ավարտել է տեղի թիվ 10 դպրոցը, 1979թ. ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի ռոմանագերմանական բաժինը:

1989թ. Ն.Հարությունյանը պաշտպանել է թեկնածուական, իսկ 2002թ. դոկտորական ատենախոսություն: 2005-ին նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1989-1993թթ. նա աշխատել է ԵՊՀ մանկավարժության ամբիոնում որպես դասախոս, 1993-2005թթ.՝ դոցենտ: 1996-ից մանկավարժության ամբիոնի վարիչն է:

Ն.Հարությունյանը հեղինակ է շուրջ 70 գիտական հոդվածների, «Առաքել Բահաթրյան» (Եր., 1992), «Լիբանանի և Սիրիայի հայկական դպրոցները» (Եր., 2002) մենագրությունների, համահեղինակ՝ «Հայ մանկավարժության նշանավոր դեմքեր» (գիրք Ա, Եր., 2006) մանկավարժական հանրագիտարանի, «Մարդկային զարգացման հիմունքներ» (Եր., 2005) բուհական ձեռնարկի, «Հասարակագիտություն» (Եր., 2008) 9-րդ դասարանի դասագրքի:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 2 ատենախոսություն:

Ն.Հարությունյանը՝ «Մանկավարժական միտք» գիտական հանդեսի գլխավոր խմբագիրն է:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՌՈՄԻԿ ՍՈՒՐԵՆԻ

Քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1946թ. հունվարի 1-ին Գորիսի շրջանի Տաթև գյուղում: 1962թ. ավարտել է գյուղի միջնակարգ դպրոցը, 1969թ. ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը: 1969-1971թթ. ծառայել է խորհրդային բանակում: 1972-1973թթ. եղել է ԵՊՀ ֆիզիկական և կոլոիդների քիմիայի ամբիոնի ուսումնական լաբորատորիայի վարիչ, 1973-1981թթ.՝ նույն ամբիոնի լաբորանտ, 1981-1987թթ.՝ պոլիմերացման կինետիկայի պրոբլեմային լաբորատորիայի կրտսեր գիտաշխատող: 1984թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1987-1988թթ. եղել է նույն լաբորատորիայի գիտաշխատող, 1988-2002թթ. ավագ գիտաշխատող, 2002-2005թթ.՝ առաջատար գիտաշխատող, 2005-2007թթ.՝ ֆիզիկական և կոլոիդների քիմիայի ամբիոնի դոցենտ: 2007-ից անօրգանական քիմիայի ամբիոնի վարիչն է:

1996թ. Ռ.Հարությունյանը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 2008թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Հեղինակ է 125 գիտական հոդվածների, 40 թեզիսի, 4 արտոնագրի, համահեղինակ՝ 7 ուսումնամեթոդական աշխատանքների:

Գիտական ուսումնասիրությունները նվիրված են էմուլսիա-

ներում ընթացող օքսիդացման և պոլիմերացման պրոցեսների կինետիկական օրինաչափությունների ու մեխանիզմների բացահայտմանը: Զբաղվում է նաև մակերևութային ակտիվ նյութերի լուծույթների կոլոիդա-քիմիական հատկություններ և քիմիական ռեակցիաներում դրանց դերի ուսումնասիրությամբ:

Ռ.Հարությունյանի ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 5 ատենախոսություն:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՌՈՒԲԵՆ ՄԻՔԱՅԵԼԻ

Գենետիկոս,
կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

Ծնվել է 1946թ. սեպտեմբերի 23-ին Երևանում: 1964թ. ավարտել է Երևանի թիվ 8 միջնակարգ դպրոցը: 1969թ. ավարտելով ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետը՝ ընդունվել է ասպիրանտուրա: 1972թ. Մոսկվայում պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն:

1972-ից Ռ.Հարությունյանն աշխատում է ԵՊՀ-ում: 1982թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1991թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1982-ից նա ԵՊՀ բջջագենետիկայի պրոբլեմային լաբորատորիայի գիտական ղեկավարն է, 1988-ից գենետիկայի և բջջաբանության ամբիոնի պրոֆեսոր: 1990-ից նույն ամբիոնի վարիչն է: 2006թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ:

Ռ.Հարությունյանը հեղինակ է ավելի քան 170 գիտական աշխատությունների: Նրա խմբագրությամբ Ֆրանսիայում 1989թ. լույս է տեսել ֆրանսիական աշխարհագրական կոմիտեի «Ժեոս» ամսագրի՝ հայ ժողովրդի գենոաշխարհագրության հարցերին նվիրված համարը: Համահեղինակ է «Ինչ են պատմում մեր գեները» (Եր., 1989), «Հայ ժողովրդի մարդաբանությունը և էկոլոգիական գենետիկան» (Եր., 1996) գրքերի և «Անտիկլաստոգենեզը կաթնասունների և մարդու բջիջներում» (անգլ., Մյունխեն, 1991) մենագրության:

1992-ից Ռ.Հարությունյանը ֆրանսիացի գենետիկոսների հետ համատեղ զբաղվում է քրոմոսոմները վնասող կլաստոգեն գործոնի հետազոտմամբ: Այդ ուսումնասիրություններ-

րով ստացվել են արժեքավոր տվյալներ Հայաստանի գենետիկական ռիսկի խմբերի վերաբերյալ:

Ռ.Հարությունյանն աշխատել և դասախոսություններ է կարդացել ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Շվեյցարիայում, Մեքսիկայում, Անգլիայում, Սլովակիայում և Իտալիայում: Նա մասնակցել է միջազգային գիտաժողովների (ԱՄՆ, Ֆրանսիա, Գերմանիա, Թուրքիա, Ճապոնիա): 1991թ. ղեկավարել է Միջավայրի մուտագենների եվրոպական ընկերության գիտաժողովի բաժանմունքի աշխատանքները, եղել համաղեկավար 2004թ. ԱՄՆ-ում կայացած NATO-ի կոնֆերանսի՝ նվիրված գենետիկական թունաբանության նոր մեթոդներին:

Ռ.Հարությունյանն իրականացրել է շրջակա միջավայրի մուտագենների տեստավորում և մոնիտորինգ: Նրա ուսումնասիրությունների զգալի մասը նվիրված է հանրապետության բազմաթիվ ձեռնարկություններում աշխատողների բջջագենետիկական և գենետիկական մոնիտորինգին:

Նրա ղեկավարությամբ ու խորհրդատվությամբ պաշտպանվել է թեկնածուական 16 և դոկտորական 1 ատենախոսություն:

1999-2008թթ. Ռ.Հարությունյանը եղել է «ԵՊՀ գիտական տեղեկագիր» հանդեսի գլխավոր խմբագիր: "Korean Journal of Environmental Biology", "Molecular Cytogenetics" ամսագրերի խմբագրական խորհուրդների անդամ է:

1999թ. նա պարգևատրվել է «Անանիա Շիրակացի» մեդալով:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ ԳԱՌՆԻԿԻ

Ֆիզիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1955թ. հուլիսի 19-ին Երևանում: 1972թ. ավարտել է թիվ 62 դպրոցը, 1977թ. ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետը:

1977-1980թթ. եղել է ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի մոլեկուլային ֆիզիկայի ամբիոնի լաբորանտ և հեռակա ուսուցմամբ ասպիրանտ, 1981-1983թթ.՝ ավագ լաբորանտ: 1983թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1983-1985թթ. նա մոլեկուլային ֆիզիկայի ամբիոնին կից մակրոմոլեկուլների ֆիզիկայի գիտահետազոտական լաբորատորիայի կրտսեր գիտաշխատող էր, 1985-1988թթ.՝ ավագ գիտաշխա-

տող, 1988-1991թթ. հրավիրված պրոֆեսոր Ֆլորենցիայի համալսարանում (Իտալիա), 1991-1992թթ. ԵՊՀ մոլեկուլային ֆիզիկայի ամբիոնին կից մակրոմոլեկուլների ֆիզիկայի լաբորատորիայի գլխավոր գիտաշխատող, 1992-1994թթ.՝ նույն լաբորատորիայի վարիչ:

1993թ. Ս.Հարությունյանը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 2002թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1994-2000թթ. եղել է ԵՊՀ մոլեկուլային ֆիզիկայի ամբիոնի վարիչ, 2000-2006թթ. ֆիզիկայի ֆակուլտետի դեկան, 2006-2007թթ. գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր, իսկ 2007-ից ՀՀ Գիտության պետական կոմիտեի նախագահն է:

Հեղինակ է ավելի քան 100 գիտական աշխատանքների, որոնք նվիրված են ԴՆԹ-ի ջերմակայունության և կոնֆորմացիայի՝ արտաքին տարբեր գործոնների ազդեցության, հայտնի հակաուռուցքային դեղանյութերի և պոտենցիալ հակաուռուցքային միացությունների, ինչպես նաև նոր սինթեզված պորֆիրինների և մետաղապորֆիրինների՝ ԴՆԹ-ի հետ փոխազդեցության մոլեկուլային մեխանիզմների պարզաբանման հարցերին:

Ս.Հարությունյանի ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 5 ատենախոսություն:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԻԼԻԿ ՄԱՐԳԱՐԻ

Ֆիզիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՄՀ գիտության վաստակավոր գործիչ



Ծնվել է 1936թ. մարտի 5-ին Երևանում: 1953թ. ավարտել է Երևանի թիվ 10 դպրոցը և ընդունվել Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետ, որն ավարտելուց հետո ուսումը շարունակել է նույն համալսարանի ասպիրանտուրայում:

1960թ. Վ.Հարությունյանն աշխատել է Երևանի ֆիզիկայի ինստիտուտում որպես կրտսեր գիտաշխատող, միաժամանակ դասավանդել ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետում: 1963թ. պաշտպանել է թեկնածուական, 1972թ.՝ դոկտորական ատենախո-

սություն: 1974թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1967թ. Վ.Հարությունյանը նշանակվել է ՀԽՍՀ ԳԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի գիտական աշխատանքների գծով փոխտնօրեն: 1972թ. ԵՊՀ-ում հիմնադրել է քվանտային էլեկտրոնիկայի և բյուրեղների աճի ամբիոնը և ճառագայթային ֆիզիկայի պրոբլեմային լաբորատորիան, որի հիմքի վրա 1979թ. ստեղծվել է ԵՊՀ-ին կից կոնդենսացված միջավայրերի ֆիզիկայի գիտահետազոտական ինստիտուտը: Վերջինս 1988թ. վերածվել է «Լազերային տեխնիկա» գիտահետազոտական միավորման՝ Վ.Հարությունյանի տնօրինությամբ: 1999թ. այդ միավորման հիման վրա ստեղծվել է հայ-հունական «ԼՏ-Պիրկալ» համատեղ ձեռնարկությունը, որի նախագահ և գլխավոր տնօրեն է ընտրվել Վ.Հարությունյանը: 1990-1991թթ. եղել է ՀՀ բարձրագույն կրթության և գիտության նախարար:

Վ.Հարությունյանի գիտական հետազոտությունները վերաբերում են դաշտի քվանտային տեսությանը, օպտիկական քվանտային գեներատորների տեսությանը, ոչ գծային օպտիկային: Նա կանխատեսել և փորձնականորեն հայտնաբերել է մի շարք կոհերենտ երևույթներ լազերներում, առաջարկել նոր տիպի բարակթաղանթային քվազիալիքատար լազեր և ստեղծել դրա տեսությունը: Ազատ էլեկտրոնների և լազերային ճառագայթման փոխազդեցության բնագավառի Վ.Հարությունյանի կողմից դեռևս 1963թ. սկսված հետազոտությունները հետագայում հիմք դարձան ժամանակակից հզոր լազերների ստեղծման համար: Նրան է պատկանում ոչ գծային փոխազդեցություններում լազերային ճառագայթման բևեռացման երևույթների ուսումնասիրման առաջնությունը և բացառապես բևեռացմամբ պայմանավորված մի շարք երևույթների տեսական կանխատեսումն ու փորձնական իրականացումը:

Վ.Հարությունյանը հեղինակ է ավելի քան 250 աշխատությունների: 1996թ. Բելգիայում “Physics reports” ամսագրում լույս է տեսել նրա լազերային ճառագայթման և ազատ էլեկտրոնների փոխազդեցությանը նվիրված աշխատությունը:

Նրա ղեկավարությամբ ու խորհրդատվությամբ պաշտպանվել է թեկնածուական 25 և դոկտորական 7 ատենախոսություն:

1981թ. Վ.Հարությունյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է աշխատանքային կարմիր դրոշի (1976) և «Պատվո նշան» (1986) շքանշաններով:

Վախճանվել է 2000թ. օգոստոսի 19-ին Երևանում:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԻԼԻԿ ՍԻՐԱԿԻ

Քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1938թ. դեկտեմբերի 5-ին Երևանում: 1956թ. ավարտել է Ստեփանավանի միջնակարգ դպրոցը, 1959թթ. Երևանի տեքստիլ տեխնիկումը, 1964թթ.՝ ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը: 1965-1966թթ. Վ.Հարությունյանը եղել է ԵՊՀ ասպիրանտ: 1969թ. պաշտպանել է թեկնածուական, 1988թ. դոկտորական ատենախոսություն: 1974թ. նրան շնորհվել է դոցենտի, 1991-ին պրոֆեսորի կոչում:

1966-1971թթ. Վ.Հարությունյանն աշխատել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի օրգանական քիմիայի ամբիոնում որպես ասիստենտ, 1971-1974թթ.՝ ավագ դասախոս, 1974-1989թթ. դոցենտ, 1989-2000թթ.՝ պրոֆեսոր: 2000-ից նա նույն ամբիոնի վարիչն է:

Վ.Հարությունյանը հեղինակ է 240 գիտական աշխատանքների, այդ թվում՝ 86 հեղինակային իրավունքի: Նրա գիտական աշխատությունները նվիրված են տարբեր տիպի կետոլակտոնների և կետոթթուների քիմիային և կենսաբանորեն ակտիվ տարբեր տիպի լակտոնային օղակ պարունակող կամ հարակից կառուցվածքով ազոտ, թթվածին և ծծումբ պարունակող նոր հետերոցիկլային միացությունների սինթեզին:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 2 ատենախոսություն:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ ՄԻՔԱՅԵԼԻ

Ռադիոֆիզիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Ծնվել է 1940թ. օգոստոսի 30-ին Երևանում: 1957թ. ավարտել է Երևանի թիվ 20 միջնակարգ դպրոցը, 1964-ին Կիևի պոլիտեխնիկական ինստիտուտի ռադիոէլեկտրոնիկայի ֆակուլտետը: 1965թ. աշխատանքի է անցել ՀԽՍՀ ԳԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտում: Ուսումը շարունակել է ինստիտուտի ասպիրանտուրայում: 1970թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և շարու-

նակել աշխատանքը նույն ինստիտուտում որպես գիտքարտուղար, ավագ գիտաշխատող, իսկ 1974-1989թթ. կիսահաղորդչային սարքերի լաբորատորիայի վարիչ:

1977թ. Վ.Հարությունյանը Վիլնյուսում պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: Նույն թվականին հրավիրվել է ԵՊՀ որպես ռադիոֆիզիկայի ֆակուլտետի կիսահաղորդիչների և դիէլեկտրիկների ֆիզիկայի (այժմ՝ կիսահաղորդիչների ֆիզիկայի և միկրոէլեկտրոնիկայի) ամբիոնի վարիչ և կիսահաղորդչային սարքերի և նյութերի ֆիզիկայի գիտահետազոտական լաբորատորիայի (այժմ՝ կիսահաղորդչային սարքերի և նանոտեխնոլոգիաների կենտրոն) գիտական ղեկավար: 1981թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1990թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1996թ.՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս:

1992-ից Վ.Հարությունյանը ՀՀ ԳԱԱ Տեղեկագիր. «Ֆիզիկա», 2008-ից՝ "Armenian Journal of Physics" ամսագրերի գլխավոր խմբագիրն է: Եղել է "Solar Cells" միջազգային ամսագրի խմբագրական խորհրդի անդամ:

Վ.Հարությունյանը հեղինակ է շուրջ 400 գիտական հոդվածների, պատենտների և գրքերի, այդ թվում՝ "Генерационно-рекомбинационные эффекты и двойная инжекция в полупроводниках" (Ер., 1977) մենագրության: Համահեղինակ է "Инжекционно-пролетные диоды" (Ер., 1986), "Кремниевые фотоприемники" (Ер., 1989), "Проблемы современной микроэлектроники. Приборы с зарядовой связью" (Ер., 1986), "Фотоприемники - прошлое, настоящее, будущее" (Ер., 1986) մենագրությունների և «Միկրոէլեկտրոնիկայի ֆիզիկական հիմունքներ» (Եր., 1995), «ԳԲՀ կիսահաղորդչային սարքեր» (Եր., 1996) դասագրքերի:

Գիտական գործունեությունն ընդգրկում է նոր կիսահաղորդչային նյութերի և կառուցվածքների, քիմիական սենսորների, արեգակնային էներգիայի ֆոտոէլեկտրաքիմիական և (ջերմա) ֆոտոէլեկտրական փոխակերպման, օպտոէլեկտրոնիկայի և նանոէլեկտրոնիկայի բնագավառները:

Վ.Հարությունյանի ղեկավարությամբ ու խորհրդատվությամբ պաշտպանվել է թեկնածուական շուրջ 30 և դոկտորական 5 ատենախոսություն:

Գիտական աշխատանքներ է կատարել Արևմուտքի խոշոր գիտական կենտրոններում և բազմիցս մասնակցել միջազգային գիտաժողովների (ԱՄՆ, Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա և

այլն), Հայաստանում կազմակերպել մի շարք գիտաժողովներ:

2006թ. ՌԴ-ում կայացած Այլընտրանքային էներգիայի և էկոլոգիայի I համաշխարհային համաժողովում, որի միջազգային կազմկոմիտեի համանախագահն է եղել Վ.Հարությունյանը, նրան շնորհվել է «Համաշխարհային գիտության մեջ ներդրման համար» մեդալ: Պարգևատրվել է «Անանիա Շիրակացի» մեդալով (1999), արժանացել ՀՀ Նախագահի մրցանակի (2006):

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՖԵԼԻՔՍ ԳԵՎՈՐԳԻ

Մաթեմատիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր,



Ծնվել է 1940թ. ապրիլի 18-ին Լենինականում (այժմ՝ Գյումրի): 1957թ. ավարտել է տեղի թիվ 38 դպրոցը և ընդունվել ԵՊՀ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետ: 1962թ. ավարտել է ԵՊՀ մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետը և աշխատանքի ընդունվել ՀԽՍՀ ԳԱ մաթեմատիկայի և մեխանիկայի ինստիտուտում որպես կրտսեր, այնուհետև՝ 1972-ից ավագ գիտաշխատող:

1966թ. Ֆ.Հարությունյանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: Նույն թվականից համատեղությամբ, որպես ավագ դասախոս, աշխատել է Խ.Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտում, իսկ 1967-1970թթ., և 1972-1973թթ.՝ նաև նույն ինստիտուտի Գորիսի մասնաճյուղում: 1970թ. նա ընդհանուր և հատուկ մասնագիտական դասընթացներ է վարել ԵՊՀ մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետում: 1977թ. նրան շնորհվել է դոցենտի կոչում:

1986թ. Ֆ.Հարությունյանը Թբիլիսիում պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, իսկ 1990թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1987-1996թթ. եղել է ԵՊՀ թվային անալիզի ամբիոնի, իսկ 1996թ. մինչև կյանքի վերջը՝ ԵՊՀ կիրառական անալիզի ամբիոնի վարիչ:

Ֆ.Հարությունյանը հեղինակ է շուրջ 30 գիտական հոդվածների, որոնք վերաբերում են ֆունկցիաների մետրիկական տեսությանը, ընդհանուր օրթոգոնալ շարքերով և եռանկյունաչափական համակարգերով ֆունկցիաների ներկայացման

տեսությանը: Նրա կողմից Հաարի և Ուոլշի շարքերի միակության վերաբերյալ ստացած թեորեմները սկզբնավորել են գիտական նոր ուղղություն:

Ֆ.Հարությունյանի ստացած արդյունքներից շատերը արտացոլված են արտասահմանում հրատարակված մի շարք մենագրություններում և գիտական հանդեսներում:

Վախճանվել է 2001թ. նոյեմբերի 26-ին Երևանում:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱԲԳԱՐ ՌՈՒԲԵՆԻ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1908թ. մայիսի 30-ին Թիֆլիսում: Ավարտելով միջնակարգ դպրոցը 1924թ. տեղափոխվել է Երևան, կրթությունը շարունակել ԵՊՀ պատմագրական ֆակուլտետում:

1928-1931թթ. Ա.Հովհաննիսյանը սովորել է ԽՍՀՄ ԳԱ պատմության ինստիտուտի ասպիրանտուրայում: 1935թ. Լենինգրադում (այժմ՝ Սանկտ Պետերբուրգ) պաշտպանել է թեկնածուական, իսկ 1938թ. Մոսկվայում՝ դոկտորական ատենախոսություն: Նույն թվականին ստացել է պրոֆեսորի կոչում և նշանակվել ԵՊՀ նոր պատմության, այնուհետև՝ ընդհանուր պատմության ամբիոնի վարիչ:

1938-1947թթ. Ա.Հովհաննիսյանը եղել է ԵՊՀ գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր էր: 1947թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս: 1947-1953թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի տնօրեն, 1949-1990թթ. նախագահության անդամ, 1949-1960թթ. հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, 1960-1963թթ. և 1967-1986թթ.՝ փոխնախագահ: Ղեկավարել է ՀԽՍՀ ԳԱ խմբագրական-հրատարակչական խորհուրդը:

Ա.Հովհաննիսյանը հեղինակել է ավելի քան 100 գիտական աշխատություն՝ մենագրություններ, հոդվածներ, որոնք նվիրված են ինչպես համաշխարհային, այնպես էլ հայոց պատմության հիմնախնդիրներին: Դրանցից առավել կարևորներն են՝ «Ֆուրյեի հասարակական իդեալի ծագումնաբանությունը» (ռուս., Եր., 1939), «Հովսեփ Էմին» (ռուս., Եր., 1939), «Ռուսաստանը և հայ ազգային-ազատագրական շարժումը 18-րդ դա-

րի 80-ական թվականներին» (ռուս., Եր., 1947), «Միջազգային հարաբերությունները 19-րդ դարի սկզբին և Անդրկովկասի միացումը Ռուսաստանին» (ռուս., Եր., 1959):

Ա.Հովհաննիսյանը զեկուցումներով հանդես է եկել միջազգային բազմաթիվ գիտաժողովներում (Փարիզ՝ 1958, 1971, 1976, Ստոկհոլմ՝ 1960, Մոսկվա՝ 1960, Պրահա՝ 1967, Լոնդոն՝ 1979, Հռոմ՝ 1981):

Նա մեծապես նպաստել է «Հայկական սովետական հանրագիտարանի» ստեղծմանը:

1940թ. Ա.Հովհաննիսյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է «Պատվո նշան» (2), Աշխատանքային կարմիր դրոշի (2), Հոկտեմբերյան հեղափոխության, Ժողովուրդների բարեկամության շքանշաններով ու մի շարք մեդալներով:

Վախճանվել է 1991թ. դեկտեմբերի 3-ին Երևանում:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՇՈՏ ԳԱՐԵԳԻՆԻ

Պատմաբան, կուսակցական գործիչ,
փիլիսոփայական և պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,

Ծնվել է 1887թ. հունիսի 17-ին Շուշիում: Սովորել է տեղի ռեալական ուսումնարանում: 1906թ. դպրոցն ավարտելուց հետո մեկնել է Գերմանիա, ուսանել Ենայի, Հալլեի, Մյունխենի համալսարաններում:

1913թ. Ա.Հովհաննիսյանն ավարտել է Մյունխենի համալսարանը և ստացել փիլիսոփայական գիտությունների դոկտորի աստիճան: 1913-1914թթ. պաշտոնավարել է Շուշիի Հայկական հոգևոր սեմինարիայում, իսկ 1914-1917թթ.՝ Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: Դասախոսական աշխատանքին զուգահեռ գիտական հետազոտություններ է կատարել Էջմիածնի մատենադարանում և դրանց արդյունքները հրատարակել «Արարատ» ամսագրում ու առանձին գրքույկներով:

Ա.Հովհաննիսյանը կոմունիստական կուսակցության անդամ էր 1906 թվականից: 1918թ., Բաքվի կոմունայի օրերին, ղեկավարել է Բաքվի խորհրդի կուլտուր-լուսավորական բաժինը,

իսկ հետո՝ լուսավորության կոմիսարիատի դպրոցական բաժինը: Կոմունայի անկումից հետո մեկնել է Մոսկվա, որտեղ աշխատել է Ազգությունների գործերի կոմիսարիատում որպես գրականության և պատմության բաժնի վարիչ և, միաժամանակ, 1918-1920թթ. ղեկավարել ՌՍՖՍՀ լուսժողկոմատի Հայկական բաժինը: 1920թ. դեկտեմբերին նա նշանակվել է ՀԽՍՀ լուսավորության ժողովրդական կոմիսար: Այդ պաշտոնում նրա ստորագրած առաջին փաստաթղթերից մեկը «Երևանի համալսարանի վերակազմության մասին» դեկտեմբերի 17-ի հրամանն էր: 1922-1927թթ. եղել է Հայաստանի կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության առաջին քարտուղար:

1921-1927թթ. Ա.Հովհաննիսյանը հայ ժողովրդի պատմություն և լենինիզմ է դասավանդել ԵՊՀ-ում: 1927-1937թթ. աշխատել է Լենինգրադի և Մոսկվայի գիտական հիմնարկներում:

Նա ևս ղերծ չի մնացել ստալինյան դարաշրջանի բռնություններից: 1937թ. բռնադատվել է, 1949-ին աքսորից վերադառնալուց հետո հինգ տարի հարկադրված ապրել Կիրովականում (այժմ՝ Վանաձոր):

1954թ. Ա.Հովհաննիսյանն աշխատանքի է անցել ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտում որպես ավագ գիտաշխատող: 1955թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1960թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս, 1961-ից ղեկավարել պատմության ինստիտուտի նոր պատմության բաժինը:

Ա.Հովհաննիսյանը թողել է գիտական հարուստ ժառանգություն. առանձնապես կարևոր են «Իսրայել Օրին և հայ ազատագրական գաղափարը» (գերմ., Մյունխեն, 1913), «Հայ-ռուս օրիենտացիայի ծագման խնդիրը» (Էջմիածին, 1921), «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության» (Եր., 1957, 1959), «Նալբանդյանը և նրա ժամանակը» (Եր., 1955, 1956) երկհատոր մենագրությունները և «Հայ-ռուսական հարաբերությունները 18-րդ դարի առաջին երեսնամյակում» վավերագրերի ժողովածուի ընդարձակ առաջաբանը (ռուս., Եր., 1967):

Նրա գիտական ղեկավարությամբ աճել են բազմաթիվ պատմաբաններ:

1967թ. պարգևատրվել է Լենինի շքանշանով:

Վախճանվել է 1972թ. հունիսի 11-ին Երևանում:

Ա.Հովհաննիսյանի բրոնզաձույլ կիսանդրին ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի նախասրահում խորհրդանշում է ականա-

վոր կուսակցական գործչի և գիտական-մանկավարժի դերը համալսարանի հիմնադրման ու կայացման գործում:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ

Մաթեմատիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր



Ծնվել է 1949թ. հունվարի 30-ին Լենինականում (այժմ՝ Գյումրի): 1966թ. ավարտել է տեղի թիվ 2 դպրոցը և ընդունվել ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետ: 1973-1975թթ. սովորել է ԵՊՀ ասպիրանտուրայում: 1975թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և աշխատանքի անցել ԵՊՀ կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետում սկզբում որպես ասիստենտ, իսկ 1981-ից՝ դոցենտ:

1992թ. Լենինգրադում (այժմ՝ Սանկտ Պետերբուրգ) պաշտպանել է դոկտորական ատենախոսություն:

1990թ. տեղափոխվել է ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի բարձրագույն մաթեմատիկայի ամբիոն, որտեղ աշխատել է մինչև 1999թ.: 1999-2001թթ. եղել է Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր: 2002-ից ԵՊՀ ռադիոֆիզիկայի ֆակուլտետի բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնի վարիչն է: 2007թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Ա.Հովհաննիսյանը հեղինակ է երկու տասնյակից ավելի գիտական հոդվածների և համ·հեղինակ՝ «Մաթեմատիկական ֆիզիկա» (Եր., 1988), «Սովորական դիֆերենցիալ հավասարումներ» (Եր., 2002) դասագրքերի: Զբաղվելով մասնակի ածանցյալներով դիֆերենցիալ հավասարումների ուսումնասիրությամբ՝ ստացել է մի շարք կարևոր արդյունքներ թույլ կամ եզակիություններ պարունակող հիպերբոլական հավասարումների համար:

Ա.Հովհաննիսյանը հրավիրվել է գիտամանկավարժական աշխատանքի արտերկրի մի շարք համալսարաններ (Գրայֆսվալդ 1998, Փարիզ-6՝ 2002, Նորթիսթեն (Բոստոն)՝ 2005):

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԼԵՎՈՆ ԱՆԴՐԵԱՍԻ

Բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ և ԽՍՀՄ ԲԳԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1885թ. փետրվարի 25-ին Թիֆլիսում: 1903թ. ավարտել է տեղի գիմնազիան, այնուհետև սովորել Խարկովի համալսարանի բժշկական ֆակուլտետում: 1909թ. ավարտելով այն վերադարձել է Թիֆլիս:

Լ.Հովհաննիսյանը մի քանի տարի աշխատել է Թիֆլիսի Միխայլովսկի հիվանդանոցի ներքին հիվանդությունների բաժանմունքում: 1912թ. Ղազախստանում մասնակցել է հակահամաճարակային պայքարի աշխատանքներին: 1913թ. Ալավերդում կազմակերպել է բանվոր-ծառայողների բժշկասանիտարական սպասարկման գործը: Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում ծառայել է գործող բանակում որպես հրետանային բրիգադի կրտսեր բժիշկ, այնուհետև՝ գվարդիայի կորպուսի սանհիգիենիկ ջոկատի հրամանատար: Պատերազմի ավարտից հետո վերադարձել է Թիֆլիս: 1919թ. տեղափոխվել է Հայաստան և աշխատել Երևանի առաջին հիվանդանոցի թերապիայի բաժանմունքի վարիչի պաշտոնում:

1923թ. հրավիրվել է ԵՊՀ որպես բժշկական ֆակուլտետի ներքին հիվանդությունների ամբիոնի վարիչ: 1928թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1937թ. Լ.Հովհաննիսյանը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն:

1930-1967թթ. եղել է Երևանի բժշկական ինստիտուտի ներքին հիվանդությունների ամբիոնի վարիչ, միաժամանակ՝ 1944-1953թթ. ՀԽՍՀ ԳԱ բժշկագիտության և կենսաբանության պատմության, 1953-1955թթ.՝ բժշկագիտության, 1955-1960-ին՝ սրտաբանության սեկտորի վարիչ:

Լ.Հովհաննիսյանը 1943թ. հաստատվել է ՀԽՍՀ ԳԱ, 1944թ. ԽՍՀՄ ԲԳԱ ակադեմիկոս: 1962թ. ընտրվել է բժշկագիտության պատմության միջազգային ակադեմիայի անդամ:

Հեղինակ է շուրջ 170 գիտական հոդվածների, ավելի քան 20 մենագրության: Զբաղվել է ներքին հիվանդությունների ախտաբանության, Հայաստանի հանքային ջրերի, հայ բժշկության պատմության, բժշկական գիտական տերմինաբանության, հիվանդների հոգեբանության և այլ հարցերով: Երկար տարի-

ներ զբաղվել է մալարիայի ուսումնասիրությամբ. հետազոտել մալարիայի դեպքում հիվանդի օրգանիզմում տեղի ունեցող կենսաքիմիական խորը փոփոխությունները, մշակել մալարիայից առաջացած ծանր սակավարյունությամբ տառապող հիվանդների բուժման եղանակներ:

Լ.Հովհաննիսյանը զբաղվել է նաև Արզնու հանքային ջրերի ուսումնասիրությամբ և 1936թ. հրատարակել "Минеральные источники Армении" մենագրությունը: 1943թ. մի խումբ աշխատակիցների հետ ռուսերեն հրատարակել է ներքին հիվանդությունների ախտորոշման դասագիրք, իսկ Մ.Աբեղյանի և Ա.Տեր-Պողոսյանի մասնակցությամբ կազմել «Լատին-ռուս-հայերեն բժշկական բառարան»-ը (Եր. 1951): Կլինիկական բժշկագիտության համար առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում "О взаимоотношениях между психической и соматической сферами в клинике внутренних болезней" (Ер., 1961), "О психологическом профиле сердечного больного" (Ер., 1963) մենագրությունները:

Գիտական մեծ արժեք է ներկայացնում Լ.Հովհաննիսյանի "История медицины в Армении с древнейших времен до наших дней"(Ер., 1946-1947) հինգհատորյակը: Նա ռուսերեն է թարգմանել և հրատարակել Մ.Հերացու «Ջերմանց մխիթարություն» (Եր., 1968) երկը:

Լ.Հովհաննիսյանը եղել է Թերապևտների համամիութենական գիտական ընկերության պատվավոր անդամ, Հայաստանի թերապևտների գիտական ընկերության նախագահ: 1961թ. նրա աջակցությամբ Երևանում ստեղծվել է սրտաբանության և սրտի վիրաբուժության գիտահետազոտական ինստիտուտը, որի հիմնադիր տնօրենն էր:

1940թ. նա արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի (2) շքանշանով և մեդալներով:

Վախճանվել 1970թ. մայիսի 11-ին Երևանում:

Լ.Հովհաննիսյանի անունով է կոչվում ՀՀ ԱՆ սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտը:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏ ՀԱԿՈԲԻ

Աշխարհագրագետ, պրոֆեսոր

Ծնվել է 1878թ. փետրվարի 28-ին Նախիջևանի Օրդուբադի շրջանի Հանդամեջ գյուղում: Միջնակարգ կրթությունն ստացել է Թիֆլիսի 2-րդ արական գիմնազիայում, որն ավարտել է 1896թ.: 1904թ. ավարտել է Պետերբուրգի Համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի բնագիտական բաժինը:

1907 թվականից Հ.Հովհաննիսյանը բնագիտություն և աշխարհագրություն է դասավանդել Թիֆլիսի օրիորդաց գիմնազիաներում: 1914-1917թթ. աշխատել է Բաքվի գիմնազիաներում որպես բնագիտության ուսուցիչ: 1918թ. եղել է Հայաստանի Առաջին Հանրապետության լուսավորության նախարարի օգնական: 1919թ. նշանակվել է Երևանի արական գիմնազիայի վերատեսուչ: Խորհրդային կարգերի հաստատումից հետո այդ գիմնազիան վերանվանվել է երկրորդ աստիճանի թիվ 2 աշխատանքային (հետագայում՝ Խ.Աբովյանի անվան) դպրոց, որտեղ որպես տնօրեն նա աշխատել է մինչև 1927թ.:

1923թ. Հ.Հովհաննիսյանը հրավիրվել է դասախոսելու ԵՊՀ բանֆակում և մյուս ֆակուլտետներում՝ որպես աշխարհագրության դասախոս: 1929թ. ղեկավարել է ԵՊՀ ֆիզիկական աշխարհագրության ամբիոնը: Նույն տարում նրան շնորհվել է դոցենտի, 1935թ.՝ պրոֆեսորի կոչում:

1933թ. Հ.Հովհաննիսյանը որպես պատգամավոր, մասնակցել է Լենինգրադում գումարված աշխարհագետների համամիութենական համագումարին և ընտրվել նախագահության անդամ: Գործուն մասնակցություն է ունեցել նաև Հայաստանի աշխարհագրական ընկերության ստեղծմանը և ընտրվել նախագահի տեղակալ: 1935-1937թթ. եղել է ԵՊՀ աշխարհագրական-երկրաբանական ֆակուլտետի դեկան:

Հեղինակ է մի շարք ձեռնարկների: Բնագիտական թեմաներով նրա կարդացած հրապարակային բազմաթիվ դասախոսությունները լույս են տեսել առանձին գրքով՝ «Մարդ և տիեզերք» վերնագրով:

Վախճանվել է 1938թ. մարտի 5-ին Երևանում:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՌԱՖԻԿ ՍՄԲԱՏԻ

Ֆիզիկոս,
Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր

Ծնվել է 1927թ. մայիսի 5-ին Ախուրյանի շրջանի Հայկավան գյուղում: 1945թ. ավարտել է գյուղի միջնակարգ դպրոցը, 1949թ. Լենինականի (այժմ՝ Գյումրի) Մ.Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտը, 1955թ. Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի ասպիրանտուրան: 1956թ. Ռ.Հովհաննիսյանը պաշտպանել է թեկնածուական, 1974-ին՝ դոկտորական ատենախոսություն: 1958թ. նրան շնորհվել է դոցենտի, 1977-ին պրոֆեսորի կոչում:

1956-1958թթ. Ռ.Հովհաննիսյանը եղել է Լենինականի Մ.Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտի ֆիզիկայի ամբիոնի վարիչ, 1958-1969թթ.՝ ԵՊՀ տեսական ֆիզիկայի ամբիոնի դոցենտ, 1959-1965թթ. նաև ֆիզիկայի ֆակուլտետի դեկանի տեղակալ, 1969-1977թթ. ընդհանուր ֆիզիկայի ամբիոնի վարիչ, 1977-1981թթ. ռադիոֆիզիկայի ֆակուլտետի ալիքային պրոցեսների ամբիոնի պրոֆեսոր, 1981-1996թթ.՝ Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական ինստիտուտի ֆիզիկայի ամբիոնի վարիչ:

Ռ.Հովհաննիսյանի նախաձեռնությամբ ԵՊՀ ընդհանուր ֆիզիկայի ամբիոնին կից հիմնվել են սառը պլազմայի, հեղուկ բյուրեղների և ռենտգենյան գիտահետազոտական լաբորատորիաները:

Ռ.Հովհաննիսյանը հեղինակ է ավելի քան 80 գիտական հոդվածների, որոնք վերաբերում են գրավիտացվող համակարգերի հավասարակշռության և կայունության հարցերին: Գրավիտացվող շերտի, գնդի և հատկապես գլանի կայունության համար նրա ստացած հայտանիշները դասական համարվող արդյունքներ են: Մ.Աբրահամյանի հետ համատեղ նա ընդհանրացրել է պտտվող գրավիտացվող համակարգերի հավասարակշռված ձևերի դասական տեսությունը մագնիսական դաշտերի առկայությամբ: Զբաղվել է նաև ֆեռոմագնիսական նյութերի բուժական աղդեցությունների և կիրառության հարցերով:

Ռ.Հովհաննիսյանի ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 3 ատենախոսություն:

Վախճանվել է 1996թ. դեկտեմբերի 6-ին Երևանում:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՌՈՒՍԵԹ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ

Գրականագետ,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1907թ. օգոստոսի 15-ին Վանի նահանգի Արտամետ գյուղում: 1918-1925թթ. ապրել է Երևանի մանկատներում, որտեղ էլ ստացել է միջնակարգ կրթությունը: 1930թ. ընդունվել է ԵՊՀ պատմագրական ֆակուլտետ: Այնուհետև ուսումը շարունակել է Լենինգրադի (այժմ՝ Սանկտ Պետերբուրգ) փիլիսոփայության և լեզվաբանության պետական ինստիտուտի ասպիրանտուրայում: 1940թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն:

1936-1971թթ. Ռ.Հովհաննիսյանը ռուս գրականություն է դասավանդել ԵՊՀ-ում, 1941-1971թթ. եղել է ռուս գրականության ամբիոնի վարիչ, 1948-1949թթ. նաև ՀԿԿ Կենտկոմի գրականության սեկտորի վարիչ, 1949-1951թթ. ԵՊՀ գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր:

1948թ. Ռ.Հովհաննիսյանը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: Նույն թվականին նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Հեղինակ է «Նյութեր ռուս գրականության» (Եր., 1940), «Բելինսկին որպես Գոգոլի քննադատ» (Եր., 1941), «Լերմոնտովի կյանքն ու գործունեությունը» (Եր., 1941), «Ռուս գրականությունը հայ հասարակական մտքի գնահատմամբ» (Եր., 1949, ռուս. 1952), «Գորկին որպես պրոլետարական գրականության հիմնադիր» (Եր., 1956), «Տոլստոյը և հայ գրական կյանքը» (Եր., 1964) և այլ աշխատությունների: Հեղինակ է նաև հայկական հանրակրթական դպրոցի ռուս գրականության դասագրքերի:

1949-ից գրողների միության անդամ էր:

1965թ. Ռ.Հովհաննիսյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է «Պատվո նշան» շքանշանով, մեդալներով և ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատվոգրերով:

Վախճանվել է 1971թ. փետրվարի 24-ին Երևանում:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍՈՖՅԱ ՊԵՏՐՈՍԻ

Կենսաքիմիկոս,
կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1938թ. սեպտեմբերի 12-ին Լենինականում (այժմ՝ Գյումրի): 1957թ. ավարտել է տեղի թիվ 3 միջնակարգ դպրոցը, 1962թ. ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետը և ուսումը շարունակել ասպիրանտուրայում:

1965-ից Ս.Հովհաննիսյանն աշխատում է ԵՊՀ կենսաքիմիայի ամբիոնում: 1970թ. պաշտպանել է թեկնածուական, 2002թ. դոկտորական ատենախոսություն: 1977թ. նրան շնորհվել է դոցենտի, 2004թ. պրոֆեսորի կոչում:

Հեղինակ է ավելի քան 50 գիտական հոդվածների և ուսումնամեթոդական գրքերի, այդ թվում՝ «Կենսաքիմիայի լաբորատոր աշխատանքների ուսումնամեթոդական ձեռնարկի» (Եր., 2003): Հետազոտել է խմորասնկերի ու բորբոսասնկերի կողմից ամինաթթուների յուրացման մեխանիզմները, մասնավորապես ցույց է տվել, որ բորբոսասնկերի պերօքսիսոմներում պարունակվում են ամինաթթվային օքսիդազներ: Հետազոտել է պերօքսիսոմների դերը ամինաթթուների դեզամինացման մեխանիզմում:

1987-1988թթ. Ս.Հովհաննիսյանը գիտահետազոտական աշխատանքներ է իրականացրել Բրատիսլավայի Կոմենսկու անվան համալսարանի դեղաբանության ամբիոնում, 1993թ. Լեհաստանի ԳԱ կենսաֆիզիկայի-կենսաքիմիայի ինստիտուտում:

1990թ. Ս.Հովհաննիսյանը պարգևատրվել է «Աշխատանքի վետերան» մեդալով:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍՊԱՐՏԱԿ ՍԱՐԻԲԵԿԻ

Կենսաֆիզիկոս,
կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Ծնվել է 1925թ. հունիսի 9-ին Լենինականում (այժմ՝ Գյումրի): 1948թ. ավարտել է Երևանի անասնաբուծական-անասնաբուժական ինստիտուտը, 1952թ.՝ Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի կենսաբանության ֆակուլտետի ասպիրանտուրան: 1952թ. պաշտպանել է թեկնա-

ծուական ատենախոսություն:

1962 թվականից աշխատել է Լ.Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտում, Լ.Հովհաննիսյանի անվան սրտաբանության ինստիտուտում: 1963-ից դասավանդել է ԵՊՀ-ում:

1969թ. Մոսկվայում պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1971թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1971-1996թթ. եղել է ԵՊՀ մոլեկուլային ֆիզիկայի ամբիոնի պրոֆեսոր:

1991թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, 1995-ին ակադեմիկոս:

Ս.Հովհաննիսյանը հեղինակ է ավելի քան 200 գիտական հոդվածների, «Մարդը և ալկոհոլը» (Եր., 1987) գրքի:

1962-ից Ս.Հովհաննիսյանը ղեկավարել է սրտաբանության ինստիտուտի սրտամկանի կենսաֆիզիկայի և կենսաքիմիայի նորաստեղծ լաբորատորիան, որը զբաղվում էր սրտամկանի կենսաֆիզիկայի, տիեզերական կենսաբանության և սթրեսի ուսումնասիրությամբ:

Նրա ղեկավարությամբ ու խորհրդատվությամբ պաշտպանվել է թեկնածուական 21 և դոկտորական 5 ատենախոսություն:

Ս.Հովհաննիսյանը վախճանվել է 2008թ. հունվարի 6-ին Երևանում:

ՀՈՎՍԵՓՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ ԱԶԻԶԲԵԿԻ

Փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր



Ծնվել է 1931թ. մայիսի 9-ին Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Ղշլաղ գյուղում: Սկզբնական կրթությունն ստացել է տեղի յոթնամյա դպրոցում, ապա ավարտել Հարևան Խնձրիստան գյուղի միջնակարգ դպրոցը: 1949թ. ընդունվել է ԵՊՀ բանասիրության ֆակուլտետ, իսկ 1952թ. տեղափոխվել Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետի հոգեբանության բաժին: 1956թ. ավարտել է համալսարանը և մինչև 1962թ. աշխատել ԼՂ մարզկոմի կոմերիտական և կուսակցական մարմիններում. 1956-1961թթ. ղեկավարել է Ստեփանակերտի քաղաքային կոմերիտական կազմակերպությունը, 1961թ. նշանակվել մարզկոմի հրահանգիչ:

1959-1962թթ. Ա.Հովսեփյանը սովորել է ԵՊՀ հեռակա աս-

պիրանտուրայում: 1962թ. նշանակվել է ԵՊՀ փիլիսոփայության ամբիոնի դասախոս: 1963թ. պաշտպանել է թեկնածուական, 1975թ. դոկտորական ատենախոսություն: 1965թ. նրան շնորհվել է դոցենտի, 1978թ. պրոֆեսորի կոչում:

1986-2001թթ. Ա.Հովսեփյանը եղել է ԵՊՀ սոցիալական փիլիսոփայության և բարոյագիտության ամբիոնի վարիչ, իսկ 2001թ. մինչև կյանքի վերջը՝ նույն ամբիոնի պրոֆեսոր:

Հեղինակ է բազմաթիվ գիտական հոդվածների և մենագրությունների: Առավել կարևոր են՝ «Հասարակական հոգեբանության հարցի շուրջը» (Եր., 1971), «Սոցիալականի և հոգեբանականի հարաբերակցությունը» (Եր., 1973), «Հասարակական հարաբերությունների վերարտադրության սոցիալ-փիլիսոփայական պրոբլեմները» (Եր., 1986), «Հայաստանը սոցիալ-փիլիսոփայական ակնարկներում» (Եր., 2003), «Սոցիալ-հոգեբանական տեղաշարժերը վերափոխվող Հայաստանում» (Եր., 2004) աշխատությունները և «Սոցիալական փիլիսոփայության հիմունքներ» (Եր., 2003) բուհական ուսումնական ձեռնարկը:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 3 ատենախոսություն:

Ա.Հովսեփյանը վախճանվել է 2006թ. մայիսի 5-ին Երևանում:

ՀՈՎՍԵՓՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ ԿԱՐԱՊԵՏԻ

Հայագետ, մանկավարժ, դոցենտ,
Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս

Ծնվել է 1867թ. դեկտեմբերի 17-ին Լեռնային Ղարաբաղի Ջրաբերդի գավառի Մաղավուզ (Զարդախլու) գյուղում:

Սկզբնական կրթությունն ստացել է Ամարասի դպրեվանքում, Կուսապատ անապատի և Շուշիի թեմական դպրոցներում: 1882թ. ընդունվել և 1889թ. ավարտել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանի լսարանային բաժինը, ձեռնադրվել կուսակրոն սարկավագ: Բարձրագույն կրթությունն ստացել է Բեռլինի, Հալլեի, Լայպցիգի համալսարաններում: 1897թ. ստացել է փիլիսոփայության դոկտորի աստիճան: Նույն տարվա սեպտեմբերին հրավիրվել է Գևորգյան ճեմարան՝ դասախոսելու, և նոյեմբերի 30-ին ձեռնադրվել աբեղա, 1898-ին՝ վարդապետ: Տարբեր տարիներ եղել է ճեմարանի մատենադա-

բանապետ-տեսուչ: 1905-1908թթ. և 1915-1919թթ. խմբագրել է «Արարատ» ամսագիրը, նշանակվել Ս.Հռիփսիմեի վանահայր: 1915թ. ամռանը Գ.Հովսեփյանը ձեռնամուխ է եղել Մեծ եղեռնի հետևանքով Վասպուրականից Էջմիածին գաղթած հայերին լայնածավալ օգնություն կազմակերպելու գործին: 1917թ. Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ V Սուրենյանցը նրան ձեռնադրել է եպիսկոպոս:

Գ.Հովսեփյանը 1918թ. Սարդարապատի հերոսամարտի կազմակերպիչներից ու ակտիվ մասնակիցներից էր: Տեսնելով Սարդարապատի պաշտպանների, մասնավորապես 5-րդ գնդի զինվորների անձնազոհությունը՝ Գ.Հովսեփյանն այն անվանել է մահապարտների գունդ, նրա հրամանատար գնդապետ Պողոս Բեկ-Փիրումյանի հետ զինվորներին առաջնորդել դեպի իմացյալ մահ: Ցուցաբերած արիության համար պարգևատրվել է «Գեորգիևյան խաչ» շքանշանով:

1919թ. մայիսին Ալեքսանդրապոլում (այժմ՝ Գյումրի) հիմնված Հայաստանի համալսարանի կազմակերպական կոմիտեի անդամներից և առաջին դասախոսներից էր, դոցենտ, պատմալեզվաբանական ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար: Դասավանդել է եկեղեցու պատմություն, հայ արվեստի պատմություն, գրչության արվեստ, հնագիտություն:

Ալ.Թամանյանի, Ա.Մելիք-Քալանթարի և այլոց հետ մասնակցել է Հայաստանի հնությունների պահպանության կոմիտեի ստեղծմանը: 1921թ. մայիսին նշանակվել է Խորհրդային Հայաստանի գիտահետազոտական հաստատությունների առաջնեկի՝ Էջմիածնի կուլտուր-պատմական ինստիտուտի կոլեգիայի անդամ և թանգարանի վարիչ:

1927-1934թթ. Գ.Հովսեփյանը Ռուսաստանի, Ղրիմի ու Նոր Նախիջևանի հայոց հոգևոր թեմի առաջնորդն էր, 1938-1943թթ.՝ Ամերիկայի թեմի առաջնորդը, իսկ 1943-1952թթ.՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսը:

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Գ.Հովսեփյանը մեծապես նպաստել է «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան համար նյութական միջոցների հանգանակությանը, սփյուռքահայությանը մայր հայրենիքի շուրջ համախմբելուն և 1946թ. ներգաղթի կազմակերպմանը:

Թողել է գիտական հարուստ ժառանգություն: Առանձնապես կարևոր են «Փշրանքներ ժողովրդական բանահյուսությունից» (Թիֆլիս, 1892), «Խոսրովիկ Թարգմանիչ և երկա-

սիրություն նորին» (Թիֆլիս, 1903), «Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան և կաթողիկոսական ընտրություն» (Թիֆլիս, 1911), «Գրչության արվեստը հին հայոց մեջ» (Վաղարշապատ, 1913), «Խաղբակյանք կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ. պատմագիտական ուսումնասիրություն» (1928-1944, երեք հատորով), «Սասմա ծռեր» (Եր., 1932), «Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության» (1935-1951, հինգ պրակով), «Դեպի լույս և կյանք. քարոզներ, գրական-գեղարվեստական և իմաստասիրական հոդվածներ» (Անթիլիաս, 1947), «Հիշատակարանք ձեռագրաց» (Անթիլիաս, 1951) աշխատությունները:

Գ.Հովսեփյանը հայ հնագրագիտության, գրչության արվեստի ու ձեռագրային ժառանգության, հայ մանրանկարչության ուսումնասիրության հիմնադիրներից էր:

Վախճանվել է 1952թ. հունիսի 21-ին Անթիլիասում:

ՀՈՎՍԵՓՅԱՆ ԼԻԱՆԱ ՍԱՄՎԵԼԻ

Լեզվաբան,

բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1941թ. հուլիսի 26-ին Երևանում: 1958թ. ավարտել է Երևանի թիվ 19 միջնակարգ դպրոցը, 1963թ. ԵՊՀ բանասիրության ֆակուլտետը: 1964-1967թթ. սովորել է ՀԽՍՀ ԳԱ Հր.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ասպիրանտուրայում: 1967թ. աշխատանքի է անցել նույն ինստիտուտում որպես կրտսեր գիտաշխատող: 1970թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1974-1981թթ. վարել է ինստիտուտի գիտական քարտուղարի պաշտոնը: 1981-1986թթ. եղել է տիպաբանական-զուգադրական հետազոտությունների բաժնի վարիչ, իսկ 1986-1990թթ.՝ հայոց լեզվի պատմության բաժնի վարիչ: 1988թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1990-1995թթ. եղել է ինստիտուտի գիտական գծով փոխտնօրեն: 1995թ. անցել է առաջատար գիտաշխատողի պաշտոնի, որը վարում է համատեղությամբ: 1997 թվականից ԵՊՀ ընդհանուր լեզվաբանության ամբիոնի վարիչն է:

2006թ. Լ.Հովսեփյանին շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Հեղինակ է 60-ից ավելի աշխատությունների, այդ թվում՝ 4 մենագրության:

Լ.Հովսեփյանի գիտական հետազոտությունները վերաբերում են հայոց լեզվի պատմության, բարբառագիտության, բառարանագրության, կառուցվածքային և պատմական տիպաբանության, հայերենի պատմական զարգացման տարբեր փուլերում լեզվի կառուցվածքի ու գործառական առանձնահատկությունների, գրական լեզվի ու բարբառների փոխհարաբերության, գրական լեզվի նորմավորման և այլ հարցերի: Կարևոր մենագրություններն են՝ «Գրաբարի բառակազմությունը» (Եր., 1987), «ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանների լեզուն» (Եր., 1997), «Սովետահայ լեզվաբանությունը 60 տարում» (Եր., 1982):

Նա համատեղ գիտահետազոտական աշխատանք է կատարում արտերկրի հայագետների հետ. Լայդենի համալսարանի հայագիտական ամբիոնի հետ միասին հետազոտել է արտասահմանյան հայերեն ձեռագրերի հիշատակարանները, Փարիզի արևելյան լեզուների ինստիտուտին ներկայացրել է հայերենի բառապաշարի համակարգչային շտեմարանի նախագիծ, մեքենական թարգմանության գծով մասնակցում է UNL համացանցային լեզվի հայկական մոդուլի մշակմանը: Մասնակցել է հայագիտական միջազգային գիտաժողովների ու սեմինարների (Իտալիա, Հոլանդիա, Կանադա, Ֆրանսիա): 1987թ. հրավիրվել է Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարան՝ գրաբարի դասընթաց վարելու:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 11 ատենախոսություն:

ՀՈՎՍԵՓՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՐԱՄԻ

Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր



Ծնվել 1926թ. օգոստոսի 10-ին Եղեգնաձորի շրջանի Մալիշկա գյուղում: 1943թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը, 1945-1950թթ. ծառայել է խորհրդային բանակում: 1950թ. ընդունվել և 1955-ին ավարտել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետը: 1955-1958թթ. եղել է ՀԿԿ Արարատի շրջկոմի բաժնի վարիչ, ՀԿԿ Կենտկոմի հրահանգիչ, ՀԿԿ Արարատի շրջկոմի երկրորդ քարտուղար, 1958-1970թթ.՝ ՀԿԿ Եղեգնաձորի շրջկոմի առաջին քարտուղար, 1970-1976թթ.՝ ՀԿԿ Արարատի շրջկոմի առաջին քարտուղար, 1976-1990թթ.՝ Վերադարձող

ՂԱԶԱՐՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ ՄՈՒՇԵՂԻ

Ֆիզիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Ծնվել է 1942թ. հունվարի 16-ին Երևանում: 1959թ. ավարտել է թիվ 4 միջնակարգ դպրոցը, 1965-ին՝ Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետը: 1970թ. պաշտպանել է թեկնածուական, 1982թ. դոկտորական ատենախոսություն: 1974թ. նրան շնորհվել է դոցենտի, 1983-ին՝ պրոֆեսորի կոչում:

1969-ից Էդ.Ղազարյանն աշխատել է ԵՊՀ պինդ մարմնի ֆիզիկայի ամբիոնում որպես ավագ դասախոս, ապա՝ դոցենտ: 1975-1985թթ. ղեկավարել է ԵրՊԻ ընդհանուր ֆիզիկայի ամբիոնը, 1985-1986թթ. եղել է ՀԽՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության նախարարության գիտության վարչության պետ, 1986-1987թթ. փոխնախարար, 1987-1988թթ. Խ.Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի ռեկտոր, 1988-1990թթ. ՀԽՍՀ ժողովրդական կրթության առաջին փոխնախարար, 1990-1991թթ.՝ ԵՊՀ պինդ մարմնի ֆիզիկայի ամբիոնի պրոֆեսոր, 1991-1993թթ. բարձրագույն կրթության պրոբլեմների գիտահետազոտական կենտրոնի տնօրեն:

1996թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս:

1993-1999թթ. Էդ.Ղազարյանը եղել է ԵՊՀ պինդ մարմնի ֆիզիկայի ամբիոնի վարիչ և համալսարանական կրթության զարգացման հարցերի գծով պրոռեկտոր, 1999-2001թթ.՝ ՀՀ կրթության և գիտության նախարար, 2002-2004թթ. ՀՀ ԳԱԱ ֆիզմաթ գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, 2004-2006թթ.՝ ՀՀ ԳԱԱ փոխնախագահ և ակադեմիկոս-քարտուղար: 2006-ից Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի ընդհանուր և տեսական ֆիզիկայի ամբիոնի վարիչն է:

Էդ.Ղազարյանի գիտական գործունեության հիմնական ուղղություններն են՝ պինդ մարմնի ֆիզիկա, կիսահաղորդիչների օպտիկական հատկություններ, էքսիտոնային ֆիզիկայի հարցեր, ցածր չափայնության կիսահաղորդչային համակարգերի (նանոկառուցվածքների) ֆիզիկա: Նա մասնավորապես առաջարկել է կիսահաղորդիչներում օպտիկական կլանման նոր՝ պլազմոնային մեխանիզմ, ապացուցել մեկֆոնոնային

կլանման հնարավորությունը չափայնորեն քվանտացված համակարգերում: Վերջին շրջանի հետազոտությունները վերաբերում են բարդ երկրաչափությամբ և սահմանափակող պոտենցիալներով նանոկառուցվածքների էլեկտրոնային և օպտիկական հատկություններին տեսությանը:

Հեղինակ է 140 գիտական, 110 գիտահանրամատչելի և գիտամեթոդական հոդվածների, համահեղինակ՝ «Կիսահաղորդչային նանոէլեկտրոնիկայի ֆիզիկական հիմունքներ» մենագրության (Եր., 2005), ֆիզիկայի բուհական և դպրոցական ավելի քան 10 դասագրքերի, ձեռնարկների և խնդրագրքերի, այդ թվում՝ «Պինդ մարմնի քվանտային տեսություն» (մաս 1, Եր., 1997), «Պինդ մարմնի ֆիզիկայի տեսության տարրերը» (Եր., 2005), “Законы термодинамики в приложениях” (Ер., 2007), հանրակրթական դպրոցի «Ֆիզիկա-7» (Եր., 2007), «Ֆիզիկա-8» (Եր., 2008), «Ֆիզիկա և աստղագիտություն-9» (Եր., 2009) դասագրքերի:

Նրա ղեկավարությամբ ու խորհրդատվությամբ պաշտպանվել է թեկնածուական 30 և դոկտորական 4 ատենախոսություն:

Էդ.Ղազարյանը պարգևատրվել է Խ.Աբովյանի անվան մեդալով (2): 2008թ. արժանացել է ՀՀ Նախագահի մրցանակի:

ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՅԿ ԳԵՂԱՄԻ

Մաթեմատիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր



Ծնվել է 1940թ. օգոստոսի 8-ին Նոր-Բայազետի (այժմ՝ Գավառ) շրջանի Լճափ գյուղում: 1958թ. ավարտել է Երևանի Շահումյանի շրջանի թիվ 2 դպրոցը, 1963թ.՝ ԵՊՀ մեխանիկա-մաթեմատիկական ֆակուլտետը: 1965-1968թթ. Հ.Ղազարյանը սովորել է Մոսկվայի Վ.Ստեկլովի անվան մաթեմատիկայի ինստիտուտի ասպիրանտուրայում:

1970թ. Հ.Ղազարյանը պաշտպանել է թեկնածուական, 1981թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1973թ. նրան շնորհվել է դոցենտի, 1983թ. պրոֆեսորի կոչում:

1963-1987թթ. աշխատել է ԵՊՀ-ում, 1987-1988թթ. Խ.Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտում, 1988-ից կրկին ԵՊՀ-ում որպես պրոֆեսոր: 1990-

1991թթ. եղել է ԵՊՀ կիրառական մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի դեկան, 1992-1994թթ.՝ ՀՀ Լուսավորության նախարար, 1999-2008թթ. տնտեսագիտության ֆակուլտետի մաթեմատիկայի ամբիոնի վարիչ: 2008 թվականից ԵՊՀ մաթեմատիկայի ֆակուլտետի պրոֆեսոր է:

Հ.Ղազարյանի ղեկավարությամբ ու խորհրդատվությամբ պաշտպանվել է թեկնածուական 15 և դոկտորական 4 ատենախոսություն:

Հեղինակ է ավելի քան 60 գիտական հոդվածների՝ նվիրված շատ փոփոխականների դիֆերենցելի ֆունկցիաներին, ֆունկցիոնալ անալիզին, ֆունկցիոնալ տարածություններին և դիֆերենցիալ հավասարումներին: Համահեղինակ է հինգ դասագրքի և ուսումնական ձեռնարկի՝ «Մաթեմատիկայի ձեռնարկ» (Եր., 1975), «Դիֆերենցիալ հավասարումներ» (խնդրագիրք, Եր., 1988), «Սովորական դիֆերենցիալ հավասարումներ» (դասագիրք, Եր., 2002), «Մաթեմատիկական անալիզ տնտեսագետների համար» (խնդրագիրք, Եր., 2005, 2007), «Topics in Analyisis and its Applications» (NATO Science Series, Kluwer, London, 2004).

ՂԱԶԱՐՅԱՆ ՄԻՇԱ ԱՐԻՍՏԱԿԵՍԻ

Աստղաֆիզիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր

Ծնվել է 1932թ. մարտի 5-ին Մարալիկում: 1952թ. ավարտել է Լենինականի (այժմ՝ Գյումրի) թիվ 4 միջնակարգ դպրոցը, 1958թ.՝ ԵՊՀ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը:

1958-1968թթ. Մ.Ղազարյանն աշխատել է ՀԽՍՀ ԳԱ Բյուրականի աստղադիտարանում: 1964-1966թթ. սովորել է ասպիրանտուրայում, իսկ 1968թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն:

1968-ից նա աշխատում է ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետում. 1968-1994թթ. եղել է ԵՊՀ աստղաֆիզիկայի ամբիոնի վարիչի տեղակալ, 1994-2005թթ.՝ Վ.Համբարձումյանի անվան աստղաֆիզիկայի ամբիոնի վարիչ, 1980-2008թթ.՝ միաժամանակ ԵՊՀ Վ.Համբարձումյանի անվան աստղադիտարանի տնօրեն, 2008-ից՝ ԵՊՀ պրոֆեսոր:

1987թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն:

1990թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Մ.Ղազարյանը հեղինակ է ավելի քան 100 գիտական հոդվածների, որոնք նվիրված են նոր աստղերի, գիսավորաձև և դիֆուզ, ինչպես նաև մոլորակաձև միգամածությունների միջուկների գունաչափությանը և սպեկտրալուսաչափությանը: Նա հայտնաբերել է նոր մոլորակաձև միգամածություններ, փոփոխական աստղեր, ինչպես նաև Hα -աստղեր:

Արտագալակտիկական աստղագիտության մեջ լուրջ ներդրում է Մ.Ղազարյանի կողմից գերմանուշակագույն ավելցուկով 702 նոր գալակտիկաների հայտնաբերումը: Նա հրատարակել է նոր գալակտիկաների ցուցակներ, որոնցում պարունակվող 240 գալակտիկաներ հայտնի են որպես Ղազարյանի (Kaz) գալակտիկաներ: Մ.Ղազարյանի կատարած աշխատանքների կարևոր արդյունքներից է նոր սեյֆերտյան գալակտիկաների, լացերտիդների և այլ տիպի օբյեկտների հայտնաբերումը:

Մ.Ղազարյանը գիտական համատեղ գործունեություն է ծավալել ԱՄՆ-ի, Իտալիայի, Ֆրանսիայի, Մեքսիկայի և այլ երկրների աստղագետների հետ, բազմիցս մասնակցել միջազգային գիտաժողովների:

Երկար տարիներ Մ.Ղազարյանը ղեկավարել է Երկրի արհեստական արբանյակների Երևանի դիտման կայանը, որը միակն էր Այսրկովկասում:

Մ.Ղազարյանը Եվրոպական աստղագիտական միության անդամ է:

ՂԱԶԱՐՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ ԱՎԵՏԻՍԻ

Ռադիոֆիզիկոս,
տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Ծնվել է 1924թ. հունվարի 26-ին ՌԴ Կրասնոդարի երկրամասի Արմավիր քաղաքում՝ Արևմտյան Հայաստանից գաղթած ընտանիքում:

1941-1943թթ. սովորել է Կրասնոդարի մանկավարժական ինստիտուտի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետում, ապա մեկնել ռազմաճակատ: 1946-1951թթ. սովորել է Մոսկվայի կապի էլեկտրատեխնիկական ինստիտուտում, որն ավարտելուց հետո եկել է Երևան և մասնակցել Սփյուռքի համար կառուց-

վող ռադիոհաղորդիչ կայանի մոնտաժման աշխատանքներին:

1953-1956թթ. Ռ.Ղազարյանը սովորել է Մոսկվայի կապի էլեկտրատեխնիկական ինստիտուտի ասպիրանտուրայում, որն ավարտել է՝ պաշտպանելով թեկնածուական ատենախոսություն:

1957թ. նա տեղափոխվել է Երևան: 1959-ին ԵՊՀ-ում հիմնադրել է ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ամբիոնը ղեկավարելով այն մինչև 1969թ.: 1963թ. մասնակցել է ՀԽՍՀ ԳԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի ստեղծմանը, որտեղ հիմնել և մինչև 1991թ. ղեկավարել է քվանտային էլեկտրոնիկայի բաժինը: Այստեղ կատարված հետազոտությունների արդյունքում ստեղծվել է Երևան-Բյուրական լազերային բազմակապուղի հեռախոսագիծը, որն ամենաերկարն էր աշխարհում: 1975-1990թթ. նա հիմնադրել և ղեկավարել է ռադիոկապի ամբիոնը ԵրՊԻ-ում:

1975 Ռ.Ղազարյանը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1978թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Նա հեղինակ է ավելի քան 100 գիտական հոդվածների, “Гетеродинный прием и его применение, Итоги науки. Радиотехника, т.33” (М., 1984), «Ռադիոտեխնիկական ոչ գծային և պարամետրական շղթաներ» (Եր., 1987), “Оптические системы передачи информации по атмосферному каналу” (М., 1985) մենագրությունների և «Ռադիոտեխնիկայի պրակտիկում» (Եր., 1965) դասագրքի, համահեղինակ՝ «Ձեռնարկ ռադիոսովորողների համար» (Եր., 1961) գրքի: Ռ.Ղազարյանը մեծ վաստակ ունի մայրենի լեզվով ֆիզիկայի և հատկապես ռադիոֆիզիկայի տերմինաշինության գործում: Հրատարակել է նաև «Հաչվետու եմ...» (Եր., 2003) հուշագրությունը:

1986թ. Ռ.Ղազարյանն ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1996թ. ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս:

Գիտական գործունեությունից զատ նա հայտնի է նաև որպես հասարակական և քաղաքական գործիչ, «Ղարաբաղ» կոմիտեի անդամ (1988-1990թթ.), 1989թ. հունվարին ձերբակալվել և մինչև հունիս պահվել է Մոսկվայի Բուտիրյան բանտում:

1989թ. Ռ.Ղազարյանն ընտրվել է ՀԽՍՀ ԳԽ պատգամավոր, 1990-ին՝ ԳԽ փոխնախագահ, 1990-1995թթ. ՀՀ ԳԽ Կրթության, գիտության, լեզվի և մշակույթի մշտական հանձնաժողովի նախագահ:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է ավելի քան մեկ տասնյակ թեկնածուական ատենախոսություն:

Ռ.Ղազարյանը պարգևատրվել է Հայրենական պատերազմի II աստիճանի և բազմաթիվ այլ շքանշաններով ու մեդալներով:

Վախճանվել է 2007թ. նոյեմբերի 3-ին Երևանում:

ՂԱԶԱՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ ՍԵՐՈԲԻ

Լեզվաբան,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1940թ. հուլիսի 27-ին Երևանում: 1957թ. ավարտել է Երևանի թիվ 40 դպրոցը, 1962թ. ԵՊՀ բանասիրության ֆակուլտետը:

1969թ. Ռ.Ղազարյանը պաշտպանել է թեկնածուական, 1993թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1973թ. նրան շնորհվել է դոցենտի, իսկ 2006թ.՝ պրոֆեսորի կոչում:

1966-1985թթ. աշխատել է ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի ամբիոնում, 1985-ից՝ հայոց լեզվի պատմության ամբիոնում, 1995-ից նույն ամբիոնի վարիչն է:

Հեղինակ է «Գրաբարի ձեռնարկ» (Եր., 1986, 1992, 2001), «Գրաբարի հոմանիշների բառարան» (Եր., 2006, Անթիլիաս-Լիբանան, 2006), «Հայոց լեզվի պատմության գործնական դասընթաց» (Եր., 1989, 2002), «Գրաբարի բառարան» (ՀՀ. I, II, Եր., 2000, Անթիլիաս-Լիբանան, 2004), «Թուրքերեն-հայերեն բառարան» (Եր., 2003), համահեղինակ՝ «Միջին հայերենի բառարան» (Հ.Ա., Եր., 1987, Հ.Բ, Եր., 1992) և այլ գրքերի:

Ռ.Ղազարյանի ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 5 ատենախոսություն:

ՂԱԶԱՐՅԱՆ ՍԵՐՈԲԻ ՂԱԶԱՐԻ

Լեզվաբան,
բանասարական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1909թ. օգոստոսի 5-ին Բլթլիսում: Առաջին համաշխարհային պատերազմի սկզբին նրանց ընտանիքը գաղթել է Վան, ապա Սալմաստ, իսկ հետո՝ Միջագետք: 1921թ. Ս.Ղազարյանը ներգաղթել է Խորհրդային Հայաստան և բնակություն հաստատել Դավալու (այժմ՝ Արարատ) գյուղում, որ-

տեղ ստացել է սկզբնական կրթություն: 1929-1930թթ. Երևանում ավարտել է միջնակարգ դպրոց:

1931-1932թթ. ծառայել է Կարմիր բանակում, 1934թ. ընդունվել և 1939թ. ավարտել է Խ.Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտը: Նույն թվականին ընդունվել է ԵՊՀ ասպիրանտուրա:

1942թ. պաշտպանել է թեկնածուական, 1953թ. դոկտորական ատենախոսություն: 1942թ. նրան շնորհվել է դոցենտի, 1954թ. պրոֆեսորի կոչում: 1940-1962թթ. դասախոսել է ԵՊՀ-ում:

1937-1948թթ. Ս.Ղազարյանը եղել է «Սովետական դպրոց» թերթի խմբագիր: 1944-1959թթ. աշխատել է ՀԽՍՀ ԳԱ Հր.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում նախ որպես ինստիտուտի գիտական քարտուղար, ապա՝ հայոց լեզվի պատմության ու բարբառագիտության բաժնի վարիչ: Զբաղվել է գրաբարի քերականության, միջին հայերենի, հայոց լեզվի պատմության, ռուսերենի և հայերենի առնչությունների և այլ հարցերով:

Ս.Ղազարյանը հեղինակ է բազմաթիվ մենագրությունների, դասագրքերի ու հոդվածների: Նրա գրչին են պատկանում «Գրաբարի դասագիրք» (Եր., 1951), «Հայոց լեզվի համառոտ պատմություն» (Եր., 1954-1958), «Ժամանակակից հայոց լեզուն և ռուսերենի դերը նրա հարստացման ու զարգացման մեջ» (Եր., 1955), «Միջին հայերեն» (գիրք 1-ին, Եր., 1960) մենագրությունները: Հեղինակ է նաև հանրակրթական դպրոցի III ու IV դասարանների հայոց լեզվի դասագրքերի:

Ս.Ղազարյանը պարգևատրվել է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատվոգրով ու մեդալներով:

Վախճանվել է 1962թ. ապրիլի 11-ին Երևանում:

ՂԱԶԱՐՅԱՆ ՎԱՀԱՆ ՀՈՎՍԵՓԻ

Բույսերի ֆիզիոլոգ,
կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս

Ծնվել է 1918թ. հունվարի 1-ին Գորիսի շրջանի Խնձորեսկ գյուղում: 1934թ. ավարտել է Գորիսի մանկավարժական տեխնիկումը և աշխատանքի անցել Քարահունջ գյուղի միջնա-

կարգ դպրոցում: 1941թ. Վ.Ղազարյանն ավարտել է ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետը: Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին: Վիրավորվելուց հետո վերադարձել և 1943թ. ընդունվել է ԵՊՀ ասպիրանտուրա: 1945թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն:

1945-1948թթ. Վ.Ղազարյանն աշխատել է Խ.Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտում, 1943-ից՝ ՀԽՍՀ ԳԱ բուսաբանության ինստիտուտում որպես գիտաշխատող, ապա՝ տնօրեն: 1948-1962թթ. և 1983-1986թթ. ղեկավարել է ԵՊՀ բույսերի ֆիզիոլոգիայի և անատոմիայի ամբիոնը:

1951թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, և նույն թվականին նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1965թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1974թ.՝ ակադեմիկոս: 1974-1996թթ. եղել է ՀՀ ԳԱԱ կենսաբանական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար:

Վ.Ղազարյանն ուսումնասիրել է բույսերի լուսապարբերականությունը, օնտոգենեզի տարբեր փուլերի ֆիզիոլոգիան, տերևաարմատային կապերի բնույթը, բազմամյա բույսերի ծերացումը և այլ հարցեր:

Հեղինակ է ավելի քան 200 գիտական հոդվածների և 5 մենագրության՝ «Միամյա բույսերի զարգացման և ծերացման փուլայնությունը» (ռուս., Եր., 1952), «Երկամյա բույսերի զարգացման ֆիզիոլոգիական առանձնահատկությունները» (ռուս., Եր., 1954), «Բույսերի օնտոգենեզի ֆիզիոլոգիական հիմունքներ» (ռուս., Եր., 1959), «Բարձրակարգ բույսերի ծերացում» (ռուս., Մ., 1969), «Ծառաբույսերից դեպի խոտաբույսերի էվոլյուցիայի ֆիզիոլոգիական ասպեկտները» (ռուս., Լ., 1990):

Մեծ է նրա ավանդը ՀԽՍՀ ԳԱ բուսաբանության ինստիտուտի ընդլայնման, նոր լաբորատորիաների ստեղծման, երիտասարդ կադրերի պատրաստման, բազմաթիվ գիտարշավների կազմակերպման, ինչպես նաև ինստիտուտի Վանաձորի և Սևանի մասնաճյուղերի ստեղծման գործում:

Նրա ղեկավարությամբ ու խորհրդատվությամբ պաշտպանվել է թեկնածուական 30 և դոկտորական 3 ատենախոսություն:

1987թ. Վ.Ղազարյանը պարգևատրվել է «Աշխատանքի վետերան» մեդալով:

Վախճանվել է 2002թ. օգոստոսի 9-ին Երևանում:

ՂԱԶԻՆՅԱՆ ԳԱԳԻԿ ՍԵՐԳԵՅԻ

Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
ՀՀ վաստակավոր իրավաբան

Ծնվել է 1955թ. մարտի 6-ին Երևանում: 1971թ. ավարտել է թիվ 36 դպրոցը, 1977թ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետը, 1983-ին՝ ԵՊՀ ասպիրանտուրան:

1976-1979թթ. Գ.Ղազինյանն աշխատել է ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնում որպես ավագ լաբորանտ:

1983թ. Մոսկվայում պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1987թ. նրան շնորհվել է դոցենտի կոչում:

1989-1991թթ. եղել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դեկանի տեղակալ, 1991-2000թթ.՝ քրեական իրավունքի ամբիոնի վարիչ: 1996-ից իրավագիտության ֆակուլտետի դեկանն է: 1997-ից ղեկավարում է ՀՀ իրավաբանների միությունը:

2000թ. Գ.Ղազինյանը Մոսկվայում պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 2002թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 2006թ. Գ.Ղազինյանը առաջինը հայ իրավաբան գիտնականներից, ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ:

Հեղինակ է հինգ մենագրության և շուրջ 40 գիտական հոդվածների, որոնք հրատարակվել են ինչպես հայրենական, այնպես էլ ռուսալեզու և անգլալեզու հանդեսներում:

Կարևոր մենագրություններն են՝ "Проблемы эффективности следственных действий" (Ер., 1987), "История развития уголовного процесса в Армении" (Ер., 1999), "Актуальные проблемы уголовно-процессуального законодательства в третьей Республике Армения" (Ер., 1999), «Քրեական դատավարության պատմական և արդի հիմնախնդիրները Հայաստանում» (Եր., 2004):

Գ.Ղազինյանի ղեկավարությամբ և համահեղինակությամբ պատրաստվել են դպրոցական և բուհական երկու տասնյակից ավելի դասագրքեր, մասնավորապես «Քրեական դատավարություն» (ընդհանուր մաս, Եր., 2003, 2005, 2006, հատուկ մաս, Եր., 2003, 2005, 2006), «Քրեական իրավունք» (ընդհանուր մաս, Եր., 2001, 2003, 2006, 2007, հատուկ մաս, Եր., 2005, 2006, 2007) դասագրքերը, «Պետություն և իրավունք» (10-րդ դաս., Եր., 2004) և այլ դպրոցական դասագրքեր:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 10 ատենախոսություն:

Նա մասնակցել է միջազգային մի շարք գիտաժողովների, հանդես եկել զեկուցումներով ու գիտական հաղորդումներով:

2002-ից ԵՊՀ-ում գործող իրավագիտության գծով գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի նախագահն է: 2003թ. ընտրվել է Իրավաբանների միջազգային միության փոխնախագահ:

1999թ. Գ.Ղազինյանը պարգևատրվել է «Մխիթար Գոշ» մեդալով, 2003թ.՝ արժանացել ՀՀ վաստակավոր իրավաբանի կոչման:

ՂԱՄԲԱՐՅԱՆ ՍՏԵՓԱՆ ՊՈՂՈՍԻ

Քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1879թ. հունիսի 23-ին Թիֆլիսի Կոջոր ավանում: 1884թ. Ղամբարյանների ընտանիքը տեղափոխվել է Կիև, երկու տարի անց՝ Վարշավա, ապա՝ Ռիգա, որտեղ նա ստացել է նախնական կրթություն: 1898թ. Ստ.Ղամբարյանը, ավարտելով Ռիգայի արական գիմնազիան, բարձրագույն կրթություն ստանալու նպատակով մեկնել է Գերմանիա: 1899-1906թթ. սովորել է Լայպցիգի, Հայդելբերգի և Մյունխենի համալսարաններում՝ մասնագիտանալով օրգանական քիմիայի ոլորտում: Նա աշխատել է Ստրասբուրգի համալսարանում որպես ասիստենտ, այնուհետև փոխադրվել Բեռլինի բարձրագույն գյուղատնտեսական դպրոց որպես օրգանական քիմիայի ասիստենտ:

1911թ. Ստ.Ղամբարյանը վերադարձել է Անդրկովկաս և նշանակվել Ռուսական տեխնիկական ընկերության Բաքվի քիմիական լաբորատորիայի վարիչ: 1914-1920թթ. դասախոսություններ է կարդացել Թիֆլիսի կանանց բարձրագույն դասընթացներում՝ միաժամանակ աշխատելով հողագործության դեպարտամենտի քիմիամանրէաբանական լաբորատորիայում:

1920թ. հրավիրվելով ԵՊՀ՝ Ստ.Ղամբարյանը մեծ աշխատանք է կատարել Հայաստանում քիմիկոս կադրերի պատրաստման գործում, երկարամյա և բեղմնավոր գիտամանկավարժական աշխատանքի ընթացքում դաստիարակել քիմիկոս

գիտնականների և ինժեներների մի ամբողջ սերունդ:

Նա իրավամբ համարվում է քիմիական գիտահետազոտական գործի կազմակերպիչը Հայաստանում: Նրա նախաձեռնությամբ ու եռանդուն մասնակցությամբ ստեղծվել են գիտական առաջին լաբորատորիաները, որոնք վերաճել են գիտահետազոտական խոշոր ինստիտուտների: Նա կազմակերպել և ղեկավարել է ԵՊՀ օրգանական քիմիայի ամբիոնը և օրգանական քիմիայի լաբորատորիան: Նրա ջանքերով են կազմակերպվել և նրա կողմից ղեկավարվել օրգանական քիմիայի ամբիոնները նաև բժշկական, գյուղատնտեսական, պոլիտեխնիկական և անասնաբուծական-անասնաբուժական ինստիտուտներում:

Ստ.Ղամբարյանը եղել է ԽՍՀՄ ԳԱ Հայկական մասնաճյուղի քիմիական ինստիտուտի կազմակերպիչներից, նրա օրգանական քիմիայի բաժնի առաջին ղեկավարը: Որպես գիտական խորհրդատու՝ նա մասնակցել է Հայաստանում քիմիական գիտության և արդյունաբերության զարգացման պրոբլեմների մշակմանը: Նրա անվան հետ է կապված Երևանում Կիրովի անվան գործարանի, Կիրովականում (այժմ՝ Վանաձոր) Ալ.Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատի հիմնադրումը:

1905-ից շուրջ 40 տարի անընդմեջ Ստ.Ղամբարյանն ուսումնասիրել է օքսիդացման պրոցեսում պերօքսիդների ներգործության մեխանիզմները: Նա առաջարկել է զբաղվել ամինների ներկայությամբ օրգանական պերօքսիդների ճեղքման հարցով, որը հետագայում դարձավ օրգանական քիմիայի կարևորագույն ուղղություններից մեկը:

1926թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1935թ. Ստ.Ղամբարյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման:

1937թ. նրան առանց ատենախոսության պաշտպանության շնորհվել է քիմիական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: 1944-ին ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ:

Նրա գործունեությունը ստալինյան բռնարարքների հետևանքով ընդհատվեց 1937-ին: Հետագայում նա արդարացվել և 1946-ին վերադարձել է Երևան, անցել գիտահետազոտական աշխատանքի:

Վախճանվել է 1948թ. մարտի 7-ին Մոսկվայում, աճյունն ամփոփված է Երևանում:

Նրա բրոնզաձույլ կիսանդրին ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի նախասրահում խորհրդանշում է ականավոր գիտնա-

կանի և մանկավարժի դերը համալսարանական գիտության ու կրթության կազմակերպման և զարգացման գործում:

ՂԱՆԱԼԱՆՅԱՆ ԱՐԱՄ ՏԻԳՐԱՆԻ

Բանագետ,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1909թ. փետրվարի 12-ին Ախալցխայում: 1931թ. ավարտել է ԵՊՀ պատմագրական ֆակուլտետը: 1931-1933թթ. դասավանդել է Երևանի հանրակրթական դպրոցներում: 1937-1941թթ. դասախոսել է ԵՊՀ-ում և 1934-1951թթ.՝ Խ.Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտում:

1932-1938թթ. Ա.Ղանալանյանը եղել է ՀԽՍՀ մշակույթի պատմության, ինչպես նաև պատմության և գրականության ինստիտուտների կրտսեր գիտաշխատող, 1938-1939թթ.՝ ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի լեզվի և գրականության ինստիտուտի բաժնի վարիչ, 1941-1943թթ.՝ ավագ գիտաշխատող, 1943-1960թթ.՝ ՀԽՍՀ ԳԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ժողովրդական բանահյուսության բաժնի վարիչ, 1960-1983թթ.՝ ավագ գիտաշխատող:

1965թ. Ա.Ղանալանյանն ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ: 1970թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1977թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս:

Ա.Ղանալանյանի գիտական աշխատանքներից առավել ուշագրավ են «Հայ չինականի աշխատանքի երգերը», «Սասունցի Դավիթ» (Եր., 1939), «Հայ ժողովրդական հեքիաթներ» (Եր., 1950), «Հայկական առածանի» (Եր., 1951, 1960), «Ավանդապատում» (Եր., 1969) գործերը: Նա գրառել և հրատարակել է «Սասնա ծռեր»-ի երկու պատում: ՀԽՍՀ կառավարական հանձնաժողովի առաջարկով՝ Մ.Աբեղյանի և Գ.Աբովի հետ համատեղ, մասնակցել է հայ ժողովրդական էպոսի համահավաք բնագրի կազմմանը: Զբաղվել է նաև հայ բանահյուսության ու գրականության փոխառնչությունների ուսումնասիրությամբ (տե՛ս օրինակ «Պռոշյանը և ժողովրդական բանահյուսությունը» (Եր., 1938), «Աբովյանը և ժողովրդական բանահյուսու-

թյունը» (Եր., 1941), «Սայաթ-Նովայի ստեղծագործության ժողովրդական ակունքները» (Եր., 1963), «Թումանյանը և ժողովրդական բանահյուսությունը», «Հայ ժողովրդական բանահյուսություն» (4 պրակով, Եր., 1945) և այլն):

1967թ. Ա.Ղանալանյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է «Պատվո նշան» շքանշանով:

Վախճանվել է 1983թ. հունիսի 9-ին Երևանում:

ՂԱՆԹԱՐՋՅԱՆ ՍԱՐԳԻՍ ԼԵՎՈՆԻ

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1939թ. հունիսի 13-ին Երևանում: 1956թ. ավարտել է Երևանի թիվ 20 դպրոցը, 1961թ. ԵՊԻ էլեկտրատեխնիկական ֆակուլտետը, 1963թ. ընդունվել է ԵՊՀ ասպիրանտուրա: 1966թ. Նովոսիբիրսկում պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն:

1966-1975թթ. Ս.Ղանթարջյանն աշխատել է պոլիմերային արտադրության համամիութենական գիտահետազոտական և նախագծային ինստիտուտում որպես լաբորատորիայի վարիչ: 1975-1977թթ. եղել է ԵԺՏԻ տնտեսագիտական կիբեռնետիկայի ֆակուլտետի դեկան: 1977-1983թթ. նշանակվել է ՀԽՍՀ նախարարների խորհրդի նախագահի օգնական, 1983-1992թթ.՝ ՀՀ կառավարությանն առընթեր բնապահպանության բաժնի վարիչ, 1992-ից՝ ՀՀ կառավարությանն առընթեր արտոնագրային վարչության պետ: 2003-ից ԵՊՀ կառավարման և գործարարության ամբիոնի վարիչն է:

1980թ. Նովոսիբիրսկում Ս.Ղանթարջյանը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1982թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1996-1998թթ. և 2000-2002թթ. եղել է Եվրասիական արտոնագրային կազմակերպության (Մոսկվա) վարչական խորհրդի նախագահի տեղակալ, 1997-1999թթ.՝ Մադրիդյան խորհրդի կազմակերպության փոխնախագահ (ԺՆԻ), իսկ 1999-2001թթ.՝ Փարիզյան խորհրդի կազմակերպության փոխնախագահ (ԺՆԻ): 1961-2003թթ. Ս.Ղանթարջյանը համատեղությամբ դասավանդել է ԵՊՀ-ում և ԵՊԻ-ում:

Նա հեղինակ է ավելի քան 100 գիտական աշխատություն-

ների, այդ թվում՝ 3 մենագրության, 5 ուսումնական ձեռնարկի՝ «Նորարարությունների կառավարում և մտավոր սեփականության օբյեկտների գնահատում» (Եր., 2004), «Կառավարման և գործարարության ընտրովի հարցեր» (Եր., 2005), «Վենչուրային և ինովացիոն կառավարում» (Եր., 2006), «Ինովացիոն մենեջմենթ» (Եր., 2007), «Մասնագիտության ներածություն (կառավարում)» (Եր., 2008): Հեղինակ է նաև մի քանի գրական գործերի:

Ս.Ղանթարջյանի ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 33 ատենախոսություն:

ՂԱՐԱԽԱՆՅԱՆ ԳԵՂԱՄ ՀԱԿՈԲԻ

Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր իրավաբան



Ծնվել է 1935թ. օգոստոսի 2-ին Շամշադինի շրջանի Զինարի գյուղում: 1950թ. ավարտել է տեղի յոթնամյա, իսկ 1953-ին՝ Այգեձոր գյուղի միջնակարգ դպրոցը, 1958թ.՝ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետը և աշխատանքի անցել նույն ֆակուլտետում որպես ավագ լաբորանտ: 1960-1963թթ. սովորել է ԵՊՀ ասպիրանտուրայում: 1964-ից աշխատել է ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնում որպես դասախոս:

1969թ. Գ.Ղարախանյանը պաշտպանել է թեկնածուական, 2003թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1974թ. նրան շնորհվել է դոցենտի, 2004թ. պրոֆեսորի կոչում:

1978-1984թթ. և 1990-1995թթ. եղել է իրավագիտության ֆակուլտետի դեկանի տեղակալ:

Հեղինակ է «Հայաստանի Հանրապետության բնակարանային իրավունք» (Եր., 1995) և «Ժառանգման իրավունք» (Եր., 2000) ուսումնական ձեռնարկների, համահեղինակ՝ «Հայկական ԽՍՀ քաղաքացիական իրավունք» (Եր., 1978, 1982) երկհատոր դասագրքի, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք» դասագրքի 2-րդ (Եր., 2001, 2008) և 3-րդ (Եր., 2003) հատորների, «Հայաստանի Հանրապետության ընտանեկան իրավունք» (Եր., 2005, 2008) բուհական դասագրքի, ավելի քան 100 հոդվածի:

Գ.Ղարախանյանի հեղինակած առավել կարևոր աշխատություններից են՝ «Բնակարանային վարձակալության պայմա-

նագրի դադարումը» (Եր., 1986), «Որդեգրում, խնամակալություն, հոգաբարձություն» (Եր., 1989), «Ժառանգումն ըստ կտակի և ըստ օրենքի» (Եր., 2000), «Հայաստանի ընտանեկան իրավունքի զարգացման պատմությունը 20-րդ դարում» (Եր., 2004), «Հայաստանի Հանրապետության նոր ընտանեկան օրենսգիրքը» (Եր., 2005): Գ.Ղարախանյանը լուրջ ներդրում ունի օրինաստեղծման բնագավառում:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 9 ատենախոսություն:

2003թ. Գ.Ղարախանյանն արժանացել է ՀՀ վաստակավոր իրավաբանի կոչման:

ՂԱՐԻԲՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՍԱՀԱԿԻ

Լեզվաբան,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ



Ծնվել է 1899թ. հունվարի 27-ին Արտաշատի շրջանի Դարղալու (այժմ՝ Այգեզարդ) գյուղում: Սովորել է Երևանի արական գիմնազիայում, 1927թ. ավարտել է ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժինը:

1922-1928թթ. աշխատել է Երևանի դպրոցներում որպես ուսուցիչ, 1929-1948թթ. դասավանդել է ԵՊՀ-ում, իսկ 1934 թվականից աշխատել է Խ.Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտում որպես հայոց լեզվի ամբիոնի վարիչ: Ա.Ղարիբյանը 1943-1950թթ. և 1956-1962թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ Հր.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրեն, իսկ 1962-1977թթ՝ ակադեմիայի հիմնարար գիտական գրադարանի տնօրեն:

1940թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1941թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1947թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1960-ին՝ ակադեմիկոս:

Ա.Ղարիբյանը հեղինակ է հայոց լեզվի պատմությանն ու պատմական քերականությանը, բարբառագիտությանը նվիրված մի շարք աշխատությունների: Կարևոր է նրա ներդրումը հայ բարբառների գիտական դասակարգման բնագավառում՝ մասնավորապես «ս» ճյուղի հայտնաբերումն ու դերբայավոր, մասնի-

կավոր և գրաբարատիպ խմբերի առանձնացումը: Զբաղվել է նաև ընդհանուր և պատմահամեմատական լեզվաբանության հարցերով: Նրա գրչին են պատկանում «Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության ներածություն» (Եր., 1937), «Հայերենի բարբառների մի նոր ճյուղ» (Եր., 1939), «Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա» (Եր., 1954) և այլ գրքեր:

Զգալի է Ա.Ղարիբյանի ավանդը բառարանագիտության և բառարանագրության ասպարեզում: Ա.Ղարիբյանը հանդես է եկել որպես հեղինակ, համահեղինակ, խմբագիր, կազմակերպիչ: Նրա հեղինակությամբ ու խմբագրությամբ հրատարակվել են «Ռուս-հայերեն բառարան»-ը (Եր., 1945, 1947), «Ռուս-հայերեն ռազմական համառոտ բառարան»-ը (Եր., 1941), քառահատոր «Ռուս-հայերեն բառարան»-ի 3-րդ և 4-րդ հատորները (Եր., 1969): Կարևոր է «Ռուս-հայերեն բառարան»-ը (Եր., 1968), որը պարունակում է մոտ 85.000 բառահոդված և 1971թ. արժանացել է ՀԽՍՀ Պետական մրցանակի:

Ա.Ղարիբյանը հեղինակ է տասնյակից ավելի դասագրքերի և մեթոդիկայի ձեռնարկների: Միջնակարգ դպրոցի 5-6-րդ դասարանների հայոց լեզվի քերականության նրա կազմած դասագիրքը 1934-ից վերահրատարակվել է 25 անգամ:

Նա մասնակցել է աշխարհի տարբեր երկրներում կայացած միջազգային լեզվաբանական գիտաժողովների:

1954թ. Ա.Ղարիբյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով, Խ.Աբովյանի անվան մեդալով:

Սարդարապատի ճակատամարտում ցուցաբերած խիզախության համար արժանացել է պարգևի:

Վախճանվել է 1977թ. մարտի 1-ին Երևանում:

Ա.Ղարիբյանի անունով է կոչվում Երևանի թիվ 142 միջնակարգ դպրոցը:

ՂԱՐԻԲՅԱՆ ԳՐԻՇԱ ԱԼԵՔՍԱՆԻ

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

Ծնվել է 1930թ. մայիսի 20-ին Սիսիանի շրջանի Բորիսովկա (այժմ՝ Ծղուկ) գյուղում: 1954թ. ավարտել է ԵՊՀ տնտե-

սագիտության ֆակուլտետը, 1962թ. Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի ասպիրանտուրան: 1963թ. պաշտպանել է թեկնածուական, 1973թ. դոկտորական ատենախոսություն: 1978թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 2000թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ:

1954-ից Գ.Ղարիբյանն աշխատում է ԵՊՀ-ում. 1978-2008թթ. եղել է տնտեսագիտության տեսության ամբիոնի վարիչ, 1976-1978թթ. ԵՊՀ կուսկոմիտեի երկրորդ քարտուղար, 1978-1991թթ. հումանիտար ֆակուլտետների ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր:

1984թ. նրա ջանքերով ԵԺՏԻ-ից տնտեսագիտական կիբեռնետիկայի ֆակուլտետը տեղափոխվել է ԵՊՀ և հետագայում դարձել տնտեսագիտության ֆակուլտետ: 1993-2000թթ. Գ.Ղարիբյանը եղել է այդ ֆակուլտետի դեկան:

1965-1975թթ. նա համատեղությամբ գլխավորել է ՀԽՍՀ պետպլանի գիտահետազոտական ինստիտուտի սոցիալ-տնտեսագիտական բաժնի աշխատանքները:

Գ.Ղարիբյանը հեղինակ է գիտական ավելի քան 80 աշխատության, այդ թվում՝ «Բնակչության կենսամակարդակը և նրա բարձրացումը Սովետական Հայաստանում» (Եր., 1972) և "Проблемы повышения уровня жизни населения в социалистическом обществе" (Ер., 1977) մենագրությունների, համահեղինակ «Մինչմոնոպոլիստական կապիտալիզմ» (Եր., 1971), «Մարդկային զարգացման հիմունքներ» (Եր., 2004) ուսումնական ձեռնարկների և «Տնտեսագիտություն» (Եր., 2004) բուհական դասագրքի:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 40 ատենախոսություն:

Նա ԵՊՀ-ում գործող տնտեսագիտության գծով գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի նախագահն է:

1999թ. Գ.Ղարիբյանը պարգևատրվել է «Մովսես Խորենացի» մեդալով:

ՂԱՐԻԲՅԱՆ ԳՐԻԳՈՐ ՄԱՐԳԱՐԻ

Ֆիզիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս

Ծնվել է 1924թ. դեկտեմբերի 13-ին Թբիլիսում: 1942թ. ընդունվել է ԵՊՀ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետ, մեկ տարի անց տեղափոխվել Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարան: 1948թ. ընդունվել է Երևանի ֆիզիկայի ինստիտուտի ասպիրանտուրա և ուսումնառությունը շարունակել Մոսկվայում: 1952թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և աշխատանքի անցել Երևանի ֆիզիկայի ինստիտուտում:

Գ.Ղարիբյանը զբաղվել է քվանտային էլեկտրադինամիկայով, տիեզերական ճառագայթման և տարրական մասնիկների ֆիզիկայով, մասնավորապես կանխատեսել է տիեզերական ճառագայթման մյու-մեզոնների տարբեր բարձրությունների վրա էներգիական սպեկտրները: 1954թ. այս հետազոտությունն արժանացել է ԽՍՀՄ ԳԱ նախագահության մրցանակի:

Գ.Ղարիբյանը հիմնարար աշխատանքներ է կատարել անցումային ճառագայթման բնագավառում, ուսումնասիրել է բարակ թաղանթներում իոնացման կորուստները: 1959թ. տեսականորեն հայտնաբերել է ռենտգենյան անցումային ճառագայթման երևույթը, որը ձեռք բերեց գործնական մեծ նշանակություն տալով տարրական մասնիկների նույնականացման և դրանց էներգիաների չափման նոր հնարավորություն:

1961թ. Գ.Ղարիբյանը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1963թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: Գ.Ղարիբյանի և նրա աշակերտների աշխատանքներում ստացված արդյունքները նոր մակարդակի բարձրացրին անցումային ճառագայթման տեսությունը խթանելով նման աշխատանքների ծավալումն աշխարհի բազմաթիվ գիտական կենտրոններում: 1970-ականների սկզբին նա ստեղծեց ռենտգենյան անցումային ճառագայթման միկրոսկոպական տեսությունը:

Գ.Ղարիբյանի մի շարք աշխատանքներ սերտորեն առնչվում են աստղաֆիզիկային: Նա մասնավորապես հաշվել է միգամածությունների և աստղերի մագնիսական դաշտում ռելյատիվիստական էլեկտրոնների ճառագայթման բևեռացումը, կապ

հաստատել Երկրի մթնոլորտում պիոնների և մյուոնների սպեկտրների միջև, հետազոտել մեծ արագության մասնիկների և միջաստղային փոշեհատիկների բախումից առաջացող ճառագայթման ներդրումը երկնքի ռենտգենյան լուսարձակման ընդհանուր ֆոնում:

Գ.Ղարիբյանն ավելի քան 160 աշխատությունների հեղինակ է: Անցումային ճառագայթման բնագավառի բազմամյա հետազոտությունների արդյունքներն ընդհանրացված են նրա «Ռենտգենյան անցումային ճառագայթում» (Եր., 1983) մենագրության մեջ:

1949-ից նա գիտական աշխատանքը հաջողությամբ համատեղել է ԵՊՀ-ում դասախոսական աշխատանքի հետ: Դասախոսել է տեսական ֆիզիկայի հիմնական դասընթացները:

Նրա ղեկավարությամբ ու խորհրդատվությամբ պաշտպանվել է թեկնածուական 15 և դոկտորական 5 ատենախոսություն:

1963թ. Գ.Ղարիբյանն ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1971թ. ակադեմիկոս, 1974-ից՝ ֆիզիկամաթեմատիկական բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար: 1966-ից եղել է ՀԽՍՀ ԳԱ «Տեղեկագիր, Ֆիզիկա» ամսագրի հիմնադիր խմբագիրը:

Գ.Ղարիբյանը պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի (2) շքանշանով:

Վախճանվել է 1991թ. հունիսի 7-ին Երևանում:

ՂԱՐԻԲՅԱՆ ԻԳԻԹ ԳԱՐԵԳԻՆԻ

Հնագետ,
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1937թ. դեկտեմբերի 1-ին Հրազդանի շրջանի Մեղրաձոր գյուղում: 1939թ. ընտանիքը տեղափոխվել է Երևան: 1957թ. ավարտել է Երևանի թիվ 32 դպրոցը: 1957-1960թթ. ծառայել է բանակում: 1960-1965թթ. սովորել է ԵՊՀ պատմության ֆակուլտետում, 1965-1968թթ. ԵՊՀ ասպիրանտուրայում:

1970թ. Ի.Ղարիբյանը պաշտպանել է թեկնածուական, 1996թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1974թ. նրան շնորհվել է դոցենտի, 2005-ին պրոֆեսորի կոչում:

1968-ից Ի.Ղարիբյանն աշխատում է ԵՊՀ պատմության ֆակուլտետի հնագիտության, ազգագրության և աղբյուրագի-

տության ամբիոնում՝ 1968-1970թթ. որպես դասախոս, 1970-1974թթ. ավագ դասախոս, 1974-2000թթ. հնագիտության և ազգագրության ամբիոնի դոցենտ, 2000-2001թթ.՝ պրոֆեսոր: 2001թ. հնագիտության, իսկ 2005-ից հնագիտության և ազգագրության ամբիոնի վարիչն է: 2003-ից համատեղությամբ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի միջնադարյան հնագիտության բաժնի գիտաշխատող է:

Ի.Ղարիբյանը հնագիտական արշավախմբեր է ղեկավարել Կյուրիկյանների մայրաքաղաք Լոռե քաղաք-ամրոցում (1966-1974թթ.), Թանահատի վանական համալիրում (1970-1982թթ.) և Բջնի ամրոցում (1977-1980թթ. և 2003-2007թթ.): Թանահատի վանական համալիրի պեղումների շնորհիվ նա ճշգրտել է Գլաձորի միջնադարյան համալսարանի տեղադրությունը: Մասնակցել է նաև Դվինի, Արմավիրի, Գառնիի, Սպիտակի և Լճաշենի հնագիտական պեղումներին:

Ի.Ղարիբյանը հեղինակ է միջնադարյան Հայաստանի պատմությանը, հնագիտությանը, վիմագրությանը, ճարտարապետությանը և նյութական մշակույթին վերաբերող շուրջ 70 հոդվածի, «Գլաձոր (տեղադրությունը) պեղումներ և արձանագրություններ» (Եր., 1983), «Սուրբ Գեղարդ» (Եր., 2003), «Արծափ-Մեղրաձոր» (Եր., 2006) մենագրությունների և համահեղինակ «Հայոց պատմություն» (Եր., 2007) 7-րդ դասարանի դասագրքի: Նաև թարգմանել է բուհական երեք դասագիրք:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 2 ատենախոսություն:

Ի.Ղարիբյանը զեկուցումներով հանդես է եկել միջազգային գիտաժողովներում (Երևան, Ստեփանակերտ, Մոսկվա, Լենինգրադ, Լոս Անջելես, Թբիլիսի, Բաթում, Աշխաբադ):

ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ ԲԱԳՐԱՏԻ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1920թ. մայիսի 5-ին Ալեքսանդրապոլում (այժմ՝ Գյումրի): 1937թ. ավարտել է Երևանի թիվ 19 դպրոցը: 1937-1941թթ. սովորել է ԵՊՀ պատմության ֆակուլտետում: 1941-19458թթ. ծառայել է բանակում, մասնակցել Հայրենական մեծ

պատերազմին: Զորացրվելուց հետո կատարել է կոմերիտական ու կուսակցական ղեկավար աշխատանք. 1948-1950թթ. եղել է Հայաստանի ԼԿԵՄ կենտկոմի քարտուղար, 1951-1954թթ.՝ ԽՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի ԽՄԿԿ պատմության բաժանմունքի վարիչ, 1968-1977թթ.՝ նույն մասնաճյուղի տնօրեն, 1954-1961թթ.՝ Հայաստանի կոմկուսի կենտկոմի պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի վարիչի տեղակալ, 1961-1968թթ.՝ ՀԿԿ Լենինականի քաղկոմի առաջին քարտուղար:

1948թ. Գ.Ղարիբջանյանը պաշտպանել է թեկնածուական, 1955թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1957թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1965թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1971-ին՝ ակադեմիկոս: 1977-1982թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ պատմության և տնտեսագիտության բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար: 1985-ից մինչև կյանքի վերջը ղեկավարել է ՀԽՍՀ ԳԱ հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի կենտրոնը:

1947-1999թթ. նա դասախոսել է ԵՊՀ-ում և հանրապետության այլ բուհերում: Գ.Ղարիբջանյանը եղել է գրողների և ժուռնալիստների միության անդամ:

Հեղինակ է ավելի քան 300 գիտական աշխատությունների և հրապարակախոսական հոդվածների: Կարևոր են «Լենինը և Անդրկովկասը» (մաս 1-3, Եր., 1970-1975), «Ստեփան Շահումյան» (Եր., 1978), «Ալեքսանդր Մյասնիկյան» (Եր., 1976), «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին» (Եր., 1986), «Ավարայրից մինչև Սարդարապատ» (Եր., 1985), «Ժողովրդական հերոս Անդրանիկը» (Եր., 1990) գրքերը:

Եղել է ԽՄԿԿ 22-րդ և 23-րդ համագումարների, ԽՍՀՄ VI-VII, ՀԽՍՀ VIII-IX գումարումների Գերագույն խորհրդի պատգամավոր, 1954-1981թթ.՝ ՀԿԿ ԿԿ անդամ, 1966-1969թթ.՝ Կենտկոմի բյուրոյի անդամության թեկնածու:

1968թ. Գ.Ղարիբջանյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է Հայրենական մեծ պատերազմի I աստիճանի, Աշխատանքային կարմիր դրոշի (2), «Պատվո նշան», Ժողովուրդների բարեկամության շքանշաններով, Խ.Աբովյանի անվան և այլ մեդալներով:

Վախճանվել է 1999թ. դեկտեմբերի 28-ին Երևանում:

ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ ԼԵՈՒԴՎԻԳ ՊԱՊԻԿԻ

Պատմական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր

Ծնվել է 1922թ. օգոստոսի 24-ին Երևանում: 1940թ. ավարտել է Երևանի թիվ 4 միջնակարգ դպրոցը, 1945թ. ԵՊՀ պատմության ֆակուլտետը, 1951-ին՝ ասպիրանտուրան: 1960թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1975թ. նրան շնորհվել է դոցենտի, 1990թ. պրոֆեսորի կոչում:

Համալսարանն ավարտելուց հետո մինչև 1951թ. կատարել է կոմերիտական ղեկավար աշխատանք. եղել է ՀԼԿԵՄ Երևանի Կիրովյան շրջկոմի, ապա՝ Երքաղկոմի առաջին քարտուղար: 1951-1953թթ. և 1957-1961թթ. ղեկավարել է ԵՊՀ կուսկոմիտեն, 1953-ին եղել է ՀԿԿ Երքաղկոմի III քարտուղար, այնուհետև՝ ՀԿԿ Կենտկոմի պատասխանատու կազմակերպիչ, 1954-1957թթ. ՀԿԿ Սպանդարյանի շրջկոմի I քարտուղար, 1961-1966թթ. ՀԿԿ Երքաղկոմի II, 1966-1975-ին՝ I քարտուղար, 1975-1988թթ. ՀԽՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության նախարար, 1988-1992թթ.՝ նախարարի առաջին տեղակալ, իսկ 1992-2007թթ. ԵՊՀ պատմության թանգարանի տնօրեն:

Լ.Ղարիբջանյանը կուսակցական աշխատանքին զուգընթաց շուրջ 50 տարի զբաղվել է մանկավարժական գործունեությամբ: 1944-1947թթ. դասավանդել է Երևանի բժշկական ինստիտուտում, 1945-ից ԵՊՀ-ում:

1958թ. Լ.Ղարիբջանյանն ընտրվել է ՀԿԿ Կենտկոմի, իսկ 1966-1976թթ. Կենտկոմի բյուրոյի անդամ, եղել է ՀԽՍՀ և ԽՍՀՄ Գերագույն խորհուրդների մի շարք գումարումների պատգամավոր:

Հեղինակ է ավելի քան 40 գիտական աշխատանքների, այդ թվում՝ «Երևանի պետական համալսարանը» (Եր., 1965, 1994, ռուս. 1971) մենագրության, համահեղինակ «Հայաստանի պատմություն» ուսումնական համառոտ ձեռնարկի (Եր. 2008թ.): Կազմել է «Երևանի պետական համալսարանի ռեկտորները (1919-1999)» (Եր., 1999) գիրքը և «Մեր անվանի դասախոսները» մատենաշարի II (Եր., 2006) և III (Եր., 2008) հատորները:

Լ.Ղարիբջանյանը պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի (4), ժողովուրդների բարեկամության (1986) շքանշաններով, «Մովսես Խորենացի» (2004) և բազմաթիվ այլ մեդալներով ու պատվոգրերով:

ՂԱՓԱՆՑՅԱՆ ԳՐԻԳՈՐ ԱՑՎԱԶԻ

Հայագետ-լեզվաբան,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1887թ. հունվարի 1-ին Աշտարակում: Սկզբնական կրթությունն ստացել է ծննդավայրում, ապա մեկնել է Սանկտ Պետերբուրգ, ընդունվել գիմնազիա, որն ավարտելուց հետո սովորել է տեղի համալսարանի արևելյան լեզուների ֆակուլտետի հայ-վրացական բանասիրության բաժնում:

1913թ. Գ.Ղափանցյանը, ավարտելով համալսարանը, վերադարձել է Հայաստան ու նվիրվել հայագիտությանը: Մինչև 1918թ. հայագիտական առարկաներ է դասավանդել Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, իսկ ճեմարանի փակվելուց հետո տեղափոխվել է Երևան:

1918թ. մայիսին նա մասնակցել է Սարդարապատի հերոսամարտին:

1921թ. Գ.Ղափանցյանը հրավիրվել է ԵՊՀ, որտեղ աշխատել է մինչև կյանքի վերջը՝ երկար տարիներ վարելով ընդհանուր լեզվաբանության ամբիոնի վարիչի պաշտոնը: Համալսարանում դասավանդել է գրաբար, հայերենի պատմահամեմատական քերականություն, ուրարտերեն, ընդհանուր լեզվաբանություն և այս մասնագիտությունների գծով պատրաստել ասպիրանտներ:

1932թ. Գ.Ղափանցյանին շնորհվել է պրոֆեսորի կոչում, իսկ 1942թ. առանց ատենախոսության պաշտպանության՝ դոկտորի գիտական աստիճան: 1943թ. նա հաստատվել է ՀԽՍՀ գիտությունների նորաստեղծ ակադեմիայի հիմնադիր անդամ և ընտրվել հասարակագիտական բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար: 1950-1955թթ. ղեկավարել է ՀԽՍՀ ԳԱ Հր.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը:

Գ.Ղափանցյանի գիտական գործունեության արդյունավետ շրջանն ընդգրկում է 1930-1950-ական թվականները, երբ պարբերաբար լույս տեսան նրա “Chetto Armeniaca”-ն (Եր., 1931) «Ընդհանուր տարրեր ուրարտերեն և խեթերեն լեզուների միջև» (Եր., 1936), «Խեթական աստվածները հայերի մոտ» (Եր., 1940), «Հին Հայաստանի տեղանունների պատմա-լեզվաբանական նշանակությունը» (Եր., 1940), «Արա Գեղեցիկի պաշտամունքը» (Եր., 1945) և շատ այլ աշխատություններ:

Գ.Ղափանցյանը նաև նշանավոր պատմաբան էր ու հնագետ: Նրա լեզվագիտական հետազոտությունները գրեթե միշտ հանգում էին կարևոր պատմական եզրակացությունների, որոնք ամփոփված են մի շարք ծանրակշիռ աշխատություններում: Դրանցից են «Ուրարտուի պատմությունը» (Եր., 1940), «Հայասան հայերի բնօրրան» (ռուս., Եր., 1948), «Հայոց լեզվի պատմություն (հին շրջան)» (Եր., 1961) մենագրությունները:

Գ.Ղափանցյանն զբաղվել է նաև ընդհանուր լեզվաբանության հարցերով, այդ ուսումնասիրությունների արդյունքները ամփոփելով «Ընդհանուր լեզվաբանություն» (Եր., 1937, 1939) գրքում:

1942թ. Գ.Ղափանցյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման:

Վախճանվել է 1956թ. մայիսի 3-ին Երևանում:

Գ.Ղափանցյանի բրոնզաձույլ կիսանդրին ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի նախասրահում խորհրդանշում է ականավոր գիտնական-մանկավարժի դերը համալսարանական գիտության զարգացման գործում:

ՂԱՖԱԴԱՐՅԱՆ ԿԱՐՈ ԳՐԻԳՈՐԻ

Հնագետ, վիմագրագետ, բանասեր,
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1907թ. ապրիլի 20-ին Ախալցխայում: Ծննդավայրում միջնակարգ կրթություն ստանալուց հետո 1931թ. ավարտել է ԵՊՀ պատմագրական ֆակուլտետը՝ պատմաբան-բանասեր մասնագիտությամբ: Պատմական գիտությունների թեկնածու է դարձել 1939թ., դոկտոր՝ 1954թ.: 1957թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1931թ. Կ.Ղաֆադարյանն աշխատել է Էջմիածնի ձեռագրատուն-մատենադարանում, 1932-1940թթ.՝ գրականության և պատմության ինստիտուտում որպես գիտաշխատող, 1940-1965թթ. եղել է Հայաստանի պատմության պետական թանգարանի տնօրեն, իսկ 1959-ից մինչև կյանքի վերջը՝ նաև ՀԽՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի միջնադարյան հնագիտության բաժնի վարիչ:

1938-1970թթ. Կ.Ղաֆադարյանը ԵՊՀ պատմության ֆակուլ-

տետում դասավանդել է «Հնագիտության հիմունքներ», «Միջնադարյան Հայաստանի հնագիտություն» դասընթացները:

Մեծ է Կ.Ղաֆադարյանի դերը հայ հնագիտության զարգացման և գիտական կադրերի պատրաստման գործում: 1930-1940թթ. նա մասնակցել է Վաղարշապատի, Ամբերդի, Երևանի Կաթողիկեի, Զվարթնոցի, Ավանի, Կարմիր բլուրի պեղումներին: 1946-ից մինչև կյանքի վերջը գլխավորել է Դվին մայրաքաղաքը պեղող արշավախումբը:

Կ.Ղաֆադարյանի գիտական ժառանգության մեջ առանձնակի արժեք ունեն «Հայկական գրի սկզբնական տեսակները» (Եր., 1939), «Ալքիմիան պատմական Հայաստանում» (Եր., 1940), «Դվին քաղաքը և նրա պեղումները» (հ.1, Եր., 1952, հ.2, Եր., 1982), «Սանահինի վանքը և նրա արձանագրությունները» (Եր. 1958), «Հովհաննավանքը և նրա արձանագրությունները» (Եր., 1948), «Հաղբատ» (Եր., 1966), «Երևանի միջնադարյան հուշարձանները» (Եր., 1976) մենագրությունները: Հեղինակ է նաև 100-ից ավելի հոդվածների, որոնք վերաբերում են Հայաստանի պատմությանը, հնագիտությանը, ճարտարապետությանը, վիմագրությանը, թանգարանային գործի կազմակերպանը: Նրա ջանքերով իրագործվել է հայ ճարտարապետության պատմության ուսումնասիրության հիմնադիր Թ.Թորամանյանի գիտական ժառանգության երկհատոր հրատարակությունը:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 10 ատենախոսություն:

1961թ. Կ.Ղաֆադարյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի, «Պատվո նշան» շքանշաններով, բազմաթիվ մեդալներով:

Վախճանվել է 1976թ. դեկտեմբերի 21-ին Երևանում:

ՂՈՒԿԱՍՅԱՆ ԱՐՏՈՒՇ ԱՊՐԵՍԻ

Մեխանիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր

Ծնվել է 1958թ. հուլիսի 30-ին Ստեփանակերտում: Միջնակարգ կրթություն ստանալով Մեծ Շեն գյուղում և Մարտակեր-

տում՝ 1975թ. ընդունվել է ԵՊՀ մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետի մեխանիկայի բաժին: 1980թ. ընդունվել է ՀԽՍՀ ԳԱ մեխանիկայի ինստիտուտի ասպիրանտուրա և գործուղվել ԽՍՀՄ ԳԱ մեխանիկայի պրոբլեմների ինստիտուտ (Մոսկվա):

1984թ. Ա.Ղուկասյանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1984-1988թթ. աշխատել է ՀԽՍՀ ԳԱ մեխանիկայի ինստիտուտում որպես ավագ գիտաշխատող, 1988-ից ԵՊՀ մեխանիկայի ֆակուլտետի տեսական մեխանիկայի ամբիոնում: 1994թ. եղել է նույն ամբիոնի վարիչ, 1997թ.՝ ամբիոնի պրոֆեսոր: 1996թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն:

2002-ից Ա.Ղուկասյանը Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ ռեկտորն է:

Հեղինակ է շուրջ 80 գիտական հոդվածների և ուսումնամեթոդական աշխատանքների, համահեղինակ՝ «Լաբորատոր աշխատանքներ տեսական մեխանիկայից» (Եր., 2001), «Հայ դպրոցն ու մանկավարժական միտքը 20-րդ դարում» (Եր., 2004), «Մանկավարժական բուհի կառավարման տեխնոլոգիան և զարգացման միտումները» (Եր., 2005) ձեռնարկների:

Ա.Ղուկասյանի ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 6 ատենախոսություն:

2006թ. մասնակցել է միջազգային գիտաժողովների (Սանկտ Պետերբուրգ, Օքսֆորդ, Հելսինկի):

2004-ից մանկավարժություն և հոգեբանություն մասնագիտությամբ գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի նախագահն է, 2006-ից՝ Եվրոպական բուհերի ռեկտորների միջազգային խորհրդի անդամ:

2007թ. Ա.Ղուկասյանը պարգևատրվել է «Անանիա Շիրակացի» մեդալով:

ՄԱԶՄԱՆՅԱՆ ՄԿՐՏԻՉ ԱՐԱՄԻ

Հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ԽՍՀՄ ՄԳԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1910թ. մարտի 8-ին Ալեքսանդրապոլում (այժմ՝ Գյումրի): 1930թ. ավարտել է ԵՊՀ մանկավարժական ֆակուլտետը:

1940թ. Մ.Մազմանյանը պաշտպանել է թեկնածուական, 1965թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1966թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1967թ. ընտրվել է ԽՍՀՄ մանկավարժական գիտությունների ակադեմիայի իսկական անդամ:

1933-1969թթ. որոշ ընդհատումներով նա աշխատել է ԵՊՀ-ում: Նրա գիտամանկավարժական գործունեությունը 1951-1977թթ. հիմնականում ընթացել է Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտում, որտեղ երկար տարիներ եղել է հոգեբանության ամբիոնի վարիչ: 1948-1952թթ. եղել է «Սովետական մանկավարժ» ամսագրի խմբագիրը:

Մ.Մազմանյանը թողել է բավական հարուստ ժառանգություն մենագրություններ, բուհական դասագրքեր ու ձեռնարկներ, գիտական հոդվածներ և այլն: Դրանցից հատկապես հիշատակելի են «Ուրվագծեր հոգեբանությունից» (Եր., 1951), «Սեր, ամուսնություն և ընտանիք» (Եր., 1959), «Դասախոսություններ հոգեբանությունից» (Եր., 1959), «Բնավորություն» (Եր., 1969), «Մանկավարժական հոգեբանության մի քանի հարցեր» (Եր., 1975) գրքերը:

1965թ. Մ.Մազմանյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման:

Վախճանվել է 1977թ. փետրվարի 17-ին Երևանում:

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ ԽԱՉԱՏՈՒՐԻ

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Ծնվել է 1942թ. հունիսի 22-ին Լենինականում (այժմ՝ Գյումրի): 1959թ. ավարտելով միջնակարգ դպրոցը՝ աշխատել է տարբեր հիմնարկություններում: 1962թ. ընդունվել և 1967թ. ավարտել է ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետը: 1968թ. ընդունվել է ԽՍՀՄ ԳԱ Լատինական Ամերիկայի ինստիտուտի ասպիրանտուրա, որտեղ 1973թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն:

1973-ից Ռ.Մաթևոսյանն աշխատել է ԵՊՀ-ում, եղել «Երևանի պետական համալսարան» և «Երիտասարդ գիտաշխատող» հանդեսների պատասխանատու քարտուղար, միաժամանակ կատարել ռեկտորի օգնականի պարտականությունները: Հետագայում Հայաստանի բուհերի ռեկտորների խորհրդի գիտական քարտուղարի աշխատանքները համատեղել է ԵՊՀ դիտատեխնիկական ինֆորմացիայի բաժնի ղեկավարի պաշտոնի հետ, ինչպես նաև կատարել քաղաքատնտեսության ամբիոնի դոցենտի պարտականություններ: 1981թ. Ռ.Մաթևոսյանը նշանակվել է ԵՊՀ միջազգային կապերի գծով պրոռեկտորի պաշտոնում և աշխատել մինչև կյանքի վերջը՝ միաժամանակ լինելով միջազգային հարաբերությունների պատմության և տեսության ամբիոնի դոցենտ:

Ռ.Մաթևոսյանի ջանքերով ԵՊՀ-ում ստեղծվեց աշխարհի 90-ից ավելի առաջատար բուհերի հետ գործող փոխադարձ կապերի լայն ցանց, որը ներառում էր միջազգային մի շարք ծրագրեր:

Նրա գիտական աշխատություններից առանձնապես արժեքավոր են «Լատինական Ամերիկայի ինտեգրացիոն պրոցեսները դարերի և հազարամյակների սահմանագծին» (ռուս., Մ 2000) և «Կուբան սալագայի որոնումներում» (Եր., 2002) մենագրությունները:

Ռ.Մաթևոսյանն արժանացել է հանրապետության, ինչպես նաև այլ պետությունների դիպլոմների, պատվոգրերի, պետական բարձր պարգևների:

Վախճանվել է 2001թ. սեպտեմբերի 3-ին Երևանում:

ՄԱԼԽԱՍՅԱՆՑ ՍՏԵՓԱՆ ՍԱՐԳՍԻ

Լեզվաբան, բառարանագիր,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս



Ծնվել է 1857թ. նոյեմբերի 25-ին Ախալցխայում: Ավարտել է տեղի Կարապետյան ծխական դպրոցը, 1878թ.՝ Էջմիածնի Գևորգյան ճեմարանը, 1889թ.՝ Սանկտ Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների ֆակուլտետի հայ-սանսկրիտ և հայ-վրացական բաժինները, ստացել բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Ստ.Մալխասյանցը երկար տարիներ հայոց լեզու և գրականություն է դասավանդել հայկական դպրոցներում: 1919թ. հրավիրվել է դասախոսական աշխատանքի և Ալեքսանդրապոլում (այժմ՝ Գյումրի) 1920թ. փետրվարի 1-ին կարդացել նորաբաց համալսարանի առաջին դասախոսությունը: Ստ.Մալխասյանցը ՀԽՍՀ ԳԱ հիմնադիր ակադեմիկոսներից էր:

Նա անվանի բանասեր էր, լեզվաբան, բառարանագիր: Հիշատակելի են նրա Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» (ընդարձակ ուսումնասիրությամբ, թարգմանությամբ և ծանոթագրություններով, Եր., 1940), «Խորենացու առեղծվածի շուրջը» (Եր., 1940), «Փավստոս Բուզանդ. Պատմություն Հայոց» (ներածությամբ, թարգմանությամբ և ծանոթագրություններով, Եր., 1947) գրքերը: Հրատարակել է մատենագիրների համեմատական տեքստեր, Ղևոնդ Մեծի «Պատմություն Հայոց» (1887), Ղազար Փարպեցու «Պատմություն Հայոց եւ Թուղթ առ Վահան Մամիկոնյան» (Գ.Տեր-Մկրտչյանի հետ) (1904), Ամիրդովլաթ Ամասիացու «Օգուտ բժշկութեան», «Դասընթաց հայոց մատենագրության պատմության» (1899), «Համառոտ պատմություն Ներսիսյան հոդևոր դպրոցի...» (1900) ուսումնասիրությունները:

Ստ.Մալխասյանցը անհերքելի փաստերով հիմնավորել է, որ Մովսես Խորենացին իրոք 5-րդ դարի հեղինակ է, իսկ նրա «Հայոց պատմությունը»՝ միանգամայն վստահելի սկզբնաղբյուր:

Ստ.Մալխասյանցի լեզվաբանական-բառարանագրական կարևոր աշխատություններից են «Գրաբարի հոլովումը, խոնարհումը և նախդիրները» (Թիֆլիս, 1891), «Գրաբարի համաձայնությունը» (Թիֆլիս, 1892): 1944-1945թթ. նա հրատարակել

է հայ բառարանագրության կոթողներից մեկը՝ 120.000 բառ ընդգրկող «Հայերեն բացատրական բառարանը», որն իր տեսակի մեջ անգերազանցելի է: Քառահատոր այդ բառարանը 1946թ. արժանացել է ԽՍՀՄ Պետական մրցանակի:

Ստ.Մալխասյանցը զբաղվել է նաև թարգմանությամբ. Շեքսպիրից թարգմանել է «Լիր թագավոր» (1887), «Մակբեթ» (1892) ողբերգությունները, Գ.Էբերսից՝ «Մարդ եմ» վեպը (1898):

Վախճանվել է 1947թ. հուլիսի 21-ին Երևանում:

ՄԱԼԽԱՍՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՑՈԼԱԿԻ

Քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1948թ. մարտի 29-ին Հոկտեմբերյան (այժմ՝ Արմավիր) քաղաքում: 1965թ. ավարտել է Էջմիածնի շրջանի Ջրաուատ գյուղի միջնակարգ դպրոցը, 1970թ.՝ ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը, 1973թ. Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի ասպիրանտուրան և նույն թվականին պաշտպանել թեկնածուական, 1983թ. դոկտորական ատենախոսություն: 1985թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Ա.Մալխասյանը 245 գիտական աշխատանքների հեղինակ է, այդ թվում՝ ալյուտարարության 54 հեղինակային իրավունքի և «Ստանդարտացում, չափագիտություն, համապատասխանության հավաստում և որակի կառավարում» (Եր., 2001) բուհական ուսումնական ձեռնարկի:

1969-1970թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ օրգանական քիմիայի ինստիտուտի ավագ լաբորանտ, 1974թ.՝ կրտսեր գիտաշխատող, 1974-1993թթ.՝ «Նաիրիտ» գիտաարտադրական միավորման ավագ գիտաշխատող, լաբորատորիայի վարիչ, բաժնի պետ, 1993-2000թթ.՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Պարեն» գիտաարտադրական և նաիրագծային պետական ձեռնարկության տնօրեն, 2000-2002թթ. ՀՀ կառավարությանն առընթեր ստանդարտացման, սերտիֆիկացման և չափագիտության վարչության պետ, 2002-2003թթ. ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման փոխնախարար:

2003-2007թթ. Ա.Մալխասյանը եղել է ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր: 2001-ից դասախոսում է ԵՊՀ քիմիայի ֆա-

ՄԱԼԽԱՍՅԱՆՑ ՍՏԵՓԱՆ ՍԱՐԳՍԻ

Լեզվաբան, բառարանագիր,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս



Ծնվել է 1857թ. նոյեմբերի 25-ին Ախալցխայում: Ավարտել է տեղի Կարապետյան ծխական դպրոցը, 1878թ.՝ Էջմիածնի Գևորգյան ճեմարանը, 1889թ.՝ Սանկտ Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների ֆակուլտետի հայ-սանսկրիտ և հայ-վրացական բաժինները, ստացել բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Ստ.Մալխասյանցը երկար տարիներ հայոց լեզու և գրականություն է դասավանդել հայկական դպրոցներում: 1919թ. հրավիրվել է դասախոսական աշխատանքի և Ալեքսանդրապոլում (այժմ՝ Գյումրի) 1920թ. փետրվարի 1-ին կարդացել նորաբաց համալսարանի առաջին դասախոսությունը: Ստ.Մալխասյանցը ՀԽՍՀ ԳԱ հիմնադիր ակադեմիկոսներից էր:

Նա անվանի բանասեր էր, լեզվաբան, բառարանագիր: Հիշատակելի են նրա Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» (ընդարձակ ուսումնասիրությամբ, թարգմանությամբ և ծանոթագրություններով, Եր., 1940), «Խորենացու աւեղծվածի շուրջը» (Եր., 1940), «Փավստոս Բուզանդ. Պատմություն Հայոց» (ներածությամբ, թարգմանությամբ և ծանոթագրություններով, Եր., 1947) գրքերը: Հրատարակել է մատենագիրների համեմատական տեքստեր, Ղևոնդ Մեծի «Պատմություն Հայոց» (1887), Ղազար Փարպեցու «Պատմություն Հայոց եւ Թուղթ առ Վահան Մամիկոնյան» (Գ.Տեր-Մկրտչյանի հետ) (1904), Ամիրդովլաթ Ամասիացու «Օգուտ բժշկութեան», «Դասընթաց հայոց մատենագրության պատմության» (1899), «Համառոտ պատմություն Ներսիսյան հոգևոր դպրոցի...» (1900) ուսումնասիրությունները:

Ստ.Մալխասյանցը անհերքելի փաստերով հիմնավորել է, որ Մովսես Խորենացին իրոք 5-րդ դարի հեղինակ է, իսկ նրա «Հայոց պատմությունը»՝ միանգամայն վստահելի սկզբնաղբյուր:

Ստ.Մալխասյանցի լեզվաբանական-բառարանագրական կարևոր աշխատություններից են «Գրաբարի հոլովումը, խոնարհումը և նախդիրները» (Թիֆլիս, 1891), «Գրաբարի համաձայնությունը» (Թիֆլիս, 1892): 1944-1945թթ. նա հրատարակել

է հայ բառարանագրության կոթողներից մեկը 120.000 բառ ընդգրկող «Հայերեն բացատրական բառարանը», որն իր տեսակի մեջ անգերազանցելի է: Քառահատոր այդ բառարանը 1946թ. արժանացել է ԽՍՀՄ Պետական մրցանակի:

Ստ.Մալխասյանցը զբաղվել է նաև թարգմանությամբ. Շեքսպիրից թարգմանել է «Լիր թագավոր» (1887), «Մակբեթ» (1892) ողբերգությունները, Գ.Էբերսից՝ «Մարդ եմ» վեպը (1898):

Վախճանվել է 1947թ. հուլիսի 21-ին Երևանում:

ՄԱԼԽԱՍՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՑՈԼԱԿԻ

Քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1948թ. մարտի 29-ին Հոկտեմբերյան (այժմ՝ Արմավիր) քաղաքում: 1965թ. ավարտել է Էջմիածնի շրջանի Ջրառատ գյուղի միջնակարգ դպրոցը, 1970թ.՝ ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը, 1973թ. Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի ասպիրանտուրան և նույն թվականին պաշտպանել թեկնածուական, 1983թ. դոկտորական ատենախոսություն: 1985թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Ա.Մալխասյանը 245 գիտական աշխատանքների հեղինակ է, այդ թվում՝ գյուտարարության 54 հեղինակային իրավունքի և «Ստանդարտացում, չափագիտություն, համապատասխանության հավաստում և որակի կառավարում» (Եր., 2001) բուհական ուսումնական ձեռնարկի:

1969-1970թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ օրգանական քիմիայի ինստիտուտի ավագ լաբորանտ, 1974թ.՝ կրտսեր գիտաշխատող, 1974-1993թթ.՝ «Նաիրիտ» գիտաարտադրական միավորման ավագ գիտաշխատող, լաբորատորիայի վարիչ, բաժնի պետ, 1993-2000թթ.՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Պարեն» գիտաարտադրական և նախագծային պետական ձեռնարկության տնօրեն, 2000-2002թթ. ՀՀ կառավարությանն առընթեր ստանդարտացման, սերտիֆիկացման և չափագիտության վարչության պետ, 2002-2003թթ. ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման փոխնախարար:

2003-2007թթ. Ա.Մալխասյանը եղել է ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր: 2001-ից դասախոսում է ԵՊՀ քիմիայի ֆա-

կուլտետում:

2007-ից ԵՊՀ ընդհանուր հարցերի գծով պրոռեկտորն է:

ՄԱԽՉԱՆՅԱՆ ՀԵՆՐԻԿ ՄԿՐՏՉԻ

Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1926թ. հունիսի 1-ին Թիֆլիսում: 1950թ. ավարտել է ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի անգլիական բաժինը:

1963թ. Հ.Մախչանյանը պաշտպանել է թեկնածուական, 1984-ին Կիևում՝ դոկտորական ատենախոսություն: 1986թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Աշխատել է Հայաստանի դպրոցներում որպես հայոց լեզվի և գրականության, անգլերենի ուսուցիչ, տնօրեն: Դասավանդել է հանրապետության բուհերում: 1964-ից մինչև կյանքի վերջն աշխատել է ԵՊՀ մանկավարժության ամբիոնում, իսկ 1987-1995թթ. եղել է այդ ամբիոնի վարիչը:

Հեղինակ է ավելի քան 200 գիտական հոդվածների, 7 մենագրության, 6 դասագրքի, մեթոդական ձեռնարկների: Առավել կարևոր են նրա «Հայ դրականության ուսուցման պատմություն (V-XX դարեր)» (Եր., 1979), «Հանուն ուսուցման բարձր որակի» (Եր., 1989), «Մանկավարժական մտորումներ» (Եր., 1991) մենագրությունները, Էդ.Ջրբաշյանի համահեղինակությամբ «Գրականագիտական բառարան»-ը (Եր., 1972), «Մանկավարժության ընդհանուր հիմունքներ» (Եր., 1997) բուհական ձեռնարկը:

Հ.Մախչանյանը եղել է «Սովետական մանկավարժ» ամսագրի պատասխանատու քարտուղար:

Նա Հայաստանի կրթական համակարգի վերաբերյալ դասախոսություններ է կարդացել 1978թ.՝ Սիրիայում, 1982թ. Բելգրադում, 1995թ.՝ Կալիֆորնիայում:

Հ.Մախչանյանը պարգևատրվել է «1941-1945թթ. Հայրենական մեծ պատերազմում հաղթանակի 40 տարին» և Խ.Աբովյանի անվան մեդալներով:

Վախճանվել է 2005թ. հուլիսի 28-ին Երևանում:

ՄԱՂԱՔՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳԵՎՈՐԳԻ

Երկրաբանահանքաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ վաստակավոր երկրաբան,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1914թ. ապրիլի 6-ին Թիֆլիսում: 1930թ. ընդունվել է Անդրկովկասի լեռնամետալուրգիական ինստիտուտի երկրաբանական-հետախուզական ֆակուլտետ: 1932թ. փոխադրվել է Լենինգրադի (այժմ՝ Սանկտ Պետերբուրգ) լեռնային ինստիտուտ, որն ավարտել է 1935թ.: 1934-1940թթ. ԽՍՀՄ ԳԱ տաջիկ-պամիրյան արշավախմբում աշխատել է ջոկատի պետ:

1937-1940թթ. սովորել է Լենինգրադի լեռնային ինստիտուտի ասպիրանտուրայում և 1940թ. պաշտպանել թեկնածուական ատենախոսություն:

1941-1942թթ. մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին և ծանր վիրավորվելուց հետո զորացրվել:

1942 թվականից Հ.Մաղաքյանն աշխատել է ՀԽՍՀ ԳԱ երկրաբանության ինստիտուտում. 1942-1947թթ. եղել ինստիտուտի օգտակար հանածոների բաժնի վարիչ, 1947-1957թթ.՝ դիտական աշխատանքների գծով փոխտնօրեն:

1948թ. Լենինգրադի լեռնային ինստիտուտում պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, և նույն տարում նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1959թ. Հ.Մաղաքյանն ընտրվել է ՀԽՍՀ V գումարման Գերագույն խորհրդի պատգամավոր, ԽՍՀՄ հանքաբանական ընկերության Հայկական բաժանմունքի նախագահ: 1962-1965թթ. վարել է երկրաբանության ինստիտուտի տնօրենի պաշտոնը: 1962-1968թթ. ՀԽՍՀ ԳԱ տեխնիկական գիտությունների բաժանմունքի, իսկ 1969-1982թթ. Երկրի մասին գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարն էր:

1950-1982թթ. Հ.Մաղաքյանն աշխատել է ԵՊՀ-ում: 1940-1962թթ. մանկավարժական գործունեություն է ծավալել նաև Լենինգրադի լեռնային ինստիտուտում: 1948թ. նա ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս:

Հ.Մաղաքյանը Հայաստանում մետաղների ծագումնաբանության և հանքաբան-երկրաբան-քիմիկոսների դպրոցի հիմնադիրն էր ու ղեկավարը: Նրա գիտական ղեկավարությամբ

են սկսվել տարածքային մետաղածագումնաբանական հետազոտությունները, կազմվել Փոքր Կովկասի ու Հայաստանի առաջին մետաղածագումնաբանական քարտեզները:

Միջազգային երկրաբանական համաժողովներում (Դանիա, Չեխոսլովակիա, Գերմանիա, Ճապոնիա, Կանադա) հանդես է եկել Հայաստանի երկրաբանությանը նվիրված զեկուցումներով:

Հեղինակ է ավելի քան 160 գիտական աշխատությունների: Նրա «Մետաղային հանքավայրեր» ձեռնարկը (Եր., 1958) եղել է ԽՍՀՄ բուհական հիմնական դասագրքերից:

1961թ. Հ.Մաղաքյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի և վաստակավոր երկրաբանի կոչումների, ԽՍՀՄ (1950) և ՀԽՍՀ (1976) Պետական մրցանակների, պարգևատրվել է «Կարմիր աստղ», Աշխատանքային կարմիր դրոշի, «Պատվո նշան» շքանշաններով:

Վախճանվել է 1982թ. նոյեմբերի 14-ին Երևանում:

ՄԱՄԻԿՈՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԼԵՎՈՆԻ

Գրականագետ,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1907թ. փետրվարի 20-ին Ղարաքիլիսայում (այժմ՝ Վանաձոր): 1921-1923թթ. աշխատել է որպես ցրիչ: 1928թ. ավարտել է Երևանի Խ.Աբովյանի անվան միջնակարգ դպրոցը: 1928-1929-ին աշխատել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Քերթ գյուղում որպես ուսուցիչ: 1932թ. ավարտել է ԵՊՀ պատմագրական ֆակուլտետը: 1933-1936թթ. սովորել է Լենինգրադի (այժմ՝ Սանկտ Պետերբուրգ) արվեստաբանության ինստիտուտի ասպիրանտուրայում:

1936-1949թթ. Հ.Մամիկոնյանը դասախոսել է ԵՊՀ-ում, միաժամանակ 1937-1941թթ. եղել բանասիրության ֆակուլտետի դեկան: 1940թ. Թբիլիսիի համալսարանում պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1941-1948թթ. եղել է «Սովետական Հայաստան» օրաթերթի խմբագիր, 1948-1951թթ. ՀԿԿ Կենտկոմի պրոպագանդայի և ագիտացիայի, 1951-1953թթ. գրականության և արվեստի բաժնի վարիչ,

1953-1954թթ. ՀԽՍՀ ԳԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն, 1953-1957թթ.՝ ԵՊՀ ժուռնալիստիկայի ամբիոնի վարիչ, 1957-ից՝ արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչ և միաժամանակ 1957-1962թթ.՝ ռոմանագերմանական լեզուների ու գրականության ֆակուլտետի դեկան:

1967թ. Հ.Մամիկոնյանը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1969թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Հեղինակ է գիտական բազմաթիվ հոդվածների և մի շարք գրքերի, որոնցից հիշարժան են՝ «Արևմտյան Եվրոպայի վերածնության դարաշրջանի դրականության պատմություն» (պրակ 1-2, Եր., 1939-1940), «Սովետական գրականության պարտիականության համար» (Եր., 1949), «Արտասահմանյան գրականության պատմություն» (Եր. 1957), «Մարդը և նրա կերպարը գրականության մեջ» (Եր., 1966) գրքերը: Համահեղինակ է «Արևմտյան Եվրոպայի գրականության պատմություն» (պրակ 1-3, Եր., 1934-1936) աշխատության:

1965թ. Հ.Մամիկոնյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման:

Վախճանվել է 1970թ. հոկտեմբերի 30-ին Երևանում:

ՄԱՅԻԼՅԱՆ ՌԱՖԻԿ ԱՎԱԳԻՄԻ

Կենդանաբան,
կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1927թ. մարտի 17-ին Լեռնային Ղարաբաղի Հողեր գյուղում: 1950թ. ավարտելով Ադրբեջանի պետական համալսարանի կենսաբանական ֆակուլտետը, Ռ.Մայիլյանն ընդունվել է նույն ֆակուլտետի ասպիրանտուրա: Թեկնածուական ատենախոսությունը պաշտպանելուց հետո մինչև 1957թ. եղել է ՀԽՍՀ ԳԱ Սևանի հիդրոբիոլոգիական կայանի ավագ գիտաշխատող: Այնուհետև տեղափոխվել է Բաքու, որտեղ մինչև 1981թ. աշխատել է Թառափային տնտեսությունների համամիութենական գիտահետազոտական ինստիտուտի մասնաճյուղում՝ սկզբում ավագ գիտաշխատողի, այնուհետև բաժնի վարիչի, իսկ 1965-1980թթ.՝ տնօրենի պաշտոնում: Այդ շրջանում Ռ.Մայիլյանի գիտահետազոտական աշխատանքներն ուղղված են եղել Կասպից ծովում թառափայինների պաշարների պահ-

պանման ու ընդլայնման գիտատեխնիկական միջոցառումների մշակմանը:

1968թ. Ռ.Մայիլյանը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1977թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1981թ. նա տեղափոխվել է Երևան և կազմակերպել լաբորատորիա, որը զբաղվել է Հայաստանի ջրամբարների ձկնային պաշարների պահպանության, համալիր վերարտադրության և ռացիոնալ օգտագործման հարցերի մշակմամբ: 1983-1993թթ. Ռ.Մայիլյանը եղել է ԵՊՀ կենդանաբանության ամբիոնի վարիչ: Համալսարանում աշխատելու տարիներին նա մշակել է Հայաստանում թառափաձկների ապրանքային աճեցման կենսատեխնիկա և իրագործել դրա արտադրական փորձարկման աշխատանքները:

Ռ.Մայիլյանը վախճանվել է 2000թ. փետրվարի 6-ին Վարշավայում:

ՄԱՆԱՍՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍԱՐԳՍԻ

Փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

Ծնվել է 1940թ. սեպտեմբերի 7-ին Բաքվում: 1957թ. ավարտել է ԼՂՀ Ասկերանի շրջանի Ալեքտարանոց գյուղի միջնակարգ դպրոցը, 1962թ.՝ Ադրբեջանի մանկավարժական ինստիտուտի պատմաբանության ֆակուլտետը: 1962-1966թթ. Ա.Մանասյանն աշխատել է Բաքվի «Կոմունիստ» (Հայերեն) թերթում որպես լրագրող: 1967-1969թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ: 1971թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1970-1983թթ. եղել է նույն ինստիտուտի ավագ գիտաշխատող, 1983-1986թթ.՝ դոցենտ: 1986թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, իսկ 1989-ին նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1992-2003թթ. Ա.Մանասյանը եղել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի ամբիոնի վարիչ: 2003-ից ԵՊՀ տեսական փիլիսոփայության և տրամաբանության ամբիոնի վարիչն է: 2006թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ:

Ա.Մանասյանը հեղինակ է 75 հոդվածի, 10 մենագրության, որոնցից առավել կարևոր են՝ “Проблема развития научного

знания” (Ер., 1973), “Методологические принципы объективности научного знания и единства науки” (Ер., 1984), «Գիտություն և աշխարհայացք» (Եր., 1977), “Карабахский конфликт: ресурсы правового подхода” (Ер., 1997), «Ղարաբաղյան ազատամարտը հայոց քաղաքական գիտակցության մեջ» (Եր., 2003) գրքերը:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 4 ատենախոսություն:

2000թ. Ա.Մանասյանը պարգևատրվել է ԼՂՀ «Վաչագան Բարեպաշտ» մեդալով:

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ ՄԱՆՈՒԿԻ

Մեխանիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1911թ. օգոստոսի 15-ին Արևմտյան Հայաստանի Մոկս ավանում: Մեծ եղեռնի տարիներին կորցնելով հարազատներին՝ հոր հետ ապաստան է գտել Երևանում: 1930թ. ավարտել է Երևանի մանկավարժական տեխնիկումը, այնուհետև ընդունվել ԵՊՀ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետ, որն ավարտել է 1936թ.: Մ.Մանուկյանն ուսումը շարունակել է նախ՝ ԵՊՀ, ապա՝ Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի ասպիրանտուրայում: 1940թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և աշխատանքի անցել ԵՊՀ մեխանիկայի ամբիոնում:

1959-ից մինչև կյանքի վերջը Մ.Մանուկյանը եղել է մեխանիկայի ամբիոնի վարիչ, իսկ 1961-1965թթ.՝ նաև մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետի դեկան: 1965թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: Նույն թվականին նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Մ.Մանուկյանը հեղինակ է ավելի քան 40 գիտական աշխատանքների, այդ թվում՝ “Кручение тел с учетом ползучести” (Ер., 1972) և «Հանրահաշվական հավասարումներ» (Եր., 1978) մենագրությունների, համահեղինակ՝ «Հակադարձ եռանկյունաչափական խնդիրներ» (Եր., 1972) ձեռնարկի և «Տեսական

մեխանիկայի խնդիրների լուծման ուղեցույց» (Եր., 1969-2001) քառահատոր ժողովածուի:

Նա մասնակցել է միութենական և միջազգային մի շարք գիտաժողովների: Եղել է տեսական մեխանիկայի դծով միութենական գիտամեթոդական խորհրդի անդամ:

1970թ. Մ.Մանուկյանն արժանացել ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է «Աշխատանքային արիության համար» և այլ մեդալներով:

Վախճանվել է 1976թ. օգոստոսի 11-ին Երևանում:

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՌԱՖԱԵԼ ԱՐՇԱԿԻ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1909թ. հոկտեմբերի 25-ին Նախիջևանի Զնաբերդ գյուղում: 1918թ. Մանուկյանների ընտանիքը տեղափոխվել է Երևան: Ռ.Մանուկյանը, զրկվելով ծնողներից, տասը տարի ապաստանել է մանկատներում: 1928թ. ավարտել է Լենինականի (այժմ՝ Գյումրի) մանկավարժական տեխնիկումը և նշանակվել գյուղի ուսուցիչ: 1930-1931թթ. աշխատել է ՀԼԿԵՄ համակարգում:

1935թ. Ռ.Մանուկյանն ավարտել է ԵՊՀ պատմության ֆակուլտետը և ուսումը շարունակել ԵՊՀ, ապա 1937թ. Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի ասպիրանտուրայում:

1938-1940թթ. ծառայել է Կարմիր բանակում, զորացրվելուց հետո շարունակել ուսումնառությունը ասպիրանտուրայում: 1941թ. գիտական գործուղման է եղել Թիֆլիսում, Բաքվում և Երևանում:

1941-1942թթ. Ռ.Մանուկյանը եղել է ԵՊՀ ավագ դասախոս, ապա մինչև 1952թ. ծառայել բանակում: 1952-ից մինչև կյանքի վերջը աշխատել է ԵՊՀ ԽՄԿԿ պատմության ամբիոնում: 1960-1966թթ. եղել է նույն ամբիոնի վարիչի տեղակալ:

1947թ. Ռ. Մանուկյանը պաշտպանել է թեկնածուական, 1973թ՝ դոկտորական ատենախոսություն: 1956թ. նրան շնորհվել է դոցենտի, 1975թ. պրոֆեսորի կոչում:

Հեղինակ է “Роль русского народа в деле укрепления дружбы народов СССР” (Ер., 1954), “Революционное

движение в Кавказской Армии в годы первой русской революции" (Ер., 1957), "Революционная работа большевиков в Кавказской Армии (февраль 1917г.-февраль 1918г.)" (Ер., 1969), "Большевики Армении в годы первой мировой войны и в период февральской буржазно-демократической революции" (Ер., 1963), "Октябрьская Социалистическая Революция и победа Советской власти в Армении" (Ер., 1960) աշխատությունների:

Ռ.Մանուկյանը պարգևատրվել է «Կովկասի պաշտպանության համար» (1944), «1941-1945թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» (1945), «Սովետական բանակի և նավատորմի 30 տարին» (1951), «Մարտական ծառայության համար» (1951), «1941-1945թթ. Հայրենական մեծ պատերազմում հաղթանակի 20 տարին» (1965), «Աշխատանքային արիության համար» (1970) մեդալներով և ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատվոգրով (1972):

Վախճանվել է 1981թ. փետրվարի 2-ին Երևանում:

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀԵՆՉԵԼ ԳԵՐԱՍԻՄԻ

Փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1944թ. մարտի 24-ին Իջևանի շրջանի Աչաջուր գյուղում: 1964թ. ավարտել է գյուղի միջնակարգ դպրոցը: Բարձրագույն կրթությունն ստացել է ԵՊՀ պատմության ֆակուլտետում 1964-1968թթ.: Պատմական գիտությունների թեկնածու է 1976 թվականից, փիլիսոփայական գիտությունների դոկտոր 1993-ից, պրոֆեսոր՝ 2006-ից:

1968-1976թթ. աշխատել է ԵՊՀ հնագիտության, ազգագրության և աղբյուրագիտության ամբիոնում որպես ասիստենտ, 1976-ից՝ ԵՊՀ գիտական կոմունիզմի ամբիոնի դոցենտ, 2001-2008թթ. եղել է ԵՊՀ քաղաքագիտության ամբիոնի վարիչ: 2008-ից նույն ամբիոնի պրոֆեսոր է:

Հ.Մանուչարյանը հեղինակ է 5 մենագրության և ավելի քան 40 հոդվածի: Կարևոր աշխատություններն են «Պողոս Տարոնացի» (Եր., 1982), «Գիտական կոմունիզմի ծագումն ու զարգացումը» (Եր., 1985), «Սոցիալիստական հայ ազգի էթնոտարբերիչ հատկանիշները» (Եր., 1988), «Հայության գոյապահպանության գաղափարախոսությունը» (Եր., 1995), «Դրվագներ հայ քաղաքական մտքի պատմության» (Եր., 2002):

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍԻՄՈՆԻ

Լեզվաբան,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1924թ. մարտի 15-ին Գորիսի շրջանի Քարաշեն գյուղում: 1938թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը, 1941թ.՝ Գորիսի մանկավարժական ուսումնարանը, 1949թ.՝ ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժինը:

Ալ.Մարգարյանը 1950-ից մինչև կյանքի վերջն աշխատել է ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի ամբիոնում որպես դասախոս, ապա՝ դոցենտ, 1970-ից՝ պրոֆեսոր:

1953թ. նա պաշտպանել է թեկնածուական, 1967թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1970թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Կարևոր մենագրություններն ու դասագրքերն են «Արդի հայերենի կապերը» (Եր., 1955), «Հայերենի հարադիր բայերը» (Եր., 1966), «Հայերենի հոլովները» (Եր., 2000), «Ժամանակակից հայոց լեզու» (Եր., 1990, 1993, 1997), «Հայոց լեզվի քերականություն. ձևաբանություն» (Եր., 2004):

Ալ.Մարգարյանը վախճանվել է 2001թ. դեկտեմբերի 17-ին Երևանում:

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ ԲԱԳՐԱՏԻ

Փիլիսոփայական գիտությունների դոկտոր, դոցենտ



Ծնվել է 1938թ. օգոստոսի 4-ին Թբիլիսիում: Ավարտելով տեղի միջնակարգ դպրոցը՝ 1957թ. ընդունվել է ԵՊՀ ռուս բանասիրության ֆակուլտետ: 1962թ. Էդ.Մարգարյանն աշխատել է Աբովյանի շրջանի Գառնի գյուղի միջնակարգ դպրոցում որպես ուսուցիչ: 1963-1966թթ. սովորել է Երևանի Վ.Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների պետական մանկավարժական ինստիտուտի ասպիրանտուրայում, ավարտելուց հետո աշխատանքի անցել նույն ինստիտուտի փիլիսոփայության ամբիոնում որպես դասախոս, 1967-ից ավագ դասախոս: 1971 թվականից եղել է ԵՊՀ դիալեկտիկական մատերիալիզմի և տրամաբանության ամբիոնի դասախոս:

1973թ. Էդ.Մարգարյանը պաշտպանել է թեկնածուական, 1991թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1976թ. նրան շնորհվել է դոցենտի կոչում: 1986-ից մինչև կյանքի վերջը նա եղել է ԵՊՀ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և հոգեբանության ֆակուլտետի դեկան, 1992-ից՝ փիլիսոփայության և տրամաբանության ամբիոնի պրոֆեսոր:

Էդ.Մարգարյանը հեղինակ է գիտական բազմաթիվ հոդվածների, որոնք վերաբերում են լեզվի փիլիսոփայությանը, և "Философско-методологические проблемы анализа языка науки" (Ер., 1987) մենագրության:

Նա զեկուցումներով հանդես է եկել միջազգային դիտաժողովներում (Ռուսաստան, Բելգիա, Ֆինլանդիա, Գերմանիա):

Վախճանվել է 1998թ. օգոստոսի 15-ին Երևանում:

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏ ԳԵՎՈՐԳԻ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1950թ. հոկտեմբերի 10-ին Արարատի շրջանի Այգևան գյուղում: 1967թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը, 1972թ. ԵՊՀ պատմության ֆակուլտետը: 1973-1976թթ. սովորել է ՀԽՍՀ ԳԱ արևելագիտության ինստիտուտի ասպիրանտուրայում:

1973-1996թթ. Հ.Մարգարյանը եղել է նույն ինստիտուտի կրտսեր, ավագ, ապա՝ առաջատար գիտաշխատող, 1996-2000թթ. ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի դոցենտ, 2000-2007թթ. պրոֆեսոր: 2007-ից ԵՊՀ Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնի վարիչն է:

1979թ. պաշտպանել է թեկնածուական, 1996-ին՝ դոկտորական ատենախոսություն: 1989թ. նրան շնորհվել է դոցենտի, 2003թ. պրոֆեսորի կոչում:

Հ.Մարգարյանը հեղինակ է ավելի քան 30 հոդվածի, դասագրքերի, «Հյուսիսային Հայաստանի և Վրաստանի ԺԲ դարի պատմության մի քանի հարցեր» (Եր., 1980)» մենագրության: Նրա աշխատասիրությամբ է լույս տեսել «Մխիթար Անեցի, Մատեան աշխարհավէպ հանդիսարանաց» (Եր., 1983) գիրքը: Համահեղինակ է «Հայոց պատմություն» (Եր., 2005) և «Հայաստանի հարակից երկրների պատմություն» (Եր.,

1992) դպրոցական դասագրքերի:

1986թ. Հ.Մարգարյանը պարգևատրվել է «Աշխատանքային արիության համար» մեդալով:

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՀՐԱՆՈՒՇ ԱՐԱՅԻ

Լեզվաբան,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ բարձրագույն դպրոցի վաստակավոր գործիչ

Ծնվել է 1921թ. նոյեմբերի 8-ին Թբիլիսիում: 1940թ. ավարտել է Երևանի թիվ 8 դպրոցը, 1945թ.՝ ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի ռուսաց լեզվի և գրականության բաժինը: 1949-1952թթ. Հ.Մարգարյանը ուսումնառությունը շարունակել է Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի ասպիրանտուրայում: 1952թ. նա պաշտպանել է թեկնածուական, իսկ 1975թ. դոկտորական ատենախոսություն: 1959թ. նրան շնորհվել է դոցենտի, 1978թ. պրոֆեսորի կոչում:

1945-1949թթ. աշխատել է ԵՊՀ ռուսաց լեզվի ամբիոնում որպես դասախոս, 1952-ից՝ ռուսաց լեզվի տեսության ամբիոնում՝ ավագ դասախոս, 1959-ից՝ դոցենտ, 1978-ից՝ պրոֆեսոր, 1980-1990թթ.՝ ամբիոնի վարիչ, 1997-2005թթ.՝ պրոֆեսոր-խորհրդական:

Հ.Մարգարյանը հեղինակ է շուրջ 60 գիտական հրապարակումների, որոնցից առավել կարևոր են «Իմաստային հակազդեցության տիպերը ձևակազմության և բառակազմության ոլորտում» (Եր., 1970), «Ռուսերենի ձևաբանության ակնարկ հայերենի ձևաբանության զուգադրությամբ» (ռուս., Եր., 2007), «Իմաստային խոչընդոտները բայական ձևակազմության մեջ» (Եր., 1964), «Քերականացում և բառայնացում» (Եր., 1969), «Փոխակերպիչները ռուսերենում և հայերենում» (Եր., 1981) աշխատությունները:

1981թ. Հ.Մարգարյանն արժանացել է ՀԽՍՀ բարձրագույն դպրոցի վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է «1941-1945թթ. Հայրենական մեծ պատերազմի ժամանակ աշխատանքային արիության համար» մեդալով (1945), ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատվոգրով (1970):

Վախճանվել է 2005թ. հունիսի 6-ին Երևանում:

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՇԱՎԱՐՇ ՍԵԴՐԱԿԻ

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1930թ. հունիսի 16-ին Իջևանի շրջանի Սևքար գյուղում: 1947թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը, 1950թ. Երևանի վիճակագրական տեխնիկումը, 1955թ.՝ ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետը: 1955-1958թթ. եղել է ԵՊՀ քաղաքատնտեսության ամբիոնի ասիստենտ:

1961թ. Շ.Մարգարյանը պաշտպանել է թեկնածուական, 1976թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1977թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1959-1974թթ. նա ՀԽՍՀ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտում ղեկավարել է գիտքարտուղարի, այնուհետև քաղաքատնտեսության բաժնի վարիչի պաշտոն, ղեկավարել Հանրապետության միջճյուղային հաշվեկշիռները: 1974-1979թթ. աշխատել է ԵՐՊԻ-ում որպես քաղաքատնտեսության ամբիոնի վարիչ: 1979-1984թթ. եղել է ԵԺՏԻ ռեկտոր, 1984-1995թթ.՝ ԵՊՀ քաղաքատնտեսության ամբիոնի վարիչ, 1995-2000թթ. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրեն:

Հեղինակ է շուրջ 80 գիտական ուսումնասիրությունների, այդ թվում՝ 7 մենագրության, որոնցից առավել կարևոր են «Հայկական ՍՍՌ մեքենաշինության մասնագիտացումն ու կոոպերացումը» (Եր., 1961), «Հայկական ՍՍՀ ժողովրդական տնտեսության միջճյուղային կապերը» (Եր., 1970), «Զարգացած սոցիալիզմի ընդլայնված վերարտադրության բնորոշ գծերը» (Եր., 1979) գրքերը:

Շ.Մարգարյանը զեկուցումներով հանդես է եկել միջազգային գիտաժողովներում (ԳՖՀ, Իսպանիա, Հունաստան, Սիրիա, ՌԴ և այլն):

Նրա ղեկավարությամբ և խորհրդատվությամբ թեկնածուական ու դոկտորական ատենախոսություններ են պաշտպանել շուրջ երկու տասնյակ մասնագետներ:

Շ.Մարգարյանը պարգևատրվել է «Աշխատանքային վառք»-ի մեդալով և ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատվոգրերով:

Վախճանվել է 2000թ. հոկտեմբերի 14-ին Իջևանում:

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՇԻՐԱԶ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ

Քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1947թ. ապրիլի 14-ին Գորիսի շրջանի Քարաշեն գյուղում: 1965թ. ավարտել է Երևանի թիվ 19 միջնակարգ դպրոցը, ընդունվել ԵՊՀ քիմիայի ֆակուլտետ: 1970-1974թթ. սովորել է Մոսկվայի քիմիական ֆիզիկայի ինստիտուտի ասպիրանտուրայում: 1975թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1989թ. նրան շնորհվել է դոցենտի կոչում:

1974-1977թթ. Շ.Մարգարյանն աշխատել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի ֆիզիկական քիմիայի ամբիոնում որպես կրտսեր գիտաշխատող, 1977-1989թթ.՝ ավագ գիտաշխատող: 1989թ. Դոնի Ռոստովի ֆիզիկական և օրգանական քիմիայի ինստիտուտում պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 2000-ից նա ֆիզիկական քիմիայի ամբիոնի վարիչն է: 2002թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 2005-ից ղեկավարում է նաև ֆիզիկական քիմիայի ամբիոնին կից բազային գիտահետազոտական լաբորատորիան:

Շ.Մարգարյանը հեղինակ է ավելի քան 170 գիտական աշխատությունների, այդ թվում՝ «Էլեկտրոնային պարամագնիսական ռեզոնանսի և միջուկային մագնիսական ռեզոնանսի հիմունքներ» (Եր., 1989) մենագրության և «Մոլեկուլային սպեկտրոսկոպիա» (Եր., 2003) ուսումնական ձեռնարկի:

Նրա հիմնական գիտական ուղղություններն են քիմիական և կենսաբանական համակարգերի ֆիզիկաքիմիական հետազոտություն սպեկտրադիտական և տեսական մեթոդներով, մոլեկուլային փոխազդեցությունների ուսումնասիրություն:

Շ.Մարգարյանի ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 6 ատենախոսություն: Նա գործուղումներով եղել է մի շարք երկրների գիտաուսումնական կենտրոններում (Շվեյցարիա, Իտալիա, Գերմանիա, ԱՄՆ, Անգլիա):

2002թ. Շ.Մարգարյանն արժանացել է ՀՀ Նախագահի մրցանակի:

ՄԱՐԿՈՍՅԱՆ ՍՈՒՐԵՆ ՍԻՍԱԿԻ

Պատմաբան, թարգմանիչ,
պրոֆեսոր



Ծնվել է 1898թ. դեկտեմբերի 25-ին Ղարաքիլիսայում (այժմ՝ Վանաձոր): Սկզբնական կրթությունն ստացել է տեղի դպրոցում: Այնուհետև սովորել է Գանձակի 6-դասյա դպրոցում և երկամյա մանկավարժական դասընթացներում: Բարձրագույն կրթությունը ստացել է Մոսկվայում, ապա աշխատել է Հայրենի գյուղի դպրոցում, իսկ 1919-1920թթ. Թիֆլիսի Հովնանյան օրիորդաց դպրոցում որպես պատմության ուսուցիչ: 1921-1930թթ. Ալեքսանդրապոլում, Ղարաքիլիսայում և Երևանում զբաղվել է մանկավարժական գործունեությամբ:

1930-1933թթ. Ս.Մարկոսյանը ԵՊՀ-ում դասավանդել է ընդհանուր պատմություն և օժանդակ առարկաներ, միաժամանակ՝ 1936-1938թթ. վարել ԵՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի պաշտոն:

Հեղինակ է բազմաթիվ հոդվածների և մենագրությունների: Առանձնապես արժեքավոր են նրա «Ագրարային հարաբերությունները Արարատյան երկրում» (Եր., 1958) և «Արևմտահայության վիճակը 19-րդ դարի վերջերին» (Եր., 1968) աշխատությունները: Ս.Մարկոսյանը զբաղվել է նաև պատմագիտական, դեղարվեստական գրքերի ու դասագրքերի թարգմանությամբ:

Ս.Մարկոսյանը վախճանվել է 1967թ. նոյեմբերի 12-ին Երևանում:

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԱՂԱՇ ՆԱՐԻՆԲԵԿԻ

Ժուռնալիստ,
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Ծնվել է 1966թ. դեկտեմբերի 9-ին Էջմիածնի շրջանի Դաշտ գյուղում: 1983թ. ավարտել է Աշտարակի Ն.Սիսակյանի անվան միջնակարգ դպրոցը, նաև՝ «Պիոներ կանչ» թերթի խմբագրությանը կից «Շալիղ» պատանի ժուռնալիստի դպրոցը:

1984թ. Ն.Մարտիրոսյանն ընդունվել է ԵՊՀ բանասիրության ֆակուլտետ: 1985-1987թթ. ծառայել է խորհրդային բանակում: Զորացրվելուց հետո ուսումնառությունը շարունա-

կել է ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի նորաբաց ժուռնալիստիկայի բաժնում:

1990-1991թթ. եղել է «Երևանի Համալսարան» թերթի հաստիքային աշխատակից: 1991թ. ավարտելով ԵՊՀ ժուռնալիստիկայի բաժինը՝ աշխատել է Էջմիածնի «Վաղարշապատ» թերթում որպես թղթակից, ապա՝ բաժնի վարիչ:

1991-1994թթ. սովորել է ԵՊՀ ասպիրանտուրայում: 1994-ին անցել է դասախոսական աշխատանքի ԵՊՀ-ում: Նույն թվականին նաև նշանակվել է Հայաստանի պետական հեռուստաընկերության «Լրաբեր» լրատվական-վերլուծական ծրագրի պատասխանատու խմբագիր:

1997-ից Ն.Մարտիրոսյանը Հայաստանի ժուռնալիստների միության անդամ է: 2007թ. «Երևան» հեռուստաընկերությունում հիմնադրել և վարել է «Դիտակ» հասարակական-քաղաքական հաղորդաշարը:

1999թ. նշանակվել է ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի դեկանի տեղակալ:

2002թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 2007թ. նրան շնորհվել է դոցենտի կոչում:

2007-2008թթ. եղել է ժուռնալիստիկայի ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, 2008-ից նույն ֆակուլտետի դեկանն է:

Ն.Մարտիրոսյանը հեղինակ է 12 գիտական հոդվածների և «Հայրենիք» ամսագրի հրապարակախոսությունը 1920-1930թթ.» (Եր., 2001) ուսումնասիրության:

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՎԱԼԵՐԻ ՀԱԿՈԲԻ

Մաթեմատիկոս,
Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

Ծնվել է 1949թ. փետրվարի 8-ին Կիրովաբադում: 1966թ. ավարտել է տեղի թիվ 9 միջնակարգ դպրոցը, 1971թ. ԵՊՀ մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետը:

1974-1992թթ. Վ.Մարտիրոսյանը եղել է ՀՀ ԳԱԱ մաթեմատիկայի ինստիտուտի գիտաշխատող: 1978թ. պաշտպանել է թեկնածուական, 1989թ.՝ դոկտորական ատենախոսություն:

2002թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1992-2000թթ. եղել է ԵՊՀ ֆունկցիաների տեսության ամբիոնի պրոֆեսոր, իսկ 2000-ից նույն ամբիոնի վարիչն է: 2006թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ:

Վ.Մարտիրոսյանը հեղինակ է 36 գիտական հոդվածների, համահեղինակ՝ «Աստիճանային շարքեր՝ անալիտիկ շարունակություն և եզակիությունների տեղայնացում» (ռուս., Մ 1991) մենագրության: Նրա գիտական հետազոտությունների հիմնական ուղղություններն են՝ մոտավորությունների տեսություն կոմպլեքս տիրույթում, անալիտիկ ֆունկցիաների վայերշտրասյան տեսություն (անալիտիկ շարունակություն, եզակիությունների տեղայնացում, միակության խնդիրներ):

ՄԵԴՆԻԿՅԱՆ ԳՐԻԳՈՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ

Դեղաբան,

բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,

Ծնվել է 1891թ. սեպտեմբերի 26-ին Մոզդոկում: Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Տարտուի համալսարանի բժշկական ֆակուլտետի քիմիա-դեղագործական բաժին: 1918թ. մեկնել է Պյատիգորսկ, որտեղ մասնակցել է խորհրդային իշխանության համար մղված պայքարին: Այնուհետև մինչև 1922թ. աշխատել է Թիֆլիսում:

Գ.Մեդնիկյանը եռանդուն մասնակցություն է ունեցել ԵՊՀ բժշկական ֆակուլտետի կազմակերպման գործում: 1922թ. հիմնադրել է դեղաբանության ամբիոնը և մինչև 1935թ. ղեկավարել այն: Նրա նախաձեռնությամբ ամբիոնին կից ստեղծվել են քիմիա-դեղագործական դասընթացներ և ապա՝ տեխնիկում, որը երկար ժամանակ ղեկավարել է: Նա հիմնադրել է նաև ԵՊՀ ռազմական քիմիայի և թունաբանության, ինչպես նաև պոլիտեխնիկական ինստիտուտի ընդհանուր քիմիայի ամբիոնները: Համատեղության կարգով մի քանի տարի ղեկավարել է Երևանի անասնաբուծական-անասնաբուժական ինստիտուտի դեղաբանության ամբիոնը: 1935թ. դարձել է բժշկական գիտությունների դոկտոր: Նույն թվականին նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1935-1957թթ. Գ.Մեդնիկյանն աշխատել է Լենինգրադում

(այժմ՝ Սանկտ Պետերբուրգ): 1958թ. վերադարձել է Երևան և նշանակվել արյան փոխներարկման ինստիտուտի տնօրենի տեղակալ, իսկ այնուհետև՝ բժշկական ինստիտուտի գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր:

1958-1965թթ. Գ.Մեդնիկյանը եղել է ՀԽՍՀ ԳԱ նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտի ավագ դիտաշխատող, 1965-1969թթ. բժիշկների վերապատրաստման ինստիտուտի դեղաբանության և դեղագործության ամբիոնի վարիչ:

Հեղինակ է շուրջ 50 գիտական աշխատությունների, որոնք նվիրված են դեղաբույսերի և ԽՍՀՄ-ում սինթեզված դեղանյութերի ուսումնասիրմանը: Դրանցից կարևոր են հատկապես օրգանիզմի վրա ֆտորի ազդեցության մեխանիզմի բացահայտմանը նվիրված աշխատանքները:

Նա եղել է Հայաստանի դեղագործների գիտական ընկերության պատվավոր նախագահ և համամիութենական գիտադեղագործական ընկերության վարչության անդամ:

Վախճանվել է 1974թ. փետրվարի 16-ին Երևանում:

ՄԵԼԻՔ-ԱԴԱՄՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ

Բժիշկ,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1885թ. օգոստոսի 28-ին Շուլյավերում: Սկզբնական կրթությունն ստացել է ծննդավայրում, իսկ միջնակարգը՝ Թիֆլիսում: 1906թ. գիմնազիան ավարտելուց հետո ընդունվել է Խարկովի համալսարանի բժշկական ֆակուլտետ: Ա.Մելիք-Ադամյանը համալսարանն ավարտելուց հետո 1911թ. աշխատանքի է անցել նույն համալսարանի ֆակուլտետային թերապիայի կլինիկայում որպես օրդինատոր: 1916թ. նշանակվել է հոսպիտալային թերապիայի կլինիկայի ասիստենտ այդ պաշտոնում մնալով մինչև 1925թ.: Դասախոսություններ է կարդացել ներքին ախտաբանության և կլինիկական ռեցեպտուրայի վերաբերյալ: Գիտամանկավարժական աշխատանքի հետ մեկտեղ մասնակցել է առողջապահության կազմակերպման և Խարկովի բժշկական ինստիտուտի վերակազմավորման գործին:

1925թ. նա հրավիրվել է ԵՊՀ և նշանակվել բժշկական ֆակուլտետի ներքին հիվանդությունների կլինիկայի վարիչ: Հա-

մալսարանում աշխատելու տարիներին մեկնել է արտասահման գիտական գործուղման, եղել Փարիզում, մոտիկից ծանոթացել Ֆրանսիայի բժշկադիտության նվաճումներին:

1936-1937թթ. Ա.Մելիք-Ադամյանը եղել է բժշկական ինստիտուտի տնօրենի տեղակալ, ապա՝ տնօրեն: Մեծ աշխատանք է ծավալել հատկապես Հայրենական պատերազմի տարիներին որպես շարժական հոսպիտալների խորհրդատու և Հանրապետության զինվորական կոմիսարիատի ռազմաբժշկական հանձնաժողովի նախագահ:

Նրա գրչին են պատկանում շուրջ 65 գիտական աշխատություններ, այդ թվում՝ 3 մենագրություն, որոնք նվիրված են Հայաստանում կլիմայաբուժության, խաղողաբուժության և այլ հարցերի: Ուսումնասիրություններից հատկապես արժեքավոր են երկրամասային ախտաբանությանը, սրտամկանի ինֆարկտի ախտորոշմանը, ներքին օրգանների հիվանդությունների և ռևմատիզմի բուժմանը վերաբերող հետազոտությունները:

Ա.Մելիք-Ադամյանը եղել է ներքին հիվանդությունների համամիութենական գիտական ընկերության վարչության անդամ, առժողկոմատի գիտաբժշկական խորհրդի նախագահ, թերապևտիկ և էնդոկրինոլոգիական մի շարք համագումարների ու գիտաժողովների կազմակերպիչ:

Նա մեծ վաստակ ունի Հայաստանում առողջապահական աշխատանքների կազմակերպման և բարձրորակ մասնագետների պատրաստման գործում:

1940թ. արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման:

Վախճանվել է 1949թ. մարտի 10-ին Երևանում:

Երևանի փողոցներից մեկը և այն կլինիկան, որտեղ երկար տարիներ նա աշխատել է, կոչվում են Ա.Մելիք-Ադամյանի անունով:



ՄԵԼԻՔ-ԲԱԽՇՅԱՆ ՍՏԵՓԱՆ ՏԻԳՐԱՆԻ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1924թ. ապրիլի 15-ին Նախիջևանի Շահկերտ (Ղազանչի) գյուղում: 1945թ. ավարտել է ԵՊՀ պատմության ֆակուլտետը և ընդունվել ասպիրանտուրա:

1949թ. Ստ.Մելիք-Բախշյանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և աշխատանքի անցել համալսարանի Հայոց պատմության ամբիոնում որպես դոցենտ: 1965թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1969թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: Նա շուրջ հիսուն տարի դասավանդել է ԵՊՀ-ում, ինչպես նաև Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտում:

Հեղինակ է մի շարք մենագրությունների, որոնցից առավել կարևոր են՝ «Սոցիալական շարժումները Հայաստանում V դարում» (Եր., 1950), «Պավլիկյան շարժումը Հայաստանում» (Եր., 1953, ռուս.՝ 1955), «Հայաստանը VII-IX դարերում» (Եր., 1968):

Ստ.Մելիք-Բախշյանը լուրջ վաստակ ունի նաև բուհական դասագրքերի և ուսումնական ձեռնարկների ստեղծման գործում: Նա համահեղինակ է «Հայ ժողովրդի պատմություն» բուհական դասագրքի, որն ունեցել է մի քանի հրատարակություն (Եր., 1958-1960, 1963, 1975): Հեղինակ է նաև «Հայկական հնագրություն» (Եր., 1978) և «Հայոց պատմության աղբյուրագիտություն» (Եր., 1979, 1989, 1996) բուհական դասագրքերի:

Հայագիտական մնայուն արժեք են «Հայոց պաշտամունքային վայրեր» (Եր., 2009) հանրագիտարանային բառարանը և Թ.Հակոբյանի ու Հ.Բարսեղյանի համահեղինակությամբ ստեղծած հինգհատորյա «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանը», որը 2003թ. արժանացել է ՀՀ Նախագահի մրցանակի:

Ստ.Մելիք-Բախշյանը վախճանվել է 1998թ. մարտի 28-ին Երևանում:

ՄԵԼԻՔ-ԽԱՉԱՏՐՅԱՆ ՋՈՒԼԻԵՏԱ ՀԱՅԿԻ

Բուսաբան,
կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1929թ. նոյեմբերի 19-ին Երևանում: 1947թ. ավարտել է Երևանի թիվ 8 դպրոցը, 1952թ. ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետը: 1952-1983թթ. աշխատել է նույն բուհի բուսաբանության ամբիոնում որպես ավագ լաբորանտ,

ասիստենտ, ավագ դասախոս, դոցենտ, պրոֆեսոր:

1960թ. Ջ.Մելիք-Խաչատրյանը պաշտպանել է թեկնածուական, իսկ 1972թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1964թ. նրան շնորհվել է դոցենտի, 1974-ին՝ պրոֆեսորի կոչում: 1978-1980թթ. եղել է նաև կենսաբանության ֆակուլտետի դեկանի տեղակալ, 1983-1994թթ. ԵՊՀ էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի վարիչ:

Հեղինակ է շուրջ 140 գիտական աշխատությունների, "Микофлора северо-восточной Армении" (Ер., 1964), "Микофлора Армянской ССР" (т.2, Ер., 1971, т.5, Ер., 1980), "Определитель грибов Закавказья" (Тбилиси, 1985) մենագրությունների, 2 ուսումնամեթոդական ձեռնարկների, բառարանի, համահեղինակ՝ «Բույսերի կյանքը» (ռուս., Մ 1976) հանրագիտարանի, մասնակցել է նաև ԽՍՀՄ «Կարմիր գրքի» ստեղծմանը:

Ջ.Մելիք-Խաչատրյանը եղել է ԽՍՀՄ գլխարկավոր սնկերի ուսումնասիրության համամիութենական հանձնաժողովի անդամ:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 4 ատենախոսություն:

1994-ից բնակվում է ԱՄՆ-ում:

ՄԵԼԻՔՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՆԻԿՈԼԱՅԻ

Ինժեներ-մեխանիկոս,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1877թ. փետրվարի 5-ին Լեռնային Ղարաբաղի Հադրութ գյուղում: Միջնակարգ կրթությունն ստացել է Շուշիի ռեալական դպրոցում: 1898թ. ընդունվել է Սանկտ Պետերբուրգի տեխնոլոգիական ինստիտուտ: Մասնակցել է հեղափոխական ուսանողության հավաքույթներին ու ցույցերին, որի համար երկու անգամ (1899, 1900) հեռացվել է ինստիտուտից: 1908թ. Ալ.Մելիքյանն ավարտել է ինստիտուտը՝ ստանալով ինժեներ-տեխնոլոգի որակավորում: 1908-1915թթ. նա աշխատել է Երևան քաղաքի ինքնավարությունում որպես նախագծող ու կառուցող ինժեներ, միաժամանակ դասավանդել օրիորդաց գիմնազիայում և սեմինարիայում, իսկ 1915-ից

նվիրվել ուսուցչական աշխատանքի:

Ալ.Մելիքյանի ջանքերով Հայաստանում հիմնվել է առաջին տեխնիկական մասնագիտական դպրոցը՝ ինդուստրիալ տեխնիկումը, որի տնօրենն է եղել նա տասը տարի: Դասավանդել է 1923թ. Երևանում բացված բանվորական ֆակուլտետում: Մինչև 1932թ. նա վարել է նաև ծանր արդյունաբերության ժողովրդական կոմիսարիատի կադրերի բաժնի վարիչի տեղակալի և ուսումնական մասի վարիչի պաշտոնը՝ ղեկավարելով տեխնիկական կրթության կազմակերպման ու երիտասարդ մասնագետների պատրաստման գործն ամբողջ հանրապետությունում:

1933-1961թթ. Ալ.Մելիքյանն աշխատել է ԵՊՀ-ում: Հաշվի առնելով նրա բազմամյա դասախոսական աշխատանքը՝ 1938թ. Ալ.Մելիքյանին շնորհվել է դոցենտի կոչում: 1936թ. նա նշանակվել է համալսարանի ուսումնագիտական մասի պրոռեկտորի տեղակալ, իսկ 1941-1961թթ. պրոռեկտոր:

Նա բազմիցս ընտրվել է Երևանի քաղաքային խորհրդի և ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր:

1946թ. Ալ.Մելիքյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է կառավարական շքանշաններով, մեդալներով ու պատվոգրերով:

Վախճանվել է 1969թ. մարտի 16-ին Երևանում:

ՄԵԼԻՔՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՊԱՎԵԼԻ

Բուսաբան,
կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1935թ. մայիսի 26-ին Թիֆլիսում: 1954թ. ավարտել է թիվ 9 արական միջնակարգ դպրոցը և նույն տարում ընդունվել Թբիլիսիի գյուղատնտեսական ինստիտուտ: 1957թ. տեղափոխվել է ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետ, որն ավարտել է 1960թ. և ընդունվել Լենինգրադի (այժմ՝ Սանկտ Պետերբուրգ) պետական համալսարանի ասպիրանտուրա:

1964թ. Ա.Մելիքյանը պաշտպանել է թեկնածուական, 1973թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1965թ. նրան շնորհվել է դոցենտի, 1974թ. պրոֆեսորի կոչում:

1964-1972թթ. նա եղել է ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի բուսաբանության ամբիոնի ասիստենտ, 1972-1977թթ.՝

բարձրակարգ բույսերի ամբիոնի վարիչ:

1977թ. տեղափոխվել է Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի բարձրակարգ բույսերի ամբիոն, որտեղ և աշխատել է մինչև կյանքի վերջը:

Ա.Մելիքյանը հեղինակ է շուրջ 250 գիտական և ուսումնամեթոդական աշխատանքների, որոնք նվիրված են բարձրակարգ բույսերի ձևաբանությանը, անատոմիային, սաղմնաբանությանը, կարգաբանությանը, ֆիլոգենիային, կենսաքիմիային: Մեծ է նրա ավանդը մակաբույծ ծաղկավոր բույսերի ուսումնասիրության մեջ: Ուսումնասիրել է տերևացողունային մամուռների անատոմիական կառուցվածքը և դրանց փոխադրող հյուսվածքները:

1989թ. Ա.Մելիքյանը պարգևատրվել է «Աշխատանքի վետերան» մեդալով:

Վախճանվել է 2008թ. օգոստոսի 22-ին Մոսկվայում:

ՄԵԼԻՔՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ ՎՐԵԺԻ

Արևելագետ,
բանասիրական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր

Ծնվել է 1936թ. դեկտեմբերի 14-ին Իրանի Աբադան քաղաքում: Ավարտել է Թեհրանի «Քուշեշ-Դավթյան» և Աբադանի «Ադաբ» հայկական դպրոցները, ինչպես նաև «Ռազի» տասներկուամյա դպրոցը: 1958թ. ընդունվել է ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի արևելյան լեզուների և գրականության բաժին, որն ավարտել է 1962թ. և աշխատանքի անցել նույն բաժնում:

1984թ. Գ.Մելիքյանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1985թ. նրան շնորհվել է դոցենտի, 2008թ. պրոֆեսորի կոչում: 1992-ից արևելագիտության ֆակուլտետի դեկանն է:

Գ.Մելիքյանը հեղինակ է շուրջ քսանհինգ գիտական հրապարակումների, երեք մենագրության, երկու դասագրքի:

Զբաղվել է պարսից լեզվի թարգմանական, ինչպես նաև պարսկերենի հարադիր բառակապակցությունների, բառաքերականական, բարդ բառերի, իրանական բարբառների հետ կապված հիմնահարցերի ուսումնասիրությամբ: Մենագրություններն են “Парные словосочетания в новоперсидском

языке” (Ер., 1996), “Kitab-e mould” (Եր., 2001), “Ghazal-e Ghazalha” (Եր., 2005):

Գնդապետ Գ.Մելիքյանը Արցախյան հերոսամարտի ընթացքում եղել է Աղատագրական բանակի հրամանատարի արտաքին կապերի գծով տեղակալ: 1995թ. Քաչաթաղի վարչակազմը հիմնադրել է «Քաչաթաղի բազմազավակ ընտանիքների Գուրգեն Մելիքյան» հիմնադրամը, որի շրջանակներում իրականացվում են հայրենասիրական-բարեգործական տարաբնույթ միջոցառումներ:

Գ.Մելիքյանը պարգևատրվել է «Խոպան հողերի յուրացման համար» մեդալով (1965), «Մարտական խաչ» երկրորդ աստիճանի շքանշանով (1999) և «Մովսես Խորենացի» (1999) մեդալով:

ՄԵԼԻՔՅԱՆ ՄԵՀԵՆԴԱԿ ԱՐՏԱՇԵՍԻ

Փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1919թ. դեկտեմբերի 24-ին Ալեքսանդրապոլում (այժմ՝ Գյումրի): Միջնակարգ կրթությունն ստացել է Երևանում:

1939թ. Մոսկվայի ավտոճանապարհային ինստիտուտի ուսանող Մ.Մելիքյանը կամավոր մեկնել է բանակ, 1941-1945թթ. մասնակցել Հայրենական մեծ պատերազմին:

1945թ. զորացրվելուց հետո նա ընդունվել և 1950թ. ավարտել է ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետը: 1950թ. ուսումը շարունակել է ԵՊՀ ասպիրանտուրայում, միաժամանակ խմբագրել «Երևանի պետական համալսարան» թերթը:

1953թ. Մ.Մելիքյանը ԵՊՀ փիլիսոփայության ամբիոնի ասիստենտ էր: Պաշտպանելով թեկնածուական ատենախոսություն՝ նա 1958-1962թթ. վարել է ԵՊՀ գիտահետազոտական բաժնի վարիչի պաշտոնը, իսկ 1967-1973թթ., որպես պրոռեկտոր, ղեկավարել հրատարակչության և արտասահմանյան ուսանողների հետ տարվող աշխատանքները:

1969թ. Մ.Մելիքյանը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, 1970թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1970-1983թթ. եղել է ԵՊՀ պատմական մատերիալիզմի, բարոյագիտության և գեղագիտության (այժմ՝ սոցիալական փի-

լիսոփայության և բարոյագիտության) ամբիոնի վարիչ, 1983-1986թթ.՝ փիլիսոփայության և սոցիոլոգիայի ֆակուլտետի առաջին դեկան, 1986-1991թթ. նույն ամբիոնի պրոֆեսոր:

Մ.Մելիքյանը դլխավորապես զբաղվել է ազգային հարցի հիմնախնդիրներով: Այդ բնագավառում նրա հիմնական ձեռքբերումներն ամփոփված են «Սոցիալիզմը և ազգերը» (Եր., 1969) աշխատության մեջ:

1971-1985թթ. նա խորհրդային գիտնականների պատվիրակությունների կազմում մասնակցել է ԳԴՀ-ում, Հունգարիայում, Ֆինլանդիայում, ԱՄՆ-ում, Չեխոսլովակիայում կազմակերպված փիլիսոփայական գիտաժողովների:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 10 ատենախոսություն:

1981թ. Մ.Մելիքյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է «Կարմիր աստղ» (2) շքանշանով և մեկ տասնյակից ավելի մեդալներով:

Վախճանվել է 1993թ մայիսի 12-ին Երևանում:

ՄԵԼԻՔՅԱՆ ՆԱՏԱԼՅԱ ՄԵԼԻՔԻ

Բույսերի ֆիզիոլոգ,
կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1906թ. մայիսի 19-ին Սուրմալուի գավառում: 1926թ. ավարտել է Երևանի Ալ.Մյասնիկյանի անվան դպրոցը, ապա երկու տարի աշխատել Հրազդանի շրջանում որպես ուսուցիչ: 1931թ. Ն.Մելիքյանն ավարտել է ԵՊՀ մանկավարժության ֆակուլտետը:

1931թ. ընդունվել է ասպիրանտուրա: 1934թ. ավարտելով իր հետազոտությունները Մոսկվայի Կ.Տիմիրյազևի անվան բույսերի ֆիզիոլոգիայի ինստիտուտում՝ աշխատանքի է անցել ԵՊՀ բույսերի անատոմիայի և ֆիզիոլոգիայի ամբիոնում որպես ասիստենտ: 1939թ. Ն.Մելիքյանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1940թ. նրան շնորհվել է դոցենտի կոչում: 1940-ից, որոշ ընդմիջումներով, և 1962-1970թթ. եղել է բույսերի անատոմիայի և ֆիզիոլոգիայի ամբիոնի վարիչ, ապա՝ ամբիոնի խորհրդական:

1964թ. Ն.Մելիքյանը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1966թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Հեղինակ է «Բույսերում կառուցվածքային փոփոխությունները և լիգնինի կուտակման դինամիկան՝ կախված միջավայրի պայմաններից» (Եր., 1959) մենագրության և շուրջ 100 գիտական հոդվածների, որոնք նվիրված են բույսերի անատոմիայի, ֆիզիոլոգիայի և կենսաքիմիայի հարցերին:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 4 ատենախոսություն:

1967թ. Ն.Մելիքյանն արժանացել ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է «Պատվո նշան» շքանշանով և մեդալներով:

Վախճանվել է 1989թ. հուլիսի 25-ին Երևանում:

ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ ՀՈՎԻԿ ՈՒԽՏԱՆԵՍԻ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1931թ. հունվարի 15-ին Թումանյանի շրջանի Շնող գյուղում: 1949թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը, 1954թ. ԵՊՀ պատմության ֆակուլտետը: Նույն թվականին ընդունվել է ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի ասպիրանտուրա: Առժամանակ աշխատել է ՀԼԿԵՄ Կիրովյան շրջկոմում, այնուհետև ՀԼԿԵՄ կենտկոմում որպես հրահանգիչ: 1958թ. տեղափոխվել է ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտ:

1962թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1966թ. նրան շնորհվել է դոցենտի կոչում: 1963թ. դասախոսական աշխատանքի է անցել ԵՊՀ պատմության ֆակուլտետում՝ նախ որպես ավագ դասախոս, ապա՝ դոցենտ:

1986թ. Հ.Մելիքսեթյանը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1989թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1988թ. ընտրվել է ԽՍՀՄ ժողովուրդների պատմության ամբիոնի վարիչ, իսկ 1992-ից մինչև կյանքի վերջը գլխավորել է ԵՊՀ նոր և նորագույն պատմության ամբիոնը:

Իր գիտական ու հանրային գործունեությամբ Հ.Մելիքսեթյանը նպաստել է Սփյուռքում հայապահպանման, հանրապետության կյանքին Սփյուռքին հաղորդակից դարձնելու, հայրենիքի հետ սերտ կապերի հաստատման շնորհակալ գործին:

Հ.Մելիքսեթյանը հեղինակ է շուրջ 50 գիտական հոդվածնե-

րի, ինչպես նաև «Հայրենիք-Սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը» (Եր., 1985) մենագրության: Նա «Հայ ժողովրդի պատմություն» ակադեմիական ութհատորյակի 8-րդ հատորի (Եր., 1970), «Գիրք հերոսների մասին» (Եր., 1985) և «Փառքի չքանչանի հայ ասպետները» (Եր., 1982) հիմնարար աշխատությունների համահեղինակ է:

Վախճանվել է 1997թ. հունվարի 30-ին Երևանում:

2008-ից Շնող գյուղի միջնակարգ դպրոցը կոչվում է Հ.Մելիքսեթյանի անունով:

ՄԵԼԻՔ-ՕՀԱՆՋԱՆՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ ԱՂԱԲԵԿԻ

Հայագետ, պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1893թ. փետրվարի 20-ին Մեղրու շրջանի Կալեր գյուղում: Սովորել է Գանձակի տղայոց գիմնազիայում: 1903թ. ընդունվել է Մոսկվայի Լազարյան ճեմարան: 1914թ. ճեմարանի պրոֆեսորական խորհրդի որոշմամբ դրդուղվել է Գերմանիա՝ արևելագետ Ենսենի մոտ սանսկրիտ ուսումնասիրելու:

1920թ. Կ.Մելիք-Օհանջանյանը վերադարձել է Հայաստան: Սկզբում աշխատել է հանրային կրթության և արվեստի նախարարությունում, ապա՝ Երևանի տղայոց գիմնազիայում: 1921թ. նշանակվել է Հանրապետության առաջին գիտական հիմնարկի՝ Էջմիածնի գիտական ինստիտուտի նախագահ: 1921-1930թթ. զբաղվել է մանկավարժական աշխատանքով՝ դասախոսելով ԵՊՀ-ում: 1930 թվականից աշխատել է ՀԽՍՀ գիտությունների ինստիտուտում որպես գիտական-քարտուղար, բաժնի վարիչի տեղակալ և բաժնի վարիչ:

1935թ. Կ.Մելիք-Օհանջանյանին շնորհվել է պրոֆեսորի կոչում: Նրա գիտական նախասիրությունները բազմաբնույթ էին՝ ժողովրդական բանահյուսություն, հայ հին գրականություն, հայոց պատմություն, արևելագիտություն, համեմատական տեքստաբանություն, գիտական և գրական հուշարձանների թարգմանություն:

Նրա կարևոր գործերից են «Ֆիրդուսին և Իրանի վիպական մոտիվները «Շահնամեում» ու հայ մատենագրության մեջ»

(Եր., 1934), «Տիրան-Տրդատի վեպը ըստ Փավստոս Բուզանդի» (Եր., 1947), «Ագաթանգեղոսի բանահյուսական աղբյուրների հարցի շուրջ» (Եր., 1964), «Միթրա-Միհրը Սասնա ծռերի մեջ» հետազոտությունները: Հայագիտական մեծ արժեք ունի Կ.Մելիք-Օհանջանյանի՝ XIIIդ. հայ նշանավոր պատմիչ Կիրակոս Գանձակեցու «Հայոց պատմության» քննական-բաղդատական բնագրի գիտական հրատարակությունը՝ ընդարձակ ուսումնասիրությամբ (Եր., 1961):

1930-ական թվականներին Մ.Աբեղյանի հետ հրատարակել է «Սասնա ծռեր» վեպի երեք մեծադիր հատորները, որոնք հայ բանագիտության ծանրակշիռ հիմնաքարն են: Նա «Սասնա ծռերի» տասն ընտիր պատումներ թարգմանել է ռուսերեն, հարուստ ծանոթագրություններով, ընդարձակ ներածական հետազոտությամբ հրատարակել Մոսկվայում:

1962թ. Կ.Մելիք-Օհանջանյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման:

Վախճանվել է 1970թ. փետրվարի 24-ին Երևանում:

ՄԵՍՐՈՊՅԱՆ ԷՎԵԼԻՆԱ ԳՈՒՐԳԵՆԻ

Քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1931թ. ապրիլի 1-ին Երևանում: 1949թ. ավարտել է Երևանի թիվ 19 դպրոցը: 1949-1954թթ. սովորել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետում:

1953-1956թթ. Է.Մեսրոպյանն աշխատել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի օրգանական քիմիայի ամբիոնում որպես ավագ լաբորանտ, 1956-1964թթ. ասիստենտ: 1964թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1970թ. նրան շնորհվել է դոցենտի կոչում: 1964-1966թթ. նա եղել է օրգանական քիմիայի ամբիոնի ավագ դասախոս: 1987թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1989թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1998-2002թթ. Է.Մեսրոպյանը գիտական թեմայի ղեկավար էր, 2002-2008թթ. առաջատար գիտաշխատող, 1966-1986թթ.՝ ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի դոցենտ, 1988-2007թթ. պրոֆեսոր: 2008-ից գիտահետազոտական լաբորատորիայի առաջատար գիտաշխատող է:

Է.Մեսրոպյանը հեղինակ է 140 գիտական աշխատանքների:

Գիտական հիմնական ուղղություններն են՝ հինգ անդամանի, հագեցած լակտոնների քիմիա, ալոտ, թթվածին և ծծումբ պարունակող հետերոցիկլեր, կենսաբանորեն ակտիվ միացությունների սինթեզ:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 5 ատենախոսություն:

ՄԵՐԳԵԼՅԱՆ ՍԵՐԳԵՅ ՆԻԿԻՏԻ

Մաթեմատիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
ԽՍՀՄ ԳԱ թղթակից անդամ,
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս

Ծնվել է 1928թ. մայիսի 19-ին Սիմֆերոպոլում: 1947թ. ավարտել է ԵՊՀ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը, 1949թ. ԽՍՀՄ ԳԱ Վ.Ստեկլովի անվան մաթեմատիկական ինստիտուտի ասպիրանտուրան: Գիտությունների թեկնածուի աստիճանի հայցման ներկայացրած նրա ատենախոսությունը մասնագիտական խորհուրդը գնահատել է որպես դոկտորական, և 1949թ. Ս.Մերգելյանին շնորհվել է ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտորի դիտական աստիճան, 1951թ. պրոֆեսորի կոչում: 1953թ. Ս.Մերգելյանն ընտրվել է ԽՍՀՄ ԳԱ և ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, իսկ 1956թ.՝ ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս:

1956-1960թթ. Ս.Մերգելյանը եղել է Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի հիմնադիր տնօրենը: 1962-1965թթ. և 1971-1979թթ. նա ղեկավարել է ՀԽՍՀ ԳԱ և ԵՊՀ միացյալ հաշվողական կենտրոնը: 1963-1971թթ. եղել է ԽՍՀՄ ԳԱ մաթեմատիկական բաժանմունքի ակադեմիկոս քարտուղարի տեղակալ և ԽՍՀՄ ԳԱ Վ.Ստեկլովի անվան մաթեմատիկական ինստիտուտի կոմպլեքս փոփոխականի ֆունկցիաների տեսության բաժնի վարիչ, 1971-1974թթ. ՀԽՍՀ ԳԱ փոխնախագահ: 1972-1979թթ. նա ղեկավարել է ԵՊՀ թվային անալիզի ամբիոնը, 1979-1982թթ. ՀԽՍՀ ԳԱ մաթեմատիկայի ինստիտուտի կոմպլեքս անալիզի բաժինը: 1982-1986թթ. նա Կիրովականի (այժմ՝ Վանաձոր)

պետական մանկավարժական ինստիտուտի ռեկտորն էր:

Ս.Մերգելյանի հետազոտություններն ընդգրկում են ժամանակակից անալիզի մի շարք բնագավառներ: Նա հիմնարար արդյունքներ է ստացել կոմպլեքս տիրույթում մոտավորությունների տեսության բնագավառում: Իր կողմից ստեղծված նոր մեթոդով սպառիչ կերպով լուծել է կոմպլեքս փոփոխականի ֆունկցիաները բազմանդամներով հավասարաչափ մոտարկելու հնարավորության պրոբլեմը՝ ավարտելով մոտավորությունների տեսության զարգացման՝ 1930-ականներին Մ.Լավրենտևի և Մ.Կելդիշի հետազոտություններով սկսված փուլը:

Ս.Մերգելյանը մեծ վաստակ ունի միջազգային ճանաչում ստացած հայկական մաթեմատիկական գիտական դպրոցի կայացման և հետագա զարգացման, ինչպես նաև Հայաստանում հաշվողական տեխնիկայի ու կիբեռնետիկայի զարգացման գործում:

1952թ. Ս.Մերգելյանին շնորհվել է ԽՍՀՄ Պետական մրցանակ: Պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի, «Մեսրոպ Մաշտոց» (2008) շքանշաններով:

Վախճանվել է 2008թ. օգոստոսի 19-ին Լոս Անջելեսում (ԱՄՆ), աճյունն ամփոփված է Մոսկվայում:

ՄԻՆԱՍՅԱՆ ԷԴԻԿ ԳԱՐԵԳԻՆԻ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1956թ. ապրիլի 27-ին Թալինի շրջանի Ոսկեթաս գյուղում: 1973թ. ավարտել է նույն շրջանի Կարմրաշեն գյուղի միջնակարգ դպրոցը: 1974-1979թթ. սովորել է ԵՊՀ պատմության ֆակուլտետում, 1979-1983թթ. ԵՊՀ ասպիրանտուրայում: 1985թ. պաշտպանել է թեկնածուական, 2003թ. դոկտորական ատենախոսություն: 1990թ. նրան շնորհվել է դոցենտի, 2005-ին՝ պրոֆեսորի կոչում:

1979-1982թթ. Է.Մինասյանն աշխատել է պատմության ֆակուլտետի դեկանի օգնական, 1982-1986թթ. ԵՊՀ ԽՄԿԿ պատմության ամբիոնի դասախոս: 1986-1994թթ. եղել է արտասահմանյան քաղաքացիների ֆակուլտետի հասարակադիտական առարկաների ամբիոնի վարիչ, 1994-ից՝ ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի դոցենտ, ապա՝ պրոֆեսոր, 1999-

2009թթ. ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկանի տեղակալ: 2009-ից նույն ֆակուլտետի դեկանն է:

Է.Մինասյանը հեղինակ է ավելի քան 80 գիտական հոդվածների, «Ագրոարդյունաբերական ինտեգրացիայի դերը բանվոր դասակարգի, գյուղացիության և մտավորականության դաշինքի ամրապնդման գործում» (Եր., 1987), «Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում 1990-2003թթ.» (Եր., 2003) մենագրությունների, համահեղինակ՝ «Ռուսաց դիվանագիտությունը միջազգային հարաբերությունների համակարգում (18-19դդ.)» (Եր., 2005) բուհական ուսումնական ձեռնարկի, «Հայոց պատմություն» և «Հայոց պատմության հիմնահարցեր» դպրոցական և բուհական դասագրքերի:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 5 ատենախոսություն:

2007թ. Է.Մինասյանը պարգևատրվել է ԼՂՀ «Ոսկե արծիվ» մեդալով:

ՄԻՆԱՍՅԱՆ ՌՈԲԵՐՏ ՍԱՐԻԲԵԿԻ

Երկրաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր



Ծնվել է 1934թ. մայիսի 25-ին Արթիկում: 1957թ. ավարտել է ծննդավայրի թիվ 2 միջնակարգ դպրոցը: 1958թ. ընդունվել է Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի երկրաբանության ֆակուլտետ:

1966թ. պաշտպանել է թեկնածուական, 1992թ. դոկտորական ատենախոսություն: 2003թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1958-1969թթ. Ռ.Մինասյանն աշխատել է երկրաբանական վարչությունում, 1968-2001թթ. ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի գիտահետազոտական ինստիտուտում, որտեղ կազմակերպել է ինժեներական երկրաֆիզիկայի բաժին: 1977-1983թթ. Իրաքում և Մոզամբիկում ղեկավարել է երկրաֆիզիկական աշխատանքների խումբ: 2001 թվականից ԵՊՀ երկրաֆիզիկայի ամբիոնի վարիչն է:

Ռ.Մինասյանի գիտական գործունեության հիմնական ուղղությունը երկրաֆիզիկական համալիր մեթոդների կիրառումն է ջրային ռեսուրսների ու երկրաբանական հետազոտա-

կան վոանգավոր աշխատանքների, գեոէկոլոգիայի բնագավառներում:

Հեղինակ է շուրջ 130 գիտական աշխատանքների, որոնցից առավել կարևոր են "Изучение подземных вод вулканических областей геофизическими методами" (М., 1989), "Палеорельеф и распределение подземного стока Центрального вулканического нагорья Армении" (Եր., 2003) գրքերը և «Ուղղաձիգ էլեկտրական զոնդավորման կորերի քանակական մեկնաբանում» (Եր., 2003) ձեռնարկը:

ՄԻՆԱՍՅԱՆ ՍԻՐԱՆՈՒՇ ՄԻՆԱՍԻ

Ֆիզիոլոգ,
կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1939թ. մարտի 25-ին Հունաստանի Սալոնիկ քաղաքում: 1946թ. նրանց ընտանիքը նելդաղթել է Հայաստան և բնակություն հաստատել Երևանում: 1956թ. թիվ 49 միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետ և այն ավարտել 1961թ: Նույն թվականին Ս.Մինասյանն աշխատանքի է անցել ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնում որպես լաբորատորիայի վարիչ: 1962-1965թթ. եղել է այդ ամբիոնի ասպիրանտ, 1964-ից՝ ասիստենտ: 1966թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն:

1967-ից ամբիոնում աշխատել է որպես ավագ դասախոս, իսկ 1969-1987թթ. դոցենտ: 1987թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1988թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1991-ից Ս.Մինասյանը ԵՊՀ մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնի վարիչն է:

Հեղինակ է շուրջ 300 գիտական աշխատությունների՝ նվիրված օրգանիզմի վրա թրթռման ազդեցության պայմաններում հարմարողական ռեակցիաների կենտրոնական և ծայրամասային կարգավորիչ մեխանիզմների բացահայտմանը: Նա ուսումնասիրել է նաև թրթռային ախտաբանական շտկումը բուսական խթանիչներով և գերկարճ էլեկտրամագնիսական ալիքների կիրառմամբ: Նա հեղինակ կամ համահեղինակ է

նաև 2 մենագրության, 11 ուսումնամեթոդական ձեռնարկների, միջնակարգ դպրոցի 8-րդ դասարանի «Մարդ» (Եր., 2000), «Մարդու ֆիզիոլոգիայի հիմունքները» (Եր., 1998), «Ռադիոկենսաբանություն» (Եր., 2005), «Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիա» (Եր., 2006, 2007) և «Առողջագիտություն» (Եր., 2008) դասագրքերի:

ՄԻՐԶԱ-ԱՎԱԳՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԳՐԻԳՈՐԻ

Վիրաբույժ, պրոֆեսոր



Ծնվել է 1879թ. նոյեմբերի 1-ին Բաքվում: 1900թ. ավարտել է Բաքվի գիմնազիան և ընդունվել Կիևի համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետ: Հրապուրվելով բժշկությամբ երկու տարի անց փոխադրվել է նույն համալսարանի բժշկական ֆակուլտետ, որն ավարտել է 1908թ.:

1909-ից Հ.Միրզա-Ավագյանն աշխատել է Կիևի քաղաքային Հիվանդանոցի վիրաբուժական բաժանմունքում: 1915թ. նա հրավիրվել է Համառուսաստանյան քաղաքների ընկերության Կիևի թիվ 1 հոսպիտալ, որտեղ վարել է ավագ վիրաբույժի, ասա՝ հոսպիտալի գլխավոր բժշկի պաշտոնները: 1919թ. փոխադրվել է Հայաստան և աշխատանքի անցել Երևանի կայազորի զինվորական հոսպիտալում որպես վիրաբուժական բաժանմունքի պետ: 1922թ. ընտրվել է Երևանի քաղաքային Հիվանդանոցի վիրաբուժական բաժանմունքի վարիչ, որտեղ և աշխատել է շուրջ 14 տարի:

1924թ. Հ.Միրզա-Ավագյանն աշխատանքի է հրավիրվել ԵՊՀ բժշկական ֆակուլտետ: 1924-1928թթ. ղեկավարել է անատոմիայի և վիրաբուժության ամբիոնը: 1929թ. գործուղվել է արտասահման, այցելել Ֆրանսիայի, մասնավորապես Փարիզի լավագույն վիրաբուժական կլինիկաները և ծանոթացել բժշկագիտության նվաճումներին: 1930թ. ղեկավարել է Երևանի բժշկական ինստիտուտում կազմակերպված թիվ 2 վիրաբուժության ամբիոնը: 1933թ. նա ստանձնել է հոսպիտալային վիրաբուժության ամբիոնի վարիչի պաշտոնը: 1935թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Հ.Միրզա-Ավագյանը բարդ և դժվարին վիրահատություններ է արել դեռևս 1920-ականներին: Նա հաջողությամբ կա-

տարել է ուղեղի կարծրաթաղանթի պլաստիկ վիրահատություն, կաթնագեղձի, լեղապարկի, փայծաղի հեռացում և այլն: Դեռևս 1929թ. կատարել է քաղցկեղով հիվանդ ստամոքսի մասնահատում: Նրա վիրաբուժական տեխնիկայի և վարպետության դրսևորումը 1927թ. արված սրտի վիրահատությունն էր, որի ընթացքում նա հրազենային գնդակը հեռացրեց սրտամկանի միջից: 1930-ականներին այսպիսի վիրահատությունն առաջիններից մեկն էր ԽՍՀՄ-ում:

Աշխատանքները վերաբերում են արյան և ավշային համակարգերի մակաբույծ հիվանդությունների վիրաբուժությանը, սրտի վիրահատության տեխնիկայի և արյան փոխներարկման հարցերին:

Մեծ է Հ.Միրզա-Ավագյանի վաստակը մեր հանրապետությունում բարձրագույն բժշկական կրթության կազմակերպման ու զարգացման, ինչպես և բարձրորակ կադրերի պատրաստման գործում:

Հ.Միրզա-Ավագյանի կյանքն ընդհատվել է 1938-ին. Աղասի Խանջյանի «ինքնասպանության» մասին կազմված բժշկական «եզրակացությունը» չստորագրելու պատճառով: Արդարացվել է 1956թ.:

ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ ԷՄԻԼ ՀԱՅԿԻ

Ռադիոֆիզիկոս,
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ

Ծնվել է 1922թ. դեկտեմբերի 12-ին Երևանում: Ավարտելով միջնակարգ դպրոցը՝ 1940թ. զորակոչվել է խորհրդային բանակ: 1942թ. ուղարկվել է Թբիլիսիի հրետանային ուսումնարան և նույն տարվա դեկտեմբերին մեկնել ռազմաճակատ: Մինչև պատերազմի ավարտը երկու անգամ վիրավորվել է:

1945-1950թթ. սովորել է ԵՊՀ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետում, ապա ուսումնառությունը շարունակել ԽՍՀՄ ԳԱ Պ.Լեբեդևի անվան ֆիզիկայի ինստիտուտի նպատակային ասպիրանտուրայում: 1954թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն:

Ասպիրանտուրայում սովորելու տարիներին Է.Միրզաբեկյանն ստեղծել է 3 սմ ալիքի երկարության տիրույթում մեծ

զգայնության ընդունիչ համակարգ, ինչպես նաև լուծել մի շարք այլ խնդիրներ: Դրանով հիմք է դրել գիտական նոր ուղղության, որը հայտնի է որպես «բևեռացված ճառագայթման վերլուծումը և նրա կիրառությունները գերբարձր հաճախությունների տիրույթում»: Այդ աշխատանքը շարունակել է Բյուրականի աստղադիտարանում՝ դնելով ռադիոֆիզիկայի զարգացման հիմքերը Հայաստանում: 1960թ. Է.Միրզաբեկյանը հիմնադրել է ՀԽՍՀ ԳԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտը և ղեկավարել այն մինչև կյանքի վերջը:

Առանձին հիշատակման են արժանի գերզգայուն ընդունիչ համակարգերի ստեղծման ուղղությամբ Է.Միրզաբեկյանի ուսումնասիրությունները: Այդ համակարգերը լայնորեն ներդրվեցին Երկրի բնական պաշարների և տիեզերքի հետազոտման բնագավառում:

Նա ԵՊՀ-ում երկար տարիներ կարդացել է գերբարձր հաճախությունների ռադիոֆիզիկայի հատուկ դասընթացներ: Նրա նախաձեռնությամբ 1975թ. կազմակերպվել է ԵՊՀ ռադիոֆիզիկայի ֆակուլտետը:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է ավելի քան 10 ատենախոսություն:

1961թ. Է.Միրզաբեկյանն ընտրվել է Միջազգային աստղադիտության միության անդամ, 1971թ.՝ ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1974-ին՝ ակադեմիկոս: 1974-1976թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ ֆիզիկատեխնիկական և մեխանիկայի բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, իսկ 1976-ից մինչև կյանքի վերջը փոխնախագահ: Ընտրվել է ՀԽՍՀ X գումարման Գերագույն խորհրդի պատգամավոր:

1974թ. Է.Միրզաբեկյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության և տեխնիկայի վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է «Կարմիր աստղ», Հայրենական պատերազմի II աստիճանի և Հոկտեմբերյան Հեղափոխության շքանշաններով:

Վախճանվել է 1980թ. սեպտեմբերի 16-ին Երևանում:

ՄԻՐԶՈՅԱՆ ԼԵՎՈՆԴԻԳ ՎԱՍԻԼԻ

Աստղաֆիզիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ

Ծնվել է 1923թ. մայիսի 1-ին Երևանում: 1940թ. միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է ԵՊՀ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետ: 1942-1945թթ. մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին: 1947թ. ավարտել է համալսարանը և աշխատանքի ընդունվել Բյուրականի նորաստեղծ աստղադիտարանում:

1951թ. Լ.Միրզոյանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1953թ. նշանակվել է Բյուրականի աստղադիտարանի գիտքարտուղար, իսկ 1959թ.՝ տնօրենի տեղակալ. այդ պաշտոնում աշխատել է շուրջ քառորդ դար: 1965-ից միաժամանակ ղեկավարել է աստղերի ու միգամածությունների ֆիզիկայի բաժինը: 1957-1999թթ. դասախոսել է ԵՊՀ-ում: 1968թ. Լենինգրադում (այժմ՝ Սանկտ Պետերբուրգ) պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1970թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1986-ին ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս:

Լ.Միրզոյանի աշխատանքները վերաբերում են աստղերի ֆիզիկային ու էվոլյուցիային: Կարևոր արդյունքներ է ստացել աստղասփյուռների լայնացման ու դրանցում աստղերի անկայունության զարգացման վերաբերյալ: Օգտագործելով այն ժամանակ լայն ճանաչում գտած սպեկտրալուսաչափական գրադիենտների մեթոդը՝ առաջարկել է միջաստղային ընտրողական կլանման որոշման նոր մեթոդ:

Լ.Միրզոյանը տասնյակ գիտական մենագրությունների, աստղագիտական դասագրքերի և գիտահանրամատչելի ձեռնարկների հեղինակ է: Բազմիցս հանդես է եկել միջազգային գիտաժողովներում:

Նրա ղեկավարությամբ թեկնածուական ատենախոսություն է պաշտպանել 10 ասպիրանտ, այդ թվում՝ Վրաստանից, Ուզբեկստանից, Հունգարիայից, Բուլղարիայից:

Զգալի է Լ.Միրզոյանի ավանդը Հայկական սովետական հանրագիտարանի ստեղծման գործում: Նա եղել է աստղագիտության գիտաճյուղային խորհրդի նախագահ:

Լ.Միրզոյանը Հայաստանի աստղագիտության և տիեզերագիտության խորհրդի նախագահն էր, 1965թ. «Աստղաֆիզիկա» համամիութենական պարբերականի գլխավոր խմբագրի տեղակալը, հետագայում՝ գլխավոր խմբագիրը:

1958-ից նա Միջազգային աստղագիտական միության և նրա մասնագիտական հանձնաժողովի անդամ էր, 1970թ.՝ ԽՍՀՄ ԳԱ աստղագիտական խորհրդի անդամ:

1974թ. Լ.Միրզոյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության և տեխնիկայի վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով:

Վախճանվել է 1999թ. հուլիսի 20-ին Երևանում:

ՄԻՐԶՈՅԱՆ ՀՐԱՉԻԿ ՂԱԶԱՐԻ

Փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1940թ. մարտի 13-ին ՀԽՍՀ Նոյեմբերյանի շրջանի Դոստլու (այժմ՝ Բարեկամավան) գյուղում: 1954թ. ավարտել է գյուղի յոթնամյա դպրոցը, 1958թ. Նոր-Բայազետի (այժմ՝ Գավառ) մանկավարժական ուսումնարանը, 1963-ին՝ ԵՊՀ պատմության ֆակուլտետը:

1967թ. Հ.Միրզոյանը պաշտպանել է թեկնածուական, 1984թ. դոկտորական ատենախոսություն: 1971թ. նրան շնորհվել է դոցենտի, 1987թ. պրոֆեսորի կոչում:

1966-1967թթ. Հ.Միրզոյանը եղել է ՀԽՍՀ ԳԱ փիլիսոփայության և իրավունքի բաժնի կրտսեր գիտաշխատող: 1967 թվականից աշխատում է ԵՊՀ-ում որպես ասիստենտ, ավագ դասախոս, 1971-1979թթ. դոցենտ, 1979-1981թթ. ավագ գիտաշխատող, 1981-1987թթ.՝ փիլիսոփայության պատմության ամբիոնի դոցենտ, 1987-ից նույն ամբիոնի պրոֆեսոր: 1989-2000թթ. եղել է փիլիսոփայության պատմության ամբիոնի վարիչ, 1998-2004թթ.՝ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և հոգեբանության ֆակուլտետի, 2004-2009թթ. փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի դեկան:

1969-1970թթ., 1978-1979թթ. Հ.Միրզոյանը եղել է Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան համալսարանին կից հասարակական գիտությունների դասախոսների որակավորման բարձրացման ինստիտուտի ունկնդիր: 1994-1997թթ. աշխատել է

Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի Ալեք և Մարի Մանուկյանների անվան Ժառանգավորաց վարժարանում և Ընծայարանում: 1997-2003թթ. համատեղությամբ դասավանդել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: 1992-ից «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի դլխավոր խմբագիրն է:

Հ.Մլրզոյանը հեղինակ է «Սիմեոն Ջուղայեցի» (Եր., 1971), «XVII դարի հայ փիլիսոփայական մտքի քննական վերլուծություն» (Եր., 1983), «Հովհաննես Մրքուզ Ջուղայեցի» (Եր., 2001), «Գրիգոր Նարեկացու բառաստեղծական արվեստը» (Եր., 2006) մենագրությունների և ավելի քան 100 դիտական հոդվածների: Նրա աշխատասիրությամբ հրատարակվել են հայ փիլիսոփաների (Գրիգոր Նարեկացի, Հովհաննես Սարկավագ, Հովհաննես Ջուղայեցի, Ստեփանոս Դաշտեցի և այլն) մի շարք երկեր: Ս.Զոլյանի հետ կազմել է "Нагорный Карабах и вокруг него: Глазами независимых наблюдателей" (Ер., 1992) փաստաթղթերի ժողովածուն: Զբաղվել է նաև թարգմանչական գործունեությամբ:

Նրա ղեկավարությամբ ու խորհրդատվությամբ պաշտպանվել է թեկնածուական 5 և դոկտորական 2 ատենախոսություն:

Զեկուցումներով հանդես է եկել միջազգային գիտաժողովներում (Երևան, Բաքու, Մոսկվա, Լվով, Լոս-Անջելես, Վարշավա և այլն), մասնակցել 1993թ. փիլիսոփայական միջազգային XIX համաժողովին (Մոսկվա):

Հ.Մլրզոյանը պարգևատրվել է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատվոգրով (1970):

ՄԻՔԱՑԵԼՅԱՆ ԳՐԻԳՈՐ ԳԱԲՐԻԵԼԻ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1893թ. հունիսի 24-ին Դոնի Ռոստովում, որտեղ էլ ստացել է սկզբնական կրթությունը: 1920-1921թթ. սովորել է Դոնի համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետում: 1921թ. տեղափոխվել է ԵՊՀ հասարակագիտական ֆակուլտետի պատմագրական բաժին և այն ավարտել 1925թ. միաժամանակ աշխատելով ԵՊՀ գրադարանում: 1925-1927թթ. եղել է Հայաստանի գիտության և արվեստի ինստիտուտի և պետական արխիվի աշխատակից: 1927-1933թթ. Գ. Միքայելյանը դասավան-

դել է Երևանի տարբեր ուսումնական հաստատություններում՝ կոոպերատիվ տնտեսագիտական և մանկավարժական տեխնիկումներում, հայկական մանկավարժական, հեռակա մանկավարժական ինստիտուտներում, ԵՊՀ բանֆակում և ընդհանուր պատմության ամբիոնում: 1933-1938թթ. եղել է ՀԽՍՀ արխիվային վարչության ավագ գիտաշխատող, 1938թ.՝ Հայկական մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետի դեկան, 1938-1944թթ. ընդհանուր պատմության ամբիոնի վարիչ, 1944-1953թթ.՝ ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող շարունակելով դասավանդել ԵՊՀ-ում և մանկավարժական ինստիտուտում:

1943թ. Գ.Միքայելյանը պաշտպանել է թեկնածուական, 1948թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1949թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Հեղինակ է մի շարք գիտական աշխատությունների և դասագրքերի, որոնցից են՝ «Հայ ժողովրդի պատմություն» (Եր., 1951, ռուս., Եր., 1956) դպրոցական ձեռնարկը, «Կիլիկիայի հայկական պետության պատմություն» (ռուս.՝ Եր., 1952, հայ.՝ Եր., 2007) մենագրությունը, որտեղ վերլուծել է Կիլիկիայի հայկական թագավորության ստեղծման պատմաքաղաքական պայմանները, բացահայտել նրա դերը Արևելքի և Արևմուտքի երկրների քաղաքական, տնտեսական և մշակութային փոխհարաբերություններում, ինչպես նաև վեր հանել անկման սոցիալ-քաղաքական պատճառները:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 3 ատենախոսություն:

Վախճանվել է 1953թ. հոկտեմբերի 28-ին Երևանում:

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՍՈՒՐԵՆ ԱՂԱԲԵԿԻ

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1906թ. ապրիլի 12-ին Կապանի շրջանի Վերին Խոտանան գյուղում: 1907թ. նրա ընտանիքը տեղափոխվել է Գորիս, որտեղ երկդասյա ուսումնարանն ավարտելուց հետո ուսանել է գիմնազիայում: 1923թ. գործուղվել է Թիֆլիս սովորելու ՀԿԿ Կենտկոմին կից երկաստիճան կուսակցական

դպրոցում: Ավարտելով այն՝ 1927-1930թթ. ուսանել է տեղի կոմհամալսարանում:

1930-ից Ս.Միքայելյանն աշխատել է Լենինականի (այժմ՝ Գյումրի) կոոպերատիվ տնտեսագիտական ինստիտուտում որպես քաղաքատնտեսության դասախոս և ամբիոնի վարիչ:

1933թ. նա եղել է Լենինականի կուսքաղկոմի կազմբաժնի վարիչի տեղակալ, 1934թ. Հրազդանի շրջանային թերթի խմբագիր: 1937-1940թթ. աշխատել է պետական հանրային գրադարանում, Հայպետհրատում: 1942-1943թթ. ծառայել է բանակում: Զորացրվելուց հետո մինչև 1946թ. եղել է ՀԽՍՀ տեղական արդյունաբերության նախարարության պլանբաժնի պետ, այնուհետև մինչև կյանքի վերջը ԵՊՀ քաղաքատնտեսության ամբիոնի դասախոս:

1957թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1959թ. նրան շնորհվել է դոցենտի կոչում:

Հեղինակ է մի շարք աշխատությունների ու թարգմանությունների:

1967թ. Ս.Միքայելյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման:

Վախճանվել է 1973թ. փետրվարի 4-ին Երևանում:

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ ԵՆՈՔԻ

Փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր



Ծնվել է 1919թ. ապրիլի 16-ին Նոր Բայազետի գավառի Թթուջուր գյուղում: Ավարտել է նույն գյուղի թեմական դպրոցը, իսկ 1937թ. Երևանի ֆինանսատնտեսագիտական տեխնիկումի բանկային բաժինը: 1938-1941թթ. սովորել է ԵՊՀ պատմության ֆակուլտետում, 1941-1945թթ. մասնակցել է Հայրենական պատերազմին և որպես 2-րդ կարգի հաշմանդամ զորացրվել: Այնուհետև շարունակել է ուսումը ԵՊՀ պատմության ֆակուլտետում, որն ավարտելով 1946թ. ընդունվել է ասպիրանտուրա:

1937-1938թթ. Գ.Մխիթարյանն աշխատել է Դիլիջանի, ապա Կրասնոսելսկի շրջանային ֆինանսական բաժնի ավագ տեսուչ, 1949-1959թթ.՝ ՀԿԿ Կենտկոմին կից եռամյա կուսակցական դպրոցի ավագ դասախոս, իսկ 1953թ. թեկնածուական ատենա-

խոսություն պաշտպանելուց հետո՝ դոցենտ, 1958-1977թթ. ՀԿԿ Երևանի քաղկոմին կից մարքսիզմ-լենինիզմի համալսարանի փիլիսոփայության ամբիոնի վարիչ: 1959թ. աշխատանքի է անցել ԵՊՀ փիլիսոփայության ամբիոնում, 1970թ.՝ պատմական մատերիալիզմի և բարոյագիտության ամբիոնում:

1965թ. Գ.Մխիթարյանը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1971թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1979-1989թթ. ղեկավարել է ԵՊՀ փիլիսոփայության պատմության ամբիոնը, այնուհետև մինչև կյանքի վերջն աշխատել է նույն ամբիոնում որպես պրոֆեսոր:

Գ.Մխիթարյանը հեղինակ է մի շարք մենագրությունների, ուսումնական ձեռնարկների ու գիտական հոդվածների: Դրանցից առավել հիշատակելի են «Ազատություն և անհրաժեշտություն» (Եր., 1963), «Սոցիոլոգիական ուսմունքների պատմություն» (5 պրակով, Եր., 1971, 1974, 1977, 1982, 1997), «Թ.Պարսոնսի «գործողության տեսության» հակագիտական էությունը» (Եր., 1980) գրքերը:

Գ.Մխիթարյանը վախճանվել է 1999թ. ապրիլի 26-ին Երևանում:

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԵԼԵՆԱ ՍԱՐԻԲԵԿԻ

Լեզվաբան,
բանասիրական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր

Ծնվել է 1936թ. հոկտեմբերի 16-ին Թբիլիսիում: 1956թ. ավարտել է տեղի թիվ 17 դպրոցը և ընդունվել ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի անգլերեն լեզվի և գրականության բաժին: 1961-1967թթ. Ե.Մխիթարյանն աշխատել է ԵՊՀ-ում որպես դասախոս, 1967-1987թթ. ավագ դասախոս, 1987-2004թթ. դոցենտ և 2004 թվականից՝ պրոֆեսոր: 1973թ. նա ստաժավորում է անցել Մոսկվայի և 1977թ.՝ Նյու Յորքի համալսարանում: 1986թ. Ե.Մխիթարյանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1989թ. նրան շնորհվել է դոցենտի, 2003-ին պրոֆեսորի կոչում:

Հեղինակ է “Структурно-семантические опозиции в системе пространственных предлогов” (Ер., 2000) մենագրության, շուրջ 25 գիտական հոդվածների, 15 դասագրքերի ու

ձեռնարկների, այդ թվում՝ “Basic English” (Եր., 1988, 2004, 2008), «Անգլերենի շարահյուսության վարժություններ» (Եր., 1988): Համահեղինակ է «Անգլերենի դասագիրք» (Եր., 1984), «Անգլերեն լեզվի գործնական քերականություն» (Եր., 2004), «Անգլերենի տեսական քերականություն» (Եր., 2008) գրքերի:

Ե.Մխիթարյանի ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 6 ատենախոսություն:

ՄԿՐՅԱՆ ՄԿՐՏԻՉ ՄԱՄԲՐԵԻ

Գրականագետ,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1907թ. հոկտեմբերի 9-ին Վանում: 1915-ի Մեծ եղեռնից մազապուրծ բազմաթիվ հայերի հետ 1919թ. Մ.Մկրյանը հանգրվանել է Երևանում: Ավարտելով Խ.Աբովյանի անվան միջնակարգ դպրոցը՝ մեկնել է Նոր Բայազետ (այժմ՝ Գավառ) և աշխատել որպես ուսուցիչ: Մեկ տարի անց ընդունվել է ԵՊՀ պատմագրական ֆակուլտետ:

1930թ. ավարտելով համալսարանը Մ.Մկրյանն ընդունվել է ԵՊՀ ասպիրանտուրա: 1933-ից զբաղվել է գիտամանկավարժական գործունեությամբ: 1939թ. պաշտպանել է թեկնածուական, 1945թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1946թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1941-1947թթ. և 1957-1976թթ. Մ.Մկրյանը եղել է ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի դեկան, 1954-1980թթ.՝ հայ գրականության ամբիոնի վարիչ, 1947-1953-ին՝ ՀԽՍՀ ԳԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն: 1956թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ:

1938թ. Երևանում տպագրվել է նրա կազմած «XIII-XVIIIդդ. հայ աշխարհիկ գրականությունը» ժողովածուն, որի ընդարձակ առաջաբանում նա նոր մոտեցումով է արժևորել Ֆրիկի, Կոստանդին Երզնկացու, Քուչակի, Սայաթ-Նովայի և այլոց ստեղծագործությունները: «Գրիգոր Նարեկացի» մենագրության մեջ (Եր., 1955) Մ.Մկրյանը նորովի է բացահատել հանճարեղ մտածողի ստեղծագործության աղգային ու հա-

մամալրդկային արժեքը: Նրա գրչի արգասիքն են «Էջեր հայ վիպասանության պատմությունից» (Եր., 1957), «Մովսես Խորենացի. կյանքն ու ստեղծագործությունը» (Եր., 1970), «Իսահակյանի հումանիզմը» (Եր., 1975), «Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունը» (Եր., 1981) մենագրությունները:

Մ.Մկրյանը հեղինակ է նաև բուհական և դպրոցական դասագրքերի՝ «Հայ հին գրականության պատմություն» (երկու հատորով, Եր., 1974), «Հայ գրականություն» հանրակրթական դպրոցի 8-րդ դասարանի համար (ունեցել է 12 հրատարակություն):

Մ.Մկրյանը զեկուցումներով հանդես է եկել հանրապետական և համամիութենական գիտաժողովներում: Նրա աշխատությունները թարգմանվել են ռուսերեն, վրացերեն և այլ լեզուներով:

1961թ. Մ.Մկրյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է «Պատվո նշան» շքանշանով:

Վախճանվել է 1983թ. հոկտեմբերի 26-ին Երևանում:

ՄԿՐՏԻՉՅԱՆ ԱՐԹՈՒՐ ԵՐՎԱՆԴԻ

Փիլիսոփայական գիտությունների դոկտոր, դոցենտ

Ծնվել է 1966թ. հունվարի 1-ին Ստեփանակերտում: 1983թ. ավարտել է տեղի թիվ 3 միջնակարգ դպրոցը, 1990թ. ԵՊՀ փիլիսոփայության և սոցիոլոգիայի ֆակուլտետը և ընդունվել ԵՊՀ ասպիրանտուրա:

1994թ. Ա.Մկրտիչյանը պաշտպանել է թեկնածուական, 2008թ.՝ դոկտորական ատենախոսություն:

1988-1990թթ. աշխատել է ՀԽՍՀ ԳԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտում որպես լաբորանտ, 1992-1998թթ. ԵՊՀ սոցիալական փիլիսոփայության և բարոյագիտության ամբիոնում՝ ասիստենտ: 1998-ից եղել է ԵՊՀ սոցիոլոգիայի ամբիոնի դոցենտ, 2006-2008թթ. նույն ամբիոնի վարիչ: 2008-ից ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկանն է:

Հեղինակ է շուրջ 45 գիտական աշխատանքների և «Քաոսը որպես սոցիալական համակարգերի ինքնակազմակերպման համակարգաստեղծ մեխանիզմ» (ռուս., Եր., 2008) մենագրության:

ՄԿՐՏՉՅԱՆ ԼԵՎՈՆ ՄԿՐՏՉԻ

Գրականագետ,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1933թ. մարտի 2-ին Ախալցխայում: 1952-1954թթ. ուսանել է Բաթումի ծովագնացության ուսումնարանում: 1958թ. ավարտել է ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի ռուսաց լեզվի և գրականության բաժինը:

1963թ. Լ.Մկրտչյանը պաշտպանել է թեկնածուական, 1970թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1973թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: Մինչև 1977թ. ղեկավարել է ռուս լեզվաբանության և թարգմանության տեսության, այնուհետև՝ ռուս գրականության ամբիոնը: 1980-1998թթ. եղել է ռուս բանասիրության ֆակուլտետի դեկան, 1998թ. նշանակվել է Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի ռեկտոր:

Մեծ է Լ.Մկրտչյանի ներդրումը հայ միջնադարյան գրականության ուսումնասիրության, թարգմանության ու պրոպագանդման գործում: Ռուսերեն հրատարակել է ինչպես հայ միջնադարյան բանաստեղծներ Գրիգոր Նարեկացու, Նահապետ Քուչակի, Կոստանդին Երզնկացու, Դավթակ Քերթողի առանձին ժողովածուները, այնպես էլ անթոլոգիաներ հանգամանալից առաջաբաններով, ծանոթագրություններով, երբեմն նաև տողացի թարգմանություններով: 1982թ. ռուսերեն հրատարակել է «Սասունցի Դավիթ» էպոսը, նոր, ավելի կատարյալ թարգմանություններով ռուս ընթերցողին ներկայացրել XIX-XX դդ. հայ դասական և ժամանակակից բանաստեղծների (Հովհ.Թումանյան, Ավ.Իսահակյան, Հ.Սահյան և այլն), ինչպես նաև հայերեն հրատարակել ռուս գրողների (Վ.Զվյագինցևա, Ն.Տիխոնով, Ալ.Գիտովիչ, Ս.Շերվինսկի, Ե.Նիկոլաևսկայա, Մ.Պետրովիխ և այլք) երկերը:

Նրա հարուստ ժառանգության մաս են կազմում XXդ. հայ և ռուս գրականության և արվեստի գործիչներից շատերի մասին նրա հուշագրությունները:

Լ.Մկրտչյանը թողել է ինքնակենսագրական արձակ ստեղծագործություններ: Որպես թարգմանության տեսաբան՝ լայն ճանաչման է արժանացել ԽՍՀՄ-ում և արտասահմանում: Նրա նախաձեռնությամբ հանրապետությունում վերականգնվել է

թարգմանչաց տոնը:

1965-ից նա գրողների միության անդամ էր:

Նա պատրաստել է թարգմանության տեսության բնագավառի բազմաթիվ մասնագետներ, եղել է մի շարք ասպիրանտների ու հայցորդների գիտական ղեկավար:

1983թ. հայ միջնադարյան գրականության ուսումնասիրությանն ու պրոպագանդմանը նվիրված նրա աշխատություններն արժանացել են ՀԽՍՀ Պետական մրցանակի:

1981թ. Լ.Մկրտչյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման, պարգևատրվել է «Աշխատանքի վետերան» մեդալով (1979), ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատվոգրով (1980):

Վախճանվել է 2001թ. օգոստոսի 21-ին Երևանում:

ՄԿՐՏՉՅԱՆ ՍԵՐԳԵՅ ՍԵԴՐԱԿԻ

Երկրաբանահանքաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ

Ծնվել է 1911թ. օգոստոսի 24-ին Աշխաբադում: 1928թ. ընդունվել է Ադրբեջանի պոլիտեխնիկական (նավթային) ինստիտուտ, որն ավարտել է 1932թ.:

1953թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1955թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում, իսկ 1956թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս:

1932-1943թթ. Ս.Մկրտչյանը եղել է երկրաբանական-հետախուզական արշավախմբերի ղեկավար: 1943-1947թթ. աշխատել է Հայկական երկրաբանական վարչությունում որպես գլխավոր ինժեներ և պետի տեղակալ: 1947թ. փոխադրվելով ՀԽՍՀ ԳԱ երկրաբանության ինստիտուտ նա ստանձնել է օգտակար հանածոների բաժնի վարիչի, իսկ 1950-1969թթ. և 1971-1974թթ.՝ նույն ինստիտուտի տնօրենի պաշտոնը:

1961-1967թթ. Ս.Մկրտչյանը եղել է ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս-քարտուղար, 1967-1971թթ.՝ փոխնախագահ:

Մինչև 1953թ. դասավանդել է Երևանի լեռնային տեխնիկումում, այնուհետև ԵՊՀ երկրաբանության ֆակուլտետում:

Զեկուցումներով հանդես է եկել հանրապետական, միութենական և միջազգային գիտաժողովներում: Մասնակցել է Միջազգային երկրաբանական XXII (1964թ., Հնդկաստան), XXIII (1968թ., Չեխոսլովակիա), XXIV (1972թ., Կանադա) համաժողովների, Կարպատ-բալկանյան երկրաբանական ասոցիացիայի 9-րդ համաժողովի (1969թ., Բուդապեշտ) և երկրաբանության պատմության միջազգային գիտաժողովի (1970թ., Ֆրայբերգ) աշխատանքներին:

Ս.Մկրտչյանը հեղինակ է ավելի քան 100 աշխատությունների: Մեծ դերակատարություն է ունեցել «Հայաստանի Հանրապետության ատլասի» և երկրաբանական քարտեզների ստեղծման ու հրատարակման գործում, ղեկավարել է Հայկական հանրագիտարանի երկրաբանական-աշխարհագրական մասնաճյուղի գործունեությունը:

Կարևորագույն մենագրություններն են՝ «Նոր տվյալներ ՀՀ հարավային մասի երկրաբանական կառուցվածքի մասին» (Եր., 1948), «ՀՀ Զանգեզուրի հանքաբեր մարզը» (Եր., 1958), «Ալավերդու հանքային շրջանը» (Եր., 1968), «Քաջարանի պղինձ-մոլիբդենային հանքավայրը» (Եր., 1969):

1950թ. Ս.Մկրտչյանն արժանացել է ԽՍՀՄ Պետական մրցանակի, 1961թ. ՀԽՍՀ գիտության և տեխնիկայի վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է Լենինի, «Կարմիր աստղ», «Պատվո նշան» շքանշաններով:

Վախճանվել է 1974թ. օգոստոսի 26-ին Երևանում:

ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՄԵԼՍ ՊԱՐԳԵՎԻ

Հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1950թ. սեպտեմբերի 20-ին Սիսիանի շրջանի Անգեղակոթ գյուղում: 1968թ. ավարտել է թիվ 89 միջնակարգ դպրոցը, 1977թ.՝ Ֆիզիկական կուլտուրայի Հայկական պետական ինստիտուտը և մինչև 1991թ. աշխատել նույն բուհում: 1991-ից Մ.Մկրտումյանը դասավանդում է ԵՊՀ-ում:

1985թ. նա պաշտպանել է թեկնածուական, 2003թ. դոկտորական ատենախոսություն: 1991թ. նրան շնորհվել է դոցենտի, 2006-ին պրոֆեսորի կոչում:

Մ.Մկրտումյանը հեղինակ է ավելի քան 70 գիտական հոդ-

վածների, մենագրությունների, ուսումնամեթոդական ձեռնարկների: Առավել կարևոր են «Արտակարգ պայմաններում անձի հոգեբանական վերականգնման տեխնիկան» (Եր., 1997), «Արտակարգ պայմաններում մարդկանց կենսագործունեության և հոգեկան առողջության պահպանման առանձնահատկությունները» (Եր., 1999), «Հոգեկարգավորման հնարքների ուսուցման մեթոդիկան սպորտում» (Եր., 1989), «Հոգեկանոնավորման մեթոդները և ինքնականոնավորման հնարքների ուսուցումը սպորտում» (Եր., 1989), «Արտակարգ իրավիճակների հոգեբանություն» (Եր., 2005) գրքերը:

Մ.Մկրտումյանի ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 2 ատենախոսություն:

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԼԱՐԻՍԱ ՀՐԱՆՏԻ

Գրականագետ,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1937թ. սեպտեմբերի 5-ին Կիրովականի շրջանի Ղշլաղ գյուղում (այժմ՝ ք. Վանաձոր): 1954թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը, 1960թ. ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժինը, այնուհետև ասպիրանտուրան:

1968թ. Լ.Մնացականյանը պաշտպանել է թեկնածուական, 1990թ.՝ դոկտորական ատենախոսություն: 2003թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1961-1963թթ. Լ.Մնացականյանն աշխատել է ՀԽՍՀ ԳԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում որպես լաբորանտ, 1966-1970թթ.՝ «Երևանի համալսարան» պարբերականում որպես գրական աշխատող, 1970-ից ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի հայ նորագույն գրականության ամբիոնում:

Գիտական հետազոտությունները վերաբերում են հիմնականում 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայ գրական քննադատության պատմությանը:

Կարևոր աշխատություններն են «19-րդ դարավերջի հայ ռեալիստական գրաքննադատության պատմությունից» (Եր., 1974), «Արևմտահայ քննադատական մտքի պատմությունից»

(Եր., 1982), «20-րդ դարասկզբի արևմտահայ գրական քննադատությունը» (Եր., 1990) մենագրությունները և «Հոդվածներ, ուսումնասիրություններ» (Եր., 2007) ժողովածուն: Համահեղինակ է հանրակրթական դպրոցի 6-րդ դասարանի «Գրականություն» (Եր., 1994) և 9-րդ դասարանի «Հայ գրականություն» (Եր., 2008) դասագրքերի: Մամուլում հրատարակել է շուրջ երեսուն գիտական և գրաքննադատական հոդվածներ:

ՄՆՋՈՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ ԼԵՎՈՆԻ

Քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1904թ. նոյեմբերի 23-ին Սարիղամիշում (Կարսի մարզ): Դեռ դպրոցական տարիներից աշխատել է Ալեքսանդրապոլի (այժմ՝ Գյումրի) դեղատանը որպես աշակերտ:

1922թ. Ա.Մնջոյանը տեղափոխվել է Երևան, աշխատել ՀԽՍՀ առողջապահության նախարարության դեղատնային վարչությունում որպես ասիստենտ, ռեցեպտար, հսկիչ:

1928թ. ավարտել է Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի քիմիադեղագործական, իսկ 1933թ.՝ ԵՊՀ բժշկական ֆակուլտետը: 1928-1938թթ. կազմակերպել և ղեկավարել է ՀԽՍՀ դեղատների վարչության գիտահետազոտական արտադրական լաբորատորիան: 1937-1939թթ. եղել է Երևանի բժշկական ինստիտուտի անօրգանական, 1937-1946թթ. օրգանական քիմիայի, միաժամանակ 1937-1941թթ. և 1942-1951թթ.՝ ԵՊՀ օրգանական քիմիայի ամբիոնների վարիչ:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին Ա.Մնջոյանը Երևանի բժշկական ինստիտուտում կազմակերպել և ղեկավարել է հատուկ քիմիական լաբորատորիա, որտեղ սինթեզվել են կարևոր դեղանյութեր ու մարտական թունանյութեր հայտնաբերող ինդիկատորներ:

1945-1950թթ. նա ղեկավարել է ՀԽՍՀ ԳԱ քիմիայի ինստիտուտը: Նրա կազմակերպած դեղագործական քիմիայի լաբորատորիայի հիմքի վրա 1955թ. ստեղծվել է ՀԽՍՀ ԳԱ նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտը, որի գիտական ղեկավարը

և տնօրենն էր Ա.Մնջոյանը մինչև կյանքի վերջը:

1950թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1953-ին՝ ակադեմիկոս: 1953-1960թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ փոխնախագահ, իսկ 1964-1967թթ. քիմիական բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար:

Ա.Մնջոյանը հեղինակ է ավելի քան 260 գիտական աշխատանքների, այդ թվում՝ բազմաթիվ մենագրությունների, որոնք վերաբերում են նոր արդյունավետ դեղանյութերի սինթեզին և օրգանիզմի վրա դրանց ներգործության ուսումնասիրմանը: Մինչև 1937թ. զբաղվել է Հայաստանի բուսական և հանքային հումքից դեղանյութեր ստանալու հետազոտություններով, իսկ 1944-ից՝ թմրեցնող նյութերի սինթեզով:

Ա.Մնջոյանի բազմաթիվ աշխատություններ նվիրված են օրգանական միացության կառուցվածքի և կենսաբանական ակտիվության միջև կապի ուսումնասիրությանը: Նա իրավամբ համարվում է Հայաստանում ֆիզիոլոգիապես ակտիվ նյութերի սինթեզի և հետազոտման ժամանակակից գիտական դպրոցի հիմնադիրը: Նրա նախաձեռնությամբ նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտում ստեղծվել է կենսաբանական բաժին, ինչպես նաև՝ փորձնական արտադրություն: Նրա ղեկավարությամբ սինթեզվել և ուսումնասիրվել են բազմաթիվ նոր, կենսաբանորեն ակտիվ նյութեր, ինչպես նաև մի շարք դեղամիջոցներ դիթիլին, գանգլերոն, սուբեխոլին, արփենալ, մեսֆենալ և այլն, որոնք կիրառվում են սրտանոթային, նյարդահոգեկան, վարակիչ և այլ հիվանդությունների, չարորակ ուռուցքների բուժման համար:

Ա.Մնջոյանը նաև տաղանդավոր ուսուցիչ էր. ստեղծել է քիմիկոսների ու դեղագետների մեծ դպրոց: Նրա ղեկավարությամբ տարիներ շարունակ հրատարակվել են «Հետերոցիկլիկ միացությունների սինթեզ» բազմահատոր պրակները, որոնք թարգմանվել են անգլերեն:

1961թ. Ա.Մնջոյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի, 1969թ.՝ Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման: Պարգևատրվել է Լենինի (3), Աշխատանքային կարմիր դրոշի շքանշաններով:

Վախճանվել է 1970թ. փետրվարի 21-ին Երևանում:

1972-ից ՀՀ ԳԱԱ նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտը կոչվում է Ա.Մնջոյանի անունով:

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱԲԳԱՐ ԽԱՉԱՏՈՒՐԻ

Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1905թ. ապրիլի 1-ին Էրզրումի վիլայեթի Խնուս գավառի Խալչավուշ գյուղում: Եղեռնի տարիներին հրաշքով փրկվել և ապաստան է գտել Արևելյան Հայաստանի որբանոցներում:

1931թ. ավարտել է ԵՊՀ պատմատնտեսագիտական ֆակուլտետը, այնուհետև՝ ասպիրանտուրան: 1942թ. պաշտպանել է թեկնածուական, 1961թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1963թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1932-1934թթ. Ա.Մովսիսյանն աշխատել է ՀԽՍՀ լուսժողկոմատի բաժնի վարիչ, 1934-1935թթ. բարձրագույն կրթության վարչության պետ, 1944-1946թթ.՝ մանկավարժության գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն, 1946-1948թթ. լուսավորության փոխնախարար, 1949-1963թթ. ԵՊՀ մանկավարժության ամբիոնի վարիչ:

Հեղինակ է 3 մենագրության «Ակնարկ հին հայերի կրթության մասին» (Եր., 1939), «Ուրվագծեր հայ դպրոցի ու մանկավարժության պատմության (10-15-րդ դարեր)» (Եր., 1958), «Հայ դպրոցի և մանկավարժության պատմությունից, սկզբից մինչև 18-րդ դար» (ռուս., Եր., 1968), համահեղինակ «Ակնարկներ Սովետական Հայաստանի հանրակրթական դպրոցի պատմության» (Եր., 1955) գրքի:

Ա.Մովսիսյանը Հայրենական պատերազմի մասնակից է, պարգևատրվել է Հայրենական պատերազմի I աստիճանի, Աշխատանքային կարմիր դրոշի շքանշաններով:

1961թ. արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման:

Վախճանվել է 1967թ. սեպտեմբերի 21-ին Երևանում:

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԼԵՐՄՈՆՏ ՄՈՒՇԵՂԻ

Ռադիոֆիզիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր

Ծնվել է 1943թ. հունվարի 4-ին Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանի Հաթերք գյուղում: 1959թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը և նույն տարում ընդունվել ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետ: 1964թ. ավարտել է համալսարանը, իսկ 1965-ից աշխատանքի է անցել ՀԽՍՀ ԳԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտում որպես կրտսեր գիտաշխատող: 1965թ. ընդունվել է Մոսկվայի էներգետիկայի ինստիտուտի ասպիրանտուրա և նույն տարում զորակոչվել խորհրդային բանակ: Զորացրվելուց հետո ուսումը շարունակել է ասպիրանտուրայում և ավարտել այն 1969թ.:

1970թ. Լ.Մովսիսյանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և աշխատանքի անցել ԵՊՀ-ում սկզբում որպես դասախոս, ապա՝ ավագ դասախոս, դոցենտ, իսկ 1992թ. դեկտեմբերից պրոֆեսոր: 1975-1976թթ. նա վերապատրաստվել է Ստենֆորդի (ԱՄՆ) համալսարանում:

1992թ. Լ.Մովսիսյանը Խարկովում պաշտպանել է դոկտորական ատենախոսություն:

1986թ. մինչև կյանքի վերջը Լ.Մովսիսյանը ԵՊՀ ռադիոֆիզիկայի ֆակուլտետի գերբարձր հաճախությունների ռադիոֆիզիկայի ամբիոնի վարիչն էր: Մեծ է նրա ավանդը ֆակուլտետի ստեղծման, զարգացման և Հայաստանում երիտասարդ ռադիոֆիզիկոս մասնագետների պատրաստման գործում: Նա գործուն մասնակցություն է ունեցել մայրենի լեզվով մասնագիտական ուսումնական ձեռնարկների ստեղծմանը: Հեղինակ է ավելի քան 40 գիտական աշխատանքների, այդ թվում՝ «ԳԲՀ էլեկտրադինամիկա» (Եր., 1983) և «ԳԲՀ էլեկտրադինամիկայի հատուկ գլուխներ» (երկու պրակով, Եր., 1988) բուհական ձեռնարկների:

Լ.Մովսիսյանն զբաղվել է հիմնականում ալիքատարում շարժվող լիցքավորված մասնիկների փնջի բնութագրերի հաշվարկման, դիաֆրագմված ալիքատարի համադրման և էլեկտրաճառագայթային փոխազդեցության պրոցեսների օպտիմալացման խնդիրներով:

Վախճանվել է 1995թ. հունվարի 25-ին Երևանում:

ՄՈՎՍԻՍՅԱՆ ՄԵԼԻՍՏ ԵՂԻՇԵԻ

Ֆիզիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Ծնվել է 1929թ. հունիսի 20-ին Երևանում: 1947թ. ավարտել է Երևանի թիվ 29 դպրոցը, 1952թ. ԵՊՀ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը: 1952-1955թթ. Մ.Մովսիսյանը սովորել է ԽՍՀՄ ԳԱ Պ.Լեբեդևի անվան ֆիզիկայի ինստիտուտի ասպիրանտուրայում և 1959թ. պաշտպանել թեկնածուական ատենախոսություն:

1955-1958թթ. նա աշխատել է ԽՍՀՄ ԳԱ սպեկտրադիտման հանձնաժողովում որպես կրտսեր գիտաշխատող, 1958-1963թթ. ԵՊՀ Նյութի կառուցվածքի ամբիոնում որպես ավագ դասախոս, դոցենտ, 1963-1968թթ.՝ ճառագայթման պրոբլեմային լաբորատորիայի վարիչ, 1968-1972թթ.՝ ԵՊՀ օպտիկայի ամբիոնի վարիչ, 1972-2005թթ. ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի օպտիկայի լաբորատորիայի վարիչ:

1973թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1974թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1977թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1996թ.՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս:

Մ.Մովսիսյանը, լինելով առաջին օպտիկ-սպեկտրադիտողը Հայաստանում, կազմակերպել է օպտիկայի ուսումնական լաբորատորիաներ, դասընթացներ: Նրա գիտական աշխատանքները վերաբերում են քվանտային գեներատորների օգնությամբ ոչ գծային օպտիկական փոխազդեցությունների հետազոտմանը: 1965-ից նա զբաղվել է օրգանական հեղուկներում հարկադրական համակցված ցրման սպեկտրների, գազային միջավայրերում ատոմների էլեկտրոնային մակարդակների միջև համակցված ցրման, ինչպես նաև եռաֆոտոն ցրման և այդ պրոցեսների ժամանակային և բևեռային բնութագրերի ուսումնասիրմամբ: Հատկապես կարևոր են ալկալիական մետաղների գոլորշիների հետ հզոր լուսային ճառագայթման ոչ գծային փոխազդեցությանը նվիրված նրա աշխատանքները, որոնք ըստ էության ձևավորել են գիտական հետազոտությունների նոր ուղղություն:

Մ.Մովսիսյանը հեղինակ է ավելի քան 120 գիտական աշխատանքների: Նրա ղեկավարությամբ ու խորհրդատվությամբ պաշտպանվել է թեկնածուական 13 և դոկտորական 1 ատենախոսություն:

1980-1990թթ. Մ.Մովսիսյանը եղել է ԽՍՀՄ ԳԱ «Օպտիկա» կոմպլեքսային ծրագրի միացյալ գիտական խորհրդի, ինչպես նաև «Ատոմների և մոլեկուլների սպեկտրոսկոպիա» պրոբլեմային գիտական խորհրդի անդամ, 1968-1989թթ. "Progress in Optics" միջազգային ամենամյա գրքաշարի խմբագրական խորհրդի անդամ:

ՄՈՎՍԻՍՅԱՆ ՅՈՒՐԻ ԹԱԴԵՎՈՍԻ

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1929թ. հուլիսի 14-ին Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտ քաղաքում: 1949թ. ընդունվել և 1955թ. ավարտել է Ադրբեջանի արդյունաբերության ինստիտուտի ինժեներատնտեսագիտական ֆակուլտետը:

1963թ. Յու.Մովսիսյանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն:

1967-1968թթ. եղել է ԽՍՀՄ ԳԱ Սիբիրի բաժանմունքի էկոնոմիկայի և արդյունաբերական արտադրության կազմակերպման ինստիտուտի ավագ գիտաշխատող, իսկ 1969-1974թթ.՝ ՀԽՍՀ պետպլանի տնտեսության պլանավորման գիտահետազոտական ինստիտուտի գիտական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ և բաժնի վարիչ, 1972-1973թթ. համատեղությամբ՝ ԵՊՀ տնտեսագիտական կիբեռնետիկայի ամբիոնի վարիչ: 1974-1977թթ. աշխատել է ՀԽՍՀ պետպլանում որպես ժողտնտեսության պլանավորման բաժնի պետ:

1977-1979թթ. Յու.Մովսիսյանը եղել է Կուբայի Հանրապետությունում պլանավորման խորհրդի՝ տարածքային պլանավորման գծով խորհրդական:

1978թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1981թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1979-1984թթ. եղել է ԵԺՏԻ տնտեսագիտական կիբեռնետիկայի ամբիոնի վարիչ, 1980-1984թթ.՝ գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր, 1984-1990թթ.՝ ԵՊՀ տնտեսագիտական կիբեռնետի-

կայի ֆակուլտետի դեկան:

1990-1991թթ. եղել է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր էր և ղեկավարել է տնտեսական ինքնուրույնության և տնտեսական զարգացման հարցերի մշտական հանձնաժողովը: 1991 թվականից մինչև կյանքի վերջը համատեղությամբ աշխատել է ԵՊՀ տնտեսագիտության մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի պրոֆեսորի պաշտոնում:

Հեղինակ է ավելի քան 60 գիտական աշխատությունների, այդ թվում՝ "Проблемы оптимизации плановых решений в экономических регионах" (Ер., 1986), «Մաթեմատիկական մեթոդները և մոդելները պլանավորման մեջ» (համահեղինակ, Եր., 1986) գրքերի:

Յու.Մովսիսյանի ղեկավարությամբ պաշտպանվել են բազմաթիվ ատենախոսություններ:

Վախճանվել է 1994թ. հունիսի 3-ին Երևանում:

ՄՈՎՍԻՍՅԱՆ ՅՈՒՐԻ ՄՈՎՍԵՍԻ

Մաթեմատիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր

Ծնվել է 1949թ. ապրիլի 11-ին Լեռնային Ղարաբաղի Թալիշ գյուղում: 1966թ. ավարտել է Երևանի թիվ 1 միջնակարգ դպրոցը, նույն թվականին նաև Երևանի էլեկտրոնային հաշվիչ մեքենաների տեխնիկումը, 1971թ. ԵՊՀ մեխանիկա-մաթեմատիկական ֆակուլտետը:

1974թ. Յու.Մովսիսյանը Քիշնևում պաշտպանել է թեկնածուական, 1992թ.՝ Սանկտ Պետերբուրգում՝ դոկտորական ատենախոսություն: 1981թ. նրան շնորհվել է դոցենտի, 2002թ.՝ պրոֆեսորի կոչում:

1974-ից աշխատում է ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետում: 1985-ից հսնրահաշվի և երկրաչափության ամբիոնի վարիչն է:

Յու.Մովսիսյանի գիտական հետաքրքրությունները վերաբերում են գերնույնություններին և գերբազմաձևություններին: Հեղինակ է ավելի քան 80 գիտական հոդվածների և 2 մենագրության՝ "Введение в теорию алгебр со сверхтожде-

ствами” (Ер., 1986), “Сверхтождества и сверхмногообразия в алгебрах” (Ер., 1990): Հեղինակ է նաև երկու դասագրքի և ուսումնական երկու ձեռնարկի՝ «Բարձրագույն հանրահաշիվ և թվերի տեսություն» (Եր., 2008), «Թվերի տեսություն» (Եր., 2004), «Գծային հանրահաշվի և գծային ծրագրավորման մեթոդներ, տնտեսագիտության և գործարարության հանգունակներ» (Եր., 2002), «Բարձրագույն հանրահաշիվ» (Եր., 1983):

Յու.Մովսիսյանի ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 5 ատենախոսություն:

Նա զեկուցումներով հանդես է եկել միջազգային գիտաժողովներում: 2004-2005թթ. աշխատել է ԱՄՆ-ի Այովայի պետական համալսարանում:

ՄՈՎՍԻՍՅԱՆ ՌԱՖԻԿ ԼԵՎՈՆԻ

Պատմական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր, ՀԽՍՀ բարձրագույն դպրոցի վաստակավոր գործիչ

Ծնվել է 1914թ. մայիսի 25-ին Լեռնային Ղարաբաղի Խանքենդ (այժմ՝ Ստեփանակերտ) քաղաքում: Միջնակարգ կրթություն ստանալուց հետո ուսումը շարունակել է Ստեփանակերտի մանկավարժական տեխնիկումում, որն ավարտելուց հետո աշխատել է որպես ուսուցիչ:

1938թ. ավարտել է ԵՊՀ պատմության ֆակուլտետը: Նույն տարում ընդունվել է ԵՊՀ ասպիրանտուրա: 1939թ. նշանակվել է պատմության ֆակուլտետի դեկանի տեղակալ: 1941թ. մեկնել է ռազմաճակատ, մասնակցել մարտական գործողությունների:

Պատերազմի ավարտից հետո Ռ.Մովսիսյանն անցել է դասախոսական աշխատանքի. 1946-1948թթ.՝ հայկական գյուղատնտեսական ինստիտուտում, ապա՝ ԵՊՀ-ում, որտեղ 1948-ին ընտրվել է կուսկոմիտեի առաջին քարտուղար: 1950-1952թթ. եղել է ՀԿԿ Երևանի Կիրովյան շրջկոմի առաջին քարտուղար:

Ռ.Մովսիսյանը երկար տարիներ ընդմիջումներով վարել է համալսարանի ԽՄԿԿ պատմության ամբիոնի վարիչի պաշտոնը: 1960-1964թթ. և 1974-1980թթ. եղել է ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան:

1951թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1953թ. նրան շնորհվել է դոցենտի, 1978թ. պրոֆեսորի կոչում:

Հեղինակ է ավելի քան 25 հոդվածի, 12 մենագրության և գրքույկների: Առավել կարևոր են «Կովկասյան բոլշևիկյան կազմակերպությունների երկրային առաջին համագումարը և Ստեփան Շահումյանը» (Եր., 1955), «ՍՍՌՄ-ում սոցիալիզմի կառուցման լենինյան պլանը և նրա կենսագործումը» (Եր., 1965), «Կուսակցության ղեկավար դերի աճը կոմունիստական շինարարության արդի էտապում» (Եր., 1972), «Պատմական ուղենիշ: (ՍՄԿԿ XXVI համագումարի որոշումները գործողության մեջ)» (Եր., 1984), «Վերակառուցման ստրատեգիան» (Եր., 1987) աշխատությունները:

Նա եղել է Հայաստանի կոմկուսի կենտկոմի պլենումի անդամության թեկնածու, ՀԿԿ Երևանի քաղկոմի և քաղկոմի բյուրոյի անդամ, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր:

Ռ.Մովսիսյանն արժանացել է ՀԽՍՀ բարձրագույն դպրոցի վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է մի շարք շքանշաններով ու մեդալներով:

Վախճանվել է 1997թ. Երևանում:

ՄՈՒՇԵՂՅԱՆ ԱՇՈՏ ՎԱՐԱԶԴԱՏԻ

Քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր



Ծնվել է 1933թ. հունիսի 11-ին Երևանում: Ավարտելով Երևանի թիվ 40 դպրոցը ընդունվել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետ, որն ավարտել է 1956թ.: Աշխատել է ՀԽՍՀ ԳԱ նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտում որպես լաբորանտ, այնուհետև՝ կրտսեր գիտաշխատող: 1960թ. տեղափոխվել է ՀԽՍՀ ԳԱ օրգանական քիմիայի ինստիտուտ, որտեղ ղեկավարել է քիմիայի բնագավառում Հայաստանում առաջին սպեկտրադիտական հետազոտությունների խումբը:

1967թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և աշխատանքի անցել ԵՊՀ տեսական քիմիայի ամբիոնում որպես ավագ դասախոս, ապա՝ դոցենտ:

1986թ. Ա.Մուշեղյանը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, իսկ 1988-ին նրան շնորհվել է պրոֆեսորի կո-

չում: Նույն թվականից մինչև կյանքի վերջը եղել է ԵՊՀ կատալիզի ամբիոնի վարիչ: Նրա նախաձեռնությամբ ամբիոնում գիտական հիմքերի վրա են դրվել որդան կարմիրի ստացման և ուսումնասիրման աշխատանքները, որոնք արժանացել են ՀԽՍՀ կառավարության և ԳԱ ուշադրությանն ու խրախուսմանը:

Ա.Մուշեղյանը հեղինակ է շուրջ 120 գիտական աշխատանքների, որոնք վերաբերում են չհագեցած միացությունների, սպիրտների իզոմերացման մեխանիզմին և վերջնանյութերի ստացմանն ու պարզաբանմանը:

Լինելով Հայաստանում սպեկտրային վերլուծության առաջատար մասնագետներից և քիմիայում դրա արմատավորողներից մեկը Ա.Մուշեղյանը լուրջ ներդրում է ունեցել հանրապետությունում այդ բնագավառի մասնագետների պատրաստման գործում: Մեծ է նրա ավանդը նաև Հայաստանում հետերոգեն կատալիզի զարգացման, նոր տիպի կատալիզատորների մշակման բնագավառում:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 6 ատենախոսություն:

Ա.Մուշեղյանը վախճանվել է 1994թ. նոյեմբերի 8-ին Երևանում:

ՄՈՒՇԵՂՅԱՆ ԳՐԻԳՈՐ ՊԵՏՐՈՍԻ

Ֆիզիոլոգ,
բժշկական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1900թ. հունվարի 10-ին Վաղարշապատում: Մինչև 1917թ. սովորել է Գևորգյան ճեմարանում, ապա կրթությունը շարունակել է Երևանի թեմական դպրոցում: 1922թ. ընդունվել է ԵՊՀ բժշկական ֆակուլտետ, որը 1927թ. ավարտելուց հետո աշխատել է նույն ֆակուլտետի մարդու ֆիզիոլոգիայի ամբիոնում որպես ասիստենտ, այնուհետև գործուղվել Լենինգրադ (այժմ՝ Սանկտ Պետերբուրգ)՝ վերապատրաստվելու Ի.Պավլովի և Լ.Օրբելու լաբորատորիաներում:

1930թ. Գ.Մուշեղյանի ջանքերով նորաստեղծ բժշկական ինստիտուտում կազմակերպվել է ֆիզիոլոգիայի ամբիոն: 1936թ. նա պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն,

իսկ 1940թ. նրան շնորհվել է դոցենտի կոչում:

1936-1949թթ. Գ. Մուշեղյանը զբաղեցրել է ԵՊՀ ֆիզիոլոգիայի ամբիոնի վարիչի, իսկ 1944-1950թթ.՝ նաև ՀԽՍՀ ԳԱ ֆիզիոլոգիայի ինստիտուտի գիտական աշխատանքների գծով փոխտնօրենի ու բաժանմունքի վարիչի պաշտոնները:

Հեղինակ է շուրջ 80 գիտական աշխատությունների՝ նվիրված մարսողական համակարգի, ուղեղիկի սիմպաթիկ նյարդային համակարգի ֆիզիոլոգիայի հարցերին, ինչպես նաև Հայաստանի հանքային ջրերի բուժական ազդեցությունների ուսումնասիրմանը:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 13 ատենախոսություն:

1967թ. Գ.Մուշեղյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով և մի շարք մեդալներով:

Վախճանվել է 1971թ. հունիսի 7-ին Երևանում:

ՄՈՒՍԱԽԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ ԱՐԱՄԻ

Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀԽՍՀ վաստակավոր իրավաբան

Ծնվել է 1919թ. հունիսի 18-ին Երևանում: Ավարտելով միջնակարգ դպրոցը՝ 1939թ. զորակոչվել է Կարմիր բանակ, մասնակցել Հայրենական մեծ պատերազմին, ծանր վիրավորվելուց հետո զորացրվել:

1942թ. Վ.Մուսախանյանն ընդունվել և 1946-ին ավարտել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետը, աշխատել որպես քննիչ, ապա ընդունվել ասպիրանտուրա: 1956թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1957թ. նրան շնորհվել է դոցենտի կոչում:

Դասախոսական աշխատանքին զուգընթաց՝ 1951-1954թթ. ղեկավարել է Համամիութենական հեռակա իրավաբանական ինստիտուտի Երևանի մասնաճյուղը:

1954-1956թթ. Վ.Մուսախանյանը եղել է ԵՊՀ երեկոյան և հեռակա ուսուցման գծով պրոռեկտոր, 1970-1974թթ.՝ իրավագիտության ֆակուլտետի դեկան, 1979-1989թթ.՝ խորհրդային իրավունքի միջբուհական ամբիոնի վարիչ:

Հեղինակ է շուրջ 20 գիտական աշխատությունների, այդ

թվում՝ «Սոցիալիստական իրավունքի էությունը» (Եր., 1962), «Իրավունքը, իրավագիտակցությունը և բարոյականությունը սոցիալիստական հասարակարգում» (Եր., 1964), «Սոցիալիստական պետության ձևերը» (Եր., 1986) գրքերի, ինչպես նաև ուսումնական ձեռնարկների:

1962թ. Վ.Մուսախանյանն արժանացել է ՀԽՍՀ վաստակավոր իրավաբանի կոչման:

Վախճանվել է 2001թ. սեպտեմբերի 30-ին Երևանում:

ՄՈՒՍՈՅԱՆ ՎԻԴՈԿ ԽԱՉԻԿԻ

Մաթեմատիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1938թ. հոկտեմբերի 24-ին Նոր Բայազետում (այժմ՝ Գավառ): 1957թ. ավարտել է տեղի թիվ 1 միջնակարգ դպրոցը, 1962թ.՝ ԵՊՀ մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետը, 1965թ.՝ ԽՍՀՄ ԳԱ Վ.Ստեկլովի անվան մաթեմատիկայի ինստիտուտի ասպիրանտուրան:

1966թ. Վ.Մուսոյանը պաշտպանել է թեկնածուական, 1988թ. դոկտորական ատենախոսություն: 1968թ. նրան շնորհվել է դոցենտի, 1990թ. պրոֆեսորի կոչում:

1966-1967թթ. Վ.Մուսոյանը եղել է ՀԽՍՀ ԳԱ մաթեմատիկայի ինստիտուտի գիտաշխատող, 1967-1968թթ. դասավանդել է Երևանի Խ.Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտում: 1968-ից նա աշխատել է ԵՊՀ-ում: 1977-1978թթ. եղել է ԵՊՀ մեխանիկամաթեմատիկական, 1992-1995թթ.՝ մաթեմատիկայի ֆակուլտետի դեկան, 1992-1997թթ. մաթեմատիկական անալիզի ամբիոնի վարիչ:

Հեղինակ է 20 գիտական հոդվածների և «Կոմպլեքս անալիզ» (Եր., 1992), «Մաթեմատիկական անալիզ» (Եր., 2009) դասագրքերի:

Գիտական գործունեության հիմնական ուղղություններն են՝ մոտարկումներ կոմպլեքս փոփոխականի ֆունկցիաներով, Մյունցի-Սասի և Դիրիխլեի համակարգերին առնչվող էքստրեմալ գնահատականներ, երկօրթոգոնալ վերլուծություններ, գումարման մեթոդներ, արագ մոտարկումներ:

Վ.Մուսոյանի ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 2 ատենախոսություն:

Վախճանվել է 2009թ. օգոստոսի 18-ին Երևանում:

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԱՏՈՄ ԺՈՐԱՅԻ

Ֆիզիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1948թ. հունվարի 1-ին Արտաշատում: 1965թ. ավարտել է տեղի թիվ 1 միջնակարգ դպրոցը, 1970թ. ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետը:

1980թ. Ա.Մուրադյանը պաշտպանել է թեկնածուական, 1991-ին՝ դոկտորական ատենախոսություն: 2006թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1976-1995թթ. եղել է ԵՊՀ «Լազերային տեխնիկա» գիտաարտադրական միավորման կրտսեր, ապա ավագ գիտաշխատող, թեմայի ղեկավար, 1970-1972թթ. տեսական ֆիզիկայի ամբիոնի ասիստենտ, իսկ 1995-ից ԵՊՀ ընդհանուր ֆիզիկայի ամբիոնի դոցենտ, ապա՝ պրոֆեսոր:

1993-1998թթ. Ա.Մուրադյանը համատեղությամբ աշխատել է ՀՀ սեյսմիկ պաշտպանության ծառայությունում որպես տվյալների մաթեմատիկական մշակման բաժնի վարիչ, իսկ 1998-2004թթ.՝ ՀՀ ԳԱԱ «Մաշտոց» ճարտարագիտական կենտրոնում որպես գիտական գծով փոխտնօրեն:

Հեղինակ է ավելի քան 110 գիտական հոդվածների և ԽՍՀՄ 4 հեղինակային իրավունքի, որոնք վերաբերում են քվանտային օպտիկային, բոզե-այնշտայնյան կոնդենսացմանը, ատոմների շարժման քվանտամեխանիկական առանձնահատկություններին օպտիկական և մագնիսական թակարդներում, ռեզոնանսային միջավայրերում լազերային ճառագայթման ինքնակիզակետման և լուսամակածված օպտիկական անիզոտրոպության երևույթներին: Կանխատեսել է ատոմների կոհերենտ բաղմաֆոտոն ցրման երևույթը պարբերական ալիքի դաշտում և հաշվել ցրման քվանտամեխանիկական լայնույթը:

Համահեղինակ է «Մասնիկների պատահական շարժումները» (Եր., 2006) ուսումնական ձեռնարկի:

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՍԱՄՎԵԼ ՊԱՐԳԵՎԻ

Գրականագետ,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1945թ. հունվարի 20-ին Աշտարակի շրջանի Ջորափ (այժմ՝ Աղձք) գյուղում: Ավարտելով ծննդավայրի միջնակարգ դպրոցը՝ 1961-1964թթ. սովորել է Երևանի էլեկտրոնային հաշվիչ մեքենաների տեխնիկումում, ապա՝ 1964-1969թթ. ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժնում:

1969-1972թթ. Ս.Մուրադյանն աշխատել է ԵՊՀ հայագիտական կենտրոնում, 1972-1985թթ. եղել «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի պատասխանատու քարտուղար:

1984թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և անցել դասախոսական աշխատանքի:

1992-1994թթ. Ս.Մուրադյանը Երուսաղեմի հայոց պատրիարքարանի հրավերով դասավանդել է տեղի Ալեք և Մարի Մանուկյանների անվան ժառանգավորաց վարժարանում և Ընծայարանում:

1995թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 2004թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 2001 թվականից նա հայ գրականության ամբիոնի վարիչն է:

Ս.Մուրադյանը հեղինակ է ավելի քան ութ տասնյակ հոդվածների և մենագրությունների: Կարևոր մենագրություններն են՝ «Հարություն Սուրխաթյան» (Եր., 1988), «Երվանդ Օտյան» (Եր., 1996), «Գրական հանգրվաններ» (գիրք Ա, Եր., 2003, գիրք Բ, Եր., 2007): Համահեղինակ է Իրանի հայկական դպրոցների 7-րդ դասարանի «Մայրենի» (Թեհրան, 2007) դասագրքի:

Զեկուցումներով հանդես է եկել հանրապետական ու միջազգային գիտաժողովներում (Երևան, Օշական, Գյումրի, Ստեփանակերտ, Երուսաղեմ, Բեյրութ, Հալեպ, Նոր Ջուղա, Թեհրան):

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 6 ատենախոսություն:

2001-ից Ս.Մուրադյանը գրողների միության անդամ է:

ՑԱՍԻՆՍԿԱՅԱ ԶՈՅԱ ԻԵՐՈՆԻՄԻ

Գրականագետ, դոցենտ,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ



Ծնվել է 1896թ. նոյեմբերի 12-ին Սանկտ Պետերբուրգում: Ավարտելով կանանց գիմնազիան և սղագրության դասընթացները՝ աշխատել է Նոբելի մեքենաշինական գործարանում: Բարձրագույն կրթությունն ստացել է Մոսկվայի գրական-գեղարվեստական ինստիտուտում և Պետրոգրադի (այժմ՝ Սանկտ Պետերբուրգ) համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետում:

1923թ. Զ.Յասինսկայան գործուղվել է Հայաստան, 1933-1957թթ. ղեկավարել է ԵՊՀ և մանկավարժական ինստիտուտի ռուս գրականության ամբիոնները: 1957-ից մինչև կյանքի վերջը Երևանի ռուսաց և օտար լեզուների մանկավարժական ինստիտուտի ռուս գրականության ամբիոնի դոցենտ էր:

Զ.Յասինսկայան Հայաստանում ռուս գրականագիտության հիմնադիրներից է: 1930-1940թթ. նա դասախոսություններ է կարդացել և ուսումնական ձեռնարկներ պատրաստել բանահյուսությունից, ռուս հին և XVIII-XIXդդ. գրականությունից: Կազմել է քրեստոմատիաներ, եղել հայկական դպրոցների համար ստեղծված տասնյակ դասագրքերի համահեղինակ: Նրա գիտական գործունեության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում ռուս հին գրականությունը. Ղ.Այվազյանի հետ հայերեն հրատարակել է «Կիևյան Ռուսիայի գրականություն» (Եր., 1949) մենագրությունը:

Դեռևս 1918-1924թթ. Զ.Յասինսկայան տպագրել է պատմվածքների շարք, 60-ականներին՝ հուշեր Ս.Եսենինի, Վ.Բրյուսովի, Վ.Մայակովսկու հետ իր հանդիպումների մասին, գրել հոդվածներ Վ.Բրյուսովի արձակի մասին, հրատարակության պատրաստել (Ե.Զուդեցկայայի հետ) նրա «Կրակե հրեշտակը» վեպը: Նա Երևանում ավանդույթ դարձած «Բրյուսովյան ընթերցումներ»-ի կազմակերպիչներից էր:

1955թ. Զ.Յասինսկայան արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի (2) շքանշանով:

Վախճանվել է 1978թ. ապրիլի 27-ին Երևանում:

ՅԱՎՐՈՒՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ ԳՐԻԳՈՐԻ

Կենդանաբան,
կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1939թ. սեպտեմբերի 11-ին Յալթայում: 1956թ. ավարտել է Երևանի թիվ 42 դպրոցը և ընդունվել ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետ, որն ավարտել է 1962թ.: 1961-ից աշխատել է նույն ֆակուլտետի կենդանաբանության ամբիոնում որպես ավագ լաբորանտ, ասիստենտ, դոցենտ, պրոֆեսոր:

1966-1969թթ. սովորել է ԵՊՀ ասպիրանտուրայում: 1970թ. պաշտպանել է թեկնածուական, 1991թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1973թ. նրան շնորհվել է դոցենտի, 2002թ. պրոֆեսորի կոչում:

1980-1984թթ. Էդ.Յավրույանն աշխատել է Ալժիրում, եղել Աննաբա քաղաքի համալսարանի կենդանաբանության ամբիոնի վարիչ և Մահրիբի երկրների գիտական հետազոտական խմբի բաժնի ղեկավար:

Հեղինակ է շուրջ 200 աշխատանքների և մեթոդական ձեռնարկների, որոնք վերաբերում են կաթնասունների էկոլոգիայի, էթոլոգիայի, դրանց տեսակառաջացման հարցերին: Ուշադրության են արժանի նրա "La classification des Vertebres" (Ալժիր, 1983) և «Ղարաբաղի վայրի կաթնասունները» (մաս I, II, ԼՂՀ, 2003) աշխատանքները:

Էդ.Յավրույանը չվող, հազվագյուտ և պահպանվող կենդանիների կենսաբազմազանության՝ ՄԱԿ-ի էկոլոգիական բաժանմունքի փոխնախագահն է, Eurobats միջազգային կոմիտեի նախագահության անդամ:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 6 ատենախոսություն:

ՆԱԶԱՐՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ ՌՈՒԲԵՆԻ

Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1932թ. մայիսի 10-ին Երևանում: 1949թ. ավարտել է թիվ 34 միջնակարգ դպրոցը և ընդունվել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ: 1954թ. ավարտել է համալսարանը և որպես լրագրող աշխատել «Սովետական դպրոց» թերթի խմբագրությունում: 1963թ. ավարտել է ԵՊՀ ասպիրանտուրան:

1968թ. Վ.Նազարյանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և անցել դասախոսական աշխատանքի ԵՊՀ-ում: Որոշ ընդմիջումներով եղել է ՀԽՍՀ արդարադատության նախարարության կրիմինալիստիկայի լաբորատորիայի վարիչ: 1987թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1990թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1983-1988թթ. Վ.Նազարյանը ղեկավարել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական և միջազգային իրավունքի ամբիոնը:

1988-1990թթ. եղել է ՀՀ գլխավոր դատախազ, 1995-2001թթ. ՀՀ ԱԺ իրավաբանական վարչության ղեկավար:

Հեղինակ է «Հայաստանի Հանրապետության սահմանադրության կոնցեպցիան» (Եր., 1995), «Օրենսդրական տեխնիկայի հիմունքները» (Եր., 1997), «Իրավաբանական անձինք» (Եր., 1999) և այլ մենագրությունների, գրքույկների ու տասնյակ գիտական հոդվածների: Նա գործուն մասնակցություն է ունեցել Հայաստանի Հանրապետության սահմանադրության, ՀՀ քաղաքացիական և քաղաքացիական դատավարության օրենսգրքերի նախագծերի, ինչպես նաև մի շարք կուսակցությունների ու հասարակական կազմակերպությունների կանոնադրությունների նախագծերի մշակման աշխատանքներին:

Վ.Նազարյանը վախճանվել է 2002թ. հունիսի 21-ին Երևանում:

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ԳԵՈՐԳԻ ՄԿՐՏՉԻ

Իրանագետ,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Նալբանդյանների ընտանիքը Մեծ եղեռնից մազապուրծ՝ գաղթել է Ռուսաստան՝ բնակություն հաստատելով Չիտա քաղաքում, որտեղ 1926թ. հունվարի 5-ին ծնվել է Գ.Նալբանդյանը: Նույն թվականին էլ ընտանիքով տեղափոխվել են Մոսկվա: Լինելով իրանահպատակ՝ ստիպված են եղել արտագաղթել Պարսկաստան:

Գ.Նալբանդյանը տարրական և միջնակարգ կրթությունն ստացել է Թեհրանի դպրոցներում: 1946թ. ծնողների հետ տեղափոխվել է Հայաստան: 1951թ. ավարտել է ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի արևելագիտության բաժինը:

1952 թվականից դասավանդել է ԵՊՀ-ում: 1955թ. պաշտպանել է թեկնածուական, 1972թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1973թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Գ.Նալբանդյանն արևելագիտության ֆակուլտետի հիմնադիրներից է և առաջին դեկանը (1968-1973թթ.): 1968թ. նրա ջանքերով ֆակուլտետի կազմում ստեղծվել է նաև քրդագիտության բաժին: 1973-1998թթ. իրանագիտության և քրդագիտության ամբիոնի վարիչն էր: 1997թ. արժանացել է «ԵՊՀ ամբիոնի պատվավոր վարիչ» կոչման:

Գ.Նալբանդյանը հեղինակ է իրանական բանասիրությանը վերաբերող 24 գրքի և տասնյակ հոդվածների: Առանձնապես արժեքավոր են «Պարսից լեզվի քերականություն» (Եր., 1980), «Պարսկերեն-Հայերեն բառարան» (Եր., 1987) գրքերը: Նա հայերենից պարսկերեն է թարգմանել Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոցը» (Եր., 1989), Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» (Եր., 1984):

Նա եղել է «Պարսից լեզվի և գրականության զարգացման միջազգային ասոցիացիայի» (կենտրոնը՝ Թեհրանում) նախագահության անդամ, մասնակցել իրանագիտությանը նվիրված միջազգային համաժողովների ու գիտաժողովների:

Գ.Նալբանդյանը վախճանվել է 1998թ. նոյեմբերի 5-ին Երևանում:

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՎԱՉԵ ՍՄԲԱՏԻ

Գրականագետ,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,

Ծնվել է 1919թ. փետրվարի 25-ին Նոր Բայազետում (այժմ՝ Գավառ): 1936թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը, 1941թ.՝ ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժինը: Հայրենական մեծ պատերազմի տարիներին մեկնել է բանակ, մասնակցել Հյուսիսային Կովկասում մղված մարտերին: 1946-1948թթ. սովորել է ԵՊՀ ասպիրանտուրայում:

1953թ. պաշտպանել է թեկնածուական, 1968թ. դոկտորական ատենախոսություն: 1969թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1971թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1994թ.՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս:

1948-ից չուրջ կես դար Վ.Նալբանդյանը դասավանդել է ԵՊՀ-ում: 1948-1950թթ. աշխատել է որպես ՀԿԿ Երևանի Կիրովյան շրջկոմի քարտուղար, 1950-1952-ին՝ ՀԿԿ Երևանի քաղաքային կոմիտեի կուսակցական օրգանների բաժնի վարիչ:

1952-1953թթ. եղել է Երևանի Մ.Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրեն, 1953-1956թթ. ՀԿԿ Կենտկոմի կուսակցական օրգանների բաժնի վարիչ, 1956-1965թթ.՝ ԵՊՀ գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր, 1965-1977թթ՝ ՀԽՍՀ ԳԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի, իսկ 1978-1998թթ. ՀԽՍՀ ԳԱ հիմնարար գիտական գրադարանի տնօրեն:

Վ.Նալբանդյանն զբաղվել է հայոց հին և միջնադարյան գրականության պատմության հարցերով: Արժեքավոր են նրա «Եղիշե» (Եր., 1962, 1972), «Վարդանանց պատերազմը և Դ.Դեմիրճյանի «Վարդանանքը» (ռուս., Եր., 1965), «Թբիլիսին հայ մատենագրության մեջ» (Եր., 1958, 1961, վրաց., 1959), «Գրողը և պատմությունը» (Եր., 1970), «Գրիգոր Նարեկացի» (Եր., 1990), «Սայաթ-Նովա» (Եր., 1987) ուսումնասիրությունները:

Հեղինակ է «Համաշխարհային գրականության պատմություն» ռուսերեն գրքի հայ գրականության բաժնի, համահեղինակ «Հայ գրականություն» ռուսերեն բուհական դասագրքի:

1958-1967թթ. Վ.Նալբանդյանը եղել է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահի տեղակալ, 1954-1963թթ.՝ ՀԿԿ Կենտկոմի անդամ, 1956-1958թթ.՝ ՀԿԿ Կենտկոմի բյուրոյի անդամության թեկնածու, ՀԽՍՀ IV-VII գումարումների Գերագույն խորհրդի պատգամավոր:

1966-ից գրողների միության անդամ էր:

Պարգևատրվել է Հայրենական մեծ պատերազմի II աստիճանի շքանշանով ու մեդալներով:

Վ.Նալբանդյանը վախճանվել է 1998թ. փետրվարի 28-ին Երևանում:

ՆԱՋԱՐՅԱՆ ՀՈՒՍԻԿ ԽՈՍՐՈՎԻ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1905թ. ապրիլին Արևմտյան Հայաստանի Բիթլիս քաղաքում, վերապրել 1915թ. Մեծ եղեռնի արհավիրքները, ապաստանել Անդրկովկասում, իսկ 1917-1921թթ. Հայաստանի տարբեր որբանոցներում: 1924թ. ստացել է միջնակարգ կրթություն: 1924-1927թթ. կոմերիտական աշխատանք է կատարել Էջմիածնում, Զանգիբասարում (այժմ՝ Մասիս) և Դիլիջանում: 1927-1928թթ. սովորել է Կարմիր բանակի մեկամյա դասընթացներում: 1931թ. ավարտել է ԵՊՀ պատմաբանասիրական ֆակուլտետը: 1932-1938թթ. զբաղեցրել է կուսակցական, պետական և հրատարակչական տարբեր պաշտոններ:

1938-1940թթ. սովորել է Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի ասպիրանտուրայում: 1940-1942թթ. եղել է ԵՊՀ միջին դարերի պատմության ամբիոնի դասախոս, 1942-1946թթ.՝ Անդրկովկասում Կարմիր բանակի քաղաշխատող, 1946-1955թթ.՝ ԵՊՀ ընդհանուր պատմության ամբիոնի դասախոս, 1955-1975թթ. դոցենտ, 1975-1985թթ.՝ պրոֆեսոր:

1947թ. Հ.Նաջարյանը պաշտպանել է թեկնածուական, 1972թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1955թ. նրան շնորհվել է դոցենտի, 1975թ. պրոֆեսորի կոչում: 1985թ. անցել է վաստակած հանգստի:

Հեղինակ է շուրջ 30 գիտական հոդվածների և 3 մենագրության՝ «Թուրք-իրանական պատերազմը XVIII դ. սկզբում և հայերի վերաբնակեցումը» (Եր., 1957), «Թուրք-իրանական

հարաբերությունները XVI դարում ու XVII դարի առաջին կեսին և Հայաստանը» (Եր., 1961), «Թուրք-իրանական 1639թ. հաշտության պայմանագիրը և Հայաստանը» (Եր., 1970):

Հ.Նաջարյանը պարգևատրվել է մարտական և բազմաթիվ այլ մեդալներով, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատվոգրով (1971):

Վախճանվել է 1994թ. հուլիսի 1-ին Երևանում:

ՆԱՎԱԿԱՏԻԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ

Ֆիզիկոս, պրոֆեսոր

Ծնվել է 1888թ. նոյեմբերի 5-ին Ախալցխայում: Տեղի ու Մախաչկալայի քաղաքային ուսումնարաններում սովորելուց հետո 1904թ. ընդունվել և 1909թ. ավարտել է Դերբենդի ռեալական ուսումնարանը: 1910-1913թթ. սովորել է Մոսկվայի համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետում: 1912թ. մեկնել է Գերմանիա և մեկ կիսամյակ դասախոսություններ լսել Գյոթինգենի համալսարանում:

Մոսկվայի համալսարանն ավարտելուց հետո մեկ տարի աշխատել է Դերբենդի ռեալական ուսումնարանում որպես ուսուցիչ: 1914-1918թթ. Գյոթինգենի համալսարանում զբաղվել է ֆիզիկամաթեմատիկական գիտելիքների խորացված ուսումնասիրությամբ: 1918թ. վերադարձել է Ռուսաստան և աշխատել Աստրախանի ուսուցչական սեմինարիայում և ժողովրդական կրթության ինստիտուտում որպես ֆիզիկամաթեմատիկական առարկաների ուսուցիչ:

1921թ. Հ.Նավակատիկյանը հրավիրվել է ԵՊՀ, որտեղ աշխատել է մինչև 1938թ.՝ դասավանդելով վերլուծական երկրաչափություն և ֆիզիկայի ընդհանուր դասընթաց, իսկ հետագայում՝ նաև օպտիկայի դասընթաց:

1930թ. Հ.Նավակատիկյանին շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1933թ. նա նշանակվել է ֆիզիկայի ամբիոնի վարիչ: Եղել է նաև տեխնիկական և ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետների դեկան, համալսարանի պրոռեկտոր:

Հ.Նավակատիկյանը այլ հեղինակների հետ կազմել է ֆիզիկայի ու մաթեմատիկայի մի քանի ուսումնական ձեռնարկ, որոնցից առավել նշանավորը վերլուծական երկրաչափության ձեռնարկն է (ունեցել է երեք հրատարակություն):

1938թ. ստալինյան բռնարարքների հետևանքով դադարել է Հ.Նավակատիկյանի գործունեությունը ԵՊՀ-ում: Նա աքսորվել է և մի քանի տարի մանկավարժական աշխատանք կատարել ԽՍՀՄ Հյուսիսարևելյան շրջանների միջնակարգ դպրոցներում: Հետագայում արդարացվել է:

1944-1951թթ. Հ.Նավակատիկյանն աշխատել է Օրջոնիկիձե քաղաքում որպես Հյուսիս-Օսեթական մանկավարժական ինստիտուտի ամբիոնի վարիչ:

Վախճանվել է 1952թ. հոկտեմբերի 29-ին Երևանում:

ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ԼԻՊԱՐԻՏ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Կենսաքիմիկոս,
կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1940թ. մայիսի 9-ին Աբովյանի շրջանի Գեղաշեն գյուղում: 1957թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը, 1963թ. ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետը:

1964-ից Լ.Նավասարդյանն աշխատել է ԵՊՀ կենսաքիմիայի ամբիոնում որպես լաբորանտ, ասպիրանտ, գիտաշխատող, ասիստենտ, դոցենտ: 1975թ. պաշտպանել է թեկնածուական, 2003թ. դոկտորական ատենախոսություն: 2004թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Լ.Նավասարդյանը հեղինակ է շուրջ 45 աշխատանքների, այդ թվում՝ «Խմորասնկային բջիջների սպիտակուցային փոխանակության մաս-սպեկտրոսկոպիկ ուսումնասիրության սկզբունքներ» (Եր., 1985), «Կենսաքիմիայի լաբորատոր աշխատանքների ուսումնամեթոդական ձեռնարկ» (Եր., 2003) գրքերի:

Նա հետաքրքրել է արտակարգ վիճակներում (ազոտային քաղց, ջերմաստիճանային և ճառագայթային գործոնների աղդեցություն) միաբջիջ օրգանիզմների (խմորասնկերի) սպիտակուցների փոխանակության և նուկլեինաթթուների կառուցվածքային փոփոխությունները: Ազոտի ծանր իզոտոպով նշագրված ամինաթթուների օգտագործմամբ ուսումնասիրել է ամինաթթուների՝ բջիջ թափանցելու, փոխանակության և սպիտակուցների սինթեզում դրանց ներգրավման հարցերը: Ցույց է տվել, որ քաղցի պայմաններում խմորասնկերում քայ-

քայման պրոցեսների խթանման ֆոնի վրա ուժեղանում է որոշ սպիտակուցների կենսասինթեզը, որն ունի պաշտպանիչ նշանակություն: Ուսումնասիրել է ռենտգենյան ճառագայթման ազդեցության պայմաններում խմորասնկային բջիջների կենսունակությունը, խմորասնկային ԴՆԹ-ի կառուցվածքում նկատվող փոփոխությունները և կառուցվածքային վնասվածքների վերացման ուղիները:

Լ.Նավասարդյանը մասնակցել է միջազգային գիտաժողովների (Դամասկոս՝ 2001, Դուբնա՝ 2005 և այլն):

ՆԵՐԿԱՐԱՐՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ ՎԼԱԴԻՄԻՐԻ

Ֆիզիկոս,
Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր

Ծնվել է 1954թ. օգոստոսի 26-ին Ստեփանավանի շրջանի Կուրթան գյուղում: 1971թ. ավարտել է Երևանի թիվ 2 դպրոցը և ընդունվել ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետ, որն ավարտելուց հետո, 1976թ., աշխատանքի է անցել ԵՊՀ կոնդենսացված միջավայրերի ֆիզիկայի գիտահետազոտական ինստիտուտում: 1991-ից նա աշխատել է ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետում որպես դոցենտ: 1983թ. Խ.Ներկարարյանը պաշտպանել է թեկնածուական, իսկ 1994թ. դոկտորական ատենախոսություն: 2009թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Հեղինակ է ավելի քան 100 գիտական աշխատանքների: Հետազոտությունների ոլորտն ընդգրկում է նանոօպտիկան և տեղեկատվության օպտիկական մշակման ու հաղորդման ֆիզիկական սկզբունքները: Առավել ուշագրավ աշխատանքները նվիրված են մակերևութային էլեկտրամագնիսական ալիքների տեղայնացմանն ու ալիքային դաշտերի արտասովոր աճին: Մակերևութային պլազմոն-պոլարիտոնների գերկիզակետման երևույթի հեղինակն է: Համագործակցել է Շվեյցարիայի, Գերմանիայի, ԱՄՆ-ի, Դանիայի գիտնականների հետ:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 4 ատենախոսություն:

ՆԵՐԿԱՐԱՐՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ ՆԻԿՈՂՈՍԻ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր



Ծնվել է 1914թ. հունվարի 15-ին Հաջիղարա (այժմ՝ Լոռու մարզի Լեռնապատ) գյուղում: 1937թ. ավարտել է տեղի դպրոցը և ընդունվել ԵՊՀ պատմության ֆակուլտետ: 1941-1945թթ. մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին: 1945թ. շարունակել է ուսումը ԵՊՀ-ում, 1946թ. ավարտել պատմության ֆակուլտետն ու ընդունվել ասպիրանտուրա:

1950թ. Վ.Ներկարարյանը պաշտպանել է թեկնածուական, 1969թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1960թ. նրան շնորհվել է ավագ գիտաշխատողի, 1971թ. պրոֆեսորի կոչում:

1949-1950թթ. Վ.Ներկարարյանն աշխատել է ԵՊՀ պատմության ֆակուլտետում որպես դասախոս, 1950-1978թթ. ԽՄԿԿ ԿԿ-ին կից ՄԼԻ հայկական մասնաճյուղում. 1950-1961թթ. որպես ավագ գիտաշխատող, 1961-1965թթ. կուսակցության արխիվի գծով փոխտնօրեն, 1965-1978թթ. գիտության գծով փոխտնօրեն և կուսակցության պատմության սեկտորի վարիչ, միաժամանակ՝ դասավանդել ԵՊՀ-ում: 1978-1989թթ. եղել է ԵՊՀ ԽՄԿԿ պատմության ամբիոնի պրոֆեսոր, 1990-1994թթ. 20-րդ դարի քաղաքական պատմության ամբիոնի պրոֆեսոր-խորհրդատու:

Հեղինակ է ավելի քան 90 գիտական աշխատությունների, այդ թվում՝ «ՌՍԴ(բ)Պ բոլշևիկյան կազմակերպությունները և ռևոլյուցիոն շարժումները Լոռիում 1905-1907թթ.» (Եր., 1955), «Հայաստանի կոմունիստական կուսակցությունը ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանում (1921-1925թթ.)» (Եր., 1956), «Հայաստանի կոմունիստական կուսակցության պայքարը երկրի ինդուստրացման և գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման համար (1926-1929թթ.)» (Եր., 1971) մենագրությունների:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 8 ատենախոսություն:

Վ.Ներկարարյանը պարգևատրվել է Հայրենական մեծ պատերազմի II աստիճանի շքանշանով, «1941-1945թթ. Հայրենական մեծ պատերազմում հաղթանակի 30 տարին» և այլ մարտական մեդալներով:

Վախճանվել է 1994թ. դեկտեմբերի 18-ին Երևանում:

ՆԵՐԿԱՐԱՐՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ ՍՄԲԱՏԻ

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1928թ. դեկտեմբերի 18-ին Ստեփանավանի շրջանի Կուրթան գյուղում: Տեղի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Երևանի կոոպերատիվ տեխնիկում, իսկ 1948թ.՝ ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետ: 1953-1956թթ. սովորել է Խ.Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտի ասպիրանտուրայում:

1956թ. եղել է նույն ինստիտուտի դասախոս, 1957-ից՝ ԵրՊԻ ավագ դասախոս:

1960թ. Վ.Ներկարարյանը պաշտպանել է թեկնածուական, 1972թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1964թ. նրան շնորհվել է դոցենտի, 1975թ. պրոֆեսորի կոչում:

1966-1975թթ. նա եղել է ԵՊՀ քաղաքատնտեսության ամբիոնի դոցենտ, 1975-1979թթ. նորաստեղծ ԵԺՏԻ ռեկտոր, 1979-1981թթ. նույն ինստիտուտի քաղաքատնտեսության ամբիոնի պրոֆեսոր, իսկ 1981-1993թթ.՝ ԵրՊԻ ամբիոնի վարիչ:

Վ.Ներկարարյանը հեղինակ է շուրջ 130 գիտական հոդվածների, ուսումնական ձեռնարկի: Առավել կարևոր են նրա "Закон неуклонного роста производительности труда" (Ер., 1959), "Новый этап общего кризиса капитализма" (Ер., 1961), "Производительный и непроизводительный труд" (Ер., 1970), "Социально-экономические проблемы развития сферы нематериального производства" (Ер., 1981) աշխատությունները:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 4 ատենախոսություն:

1975թ. պարգևատրվել է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատվոգրով:

Վախճանվել է 1993թ. հուլիսի 11-ին Երևանում:

ՆԵՐՍԻՍՅԱՆ ԼԵՎՈՆ ՀՐԱՉՅԱՅԻ

Գրականագետ, դոցենտ

Ծնվել է 1931թ. դեկտեմբերի 24-ին Երևանում: Ուսումնառությունն սկսել է թիվ 8 դպրոցում, ապա տեղափոխվել է Երևանի թիվ 20 դպրոց և ավարտել այն 1949թ.:

1954թ. ավարտել է ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի ռոմանագերմանական բաժինը: 1954-1957թթ. սովորել է ԵՊՀ ասպիրանտուրայում:

1957-1959թթ. Լ.Ներսիսյանն աշխատել է «Հայֆիլմ» կինոստուդիայում որպես ավագ խմբագիր, իսկ 1959թ.՝ ՀԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտում որպես գիտաշխատող: Նկարահավել է մի քանի գեղարվեստական կինոնկարներում:

1957-ից ԵՊՀ-ում և գեղարվեստաթատերական ինստիտուտում դասավանդել է գրականության տեսություն, անտիկ գրականություն, արևմտաեվրոպական երկրների գրականություն և գեղագիտություն: 1961-ից աշխատել է ԵՊՀ արտասահմանյան գրականության ամբիոնի դասախոս, 1965-ից՝ ավագ դասախոս, 1992-1994թթ.՝ դոցենտ:

Նրա հետաքրքրության նեղ ոլորտներն էին անտիկ գրականությունը (մասնավորապես հին հունական պոեզիան և դրաման), 20-րդ դարի ֆրանսիական գրականությունը («Աբսուրդի» թատրոնը, ֆրանսիական վեպը, սյուրեալիզմի պոեզիան), որոնք դասախոսում էր բարձր ոգևորությամբ՝ խոր գիտելիքների հետ միասին պատվաստելով գրական բարձր ճաշակ:

Լ.Ներսիսյանը 1960-1980-ականների հայկական մշակույթի ակնառու գործիչներից մեկն էր, ուսանողների բազմաթիվ սերունդների կուռքը: Դրա հավաստիացումն է ԵՊՀ բանասիրության ֆակուլտետում նրա անվան լսարանը:

1998թ. պարգևատրվել է «Մովսես Խորենացի» մեդալով:

Վախճանվել է 1999թ. նոյեմբերի 27-ին Երևանում:

Երևանի Մաշտոցի պողոտայի 39 տան պատին փակցված հուշատախտակին գրված է. «Այստեղ ապրել է ոգու և ազատության ասպետ Լևոն Հրաչյայի Ներսիսյանը»:

ՆԵՐՍԻՍՅԱՆ ՀԱՆՐԻ ԲԱՐՍԵՂԻ

Մաթեմատիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս



Ծնվել է 1936թ. փետրվարի 27-ին Ստալինգրադում (այժմ՝ Վոլգոգրադ): 1952թ. ավարտել է Երևանի թիվ 20 դպրոցը, 1957թ.՝ ԵՊՀ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը: Հ.Ներսիսյանը 1957-1970թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ մաթեմատիկայի և մեխանիկայի ինստիտուտի գիտաշխատող: 1960թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1971-ից ղեկավարել է ՀԽՍՀ ԳԱ մաթեմատիկայի ինստիտուտի դիֆերենցիալ և ինտեգրալ հավասարումների բաժինը: 1976թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1959-1979թթ. Հ.Ներսիսյանը դասավանդել է ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետում: 1970-1979թթ. եղել է ԵՊՀ բարձրագույն մաթեմատիկայի և մաթեմատիկական ֆիզիկայի ամբիոնի վարիչ: 1989թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1986թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1996-ին ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս: 1998-2006թթ. եղել է ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանի տնօրեն:

Հ.Ներսիսյանը հեղինակ է շուրջ 80 գիտական հոդվածների, որոնք վերաբերում են դիֆերենցիալ և ինտեգրալ հավասարումների, թվային անալիզի, ֆունկցիոնալ անալիզի հարցերին:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 30 ատենախոսություն:

ՆԵՐՍԻՍՅԱՆ ՍՏԵՓԱՆ ՍԱՐԳՍԻ

Պատմաբան,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1892թ. սեպտեմբերի 20-ին պատմական Գողթան գավառի Վերին Ագուլիս գյուղում: Գրաճանաչ է դարձել տեղում: 1903-1912թթ. սովորել և ավարտել է Թիֆլիսի գիմնազիան: 1913-1918թթ. Ստ.Ներսիսյանը սովորել է Մոսկվայի համալսարանի պատմալեզվաբանական ֆակուլտետում, որն

ավարտելուց հետո մի քանի տարի ընդհանուր պատմություն է դասավանդել Մոսկվայի միջնակարգ և մեծահասակների դպրոցներում, ապա տեղափոխվել Երևան: 1921-1924թթ. աշխատել է Երևանի թիվ 19 դպրոցում որպես պատմության ուսուցիչ, ապա 1924-ից՝ ԵՊՀ-ում որպես անտիկ աշխարհի պատմության դասախոս: 1938-1952թթ. եղել է հին աշխարհի պատմության ամբիոնի վարիչ: 1930թ. նրան շնորհվել է դոցենտի կոչում:

Ստ.Ներսիսյանը դաստիարակել է հայ պատմաբանների մի քանի սերունդ:

1950-1954թթ. ընտրվել է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի III գումարման պատգամավոր:

1946թ. արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է Լենինի շքանշանով:

Ստ.Ներսիսյանը վախճանվել է 1965թ. հունիսի 20-ին Երևանում:

ՇԱՀԱԲԱՍՅԱՆ ԿԱՐԵՆ ՄԵՐՈՒԺԱՆԻ

Ֆիզիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1946թ. մայիսի 7-ին Երևանում: 1964թ. ավարտել է թիվ 8 դպրոցը, 1969թ.՝ ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետը:

1969-1971թթ. ծառայել է խորհրդային բանակում, 1971-ից աշխատել է ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի տեսական ֆիզիկայի ամբիոնում որպես ասիստենտ: 1980թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, 1984թ. ստացել դոցենտի կոչում: 1992թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 2007թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Կ.Շահաբասյանը հեղինակ է «Գերհոսելիություն և գերհաղորդականություն հատուկ դասընթացի խնդիրների լուծման ուղեցույց» (Եր., 2007) ուսումնամեթոդական ձեռնարկի և 65 գիտական հոդվածների՝ նվիրված նեյտրոնային աստղերում գերհզոր մագնիսական դաշտերի ստեղծմանը, հադրոնային նյութի գերհոսելիությանը, քվարկային նյութի գերհաղորդականությանը, սպիտակ թզուկներից և նեյտրոնային աստղերից գրավիտացիոն ալիքների ճառագայթմանը:

ՇԱՀԲԱԶՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ ԽԱՉԱՏՈՒՐԻ

Մեխանիկոս,
տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1921թ. սեպտեմբերի 1-ին Վաղարշապատում: 1938թ. ավարտել է Երևանի թիվ 1 միջնակարգ դպրոցը և ընդունվել ԵՊՀ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետ: 1941թ. Հայրենական պատերազմի առաջին օրերից զորակոչվել է բանակ և ծառայել մինչև 1946թ.: Զորացրվելուց հետո շարունա-

կել է ուսումը և 1948թ. ավարտել ԵՊՀ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի մեխանիկայի բաժինը՝ մեխանիկոսի որակավորմամբ: 1948-1949թթ. աշխատել է հանրապետության անտառային և փայտամշակման արդյունաբերության նախարարությունում որպես ինժեներ-մեխանիկ: 1949թ. ընդունվել է ԵՊՀ ասպիրանտուրա և գործուղվել Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարան՝ ուսումը շարունակելու: 1953թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1953թ. Կ.Շահբազյանը ԵՊՀ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի մեխանիկայի ամբիոնի ավագ դասախոս էր, 1958թ.՝ դոցենտ: 1966թ. նա Մոսկվայում պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1967թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: Երկար տարիներ աշխատել է մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետի դեկանի տեղակալ, ապա՝ դեկան:

1977-1991թթ. Կ.Շահբազյանը եղել է Երևանի Խ.Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի գծագրական երկրաչափության ու նկարչության ամբիոնի վարիչ:

Հեղինակ է ավելի քան 50 գիտական հոդվածների, որոնք նվիրված են մեխանիզմների և մեքենաների տեսության հարցերին:

Կ.Շահբազյանը Հայրենական պատերազմի տարիներին պարգևատրվել է մի շարք շքանշաններով և մեդալներով:

Վախճանվել է 1991թ. հուլիսի 15-ին Երևանում:

ՇԱՀԲԱԶՅԱՆ ՌԱՅՄՈՆԴԱ ՄԻՆԱՍԻ

Բանասիրական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր

Ծնվել է 1928թ. հունվարի 6-ին Երևանում: Սովորել է Երևանի թիվ 8 միջնակարգ դպրոցում, այնուհետև Պ.Զայկովսկու անվան երաժշտական դպրոցում, որն ավարտել է 1945թ.: Նույն թվականին ընդունվել և 1950թ. ավարտել է ԵՊՀ բանասիրության ֆակուլտետը:

Դեռ ուսանողական տարիներից Ռ.Շահբազյանը սկսել է դասավանդել. սկզբում թիվ 8 դպրոցում, իսկ 1952-ից մինչև կյանքի վերջը՝ ԵՊՀ-ում:

1961թ. նա Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանում պաշտպանել է թեկնածուական ատենախոսու-

թյուն: 1967թ. նրան շնորհվել է դոցենտի, 1990թ.՝ պրոֆեսորի կոչում:

Քսանհինգ տարի անընդմեջ նա ղեկավարել է նախ՝ արտասահմանյան քաղաքացիների նախապատրաստական ֆակուլտետի, ապա՝ համահամալսարանական ռուսաց լեզվի, այնուհետև՝ հասարակագիտական ֆակուլտետները սպասարկող ռուսաց լեզվի ամբիոնները:

Ռ.Շահբազյանը հեղինակ է ավելի քան 80 աշխատությունների դասագրքերի, ուսումնական ձեռնարկների, գիտական հոդվածների:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 8 ատենախոսություն:

Բազմիցս զեկուցումներով հանդես է եկել հանրապետական, համամիութենական և միջազգային գիտաժողովներում, եղել Ռուսաց լեզվի և գրականության դասախոսների միջազգային ասոցիացիայի կոնգրեսների մշտական մասնակից, ԽՍՀՄ բուհերի նախարարության նախագահության գիտամեթոդական խորհրդի անդամ, մասնակցել է արտասահմանյան տարբեր երկրներում (Հունգարիա, Գերմանիա, Իտալիա, Ավստրիա, Անգլիա) կազմակերպված ռուսաց լեզվի դասավանդման ամառային դասընթացներին:

1991թ. արժանացել է ԽՍՀՄ բարձրագույն հաստատությունների նախարարության դիպլոմի: Պարգևատրվել է «Աշխատանքի վետերան» (1985) և այլ մեդալներով:

Վախճանվել է 2001թ. նոյեմբերի 29-ին Երևանում:

ՇԱՀԲԱՂՅԱՆ ՌՈՄԵՆ ԼԻՊԱՐԻՏԻ

Մաթեմատիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր

Ծնվել է 1938թ. փետրվարի 17-ին Երևանում: 1955թ. ավարտել է միջնակարգ դպրոցը, 1960թ. ԵՊՀ մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետը, 1965թ.՝ Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի ասպիրանտուրան:

1960-1996թթ. աշխատել է ՀԽՍՀ ԳԱ մաթեմատիկայի ինստիտուտում: 1966թ. պաշտպանել է թեկնածուական ատենա-

խոսություն և համատեղությամբ դասավանդել ԵՊՀ-ում: 1973-1986թթ. Ռ.Շահբաղյանը եղել է թվային անալիզի ամբիոնի դոցենտ: 1986թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, իսկ 1987թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1986-1997թթ. Ռ.Շահբաղյանը եղել է մաթեմատիկայի ֆակուլտետի օպտիմալ կառավարման տեսության և մոտավոր մեթոդների ամբիոնի վարիչ, իսկ 1997-2004թթ. մաթեմատիկայի ֆակուլտետի դեկան:

Հեղինակ է ավելի քան 40 գիտական հոդվածների, համահեղինակ՝ «Մաթեմատիկական ֆիզիկայի հավասարումներ» (Եր., 1988) դասագրքի:

Ռ.Շահբաղյանի գիտական ուսումնասիրությունները վերաբերում են անվերջ թվով անկախ փոփոխականներից կախված էլիպտական և պարաբոլական տիպի պսևդոդիֆերենցիալ օպերատորների տեսության, ոչ գծային պսևդոպարաբոլական հավասարումների լուծումների գոյության և միակության, ինչպես նաև այդ խնդիրներով ծնված կիսախմբերի ատրակտորների գոյության և կառուցվածքի հարցերին:

Դասախոսություններ է կարդացել Գերմանիայում, զեկուցումներով հանդես է եկել համամիութենական և միջազգային գիտաժողովներում:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 3 ատենախոսություն:

2004թ. Ռ.Շահբաղյանը մեկնել է ԱՄՆ:

ՇԱՀԻՆՅԱՆ ԱՐԱՄ ԱՐՏԱՇԵՍԻ

Քիմիական և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
ՀՀ գիտության վաստակավոր գործիչ



Ծնվել է 1938թ. հունիսի 26-ին Երևանում: 1955թ. ավարտել է Երևանի Խ.Աբովյանի անվան միջնակարգ դպրոցը, 1961թ. ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետը: 1962-1965թթ. սովորել է ԽՍՀՄ ԳԱ քիմիական ֆիզիկայի ինստիտուտի (Մոսկվա) ասպիրանտուրայում, 1965-1967թթ. աշխատել նույն ինստիտուտում որպես ստաժոր-հետազոտող:

1967թ. Ա.Շահինյանը Մոսկվայում պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1967-1968թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ օրգանական քիմիայի ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, 1968-1972թթ.՝ ԵրՊԻ ավագ գիտաշխատող, 1972-1985թթ.՝ ՀԽՍՀ ԳԱ փորձարարական կենսաբանության ինստիտուտի, իսկ 1985-1992թթ.՝ ՀԽՍՀ ԳԱ ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտի լաբորատորիայի վարիչ:

1982թ. Ա.Շահինյանը Մոսկվայում պաշտպանել է դոկտորական ատենախոսություն և ստացել քիմիական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: 1990թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում, իսկ 1992թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն՝ ֆիզիկամաթեմատիկական գիտությունների գծով:

1992-1999թթ. Ա.Շահինյանը եղել է ՀՀ ԿԳ փոխնախարար, 1999-2002թթ.՝ ՀՀ ԳԱԱ նախագահի տեղակալ, 2002-2008թթ. ՀՀ ԳԱԱ փոխնախագահի տեղակալ և բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, 2008-ից ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղարն է:

2000թ. Ա.Շահինյանն ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ:

1983-1988թթ. և 2002-2007թթ. նա դասավանդել է ԵՊՀ ֆիզիկայի և կենսաբանության ֆակուլտետներում:

1976թ. Ա.Շահինյանը ԽՍՀՄ-ում առաջիններից մեկն է զարգացրել լիոտրոպ հեղուկ բյուրեղների ուսումնասիրության ուղղությունը, իսկ Հայաստանում 2000-ից սկզբնավորել է կենսաինֆորմատիկայի գիտական նոր ուղղությունը: Նա հիմնարար հետազոտություններ է կատարել պոլիմերման պրոցեսների կինետիկայի, կենսաբանական թաղանթների, էմուլսային պոլիմերման, միցելային և կոլոիդային համակարգերի ուսումնասիրման բնագավառներում:

Հեղինակ է 170 գիտական աշխատությունների և “Роль структурной организации ионных мицелл в механизме формирования макромолекул в эмульсиях” (Ер., 1985) մենագրության:

Զեկուցումներով հանդես է եկել միջազգային 20 գիտաժողովում: Նրա ղեկավարությամբ ու խորհրդատվությամբ պաշտպանվել է թեկնածուական 15 և դոկտորական 2 ատենախոսություն:

1996-2007թթ. Ա.Շահինյանը եղել է Եվրոպական INTAS կազմակերպության համակարգողը Հայաստանում:

2008թ. Ա.Շահինյանն արժանացել է ՀՀ գիտության վաստակավոր գործչի կոչման:

ՇԱՀԻՆՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ ԼԻՊԱՐԻՏԻ

Մաթեմատիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1906թ. դեկտեմբերի 19-ին Ալեքսանդրապոլում (այժմ՝ Գյումրի): 1924թ. ավարտել է միջնակարգ դպրոցը, 1926թ. Երևանի արդյունաբերական տեխնիկումը և ընդունվել ԵՊՀ տեխնիկական ֆակուլտետ: Չորրորդ կուրսից փոխադրվել է ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետ, որն ավարտել է 1930թ.:

1929-1934թթ. Ա.Շահինյանն աշխատել է ԵՊՀ-ում սկզբում որպես մաթեմատիկայի ամբիոնի ասիստենտ, ապա՝ դոցենտի և ամբիոնի վարիչի պաշտոնակատար: 1929թ. համատեղությամբ աշխատել է նաև ԵՊԻ-ում: 1934-1937թթ. նա սովորել է Լենինգրադի պետական համալսարանին առընթեր մաթեմատիկայի և մեխանիկայի գիտահետազոտական ինստիտուտի ասպիրանտուրայում: 1939թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1938-1944թթ. եղել է ԵՊՀ բարձրագույն երկրաչափության ամբիոնի վարիչ, 1939-1942թթ.՝ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի դեկան: 1944թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն և մինչև 1978թ. եղել մաթեմատիկական անալիզի և ֆունկցիաների տեսության ամբիոնի վարիչ: 1945թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1945թ. Ա.Շահինյանն ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1947թ.՝ ակադեմիկոս:

1945-1950թթ. նա ՀԽՍՀ ԳԱ մաթեմատիկայի և մեխանիկայի սեկտորի վարիչն էր, 1955-1959թթ.՝ ԳԱ մաթեմատիկայի և մեխանիկայի ինստիտուտի տնօրենը, 1950-1963թթ. ՀԽՍՀ ԳԱ ֆիզիկամաթեմատիկական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարը:

Ա.Շահինյանը հեղինակ է գիտական բազմաթիվ աշխատու-

թյունների, այդ թվում՝ «Մոտավորությունների տեսություն կոմպլեքս տիրույթում» (Եր., 1960), «Անալիտիկ ֆունկցիաների տեսություն» (Եր., 1969), «Բարձրագույն մաթեմատիկայի ներածություն» (Եր., 1970) և այլ մենագրությունների: Նրա հետազոտությունները հիմնականում վերաբերում են կոմպլեքս տիրույթում մոտավորությունների տեսությանը:

Նա հայկական մաթեմատիկական գիտական դպրոցի հիմնադիրն է: 1965թ. հիմնադրել է նաև ԵՊՀ-ին կից ֆիզիկամաթեմատիկական դպրոցը, որը 1986-ից կրում է Ա.Շահինյանի անունը:

1961թ. արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Եղել է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի VII և VIII գումարումների պատգամավոր: Պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի (2), Ժողովուրդների բարեկամության շքանշաններով:

Ա.Շահինյանը վախճանվել է 1978թ. մայիսի 14-ին Երևանում:

Նրա բրոնզաձույլ կիսանդրին ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի նախասրահում խորհրդանշում է ականավոր գիտնական-մանկավարժի դերը համալսարանական գիտության ու կրթության զարգացման գործում:

ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ԳԱՅԱՆԵ ՄԻՔԱՅԵԼԻ

Հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1954թ. սեպտեմբերի 17-ին Երևանում: 1972թ. ավարտել է Երևանի թիվ 83 միջնակարգ դպրոցը, 1977թ. Վ.Բրյուսովի անվան օտար լեզուների ինստիտուտը և ընդունվել ՀԽՍՀ ԳԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի ասպիրանտուրա: 1989թ. Գ.Շահվերդյանը Մոսկվայում պաշտպանել է թեկնածուական, իսկ 1999թ. Թբիլիսիում՝ դոկտորական ատենախոսություն: 2006թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1982-1989թթ. Գ.Շահվերդյանը եղել է ՀԽՍՀ ԳԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, 1989-2001թթ.՝ Հոգեկան առողջության «Սթրես» կենտրոնի բուժ-հոգեբանական և հոգեթերապիայի բաժանմունքի

վարիչ, 2001-2006թթ. ԵՊՀ հոգեբանության ամբիոնի վարիչ, 2006-2009թթ. կիրառական հոգեբանության ամբիոնի վարիչ: 2009-ից սոցիալական հոգեբանության ամբիոնի վարիչն է:

Գ.Շահվերդյանը հեղինակ է շուրջ 50 հոդվածի, 2 մենագրության՝ "Травматический стресс. Психические расстройства и развитие личности" (Ер., 1998), «Փոքր Մհերից դեպի Քրիստոս» (Եր., 2001), 1 դասագրքի "Основы психотерапии" (М., 2007), 2 ուսումնամեթոդական ձեռնարկի՝ "Я психологии как защита от сектантского МЫ" (Ер., 2005), «Մասնագիտացված կրթությունը մագիստրատուրայում. «Հոգեբանություն»» (Եր., 2006):

Նրա ղեկավարությամբ ու խորհրդատվությամբ պաշտպանվել է թեկնածուական 2 և դոկտորական 1 ատենախոսություն:

Գ.Շահվերդյանը զեկուցումներով հանդես է եկել միջազգային գիտաժողովներում (Բոստոն՝ 1989, Ամստերդամ՝ 1991, Կիև՝ 1996, Ստոկհոլմ՝ 2000, Ստամբուլ 2008): Նա հոգեթերապևտների եվրոպական լիգայի տարածաշրջանային ներկայացուցիչն է:

ՇԱՀՎԵՐԴՈՎԱ ՍՈՒՍԱՆՆԱ ՄԿՐՏՉԻ

Կուսակցական-պետական գործիչ, մանկավարժ,
ՀԽՍՀ կուլտուրայի վաստակավոր գործիչ

Ծնվել է 1888թ. մայիսի 17-ին Թիֆլիսում: Ավարտել է տեղի կանանց գիմնազիան, ապա կանանց բարձրագույն դասընթացները: Մինչև 1917թ. Թիֆլիսի զանազան ուսումնական հաստատություններում զբաղվել է մանկավարժական գործունեությամբ: 1917թ. ընդունվելով կոմունիստական կուսակցության շարքերը՝ ծավալել է քաղաքական եռանդուն գործունեություն:

1921թ. Ս.Շահվերդովան աշխատել է Վրաստանի լուսժողկոմատում որպես ազգային փոքրամասնությունների խորհրդի բյուրոյի նախագահ, ապա ընտրվել Վրաստանի լուսավորության աշխատողների արհմիության նախագահ: 1922-1925թթ. լուսավորության աշխատողների համառուսաստանյան միության լիազոր ներկայացուցիչն էր Անդրկովկասում:

1925-1929թթ. վարել է Անդրերկրկոմի բանվորուհիների և գեղջկուհիների բաժինը, իսկ մինչև 1931թ.՝ համատեղությամբ

աշխատել Անդրկովկասի 26 կոմիսարների անվան կոմունիստական համալսարանում որպես ուսումնական մասի պրոռեկտոր, հեռակա բաժնի վարիչ և դասախոս: 1930-1934թթ. տարբեր պաշտոններ է վարել Թիֆլիսում և Երևանում:

1934-1937թթ. Ս.Շահվերդովան աշխատել է որպես ՀԽՍՀ լուսժողկոմի տեղակալ: 1936-1937թթ. ԽՄԿԿ պատմություն է դասավանդել Երևանի ուսուցչական ինստիտուտում: 1939-1945թթ. ղեկավարել է Հայպետհրատի դասագրքերի և ռուս գրականության բաժինները: 1940թ. սկսած՝ զբաղվել է դասախոսական աշխատանքով հայկական մանկավարժական և ռուսական մանկավարժական ինստիտուտներում:

1957-1961թթ. նա ղեկավարել է ԵՊՀ ռուսաց լեզվի ամբիոնը, այնուհետև՝ մինչև 1969թ., Վ.Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների մանկավարժական ինստիտուտի ռուսաց լեզվի դասավանդման մեթոդիկայի ամբիոնը: Նա կազմել և խմբագրել է հայկական դպրոցների և բուհերի ռուսաց լեզվի մի շարք դասագրքեր:

1955թ. Ս.Շահվերդովան արժանացել է ՀԽՍՀ կուլտուրայի վաստակավոր գործչի կոչման, պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի (1932), Լենինի (2) շքանշաններով և մեդալներով:

Վախճանվել է 1982թ.:

ՇԱՌՈՅԱՆ ԳԱՐՍԵՎԱՆ ՎԱՆՈՅԻ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել 1906թ. սեպտեմբերի 1-ին Նոր Բայազետում (այժմ՝ Գավառ): Նախնական կրթությունն ստացել է տեղի ծխական դպրոցում: 1926-ին ավարտելով Նոր Բայազետի միջնակարգ դպրոցը աշխատել է տպարանում որպես գրաշար:

1922թ. Գ.Շառոյանն ընտրվել է Նոր Բայազետի կոմերիտմիության քաղաքային կաղմակերպության քարտուղար, 1926-ին նշանակվել կոմերիտմիության Ելենովկայի (այժմ՝ Սևան) շրջանային կոմիտեի հրահանգիչ: 1931թ. նա ավարտել է ԵՊՀ պատմագրական ֆակուլտետը և աշխատանքի անցել ՀԿ(բ)Կ կենտկոմում որպես հաստիքային պրոպագանդիստ: 1932-1934թթ. եղել է Դոնի Ռոստովի հայկական թիվ 7 միջնակարգ դպրոցի

ուսմասվար և պատմության ուսուցիչ:

1934-1937թթ. սովորել է ԵՊՀ ասպիրանտուրայում: 1940թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1937-1941թթ. Գ.Շառոյանը դասավանդել է ԵՊՀ-ում, Երևանի ֆինանսատնտեսագիտական տեխնիկումում, միաժամանակ, համատեղությամբ աշխատել ՀԽՍՀ լուսժողկոմատում որպես բուհերի վարչության պետ և «Խորհրդային Հայաստան» օրաթերթի բաժնի վարիչ:

Գ.Շառոյանը մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին: 1947թ. զորացրվելուց հետո շարունակել է ընդհատված գիտամանկավարժական գործունեությունը ԵՊՀ-ում:

1967թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1969-ին նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1968-1970թթ. աշխատել է ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան, 1970-1976թթ.՝ ԽՍՀՄ պատմության ամբիոնի վարիչ, 1976-1986թթ. նույն ամբիոնի պրոֆեսոր-խորհրդատու, իսկ 1986-ից անցել վաստակած հանգստի:

1970-1973թթ. Գ.Շառոյանը եղել է ԵՊՀ պատմության ֆակուլտետի գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի նախագահ:

Հեղինակ է մի շարք ուսումնասիրությունների և մենագրությունների, որոնցից առանձնանում են «Հողաշինությունը Հայաստանում ազգային փոքրամասնությունների շրջանում (1921-1927թթ.)» (Եր., 1960), «Սոցիալիստական հողօգտագործումը Հայաստանում 1920-1929թթ.» (Եր., 1962), «Գյուղի ներքին հողաբաժանությունը Սովետական Հայաստանում (1921-1929թթ.)» (Եր., 1965) աշխատությունները:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 6 ատենախոսություն:

Գ.Շառոյանը պարգևատրվել է «Կարմիր աստղ», Հայրենական պատերազմի I աստիճանի շքանշաններով, Բուլղարիայի Հանրապետության մեդալով:

Վախճանվել է 2007թ. օգոստոսի 16-ին Երևանում:

ՇԱՎԱՐՇՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ ՄԵՍՐՈՊԻ

Մանկավարժ, պրոֆեսոր,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1884թ. մայիսի 14-ին Նոր Բայազետում (այժմ՝ Գավառ): Տարրական կրթությունն ստացել է Իգդիրում: 1898թ. ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, 1906թ.՝ Էջմիածնի Գևորգյան ճեմարանը: 1906-1910թթ. որպես մանկավարժ աշխատել է Եկատերինոդարի (այժմ՝ Կրասնոդար) հայկական ծխական դպրոցում: 1910-1914թթ. Ա.Շավարշյանն ուսումնառությունը շարունակել է Գերմանիայում՝ ավարտելով Ենայի և Լայպցիգի համալսարանների փիլիսոփայության ֆակուլտետի մանկավարժության բաժինը: Վերադառնալով հայրենիք՝ նա 1914-1918թթ. մանկավարժություն և հոգեբանություն է դասավանդել Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: 1918թ. նշանակվել է Երևանի տարրական դպրոցների տեսուչ: Որոշ ժամանակ լուսժողկոմատում աշխատելուց հետո 1921-1934թթ. դասավանդել է ԵՊՀ-ում, այնուհետև՝ մինչև կյանքի վերջը Խ.Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտում, որտեղ 1934-1940թթ. եղել է դասախոս, 1940-1960թթ. մանկավարժության ամբիոնի վարիչ, միաժամանակ 1943-1948թթ.՝ ինստիտուտի ուսումնագիտական աշխատանքների գծով փոխտնօրեն: 1936թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Ա.Շավարշյանը հայ մանկավարժության պատմության գիտական ուսումնասիրության սկզբնավորողներից է: Հեղինակ է 300 գիտական հոդվածների, մի շարք մենագրությունների, այդ թվում՝ «Ղ.Աղայանը որպես մանկավարժ» (Եր., 1941), «Իսահակ Հարությունյանը որպես մանկավարժ» (Եր., 1953): Կազմել է «Հայ մանկավարժներ» երկհատոր ժողովածուն (հ.1, Եր., 1958, հ.2, Եր., 1961):

1954թ. Ա.Շավարշյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով:

Վախճանվել է 1960թ. սեպտեմբերի 11-ին Երևանում:

ՇԱՐՈՒՐՅԱՆ ԱԼԲԵՐՏ ՍՐԱՊԻՈՆԻ

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1931թ. մարտի 10-ին Երևանում: Ավարտել է Երևանի թիվ 10 միջնակարգ դպրոցը: 1949թ. ընդունվել է ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժին: Համալսարանն ավարտելուց հետո աշխատել է «Սովետական Հայաստան» օրաթերթի խմբագրությունում որպես լրագրող, ապա՝ արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի կոմիտեի մամուլի բաժնում:

1959-1962թթ. ուսանել է ԵՊՀ ասպիրանտուրայում: 1962-2007թթ. աշխատել է ԵՊՀ հայ գրականության ամբիոնում նախ՝ որպես դասախոս, ապա՝ 1967-ից՝ դոցենտ, իսկ 1976 թվականից զբաղեցրել է պրոֆեսորի պաշտոն:

Ա.Շարուրյանը 1962թ. պաշտպանել է թեկնածուական, 1973թ. դոկտորական ատենախոսություն:

Հեղինակ է շուրջ 200 հոդվածի, «Դ.Վարուժանի կյանքի և ստեղծագործության տարեգրություն» (Եր., 1984) գրքի, «Սկյուտարի սոխակը (Պ.Դուրյան)» (Եր., 1977), «Սրբուհի Տյուսաբ» (Եր., 1963) մենագրությունների: Նրա աշխատասիրությամբ հրատարակվել է «Գրիգոր Զոհրապը ժամանակակիցների հուշերում և վկայություններում» (Եր., 2006) մեկհատորյակը: Նա համահեղինակ է միջնակարգ դպրոցի 6-րդ դասարանի հայ գրականության դասագրքի, որը շրջանառության մեջ է եղել ավելի քան տասը տարի: Կազմել, խմբագրել ու լույս է ընծայել Գր.Զոհրապի երկերի ժողովածուի 6 հատորները (Եր., 2001-2004):

Ա.Շարուրյանը վախճանվել է 2007թ. հունվարի 22-ին Երևանում:

ՇԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ ԳՐԻԳՈՐԻ

Փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1930թ. օգոստոսի 19-ին Լեռնային Ղարաբաղի Ուլզուբաբ գյուղում: 1954թ. ավարտել է ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի տրամաբանության, հոգեբանության և հայոց լեզվի բաժինը:

1957-1973թթ. աշխատել է ԵՊՀ փիլիսոփայության ամբիոնում որպես ասիստենտ: 1958թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1960թ. եղել է նույն ամբիոնի դոցենտ: 1971թ. Հ.Շաքարյանը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1973թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1973-1977թթ. նա աշխատել է Մալիի Հանրապետության Բոմակո քաղաքի բարձրագույն դպրոցում որպես պրոֆեսոր: 1977-1979թթ. եղել է ԵՊՀ դիալեկտիկական մատերալիզմի և տրամաբանության ամբիոնի պրոֆեսոր, 1979-1986թթ. ղեկավարել է ՀԽՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության նախարարության հասարակական գիտություններ-ի դասավանդման վարչությունը: 1978-2003թթ. եղել է ԵՊՀ տեսական փիլիսոփայության և տրամաբանության ամբիոնի վարիչ, իսկ 2003-2005թթ.՝ նույն ամբիոնի պրոֆեսոր:

Հ.Շաքարյանի հեղինակած բազմաթիվ գրքերից ու գիտական հոդվածներից կարևոր են հատկապես «Գարագաչյանի աշխարհայացքը» (Եր., 1962), «Ողջախոհության տեղը իմացաբանության պրոցեսում» (Եր., 1965), «Մետաֆիզիկայի իմացաբանական էությունը» (Եր., 1967), «Դետերմինացիայի հիմնահարցը և փիլիսոփայական գիտելիքի դործառությունը» (Եր., 1982, ռուս.), «Փիլիսոփայությունը ստեղծագործության գաղտնիքների որոնումներում» (Եր., 2002) մենագրությունները:

Հ.Շաքարյանի գիտամանկավարժական գործունեության յուրատեսակ հանրագումարն ու ամփոփումն է 2005թ. հրատարակված «Փիլիսոփայություն» ուսումնական ձեռնարկը:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 5 ատենախոսություն:

1970թ. պարգևատրվել է «Աշխատանքային արիության համար» մեդալով, 2004թ. արժանացել «ԵՊՀ ամբիոնի պատվավոր վարիչ» կոչման:

Վախճանվել է 2005թ. հունիսի 17-ին Երևանում:

ՇԱՔԱՐՅԱՆ ՂԵՎՈՆԴ ԼԵՎՈՆԻ

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1900թ. նոյեմբերի 20-ին Շուշիում: 1919թ. տեղի ռեալական ուսումնարանն ավարտելուց հետո ընդունվել և

1924-ին ավարտել է Թիֆլիսի պետական պոլիտեխնիկական ինստիտուտի հասարակական գիտությունների ֆակուլտետի տնտեսագիտության բաժինը:

1925թ. Ղ.Շաքարյանը տեղափոխվել է Հայաստան և աշխատանքի անցել պետպլանում որպես մասնաճյուղային ծրագրերի բաժնի վարիչ:

1929 թվականից նա դասավանդել է ԵՊՀ-ում, 1932թ. դարձել է նորաստեղծ «Ֆինանսներ և վարկ» ամբիոնի վարիչ:

1949թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն և նույն թվականին նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1955թ. Ղ.Շաքարյանը նշանակվել է Համամիութենական ֆինանսական ինստիտուտի Հայաստանյան մասնաճյուղի դեկան, իսկ 1957-ից մինչև կյանքի վերջը եղել ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի դեկան:

Նա հեղինակ է բազմաթիվ գիտական աշխատությունների, որոնցից հարկ է նշել «Սովետական վալյուտան ամենակայուն վալյուտան է աշխարհում» (Եր., 1950), «Ֆինանսները և սոցիալիստական շինարարությունը ՀՍՍՌ-ում 40 տարում» (Եր., 1960), «Վ.Ի.Լենինը սովետական ֆինանսների մասին» (Եր., 1960) գործերը:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական ավելի քան մեկ տասնյակ ատենախոսություն:

Ղ.Շաքարյանը պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով:

Վախճանվել է 1961թ. հուլիսի 30-ին Երևանում:

ՇԻՐՄԱԶԱՆ (ՇԻՐՄԱԶԱՆՅԱՆ) ԳՐԻԳՈՐ ՎԱՍԻԼԻ

Ճարտարագետ-ջրաշինարար,
ՀԽՍՀ վաստակավոր իռիգատոր

Ծնվել է 1892թ. դեկտեմբերի 9-ին Թիֆլիսում: 1917թ. ավարտել է Մոսկվայի հաղորդակցության ճանապարհների ինժեներների ինստիտուտը: Մոսկվայում եղած տարիներին աշխատակցել է «Армянский вестник» շաբաթաթերթին:

1917թ. եկել է Հայաստան և աշխատանքի նշանակվել Ալեքսանդրապոլում (այժմ՝ Գյումրի) որպես քաղաքային ինժեներ: 1918թ. փոխադրվել է Թիֆլիս և դասախոսել տեղի բարձրա-

գույն ինժեներական դպրոցում: 1921թ. գալով Հայաստան՝ վարել է լուսավորության ժողովրդական կոմիսարիատի տեխնիկական բաժնի վարիչի պաշտոնը:

1922թ. Գ.Շիրմազանը որպես դասախոս հրավիրվել է ԵՊՀ, նշանակվել տեխնիկական ֆակուլտետի դեկան: Այդ պաշտոնը նա վարել է մինչև 1924թ.: Զբաղվել է ՀԽՍՀ ոռոգման և ջրամատակարարման հարցերի ուսումնասիրությամբ: 1925-1928թթ. նրա ղեկավարությամբ կառուցվել են Այղր (այժմ՝ Մեծամոր) լճի ջրհան կայանը և Էջմիածնի շրջանի ոռոգման համակարգը: Նրա գործուն մասնակցությամբ հիմնադրվել են հանրապետության շինարարական տեխնիկումը՝ Երևանում, և գյուղատնտեսականը՝ Օշականում:

1930-1937թթ. Գ.Շիրմազանը եղել է հողագործության ժողովրդական կոմիսարիատի ջրային վարչության գլխավոր ինժեներ: 1937թ. բռնադատվել է և աքսորվել: 1955-ին արդարացվել է:

Կարևոր է «Դրվագներ Հայաստանի ոռոգման պատմությունից» (Եր., 1962) աշխատությունը:

1957թ. Գ.Շիրմազանն արժանացել է ՀԽՍՀ վաստակավոր իռիգատորի կոչման: 1963թ. պարգևատրվել է Հանրապետության Գերագույն խորհրդի պատվոգրով:

Վախճանվել է 1964թ. մարտի 19-ին Երևանում:

ՇՈՒՔՈՒՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ ԿԻՄԻ

Ինֆորմատիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Ծնվել է 1950թ. օգոստոսի 18-ին Երևանում: 1967թ. ավարտել է Երևանի թիվ 8 դպրոցը, 1972թ. ԵրՊԻ տեխնիկական կիբեռնետիկայի ֆակուլտետը և շուրջ քսանհինգ տարի աշխատել Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտում՝ ինժեներից հասնելով ամենախոշոր բաժնի պետի պաշտոնի:

1973-1976թթ. Ս.Շուքուրյանը սովորել է Ուկրաինայի ԳԱ կիբեռնետիկայի ինստիտուտի ասպիրանտուրայում: 1977թ.

Կիևում պաշտպանել է թեկնածուական, 1990թ. դոկտորական ատենախոսություն: 1983թ. նրան շնորհվել է ավագ գիտաշխատողի կոչում: 1996թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս:

1993-2007թթ. Ս.Շուքուրյանը եղել է ԵՊՀ ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի ալգորիթմական լեզուների ամբիոնի վարիչ, իսկ 2007-ից ղեկավարում է ԵՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական և հետազոտական կենտրոնը և դրան կից տեղեկատվական համակարգերի ամբիոնը:

Ս.Շուքուրյանը հեղինակ է մեկ գյուտի և 80 գիտական աշխատանքների, որոնք վերաբերում են կոմպյուտերային համակարգերի ճարտարապետությանը, տեղեկատվական տեխնոլոգիաներին և համակարգչային տեստավորմանը, կոմպյուտերային համակարգերի և ծրագրերի ձևական մոդելների վերլուծությանը, սինթեզի և օպտիմալացման խնդիրների լուծմանը: Նա ծրագրերում զարգացրել է ոչ էական անցումների օպերատորների տեսությունը ստանալով այդ պրոբլեմի ճշգրիտ լուծումը ծրագրերի լայն դասի համար: Նրան հաջողվել է ապացուցել միավոր չվերասերված ռանգով բազիսում ծրագրերի սխեմաների համարժեքության խնդրի լուծելիությունը, ինչը կարևոր է ծրագրավորման տեսության բնագավառում:

Ս.Շուքուրյանն առաջարկել է ճարտարապետության հարմարեցման սկզբունքներ և կառուցել է տեսություն, որի ալգորիթմները և մեթոդներն առաջին անգամ իրականացվել և օգտագործվել են խորհրդային կոմպյուտերային համակարգերում: Ներկայումս այդ մեթոդները հաշվողական կլաստերների համար զարգացվում են ԱՄՆ-ի, Գերմանիայի և այլ արտասահմանյան մասնագետների հետ համատեղ:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 19 ատենախոսություն:

Ս.Շուքուրյանը Ամերիկյան էլեկտրոնիկայի և էլեկտրատեխնիկայի ինժեներների ինստիտուտի անդամ է, որպես փորձագետ մասնակցում է գիտական և տեխնիկական հետազոտությունների բնագավառում եվրոպական համագործակցության շրջանակում կատարվող աշխատանքներին, զեկուցումներով հանդես եկել միջազգային գիտաժողովներում:

ԶԱԼԹԻԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԱԿՈԲԻ

Քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1902թ. նոյեմբերի 22-ին Կարսում: Ալեքսանդրապոլում (այժմ՝ Գյումրի) ավարտել է միջնակարգ դպրոցը: 1922-1926թթ. Հ.Զալթիկյանը սովորել է ԵՊՀ գյուղատնտեսական և ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետներում: 1930թ. նա գործուղվել է Մոսկվա՝ ստաժավորման: 1931թ. մեկնել է Գերմանիա և մեկ տարի Մյունխենում զբաղվել ուժեղ էլեկտրոլիտների լուծույթների ջերմադինամիկայի հարցերով: 1932-1933թթ. եղել է ԵրՊԻ քիմիայի ֆակուլտետի դեկան:

Գիտական առաջին լուրջ ձեռքբերումը բենզոիլ պերօքսիդ-երկրորդային ամին ռեակցիաների կինետիկական մեթոդով ուսումնասիրությունն է: Մոսկվայում զբաղվելով գիտական երկարատև բանավեճի նյութ դարձած մետաղ-վակուում սահմանագծի վրա վոլտապոտենցիալի գոյության հարցով՝ կարճ ժամանակում լուծել է այն, որի համար 1936թ. առանց ատենախոսության ներկայացման նրան շնորհվել է քիմիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

1937թ. Հ.Զալթիկյանն աշխատանքի է անցել ԵՊՀ-ում և 1940-ից մինչև կյանքի վերջը ղեկավարել ֆիզիկական քիմիայի ամբիոնը: Նա գործուն մասնակցություն է ունեցել Երևանի Կիրովի անվան կաուչուկի գործարանում գիտահետազոտական լաբորատորիայի ստեղծման աշխատանքներին: 1946թ. Հ.Զալթիկյանը Մոսկվայում պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1948թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1961թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ:

Նրա գիտական ձեռքբերումներից առանձնապես նշանակալից է ազատ ռադիկալների նոր աղբյուրներ գտնելու, ինչպես նաև այլ մոնոմերների, մասնավորապես վինիլացետատի պոլիմերացման նպատակով ամին-պերօքսիդի ռեակցիաների

մեխանիզմի ուսումնասիրությունը, որի արդյունքների հիման վրա ԽՍՀՄ կառավարության 1959թ. որոշմամբ ԵՊՀ-ում ստեղծվեց պոլիմերացման պրոցեսների կինետիկայի պրոբլեմային լաբորատորիա, որի գիտական ղեկավարը Հ.Զալթիկյանն էր մինչև կյանքի վերջը:

Հ.Զալթիկյանի ստեղծած գիտական դպրոցը լայն ճանաչում ստացավ Հայաստանում և նրա սահմաններից դուրս, որի վկայություններից մեկը 1968թ. պերօքսիդների քիմիային նվիրված 4-րդ հերթական համամիութենական գիտաժողովի կազմակերպումն էր Երևանում:

Հեղինակ է ավելի քան 200 գիտական հոդվածների, «Կուպրոկատալիզ» (ռուս.՝ Եր., 1963, անգլ., Նյու Յորք, 1966) մենագրության, «Ֆիզիկական քիմիա» (Եր., 1969, 1975) ուսումնական և պրակտիկումի ձեռնարկների:

Եղել է Մենդելեևի անվան համամիութենական քիմիական ընկերության Հայաստանի բաժանմունքի նախագահ, ԵՊՀ «Գիտական տեղեկագրի» գլխավոր խմբագիր:

1961թ. Հ.Զալթիկյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է Լենինի շքանշանով (1962) և մեդալներով:

Վախճանվել է 1972թ. մարտի 8-ին Երևանում:

ԶԱԼԹԻԿՅԱՆ ՌՈՒԲԵՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ

Քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր



Ծնվել է 1949թ. մարտի 25-ին Երևանում: 1966թ. ավարտել է թիվ 71 դպրոցը, 1971թ.՝ ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը և աշխատանքի անցել ֆիզիկական քիմիայի ամբիոնում: 1973թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1975-ից նույն ամբիոնում զբաղվել է լազերաքիմիայով՝ հիմնելով Հայաստանում առաջին գիտահետազոտական լաբորատորիան, որը զբաղվում էր կոնդենսացված միջավայրերում ընթացող լազերաքիմիական պրոցեսներով:

1980-ից կատարել է ԽՍՀՄ Գիտության և տեխնիկայի պետական կոմիտեի կողմից ֆինանսավորվող աշխատանքներ: 1988թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 2008թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1990-2008թթ.

եղել է ֆիզիկական և կոլոիդային քիմիայի ամբիոնի պրոֆեսորի պաշտոնակատար: 2008-ից նույն ամբիոնի պրոֆեսոր է:

Ռ.Զալթիկյանը հեղինակ է շուրջ 100 գիտական հոդվածների, արտոնագրերի և թեզիսների՝ նվիրված ամին գերօքսիդ համակարգերի քիմլուսարձակման կինետիկայի և լազերային աղբյուրներով խթանված ռադիկալային պոլիմերման պրոցեսների ուսումնասիրությանը, պինդ մակերևույթների ձևափոխմանը, նոր համապոլիմերների, լցոնված պոլիմերային և չլցոնված նոր սոսինձների ստացմանը: Նա նաև 6 ուսումնամեթոդական աշխատանքների հեղինակ է:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 3 ատենախոսություն:

ԶԱԼՈՅԱՆ ՎԱՉԳԵՆ ԿԱՐԱՊԵՏԻ

Փիլիսոփայական գիտությունների դոկտոր,
ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1905թ. հունվարի 7-ին Ալեքսանդրապոլում (այժմ՝ Գյումրի): 1921թ. ավարտել է Երևանի Խ.Աբովյանի անվան դպրոցը, 1926թ.՝ ԵՊՀ հասարակական դիտությունների ֆակուլտետը:

1930-1934թթ. Վ.Զալոյանը դասախոսել է Երևանի բժշկական ինստիտուտում և ԵՊՀ-ում՝ միաժամանակ լինելով կերպարվեստի, պատմության և գրականության թանգարանի տնօրեն:

1936-1937թթ. ենթարկվել է հալածանքների:

1939թ. Վ.Զալոյանը պաշտպանել է թեկնածուական, 1945թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1965թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ:

Վ.Զալոյանը մեծ ավանդ ունի հայ փիլիսոփայության պատմության ուսումնասիրման բնագավառում: Հեղինակ է հայերենով և ռուսերենով տպագրված բազմաթիվ մենագրությունների, ուսումնական ձեռնարկների ու դիտական հոդվածների: Դրանցից առավել արժեքավոր են «Դավիթ Անհաղթի փիլիսոփայությունը» (ռուս., Եր., 1946), «Հայոց փիլիսոփայության պատմություն» (ռուս., Եր., 1959, Մ., 1974, հայ., Եր., 1975),

«Վերածնության շրջանի հայ փիլիսոփայության պատմության մասին» (ռուս., Մ., 1968), «Հայկական ռենեսանս» (Եր., 1979), «Արևելք-Արևմուտք» (լեհ., Վարշավա, 1980) մենագրությունները: Նա մեծ վաստակ ունի նաև հայ փիլիսոփայական սկզբնաղբյուրների հրատարակման և ռուսերեն թարգմանության գործում. ռուսերեն է թարգմանել Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» (Եր., 1968) երկը, ինչպես նաև կազմել Հովհան Որոտնեցու «Վերլուծութիւն «Ստորոգութեանց» Արիստոտէլի» (Եր., 1956) աշխատության համահավաք բնագիրը, ծանոթագրել և Ա.Ադամյանի հետ միասին գրաբարից թարգմանել ռուսերեն:

1967թ. Վ.Զալոյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է «Պատվո նշան» շքանշանով:

Վախճանվել է 1981թ. մարտի 24-ին Երևանում:

ԶԱՑԼԱԽՑԱՆ ՄԻՔԱՅԵԼ ՔՐԻՍՏԱՓՈՐԻ

Բույսերի ֆիզիոլոգ,
կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ԽՍՀՄ ԳԱ և ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1902թ. մարտի 21-ին Նոր Նախիջևանում: Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրի արական գիմնազիայում: 1921-1926թթ սովորել է ԵՊՀ գյուղատնտեսության ֆակուլտետում: 1934թ. Մոսկվայում պաշտպանել է թեկնածուական, 1939-ին՝ դոկտորական ատենախոսություն: 1940թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1928-1929թթ. Մ.Զայլախյանը Հայաստանի ժողովրդական կոմիսարիատի գյուղատնտեսության վարչության հրահանգիչ էր, 1929-1931թթ. Անդրկովկասյան անասնաբուծական-անասնսբուժական ինստիտուտի բուսաբանության ամբիոնի ասիստենտ: 1935-1939թթ. և 1944-1991թթ. նա ղեկավարել է ԽՍՀՄ ԳԱ Կ.Տիմիրյազևի անվան բույսերի ֆիզիոլոգիայի ինստիտուտի բույսերի զարգացման իր հիմնադրած լաբորատորիան: Շուրջ տասը տարի եղել է ԵՊՀ բույսերի անատոմիայի և ֆիզիոլոգիայի, իսկ 1941-1946թթ. միաժամանակ Հայկական դյու-

ղատնտեսական ինստիտուտի բույսերի ֆիզիոլոգիայի և մանրէաբանության ամբիոնների վարիչ: 1941-ից աշխատել է ՀԽՍՀ ԳԱ բուսաբանության ինստիտուտում, որտեղ 1942թ. հիմնադրել է բույսերի ֆիզիոլոգիայի լաբորատորիա:

Մ.Զայլախյանը հեղինակ է 19 մենագրության, ավելի քան 350 գրքերի, հոդվածների և մեթոդական ձեռնարկների: Նա հիմնադիրն է բույսերի զարգացման և ծաղկման հորմոնային տեսության (1937), որը նրան համաշխարհային ճանաչում բերեց: Նրա հետազոտություններն ունեն ինչպես հիմնարար, այնպես էլ գործնական նշանակություն: Նա հետազոտել է նոր խմբի ֆիտոհորմոնների՝ գիբերելինների բնույթը և ազդման մեխանիզմը, մշակել խալողագործության մեջ դրանց կիրառման եղանակները:

Մ.Զայլախյանի ղեկավարությամբ ու խորհրդատվությամբ պաշտպանվել է թեկնածուական 50 և դոկտորական ավելի քան 10 ատենախոսություն:

1968թ. Մ.Զայլախյանն ընտրվել է ԽՍՀՄ ԳԱ, 1971թ. ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս: Նա եղել է գերմանական բնախույզների «Լեոպոլդինա» ակադեմիայի իսկական անդամ, բույսերի ֆիզիոլոգների, բուսաբանների ամերիկյան և այլ երկրների գիտական ընկերությունների պատվավոր անդամ, Գերմանիայի Ռոստոկյան համալսարանի պատվավոր դոկտոր:

1967թ. Մ.Զայլախյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է Լենինի, Աշխատանքային կարմիր դրոշի և «Կարմիր աստղ» շքանշաններով, բազմաթիվ մեդալներով:

Վախճանվել է 1991թ. նոյեմբերի 30-ին Մոսկվայում:

ՋԻԼԻՆԳԱՐՅԱՆ ՅՈՒՐԻ ՍԵՐԳԵՅԻ



Ֆիզիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Ծնվել է 1938թ. սեպտեմբերի 22-ին Երևանում: 1955թ. ավարտել է Երևանի թիվ 58 դպրոցը, 1960թ.՝ ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետը:

1960 թվականից Յու.Զիլինգարյանն աշխատում է ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետում: 1964-1968թթ. սովորել է Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի ասպիրանտուրայում (հեռակա): 1968թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1975թ. նրան շնորհվել է դոցենտի կոչում: 1972-2007թթ. եղել է ԵՊՀ օպտիկայի ամբիոնի վարիչ, 1985-2000թթ. ֆիզիկայի ֆակուլտետի դեկան:

1985թ. Յու.Զիլինգարյանը Մոսկվայում պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1987թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1996թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս: 2007թ. արժանացել է «ԵՊՀ ամբիոնի պատվավոր վարիչ» կոչման: 2006-ից ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի և աստղաֆիզիկայի բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարն է:

Յու.Զիլինգարյանը հեղինակ է ավելի քան 240 գիտական հոդվածների ու թեզիսների, 9 արտոնագրի, 5 դասագրքի և ուսումնական ձեռնարկի, ինչպես նաև համահեղինակ "Нелинейная оптика жидких кристаллов" (М., 1984) և «Մակածված փուլային անցումներ և հիդրոդինամիկական անկայունություններ հեղուկ բյուրեղներում» (Եր., 2000) մենագրությունների, «Ոչ գծային ֆիզիկայի ներածություն» (Եր., 2006) դասագրքի և «LabVIEW-ի կիրառությունը գիտափորձի ավտոմատացման համար: Լաբորատոր աշխատանքների ձեռնարկ» (Եր., 2005) գրքի:

Յու.Զիլինգարյանի ուսումնասիրությունների գիտական ուղղություններն են՝ լազերային ֆիզիկա, ոչ գծային օպտիկա և սպեկտրալիտուրգիա, ջերմադինամիկական և լուսամակածված ֆազային անցումներ, անկայունություններ, օպտիկական նյութագիտություն և այլն:

Նա հայտնաբերել է հեղուկ բյուրեղներում կողմնորոշումային ուժեղ ոչ գծայնությունների մի շարք մեխանիզմներ, բրիլյուենյան ստիպողական ցրման որոշ առանձնահատկություններ, ինչպես նաև տեսականորեն բացատրել հեղուկ բյուրեղային լազերի գեներացման շեմի կրիտիկական վարքը:

Յու.Զիլինգարյանի ղեկավարությամբ ու խորհրդատվությամբ պաշտպանվել է թեկնածուական 12 և դոկտորական 2 ատենախոսություն:

ԶՈԲԱՆՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ ՍԻՐԱԿԱՆԻ

Մեխանիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, դոցենտ

Ծնվել է 1927թ. փետրվարի 25-ին Ախալքալաքի շրջանի Կարղախ գյուղում, որտեղ և ավարտել է միջնակարգ դպրոցը: 1943-1948թթ. սովորել է ԵՊՀ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետում: 1948թ. ընդունվել է Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի ասպիրանտուրա: 1951թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, 1952-ին ստացել դոցենտի կոչում:

1951թ. Կ.Զոբանյանն անցել է աշխատանքի Հայկական գյուղատնտեսական ինստիտուտում և մինչև 1956թ. եղել ամբիոնի վարիչ: 1954թ. մինչև կյանքի վերջը նրա աշխատանքային և գիտական գործունեությունը կապված է եղել ՀԽՍՀ ԳԱ մեխանիկայի ինստիտուտի հետ, միաժամանակ դասավանդել է ԵրՊԻ-ում, 1962-1972թթ. ԵՊՀ-ում:

Կ.Զոբանյանը հեղինակ է ավելի քան 50 գիտական հոդվածների և "Напряжения в составных упругих телах" (Ер., 1987) հետմահու լույս տեսած մենագրության:

Նրա աշխատանքները վերաբերում են առաձգականության տեսության այն խնդիրներին, որոնք պարզաբանում են համասեռ և անհամասեռ առաձգական մարմինների լարվածային-դեֆորմացիոն վիճակները: Այդ աշխատանքներում առանձնակի տեղ են գրավում առաձգական և սողքի հատկություններով օժտված մարմինների ամրության ուսումնասիրությունները:

Կ.Զոբանյանը բաղադրյալ մարմնի միացման մակերևույթի եզրի շրջակայքում թերլարվածության երևույթի գիտական հայտնագործության հեղինակն է, որը պաշտոնապես գրանցման ժամանակ առաջինն էր Անդրկովկասում՝ գիտության և տեխնիկայի, և ԽՍՀՄ-ում՝ մեխանիկայի ասպարեզում: Այդ հայտնագործությունը և դրա հիման վրա արված մշակումները լայն հեռանկարներ բացեցին մետաղների և պլաստմասսաների զոդման, սոսնձման, եռակցման կոնստրուկտիվ նոր սխեմաների հաշվարկի, ավելի երկարակյաց ու հուսալի կառուցվածքներ, տարբեր սարքավորումներ պատրաստելու համար: 1972թ. Կ.Զոբանյանի հետազոտությունների թեմատիկայի հիման վրա ստեղծվեց ՀԽՍՀ ԳԱ մեխանիկայի ինստիտու-

տի միացությունների ամրության բաժինը, որը նա գլխավորեց մինչև կյանքի վերջը:

Վախճանվել է 1978թ. հոկտեմբերի 15-ին Կիևում, ուր մեկնել էր մասնակցելու եռակցման ԽՍՀՄ համակարգող խորհրդի նիստին:

Աճյունն ամփոփված է Երևանում:

1998թ. փետրվարի 10-ին ՀՀ ԳԱԱ մեխանիկայի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ սահմանվել է Կ.Զոբանյանի անվան մրցանակ:

ԶՈՒԲԱՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ

Իրավաբան, հրապարակախոս,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ



Ծնվել է 1888թ. հուլիսի 6-ին Դոնի-Ռոստովի Նախիջևանի շրջանի Հայաբնակ Թովտի գյուղում: Միջնակարգ կրթությունն ստացել է Հայրենի Նախիջևանում, ապա ընդունվել Յարոսլավլի համալսարանի իրավաբանական ֆակուլտետ: Դրսեկությամբ միաժամանակ ավարտել է նաև Մոսկվայի համալսարանի պատմագրական ֆակուլտետը: 1913թ. վերադարձել է Դոնի-Ռոստով և զբաղվել փաստաբանությամբ ու լրագրական գործունեությամբ:

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո մշտական բնակություն է հաստատել Երևանում: 1920-1924թթ. վարելով ՀԽՍՀ արդարադատության ժողովրդական կոմիսարի առաջին տեղակալի պաշտոնը Գ.Զուբարյանը ղեկավարել է հանրապետության կարևորագույն օրենսդրական ակտերի, առանձնապես նրա առաջին՝ 1922թ. Սահմանադրության, քրեական դատավարության և հողային օրենսգրքերի, դատարանակազմության, այլ օրենսդրական-իրավական ակտերի և դեկրետների մշակման, կոդավորման և հրատարակման գործը՝ անձամբ մշակելով մի շարք օրենքների նախագծեր:

1920թ. Գ.Զուբարյանը հրավիրվել է ԵՊՀ և դասախոսել մինչև 1937թ.: Ենթարկվել է բռնաճնշումների ու հալածանքների, աքսորվել, այնուհետև արդարացվել է և շարունակել աշխատանքը ԵՊՀ-ում: 1957-1962թթ. վարել է պետական իրավունք, սովետական իրավունք, սովետական սահմանադրություն, քրեական դատավարություն, քրեական իրավունք, հռետորական

արվեստ դասընթացները:

Գ.Զուբարյանը մեծ ավանդ ունի հայ իրավաբանական գիտական տերմինաբանության ստեղծման գործում: Նա քաջածանոթ էր փիլիսոփայական և հասարակական-քաղաքական մտքի, ինչպես նաև հայ ժողովրդի պատմությանը, գրականության և արվեստի պատմությանը: Նրա գրչին են պատկանում մի շարք աշխատություններ և ծավալուն գիտական հոդվածներ, որոնք 1910-1930թթ. հրատարակվել են հայ պարբերական մամուլում:

1961թ. նա արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման:

Վախճանվել է 1962թ. սեպտեմբերի 6-ին Երևանում:

Գ.Զուբարյանի բրոնզաձույլ կիսանդրին ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի նախասրահում խորհրդանշում է ականավոր գիտնական-մանկավարժի դերը համալսարանի կայացման և համալսարանական գիտության ու կրթության զարգացման գործում:

ԶՈՒԲԱՐՅԱՆ ԷԴՎԱՐԴ ՎԱՐԴԱՆԻ

Ֆիզիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
ՀՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1936թ. մայիսի 5-ին Սպիտակում: 1953թ. ավարտել է Երևանի թիվ 20 միջնակարգ դպրոցը, 1958թ.՝ ԵՊՀ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը:

1961-1965թթ. Էդ.Զուբարյանն աշխատել է ՀԽՍՀ ԳԱ կենտրոնական գիտահետազոտական ֆիզիկատեխնիկական լաբորատորիայում: 1964թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, 1968թ. ստացել դոցենտի կոչում: 1965-1967թթ. աշխատել է ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի տեսական ֆիզիկայի ամբիոնում որպես ավագ դասախոս, դոցենտ: 1973թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1975-ին նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1985-2000թթ. նա եղել է ԵՊՀ տեսական ֆիզիկայի ամբիոնի վարիչ, 1991-2006թթ.՝ ԵՊՀ բնագիտական ֆակուլտետների ուսումնական աշխատանքների գծով պրոռեկ-

տոր: 1996թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս: 2006-ից ԵՊՀ տեսական ֆիզիկայի ամբիոնի վարիչն է:

Էդ.Զուբարյանը հեղինակ է 150 գիտական աշխատանքների, համահեղինակ՝ «Ֆիզիկայի խնդիրներ բուհ ընդունվողների համար» (Եր., 1966), «Ֆիզիկայի խնդիրների ժողովածու» (Եր., 1991) խնդրագրքերի և «Քվանտային մեխանիկա» (Եր., 1972), “Квантовая механика” (Եր., 1982) դասագրքերի:

Էդ.Զուբարյանի գիտական հետազոտությունների ուղղություններն են՝ հարաբերականության ընդհանուր տեսություն, գերխիտ երկնային մարմինների տեսություն, գրավիտացիոն առանցքահամաչափ դաշտերի Այնշտայնի և ձգողականության այլընտրանքային տեսություններ:

Նրա ղեկավարությամբ ու խորհրդատվությամբ պաշտպանվել է թեկնածուական 7 և դոկտորական 1 ատենախոսություն:

Դասախոսություններով հանդես է եկել Անգլիայում (Լոնդոն, 1992), Չեխոսլովակիայում (Պրահա, 1971, Բռնո, 1975, Բրատիսլավա, 1976), Գերմանիայում (Ենա, 1980, 1982):

Էդ.Զուբարյանը ԵՊՀ-ում գործող տեսական ֆիզիկայի գծով գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի նախագահն է:

1987թ. Էդ.Զուբարյանը պարգևատրվել է Խ.Աբովյանի անվան մեդալով, 2006թ.՝ արժանացել ՀՀ գիտության վաստակավոր գործչի կոչման:

ՊԱՊՈՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ

Լեզվաբան,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1928թ. նոյեմբերի 13-ին Ուզբեկստանի Անդիժան քաղաքում: 1948թ. ավարտել է Միջիդեյի միջնակարգ դպրոցը, 1953թ. ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժինը:

1953-1957թթ. Ա.Պապոյանն աշխատել է Մարտունու շրջանի դպրոցներում որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, 1958-1963թթ. եղել է ԵՊՀ հրատարակչության խմբագիր: 1963-ից աշխատանքի է անցել բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի ամբիոնում նախ որպես ավագ դասախոս, ապա՝ դոցենտ, իսկ 1988-ից՝ պրոֆեսոր: 1968-1971թթ. եղել է ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի դեկանի տեղակալ:

1965թ. պաշտպանել է թեկնածուական, 1987-ին՝ դոկտորական ատենախոսություն: 1988թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Ա.Պապոյանը հեղինակ է բազմաթիվ հոդվածների, բուհական ձեռնարկների ու դասագրքերի:

Կարևոր մենագրություններն են «Կախյալ շարահարությամբ բարդ նախադասությունները արդի հայերենում» (Եր., 1968), «Պարույր Սևակի չափածոյի լեզվական արվեստը» (Եր., 1970), «Պարույր Սևակի չափածոյի բառարան» (Հ. 1-2, Եր., 1981-1982թթ.), «Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն» (համահեղինակ, Եր., 2003), «Հայագիտական հետազոտություններ» (Եր., 2007):

ՊԱՊՈՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ ՎԼԱԴԻՄԻՐԻ

Ֆիզիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1937թ. հոկտեմբերի 17-ին Թբիլիսիում: 1955թ. ավարտել է Երևանի թիվ 20 դպրոցը և ընդունվել Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետ: 1957-ից ուսումը շարունակել է ԵՊՀ-ում: 1960թ. ավարտել է համալսարանը և աշխատանքի անցել ՀԽՍՀ ԳԱ ֆիզիկայի ինստիտուտում: Այնուհետև ուսումնառությունը շարունակել է ԵՊՀ ասպիրանտուրայում և 1970-ին պաշտպանել թեկնածուական ատենախոսություն:

1966թ. Վ.Պապոյանը եղել է ԵՊՀ տեսական ֆիզիկայի ամբիոնի ասիստենտ, 1969-ից՝ ավագ դասախոս, 1973թ.՝ դոցենտ: 1990թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն և 1992 թվականից աշխատել նույն ամբիոնում որպես պրոֆեսոր: 2002թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Վ.Պապոյանը հեղինակ է ավելի քան 100 գիտական հոդվածների՝ նվիրված գրավիտացիայի այլընտրանքային և Այնշտայնի տեսություններին ու դրանց աստղաֆիզիկական և կոսմոլոգիական կիրառություններին: Նա ստացել է մի շարք կարևոր արդյունքներ՝ առանցքահամաչափ ձգողության դաշտերի լուծում, բարիոնային աստղերի ռելատիվիստական մոդելների կառուցում, կայունության խնդրի լուծում, ինչպես նաև զբաղվել վաղ տիեզերքի զարգացման հարցերով:

Մասնակցել է միջազգային գիտաժողովների, դասախոսություններով հանդես եկել Իտալիայում (1974թ., Էրիչե), ԱՄՆ-ում (1983թ., Օստին) և Լեհաստանում (1976թ., Կրակով):

Վախճանվել է 2004թ. մայիսի 6-ին Երևանում:

ՊԱՐՍԱՄՅԱՆ ՎԱՐԴԱՆ ԱՐԱՄԻ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1909թ. հոկտեմբերի 15-ին Հրազդանի շրջանի Արզական գյուղում: Սկզբնական կրթությունն ստացել է ծննդավայրում, միջնակարգը՝ Երևանի Խ.Աբովյանի անվան դպրոցում: 1931թ. ավարտել է ԵՊՀ պատմության ֆակուլտետը: 1932-1936թթ. եղել է Հայաստանի պատմության պետական կենտրոնական արխիվի բաժնի վարիչ, գիտական աշխատանքների գծով փոխտնօրեն, 1937-1942թթ.՝ ԽՍՀՄ ԳԱ Հայկական մասնաճյուղի ավագ գիտաշխատող, 1943-1954թթ. ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի նոր պատմության բաժնի վարիչ, միաժամանակ գլխավորել Խ.Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի ԽՍՀՄ պատմության ամբիոնը: 1954-1977թթ. Վ.Պարսամյանը ղեկավարել է ԵՊՀ Հայ ժողովրդի պատմության ամբիոնը: 1977-1990թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող:

1938թ. պաշտպանել է թեկնածուական, 1947թ. դոկտորական ատենախոսություն: 1947թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Վ.Պարսամյանի գիտական հետազոտությունները վերաբերում են XIXդ. հայոց պատմության ուսումնասիրությանը: Կարևոր աշխատություններից են «Ցարիզմի գաղութային քաղաքականությունը Հայաստանում» (Եր., 1940), «Ա.Ս.Գրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերությունները» (Եր., 1947), «Հայ ազատագրական շարժումների պատմությունից» (Եր., 1958), «Դեկաբրիստները Հայաստանում» (Եր., 1959), «Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին և դրա պատմական նշանակությունը» (ռուս., Եր., 1978) և այլ ուսումնասիրություններ: Համահեղինակ է «Հայ ժողովրդի պատմություն» բուհական դասագրքի, որն ունեցել է մի քանի հրատարակություն (Եր., 1958-1960, 1963, 1975):

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 10 ատենախոսություն:

1961թ. Վ.Պարսամյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով և Խ.Աբովյանի անվան մեդալով:

Վախճանվել է 1990թ. հոկտեմբերի 1-ին Երևանում, աճյունն ամփոփված է Արզական գյուղում:

ՊԱՖԵՆՀՈԼՑ ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ՆԻԿՈԼԱՅԻ

Երկրաբանահանքաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ, Ադր.ԽՍՀ, Վր.ԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1893թ. մարտի 5-ին Բեսարաբիայի (այժմ՝ Մոլդովա) Ալբինեց գյուղում: Միջնակարգ կրթությունն ստացել է Քիշնևի ռեալական դպրոցում: 1920թ. ավարտել է Պետերբուրգի լեռնային ինստիտուտը:

1919 թվականից Կ.Պաֆենհոլցն աշխատել է Համառուսաստանյան երկրաբանական կոմիտեում: 1923թ. երկրաբանական աշխատանքի է անցել Անդրկովկասում, որտեղ շուրջ կես դար զբաղվել է Փոքր Կովկասի երկրաբանությամբ: 1928թ. ձեռնարկել է Կովկասյան լեռնաշղթայի հարավային լանջերի երկրաբանական քարտեզագրումը: 1932-1933թթ. մասնակցել է Պամիրի դեռևս չհետազոտված բարձր լեռնային վայրերն ուսումնասիրող Տաջիկա-պամիրյան արշավախմբի աշխատանքներին: 1933-1941թթ. Հայաստանի և Ադրբեջանի տարածքների մեծ մասի համար կազմել է 1:42000 և 1:50000 մասշտաբների երկրաբանական քարտեզներ:

Հայրենական պատերազմի տարիներին, լինելով Հայկական երկրաբանական վարչության գլխավոր երկրաբան, աշխատանքներ է կատարել ռազմական երկրաբանության գծով: Այդ նույն տարիներին ավարտել է Հայաստանի երկրաբանությանը նվիրված իր մեծարժեք աշխատությունը և 1943թ. ներկայացրել պաշտպանության որպես դոկտորական ատենախոսություն: 1943թ. նա ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս: 1945թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1945-1952թթ. Կ.Պաֆենհոլցը եղել է ԵՊՀ երկրաբանության ֆակուլտետի պրոֆեսոր: 1959 թվականից աշխատել է ՀԽՍՀ ԳԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտում:

Կ.Պաֆենհոլցը բազմաթիվ քարտեզների հեղինակ է: Նրա Կովկասի երկրաբանական քարտեզը, որպես եզակի նմուշ,

ցուցադրվել է 1966թ. Մեքսիկայում կայացած երկրաբանական 20-րդ միջազգային համաժողովում: "Геология Армении" (М.-Л., 1948) հիմնարար աշխատությունը 1950թ. արժանացել է ԽՍՀՄ Պետական մրցանակի:

Կ.Պաֆենհոլցը համամիութենական հանքաբանական և աշխարհագրական ընկերությունների անդամ էր, ՀԽՍՀ, Ադր. ԽՍՀ և Վր.ԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ:

Պարգևատրվել է Լենինի (2), Աշխատանքային կարմիր դրոշի, «Պատվո նշան» շքանշաններով և «Կովկասի պաշտպանության համար» մեդալով:

Վախճանվել է 1983թ. սեպտեմբերի 24-ին Լենինգրադում:

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԳԵՂԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1950թ. դեկտեմբերի 18-ին Թալինի շրջանի Ոսկեթաս գյուղում: Ավարտել է շրջանի Կարմրաշեն գյուղի միջնակարգ դպրոցը: 1969թ. ընդունվել և 1974թ. ավարտել է ԵՊՀ պատմության ֆակուլտետը, 1977թ. ընդունվել է ԵՊՀ ասպիրանտուրա: 1982թ. պաշտպանել է թեկնածուական, 2005թ. դոկտորական ատենախոսություն: 1988թ. նրան շնորհվել է դոցենտի, 2006թ. պրոֆեսորի կոչում:

1980թ. անցել է դասախոսական աշխատանքի ԵՊՀ ԽՄԿԿ պատմության ամբիոնում՝ զբաղեցնելով նախ՝ ասիստենտի, ապա՝ դոցենտի պաշտոն: Նույն պաշտոնով 1993թ. տեղափոխվել է ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոն, ապա նշանակվել պատմության ֆակուլտետի, 1998-ից՝ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դեկանի տեղակալ: 2008-ից նույն ֆակուլտետի դեկանն է:

Գ.Պետրոսյանը շուրջ չորս տասնյակ գիտական հոդվածների և 4 մենագրության հեղինակ է: Դրանցից հիշատակության արժանի են հատկապես «Հայաստանի Հանրապետության և Ուկրաինայի դիվանագիտական հարաբերությունների պատմությունից (1918-1920թթ.)» (Եր., 2002), «Հայաստանի Հանրապետության առնչությունները Ռուսաստանի հարավի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ (1918թ. հու-

նիս-նոյեմբեր)» (Եր., 2004, ռուս., Դոնի Ռոստով, 2005), «Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ (1918-1920թթ.)» (Եր., 2006) աշխատությունները:

Գ.Պետրոսյանի ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 1 ատենախոսություն:

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏ ԱԲՐԱՀԱՄԻ

Պատմական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր

Ծնվել է 1921թ. փետրվարի 23-ին Երևանում: Նրանց ընտանիքը տեղափոխվել է Մեղրի, որտեղ ստացել է միջնակարգ կրթություն: 1939թ. ընդունվել է ԵՊՀ պատմության ֆակուլտետ: Նույն թվականին զորակոչվել և Հայրենական մեծ պատերազմի առաջին օրերից մեկնել է ռազմաճակատ: Սովորել է Տամբովի սպայական դպրոցում, 1945թ.՝ Մոսկվայի ռազմական ակադեմիայում և ստացել սպայի աստիճան: 1945-1947թթ. ծառայել և միաժամանակ որպես դասախոս աշխատել է Երևանի հրետանային դպրոցում: Զորացրվելուց հետո ուսումը շարունակել է ԵՊՀ պատմության ֆակուլտետում, որն ավարտել է 1955թ.: 1955-1958թթ. սովորել է ԵՊՀ ասպիրանտուրայում:

1959թ. Հ.Պետրոսյանն աշխատանքի է անցել ՀԽՍՀ հեղափոխության պետական թանգարանում որպես թանգարանի գիտքարտուղար, ապա՝ գիտացուցադրական բաժնի վարիչ: Համատեղությամբ ԽՄԿԿ պատմություն է դասավանդել ԵՊՀ-ում: 1961-ից եղել է ԵՊՀ կուսակցության պատմության ամբիոնի ասիստենտ, ապա՝ դասախոս:

1964թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1966թ. նրան շնորհվել է դոցենտի կոչում: 1970-1974թթ. եղել է պատմության ֆակուլտետի դեկան, այնուհետև ԽՄԿԿ պատմության ամբիոնի դոցենտ: 1991թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Հեղինակ է գիտական ու հրապարակախոսական բազմաթիվ հոդվածների և «Անդրկովկասի բանվոր դասակարգը և բոլշևիկյան կազմակերպությունները Առաջին աշխարհամարտի տարիներին» (Եր., 1977), «Երկրորդ հեղափոխությունը Ռուսաստանում» (Եր., 1987) գրքերի, համահեղինակ՝ «Հայ

ժողովրդի պատմություն» բազմահատորյակի 6-րդ հատորի (Եր., 1981):

1953-1955թթ. Հ.Պետրոսյանը եղել է Երևանի Սպանդարյանի շրջխորհրդի պատգամավոր:

Պարգևատրվել է Հայրենական մեծ պատերազմի II աստիճանի շքանշանով, «Աշխատանքի վետերան» (1986) և այլ մեդալներով, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատվոգրով (1972):

Վախճանվել է 1997թ. օգոստոսի 13-ին Երևանում:

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՀՐԱՆՏ ԶԻՆԱՎՈՐԻ

Լեզվաբան,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1927թ. հունվարի 14-ին Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանի Հաթերք գյուղում: 1946թ. ավարտել է Ստեփանակերտի ուսուցչական ինստիտուտը, իսկ 1951թ.՝ ԵՊՀ բանասիրության ֆակուլտետը:

1954թ. Հ.Պետրոսյանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն:

1955-1956թթ. աշխատել է ԵՊՀ հրատարակչությունում որպես խմբագիր: 1957-1963թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ Հր.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտաշխատող: 1963-1993թթ. դասախոսել է ԵՊՀ-ում:

1973թ. Հ.Պետրոսյանը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1978 թվականից նա համալսարանի ընդհանուր և համեմատական լեզվաբանության ամբիոնի պրոֆեսոր էր, իսկ 1993-ից՝ նույն ամբիոնի վարիչ:

Հ.Պետրոսյանն իր գիտական գործունեության շուրջ 30 տարիների ընթացքում հեղինակել է հայերենագիտական և ընդհանուր լեզվաբանական արժեք ներկայացնող բազմաթիվ հոդվածներ և մենագրական ուսումնասիրություններ, որոնցից առավել կարևորներն են՝ «Գոյականի առումները հայերենում» (Եր., 1960), «Գոյականի թվի կարգը հայերենում» (Եր., 1972), «Ակնարկներ հայերենի պատմական ձևաբանության» (Եր., 1976), «Հայերենագիտական բառարան» (Եր., 1987) գրքերը: Նա գործուն մասնակցություն է ունեցել «Լեզվաբանական բառարան»-ի (Եր., 1975) ստեղծմանը:

Հր.Պետրոսյանը վախճանվել է 2001թ. մարտին ԱՄՆ-ում:

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՇԱՀԵՆ ՆԻԿՈԼԱՅԻ

Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ վաստակավոր իրավաբան



Ծնվել է 1912թ. փետրվարի 17-ին Սևանի շրջանի Դդմաշեն գյուղում: Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո անցել է աշխատանքի, ապա ընդունվել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ, որն ավարտել է 1937թ.: Այնուհետև աշխատել է Հանրապետության դատախազությունում՝ վարելով բաժնի դատախազի, բաժնի պետի տեղակալի, Երևանում՝ շրջանի դատախազի, իսկ 1948-1951թթ.՝ Երևան քաղաքի դատախազի պաշտոնները: 1951-1953թթ. եղել է ՀԽՍՀ գերագույն դատարանի նախագահ: 1953թ. Շ.Պետրոսյանն աշխատանքի է անցել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում:

1949թ. պաշտպանել է թեկնածուական, 1972թ. դոկտորական ատենախոսություն: 1973թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1975-1978թթ. եղել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դեկան, 1977-1985թթ. պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի վարիչ, այնուհետև՝ նույն ամբիոնի պրոֆեսոր:

Շ.Պետրոսյանը հեղինակ է «Ստրկատիրական պետության և իրավունքի պատմություն» (Եր., 1986) ուսումնական ձեռնարկի, «Սովետական պետականության հաստատումը և ամրապնդումը Հայաստանում: 1920թ. նոյեմբեր-1922թ. փետրվար» (Եր., 1958), «Սովետական պետականության կազմավորումը և զարգացումը Հայաստանում» (Եր., 1961), «Հայկական ԽՍՀ սահմանադրությունը և նրա պատմական զարգացումը» (Եր., 1982) մենագրությունների և գիտական բազմաթիվ հոդվածների:

1971թ. Շ.Պետրոսյանին շնորհվել է ՀԽՍՀ վաստակավոր իրավաբանի կոչում: Արժանացել է կառավարական պարգևների:

Վախճանվել է 1999թ. մարտի 12-ին Երևանում:

ՊԻՈՏՐՈՎՍԿԻ ԲՈՐԻՍ ԲՈՐԻՍԻ

Հնագետ-արևելագետ,
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ԽՍՀՄ ԳԱ և ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,
ՌԽՖՍՀ արվեստի վաստակավոր գործիչ



Ծնվել է 1908թ. փետրվարի 1-ին Սանկտ Պետերբուրգում: 1930թ. ավարտել է Լենինգրադի սլետական համալսարանի պատմալեզվագրական ֆակուլտետը: 1931թ.աշխատանքի է անցել սլետական էրմիտաժում և ԽՍՀՄ ԳԱ Լենինգրադի բաժանմունքի հնագիտության ինստիտուտում: 1938թ. պաշտպանել է թեկնածուական, 1944թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1946թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1964-ից մինչև կյանքի վերջը Բ.Պիոտրովսկին եղել է Էրմիտաժի տնօրեն, 1966-1990թթ.՝ Լենինգրադի սլետական համալսարանի Հին Արևելքի պատմության ամբիոնի վարիչ:

1968թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ, 1970թ.՝ ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս:

1980-1982թթ. եղել է ԽՍՀՄ ԳԱ պատմության բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար:

1968-1984թթ. ամեն տարի հրավիրվել է ԵՊՀ՝ կարդալու մասնագիտական դասընթացներ:

1930թ. Բ.Պիոտրովսկին գործուղվել է Հայաստան, զբաղվել կիկլոպյան ամրոցների ուսումնասիրությամբ, պեղել Ծովինարի ամրոցը: 1936թ. մասնակցել է Ամբերդի պեղումներին: 1939-ից շուրջ 30 տարի ղեկավարել է Կարմիր բլուրի պեղումները, հրատարակել պեղումների գիտական հաշվետվությունները: Նրա գրչին են պատկանում «Ուրարտու» (ռուս., Եր., 1944), «Վանի թագավորությունը» (ռուս., Մ., 1959), «Ուրարտուի արվեստը» (ռուս., Լ., 1962), «Կարմիր բլուր» (երեք գրքով, ռուս., Եր., 1950, 1952, 1955), «Անդրկովկասի հնագիտությունը» (ռուս., Լ., 1949) և շուրջ 200 գիտական հոդվածներ՝ նվիրված Հին Արևելքի պատմության ու մշակույթի տարբեր հարցերի:

Բ.Պիոտրովսկին Բրիտանական, Բավարական, Ֆրանսիական ակադեմիաների պատվավոր անդամ էր:

1964թ. արժանացել է ՌԽՖՍՀ արվեստի վաստակավոր գործչի, 1983թ.՝ Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչումների, 1946թ.՝ ԽՍՀՄ Պետական մրցանակի: Պարգևատրվել է Լենինի (3), Աշխատանքային կարմիր դրոշի (3) շքանշաններով, մի շարք մեդալներով:

Վախճանվել է 1990թ. մարտի 14-ին Լենինգրադում:

ՊԻՎԱԶՅԱՆ ԷՄԱՆՈՒԵԼ ԱՐԶՈՒՄԱՆԻ

Լեզվաբան,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1920թ. դեկտեմբերի 8-ին Նոր Բայազետում (այժմ՝ Գավառ): 1937թ. ավարտել է Երևանի թիվ 60 միջնակարգ դպրոցը, 1943թ.՝ ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժինը:

1943թ. եղել է ՀԽՍՀ ԳԱ գրականության ինստիտուտի գիտաշխատող, 1948-1955թթ.՝ Վ.Բրյուսովի անվան օտար լեզուների ինստիտուտի լեզվաբանության ամբիոնի դոցենտ և ֆակուլտետի դեկան, 1955-1957թթ.՝ ռուսական մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի ամբիոնի դոցենտ, 1957-ին՝ ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի ամբիոնի դոցենտ, 1991-ից՝ պրոֆեսոր: 1969-1990թթ. ԵՊՀ հայագիտական հետազոտությունների պրոբլեմային լաբորատորիայի վարիչն էր:

1947թ. Էմ.Պիվազյանը պաշտպանել է թեկնածուական, 1989-ին՝ դոկտորական ատենախոսություն: 1991թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Կարևոր մենագրություններն են՝ «Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» բանասիրական քննություն» (Եր., 1987), «Մխիթար Գոշ. Առակներ» (Եր., 1988), «Հովհաննես Թլկուրանցի. Տաղեր» (Եր., 1960):

Էմ.Պիվազյանը վախճանվել է 1995թ. մարտի 27-ին Երևանում:

ՊԻՎԱԶՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՇԵՂԻ

Իրավաբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր

Ծնվել է 1923թ. ապրիլի 18-ին Նոր Բայազետում (այժմ՝ Գավառ): Միջնակարգ կրթությունն ստացել է Թբիլիսիում, այնուհետև 1942-1944թթ. մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին:

1944-1948թթ. Հ.Պիվազյանը սովորել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում, որն ավարտելուց հետո ընդունվել է ԽՍՀՄ ԳԱ պետության և իրավունքի ինստիտուտի ասպիրանտուրա: 1953թ. պաշտպանել է թեկնածուական ատենախո-

սություն և անցել աշխատանքի ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում որպես դասախոս, ավագ դասախոս, դոցենտ: 1991թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1972-1983թթ. Հ.Պիվազյանը ղեկավարել է իր ջանքերով ստեղծված քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնը:

Հեղինակ է 40 գիտական աշխատությունների, այդ թվում՝ «Քրեական դատավարություն (ըստ ՀԽՍՀ քրեական դատավարության օրենսգրքի): Ընդհանուր մաս» (Եր., 1989) ուսումնական ձեռնարկի և համահեղինակ՝ «Դատարանը և արդարադատությունը ԽՍՀՄ-ում» (Եր., 1975) դասագրքի, «Նախնական քննության ընթացքում կազմվող դատավարական փաստաթղթերի օրինակելի նմուշներ» (Եր., 1984) ուսումնական ձեռնարկի:

Հ.Պիվազյանը գործուն մասնակցություն է ունեցել Հանրապետության քրեադատավարական օրենսդրության մշակմանն ու կատարելագործմանը, եղել է Հանրապետության Գերագույն դատարանի և դատախազության գիտամեթոդական խորհուրդների անդամ:

Պարգևատրվել է շքանշաններով ու մեդալներով:

Վախճանվել է 1994թ. հուլիսի 25-ին Երևանում:

ՊՈՂՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ ՍՈՒՐԵՆԻ

Բույսերի ֆիզիոլոգ,
կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Ծնվել է 1932թ. նոյեմբերի 21-ին Երևանում: 1950թ. ավարտել է Երևանի թիվ 7 դպրոցը, 1955թ.՝ Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի կենսաբանահողագիտության ֆակուլտետը: 1956թ. աշխատել է ՀԽՍՀ գյուղատնտեսության նախարարության խաղողագործության, գինեգործության և պտղաբուծության ինստիտուտում որպես լաբորանտ: 1957թ. ընդունվել է ասպիրանտուրա, 1961-ին՝ պաշտպանել թեկնածուական ատենախոսություն և աշխատել նույն ինստիտուտում որպես կրտսեր գիտաշխատող, 1966-ից՝ ավագ գիտաշխատող: 1969-1971թթ. գործուղվել է Ճապոնիա, աշխատել Հոկայդոյի համալսարանում:

1973թ. Կ.Պողոսյանը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1988թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1974-ից ղեկավարում է նույն ինստիտուտի բույսերի ֆիզիոլոգիայի և կենսաքիմիայի բաժինը:

1992-ից դասավանդում է ԵՊՀ-ում:

1996թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս:

Գիտական հետազոտությունները վերաբերում են բազմամյա բույսերի, հատկապես խաղողի վազի և հարավային մի շարք սլտղատեսակների ցրտադիմացկունության, դրանց ֆիզիոլոգիական առանձնահատկությունների ուսումնասիրման և բացահայտման, ՀՀ խիստ ցամաքային կլիմա ունեցող շրջաններում խաղողի վազի բարձրաբուն (առանց այգեթաղի) մշակության հարցերին:

Կ.Պողոսյանը շուրջ 190 հոդվածների, մեթոդական աշխատությունների հեղինակ է: Նա խաղողի ցրտադիմացկուն ինը նոր սորտերի ստեղծման համահեղինակ է:

Եղել է գիտական երկարաժամկետ գործուղումներում, զեկույցումներով հանդես եկել միջազգային գիտաժողովներում (ԱՄՆ, Գերմանիա, Ճապոնիա, Հունգարիա, Բուլղարիա, ՌԴ և այլն):

Կ.Պողոսյանի ղեկավարությամբ ու խորհրդատվությամբ պաշտպանվել է թեկնածուական 21 և դոկտորական 4 ատենախոսություն:

ՊՈՂՈՍՅԱՆ ՀՐԱՆՏ ՌՈՒԲԵՆԻ

Տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր



Ծնվել է 1933թ. հոկտեմբերի 2-ին Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Նորաշեն գյուղում: 1957թ. ավարտել է ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետը: 1961թ. ընդունվել է ԵՊՀ ասպիրանտուրա:

1962 թվականից դասավանդել է ԵՊՀ ժողովրդական տնտեսության պլանավորման ամբիոնում: Հ.Պողոսյանի նախաձեռնությամբ 1972թ. հիմնվել է աշխատանքի էկոնոմիկայի ամբիոնը, և նա դարձել է ամբիոնի առաջին վարիչը:

1975թ. Հ.Պողոսյանն ամբիոնի հետ տեղափոխվել է նորաստեղծ ԵԺՏԻ: 1985թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն և ստացել տեխնիկական գիտությունների դոկտորի

գիտական աստիճան: 1986թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1993-2001թթ. աշխատել է ՌԴ կառավարությանը կից Մոսկվայի ժողովրդական տնտեսության ակադեմիայում:

Հ.Պողոսյանը հեղինակ է 64 գիտական աշխատությունների, այդ թվում՝ 18 մենագրության, 5 դասագրքի և ուսումնական ձեռնարկի: Հրատարակել է «Աշխատավարձի ձևերի և համակարգերի կատարելագործումը արդյունաբերության մեջ» (Եր., 1976), «Աշխատանքի վերջնական արդյունքների համար կոլեկտիվ վարձատրության արդյունավետությունը» (Եր., 1981) մենագրությունները և «Աշխատանքի էկոնոմիկա» դասագիրքը (ռուս., Մ., 1991):

Ղեկավարել է ատենախոսական 40 աշխատանք:

2003թ. Հ.Պողոսյանը ստեղծել է «Հրանտ» կրթաթոշակային հիմնադրամը, որի սահմանած «Բարեկամություն» կրթաթոշակներից 15-ը հատկացվել է ԵՊՀ գերազանցիկ ուսանողներին, իսկ 2007թ.՝ «Գիտության, կրթության, առողջապահության զարգացում» ՀՀ բարեգործական հիմնադրամը, որը ՀՀ բուհերի համար սահմանել է «Բարեկամություն» անունով 214 կրթաթոշակ, որից 50-ը հատկացվում է ԵՊՀ ուսանողներին ու ասպիրանտներին:

Հ.Պողոսյանը պարգևատրվել է «Պատվո նշան» շքանշանով:

ՊՈՂՈՍՅԱՆ ՅԱՐՈՍԼԱՎ ՄԿՐՏՉԻ

Ֆիզիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1930թ. մայիսի 9-ին Լենինականում (այժմ՝ Գյումրի): 1949թ. ընդունվել և 1954-ին ավարտել է Մոսկվայի ինժեներաֆիզիկական ինստիտուտը:

1955-1957թթ. Յա.Պողոսյանն աշխատել է Մոսկվայի մեքենաշինության տեխնոլոգիայի կենտրոնական, 1957-1959թթ. Կիրովականի (այժմ՝ Վանաձոր) «Ավտոմատիկա», 1959-1965թթ.՝ Երևանի մաթեմատիկական մեքենաների, 1965-1968թթ. Երևանի «Պոլիմեր» համամիութենական գիտահետազոտական ինստիտուտներում:

1965թ. նա Մոսկվայում պաշտպանել է թեկնածուական,

1974թ. Սվերդլովսկում՝ դոկտորական ատենախոսություն: 1981-ին նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1968-1981թթ. եղել է ԵՊՀ պինդ մարմնի ֆիզիկայի պրոբլեմային լաբորատորիայի սեկտորի, ապա՝ բաժնի վարիչ:

Յա.Պողոսյանը Հայաստանում էլեկտրոնային մանրազննման հիմնադիրներից է: Նրա աշխատանքները վերաբերում են մագնիսական երևույթների ֆիզիկային, մասնավորապես բարակ թաղանթների մագնիսական նուրբ կառուցվածքի էլեկտրոնամանրադիտակային հետազոտությանը, դոմենային սահմանների սողքի, այսպես կոչված «որդանման» և «չքերթային» շարժումների տեսական և փորձարարական ուսումնասիրմանը: Նա ստեղծել է էլեկտրոնային հաշվողական սարքեր տեղեկատվության սկզբունքորեն նոր կուտակիչներ և նոր տիպի մագնիսական գլխիկներ:

Հեղինակ է 150 գիտական աշխատանքների, 15 հեղինակային իրավունքի: Նրա գիտական ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 9 ատենախոսություն:

1981թ. Յա.Պողոսյանը նշանակվել է Լենինականում ստեղծված «Մագնոն» հատուկ փորձարարական կոնստրուկտորական բյուրոյի տնօրեն և այդ պաշտոնում աշխատել մինչև 1988թ. երկրաշարժը, որն ավերեց նշված հիմնարկությունը: Ծանր վիրավորվեց նաև Յա.Պողոսյանը: Ապաքինվելուց հետո աշխատել է ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտում որպես լաբորատորիայի վարիչ:

Վախճանվել է 2000թ. հոկտեմբերի 20-ին Երևանում:

ՊՈՂՈՍՅԱՆ ՊՈՂՈՍ ՍՏԵՓԱՆԻ

Ռադիոֆիզիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր



Ծնվել է 1936թ. օգոստոսի 3-ին Երևանում: Միջնակարգ կրթությունն ստացել է թիվ 40 դպրոցում: 1954թ. ընդունվել և 1959-ին ավարտել է ԵՊՀ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը և աշխատանքի անցել ՀԽՍՀ ԳԱ ֆիզիկայի ինստիտուտում որպես կրտսեր գիտաշխատող: 1962-1967թթ. աշխատել է ԵՊՀ ռադիացիոն ֆիզիկայի գիտահետազոտական լաբորա-

տորիայում: 1967-1971թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի ավագ գիտաշխատող:

1969թ. Պ.Պողոսյանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1971-1972թթ. եղել է ԵՊՀ քվանտային էլեկտրոնիկայի ամբիոնի վարիչ, իսկ 1972-1973թթ.՝ ՀԽՍՀ ԳԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի գիտական լաբորատորիայի վարիչ:

1973-ից Պ.Պողոսյանը հիմնական աշխատանքի է անցել ԵՊՀ-ում: 1973-1984թթ. եղել է սկզբում ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի, այնուհետև՝ քվանտային ռադիոֆիզիկայի ամբիոնի վարիչ:

1991թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: Նույն տարում նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: Ակտիվ մասնակցություն է ունեցել 1975թ. ԵՊՀ ռադիոֆիզիկայի ֆակուլտետի ստեղծման գործում:

Պ.Պողոսյանի գիտական հետազոտությունները վերաբերում են քվանտային ռադիոֆիզիկային և էլեկտրոնիկային: Լազերային ֆիզիկայի հիմնարար խնդիրների ուսումնասիրության ուղղությամբ նրա փորձարարական հետազոտությունները, նաև ոչ գծային միջավայրերի հետ գերկարճ լազերային իմպուլսների փոխազդեցության ուսումնասիրման արդյունքները զգալի ներդրում են Հայաստանում քվանտային էլեկտրոնիկայի զարգացման ասպարեզում:

Պ.Պողոսյանը հեղինակ է շուրջ 60 գիտական աշխատանքների: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 6 ատենախոսություն:

Վախճանվել է 2004թ. ապրիլի 15-ին Երևանում:

ՊՈՂՈՍՅԱՆ ՍԵՐՈԲ ՊՈՂՈՍԻ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1904թ. հոկտեմբերի 15-ին Բիթլիսի նահանգի Վերին Հյուրուկ գյուղում: Սկզբնական կրթությունն ստացել է ծննդավայրի ծխական դպրոցում: Հրաչքով փրկվելով 1915թ. Մեծ եղեռնից՝ նրանց ընտանիքն ապաստանել է Կոտայքի շրջանի Ելդովան (այժմ՝ Կոտայք) գյուղում: Ընդհատված ու-

սումը շարունակել է գաղթականների երեխաների համար Թազադյուղում (այժմ՝ Նոր գյուղ) բացված դպրոցում: 1921-1924թթ. սովորել է Երևանի Ալ.Մյասնիկյանի անվան միջնակարգ դպրոցում, 1926-1931թթ.՝ ԵՊՀ մանկավարժական ֆակուլտետի պատմագրական բաժնում, 1931-1932թթ.՝ մանկավարժական ինստիտուտի պատմագրական ֆակուլտետում, 1932-1935թթ. ԵՊՀ ասպիրանտուրայում: Ուսումնառությանը զուգընթաց աշխատել է Երևանի քաղաքային խորհրդում որպես հրահանգիչ, Երևանի երկաթուղային հանգույցում՝ կոմերիտական կազմակերպության քարտուղար:

Ասպիրանտուրան ավարտելուց հետո մինչև կյանքի վերջը դասավանդել է ԵՊՀ-ում: 1937-1941թթ. եղել է հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչ, 1937-1941թթ., 1955-1960թթ. և 1964-1968թթ. պատմության ֆակուլտետի դեկան, 1937-1940թթ. նաև Հայաստանի պատմության պետական թանգարանի տնօրեն: 1941-1945թթ. մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին:

1939թ. Ս.Պողոսյանը պաշտպանել է թեկնածուական, 1956թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1959թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Ս.Պողոսյանի գիտական ժառանգության մեջ առանձնակի արժեք ունեն «Ֆրիկի դարաշրջանը» (Եր., 1937), «Գյուղացիների ճորտացումը և գյուղացիական շարժումները Հայաստանում IX-XIII դարերում» (Եր., 1956), «Հայ ժողովրդի պատմության ուսումնասիրությունը 50 տարում» (Եր., 1971) և այլ աշխատություններ: Նշանակալից են նրա ծառայությունները հայ ժողովրդի պատմության բուհական ու դպրոցական դասագրքերի ստեղծման ընագավառում: Համահեղինակ է «Հայ ժողովրդի պատմություն» բուհական դասագրքի, որն ունեցել է մի քանի հրատարակություն (Եր., 1958-1960, 1963, 1975):

Ս.Պողոսյանի ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 3 ատենախոսություն: Եղել է գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի նախագահ:

Նա բազմիցս ընտրվել է Երևանի քաղաքային և Սպանդարյանի շրջանային խորհուրդների պատգամավոր:

1965թ. Ս.Պողոսյանն արժանացել է գիտության վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է «Պատվո նշան» և մարտական չքանշաններով ու մեդալներով:

Վախճանվել է 1983թ. ապրիլի 5-ին Երևանում:

ՊՈՊՈՎ ՅՈՒՐԻ ԳԵՈՐԳԻԻ

Կենսաբան,

կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1936թ. օգոստոսի 2-ին Երևանում: 1953թ. ավարտել է Երևանի թիվ 20 դպրոցը, 1958թ. ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետը և նույն տարում ընդունվել ԵՊՀ ասպիրանտուրա: 1962թ. Յու.Պոպովն աշխատանքի է անցել ԵՊՀ բույսերի անատոմիայի և ֆիզիոլոգիայի ամբիոնում որպես ասիստենտ, ապա՝ ավագ դասախոս: 1975թ. պաշտպանել է թեկնածուական, 2002թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1977թ. նրան շնորհվել է դոցենտի, 2006-ին՝ պրոֆեսորի կոչում: 1978-1983թթ. և 1991-ից անընդմեջ ղեկավարում է մանրէաբանության և բույսերի ու մանրէների կենսատեխնոլոգիայի ամբիոնը:

1980-ից ղեկավարում է ամբիոնին կից գիտական խումբը:

Յու.Պոպովն ավելի քան 140 գիտական աշխատանքների հեղինակ է, որոնք նվիրված են բույսերի մեկուսացված կուլտուրաներում հակաբակտերիական և հակաուռուցքային նյութերի սինթեզին: Ուսումնասիրել է որոշ խմորասնկերի՝ ասպարագինաթթվի ընտանիքի ամինաթթուների յուրացման օրինաչափությունները: Զբաղվել է կաթնաթթվային բակտերիաների հակամիկրոբային և հիպոալերգեն մթերքների, ինչպես նաև բակտերիական մելանինի՝ որպես նոր ֆիտոխթանիչի, կիրառման հետազոտմամբ:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 8 ատենախոսություն:

Մասնակցել է միջազգային գիտաժողովների (Մոսկվա, Փարիզ, Իտալիա):

1990թ. Յու.Պոպովը պարգևատրվել է «Աշխատանքի վետերան» մեդալով:

ՋԱՀՈՒԿՅԱՆ ԳԵՎՈՐԳ ԲԵԳԼԱՐԻ

Լեզվաբան,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1920թ. ապրիլի 1-ին Կալինինոյի շրջանի Շահնազար գյուղում: 1937թ. ավարտելով Երևանի թիվ 1 միջնակարգ դպրոցը՝ ընդունվել է ԵՊՀ բանասիրության ֆակուլտետ և ավարտել 1941-ին: 1941-1943թթ. մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին:

1945-1949թթ. Գ.Ջահուկյանը ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի ավագ դասախոս էր, 1948-1957թթ. օտար լեզուների, 1957-1970թթ.՝ ռոմանագերմանական բանասիրության ամբիոնների վարիչ, 1970-ից՝ ընդհանուր լեզվաբանության ամբիոնի պրոֆեսոր:

1947թ. Գ.Ջահուկյանը պաշտպանել է թեկնածուական, 1955-ին՝ դոկտորական ատենախոսություն: 1958թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1949-1950թթ., 1959-1962թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ Հր.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ավագ գիտաշխատող, 1962-ից մինչև կյանքի վերջը՝ նույն ինստիտուտի տնօրեն: 1968թ. ընտրվել ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1974-ին՝ ակադեմիկոս:

Գ.Ջահուկյանն իր անգնահատելի նպաստն է բերել հայ նորագույն լեզվաբանության հիմնադրման գործին: Ականավոր լեզվաբանի թողած գիտական պատկառելի ժառանգության մեջ մեծ արժեք են «Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը» (Եր., 1959), «Ակնարկներ հայոց լեզվի նախագրային շրջանի պատմության» (ռուս., Եր., 1967), «Հայոց լեզվի համեմատական քերականություն» (ռուս., Եր., 1982), «Հայոց լեզվի պատմություն. նախագրային շրջան» (Եր., 1987) և այլ ծավալուն աշխատություններն ու բազմաթիվ հոդվածները:

Գ.Ջահուկյանի «Հայ բարբառագիտության ներածություն»

(Եր., 1972), «Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը» (Եր., 1969), «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ» (Եր., 1974), «Ժամանակակից հայերենի իմաստաբանություն և բառակազմություն» (Եր., 1989) կոթողային աշխատությունները չրջադարձային կարևորություն ունեցան և ճանապարհ հարթեցին հետագա ուսումնասիրությունների համար: Գ.Ջահուկյանի «Լեզվաբանության պատմություն» (Եր., 1960-1962), «Ընդհանուր և հայկական լեզվաբանություն» (Եր., 1978) հիմնարար ուսումնասիրությունները հանգեցրին լեզվի համընդհանուր կաղապարի ստեղծման գաղափարին, որն էլ իրականություն դարձավ նրա «Լեզվի համընդհանուր տեսություն» (ռուս., Մոսկվա, 1999, անգլ., 2003) մենագրության մեջ:

Գ.Ջահուկյանի ղեկավարությամբ ու խորհրդատվությամբ պաշտպանվել են բազմաթիվ թեկնածուական ու դոկտորական ատենախոսություններ:

Որպես Եվրոպայի և ԱՄՆ-ի լեզվաբանական ընկերությունների անդամ՝ նա մեծ դեր է խաղացել հայ լեզվաբանական դպրոցի ձեռքբերումները միջազգային ասպարեզ դուրս բերելու գործում:

1965թ. Գ.Ջահուկյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման, 1988թ.՝ ՀԽՍՀ Պետական, իսկ 1996-ին ՀՀ գիտության ազգային մրցանակների: Պարգևատրվել է Հոկտեմբերյան հեղափոխության, «Պատվո նշան», ՀՀ «Մեսրոպ Մաշտոց» շքանշաններով, «Աշխատանքային արիության համար», «Մովսես Խորենացի» և ԵՊՀ ոսկե մեդալներով:

Վախճանվել է 2005թ. հուլիսի 8-ին Երևանում:

Գ.Ջահուկյանի բրոնզաձույլ կիսանդրին ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի նախասրահում խորհրդանշում է տաղանդաշատ սանի խաղացած դերը մայր բուհի գիտական հեղինակության բարձրացման գործում:

ՋԱՂԱՑՊԱՆՅԱՆ ԴԱՎԻԹ ԿԱՐԱՊԵՏԻ

Լեզվաբան,
բանասիրական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր

Ծնվել է 1920թ. ապրիլի 1-ին Երևանում: Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո 1940թ. ընդունվել է ԵՊՀ բանա-

սիրության ֆակուլտետի ռուսաց լեզվի և գրականության բաժին: 1945-ից սովորել է Լենինգրադի (այժմ՝ Սանկտ Պետերբուրգ) պետական համալսարանի ասպիրանտուրայում: 1949թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և անցել դասախոսական աշխատանքի ԵՊՀ ռուսաց լեզվի ամբիոնում: 1962-1991թթ. եղել է նույն ամբիոնի վարիչ: 1959թ. նրան շնորհվել է դոցենտի, 1991-ին՝ պրոֆեսորի կոչում:

Դ.Ջաղացպանյանը մանկավարժական աշխատանքին զուգընթաց զբաղվել է գիտական գործունեությամբ. ուսումնասիրել է Խ.Աբովյանի «Ռուսերենի նոր տեսական և գործնական քերականություն»-ը, ռուսագիտության և ռուսաց լեզվի դասավանդման ասպարեզում անվանի մասնագետներ Կ.Սարաֆյանի, Մ.Բժշկյանի, Հ.Ալամդարյանի գործունեությունը:

Հեղինակ է 70 գիտական աշխատությունների, այդ թվում՝ բազմաթիվ հոդվածների, դասագրքերի, ուսումնամեթոդական ձեռնարկների: Առավել կարևոր է "Лингвистические основы первых грамматических трудов по русскому языку" (Ер., 1957) մենագրությունը: Համահեղինակ է "Армянский язык. Учебник для студентов русских отделений вузов Арм. ССР" (Ер., 1964), "Русский язык. Учебник для вузов Арм. ССР" (Ер., 1965) դասագրքերի և "Русско-армянский фразеологический словарь" (Ер., 1975) գրքի:

1976-1978թթ. նա դասախոսություններ է կարդացել Դելիի համալսարանում:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին, երբ ուսանող էր, աշխատել է ռազմական հոսպիտալում և արժանացել «Կովկասի պաշտպանության համար» մեդալի:

Դ.Ջաղացպանյանը վախճանվել է 2000թ. նոյեմբերի 19-ին Երևանում:

ՋԻՎԱՆՅԱՆ ԿԱՐԻՆԵ ԱՐԱՄԻ

Կենդանաբան,
կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1939թ. հուլիսի 3-ին Լենինականում (այժմ՝ Գյումրի): 1956թ. ավարտել է տեղի թիվ 3 միջնակարգ դպրոցը, 1956-1961թթ. սովորել է ԵՊՀ կենսաբանության ֆակուլ-

տեսում: 1961թ. ընդունվել է ԵՊՀ ասպիրանտուրա:

1965թ. Կ.Ջիվանյանը պաշտպանել է թեկնածուական, 1990թ. Մոսկվայում՝ դոկտորական ատենախոսություն: 1974թ. նրան շնորհվել է դոցենտի, 2005թ. պրոֆեսորի կոչում:

1964-ից Կ.Ջիվանյանն աշխատում է ԵՊՀ կենդանաբանության ամբիոնում որպես ասիստենտ, այնուհետև դոցենտ, պրոֆեսոր: 1993-2003թթ. եղել է նույն ամբիոնի վարիչ:

Հեղինակ է շուրջ 110 գիտական աշխատանքների, որոնք նվիրված են օրգանների և հյուսվածքների վերականգնողական պոտենցիալի և դրանց ադապտիվ աճի կարգավորման մեջ միջբջջային փոխազդեցությունների դերի ուսումնասիրմանը: Հեղինակ կամ համահեղինակ է նաև դպրոցական և բուհական 10 դասագրքերի ու ձեռնարկների, այդ թվում՝ միջնակարգ դպրոցի 7-րդ դասարանի «Կենսաբանություն» (Եր., 2000) դասագրքի, «Իմունոլոգիա» (Եր., 2004) բուհական դասագրքի:

Կ.Ջիվանյանի ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 3 ատենախոսություն:

ՋՐԲԱՇՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ ՄԿՐՏՉԻ

Գրականագետ,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1923թ. սեպտեմբերի 24-ին Երևանում: 1941թ. ավարտել է Երևանի թիվ 23 միջնակարգ դպրոցը և մեկնել զինվորական ծառայության: Մասնակցել է Հայրենական պատերազմին, ծանր վիրավորվել է, կորցրել ոտքը: Զորացրվելուց հետո սովորել և 1950թ. ավարտել է ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժինը:

1954թ. Էդ.Ջրբաշյանը պաշտպանել է թեկնածուական, 1965թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1967թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1974թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1982թ.՝ ակադեմիկոս:

1950-1972թթ. Էդ.Ջրբաշյանը դասախոսել է ԵՊՀ հայ գրականության տեսության ամբիոնում: 1972-1985թթ. ղեկավարել է իր իսկ հիմնադրած գրականության տեսության և գեղագի-

տության, 1982-ից՝ գրականության տեսության և արտասահմանյան գրականության ամբիոնը: 1966-1970թթ. նա աշխատել է նաև ՀԽՍՀ ԳԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում որպես գրականության տեսության բաժնի վարիչ, իսկ 1977-1999թթ.՝ նույն ինստիտուտի տնօրեն: Մեծ է նրա ներդրումը «Հայ նոր գրականության պատմություն» բազմահատորյակի ստեղծման և հրատարակման գործում:

1953-1954թթ. եղել է «Գրական թերթի» գլխավոր խմբագրի տեղակալ, 1961-1962թթ. խմբագրել է «Սովետական գրականություն» ամսագիրը, իսկ 1967-1977թթ՝ «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի հիմնադիր խմբագիրն էր:

Էդ.Ջրբաշյանը հեղինակ է ավելի քան երկու տասնյակ մենագրությունների, հարյուրավոր հոդվածների: Նա նախաձեռնել ու խմբագրել է հայ դասականների երկերի հրատարակություններ:

Նրա առավել կարևոր աշխատություններից են՝ «Պոետիկայի հարցեր» (Եր., 1976), «Ջորս գագաթ» (Եր., 1982), «Թումանյանի պոեմները» (Եր., 1964, 1986), «Գեղագիտություն և գրականություն» (Եր., 1986) մենագրությունները, ինչպես նաև «Գրականագիտության տեսություն» բուհական դասագիրքը, որն ունեցել է մի քանի հրատարակություն:

1956 թվականից եղել է գրողների միության անդամ:

1970թ. Էդ.Ջրբաշյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման, ՀԽՍՀ Պետական մրցանակների (1974, 1980): Պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի, «Կարմիր աստղ» և Հայրենական մեծ պատերազմի I աստիճանի շքանշաններով:

Վախճանվել է 1999թ. օգոստոսի 10-ին Երևանում:

ՋՐԲԱՇՅԱՆ ՄԽԻԹԱՐ ՄԿՐՏՉԻ

Մաթեմատիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1918թ. սեպտեմբերի 11-ին Երևանում: 1941թ. ավարտել է ԵՊՀ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը: 1942-

1945թթ. սովորել է ասպիրանտուրայում: 1945թ. Մ.Ջրբաշյանը պաշտպանել է թեկնածուական, 1949թ. դոկտորական ատենախոսություն: 1950թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1953թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1956թ.՝ ակադեմիկոս:

1943-ից Մ.Ջրբաշյանը դասավանդել է ԵՊՀ-ում: 1957-1960թթ. եղել է ֆիզիկամաթեմատիկական, ապա մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետի դեկան, 1978-1994թթ.՝ ֆունկցիաների տեսության ամբիոնի վարիչ: 1945-ից նա աշխատել է նաև ՀԽՍՀ ԳԱ-ում: 1955-1971թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ մաթեմատիկայի և մեխանիկայի ինստիտուտի ֆունկցիաների տեսության բաժնի վարիչ, 1971-1989թթ.՝ ՀԽՍՀ ԳԱ մաթեմատիկայի ինստիտուտի հիմնադիր տնօրեն, 1966-ից՝ «Մաթեմատիկա» (ՀԽՍՀ ԳԱ տեղեկագիր) հանդեսի հիմնադիր գլխավոր խմբագիր:

1963-1973թթ. Մ.Ջրբաշյանը ՀԽՍՀ ԳԱ ֆիզիկամաթեմատիկական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարն էր, 1973-1978թթ.՝ ՀԽՍՀ ԳԱ նախագահության անդամ:

Նա շուրջ 200 գիտական հոդվածների, մենագրությունների և ուսումնական ձեռնարկների հեղինակ է: Նրա ուսումնասիրություններն ընդգրկում են ժամանակակից կոմպլեքս անալիզի և ֆունկցիաների տեսության մի շարք ուղղություններ՝ մոտավորությունների տեսություն, հարմոնիկ անալիզ, ինտեգրալ ձևափոխություններ և ֆունկցիաների ներկայացումներ, մերոմորֆ ֆունկցիաների ֆակտորացման և դրանց եզրային հատկություններ:

Առավել արժեքավոր են Մ.Ջրբաշյանի “Интегральные преобразования и представления функций в комплексной области” (M., 1966), “Классы и граничные свойства функций мероморфных в круге” (M., 1993), “Harmonic analysis and boundary value problems in the complex domain” (Շվեյցարիա, 1993) մենագրությունները:

Նա մեծ ավանդ ունի 40-50-ականներին ձևավորված հայկական մաթեմատիկական գիտական դպրոցի կայացման ու զարգացման գործում:

1964թ. Մ.Ջրբաշյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի, Հոկտեմբերյան հեղափոխության շքանշաններով:

Վախճանվել է 1994թ. մայիսի 6-ին Երևանում:

ԶՐԲԱՇՅԱՆ ՏԻԳՐԱՆ ԱՐՇԱԿԻ

Երկրաբան, պրոֆեսոր

Ծնվել է 1889թ. նոյեմբերի 9-ին Վանում: Սկզբնական կրթությունն ստացել է Վանի Երամյան դպրոցում, ուսումը շարունակել է Էրզրումի Սանասարյան վարժարանում: 1912թ. ավարտելով Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը՝ վերադարձել է Վան և երկու տարի աշխատել քաղաքի դպրոցներում: 1916թ. վերադարձել է Թիֆլիս և մինչև 1918թ. բնագիտական առարկաներ դասավանդել հայկական դպրոցներում:

1919-1920թթ. Տ.Զրբաշյանը եղել է Թիֆլիսի համալսարանի բնագիտական ֆակուլտետի ուսանող և ուսմանը զուգահեռ աշխատել տեղի պոլիտեխնիկական ինստիտուտում որպես հանքաբանական կաբինետի լաբորանտ: 1920թ. մեկնել է Փարիզ և ընդունվել Սորբոնի համալսարան, ապա տեղափոխվել Փարիզի լեռնային ինստիտուտ, որն ավարտել է 1924թ.:

Աշխատելով Փարիզի բնապատմական թանգարանում՝ զբաղվել է երկրաբանությամբ և միաժամանակ եղել Սորբոնի համալսարանի ազատ ունկնդիր:

1925թ. վերադառնալով Հայրենիք՝ Տ.Զրբաշյանն աշխատանքի է անցել ԵՊՀ-ում որպես բնագիտական ֆակուլտետի երկրաբանական առարկաների դասախոս: 1929թ. նրան շնորհվել է դոցենտի, 1933թ.՝ պրոֆեսորի կոչում: 1934թ. նշանակվել է աշխարհագրական-երկրաբանական ֆակուլտետի դեկան:

Տ.Զրբաշյանն աշխատել է նաև ժողտնտխորհի լեռնային բաժնում և կիրառական երկրաբանության ինստիտուտում որպես դլխավոր ինժեներ և արշավախմբի պետ, հետազոտել է մերձերևանյան շրջանների ոչ մետաղային օգտակար հանածոների հանքավայրերը, Կոտայքի և Հրազդանի շրջանների պեմզաներն ու դիատոմիտները, Ջարխեջլի կոնգլոմերատները, Զրվեժի գիպսը, Թալինի պեռլիտները և մի քանի այլ հանքավայրեր: Նա ԽՍՀՄ ԳԱ Հայկական բաժանմունքի երկրաբանական ինստիտուտում գլխավորել է Կոտայքի շրջանի արշավախումբը:

Տ.Զրբաշյանը երկու անգամ ընտրվել է Երևանի քաղաքային խորհրդի պատգամավոր (1930, 1933), երկրաբանական համամիութենական համագումարի (Տաշքենդ, 1928) և միջազգային XVII երկրաբանական համաժողովի (Մոսկվա, 1937) պատգամավոր:

1937թ. Տ.Զրբաշյանը բռնադատվել է ու գնդակահարվել: Արդարացվել է հետմահու:

ՋՈՒՀԱՐՅԱՆ ԹՈՐԳՈՄ ԳԵՎՈՐԳԻ

Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ վաստակավոր ուսուցիչ



Ծնվել է 1905թ. դեկտեմբերի 27-ին Կարսի նահանգի Կը-զըլ-Զախչախ գյուղում: Տարրական կրթությունն ստացել է հայրենի գյուղում: 1915թ. Մեծ եղեռնը շատերի պես նրան ևս ստիպել է բռնել գաղթի ճանապարհը:

Թ.Ջուհարյանն ավարտել է Ալեքսանդրապոլի (այժմ՝ Գյումրի) առևտրական դպրոցը և ինդուստրիալ տեխնիկումը: 1926-1930թթ. սովորել և ավարտել է ԵՊՀ մանկավարժական ֆակուլտետի պատմագրական բաժինը: 1930-ականներին ԵՊՀ-ում շուրջ վեց տարի դասավանդել է քաղաքատնտեսություն: Ենթարկվել է ստալինյան բռնարարքների, հետո ազատվել ու մեկնել ռազմաճակատ, մասնակցել Մեծ Հայրենականի մարտերին:

Զորացրվելուց հետո աշխատել է Եղեգնաձորի շրջանում որպես ժողովրդական կրթության բաժնի վարիչ, ՀԽՍՀ լուսավորության մինիստրությունում՝ որպես տեսուչ, գիտաշխատող, ապա՝ հայոց լեզվի և գրականության սեկտորի վարիչ: 1967-1988թթ. ԵՊՀ մանկավարժության ամբիոնի վարիչն էր: Զբաղվել է հայրենագիտության և պատմության դասավանդման հիմնախնդիրներով, հայոց լեզվի և գրականության դասավանդման մեթոդիկայի հարցերով:

1955թ. Թ.Ջուհարյանը պաշտպանել է թեկնածուական, 1968թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1969թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Հեղինակ է բազմաթիվ գիտական աշխատությունների, դպրոցական և բուհական դասագրքերի ու ձեռնարկների, որոնցից առավել կարևորներն են «Հայրենագիտական աշխատանքը դպրոցում» (Եր., 1949), «Սովորողների տնային աշխատանքը պատմությունից» (Եր., 1951), «Սովետական Հայաստանի պատմական հուշարձանները» (Եր., 1961), «Հայ գրականության մեթոդիկա» (Եր., 1966, 1972, 1980):

Թ.Ջուհարյանն արժանացել է ՀԽՍՀ վաստակավոր ուսուցչի կոչման, պարգևատրվել «Պատվո նշան» շքանշանով, Խ.Աբովյանի անվան և մի շարք այլ մեդալներով ու պատվոգրերով:

Վախճանվել է 1988թ. ապրիլի 17-ին Երևանում:



ՌՇՏՈՒՆԻ ՎԱՀԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1894թ. փետրվարի 6-ին Վաղարշապատում՝ Ռշտունիքից գաղթած ընտանիքում: 1915թ. ավարտելով Էջմիածնի Գևորգյան ճեմարանը Վ.Ռշտունին մինչև 1919թ. դասավանդել է Թավրիզի, ապա Ախալցխայի, Սուխումի, Թիֆլիսի հայկական դպրոցներում: 1919-1924թթ. սովորել է Թիֆլիսի պոլիտեխնիկական ինստիտուտի հասարակական գիտությունների ֆակուլտետում: 1924թ. վերադարձել է հայրենիք և 1925-ից աշխատանքի հրավիրվել մայր բուհում՝ 40 տարի անընդմեջ ղեկավարելով ԽՍՀՄ պատմության իր հիմնադրած ամբիոնը, վարել նաև պատմության ֆակուլտետի դեկանի ու ԵՊՀ ուսումնական մասի վարիչի պաշտոններ: Նա միաժամանակ երկար տարիներ աշխատել է ԽՍՀՄ ԳԱ հայկական բաժանմունքում և ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտում:

Վ.Ռշտունին իր ուշադրությունը սևեռել է հայոց պատմության նոր և նորագույն ժամանակաշրջանի հիմնահարցերին, լուսաբանել հայ պատմաբանների տեսադաշտից դուրս մնացած ու գրեթե չուսումնասիրված մի շարք հիմնախնդիրներ, որոնք առնչվում են Անդրկովկասում և առաջին հերթին Արևելյան Հայաստանում 1861-1870թթ. կայսերական Ռուսաստանի կառավարության իրականացրած վերափոխումներին, հայ գյուղացիության և հայ հասարակական-քաղաքական հոսանքների պատմությանը:

1940թ. Վ.Ռշտունին պաշտպանել է թեկնածուական, իսկ 1941թ. Մոսկվայում՝ դոկտորական ատենախոսություն: 1944թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1956թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ:

1952-1953թթ. Վ.Ռշտունին հալածվել է «Միասնական հոսանք»-ին պատկանելու մեղադրանքով, սակայն չի հրաժարվել

իր սկզբունքներից:

Հեղինակ է շուրջ 40 աշխատության: Առանձնապես արժեքավոր են նրա «Գյուղացիական ռեֆորմը Հայաստանում 1870թ.» (Եր., 1947), «Գյուղացիական շարժումները Հայաստանում 19-րդ դարում» (ռուս., Եր., 1948), «Ուրվագծեր Հայաստանի գյուղացիության պատմության (1828-1917թթ.)» (3 մասով, Եր., 1960, 1968), «Հայ հասարակական հոսանքները և 1861, 1864, 1870թթ. գյուղացիական ռեֆորմը» (Եր., 1956), «Հայ հասարակական հոսանքների պատմությունից. 19-րդ դարի 2-րդ կես, հետռեֆորմյան շրջան» (Եր., 1956) ծավալուն աշխատությունները:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 20 ատենախոսություն:

1946թ. Վ.Ռշտունին արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: 1956թ. պարգևատրվել է Լենինի շքանշանով:

Վախճանվել է 1970թ. փետրվարի 4-ին Երևանում:

ՌՈՏԻՆՅԱՆ ԼԵՎՈՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ

Քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ

Ծնվել է 1879թ. մայիսի 22-ին Թիֆլիսում: 1898թ. ավարտելով տեղի 3-րդ գիմնազիան՝ ընդունվել է Սանկտ Պետերբուրգի համալսարանի բնագիտական ֆակուլտետի ֆիզիկամաթեմատիկական բաժինը, որն ավարտել է 1903թ.՝ ստանալով անօրգանական և ֆիզիկական քիմիայի մասնագետի որակավորում: Լ.Ռոտինյանն աշխատանքի է նշանակվել Պետերբուրգի նորաստեղծ պոլիտեխնիկական ինստիտուտի ֆիզիկական քիմիայի և տեսական էլեկտրաքիմիայի ամբիոնում որպես ասիստենտ: Այդ տարիներին նա կազմել է ֆիզիկական քիմիայի գործնական աշխատանքների առաջին ձեռնարկը Ռուսաստանում: 1904-1907թթ. նա գիտական գործուղման է մեկնել Գերմանիա:

1918-1920թթ. Լ.Ռոտինյանը դոցենտի պաշտոնով աշխատել է Թիֆլիսի համալսարանի անօրգանական քիմիայի ամբիոնում: 1921թ. նշանակվել է Ալավերդու պղնձաձուլական գործարանի

կենտրոնական լաբորատորիայի վարիչ: 1922-1927թթ. եղել է հողժողկոմատի և ժողտնտխորհի կենտրոնական լաբորատորիայի անօրգանական քիմիայի բաժնի վարիչ: 1923թ. նա հրավիրվել է ԵՊՀ որպես անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչ, ապա՝ մինչև 1938թ. ֆիզիկական քիմիայի ամբիոնի վարիչ: 1925թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Լ.Ռոտինյանը Հայաստանում ֆիզիկական քիմիայի դպրոցի հիմնադիրն է: Ստ.Ղամբարյանի հետ միասին ԽՍՀՄ ԳԱ Հայկական մասնաճյուղի քիմիական ինստիտուտի կազմակերպիչներից է: Մինչև 1938թ. ղեկավարել է այդ ինստիտուտի ֆիզիկական քիմիայի բաժինը:

1948թ. ԽՍՀՄ ԳԱ ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտի գիտական խորհուրդը, առանց ատենախոսության պաշտպանության, Լ.Ռոտինյանին շնորհել է քիմիական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: 1957-1960թթ. Լ.Ռոտինյանը գլխավորել է ՀԽՍՀ ժողտնտխորհի քիմիայի գիտահետազոտական ինստիտուտի ֆիզիկական քիմիայի բաժինը:

Նա հրապարակել է շուրջ 30 գիտական աշխատանքներ, որոնք հիմնականում վերաբերում են քիմիական ջերմադինամիկային: Հեղուկ ծծմբի մածուցիկության վերաբերյալ Լ.Ռոտինյանի ստացած տվյալները 1920թ. ստուգվել և հաստատվել են անգլիացի գիտնականներ Ֆերրալի և Մակլեոդի կողմից. դրանք երկար ժամանակ օգտագործվում էին տեղեկատվական և ֆիզիկական քիմիայի դասագրքերում: Սնդիկի, ծարիրի և ալյումինի հալոգենիդների կրիտիկական ջերմաստիճանների չափումը Լ.Ռոտինյանը կատարել է այնպիսի ճշգրտությամբ, որ տասնամյակներ շարունակ դրանք պահպանել են իրենց գիտական արժեքը: Հեղուկ և դրան հարակից գազային ու բյուրեղային վիճակների մակերևույթների նրա ուսումնասիրությունները իրավամբ դասվում են համաշխարհային գրականության մեջ հայտնի այդօրինակ ուսումնասիրություններից լավագույնների շարքը: Նրա աշխատանքներից վեցը նվիրված են հալված բազալտների բյուրեղացման և թրծման պայմանների ուսումնասիրությանը:

Լ.Ռոտինյանը վախճանվել է 1964թ. դեկտեմբերի 30-ին Երևանում:

ՍԱԼԱԽՅԱՆ ՀԱԿՈԲ ՆՇԱՆԻ

Գրականագետ, մշակութային գործիչ,
բանասիրական գիտությունների թեկնածու

Ծնվել է 1922թ. սեպտեմբերի 1-ին Խարկովում հայկական կոտորածներից փրկված արհեստավորի ընտանիքում: Միջնակարգ կրթությունն ստացել է տեղի հայկական դպրոցում: 1944թ. ավարտել է ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի ռուսաց լեզվի և գրականության բաժինը, 1947թ.՝ Լենինգրադի համալսարանի ասպիրանտուրան և պաշտպանել թեկնածուական ատենախոսություն:

1944-1958թթ. Հ.Սալախյանը ԵՊՀ-ում և Կոմիտասի անվան կոնսերվատորիայում դասավանդել է ռուս գրականության պատմություն, գեղագիտություն և այլ առարկաներ: 1954-1958թթ. եղել է Հայաստանի գրողների միության վարչության երկրորդ քարտուղար, «Հայֆիլմ» կինոստուդիայի սցենարական բաժնի վարիչ, "Литературная газета" թերթի սեփական թղթակիցը Հայաստանում:

1959թ. Հ.Սալախյանը հրավիրվել է Մոսկվա և մինչև կյանքի վերջն աշխատել «Дружба народов» ամսագրի գլխավոր խմբագրի առաջին տեղակալ:

Հեղինակ է «Ն.Վ.Գոգոլ. քննադատական կենսագրական ակնարկ» (Եր., 1952), «Եղիշե Չարենց» (Եր., 1957), «Զինված մարգարեն» (Եր., 1964) մենագրությունների, ինչպես նաև Հ.Պարոնյանի, Գր.Զոհրապի, Հ.Հակոբյանի երկերի ռուսերեն հրատարակությունների առաջաբանների:

Նրա լավագույն հոդվածներն ամփոփված են «Ժամանակիդ շունչը դարձիր» (Եր., 1967), «Դասականներ և ժամանակակիցներ» (Եր., 1971), "Древняя и молодая" (М., 1971) գրքերում:

Հ.Սալախյանը վախճանվել է 1969թ. սեպտեմբերի 1-ին Մոսկվայում:

ՍԱՀԱԿՅԱՆ ԱՐԹՈՒՐ ԱՐՏՈՒՇԻ

Մաթեմատիկոս,
Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

Ծնվել է 1956թ. մայիսի 2-ին Դիլիջանում: 1972թ. ավարտել է տեղի թիվ 1 միջնակարգ դպրոցը, 1977թ.՝ ԵՊՀ մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետը: 1979-1981թթ. սովորել է ԽՍՀՄ ԳԱ Վ.Ստեկլովի անվան մաթեմատիկայի ինստիտուտի (Մոսկվա) ասպիրանտուրայում, որտեղ 1981թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն:

1982-ից Ա.Սահակյանը եղել է ՀԽՍՀ ԳԱ մաթեմատիկայի ինստիտուտի գիտաշխատող, 2000-2004թթ. նույն ինստիտուտի գիտական քարտուղար: 1982-ից դասավանդել է նաև ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետում: 2006թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն և նույն թվականին ընտրվել ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ: 2004-2008թթ. նա ղեկավարել է ԵՊՀ մաթեմատիկական անալիզի ամբիոնը: 2008-ից ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի դեկանն է:

Ա.Սահակյանի գիտական հետազոտությունները հիմնականում վերաբերում են օրթոգոնալ համակարգերին, հարմոնիկ անալիզին, բազմանդամային միջարկումներին, վեյվլետ համակարգերին:

Հեղինակ է 34 գիտական հոդվածների, համահեղինակ "Spline Functions and Multivariate Interpolations" (Kluwer Academic Publishers, 1993) և "Ортогональные ряды" (М., 1984, 1999) մենագրությունների. վերջինս տպագրվել է նաև անգլերեն (1989) և չինարեն (2008): Հեղինակն է նաև հանրակրթական դպրոցի 9-րդ և 10-րդ դասարանների «Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր» (Եր., 2001) դասագրքերի:

ՍԱՀԱԿՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ ՍԵՐՈԲԻ

Ֆիզիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ



Ծնվել է 1913թ. սեպտեմբերի 10-ին Անիի շրջանի Սառնաղբյուր գյուղում, որտեղ սկզբնական կրթություն ստանալուց հետո ընդունվել է Գյումրիի շինարարական տեխնիկում և այն ավարտել 1933թ.:

1933-1934թթ. աշխատել է Մեծ Պարնի գյուղի միջնակարգ դպրոցում որպես ուսուցիչ: 1934-1939թթ. սովորել է ԵՊՀ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետում:

1939-1946թթ. ծառայել է խորհրդային բանակում, մասնակցել Հայրենական մեծ պատերազմին: 1946-1949թթ. սովորել է ԽՍՀՄ ԳԱ Պ.Լեբեդևի անվան ֆիզիկայի ինստիտուտի ասպիրանտուրայում: 1950թ. Գ.Սահակյանը պաշտպանել է թեկնածուական, իսկ 1963թ. Մոսկվայում՝ դոկտորական ատենախոսություն: 1964թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1965թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1982-ին՝ ակադեմիկոս: 1950-ից նա անընդմեջ աշխատել է ԵՊՀ-ում: 1951թ. հիմնադրել է տեսական ֆիզիկայի ամբիոնը, որը ղեկավարել է մինչև 1985թ.:

Գ.Սահակյանը հեղինակ է շուրջ 200 գիտական հոդվածների, մենագրությունների, ուսումնական ձեռնարկների և դասագրքերի, այդ թվում՝ "Равновесные конфигурации вырожденных газовых масс" (М., 1972), "Физика нейтронных звезд" (Дубна, 1995), "Основы релятивистской теории гравитации" (Ер., 1987) մենագրությունների, որոնք թարգմանվել են անգլերեն, ֆրանսերեն և գերմաներեն: Համահեղինակ է «Քվանտային մեխանիկա» (Եր., 1972, ռուս., 1982) դասագրքի:

Նա զբաղվել է տարրական մասնիկների ֆիզիկայի և տիեզերական ճառագայթների հետազոտությամբ: Ստացված արդյունքներն ամփոփվել են «Էներգետիկական սպեկտրներ և տիեզերական ճառագայթման մասնիկների միջուկային փոխազդեցություններ» (Եր., 1958) մենագրության մեջ:

Տեսական աստղաֆիզիկայի բնագավառում Գ.Սահակյանն ու Վ.Համբարձումյանը 1960-ական թվականների սկզբին

ստեղծեցին նոր ուղղություն՝ գերխիտ աստղերի ֆիզիկա, կառուցեցին գերխիտ աստղային կոնֆիգուրացիաների մոդելներ, հայտնաբերեցին հարաբերականության ընդհանուր տեսության նոր՝ զանգվածի անոմալ պակասորդի երևույթը: Այս արդյունքները կարևոր նշանակություն ունեն գերխիտ երկնային մարմինների կոսմոգոնիական ուսումնասիրություններում:

Գ.Սահակյանը «Նեյտրոնային աստղերի ֆիզիկա» գիտական ուղղության հիմնադիրն է: Նա զարգացրել է այն գաղափարը, որ նեյտրոնային աստղերն առաջացել են տիեզերքի ընդարձակման վաղ շրջանում՝ մյուս բոլոր տեսակի երկնային մարմիններից շուտ, և որ գալակտիկաների կորիզները պետք է գերազանցապես բաղկացած լինեն նեյտրոնային աստղերից և սպիտակ թզուկներից, բացահայտել նեյտրոնային աստղերի կարևոր դերը գալակտիկաների միջուկների ակտիվության մեջ: 1991-1997թթ. նա մշակել է բաբախիչների ռադիոճառագայթման և բարստերների տեսությունները: Գ.Սահակյանը գրավիտացիայի տեսության գիտական դպրոցի հիմնադիրն է Հայաստանում:

Նրա ղեկավարությամբ ու խորհրդատվությամբ պաշտպանվել է թեկնածուական 7 և դոկտորական 10 ատենախոսություն:

1967-1972թթ. Գ.Սահակյանը եղել է ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի դեկան:

Վճռորոշ էր նրա դերը բուհական առաջին գիտահետազոտական ինստիտուտի՝ «Լազերային տեխնիկա» գիտաարտադրական միավորման ստեղծման գործում: Մինչև կյանքի վերջը եղել է ԵՊՀ-ում գործող տեսական և մաթեմատիկական ֆիզիկայի գծով գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի նախագահ:

1970թ. Գ.Սահակյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման, պարգևատրվել է «Կարմիր աստղ» (1945), Ժողովուրդների բարեկամության (1981), Հայրենական պատերազմի II աստիճանի (1985), Լենինի (1986) շքանշաններով և մի շարք պատվոգրերով:

Վախճանվել է 2000թ. մարտի 26-ին Երևանում:

Գ.Սահակյանի բրոնզաձույլ կիսանդրին ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի նախասրահում խորհրդանշում է տաղանդաշատ սանի խաղացած բացառիկ դերը համալսարանում գիտության ու կրթության զարգացման գործում:

ՍԱՀԱԿՅԱՆ ՄԵԼՍ ԱՐՏԱՎԱԶԴԻ

Մաթեմատիկոս,
Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու,
պրոֆեսոր

Ծնվել է 1940թ. հունիսի 8-ին Երևանում: 1957թ. ավարտել է թիվ 25 դպրոցը, 1962թ.՝ ԵՊՀ մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետը:

1971թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1976թ. նրան շնորհվել է դոցենտի, 2003թ. պրոֆեսորի կոչում:

1962-1964թթ. Մ.Սահակյանն աշխատել է ԵՊՀ մաթեմատիկական անալիզի ամբիոնի ասիստենտ: 1964-1967թթ. սովորել է Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի ասպիրանտուրայում: 1967-1972թթ. աշխատել է նույն համալսարանի ընդհանուր կառավարման ամբիոնում որպես գիտաշխատող: 1972-1975թթ. ղեկավարել է ԵՊՀ և ՀԽՍՀ ԳԱ հաշվողական կենտրոնի ընդհանուր կառավարման բաժինը: 1975-1984թթ. եղել է ԵԺՏԻ տնտեսագիտական կիբեռնետիկայի ամբիոնի դոցենտ: 1984-ից աշխատում է ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետում: 1978-1988թթ. համատեղությամբ աշխատել է ՀԽՍՀ պետպլանի էկոնոմիկայի և պլանավորման գիտահետազոտական ինստիտուտի հատուկ հետազոտությունների բաժնի գիտական ղեկավար: 1990-1995թթ. եղել է ՀՀ ԱԺ պատգամավոր:

Մ.Սահակյանը համահեղինակ է “Математическое моделирование металлургических процессов” (М., 1976), և «Մաթեմատիկական ծրագրավորում» մենագրությունների, «Հավանականություն և կիրառական վիճակագրություն» (Եր., 2001) դասագրքի, հեղինակ՝ «Քանակական եղանակները գործարարության և կառավարման համար» (Եր., 2002, 2004) ուսումնական ձեռնարկի, «Տնտեսության վերլուծության մաթեմատիկական եղանակներ. Գործույթների հետազոտում. Կառավարման գիտություն» (մաս 1, Եր., 1997, մաս 2, 3 Եր., 2001) դասագրքի, ինչպես նաև բազմաթիվ հոդվածների:

Մ.Սահակյանի ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 5 ատենախոսություն:

ՍԱՀԱՐՅԱՆ ԱՐԱՄ ԱԶԱՏԻ

Ֆիզիկոս,
Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր

Ծնվել է 1960թ. նոյեմբերի 9-ին Ախալցխայի շրջանի Մեծ Պամաճ գյուղում: Տեղի 8-ամյա դպրոցն ավարտելուց հետո ուսումը շարունակել է Վալե քաղաքի թիվ 3 հայկական միջնակարգ դպրոցում, որն ավարտել է 1977թ.: 1982թ. Ա.Սահարյանն ավարտել է ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետը և ընդունվել ասպիրանտուրա՝ միաժամանակ աշխատելով ՀԽՍՀ ԳԱ ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտում: 1987թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, 1996թ. ստացել դոցենտի կոչում: 1991-ից մշտական աշխատանքի է անցել ԵՊՀ տեսական ֆիզիկայի ամբիոնում, սկզբում որպես ասիստենտ, դոցենտ, իսկ 2007-ից պրոֆեսոր: Համատեղությամբ աշխատում է նաև ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտում որպես ավագ գիտաշխատող: 2001թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, 2008թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Ա.Սահարյանը հեղինակ է շուրջ 150 գիտական հոդվածների: Հրատարակել է "The generalized Abel-Plana formula with applications to Bessel functions and the Casimir effect" (Yer., 2008) մենագրությունը:

2003-ից նա Տեսական ֆիզիկայի միջազգային ինստիտուտի (Տրիեստ, Իտալիա) արտասահմանյան անդամ է: Գիտական հետազոտությունները վերաբերում են գրավիտացիայի ռելյատիվիստական տեսություններին, կոսմոլոգիային, արտաքին դաշտերի ու սահմանների առկայությամբ վակուումի հատկությունների ուսումնասիրությանն անհամասեռ միջավայրերում և ձայնային ալիքների ազդեցությանն էլեկտրամագնիսական ճառագայթային պրոցեսների վրա:

Նա դասախոսություններ է կարդացել Թեհրանի Շարիֆի տեխնոլոգիական համալսարանում (ԻԻՀ) և Պարաիբայի դաշնային համալսարանում (Բրազիլիա):

2004թ. Ա.Սահարյանն արժանացել է ՀՀ Նախագահի մրցանակի:

ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ ՎԱՐԴԱՆԻ

Մաթեմատիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու,
պրոֆեսոր,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1912թ. մարտի 20-ին Վրաստանի Մառնեուլի շրջանի Շուլավեր գյուղում: 1928թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը, 1932թ.՝ ԵՊՀ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը, 1940-ին Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի ասպիրանտուրան:

1932-ից Վ.Սաղաթելյանն աշխատել է ԵՊՀ-ում: 1940թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1941-1942թթ. մասնակցել է Մեծ Հայրենականին և ծանր վիրավորվել:

1942թ. նրան շնորհվել է դոցենտի կոչում: 1942-1944թթ. եղել է մաթեմատիկական անալիզի ամբիոնի դոցենտ, 1944-1949թթ.՝ նույն ամբիոնի վարիչ, 1941-1981թթ.՝ բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնի վարիչ, 1943-1949թթ.՝ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի, իսկ 1968-1970թթ.՝ մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետի դեկան: 1971թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Վ.Սաղաթելյանը կատարել է շնորհակալ աշխատանք Հայաստանում մայրենի լեզվով դասագրքերի ստեղծման ու հատկապես մաթեմատիկական տերմինաբանության մշակման ուղղությամբ: Հեղինակ է «Բարձրագույն մաթեմատիկայի դասընթաց» (Եր., 1961, 1967) երկհատոր դասագրքի:

Նա եղել է ՀԽՍՀ ԳԱ գիտության ու տեխնիկայի պատմության խորհրդի մաթեմատիկայի ու մեխանիկայի պատմության սեկցիայի նախագահ, Հայկական հանրագիտարանի մաթեմատիկայի գիտաճյուղային խորհրդի նախագահի տեղակալ, ՀՀ լուսավորության և ԲՄՄԿ նախարարություններին առընթեր մաթեմատիկական տերմինաբանության հանձնաժողովի նախագահ: Թարգմանել ու խմբագրել է բազմաթիվ դասագրքեր:

1970թ. Վ.Սաղաթելյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է «Կարմիր աստղ», «Պատվո նշան» շքանշաններով, Խ.Աբովյանի անվան մեդալով (1982):

Վախճանվել է 1993թ. դեկտեմբերի 28-ին Երևանում:

ՍԱՂԻՅԱՆ ԱՇՈՏ ՍԵՐՈԲԻ

Քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

Ծնվել է 1957թ. ապրիլի 7-ին Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանի Զափար գյուղում: 1973թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը, 1978թ.՝ ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը: 1980-1984թթ. սովորել է ասպիրանտուրայում:

1985թ. պաշտպանել է թեկնածուական, 1997թ. դոկտորական ատենախոսություն: 2003թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 2006թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ:

1978-ից Ա.Սաղիյանն աշխատել է ԽՍՀՄ մանրէաբանական և բժշկական արդյունաբերության նախարարության ամինաթթուների տեխնոլոգիական գիտահետազոտական ինստիտուտում, որը 1995թ. վերանվանվեց Կենսատեխնոլոգիայի ԳՀ ինստիտուտ: 2000-ից նա նույն ինստիտուտի տնօրենն է: 1998-ից աշխատում է նաև ԵՊՀ դեղագործական քիմիայի ամբիոնում որպես պրոֆեսոր, իսկ 2002-ից՝ ամբիոնի վարիչ:

Ա.Սաղիյանը հեղինակ է 130 գիտական հոդվածների, որոնք վերաբերում են ոչ սպիտակուցային (S)-և (R)-α-ամինաթթուների ասիմետրիկ բիոմիմետիկ սինթեզին և պեպտիդների սինթեզին: Մշակել է ամինաթթուների ասիմետրիկ սինթեզի ունիվերսալ փոքրածավալ արդյունավետ տեխնոլոգիա, որի օգնությամբ սինթեզվել են 80-ից ավելի նոր, օպտիկապես ակտիվ (S)- և (R)-α-ամինաթթուներ, մի շարք գերարդյունավետ քիրալային օժանդակ ռեագենտներ և կատալիզատորներ, ինչպես նաև ավելի քան 20 նոր դի-, տրի- և տետրապեպտիդներ ոչ սպիտակուցային ամինաթթուների պարունակությամբ, հետազոտել դրանց հակաքաղցկեղային և հակավիրուսային ակտիվությունը:

Ա.Սաղիյանը զբաղվել է նաև կենսաբանորեն ակտիվ նյութերի անջատման և մաքրման հարցերով, մշակել մի շարք սպիտակուցային ամինաթթուների մանրէաբանական սինթեզի կուլտուրալ հեղուկներից նսլատակային ամինաթթուների անջատման և մաքրման արդյունավետ տեխնոլոգիաներ, որոնք կիրառություն են գտել:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 9 ատենախոսություն:

Ա.Սաղիյանն արժանացել է Եվրամիության Դեկարտի ան-

վան մրցանակի (2001), ՀԺՀ կառավարական «Բարեկամություն» շքանշանի (2002), ՀՀ Նախագահի մրցանակի (2004):

ՍԱՄՈՒԵԼՅԱՆ ԽԱՉԻԿ ՍՏԵՓԱՆԻ

Իրավագետ, պատմաբան-հայագետ, պրոֆեսոր

Ծնվել է 1873թ. Ղրիմի Կերչ քաղաքում: Միջնակարգ կրթությունն ստացել է Թեոդոսիայի գիմնազիայում (1889-1895թթ.), բարձրագույնը՝ նախ Սանկտ Պետերբուրգում (1895-1900թթ.), ապա՝ Գերմանիայում՝ Ենայում (1901-1903թթ.):

Խ.Սամուելյանը, կրթությամբ լինելով իրավաբան, զբաղվել է ոչ միայն գործնական իրավաբանությամբ, այլև գիտահետազոտական, մասնավորապես՝ հայագիտության հարցերով:

1904 թվականից նա երկար տարիներ եղել է բազմաթիվ խմբագրական խորհուրդների անդամ (1906-1907թթ.՝ «Ազգագրական հանդես», «Սուրհանդակ», «Հոսանք» օրաթերթերի, 1915-1917թթ.՝ «Փայլակ» շաբաթաթերթի):

Նա երկար տարիներ զբաղվել է մանկավարժությամբ: 1907-1920 թթ. դասավանդել է Գևորգյան ճեմարանում, Նոր Նախիջևանի, Թիֆլիսի, Երևանի, Շուշիի, Բաքվի և Ալեքսանդրապոլի դպրոցներում, եղել է նաև դրանցից մի քանիսի տեսուչը: 1923թ-ից դասախոսել է ԵՊՀ պատմության, ապա իրավագիտության ֆակուլտետներում: 1936թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Խ.Սամուելյանը հատկապես մեծ ավանդ ունի հայագիտության մեջ: Մեծարժեք գործ է «Հին Հայաստանի կուլտուրան» (Եր., 1931, 1941) եռահատոր երկը, որտեղ ի մի են բերված հեղինակի երկարամյա հետազոտությունների արդյունքները:

Սկսած 1901 թվականից, երբ Խ.Սամուելյանը լույս ընծայեց հայ սովորութային իրավունքին նվիրված իր անդրանիկ ուսումնասիրությունը, շուրջ 40 տարի նա հրապարակել է բազմաթիվ աշխատություններ՝ նվիրված հայ իրավունքի պատմության հարցերին: Նրա այս կարգի գործերից կարևոր են՝ «Մխիթար Գոշի Դատաստանագիրքն ու հին հայոց քաղաքացիական իրավունքը» (Վիեննա, 1911), «Հայ իրավունքի պատմության ներածություն» (պրակ Ա, Եր., 1921), «Հին հայ իրավունքի պատմություն» (Եր., 1939) աշխատությունները:

Վերջինս, լինելով անվանի գիտնականի բազմամյա գիտական հետազոտությունների յուրատեսակ հանրագումարը, լուրջ ներդրում է հին և միջնադարյան հայոց պետության և իրավունքի պատմության ուսումնասիրության ասպարեզում:

1922-1923թթ. Խ.Սամուելյանը եղել է ՀԽՍՀ Կենտգործկոմին առընթեր օրենսդրական հանձնաժողովի և հեղափոխական տրիբունալի անդամ, 1923-1924թթ.՝ Հանրապետության Գերագույն դատարանի քաղաքացիական գործերով կոլեգիայի անդամ, 1924-1932թթ՝ պետական կենտրոնական արխիվային վարչության տնօրեն:

Վախճանվել է 1940թ. հոկտեմբերի 16-ին Երևանում:

ՍԱՐԱՖՅԱՆ ՎԱՀԱՆ ՎՐԹԱՆԵՍԻ

Մաթեմատիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր



Ծնվել է 1946թ. նոյեմբերի 19-ին Երևանում: 1964թ. ավարտել է Երևանի թիվ 12 միջնակարգ դպրոցը, 1969թ. ԵՊՀ մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետը:

1972-ից Վ.Սարաֆյանն աշխատում է ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի հավանականությունների տեսության և մաթեմատիկական վիճակագրության ամբիոնում: 1988-ից նույն ամբիոնի պրոֆեսոր է:

1973թ. նա պաշտպանել է թեկնածուական, 1984թ. դոկտորական ատենախոսություն: 1975թ. նրան շնորհվել է դոցենտի, 1988թ. պրոֆեսորի կոչում:

Վ.Սարաֆյանը հեղինակ է 30 գիտական հոդվածների, որոնք վերաբերում են ստոխաստիկ դիֆերենցիալ հավասարումներին և դիֆերենցիալ պրոցեսներին:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 5 ատենախոսություն:

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐԱ ՄԻՀՐԱՆԻ

Քանդակագործ, պրոֆեսոր,
ԽՍՀՄ գեղարվեստի ակադեմիայի ակադեմիկոս,
ԽՍՀՄ և ՀԽՍՀ ժողովրդական նկարիչ

Ծնվել է 1902թ. մայիսի 7-ին Կ.Պոլսում: Նախնական կրթությունն ստացել է Բերա հայկական թաղամասի դպրոցում, իսկ միջնակարգը Էսայան վարժարանում: 1919-1921թթ. Ա.Սարգսյանը սովորել է Կ.Պոլսի գեղարվեստի վարժարանի քանդակագործական բաժնում: Իտալիայում կատարելագործելով իր մասնագիտական հմտությունները ընդունվել է Վիեննայի գեղարվեստի ակադեմիա:

1925թ. Ա.Սարգսյանը եկել է Երևան և աշխատանքի անցել ԵՊՀ տեխնիկական ֆակուլտետում:

1926թ. իր արվեստակից ընկերների հետ կազմակերպել է նկարիչների ասոցիացիայի հայկական մասնաճյուղը: 1932թ. ստեղծվել է Խորհրդային Հայաստանի կերպարվեստագետների միությունը, և Ա.Սարգսյանն ընտրվել է նրա նախագահ: Նա բազմիցս գլխավորել է խորհրդահայ նկարիչների միությունը, եղել 1945թ. հիմնադրված հայկական առաջին գեղարվեստական ինստիտուտի կազմակերպիչն ու ղեկավարը:

Հայոց Մեծ եղեռնի թեմայով նրա ստեղծած «Քաղց» (1919), «Երաժշտություն» (1919), «Հուսախաբություն» (1920) քանդակներում դրսևորված է արվեստագետի ստեղծագործական հիմնական ուղղությունը: Հայոց ցեղասպանությանն է վերաբերում նաև նրա «Հիրոսիմա» (1957) արձանը:

Տարիների մտորումների արդյունք է քանդակագործի՝ մահվանից առաջ ստեղծած «Եղեռն» (1968) արձանը: Հեղինակն այս աշխատանքով ստեղծել է խորհրդանշական Մայր Հայաստանի կերպարը, որն իր զավակների կորստյան ցավն է ուղղում առ Աստված:

Ա.Սարգսյանի արձաններն ու քանդակները կարևոր ու լուրջ ներդրում են հայ արվեստի բնագավառում: Հետևողականորեն զարգացնելով ռեալիստական արվեստի ավանդները նա հայ քանդակագործությունը հարստացրել է տարբեր ժանրի ու բնույթի բազմաթիվ ստեղծագործություններով:

Դեռևս 1922 թվականից քանդակագործն իր ստեղծագործություններով մասնակցել է Վիեննայում, Երևանում, Բաքվում, Կիևում, Մոսկվայում, Լենինգրադում և այլուր կազմա-

կերպված ցուցահանդեսներին: Նա մեծ վարպետությամբ է կերտել Մեսրոպ Մաշտոցի ու Սահակ Պարթևի, Բաֆֆու, Շիրվանզադեի, Հր.Աճառյանի, Թ.Թորամանյանի, Ե.Չարենցի և հայ այլ մտավորականների դիմաքանդակները: Ա.Սարգսյանի կոթողային գործերի շարքում առանձնահատուկ արժեք ունի Հովհ.Թումանյանի արձանը Երևանի օպերայի և բալետի ակադեմիական թատրոնի բակում: Նա հեղինակ է նաև բազմաթիվ հարթաքանդակների ու արձանների, ինչպես նաև ճարտարապետական ու թատերական ձևավորումների:

1949թ. Ա.Սարգսյանն ընտրվել է ԽՍՀՄ գեղարվեստի ակադեմիայի թղթակից անդամ, 1958թ.՝ ակադեմիկոս: Երկու անգամ ընտրվել է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր:

1950թ. արժանացել է ՀԽՍՀ ժողովրդական նկարչի, 1962թ.՝ ԽՍՀՄ ժողովրդական նկարչի կոչումների: Պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի (2), «Պատվո նշան» շքանշաններով և մի շարք մեդալներով:

Վախճանվել է 1969թ. հունիսի 29-ին Երևանում:

ՍԱՐԳՍՅԱՆ ԳԱԳԻԿ ԽՈՐԵՆԻ

Արևելագետ,
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս

Ծնվել է 1926թ. ապրիլի 6-ին Երևանում: Ավարտել է թիվ 19 դպրոցը: 1946-1950թթ. ուսանել է Լենինգրադի (այժմ՝ Սանկտ Պետերբուրգ) պետական համալսարանի պատմության ֆակուլտետում: Զուգահեռաբար հաճախել է արևելյան ֆակուլտետի սեպագրագիտական-ասուրագիտական և այլ դասընթացների: 1954թ. ավարտել է ասպիրանտուրան, պաշտպանել թեկնածուական ատենախոսություն:

1954 թվականից Գ.Սարգսյանն աշխատանքի է անցել ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտում: 1956-1962թթ. եղել է ավագ գիտաշխատող և ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի գիտքարտուղար, 1962-1966թթ.՝ նույն ինստիտուտի գիտական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ, 1966-1971-ին՝ Հին աշխարհի պատմության բաժնի վարիչ, 1971-1995թթ. ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի

տնօրեն, միաժամանակ, 1988-1990թթ. ՀԽՍՀ ԳԱ փոխնախագահի պաշտոնակատար, 1994-1998թթ. փոխնախագահ, 1995-1998թթ. հումանիտար գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար:

1967թ. Գ.Սարգսյանը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, իսկ 1981թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1974թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1986-ին՝ ակադեմիկոս:

1967-1972թթ. և 1985-1995թթ. նա դասավանդել է ԵՊՀ պատմության ու արևելագիտության ֆակուլտետներում:

Հեղինակ է գիտական բազմաթիվ հոդվածների, «Հին Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման ուղիների մասին» (Եր., 1962), «Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին» (Եր., 1966), «Ուրարտական տերությունը և հայերը» (Եր., 1988), “Тигранакерт: Из истории древнеармянских городских общин” (М., 1960) և այլ մենագրությունների:

1985թ. Գ.Սարգսյանն արժանացել է ՀԽՍՀ Պետական մրցանակի:

Վախճանվել է 1998թ. օգոստոսի 25-ին Մոսկվայում, աճյունն ամփոփված է Երևանում:

ՍԱՐԳՍՅԱՆ ԽՈՐԵՆ ՍԱՐԳՍԻ

Գրականագետ,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1891թ. դեկտեմբերի 2-ին Շուշիում: Նախնական կրթությունն ստացել է Բաքվում, բարձրագույնը Սանկտ Պետերբուրգի համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետում, որն ավարտել է 1917թ.:

1921թ. Խ.Սարգսյանը տեղափոխվել է Երևան և աշխատանքի անցել Հայաստանի գիտական ինստիտուտում որպես գիտաշխատող: 1922-1924թթ. Երևանի պետական կենտրոնական թանգարանի արխիվային բաժնի վարիչն էր: Երկար տարիներ ռուսաց լեզու է դասավանդել հայկական ռազմական դպրոցում և մանկավարժական տեխնիկումում:

1930-1932թթ. ԵՊՀ-ում դասավանդել է ռուսաց լեզու,

1934-1936թթ. գրականության պատմություն: Միաժամանակ աշխատել է պետական թանգարանում որպես գրական բաժնի վարիչ: Հետագայում եղել է գրականության թանգարանի տնօրեն, ԽՍՀՄ ԳԱ հայկական բաժանմունքի գրականության և լեզվի ինստիտուտի գիտաշխատող, գիտական քարտուղար, ապա՝ տնօրեն: 1943-1947թթ. ՀԽՍՀ ԳԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրենն էր, իսկ հետագայում՝ մինչև կյանքի վերջը՝ նույն ինստիտուտի հայ հին գրականության բաժնի վարիչը:

1964թ., առանց ատենախոսության պաշտպանության, Խ.Սարգսյանին շնորհվել է դոկտորի գիտական աստիճան, 1967թ.՝ պրոֆեսորի կոչում:

Խ.Սարգսյանի գրչին են պատկանում մի շարք արժեքավոր ուսումնասիրություններ, որոնցից կարևորներն են՝ «Վահան Տերյան» (Եր., 1926), «Լևոն Շանթ» (Եր., 1930), «Նալբանդյանը և լեզվի հարցերը» (ռուս., Եր., 1956), «Նալբանդյանի գրական ստեղծագործությունը» (Եր., 1959), «Ստեփան Զորյան» (Եր., 1960), «Սայաթ-Նովա» (Եր., 1963) և այլն: Նա զբաղվել է նաև ռուս և եվրոպական գրականության հարցերով:

1961թ. Խ.Սարգսյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման:

Վախճանվել է 1970թ. ապրիլի 4-ին Երևանում:

ՍԱՐԳՍՅԱՆ ՀԱՅԿ ԼԵՎՈՆԻ

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1948թ. օգոստոսի 9-ին Թալինի շրջանի Սուսեր գյուղում: 1965թ. ավարտել է Երևանի թիվ 7 երեկոյան դպրոցը, 1970թ. Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետը:

1976թ. պաշտպանել է թեկնածուական, 1990թ. դոկտորական ատենախոսություն: 2003թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1975թ. Հ.Սարգսյանն աշխատանքի է ընդունվել ԵՊՀ-ում և նույն թվականին տեղափոխվել նորաստեղծ ԵԺՏԻ որպես դասախոս: 1980-1988թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտի բաժնի վարիչ, 1989-1990թթ. ՀԿԿ Կենտկոմում

խորհրդատու, 1991-1993թթ. ՀՀ էկոնոմպետկոմի նախագահի, ապա՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ: 1994-ից աշխատել է ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետում՝ սկզբում որպես պրոֆեսոր, այնուհետև կառավարման և գործարարության նորաստեղծ ամբիոնի վարիչ: 2000-ից ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի դեկանն է:

Նա հեղինակ է ավելի քան 100 գիտական հոդվածների, "Планирование и механизм регионального управнелия" (Ер., 1988), «Տնտեսական քաղաքականությունը Հայաստանում. պետության դերը» (Եր., 2001) մենագրությունների, համահեղինակ՝ "Эффективность и оптимальность экономического развития" (Եր., 1982), «Վերափոխումները անցումային երկրների տնտեսություններում» (Եր., 2003) աշխատությունների և «Մարդկային զարգացման հիմունքներ» (Եր., 2004) ուսումնական ձեռնարկի:

Հ.Սարգսյանի ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 20 ատենախոսություն:

ՍԱՐԳՍՅԱՆ ՀՈՂՄԻԿ ՀՄԱՅԱԿԻ

Երկրաբանահանքաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ վաստակավոր երկրաբան

Ծնվել է 1927թ. հուլիսի 17-ին Թալինի շրջանի Արեգ գյուղում: 1945թ. ավարտել է Թալինի միջնակարգ դպրոցը, 1950թ. ԵՊՀ երկրաբանության ֆակուլտետը:

1950-1952թթ. աշխատել է «Կովկասածուխտրեստ» կազմակերպությունում, 1952-1956թթ. եղել է ԵրՊԻ երկրաբանահետախուզական ֆակուլտետում ասիստենտ: 1956 թվականից Հ.Սարգսյանն աշխատում է ԵՊՀ երկրաբանության ֆակուլտետում: 1959թ. պաշտպանել է թեկնածուական, 1976թ. դոկտորական ատենախոսություն: 1963թ. նրան շնորհվել է դոցենտի, 1978թ. պրոֆեսորի կոչում: 1977-1980թթ. եղել է երկրաբանության ֆակուլտետի դեկան, 1983-1997թթ. ամբիոնի վարիչ: 1999թ. արժանացել է «ԵՊՀ ամբիոնի պատվավոր վարիչ» կոչման:

Հ.Սարգսյանը հեղինակ է 130 գիտական հոդվածների,

"Палеоген Севано-Ширакского синклинория" (Ер., 1964) մենագրության, համահեղինակ՝ "Геология АРМ ССР" (тт. 2, 5, 7, Ер., 1964-1974), "Тектоническая карта Арм ССР" (Ер., 1968), "Сейсмотектоника Арм ССР" (Ер., 1981), "Стратиграфический словарь СССР" (М., 1982) աշխատությունների: Հեղինակ է նաև «Երկրաբանական տերմինների ռուս-հայերեն բառարան» (Եր., 1984), «Հայաստանի ռեգիոնալ երկրատեկտոնիկա» (Եր., 1989), «Երկրաբանական տերմիններ-ի եռալեզու հանրագիտական բառարան» (Եր., 2007) գրքերի: Հ.Սարգսյանը լուրջ վաստակ ունի հայերեն երկրաբանական տերմինաստեղծման բնագավառում:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 4 ատենախոսություն:

1972թ. Հ.Սարգսյանն արժանացել է ՀԽՍՀ վաստակավոր երկրաբանի կոչման:

ՍԱՐԳՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ ՎԼԱԴԻՄԻՐԻ

Մեխանիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր

Ծնվել է 1957թ. սեպտեմբերի 1-ին Երևանում: 1974թ. ավարտել է թիվ 62 դպրոցը, 1979թ. ԵՊՀ մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետի մեխանիկայի բաժինը: 1979-1982թթ. սովորել է ԵՊՀ ասպիրանտուրայում: 1982-ից աշխատել է ԵՊՀ հոծ միջավայրի մեխանիկայի ամբիոնում որպես ասիստենտ: 1983թ. պաշտպանել է թեկնածուական, 1997թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1988թ. նրան շնորհվել է դոցենտի, 2002-ին՝ պրոֆեսորի կոչում: 2000-2001թթ. և 2005-2007թթ. Ս.Սարգսյանը եղել է հոծ միջավայրի մեխանիկայի ամբիոնի վարիչ: 2007-ից ԵՊՀ մեխանիկայի ամբիոնի վարիչն է:

Հեղինակ է շուրջ 75 գիտական աշխատանքների, որոնք վերաբերում են առաձգականության տեսության, սալերի և թաղանթների, բարակապատ մարմինների մագնիսաառաձգականության տեսության, առաձգական միջավայրերի ստատման և ալիքների տարածման հարցերին:

ՍԱՐԳՍՅԱՆ ՍԱՆԱՏՐՈՒԿ ՄԱՐՏԻՐՈՍԻ

Կենդանաբան,
կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1915թ. հունիսի 13-ին Ղափանի շրջանի Նորաշենիկ գյուղում: Դպրոցն ավարտելուց հետո սովորել է Երևանի շերամագործության տեխնիկումում: 1937թ. ավարտել է Տաշքենդի գյուղատնտեսական ինստիտուտի շերամագործության ֆակուլտետը: Ասպիրանտուրայում սովորել և թեկնածուական ատենախոսությունը պաշտպանել է Մոսկվայում: 1944թ. Ս.Սարգսյանը ՀԽՍՀ ԳԱ կենդանաբանության ինստիտուտում ստեղծել է գենետիկայի առաջին լաբորատորիան:

1954թ. Ս.Սարգսյանը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1957թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1956-1964թթ. Ս.Սարգսյանը եղել է ԵՊՀ կենդանաբանության ամբիոնի վարիչ, 1955-1972թթ.՝ ՀԽՍՀ գյուղատնտեսության նախարարության շերամագործության գիտահետազոտական կայանի տնօրեն, 1972-1975թթ. ՀԽՍՀ ԳԱ կենդանաբանության ինստիտուտի տնօրեն, իսկ հետագա 10 տարիներին նույն ինստիտուտի գենետիկայի լաբորատորայի վարիչ: Աշխատանքային գործունեության ընթացքում Ս.Սարգսյանը զբաղեցրել է նաև մի շարք այլ պաշտոններ՝ ՀԽՍՀ գյուղատնտեսության նախարարության գյուղատնտեսական գիտությունների վարչության պետ, Խ.Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի կենդանաբանության ամբիոնի վարիչ:

Հեղինակ է ավելի քան 170 գիտական և գիտահանրամատչելի հոդվածների, 5 գյուտի: Նրա գրչին է պատկանում «Թթենու շերամը, նրա կենսաբանությունը և որդի կերակրման տեխնիկան» (Եր., 1958) մենագրությունը:

Ս.Սարգսյանը մշակել և ներդրել է գյուղատնտեսական մշակաբույսերի վնասատու միջատների և մեղուների մակաբույծ տզի դեմ պայքարելու գենետիկական մեթոդներ, իրականացրել դրանց փորձարկումները, ստեղծել շերամի որդի կերակրման համար ավտոմատացված գիծ, որը ներդրվել է արդյունաբերության մեջ:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 15 ատենախոսություն:

Ս.Սարգսյանը պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով և մեդալներով:

Վախճանվել է 1985թ. մարտի 5-ին Երևանում:

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ ՍԱՐԳՍԻ

Մեխանիկոս,
Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1935թ. հունիսի 25-ին Նախիջևանի Ջուղա քաղաքում: 1938թ. ընտանիքը տեղափոխվել է Երևան: 1952թ. ավարտել է թիվ 17 դպրոցը, 1957թ.՝ ԵՊՀ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի մեխանիկայի բաժինը և նշանակվել մեխանիկայի ամբիոնի ասիստենտ: 1959թ. ընդունվել է ԵՊՀ ասպիրանտուրա, 1962թ. Մոսկվայում պաշտպանել թեկնածուական ատենախոսություն: 1961-1963թթ. աշխատել է ԵՊՀ բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնում որպես ավագ դասախոս, 1964-ից՝ առաձգականության և պլաստիկության տեսության ամբիոնի դոցենտ:

1972թ. Վ.Սարգսյանը Կազանում պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, 1973թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1978-2003թթ. եղել է հոծ միջավայրի մեխանիկայի ամբիոնի վարիչ: 1986թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1996թ.՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս:

1988-1990թթ. և 1996-2007թթ. Վ.Սարգսյանը եղել է մեխանիկայի ֆակուլտետի դեկան, 1990-1992թթ. ԵՊՀ գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր, 1993-1994թթ.՝ ՀՀ ԳԱԱ մեխանիկայի, ինֆորմատիկայի և տեխնիկական գիտություններ բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնակատար:

Վ.Սարգսյանի գիտական հետաքրքրությունները վերաբերում են անիզոտրոպ, անհամասեռ մարմինների մեխանիկայի հարցերին, մասնավորապես՝ կոմպոզիտ նյութերից պատրաստված կառուցվածքների ամրությանը, դրանց ձևի ու նյութի օպտիմալ նախագծմանը, անհամասեռ անիզոտրոպ սալերի ու թաղանթների կայունությանը, տատանումների, ծռման, ջերմառաձգականության ու հարվածի տեսությանը:

Վ.Սարգսյանի ստացած հիմնարար արդյունքները ամփոփված են 7 մենագրությունում, շուրջ 320 գիտական աշխատանքներում ու հոդվածներում: Նա հեղինակ է նաև 12 ուսումնական ձեռնարկների և դասագրքերի, որոնցից են «Հոծ միջավայրի մեխանիկա» (Եր., 1984), «Հոծ միջավայրի մեխանիկայի

խնդիրների լուծման մոտավոր մեթոդներ» (Եր., 1985): Համահեղինակ է «Կառուցվածքների օպտիմալ նախագծման տեսություն և կիրառություններ» (Եր., 1990), «Ասիմպտոտիկ մեթոդները պինդ մարմնի մեխանիկայում» (Եր., 1989) ուսումնական ձեռնարկների, «Տեսական մեխանիկայի խնդիրների լուծման ուղեցույց» (Եր., 1969) քառահատոր ժողովածուի և այլն:

Վ.Սարգսյանը դասախոսություններ է կարդացել Չեխոսլովակիայի, Հունգարիայի, Լեհաստանի, Գերմանիայի, Եգիպտոսի, Սիրիայի, ինչպես նաև ԱՊՀ երկրների մի շարք համալսարաններում, զեկուցումներով հանդես եկել միջազգային գիտաժողովներում (Գերմանիա, Բուլղարիա, Ռումինիա, Չինաստան, Չեխիա, Սլովակիա, ԱՄՆ, Մեծ Բրիտանիա և այլն):

Շուրջ 30 տարի Վ.Սարգսյանը ղեկավարել է ԵՊՀ-ում գործող ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան շնորհող մասնագիտական խորհուրդը: 1982-1991թթ. եղել է «Մեխանիկա» միջբուհական հանդեսի խմբագիր, գիտության և տեխնիկայի գծով ԽՍՀՄ պետական կոմիտեի «Կոնստրուկտիվ ամրություն և քայքայում» գիտական խորհրդի անդամ, ԽՍՀՄ ԲԿՆ մեխանիկայի գիտամեթոդական հանձնաժողովի անդրկովկասյան տարածաշրջանի նախագահ:

Վ.Սարգսյանի ղեկավարությամբ ու խորհրդատվությամբ պաշտպանվել է թեկնածուական 49 և դոկտորական 11 ատենախոսություն:

1981թ. Վ.Սարգսյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի, իսկ 2007թ.՝ «ԵՊՀ ամբիոնի պատվավոր վարիչ» կոչման: Պարգևատրվել է «Անանիա Շիրակացի» մեդալով (1999թ.):

ՍԱՖԱՐՅԱՆ ՎԱՉԳԵՆ ՀՄԱՑԱԿԻ

Գրականագետ,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1947թ. հուլիսի 5-ին Նոյեմբերյանի շրջանի Ղոչխոթան (այժմ՝ Ոսկևան) գյուղում: 1953թ. ընտանիքը տեղափոխվել է նույն շրջանի Դեբեդաշեն (այժմ՝ Բաղրատաշեն) ավան:

1954-1965թթ. սովորել է տեղի միջնակարգ դպրոցում, որն

ավարտելուց հետո ընդունվել է ԵՊՀ բանասիրության ֆակուլտետ: 1970-1973թթ. սովորել է ԵՊՀ ասպիրանտուրայում, միաժամանակ աշխատել որպես ասիստենտ:

1974թ. պաշտպանել է թեկնածուական, 1992թ. դոկտորական ատենախոսություն: 1973-ից աշխատում է Հայ գրականության ամբիոնում որպես դասախոս: 1981թ. նրան շնորհվել է դոցենտի, իսկ 2006թ.՝ պրոֆեսորի կոչում:

Գիտամանակավարժական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է հայ հին ու միջնադարյան և 19-րդ դարի հայ դրականությունը:

Վ.Սաֆարյանը հեղինակ է «Փավստոս Բուզանդի «Հայոց պատմության» թեմաները հայ նոր գրականության մեջ» (Եր., 1979), «Կիլիկյան Հայաստանի գրականությունը» (Եր., 1990), «Գրողի և կերպարի անհատականությունը» (Եր., 2001) մենագրությունների և 40-ից ավելի գիտական ու մեթոդական հոդվածների: Մասնակցել է միջազգային գիտաժողովների, դասախոսություններով հանդես է եկել Թեհրանում:

2007-ից գրողների միության անդամ է:

ՍԵԴՐԱԿՅԱՆ ԴԱՎԻԹ ՄՀԵՐԻ

Ֆիզիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Ծնվել է 1938թ. դեկտեմբերի 9-ին Երևանում: 1955թ. ավարտել է թիվ 4 միջնակարգ դպրոցը, 1960թ. ԵՊՀ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը: 1962-1964թթ. սովորել է ԽՍՀՄ ԳԱ Պ.Լեբեդևի անվան ֆիզիկայի ինստիտուտի (Մոսկվա) ասպիրանտուրայում: 1964թ. Դ.Սեդրակյանը պաշտպանել է թեկնածուական, 1972թ. դոկտորական ատենախոսություն: 1966թ. նրան շնորհվել է դոցենտի, 1975թ. պրոֆեսորի կոչում:

1964 թվականից Դ.Սեդրակյանն աշխատել է ԵՊՀ տեսական ֆիզիկայի ամբիոնում որպես դոցենտ, 1975-ից պրոֆեսոր: 1977-1986թթ. և 1994-ից ընդհանուր ֆիզիկայի, իսկ 2008-ից՝ ԵՊՀ Վ.Համբարձումյանի անվան աստղաֆիզիկայի և ընդհանուր ֆիզիկայի ամբիոնի վարիչն է:

1982թ. Դ.Սեդրակյանն ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1990թ. ակադեմիկոս, 1986-1990թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս-քարտուղար, 1990-1994թթ.՝ ՀՀ ԳԱԱ փոխնախագահ:

Դ.Սեդրակյանը հեղինակ է ավելի քան 230 գիտական հոդվածների, «Թերմոդինամիկա» (Եր., 1981) դասագրքի: Ուսումնասիրել է լիցքավորված մասնիկների դիֆրակտային ճառագայթումը, տվել ձգողական դաշտը նկարագրող Այնշտայնի հավասարումների սակավաթիվ լուծումներից մեկը, ստեղծել պտտվող երկնային մարմինների տեսություն, որը կիրառել է որոշ աստղային մոդելների, սպիտակ թզուկների և բարիոնային աստղերի ֆիզիկական բնութագրերի հետազոտման համար: Առաջարկել է նաև բաբախիչների գերհզոր մագնիսական դաշտերի առաջացման նոր մեխանիզմ, զբաղվել բաբախիչների պտույտի դիտվող դանդաղման և այդ ընթացքում անջատված էներգիայի և ռադիոճառագայթման մեխանիզմների հետազոտմամբ: Զարգացնելով Վ.Համբարձումյանի «ինվարիանտության սկզբունքը» ցրման տեսության մեջ՝ Դ.Սեդրակյանը ցույց է տվել, որ անցման և անդրադարձման գործակիցներից կազմված հարմար ֆունկցիայի ընտրությամբ կարելի է խուսափել այդ տեսության մեջ ստացվող ոչ գծային դիֆերենցիալ հավասարումների համակարգից և մնալ գծային հավասարումների տիրույթում, ինչը հնարավորություն է տալիս հաշվողական տեխնիկայի օգնությամբ լուծել էլեկտրադինամիկայի և քվանտային մեխանիկայի մի շարք բարդ խնդիրներ:

Դ.Սեդրակյանի ղեկավարությամբ ու խորհրդատվությամբ պաշտպանվել է թեկնածուական 8 և դոկտորական 4 ատենախոսություն:

2000 թվականից նա «Աստղաֆիզիկա» միջազգային ամսագրի խմբագիրն է:

1999թ. Դ.Սեդրակյանը պարգևատրվել է «Անանիա Շիրակացի» մեդալով:

ՍԵՄՅՈՆՈՎ ԼԵՎՈՆ ԼԱԶԱՐԻ

Մանկավարժ, պրոֆեսոր

Ծնվել է 1893թ. հուլիսի 12-ին Քիշնևում՝ ասորու ընտանիքում: Նախնական կրթությունն ստացել է Նախիջևանում, ապա ուսումը շարունակել Երևանի արական գիմնազիայում: 1912-1916թթ. սովորել ու ավարտել է Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը:

1929թ. ստացել է դոցենտի, 1936թ. պրոֆեսորի կոչում:

Աշխատել է Շուշիի, Ալեքսանդրապոլի ու Ելիզավետպոլի միջնակարգ դպրոցներում, 1924 թվականից ՀԽՍՀ լուսավորության ժողովրդական կոմիսարիատում սկզբում որպես տեսուչ-մեթոդիստ, իսկ հետո՝ կազմպլանային վարչության պետ: 1926թ. դասախոսել է ԵՊՀ-ում, 1927թ. ստանձնել է աստղագիտության ամբիոնի վարիչի պարտականությունները, որ վարել է մինչև 1939թ.:

Լ.Սեմյոնովը եղել է ԵՊՀ աստղադիտարանի առաջին վարիչը: Նա աշխատել է նաև Հանրապետության մյուս բարձրագույն ուսումնական հաստատություններում:

Նրա գրչին են պատկանում մի քանի գիտական հոդվածներ. մեծ վաստակ ունի հայկական տոմարի ու միջնադարյան հայ աստղագիտության պատմության ուսումնասիրման բնագավառներում:

Լ.Սեմյոնովը վախճանվել է 1959թ. սեպտեմբերի 17-ին:

ՍԵՖԵՐՅԱՆ ՍՈՆԱ ՍԱՐԳՍԻ

Գրականագետ, թարգմանիչ,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1940թ. հուլիսի 1-ին Սիրիայի Հալեպ քաղաքում: 1947թ. ընտանիքը տեղափոխվել է Երևան: 1955թ. ավարտել է թիվ 19 դպրոցը, 1960թ.՝ ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի անգլիական բաժինը: 1960-1963թթ. Ս.Սեֆերյանն աշխատել է Երևանի Խ.Աբովյանի անվան միջնակարգ դպրոցում: 1963-1965թթ. սովորել է Լենինգրադի պետական համալսարանի երկամյա մանկավարժական դասընթացներում: 1965-ից աշխա-

տում է ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնում: 1992թ. ֆակուլտետում նրա նախաձեռնությամբ ստեղծվել է «Թարգմանչի գործ» մասնագիտացումը, իսկ 1999թ. թարգմանչական բաժինը, որի ղեկավարն է:

1988թ. պաշտպանել է թեկնածուական, 2003թ. դոկտորական ատենախոսություն: 1995թ. նրան շնորհվել է դոցենտի, 2006թ. պրոֆեսորի կոչում:

Նրա թարգմանությամբ լույս են տեսել Լ.Քերոլի, Ռ.Քիփլինգի, Ք.Մենսֆիլդի, Ս.Ֆիցջերալդի մի շարք ստեղծագործություններ: Հեղինակ է շուրջ 40 հոդվածի, մեկ մենագրության՝ «Շեքսպիրը հայ իրականության մեջ (1850-1950)» (Եր., 2002), մի քանի բառարանի «Իմաստախոս Շեքսպիրը» (Շեքսպիրի իմաստախոսությունների անգլերեն-հայերեն բառարան, Եր., 1988), «Իմաստախոս ժողովուրդը» (անգլերեն-հայերեն, հայերեն-անգլերեն ասույվածքներ և արտահայտություններ, Եր., 2005), անգլերեն-հայերեն դարձվածաբանական բառարան (Եր., 2005) և «Համառոտ ակնարկ թարգմանաբանության» (Եր., 2006) ձեռնարկի:

1988թ. Ս.Սեֆերյանը հիմնել է «Աստղիկ» դիրք թարգմանչացը առաջին թարգմանական հանդեսը հայ իրականության մեջ: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է 6 թեկնածուական ատենախոսություն:

Զեկուցումներով հանդես է եկել միջազգային գիտաժողովներում (Երևան, Լոնդոն, Բուենոս Այրես, Սան Պաուլու, Միլան):

1988-ից Ս.Սեֆերյանը գրողների միության անդամ է:

ՍԻՄՈՆՅԱՆ ԱԲԵԼ ՊՈՂՈՍԻ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1922թ. հունիսի 17-ին Գորիսի շրջանի Խնձորեսկ գյուղում: Տեղի միջնակարգ դպրոցի 7-րդ դասարանն ավարտելուց հետո ընդունվել է Բաքվի մանկավարժական տեխնիկում: Երկրորդ կուրսից ուսումը շարունակել է Գորիսի մանկավարժական ուսումնարանում, ավարտել 1938թ., այնուհետև աշխատել Գորիսի շրջանի դպրոցներում որպես ուսուցիչ, ուսմասվար, տնօրեն: 1939թ. դեկտեմբերին զորակոչվել է բանակ, մինչև 1945թ. մասնակցել Հայրենական մեծ պատերազ-

մին, վիրավորվել է և 1946թ. զորացրվել:

1946թ. ընդունվել է ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետ և ուսուցման 5-ամյա ժամկետն ավարտել չորս տարում: 1950-1953թթ. սովորել է ԵՊՀ ասպիրանտուրայում, 1953թ. պաշտպանել թեկնածուական, 1966թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1972թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1953-1961թթ. Ա.Սիմոնյանն աշխատել է ԵՊՀ ԽՄԿԿ պատմության ամբիոնում որպես դասախոս, դոցենտ, 1961-1964թթ. նույն ամբիոնի վարիչ, 1956-1962թթ.՝ նաև ԵՊՀ գիտական քարտուղար:

1965-1978թթ. Ա.Սիմոնյանը եղել է Հայկական սովետական հանրագիտարանի գլխավոր խմբագրի տեղակալ, առաջին տեղակալ, ապա՝ գլխավոր խմբագիր, անմիջական մասնակցություն ունեցել 12 հատորների բառացանկերի կազմմանը, և 1-4 հատորների ստեղծմանը:

1979-1983թթ. նա ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս-քարտուղարի տեղակալ էր, իսկ 1983-ից ԳԱ պատմության ինստիտուտի ՀԽՍՀ քաղաքների ու գյուղերի պատմության բաժնի վարիչ:

Ա.Սիմոնյանը հեղինակ է ավելի քան 100 գիտական հոդվածների, 6 մենագրության, այդ թվում՝ «Երևան. 1920-1967» (Եր., 1968), «Ռազմի ճամփաներով: Ակնարկներ դպրոցականից բարձր տարիքի համար» (Եր., 1981), համահեղինակ՝ «Երևան. 2750 (782 մ.թ.ա. – 1968թթ.)» (Եր., 1968) գրքի:

1946-1948թթ. նա եղել է ԵՊՀ կուսկոմիտեի քարտուղար, 1948-1952թթ.՝ առաջին քարտուղար, 1950-1954թթ. և 1966-1976թթ. Երևանի քաղխորհրդի պատգամավոր, 1964թ. ՀԿԿ Կենտկոմին կից կուսակցության պատմության ինստիտուտի փոխտնօրեն:

Պարգևատրվել է Կարմիր դրոշի, Հայրենական պատերազմի I աստիճանի շքանշաններով, «Աշխատանքային արիության համար» և այլ մեդալներով:

Ա.Սիմոնյանը վախճանվել է 1994թ. հունիսի 3-ին Երևանում:

ՍԻՄՈՆՅԱՆ ԳԱՌՆԻԿ ՊՈՂՈՍԻ

Երկրաբանահանքաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1932թ. փետրվարի 23-ին Գորիսի շրջանի Խնձորեսկ գյուղում: 1947թ. ավարտել է տեղի դպրոցի 8-րդ դասարանը, 1950թ. Երևանի հիդրոմելիորատիվ տեխնիկումը, 1955թ. ԵՊՀ երկրաբանության ֆակուլտետը:

1955-1960թթ. Գ.Սիմոնյանն աշխատել է ԽՍՀՄ երկրաբանական նախարարության Առաջին գլխավոր գրոմովյան էքսպեդիցիայի՝ Զանգեզուրի արշավախմբում որպես ջոկատի պետ: 1959թ. ունկնդրել է Մոսկվայի երկրաբանահետախուզական ինստիտուտի որակավորման դասընթացները: 1960-1961թթ. աշխատել է ԵՊՀ երկրաբանության ֆակուլտետի արշավախմբում որպես ավագ երկրաբան: 1962թ. ընդունվել է ԵՊՀ ասպիրանտուրա: 1965թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և աշխատանքի անցել ՀԽՍՀ երկրաբանական վարչության երկրաբանական արշավախմբում որպես ավագ երկրաբան:

1966 թվականից Գ.Սիմոնյանն աշխատել է ԵՊՀ երկրաբանության ֆակուլտետում որպես ասիստենտ, ավագ դասախոս, դոցենտ, ապա՝ պրոֆեսոր: 1977թ. ղեկավարել է պատմական և տարածքային երկրաբանության ամբիոնը: 1990թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, 1991թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Նա հիմնականում զբաղվել է ՀՀ տարածքի և հարակից շրջանների երկրաբանական կառուցվածքի հիմնահարցերի, տեկտոնիկայի, նեոտեկտոնիկայի և երկրաշարժատեկտոնիկայի առանձնահատկությունների ուսումնասիրությամբ: Նա Հայաստանի առաջին (Մ-1:500 000, 1968) և երկրորդ (Մ-1:200 000, 1998) տեկտոնական քարտեզների հեղինակներից է:

Հեղինակ է շուրջ 100 գիտական հրապարակումների, համահեղինակ՝ “Тектоническая карта Армянской ССР” (Ер., 1968), “Стратиграфический словарь СССР” (М., 1982) գրքերի:

Գ.Սիմոնյանը պարգևատրվել է «1941-1945թթ. Հայրենական մեծ պատերազմի ժամանակ աշխատանքային արիության համար» (1945), «1941-1945թթ. Հայրենական պատերազմում հաղթանակի 50 տարին» (1995) և այլ մեդալներով:

Վախճանվել է 2007թ. փետրվարի 11-ին Երևանում:

ՍԻՄՈՆՅԱՆ ՀՐԱՉԻԿ ՌՈՒԲԵՆԻ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Ծնվել է 1928թ. դեկտեմբերի 9-ին Գորիսի շրջանի Շինուհայր գյուղում: Տեղի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է ԵՊՀ պատմության ֆակուլտետ, որն ավարտել է 1952թ.: Նույն թվականին աշխատանքի է անցել «Խորհրդային Հայաստան» թերթում որպես գրական աշխատող, այնուհետև գործուղվել Գորիս որպես շրջանային թերթի պատասխանատու քարտուղար: 1953 թվականից աշխատել է ՀԿԿ Գորիսի շրջկոմում նախ՝ որպես հրահանգիչ, ապա՝ բաժնի վարիչ, իսկ 1957-1959թթ.՝ գաղափարական գծով քարտուղար: 1959-1962թթ. Հ.Սիմոնյանը սովորել է ԽՄԿԿ Կենտկոմին առընթեր հասարակական գիտությունների ակադեմիայում: 1962թ. Մոսկվայում պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և այնտեղ հրատարակել իր առաջին գիտական մենագրությունը:

1962-1966թթ. եղել է ՀԿԿ Կենտկոմի կուսակցության պատմության ինստիտուտի գիտաշխատող, 1966-1977թթ. ՀԿԿ Կենտկոմի դասախոսական խմբի ղեկավար, ապա բաժնի վարիչի առաջին տեղակալ, 1977-1990թթ.՝ նշված ինստիտուտի տնօրեն, 1990-1991թթ.՝ ՀԽՍՀ ԳԱ պատմության և տնտեսագիտության բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, 1991-1994թթ.՝ սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեի նախագահ:

1970թ. Հ.Սիմոնյանը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1971թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1964-ից նա դասավանդել է ԵՊՀ-ում և հանրապետության այլ բուհերում:

1986թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1996թ.՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս:

1994-2007թթ. նա ՀՀ ԳԱԱ նախագահի խորհրդական էր, միաժամանակ 1999-2003թթ. ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի վարիչ, իսկ 2004-ից՝ նույն ամբիոնի պրոֆեսոր: Տարբեր տարիների եղել է ՀՀ ԳԱԱ նախագահության անդամ:

Հ.Սիմոնյանը հեղինակ է ավելի քան 20 մենագրության և շուրջ 400 գիտական հոդվածների: Առանձնապես կարևոր են «Սփյուռքահայությունը սոցիալ-քաղաքական պայքարի ուղիներում» (Եր., 1968), «Թուրք ազգային բուրժուազիայի գաղա-

փարաբանությունը և քաղաքականությունը» (Եր., 1980), «Գիտատեխնիկական հեղափոխությունը և նրա սոցիալական հետևանքները» (Եր., 1982), «Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից» (Եր., 1991), «Անդրանիկի ժամանակը» (ՀՀ. I, II, Եր., 1996) մենագրությունները, «Ազատագրական պայքարի ուղիներում» բազմահատոր ուսումնասիրության առաջին երեք գրքերը (Եր., 2003, 2009): Կիլիկիայի հայերի 1909թ. ջարդերի 100-ամյակի առթիվ հրատարակվել է նրա «Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909թ. ապրիլ)» (Եր., 2009) աշխատությունը:

Հ.Սիմոնյանի մի քանի աշխատություններ լույս են տեսել Չեխոսլովակիայում, ԱՄՆ-ում, Լիբանանում, Իրանում, Հունաստանում, Ճապոնիայում:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել են թեկնածուական և դոկտորական բազմաթիվ ատենախոսություններ:

Զեկուցումներով հանդես է եկել Մոսկվայում, Լենինգրադում, Թբիլիսիում, Բաքվում, ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Գերմանիայում և այլուր:

Հ.Սիմոնյանը եղել է ՀԿԿ Կենտկոմի անդամ, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի ներման հանձնաժողովի նախագահ, շրջանային և քաղաքային խորհուրդների, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի և ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր:

1977-1990թթ. նա ղեկավարել է ՀԿԿ Կենտկոմի կուսակցության պատմության ինստիտուտում գործող դիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհուրդը:

ՍԻՍԱԿՅԱՆ ՆՈՐԱՅՐ ՄԱՐՏԻՐՈՍԻ

Կենսաքիմիկոս,
կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ԽՍՀՄ ԳԱ և ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս

Ծնվել է 1907թ. հունվարի 25-ին Աշտարակում: 1928թ. ընդունվել է ԵՊՀ, որտեղից գործուղվել է Մոսկվայի Կ.Տիմիրյազևի անվան գյուղատնտեսական ակադեմիա, որը 1932թ. ավարտելուց հետո ընդունվել է ասպիրանտուրա: 1935թ. Ն.Սիսակյանը տեղափոխվել է ԽՍՀՄ ԳԱ կենսաքիմիայի ինստիտուտ, 1936թ. պաշտպանել թեկնածուական ատենախոսություն:

1935-ից աշխատել է ԽՍՀՄ ԳԱ Ա.Բախի անվան կենսաքիմիայի ինստիտուտում, 1946-1959թթ. եղել է նույն ինստիտուտի փոխտնօրեն, 1959-1963թթ. կենսաբանական բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, 1963-1966թթ. ԽՍՀՄ ԳԱ նախագահության անդամ և գիտական քարտուղար: 1945-1950թթ. ԵՊՀ-ում կարդացել է էնզիմոլոգիայի հատուկ դասընթաց:

1940թ. նա պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1944թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում, իսկ 1960թ ընտրվել է ԽՍՀՄ ԳԱ, 1965-ին՝ ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս:

Ն.Սիսակյանը գիտական հետազոտություններ է կատարել մշակաբույսերի չորադիմացկուն սորտերի ստացման, բույսերի ենթաբջջային կառուցվածքի ուսումնասիրման և ագրոտեխնիկական այլ միջոցառումների մշակման ուղղությամբ: Ուսումնասիրել է նաև ռադիոակտիվ ճառագայթման ազդեցությունը կենդանի բջիջների վրա:

Նրա ղեկավարությամբ տիեզերական կենսաբանության և բժշկության բնագավառներում ուսումնասիրվել են ճառագայթման, անկշռության, Երկրի ձգողության և այլ գործոնների հետ կապված հարցեր: Նա հիրավի տիեզերական կենսաբանության հիմնադիրն է:

Ն.Սիսակյանը զեկուցումներով բազմիցս հանդես է եկել միջազգային գիտաժողովներում ու համաժողովներում (Բրյուսել՝ 1955, Վիեննա՝ 1958, Տոկիո 1957 և այլն):

1959-1964թթ. եղել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործադիր խորհրդի անդամ, 1964-1966թթ՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի 13-րդ նստաշրջանի նախագահ, 1965-1966թթ. Միջազգային աստղագիտության ակադեմիայի իսկական անդամ և փոխնախագահ, Միջազգային աստղագնացության ֆեդերացիայի կենսաաստղագնացության կոմիտեի նախագահ:

Նրա խմբագրությամբ հրատարակվել են «Տիեզերական կենսաբանության հիմնախնդիրներ» և «Մարդու առաջին տիեզերական թռիչքները» ժողովածուները: Նա նաև «Կենսաքիմիա», «ԽՍՀՄ ԳԱ տեղեկագիր» ամսագրերի գլխավոր խմբագիրն էր, «Տիեզերական հետազոտություններ» ամսագրի գլխավոր խմբագրի տեղակալը, «Համեմատական ֆիզիոլոգիա և կենսաքիմիա» (Լոնդոն) և «Ագրոքիմիա» (Իտալիա) ամսագրերի խմբագրական խորհուրդների անդամ:

Երևանում նրա նախաձեռնությամբ հիմնվել է գինու և խաղողի կենսաքիմիայի լաբորատորիա:

Ն.Սիսակյանը զբաղվել է նաև մանկավարժական գործունեությամբ, դասախոսություններ է կարդացել Բելգիայի, Փարիզի, Ճապոնիայի և այլ երկրների համալսարաններում: Նա պատրաստել է գիտության շուրջ 40 թեկնածու և դոկտոր:

Ն.Սիսակյանը ԽՍՀՄ Պետական, Ա.Բախի և Դ.Մեչնիկովի անվան մրցանակների դափնեկիր է, պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի (3) և «Պատվո նշան» շքանշաններով, արժանացել Լ.Պաստյորի ինստիտուտի, Լյեժի համալսարանի ոսկե մեդալների, Խաղաղության համաշխարհային խորհրդի պատվոգրի ու արծաթե մեդալի, ինչպես նաև բազմաթիվ այլ մեդալների ու գիտական պարգևների:

Վախճանվել է 1966թ. մարտի 2-ին Մոսկվայում:

Ն.Սիսակյանին նվիրված հուշատախտակ է փակցված Մոսկվայի Ա.Բախի անվան կենսաքիմիայի ինստիտուտի շենքին, նրա անունը ոսկե տառերով գրված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի շենքի պատին, կիսանդրին կանգնեցված է ծննդավայրում: Նրա անունով են կոչվում Լուսնի խառնարաններից մեկը, ԵՊՀ լսարաններից և Աշտարակի միջնակարգ դպրոցներից մեկը, փողոց Երևանում և Աշտարակում: Աշտարակում ստեղծվել է Ն.Սիսակյանի տուն-թանգարան:

ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ՍՈՂՈՄՈՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ

Գրականագետ,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1907թ. սեպտեմբերի 3-ին Արցախի Գետաշեն գյուղում: 1928թ. ավարտել է Բաքվի թիվ 22 ինանամյա դպրոցը, 1931-ին՝ ԵՊՀ պատմագրական ֆակուլտետը, 1936թ.՝ Լենինգրադի (այժմ՝ Սանկտ Պետերբուրգ) գեղարվեստագիտության պետական ակադեմիայի արևմտաեվրոպական գրականության բաժինը:

1947թ. Ս.Սողոմոնյանն ստացել է բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճան: 1966թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1967թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1931-1933թթ. Ս.Սողոմոնյանը աշխատել է Աշտարակում,

նախ՝ որպես ժողկրթության բաժնի վարիչ, ապա 1946-1947թթ.՝ «Այգեգործ» թերթի քարտուղար: 1936-ին դասախոսական աշխատանքի է անցել Երևանի Խ.Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտում որպես դասախոս, ապա՝ բանասիրության ֆակուլտետի դեկան, արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչ: Միաժամանակ դասախոսել է ԵՊՀ-ում և Վ.Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների մանկավարժական ինստիտուտում: 1941-1945թթ. ծառայել է բանակում, մասնակցել Հայրենական մեծ պատերազմին:

1946-1947թթ. և 1952-1954թթ. Ս.Սողոմոնյանը եղել է «Սովետական գրականություն և արվեստ» ամսագրի գլխավոր խմբագիր, 1947-1951թթ. վարել ՀԿԿ Երևանի քաղաքային կոմիտեի քարտուղարի պաշտոնը, 1948-1958թթ. եղել է ՀԿԿ Կենտկոմի անդամ, 1952-1955թթ. գրողների միության վարչության քարտուղար, 1971-1978թթ.՝ ԵՊՀ արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչ:

Ս.Սողոմոնյանը հեղինակ է 13 մենագրության և «Արտասահմանյան գրականություն» (Եր., 1979) բուհական դասագրքի: Արևմտաեվրոպական գրականության տարաբնույթ հարցերին նվիրված նրա աշխատություններն են՝ «Եվրոպական գրականության ուրվագծեր. Բոկաչչո, Շիլլեր, Հյուգո» (Եր., 1954), «Դանթե, Պետրարկա, Շեքսպիր, Մոլիեր. եվրոպական ռեալիզմի պատմությունից» (Եր., 1973), «Լեսսինգ, Գյոթե, Հայնե. եվրոպական ռեալիզմի պատմությունից» (Եր., 1978): Արդի գրականությանը նվիրված նրա հոդվածներն ու ուսումնասիրությունները ամփոփված են «Ժամանակակից հայ բանաստեղծներ» (հ.1, Եր., 1965, հ.2, Եր., 1967) գրքում:

1967թ. Ս.Սողոմոնյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է Հայրենական պատերազմի II աստիճանի և Աշխատանքային կարմիր դրոշի շքանշաններով:

Վախճանվել է 1978թ. օգոստոսի 28-ին Երևանում:

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱԼԲԵՐՏ ԱՆԴՐԱՆԻԿԻ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր



Ծնվել է 1948թ. մարտի 14-ին Երևանում: 1965թ. ավարտել է թիվ 1 միջնակարգ դպրոցը, 1970թ.՝ Խ.Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը, ընդունվել ասպիրանտուրա և գործուղվել Լենինգրադի պետական համալսարան: 1975թ. պաշտպանել է թեկնածուական, 1991թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1983թ. նրան շնորհվել է դոցենտի, 2006թ. պրոֆեսորի կոչում:

Գիտամանկավարժական գործունեությունն սկսել է 1974-ին Խ.Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտում որպես ընդհանուր պատմության ամբիոնի դասախոս, ապա՝ դոցենտ: 1992-ից աշխատել է ԵՊՀ համաշխարհային պատմության ամբիոնում նախ՝ որպես դոցենտ, ապա՝ պրոֆեսոր: 1998-ից նույն ամբիոնի վարիչն է:

Ա.Ստեփանյանը հեղինակ է ավելի քան 70 գիտական աշխատանքների, որոնցից առանձնապես արժեքավոր են «Պատմական մտքի զարգացումը հին Հայաստանում. առասպել, ռացիոնալիզմ, պատմագրություն» (Եր., 1991) մենագրությունը և «Պլոտինոս, Էննեադներ, գիրք V (Յաղագս Բանականի)» (թարգմանություն հին հունարենից, ուսումնասիրություն, մեկնաբանություններ, Եր., 1999) գիրքը:

Ա.Ստեփանյանը խմբագիրն ու հիմնական ղեկավարն է հանրակրթական դպրոցի «Հին աշխարհի պատմություն», «Նոր դարերի պատմություն», «Նորագույն պատմություն» դասագրքերի:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 3 ատենախոսություն:

Ա.Ստեփանյանը զեկուցումներով հանդես է եկել միջազգային մի շարք գիտաժողովներում (Երևան, Մոսկվա, Պրահա, Կոպենհագեն, Վարշավա, Թեսալոնիկի, Վիեննա, Հռոմ, Ժնև, Բոստոն):

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍՏԵՓԱՆԻ

Երկրաբանահանքաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1902թ. հունվարի 15-ին Ալեքսանդրապոլում (այժմ՝ Գյումրի): Միջնակարգ կրթությունն ստացել է Հայրենի քաղաքում: 1921թ. ընդունվել է Թիֆլիսի պոլիտեխնիկական ինստիտուտ: 1925թ. տեղափոխվել Նովոչերկասկ և 1930թ. ավարտել Դոնի պոլիտեխնիկական ինստիտուտի երկրաբանական-հետախուզական ֆակուլտետի լեռնային բաժինը:

1924 թվականից ուսումնառությանը զուգահեռ աշխատել է Դոնի պոլիտեխնիկական ինստիտուտի ինժեներական երկրաբանության լաբորատորիայում: Մասնակցել է Ջորագէսի, Արազդայանի և Սարդարապատի շրջանների երկրաբանական քարտեզահանման աշխատանքներին: Ալավերդիում աշխատել է որպես հանքի երկրաբան, կոմբինատի գլխավոր երկրաբան:

1936թ. Հ.Ստեփանյանն ստացել է դոցենտի կոչում: 1939թ. պաշտպանել է թեկնածուական, 1948թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1950թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1935թ. նա դասախոսական աշխատանքի է հրավիրվել ԵՊՀ երկրաբանության ֆակուլտետ: 1938թ. նշանակվել է ֆակուլտետի դեկան, 1939թ.՝ ընդհանուր երկրաբանության ամբիոնի վարիչ:

1935-ից միաժամանակ աշխատելով ԽՍՀՄ ԳԱ Հայկական բաժանմունքի (1943-ից՝ ՀԽՍՀ ԳԱ) երկրաբանության ինստիտուտում, երկրաբանական գիտահետազոտական աշխատանքներ է կատարել Հայաստանի մի շարք շրջաններում, որոնց արդյունքները շարադրել է շուրջ 25 հաշվետվություններում:

Հեղինակ է գիտական մի շարք հոդվածների ու գրքերի, որոնցից կարևորը «Հյուսիսային Հայաստանի պղնձահանքերի երկրաբանություն» (ռուս., Եր., 1949) ծավալուն մենագրությունն է:

Հ.Ստեփանյանը վախճանվել է 1950թ. հուլիսի 11-ին Մոսկվայում:

ՍՈՒՎԱՐՅԱՆ ՅՈՒՐԻ ՄԻՔԱՅԵԼԻ

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

Ծնվել է 1943թ. մայիսի 25-ին Լեռնային Ղարաբաղի Ասկերանի շրջանի Սղնախ գյուղում: 1960թ. ավարտել է Ավետարանոց գյուղի միջնակարգ դպրոցը, 1965թ.՝ ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետը, 1969թ.՝ ԵՊՀ ասպիրանտուրան: 1970թ. նա պաշտպանել թեկնածուական, 1983թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1984թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 2006թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ:

1970-1975թթ. Յու.Սուվարյանն աշխատել է ԵՊՀ-ում որպես դոցենտ: 1975թ. նա տեղափոխվել է նորաստեղծ ԵԺՏԻ (այժմ՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան), որտեղ մինչև 1984թ. աշխատել է որպես դոցենտ, 1984-ից՝ պրոֆեսոր, 1987-1994թթ. գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր, 1994-2006թթ. կառավարման ամբիոնի վարիչ: 2006 թվականից նույն համալսարանի ռեկտորն է:

Յու.Սուվարյանը հեղինակ է ավելի քան 200 գիտական աշխատանքների, այդ թվում՝ 25 գրքի, որոնցից առավել կարևոր են՝ «Աշխատանքի արտադրողականությունը և արտադրության արդյունավետությունը» (Եր., 1976), “Управление ростом производительности труда в промышленности” (Ер., 1987), «Ռազմավարական կառավարում. մեթոդաբանությունը և արդի հիմնահարցերը» (Եր., 1996), «Հանրային կառավարման տեսության պատմության ուրվագծեր» (Եր., 2004):

Նրա ղեկավարությամբ, խմբագրությամբ ու համահեղինակությամբ հրատարակվել են «Մենեջմենթ» բուհական դասագիրքը (Եր., 2002), «Հայ կառավարչական մտքի պատմության ուրվագծեր» (Եր., 2005) ուսումնական ձեռնարկը:

Յու.Սուվարյանի ղեկավարությամբ ու խորհրդատվությամբ ավելի քան վեց տասնյակ ասպիրանտ և հայցորդ պաշտպանել են թեկնածուական ու դոկտորական ատենախոսություն: Նա Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող գիտական աստիճաններ շնորհող տնտեսագիտական մասնագիտական խորհրդի նախագահն է:

Յու.Սուվարյանը պարգևատրվել է «Անանիա Շիրակացի» (2000), ԼՂՀ «Մայրական երախտագիտություն» (2007) մեդալներով:

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ԱԼԵՔՍԵՅ ԳՐԻԳՈՐԻ

Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1907թ. սեպտեմբերի 10-ին Իրանում: 1915թ. ընդունվել և 1923թ. ավարտել է Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանը և մինչև 1935թ. աշխատել Նոր Ջուղայի հայկական միջնակարգ դպրոցում որպես ուսուցիչ: 1935թ. Ա.Սուքիասյանը ներգաղթել է Հայաստան:

1940թ. ավարտել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետը, այնուհետև ուսումնառությունը շարունակել Մոսկվայի իրավաբանական գիտությունների համամիութենական ինստիտուտի ասպիրանտուրայում: 1946թ. Մոսկվայում պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն:

1946-1952թթ. Ա.Սուքիասյանն աշխատել է Մոսկվայի համամիութենական հեռակա իրավաբանական և Սվերդլովսկի իրավաբանական ինստիտուտներում, իսկ 1953 թվականից մինչև կյանքի վերջը՝ ԵՊՀ-ում: 1963թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1966թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1971-1977թթ. նա ղեկավարել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնը:

Հեղինակ է բազմաթիվ դիտական հոդվածների ու գրքերի, որոնցից առանձնապես լայն ճանաչում ունեն «Հայաստանի հասարակական-քաղաքական կարգը և իրավունքը վաղ ֆեոդալիզմի ժամանակաշրջանում (մ.թ. III-IXդդ.)» (ռուս., Եր., 1963), «Մխիթար Գոշը և «Հայոց դատաստանագիրքը» (Եր., 1965), «Կիլիկիայի հայկական պետության և իրավունքի պատմություն (XI-XIVդդ.)» (ռուս., Եր., 1969), «Ուրարտուի պետությունը և իրավունքը (860-590թթ. մ.թ.ա.)» (ռուս., Եր., 1963) մենագրությունները: Վերջինիս համառոտ բովանդակությունը տպագրվել է իրավաբանական բուհական դասագրքերում:

Ա.Սուքիասյանը մեծ ավանդ ունի ԽՍՀՄ-ում պետության և իրավունքի պատմության բուհական դասագրքերի ստեղծման գործում:

Նրա ղեկավարությամբ թեկնածուի գիտական աստիճան են ստացել բազմաթիվ ասպիրանտներ և հայցորդներ:

1971թ. Ա.Սուքիասյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման:

Վախճանվել է 1981թ. սեպտեմբերի 5-ին Երևանում:

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ԱՇՈՏ ՄՈՒՐԱԴԻ

Լեզվաբան, բառարանագետ,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1922թ. օգոստոսի 18-ին Թիֆլիսում: 1940թ. ավարտել է Թբիլիսիի թիվ 86 հայկական միջնակարգ դպրոցը: Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին, ծանր վիրավորվել: 1948-ին ավարտել է ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժինը:

1954թ. Ա.Սուքիասյանը պաշտպանել է թեկնածուական, 1971թ.՝ դոկտորական ատենախոսություն:

1954-1966թթ. աշխատել է ՀԽՍՀ ԳԱ Հր.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում որպես գիտաշխատող, 1966-2005թթ. ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի ամբիոնում նախ՝ որպես դասախոս, ապա՝ դոցենտ, 1974-ից՝ պրոֆեսոր: 1976-1991թթ. եղել է ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի վարիչ:

Ա.Սուքիասյանի բառարանները հայ բազմադարյան բառարանագրության նոր նվաճումներ են, իսկ «Ժամանակակից հայոց լեզու» գիրքն այժմ էլ ծառայում է որպես բուհական հիմնական դասագիրք:

Կարևոր աշխատություններն են «Հոմանիշները ժամանակակից հայերենում» (Եր., 1971), «Ժամանակակից հայոց լեզու (հնչյունաբանություն և բառագիտություն)» (Եր., 1982), «Հայոց լեզվի հոմանիշների բառարան» (Եր., 1967), «Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան» (համահեղինակ, Եր., 1975): 2004թ. Ա.Սուքիասյանի «Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան» (Եր., 2003, 2009) աշխատությունն արժանացել է ՀՀ Նախագահի մրցանակի:

Ա.Սուքիասյանը վախճանվել է 2007թ. հունվարի 13-ին Երևանում:

ՍԵՎԱԿ (ԳՐԻԳՈՐՅԱՆ) ԳՈՒՐԳԵՆ ԳՐԻԳՈՐԻ

Լեզվաբան,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ և Վր.ԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1904թ. ապրիլի 15-ին Թիֆլիսում: Ավարտել է Ներսիսյան դպրոցը: 1924-ին տեղափոխվել է Երևան և 1929թ. ավարտել ԵՊՀ պատմագրական ֆակուլտետը, 1932-ին՝ ասպիրանտուրան:

1932թ. պաշտպանել է թեկնածուական, 1948թ. դոկտորական ատենախոսություն: 1949թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում, 1956թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1971թ.՝ ակադեմիկոս:

1932-1940թթ. Գ.Սևակն աշխատել է պետական տերմինաբանական կոմիտեում որպես գիտքարտուղար, 1941-ից՝ ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի ամբիոնի վարիչ, 1947-ից՝ ՀԽՍՀ ԳԱ Հր.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ժամանակակից հայոց լեզվի, լեզվի մշակույթի և տերմինաբանության բաժնի վարիչ: 1969-ից ՀԽՍՀ ԳԱ նախագահությանն առընթեր գիտատեխնիկական տերմինաբանության խորհրդի նախագահն էր:

1929-1936թթ. Գ.Սևակը եղել է Հայաստանի էսպերանտական միության կազմակերպիչն ու նախագահը, 1932-ից՝ էսպերանտո լեզվի համաշխարհային ակադեմիայի անդամ, 1937-ից՝ ԵՊՀ հայ-վրացական բանասիրության կաբինետի ղեկավար:

Մեծ է Գ.Սևակի ավանդը ժամանակակից հայերենի ուսումնասիրության և լեզվաբանության զարգացման գործում: Հեղինակ է բազմաթիվ հոդվածների ու գրքերի: Կարևոր աշխատություններն են՝ «Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն» (Եր., 1948), «Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց» (Եր., 1955), «Հայոց լեզվի շարահյուսություն» (Եր., 1936, դպրոցական դասագիրք. ունեցել է ավելի քան 30 հրատարակություն), «Խոսքի մասերի ուսմունքը» (Եր., 1939):

1961թ. Գ.Սևակն արժանացել է ՀԽՍՀ, իսկ 1970թ. Վր.ԽՍՀ դիտության վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է Խ.Աբովյանի անվան մեդալով:

Վախճանվել է 1981թ. սեպտեմբերի 16-ին Երևանում:

ՎԱԼԵՍՅԱՆ ԼԵՄՎԵԼ ՀԱԿՈԲԻ

Աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԽՍՀՄ մանկավարժական ակադեմիայի թղթակից անդամ

Ծնվել է 1929թ. ապրիլի 30-ին Շիրակի մարզի Ազատան գյուղում: 1946թ. ավարտել է Լենինականի (այժմ՝ Գյումրի) թիվ 7 դպրոցը, 1952թ.՝ ԵՊՀ աշխարհագրության ֆակուլտետը: 1954-ից Լ.Վալեսյանը դասավանդել է Երևանի թիվ 8 և Լենինականի թիվ 4 դպրոցներում: 1954-1958թթ. սովորել է ԽՍՀՄ ԳԱ աշխարհագրության ինստիտուտի ասպիրանտուրայում (Մոսկվա): 1958թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և մինչև 1972թ. աշխատել ՀԽՍՀ ԳԱ-ում: 1967թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, 1972թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1971-1977թթ. նա եղել է Խ.Աբովյանի անվան ՀՊՄԻ տնտեսական աշխարհագրության և աշխարհագրության դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հիմնադիր վարիչ, 1977-1979թթ.՝ ՀԽՍՀ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտի բաժնի վարիչ:

1985-ից Լ.Վալեսյանը ԽՍՀՄ մանկավարժական ակադեմիայի թղթակից անդամ է:

1979-1987թթ. եղել է Երևանի Խ.Աբովյանի անվան ՀՊՄԻ ռեկտոր, 1987-2006թթ.՝ ԵՊՀ տնտեսական և սոցիալական աշխարհագրության ամբիոնի վարիչ: 1997-2000թթ. միաժամանակ վարել է աշխարհագրության ֆակուլտետի դեկանի պաշտոնը: 2006թ. Լ.Վալեսյանն արժանացել է «ԵՊՀ ամբիոնի պատվավոր վարիչ» կոչման: Նույն թվականից ղեկավարում է նորաստեղծ ատլասային քարտեզագրության գիտահետազոտական լաբորատորիան:

Հեղինակ է երեք տասնյակից ավելի մենագրությունների, համալիր աշխարհագրական ատլասների, բուհական և դպրոցական դասագրքերի և շուրջ 320 գիտական հոդվածների:

Կարևորագույն մենագրություններն են "Производственно-территориальный комплекс Армянской ССР" (Ер.,

1970), «Աշխարհագրական գիտությունների մեթոդաբանական և տեսական հիմունքներ» (Եր., 2004), «Քաղաքական աշխարհագրություն» (Եր., 2005), «Հայաստանի ազգային ատլաս» (Հ.Ա., Եր., 2007): Համահեղինակ է «Աշխարհագրական կանխատեսում: Մեթոդաբանական հիմունքները կիրառական և կառուցողական նշանակությունը» (Եր., 2008) գրքի:

Նրա ղեկավարությամբ ու խորհրդատվությամբ պաշտպանվել է թեկնածուական 13 և դոկտորական 2 ատենախոսություն:

1992-ից Լ.Վալեսյանը Գիտությունների ակադեմիաների միջազգային ասոցիացիայի աշխարհագրական պրոբլեմների գիտխորհրդի (Մոսկվա) անդամ է, 1994-ից ղեկավարում է Միջազգային աշխարհագրական միության Հայկական ազգային կոմիտեն:

1994-ից Լ.Վալեսյանը աշխարհագրության գծով գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի նախագահն է:

Զեկուցումներով հանդես է եկել միջազգային աշխարհագրական համաժողովներում, գիտաժողովներում, դասախոսություններ կարդացել Եվրոպայի մի շարք համալսարաններում:

Լ.Վալեսյանը պարգևատրվել է «Պատվո նշան» շքանշանով (1985), Խ.Աբովյանի անվան մեդալով (1982) և ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատվոգրով (1987):

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՅՈՒՐԻ ԼԱԶԱՐԻ

Ֆիզիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր



Ծնվել է 1936թ. օգոստոսի 20-ին Նոր Բայազետում (այժմ՝ Գավառ): 1954թ. ավարտել է Երևանի թիվ 30 դպրոցը, 1959-ին՝ ԵՊՀ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի ֆիզիկայի բաժինը: 1960-1965թթ. աշխատել է ՀԽՍՀ ԳԱ կենտրոնական ֆիզիկատեխնիկական գիտահետազոտական լաբորատորիայում որպես կրտսեր, ապա՝ ավագ գիտաշխատող և համատեղությամբ դասավանդել ԵՊՀ տեսական ֆիզիկայի ամբիոնում: 1960-1963թթ., առանց արտադրությունից կտրվելու, սովորել է ասպիրանտուրայում:

1964թ. Յու.Վարդանյանը պաշտպանել է թեկնածուական

ատենախոսություն: 1965-ից հիմնական աշխատանքի է անցել ԵՊՀ-ում: 1971թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1974թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1974-2000թթ. եղել է ԵՊՀ պլիքային պրոցեսների տեսության և ֆիզիկայի ամբիոնի վարիչ, որտեղ նրա ղեկավարությամբ 1974-1982թթ. պատրաստվել են երիտասարդ մասնագետներ Հայկական նորակառույց ատոմային էլեկտրակայանի համար: Կազմակերպման օրից (1975թ.) Յու.Վարդանյանը ռադիոֆիզիկայի ֆակուլտետի դեկանն է: 1978-1991թթ. եղել է «Երևանի համալսարան» հանդեսի գլխավոր խմբագիր:

Յու.Վարդանյանը հեղինակ է շուրջ 120 գիտական աշխատությունների, այդ թվում՝ «Էլեկտրադինամիկա» (Եր., 2000) բուհական դասագրքի և երկու ուսումնական ձեռնարկների: Գիտական աշխատանքները վերաբերում են սպիտակ թզուկների, նեյտրոնային և տարօրինակ աստղերի ֆիզիկային: Այդ հետազոտություններն սկսվել են բաբախիչների հայտնաբերումից առաջ և իրավամբ դասվում են այդ բնագավառն սկզբնավորած աշխատանքների շարքին: Ստացված գիտական արդյունքները մտել են գերխիտ երկնային մարմիններին նվիրված մի շարք հայտնի մենագրությունների մեջ:

Յու.Վարդանյանը մասնակցել է բազմաթիվ միջազգային գիտաժողովների:

Նրա ղեկավարությամբ ու խորհրդատվությամբ պաշտպանվել է թեկնածուական 4 և դոկտորական 1 ատենախոսություն:

1990-1995թթ. ընտրվել է ՀՀ Գերագույն խորհրդի, իսկ 1995-1999թթ.՝ ՀՀ առաջին գումարման Ազգային ժողովի պատգամավոր:

Յու.Վարդանյանը պարգևատրվել է «Աշխատանքային արիության համար» (1970), «Անանիա Շիրակացի» մեդալներով (1999) և ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատվոգրով (1980):

ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ ԱՐՇԱԿ ՎԱՐԴԻ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1923թ. փետրվարի 18-ին Վր.ԽՍՀ Բոգդանովկայի շրջանի Փոքր Գոնդուրա գյուղում: 1940թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը և ընդունվել ԵՊՀ պատմության ֆակուլ-

տեւ: 1941թ. զորակոչվել է բանակ և մասնակցել Հայրենական պատերազմին: 1945թ. վիրավորվել է, զորացրվել որպես երկրորդ կարգի հաշմանդամ:

1946թ. Ա.Վարդապետյանը շարունակել է ուսումը ԵՊՀ պատմության ֆակուլտետում և այն ավարտել 1948թ.: 1948-1949թթ. աշխատել է ՀԼԿԵՄ Երևանի Կիրովի շրջանային կոմիտեում, 1949-1953թթ. Կիրովականում (այժմ՝ Վանաձոր) որպես դպրոցի տնօրեն:

1953-1956թթ. սովորել է ԵՊՀ ասպիրանտուրայում: 1957թ. պաշտպանել է թեկնածուական, 1967թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1957թ. նրան շնորհվել է դոցենտի, 1970թ. պրոֆեսորի կոչում:

1956-1958թթ. Ա.Վարդապետյանը եղել է ԵՊՀ միացյալ արհկոմիտեի նախագահ՝ միաժամանակ կատարելով դասախոսական աշխատանք: 1957-1975թթ. աշխատել է ԵՊՀ ԽՄԿԿ պատմության ամբիոնում որպես ասիստենտ, ապա՝ ավագ դասախոս, դոցենտ, պրոֆեսոր: 1975-ից մինչև կյանքի վերջը եղել է ԵԺՏԻ ԽՄԿԿ պատմության ամբիոնի վարիչ:

Հեղինակ է բազմաթիվ բրոշյուրների, հոդվածների և 11 մենագրության, որոնցից կարևոր են «Սովետական Ռուսաստանի օգնությունը Հայաստանին 1920-1925թթ.» (Եր., 1959), «Հայաստանի արհմիությունները 40 տարում» (Եր., 1961), «Հայաստանի օգնության կոմիտեն» (Եր., 1966), «Հ.Ս.Իսակով» (Եր., 1973), «Կարմիր բանակը կազմակերպողների շարքերում» (Եր., 1976) աշխատությունները:

Ա.Վարդապետյանը պարգևատրվել է «Կարմիր աստղ» շքանշանով, բազմաթիվ մեդալներով և ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատվոգրով:

Վախճանվել է 1988թ. սեպտեմբերի 24-ին Երևանում:

1990-ից Փոքր Գոնդուրայի դպրոցը կոչվում է Ա.Վարդապետյանի անունով:

ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ ԲԱԲԿԵՆ ՍԻՄՈՆԻ

Երկրաբանահանքաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
ՀԽՍՀ գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ



Ծնվել է 1906թ. դեկտեմբերի 25-ին Ելիզավետպոլ քաղաքում: Միջնակարգ կրթությունն ստացել է Բաքվում: 1930թ. ավարտել է Ադր.ՊԻ լեռնային ֆակուլտետը:

1931-1932թթ. աշխատել է ՀԽՍՀ հանքաշինարարական տրեստում: 1932-1936թթ. եղել է Միներալային հումքի համամիութենական ԳՀԻ հայկական բաժանմունքի տնօրենի գիտական աշխատանքների գծով տեղակալ: Այդ տարիներին Բ.Վարդապետյանի ղեկավարությամբ հայտնաբերվել ու շահագործման է հանձնվել Դսեղի հրակայուն կավերի հանքավայրը: Նրա մասնակցությամբ հանրապետությունում կառուցվել են հրակայուն աղյուսի ու տարբեր շինանյութերի մի քանի գործարան:

1936թ. Բ.Վարդապետյանը նշանակվել է Հայաստանի երկրաբանության և հանքաբանության ինստիտուտի գլխավոր ինժեներ: 1937-1942թթ. ՀԽՍՀ Նախարարների խորհրդին առընթեր երկրաբանական վարչությունում ղեկավարել է երկրաբանական մի շարք արշավախմբեր ու ջոկատներ: 1942-1944թթ. աշխատել է Զանգեզուրի պղնձահանքերի գլխավոր երկրաբան, 1944-1947թթ. ԽՍՀՄ գունավոր մետալուրգիայի նախարարության «Հայպղինձ» տրեստի գլխավոր երկրաբան, 1947-1948թթ.՝ նույն նախարարության «Հայգունմետաղհետախուզություն» գրասենյակի գլխավոր ինժեներ, 1948-1952թթ.՝ Հայկական երկրաբանական վարչության գլխավոր ինժեներ, 1959-1972թթ.՝ ՀԽՍՀ ԳԱ լեռնամետալուրգիական գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն:

1950թ. Բ.Վարդապետյանը պաշտպանել է թեկնածուական, 1962թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1963թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Լինելով ԵՊՀ երկրաբանության ֆակուլտետի հիմնադիր դասախոսներից՝ ավելի քան կես դար՝ 1933-1990թթ., դասավանդել է այդ ֆակուլտետում: 1952-1980թթ. նա ղեկավարել է օգտակար հանածոների հանքավայրերի որոնման և հետախուզման ամբիոնը:

Հեղինակ է շուրջ 100 գիտական աշխատությունների ու հաշվետվությունների: Հիշատակման է արժանի նրա «Հայկա-

կան ՍՍՀ տարածքում պղնձի հանքայնացման, տեղաբաշխման օրինաչափությունները» (ռուս., Եր., 1965) հիմնարար մենագրությունը, «Որոնման և հետախուզման մեթոդներ» (Եր., 1987) ձեռնարկը:

1961թ. Բ.Վարդապետյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության և տեխնիկայի վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի (2) շքանշանով և մի շարք մեդալներով:

Վախճանվել է 1994թ. Լոս Անջելեսում (ԱՄՆ):

ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ ՀԱՄԼԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ

Ֆիզիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս

Ծնվել է 1927թ. մայիսի 26-ին Երևանում: 1952թ. ավարտել է Փարիզի ֆիզիկայի և քիմիայի բարձրագույն դպրոցը ինժեներ-ֆիզիկոսի որակավորմամբ, իսկ 1953թ.՝ նաև Սորբոնի համալսարանը (Փարիզ):

1952–1957թթ. Հ.Վարդապետյանը եղել է Փարիզի ռադիումի ինստիտուտի Կյուրիի անվան լաբորատորիայի, 1957-1958թթ. Օրսեի միջուկային ֆիզիկայի ինստիտուտի գիտաշխատող: 1957թ. նա Ֆրանսիայում ստացել է ֆիզիկական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: 1958թ. վերադարձել է Հայաստան և աշխատանքի անցել Երևանի ֆիզիկայի ինստիտուտում:

1961թ. Հ.Վարդապետյանը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1972թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1968թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1977-ին՝ ակադեմիկոս:

1958-1962թթ. նա Երևանի ֆիզիկայի ինստիտուտի ավագ գիտաշխատող էր, 1962-ից՝ լաբորատորիայի վարիչ, 1974-1993թթ. փոխտնօրեն, 1993-ից՝ գլխավոր գիտաշխատող:

1969-1974թթ. Հ.Վարդապետյանը եղել է ԵՊՀ միջուկային ֆիզիկայի ամբիոնի վարիչ, 1992-2008թթ.՝ ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցիչը Միջուկային հետազոտություն-

ների միացյալ ինստիտուտում (ՌԴ, Դուբնա), 1996-ից ՀՀ Նախագահին կից ատոմային էներգետիկայի անվտանգության խորհրդի անդամ, 2000-ից՝ Երևանի ֆիզիկայի ինստիտուտում գործող գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի նախագահ:

2008թ. արժանացել է Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի պատվավոր դոկտորի կոչման:

Նրա գիտական գործունեության հիմնական ուղղություններն են՝ փորձարարական ֆիզիկա, միջուկային ճառագայթումների գրանցման մեթոդներ, ցածր էներգիաների միջուկային ֆիզիկա՝ միջուկային սպեկտրադիտում և բարձր էներգիաների ու տարրական մասնիկների ֆիզիկա, բևեռացման երևույթները ֆոտոմիջուկային պրոցեսներում և այլն: Նա հեղինակ է ավելի քան 160 գիտական աշխատությունների:

1980թ. Հ.Վարդապետյանն արժանացել է ՀԽՍՀ Պետական մրցանակի, պարգևատրվել Աշխատանքային կարմիր դրոշի (1976) և «Պատվո նշան» (1971) շքանշաններով, «Անանիա Շիրակացի» մեդալով (2004):

ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ ՂԱԶԱՐ ԲԱՐՍԵՂԻ

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1906թ. Արևմտյան Հայաստանի Տարոն գավառի Արտխոնք գյուղում: Ընտանիքը զոհ է դարձել 1915թ. Մեծ եղեռնին: Իննամյա Ղազարը ապաստանել է Խնուսի, Ալաշկերտի, Ախտայի, Քանաքեռի ու Երևանի որբանոցներում: 1924թ. ավարտել է Երևանի Ալ.Մյասնիկյանի անվան միջնակարգ դպրոցը, ապա գործուղվել Ստեփանավան որպես պիոներհրահանգիչ և հասարակագիտության ուսուցիչ: 1926-1930թթ. ուսումը շարունակել է Թիֆլիսի անդրկովկասյան կոմունիստական համալսարանում, իսկ 1930-1933թթ.՝ նույն համալսարանի ասպիրանտուրայում:

1933թ. Ղ.Վարդապետյանը վերադարձել է Երևան և մինչև 1979թ. դասախոսել ԵՊՀ-ում:

1938թ. նրան շնորհվել է դոցենտի կոչում, իսկ 1942-ին

պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն:

1939-1949թթ. Ղ.Վարդապետյանը ղեկավարել է ԵՊՀ փիլիսոփայության ամբիոնը, 1949-1951թթ.՝ ՀԽՍՀ ԳԱ փիլիսոփայության սեկտորը: 1964թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Նրա գիտական աշխատությունները վերաբերում են հիմնականում դիալեկտիկական ու պատմական մատերիալիզմի և փիլիսոփայության պատմության հարցերին:

Ղ.Վարդապետյանը տասնյակ գրքերի ու հոդվածների հեղինակ է: Դրանցից առավել կարևորներն են՝ «Ջերնիշևսկու և Դոբրոլյուբովի փիլիսոփայական հայացքները» (Եր., 1946), «Հնարավորության և իրականության դիալեկտիկան» (Եր., 1950), «Ագնոստիցիզմի և սկեպտիցիզմի քննադատությունը» (Եր., 1956), «Երևույթ և էություն» (Եր., 1969), «Հուշեր անցյալից» (Եր., 1974):

1970թ. Ղ.Վարդապետյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատվոգրերով:

Վախճանվել է 1980թ. հունվարի 20-ին Երևանում:

ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆ ՊՈՂՈՍ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ

Կենսաֆիզիկոս,
կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1953թ. հունվարի 11-ին Երևանում: 1970թ. ավարտել է Երևանի թիվ 77 միջնակարգ դպրոցը, 1975թ. ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի կենսաֆիզիկայի բաժինը:

1975-1976թթ. Պ.Վարդևանյանն աշխատել է Գենետիկայի համամիութենական գիտահետազոտական ինստիտուտի Զարենցավանի մասնաճյուղի մոլեկուլային գենետիկայի լաբորատորիայում որպես ավագ լաբորանտ, 1977-1999թթ.՝ ԵՊՀ կենսաֆիզիկայի ամբիոնում որպես լաբորանտ, ավագ լաբորանտ, կրտսեր գիտաշխատող, գիտաշխատող, առաջատար գիտաշխատող, պրոֆեսոր:

1983թ. Պ.Վարդևանյանը պաշտպանել է թեկնածուական, 1991թ.՝ դոկտորական ատենախոսություն: 2003թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1999-2000թթ. եղել է Խ.Աբովյանի անվան մանկավարժա-

կան ինստիտուտի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, 2000-2001թթ. ԵՊՀ կենսաֆիզիկայի ամբիոնի պրոֆեսոր: 2001-ից նա նույն ամբիոնի վարիչն է:

Պ.Վարդևանյանը հեղինակ է ավելի քան 200 գիտական աշխատությունների, որոնցից շուրջ 100-ը հոդվածներ են: Դրանք վերաբերում են ԴՆԹ-ում կառուցվածքային անցումներին, կենսաբանորեն ակտիվ նյութերի ազդեցությամբ գենոմում տեղի ունեցող փոփոխություններին, կենդանական և բուսական քրոմատինում և դրա բաղադրամասերի տարբեր փուլերում տեղի ունեցող կառուցվածքային տեղաշարժերին: Հետազոտել է կենդանիների արյան մեջ սպիտակուցների կատաբոլիզմի պրոդուկտների կոնցենտրացիայի բարձրացման պայմաններում լյարդի ամինաթթվային կատաբոլիզմի ֆերմենտների մակածման մեխանիզմը:

Հեղինակ է նաև «Կենսամակրոմոլեկուլների կառուցվածքային ուսումնասիրությունները լուծույթներում» (Եր., 2001), «Կենսամետրիայի հիմունքներ» (Եր., 2006), «Լիգանդների հավասարակշռական միացումը մակրոմոլեկուլների հետ» (Եր., 2007) ուսումնամեթոդական ձեռնարկների:

Պ.Վարդևանյանը զեկուցումներով հանդես է եկել միջազգային գիտաժողովներում (ԱՄՆ, ՌԴ, Գերմանիա, Իսպանիա, Վրաստան):

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 10 ատենախոսություն:

ՎԱՐՇԱՄՈՎ ՌՈՄ ՌՈՒԲԵՆԻ

Մաթեմատիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Ծնվել է 1927թ. ապրիլի 9-ին Թիֆլիսում: 1945թ. ավարտել է տեղի թիվ 14 միջնակարգ դպրոցը, 1952թ. Թբիլիսիի պետական համալսարանի մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետը:

1959թ. Ռ.Վարշամովը պաշտպանել է թեկնածուական, 1966թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1969թ. նրան շնորհ-

վել է պրոֆեսորի կոչում: 1977թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1990-ին՝ ակադեմիկոս:

1955-1968թթ. աշխատել է ՀԽՍՀ ԳԱ ավտոմատիկայի և հեռուստամեխանիկայի (հետագայում ԽՍՀՄ ԳԱ կառավարման պրոբլեմների) ինստիտուտում, 1968-1999թթ. ԵՊՀ և ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտում որպես բաժնի վարիչ: 1970-1988թթ. եղել է ԽՍՀՄ ԳԱ ռադիոէլեկտրոնիկայի և կիբեռնետիկայի գիտական խորհրդի նախագահ:

Ռ.Վարշամովը հեղինակ է 107 գիտական աշխատությունների, որոնք ընդգրկում են ինչպես տեսական, այնպես էլ կիրառական մաթեմատիկայի բազմաթիվ բնագավառներ. թվերի տեսություն, ժամանակակից հանրահաշիվ, սխալներ ուղղող կոդերի տեսություն, կապի ռեալ համակարգերի հուսալիության բարձրացման խնդիրներ, ինչպես նաև տեղեկատվական ղեկավարող համակարգերի սինթեզ: Նա դրել է գծային կոդավորման տեսության հիմքերը, որոշել համաչափ սխալներ ուղղող կոդերի գոյության հնարավորությունները, որոնք գիտական գրականության մեջ հայտնի են որպես Վարշամով-Հիլբերտի սահման: Լուծել է վերջավոր դաշտերի վրա կամայական աստիճանի չբերվող բազմանդամների կառուցման խնդիրը, առաջարկել օբյեկտների բնութագրերի կտրուկ փոփոխությունների նկատմամբ ադապտիկ, տիեզերական կապուղիներով տվյալների հաղորդման համակարգերի մշակման նոր սկզբունքներ:

Ռ.Վարշամովի ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 36 ատենախոսություն:

Վախճանվել է 1999թ. օգոստոսի 24-ին Մոսկվայում, աճյունն ամփոփված է Երևանում:

ՏԵՏԵՐԵՎՆԻԿՈՎԱ-ԲԱԲԱՅԱՆ ԴԱՐՅԱ ՆԻԿՈԼԱՅԻ

Բուսաբան,
գյուղատնտեսական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1904թ. սեպտեմբերի 27-ին Սանկտ Պետերբուրգում, որտեղ 1921թ. ավարտել է միջնակարգ դպրոցը, 1925թ. գյուղատնտեսական ինստիտուտը:

1926-1929թթ. Դ.Տետերևնիկովա-Բաբայանը եղել է նույն ինստիտուտի ֆիտոպաթոլոգիայի ամբիոնի գիտաշխատող, 1929-1938թթ. ՀԽՍՀ հողժողկոմատի բույսերի պաշտպանության հայկական կայանի ավագ գիտաշխատող, 1934-ից՝ ֆիտոպաթոլոգիայի բաժնի վարիչ, 1940-1950թթ. Հայկական գյուղատնտեսական ինստիտուտի բույսերի պաշտպանության ամբիոնի դասախոս, դոցենտ, պրոֆեսոր, 1944-1946թթ. ՀԽՍՀ գյուղնախարարության խաղողագործության և գինեգործության ինստիտուտի բույսերի պաշտպանության բաժնի վարիչ, նաև ՀԽՍՀ ԳԱ գյուղատնտեսական գիտությունների բաժանմունքի գիտական քարտուղար, 1946-1949թթ. ԵՊՀ բուսաբանության ամբիոնի պրոֆեսոր, 1949-1968թթ. նույն ամբիոնի վարիչ, 1968-1971թթ.՝ ստորակարգ բույսերի ամբիոնի վարիչ: 1960թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ:

Դ.Տետերևնիկովա-Բաբայանը հեղինակ է սնկաբանությանը և ֆիտոպաթոլոգիային վերաբերող բազմաթիվ հիմնարար և կիրառական նշանակություն ունեցող ուսումնասիրությունների: Նկարագրել է բրածո, դեռևս անհայտ սնկերի տեսակներ: Առաջին անգամ ԽՍՀՄ-ում իրականացրել է միկրոմիցետների ֆիտոցենոտիկ հետազոտություն: Ուսումնասիրել է գյուղատնտեսական մշակաբույսերի սնկային վտանգավոր հիվանդությունների հարուցիչների կենսաբանությունը, ժանգասնկերի և սֆերոպսիդալ սնկերի ֆլորան, կարգաբանությունը և էվոլյուցիան: Այս հետազոտությունների արդյունք-

ներն օգտագործվել են բույսերի պաշտպանության հարցերի լուծման և սնկային հիվանդությունների նկատմամբ դիմացկուն գյուղատնտեսական մշակաբույսերի ստացման համար:

Հեղինակ է ավելի քան 200 աշխատության, այդ թվում՝ 11 մենագրության, որոնցից են՝ "Ржавчинные паразиты культурных и дикорастущих растений Армянской ССР" (Ер., 1952), "Болезни овоще-бахчевых культур и меры борьбы с ними" (ч.1., Ер., 1959, ч. 2., Ер., 1964), "Микофлора Армянской ССР", т. IV, Ржавчинные грибы (Ер., 1977), "Грибы рода Septoria в СССР" (Ер., 1987): Համահեղինակ է "Микофлора Армянской ССР", т. VI: Сферопсидальные грибы с бесцветными одноклеточными конидиями, (Ер., 1983) մենագրության:

Դ.Տետերևնիկովա-Բաբայանը հայկական սնկաբանների և ֆիտոպաթոլոգների դպրոցի հիմնադիրն է:

Նրա ղեկավարությամբ ու խորհրդատվությամբ պաշտպանվել է թեկնածուական և դոկտորական ավելի քան 20 ատենախոսություն:

1961թ. Դ.Տետերևնիկովա-Բաբայանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի (1954), «Պատվո նշան» (1971) շքանշաններով, «1941-1945թթ. Հայրենական մեծ պատերազմի ժամանակ աշխատանքային արիության համար» (1946), «Աշխատանքային արիության համար» (1970) մեդալներով:

Վախճանվել է 1988թ. հունվարի 12-ին Երևանում:

ՏԵՐ-ԱՆՏՈՆՅԱՆ ՎԱԼԵՐԻ ՄԿՐՏՉԻ

Ֆիզիկոս,
Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր

Ծնվել է 1942թ. փետրվարի 15-ին Կրասնոդարում: Միջնակարգ կրթությունն ստացել է Երևանում: 1967թ. ավարտել է ԵՊՀ Ֆիզիկայի ֆակուլտետը: Աշխատանքային գործունեությունն սկսել է որպես կրտսեր գիտաշխատող Երևանի Ֆիզիկայի ինստիտուտի տեսական ֆիզիկայի բաժնում: 1969-1973թթ. ուսումը շարունակել է Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան սլետական համալսարանի ասպիրանտուրայում: 1973թ.

Դուբնայում (ՌԴ) պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և աշխատանքի անցել ԵՊՀ տեսական ֆիզիկայի ամբիոնում որպես ասիստենտ, 1977-ից՝ դոցենտ: 1985թ. Վ.Տեր-Անտոնյանը Դուբնայում պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1986-ին նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1986-ից եղել է ԵՊՀ տեսական ֆիզիկայի ամբիոնի պրոֆեսոր, 1987-1993թթ.՝ ֆիզիկայի ֆակուլտետի դեկանի տեղակալ:

1993-2003թթ. նա աշխատել է Դուբնայի միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտում, իսկ 2000թ. նաև ԵՊՀ տեսական ֆիզիկայի ամբիոնում որպես պրոֆեսոր: 1991-1993թթ. համատեղությամբ եղել է Իջևանի քոլեջ-համալսարանի բնագիտական ֆակուլտետի առաջին դեկանը: 1992-1999թթ. ԵՊՀ «Գիտական տեղեկագիր» հանդեսի գլխավոր խմբագիրն էր:

Զբաղվել է դասական և քվանտային մեխանիկայում սուպերինտեգրվող համակարգերի խնդիրներով: Նա մշակել է միջբազիսային վերլուծությունների կառուցման մեթոդներ, որոնք կարևոր նշանակություն ունեն ոչ միայն ֆիզիկայում, այլև ֆունկցիաների տեսության մեջ: Վ.Տեր-Անտոնյանի հետազոտություններում առաձնահատուկ տեղ են գրավում մեկ և երկու չափականության ճշգրիտ լուծվող խնդիրները:

Հեղինակ է ավելի քան 100 գիտական հոդվածների, համահեղինակ՝ «Թաքնված համաչափությամբ քվանտային համակարգեր» (ռուս., Մ., 2006) մենագրության:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 3 ատենախոսություն:

Վ.Տեր-Անտոնյանը վախճանվել է 2003թ. փետրվարի 4-ին Երևանում:

ՏԵՐ-ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍՄԲԱՏ ՎԱՐԴԱՆԻ

Հնագետ,
պատմական գիտությունների դոկտոր

Ծնվել է 1875թ. հոկտեմբերի 8-ին Ղազախի շրջանի Բարանա (այժմ՝ Նոյեմբերյան) գյուղում: 1898թ. ավարտել է Գևորգյան ճեմարանը, 1904թ.՝ Սանկտ Պետերբուրգի համալսարանը և սկսել դասավանդել նախ Գևորգյան ճեմարանում, ապա՝

Թիֆլիսի արական գիմնազիայում և առևտրական դպրոցում: 1921թ. եղել Կովկասի Հնագիտական ինստիտուտի գիտաշխատող, իսկ 1925-1931թթ. փոխտնօրեն: 1931-1934թթ. աշխատել է Թիֆլիսում հիմնադրված՝ ԽՍՀՄ ԳԱ անդրկովկասյան մասնաճյուղում որպես գիտական քարտուղար:

1936թ. Ս.Տեր-Ավետիսյանին առանց ատենախոսության պաշտպանության շնորհվել է պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: 1937թ. տեղափոխվել է Երևան և գլխավորել ԽՍՀՄ ԳԱ Հայկական մասնաճյուղի Հնագիտության բաժանմունքը միաժամանակ մինչև 1939թ. աշխատել ԵՊՀ-ում որպես Հնագիտության ամբիոնի վարիչ:

Դեռևս 1902թ. Պետերբուրգի Համալսարանում ուսանելու տարիներին Ս.Տեր-Ավետիսյանը գործուղվել է Պարսկաստան ուսումնասիրելու Նոր Ջուղայի Հայկական ձեռագրերը: Նա նկարագրել է շուրջ 600 գրչագիր և կազմել Նոր Ջուղայի Սբ. Ամենափրկիչ վանքի Հայկական ձեռագրերի ցուցակը (տե՛ս **Ս.Տեր-Ավետիսյան**, Ցուցակ Հայերեն ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի, Հ.Ա, Վիեննա, 1970): Հետագայում կազմել է նաև Սբ. Ստեփանոս Նախավկայի վանքի 300 ձեռագրերի ցուցակը: Ուսումնասիրել և հրատարակել է աղբյուրագիտական արժեք ներկայացնող մի շարք բնագրեր («Հովհաննես Վանական Տաուշեցու ինքնագիրը», «Նադիր շահի արշավանքները ըստ Հակոբ Շամախեցու», «Աբրահամ Կրետացու հիշատակարանը», «Նոր Ջուղան և իր դպրոցը» և այլն): Հավաքել է նաև Հայաստանի ու Հայկական գաղթավայրերի մի շարք Հայկական արձանագրություններ և կազմել վիմագիր արձանագրությունների նոր ժողովածու:

1904թ. մասնակցել է Ն.Մառի ղեկավարությամբ Անիում կատարված Հնագիտական աշխատանքներին: Այնուհետև պեղումներ է կատարել Ղազախի շրջանում, Ղարաբաղում, Գիլանում, Նախիջևանում, Արմավիրում, Կարսում, Դվինում և այլ Հնավայրերում: Հնագիտական պեղումների արդյունքների մասին նրա Հաշվետվությունները հրատարակվել են գիտական պարբերականներում:

1915-1917թթ. Ս.Տեր-Ավետիսյանը Կայսերական գիտությունների ակադեմիայի կողմից գործուղվել է Կովկաս, շրջագայել Վանի, Բիթլիսի, Մուշի, Բասենի, Էրզրումի նահանգներում, հավաքել հազարից ավելի Հայկական հին ձեռագրեր, պատմական վավերագրեր ու ազգագրական նյութեր և հաս-

ցրել էջմիածին՝ դրանք փրկելով կորստից և ոչնչացումից:
Վախճանվել է 1943թ. փետրվարի 27-ին Երևանում:

ՏԵՐ-ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՄԿՐՏԻՉ ԱՐՏԱՇԵՍԻ

Կենսաքիմիկոս,
կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս

Ծնվել է 1910թ. հոկտեմբերի 22-ին Թուրքիայի Զմյուռնիա (Իզմիր) քաղաքում: 1933թ. ավարտել է Բեյրութի ֆրանսիական պետական բժշկական համալսարանը: 1944թ. Մ.Տեր-Կարապետյանն ուսումը շարունակել է Սորբոնի համալսարանում, որտեղ պաշտպանել է ատենախոսություն՝ նվիրված ծծումբ պարունակող ամինաթթուների փոխանակության հարցերին: 1945թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: Այդ աշխատությունը հետագայում, Հայաստան ներգաղթելուց հետո, ընդունվել է որպես դոկտորական ատենախոսություն, և 1959թ. Մոսկվայում նրան շնորհվել է կենսաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: 1947թ. նա ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1956թ. ակադեմիկոս:

1951-ից Մ.Տեր-Կարապետյանը դասավանդել է ԵՊՀ-ում, 1960-1970թթ. եղել կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի ամբիոնի վարիչ:

Մինչև Հայաստան ներգաղթելը նա հետազոտել է ծծումբ պարունակող ամինաթթուներ՝ փոխանակության որոշ առանձնահատկություններ, ինչպես նաև այդ ամինաթթուներից սուլֆատի և բիսուլֆատի առաջացման հարցերը: Առաջիններից մեկն է, որ Հայաստանում զբաղվել է կենսատեխնոլոգիական հետազոտություններով: 1956թ. նա գյուղատնտեսության նախարարության՝ Երևանի անասնաբուծության և անասնաբուժության գիտահետազոտական ինստիտուտում ստեղծել է կենսաբանական թափոնների քիմիական և կենսաքիմիական վերամշակման լաբորատորիա: 1955-1971թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ անասնաբուծության-անասնաբուժության գիտահետազոտական ինստիտուտի՝ կերերի վերամշակման լաբորատորիայի վարիչ:

Մ.Տեր-Կարապետյանի ղեկավարությամբ ԵՊՀ-ում հանգամանորեն ուսումնասիրվել է Candida ցեղի խմորասնկերի կող-

մից ամինաթթուների յուրացման և խմորասնկային զանգվածի կուտակման կենսաքիմիայի հարցերը:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 12 ատենախոսություն:

1971թ. նա արտագաղթել է Ֆրանսիա և 1972-1981թթ. աշխատել Փարիզի VI համալսարանում որպես պրոֆեսոր և կենսաքիմիայի բաժնի ղեկավար:

Մ Տեր-Կարապետյանը վախճանվել է 1982թ. մարտի 4-ին Փարիզում:

ՏԵՐ-ՂԱԶԱՐՅԱՆ ՂԱԶԱՐ ԳՐԻԳՈՐԻ

Քիմիկոս-մանկավարժ, պրոֆեսոր

Ծնվել է 1874թ. Շուշիում: Միջնակարգ կրթությունն ստացել է տեղի ռեալական սեմինարիայում: 1899թ. մեկնել է Ժնև և մինչև 1902թ. սովորել տեղի համալսարանի բնագիտական ֆակուլտետում ու ստացել բնական գիտությունների բակալավրի աստիճան: Շարունակելով կատարելագործվել ընտրած մասնագիտության ասպարեզում՝ 1904-ին ստացել է քիմիկոսի որակավորում, իսկ 1906թ. ատենախոսության պաշտպանությամբ՝ ֆիզիկական գիտությունների դոկտորի աստիճան: Նույն թվականին նշանակվել է Ժնևի համալսարանի ֆիզիկական քիմիայի ամբիոնի ասիստենտ, ապա՝ ֆիզիկական քիմիայի լաբորատորիայի վարիչ:

1910-1917թթ. որպես քիմիկոս աշխատել է Պետերբուրգում, Բաքվում, Շուշիում և ապա՝ Թիֆլիսում: 1923-1924թթ. նա դասավանդել է Անդրկովկասի կոմունիստական համալսարանում: 1930-1931թթ. գլխավորել է նաև հաղորդակցության ճանապարհների Թիֆլիսի ինժեներական ինստիտուտի քիմիայի ամբիոնի աշխատանքները: 1924-1932թթ. Ղ.Տեր-Ղազարյանը եղել է Անդրկովկասի պետպլանի արդյունաբերական սեկցիայի նախագահ: 1932-1933թթ. աշխատել է Թիֆլիսի կիրառական քիմիայի ինստիտուտում որպես սեկտորի վարիչ:

1934թ. Ղ.Տեր-Ղազարյանն աշխատանքի է հրավիրվել ԵՊՀ՝ որպես անօրգանական քիմիայի նորաստեղծ ամբիոնի վարիչ և ֆակուլտետի դեկան: Մի քանի տարի ղեկավարել է

նաև ԵՊԻ և ՀՊՄԻ անօրգանական քիմիայի ամբիոնների աշխատանքը:

1935թ. Ղ.Տեր-Ղազարյանին շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1939թ. համալսարանի հրատարակությամբ լույս է տեսել նրա կազմած «Անալիտիկ քիմիայի համառոտ դասընթաց» գիրքը:

Վախճանվել է 1958թ. օգոստոսի 12-ին Երևանում:

ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆ ԵՐՎԱՆԴ ԳԱԼՈՒՍՏԻ

Լեզվաբան, բառարանագետ,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ



Ծնվել է 1879թ. նոյեմբերի 19-ին Արթիկի շրջանի Հառիճ գյուղում: Տարրական կրթությունն ստացել է գյուղի ծխական դպրոցում, ապա 1892-1900թթ. սովորել Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: 1901-1904թթ. ուսանել է Լայպցիգի և Բեռլինի համալսարաններում: 1904թ. վերադարձել է Հայրենիք և չորս տարի դասավանդել Գևորգյան ճեմարանում: 1910թ. հրաժարվել է հոգևոր կոչումից և մինչև 1920թ. զբաղվել ուսուցչությամբ Երևանում, Ալեքսանդրապոլում, Վաղարշապատում և Թիֆլիսում:

1921-1922թթ. Ե.Տեր-Մինասյանն աշխատել է Էջմիածնում որպես Հայաստանի գիտական ինստիտուտի գիտական քարտուղար, 1930-1947թթ. Երևանի գյուղատնտեսական ինստիտուտում որպես լեզուների ամբիոնի վարիչ, 1943-1948թթ.՝ ԵՊՀ բանասիրության ֆակուլտետում որպես օտար լեզուների ամբիոնի վարիչ, ինչպես նաև ՀԽՍՀ ԳԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում՝ որպես հին և միջնադարյան գրականության բաժնի վարիչ, լեզվի ինստիտուտում՝ որպես բառարանագրության բաժնի վարիչ, 1947 թվականից մինչև կյանքի վերջը Վ.Բրյուսովի անվան օտար լեզուների ինստիտուտում որպես գերմաներենի պրոֆեսոր:

1943թ. առանց ատենախոսության պաշտպանության Ե.Տեր-Մինասյանին շնորհվել է բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան, 1945թ.՝ պրոֆեսորի կոչում:

Ե.Տեր-Մինասյանը հեղինակ է ավելի քան 130 գիտական աշխատությունների, որոնք նվիրված են հին ու միջնադարյան

գրականության, հնագիտության, հայ եկեղեցու պատմության, աղանդների ծագման ու զարգացման խնդիրներին, հայ-ասորական գրական առնչություններին և բանասիրական այլևայլ հարցերի:

Մեծ է Ե.Տեր-Մինասյանի վաստակը հայ բառարանագրության ասպարեզում: Նրա մասնակցությամբ են ստեղծվել «Ռուս-Հայերեն» երկհատոր (Եր., 1933-1935) և քառահատոր (Եր., 1954-1958) բառարանները, ինչպես նաև «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանը» (5 հատորով): 1957թ. նրա աշխատասիրությամբ լույս է տեսել Եղիշեի «Վասն Վարդանայ և հայոց պատերազմին» երկի քննական բնագիրը:

1964թ. արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման:

Ե.Տեր-Մինասյանը վախճանվել է 1974թ. հուլիսի 12-ին Երևանում:

ՏԵՐ-ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ ԼԵՎՈՆԻ

Ֆիզիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս

Ծնվել է 1923թ. նոյեմբերի 10-ին Թիֆլիսում: 1948թ. ավարտել է ԵՊՀ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը: Ուսումնառությունը շարունակել է Մոսկվայի Պ.Լեբեդևի անվան ֆիզիկայի ինստիտուտի ասպիրանտուրայում:

1952թ. Մ.Տեր-Միքայելյանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և աշխատանքի անցել Երևանի ֆիզիկայի ինստիտուտում որպես կրտսեր գիտաշխատող, տեսական բաժնի ղեկավար, ապա՝ տնօրենի տեղակալ: 1962թ. Մոսկվայում պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, 1975թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1963թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1982թ.՝ ակադեմիկոս:

1963-1967թթ. Մ.Տեր-Միքայելյանը եղել է ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի դեկան: Նրա նախաձեռնությամբ ֆակուլտետում ստեղծվել են մոլեկուլային ֆիզիկայի, կենսաֆիզիկայի, ճառագայթային ֆիզիկայի, քվանտային օպտիկայի, մաթեմատիկական

ֆիզիկայի ամբիոնները: Նա ձեռնամուխ է եղել Հայաստանի համար նոր բնագավառի՝ լազերային ֆիզիկայի և ոչ գծային օպտիկայի զարգացմանը: Նրա ջանքերով ստեղծվել է ՀԽՍՀ ԳԱ և ԵՊՀ միացյալ լաբորատորիա, որն զբաղվել է քվանտային գենեռատորների և ուժեղացուցիչների տեսության մշակմամբ և դրանց արդյունաբերական արտադրությամբ: ԽՍՀՄ-ում առաջին սուտակե լազերների արտադրությունն իրականացվել է Հայաստանում՝ «Արզնի» տեխնիկական քարերի ճշգրիտ մշակման գործարանում, որտեղ արտադրված լազերների առաջին նմուշները 1965թ. ցուցադրվել են Լայպցիգի տոնավաճառում:

1968թ. Մ.Տեր-Միքայելյանի նախաձեռնությամբ ստեղծվել է ՀԽՍՀ ԳԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտը, որի տնօրենն էր նա մինչև 1994թ.: 80-ականներին, երբ ինստիտուտն առաջատարներից մեկն էր լազերային ֆիզիկայի բնագավառում, Մ.Տեր-Միքայելյանն անցավ նոր թեմատիկայի բարձրջերմաստիճանային գերհաղորդականության ուսումնասիրմանը: Նորաստեղծ բարձրջերմաստիճանային գերհաղորդականության լաբորատորիան շուտով ստացավ միջազգային ճանաչում:

1988-1993թթ. Մ.Տեր-Միքայելյանը ՀՀ ԳԱ ֆիզիկամաթեմատիկական բաժանմունքի ակադեմիկոս քարտուղարն էր:

Հեղինակ է ավելի քան 100 գիտական աշխատությունների, համահեղինակ՝ “Оптические генераторы на твердом теле” (М., 1967) մենագրության:

1981թ. Մ.Տեր-Միքայելյանն արժանացել է ՀԽՍՀ Պետական մրցանակի: Պարգևատրվել է Ժողովուրդների բարեկամության շքանշանով:

Վախճանվել է 2004թ. հունվարի 31-ին Երևանում:



ՏԵՐ-ՄԿՐՏՉՅԱՆ ԱՇՈՏ ՄՈՎՍԵՍԻ

Մեխանիկոս-մաթեմատիկոս,
պրոֆեսոր,
ՀԽՍՀ գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ

Ծնվել է 1891թ. հունվարի 25-ին Շուշիում, որտեղ և ստացել է սկզբնական կրթությունը: 1909թ. ավարտելով Թիֆլիսի ռեալական ուսումնարանը՝ ընդունվել է Խարկովի համալսա-

րանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետ, որն ավարտել է 1912թ. և ստացել մաթեմատիկոսի որակավորում: Նույն թվականին ընդունվել և 1915թ. ավարտել է Նովոչերկասկ քաղաքի պոլիտեխնիկական ինստիտուտի մեխանիկայի ֆակուլտետը ստանալով ինժեներ-մեխանիկոսի որակավորում: 1916թ. զորակոչվել է գործող բանակ, երկու տարի ծառայել Պարսկաստանի Ուրմիա քաղաքում գտնվող հայկական 7-րդ հատուկ կորպուսում որպես բանակային ինժեներ: Զորացրվելուց հետո՝ 1918-1920թթ., աշխատել է Թիֆլիսի պոլիտեխնիկական ինստիտուտում որպես մաթեմատիկայի և մեխանիկայի ամբիոնի դասախոս, իսկ 1920-1926թթ.՝ Բաքվի պոլիտեխնիկական ինստիտուտի և Ադրբեջանի համալսարանի մաթեմատիկայի և մեխանիկայի ամբիոններում որպես դոցենտ:

1926թ. Ա.Տեր-Մկրտչյանը հրավիրվել է ԵՊՀ, աշխատել բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնում որպես դոցենտ: 1930թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում, և նա նշանակվել է նորաստեղծ տեսական մեխանիկայի ամբիոնի վարիչ՝ այդ պաշտոնում աշխատելով մինչև կյանքի վերջը:

Ա.Տեր-Մկրտչյանը դասախոսել է Հանրապետության տարբեր բարձրագույն ուսումնական հաստատություններում, ինչպես նաև Դոնեցկի ու Սվերդլովսկի լեռնային և Սարատովի ավտոճանապարհային ինստիտուտներում՝ վարելով մաթեմատիկական բազմաթիվ դասընթացներ:

Ա.Տեր-Մկրտչյանի գիտական գործունեությունն ընդգրկում էր մաթեմատիկայի ու մեխանիկայի տարբեր բնագավառներ՝ պարբերական ֆունկցիաներ, էլիպտական ֆունկցիաներ և ինտեգրալներ, դիֆերենցիալ հավասարումներ, առաձգականության տեսություն և այլն: Գիտամանկավարժական աշխատանքին զուգընթաց՝ նա գործուն մասնակցություն է ունեցել Հանրապետության արդյունաբերական և շինարարական օբյեկտներից շատերի կառուցմանը: 1926-1936թթ. անընդմեջ եղել է Հայաստանի ջրային տնտեսության նախարարության գլխավոր ինժեներ-մեխանիկոսը:

Ցարական բանակում ցուցաբերած բացառիկ հերոսության համար պարգևատրվել է «Զինվորի Գեորգիևյան խաչ» և «Ոսկյա զենք» մարտական շքանշաններով:

1940թ. Ա.Տեր-Մկրտչյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության և տեխնիկայի վաստակավոր գործչի կոչման:

Վախճանվել է 1959թ. մարտի 13-ին Երևանում:

ՏԵՐ-ՄՈՎՍԻՍՅԱՆ ՄԵՍՐՈՊ (Փարսադան)

Արքեպիսկոպոս, մանկավարժ

Ծնվել է 1865թ. մայիսի 7-ին Զանգեզուրի Շիկահող գյուղում: 1882թ. ավարտել է Շուշիի թեմական դպրոցը, 1885թ. Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, 1890թ. Դորպատի համալսարանը: Մասնագիտական գիտելիքները կատարելագործել է Վիեննայում, Փարիզում, Երուսաղեմում, Լոնդոնում, Բեռլինում, Վենետիկում: 1902թ. Մ.Տեր-Մովսիսյանն ստացել է հայ բանասիրության մագիստրոսի աստիճան:

Մ.Տեր-Մովսիսյանն աշխատել է որպես Երևանի թեմի եկեղեցական-ծխական ուսումնարանների տեսուչ, Շուշիի հոգևոր թեմական դպրոցի ռեկտոր, Շամախիի հայկական հոգևոր խորհրդի նախագահող անդամ, 1890-1904թթ. Խաչիկ Դադյանի արշավախմբի կազմում մասնակցել է Զվարթնոցի պեղումներին, 1904-ից եռանդուն գործունեություն է ծավալել ցարական կառավարության կողմից բռնագրավված եկեղեցական ու վանական ունեցվածքի վերադարձման ուղղությամբ, 1905-1906թթ. մասնակցել է Նախիջևանի և Զանգեզուրի գավառների բնակչության խաղաղեցմանը և թաթարական ջարդերից տուժած հայերին օգնություն կազմակերպելու գործին: 1907-1910թթ. գնացել է Կ.Պոլիս, Երուսաղեմ, Հռոմ, Փարիզ, Լոնդոն, Վենետիկ և ընդգրկվել եկեղեցական դպրոցների ծրագրերի մշակման հանձնաժողովներում, նշանակվել է Էջմիածնի Սինոդի անդամ, Գևորգյան ճեմարանի տեսուչ, ձեռնադրվել եպիսկոպոս: 1913-1916թթ. եղել է Վրաստանի և Իմերեթիայի, իսկ 1917թ. Աստրախանի թեմական առաջնորդ:

Առաջին աշխարհամարտի տարիներին դործուն մասնակցություն է ունեցել հայկական կամավորական ջոկատների կազմավորմանը, նյութական և բարոյական աջակցություն ցույց տվել մարտիկներին, վիրավորներին ու փախստականներին, Անդրկասպյան և Թուրքեստանի տարբեր քաղաքներում հանգանակություն է արել հօգուտ արևմտահայ գաղթականների ու որբերի: 1922-1932թթ. դլխավորել է Պարսկա-Հնդկաստանի թեմը:

1919թ. հրավիրվել է Հայաստանի Նորաբաց համալսարան որպես հայ գրականության և կրոնական մատենագրության առարկաների պրոֆեսոր, եղել է պատմալեզվաբանական ֆակուլտետի առաջին դեկանը:

Մ.Տեր-Մովսիսյանը 130 գիտական աշխատությունների հեղինակ է, որոնցից հատկապես արժեքավոր են «Ուղեւորութիւն Տ.Տ. Մկրտիչ Վեհափառ Կաթողիկոսի Ամենայն Հայոց Երուսաղեմից-Էջմիածին»՝ (1894), «Հայ գյուղական տունը» (1894), «Սոկրատայ Սքոլաստիկոսի եկեղեցական պատմութիւն թարգմանեաց Փիլոն Տիրակացի եւ Պատմութիւն վարուց սրբոյ Սեղբեստրոսի եպիսկոպոսին Հռովմայ թարգմանեալ Աբասու Գրիգորի Ջորափորեցւոյ» (1897), «Նկարագրութիւն հոգեւոր վարուց Հովասափու, որդւոյ թագաւորին Հնդկաց» (1897):

Մ.Տեր-Մովսիսյանը վախճանվել է 1939թ. հունիսի 3-ին:

ՏԵՐ-ՊՈՂՈՍՅԱՆ ԱՎԵՏԻՔ ԳՐԻԳՈՐԻ

Կենդանաբան,
կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1880թ. հունվարի 15-ին Լոռու Վարդաբլուր գյուղում: Սովորել է տեղի դպրոցում, ապա՝ տեղափոխվել Թիֆլիսի Ներսիսյան դպրոց, այնուհետև ընդունվել է Էջմիածնի Գևորգյան ճեմարան, որն ավարտել է 1901թ.: 1903-1908թթ. սովորել է Լայպցիգի համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետի բնագիտական բաժնում: Համալսարանն ավարտելուց հետո վերադարձել է հայրենիք և աշխատել որպես բնագիտության ուսուցիչ Շուշիի թեմական, Ալեքսանդրապոլի Արղության դպրոցներում, Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում և Երևանի ուսուցչական սեմինարիայում:

1920-1948թթ. Ա.Տեր-Պողոսյանն աշխատել է ԵՊՀ-ում որպես դասախոս և կենդանաբանության ամբիոնի վարիչ: 1929թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Նա հեղինակ է մի քանի տասնյակ գիտական աշխատությունների՝ նվիրված Հայաստանի կենդանական աշխարհի որոշ խմբերին, քաղցրահամ ջրերի ֆաունային, գյուղատնտեսական վնասատուների ուսումնասիրությանն ու հայ կենսաբանական մտքի զարգացման պատմությանը: Նրա կարևոր աշխատություններից են՝ «Դարվինը և նրա ուսմունքը» (Եր., 1947), «Բիոլոգիական մտքի զարգացումը Հայաստանում»

(Եր., 1955), «Ընդհանուր կենդանաբանություն» դասագիրքը (Եր., 1939) և այլն:

Ա.Տեր-Պողոսյանը վախճանվել է 1954թ. մայիսի 13-ին Երևանում:

ՏԵՐՏԵՐՅԱՆ ԱՐՍԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ

Գրականագետ, քննադատ,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ



Ծնվել է 1882թ. դեկտեմբերի 22-ին Լեռնային Ղարաբաղի Շուշիքենդ գյուղում: Սովորել է ծննդավայրի ծխական դպրոցում, ապա՝ Շուշիի հայկական սեմինարիայում: 1902թ. ընդունվել է Գևորգյան ճեմարան, որն ավարտելուց հետո՝ 1905 թվականից՝ ավելի քան կես դար նվիրվել է գիտամանկավարժական գործունեության: 1905-1907թթ. Շուշիի հոգևոր սեմինարիայում և 1909-1920թթ. Երևանի թեմական դպրոցում դասավանդել է գրականության պատմություն և տեսություն:

Յուրացրած լինելով հոգեբանական դպրոցի սկզբունքները նա ծավալել է գրականագիտական քննադատական գործունեություն՝ հայ իրականության մեջ արմատավորելով և առաջինը կիրառելով պոեզիայի, արձակի և հրապարակախոսության գնահատման մեթոդաբանական տարբեր չափանիշներ: Այդ շրջանում լույս տեսան նրա «Վահան Տերյան. ցնորքի, ծարավի և հաշտության երգիչը» (1910), «Միքայել Նալբանդյան. ազգության հրապարակախոսը» (Ալեքսանդրապոլ, 1910), «Հովհաննես Թումանյան. հայրենի եզերքի քնարերգուն» (Վաղարշապատ, 1911) և այլ աշխատություններ:

1920թ. Ա.Տերտերյանը հրավիրվել է Երևանի նորաստեղծ համալսարան որպես դասախոս: 1929 թվականից մինչև կյանքի վերջը եղել է հայ գրականության իր հիմնադրած ամբիոնի վարիչ: Համալսարանում նա մեծ ջանքեր է գործադրել գրականագիտական բարձրորակ կադրեր պատրաստելու, հայ գրականության պատմության ծրագրերը մշակելու և դասավանդումը գիտական հիմքերի վրա դնելու ուղղությամբ:

1943թ. Ա.Տերտերյանին առանց ատենախոսության պաշտ-

պանության շնորհվել է բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: Նույն թվականին նա հաստատվել է նորաստեղծ ՀԽՍՀ ԳԱ հիմնադիր անդամ:

Ա.Տերտերյանի կարևոր մենագրություններից են՝ «Շիրվանզադե. հայ ինտելիգենտի և ընտանիքի վիպասանը» (1911), «Աբովյանի ստեղծագործությունը» (Եր., 1941, 1947), «Հայ կլասիկներ» (Եր., 1944), «Շիրվանզադեի գրական տիպերի հանրագիտարան» (Եր., 1959), «Վալերի Բրյուսովը և հայ կուլտուրան» (Եր., 1944), «Պերճ Պռոշյան» (Եր., 1955) և այլն:

1940թ. Ա.Տերտերյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման:

Վախճանվել է 1953թ. հոկտեմբերի 6-ին Երևանում:

ՏՈՆՅԱՆ ԱՐՇԱԿ ՀՈՎՍԵՓԻ

Մաթեմատիկոս, պրոֆեսոր

Ծնվել է 1888թ. հոկտեմբերի 10-ին Գանձակի Բանանց գյուղում: 1906թ. ավարտել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանի դասարանական բաժինը:

Աշխատանքային գործունեությունն սկսել է 1909թ. Շուշիի թեմական դպրոցում որպես մաթեմատիկայի ուսուցիչ: 1910-1914թթ. սովորել է Գերմանիայի Հալե քաղաքի համալսարանում: Վերադառնալով Հայրենիք 1914-1921թթ. որպես մաթեմատիկայի ուսուցիչ աշխատել է Թիֆլիսի Ներսիսյան և Հովնանյան դպրոցներում:

1921թ. Ա.Տոնյանը հրավիրվել է ԵՊՀ, մասնակցել ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի կազմակերպման գործին: Երկարամյա ուսուցչական փորձն ու մանկավարժական հմտությունը հնարավորություն են տվել նրան բարձրագույն մաթեմատիկայի դասախոսությունները կարդալու դյուրըմբռնելի և բարձր որակով: 1930թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 17 տարի մեծ եռանդով ու սիրով աշխատելով համալսարանում՝ Ա.Տոնյանը գործուն մասնակցություն է ունեցել ուսումնական աշխատանքների կազմակերպմանը: Նա եղել է տեխնիկական և ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետների դեկան, բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնի վարիչ՝ նրա կազմակերպման օրից մինչև 1937թ.:

Նա տիրապետում էր մի քանի լեզուների և իր լեզվական ու մաթեմատիկական գիտելիքներն ի սպաս է դրել մայրենի լեզվով ուսումնական գրականության ստեղծման և հայերեն գիտական տերմինների մշակման գործին: Նա դասագրքերի հմուտ թարգմանիչ էր. թարգմանել է մաթեմատիկայի, ֆիզիկայի ու քիմիայի դպրոցական և համալսարանական 11 դասագիրք, միաժամանակ՝ կազմել տերմինաբանական բառարաններ:

Ա.Տոնյանի գործունեությունն ընդհատվել է 1937թ.. Նա դարձել է ստալինյան բռնարարքների հերթական զոհը: Վախճանվել է 1942թ մարտի 18-ին աքսորավայրում: Արդարացվել է հետմահու:

ՏՐՈՒՑԿԻ ՆԻԿՈԼԱՅ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ

Բուսաբան,
կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1878թ. հունվարի 4-ին Լեհաստանի Կելցի քաղաքում: Միջնակարգ կրթությունն ստացել է ծննդավայրում, ապա ընդունվել Կիևի համալսարան, որն ավարտել է 1912թ.: Մի քանի տարի աշխատել է նույն համալսարանի բույսերի ձևաբանության և կարգաբանության ամբիոնում:

1916թ. Ն.Տրոիցկին տեղափոխվել է Կովկաս: 1917-1928թթ. աշխատել է Թիֆլիսի բուսաբանական այգում որպես մարգագետնագիտության կաբինետի վարիչ, միաժամանակ մանկավարժական աշխատանք կատարել Թիֆլիսի պոլիտեխնիկական ինստիտուտի գյուղատնտեսական ֆակուլտետում՝ սկզբում որպես ասիստենտ, իսկ 1924-ից՝ դոցենտ:

1928թ. ՀԽՍՀ լուսավորության ժողկոմի հրավերով Ն.Տրոիցկին տեղափոխվել է Երևան, աշխատանքի անցել ԵՊՀ-ում և տասը տարի ղեկավարել բույսերի ձևաբանության և կարգաբանության ամբիոնը, 1930-ից՝ նաև Հայկական անասնաբուժական ինստիտուտի կերահայթայթման ամբիոնը և գյուղատնտեսական փորձնական կայանի նույնանուն լաբորատորիան: 1935-ից վարել է ԽՍՀՄ ԳԱ Հայկական մասնաճյուղի բուսաբանության սեկտորի վարիչի պաշտոնը: 1938-1944թթ. աշխատել է Օրյոլի պետական մանկավարժական ինստիտուտում, իսկ

1944-1955թթ. Սիմֆերոպոլի պետական մանկավարժական ինստիտուտում որպես բուսաբանության ամբիոնի վարիչ:

Ն.Տրոիցկին զբաղվել է խոտհարքների և արոտավայրերի կերային բույսերի հետազոտությամբ: Հեղինակ է 85 հրատարակված և 10 ձեռագիր աշխատությունների, այդ թվում՝ «Անդրկովկասի բուսաբանությունը որպես արտադրողական ուժ», «Ղրիմի տափաստանների պատմություն», «Երեքնուկ» (Եր., 1935), «Կորնգան» (Եր., 1935) մենագրությունների:

Վախճանվել է 1957թ. հուլիսի 15-ին:

ՈՒԹՄԱԶՅԱՆ ՀԱՅԿԱՐԱՄ ՄՈՒՐԱԴԻ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1912թ. դեկտեմբերի 25-ին Արևմտյան Հայաստանի Սվազի նահանգի Զարա գյուղաքաղաքում: Հազիվ մեկ տարին բոլորած՝ կորցրել է հորը, ճաշակել հայ ժողովրդին պատուհասած Մեծ եղեռնի, տեղահանության ու թափառական կյանքի դառնությունները: 1926թ. մոր և քրոջ հետ բնակություն է հաստատել Աբխազիայում: 1929թ. սովորել է Աբխազիայի Լաբրա գյուղի տարրական դպրոցում: Այնուհետև ուսումը շարունակել է գյուղբանֆակում, ապա ավարտելով Սուխումի հայկական մանկավարժական տեխնիկումը՝ աշխատանքի է անցել Լաբրա գյուղի դպրոցում որպես պատմության ուսուցիչ, ուսմասվար:

1941թ. Հ.Ութմազյանն ավարտել է ԵՊՀ պատմության ֆակուլտետը և որպես տնօրեն աշխատանքի նշանակվել Փարաքարի միջնակարգ դպրոցում: Սակայն պատերազմի պատճառով չի ստանձնել պաշտոնը և մեկնել է ռազմաճակատ: Մարտնչելով Հայկական 89-րդ հրաձգային Թամանյան դիվիզիայի շարքերում՝ 1944թ., երկրորդ անգամ վիրավորվելուց հետո, զորացրվել է:

1945թ. Հ.Ութմազյանն ընդունվել է ԵՊՀ ասպիրանտուրա: 1948թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1953թ. նա արժանացել է դոցենտի կոչման և աշխատանքի անցել հայ ժողովրդի պատմության ամբիոնում որպես դասախոս: 1949-ից դասավանդել է մարքսիզմ-լենինիզմի ամբիոնում, որը ղեկավարել է 1957-1967թթ.: 1966-1967թթ. եղել է ԵՊՀ պրոռեկտոր:

1966թ. Հ.Ութմազյանը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, իսկ 1967թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Հեղինակ է «Սյունիքը IX-X դարերում» (Եր., 1958), «Ինչ է նշանակում աստիճանական անցումը սոցիալիզմից կոմու-

նիզմին» (Եր., 1961) և այլ գրքերի:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 12 ատենախոսություն:

Հ.Ուլթմազյանը եղել է ԵՊՀ կուսակցական կոմիտեի առաջին քարտուղար, 1954-1957թթ՝ ՀԿԿ Երևանի Կիրովյան շրջկոմի առաջին քարտուղար: Բազմիցս ընտրվել է Երևանի քաղխորհրդի և ՀԽՍՀ Գերագույն խորհրդի IV և VII գումարումների պատգամավոր: 1967-ից մինչև կյանքի վերջը ՀԽՍՀ Նախարարների խորհրդի մամուլի պետական կոմիտեի նախագահն էր:

Պարգևատրվել է «Կարմիր աստղ» շքանշանով ու մեդալներով:

Վախճանվել է 1970թ. դեկտեմբերի 13-ին Մոսկվայում, աճյունն ամփոփված է Երևանում:

ՓԱՆՈՍՅԱՆ ԳԵՐԱՍԻՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ

Կենսաֆիզիկոս,
կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1930թ. հուլիսի 20-ին Մոսկվայում: 1948թ. ավարտել է Երևանի թիվ 30 միջնակարգ դպրոցը, 1953թ՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետը: 1953-1956թթ. սովորել է Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի ասպիրանտուրայում: 1957թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, 1960թ. ստացել դոցենտի կոչում:

1956-1958թթ. Գ.Փանոսյանը եղել է ՀԽՍՀ ԳԱ նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, 1958-1961թթ.՝ ԵՊՀ մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնի դոցենտ, 1961-1964թթ.՝ ԽՍՀՄ բժշկական ակադեմիայի պոլիոմիելիտի և վիրուսային էնցեֆալիտների ինստիտուտի վիրուսների կենսաքիմիայի լաբորատորիայի ավագ գիտաշխատող, 1964-1984թթ. ԵՊՀ կենսաֆիզիկայի ամբիոնի վարիչ:

1975թ. Գ.Փանոսյանը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1976թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1977-1978թթ. նա եղել է ԵՊՀ գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր, 1978-1983թթ.՝ Երևանի անասնաբուժական-անասնաբուծական ինստիտուտի ռեկտոր, 1983-1986թթ. ՀԽՍՀ ԳԱ փորձարարական կենսաբանության ինստիտուտի տնօրեն, 1986-1994թթ. ԵՊՀ կենսաֆիզիկայի ամբիոնի վարիչ: 1997թ. արժանացել է «ԵՊՀ ամբիոնի պատվավոր վարիչ» կոչման:

1963թ. Գ.Փանոսյանի նախաձեռնությամբ և ջանքերով ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետում ստեղծվել է կենսաֆիզիկայի ամբիոն, իսկ 1964թ՝ կենսաֆիզիկայի բաժանմունք: Նա մշակել է «Կենսաֆիզիկա», «Մոլեկուլային կենսաբանություն» դասընթացների ուսումնական պլանները, իրականացրել այդ առարկաների դասավանդումը ԵՊՀ-ում:

Գ.Փանոսյանը հեղինակ է ավելի քան 300 գիտական աշխատանքների, որոնք նվիրված են նյարդային միջնորդանյութերի կենսաքիմիային և ֆիզիոլոգիայինե քաղցկեղային բջջի մոլեկուլային կենսաբանությանը, քրոմատինի, հիստոնների և մյուս բաղադրամասերի դերին բուսական և կենդանական բջջի գենետիկական ապարատի (ԴՆԹ-ի) կառուցվածքագոյացման և գործունեության մեջ, հորմոնների և կենսաբանորեն ակտիվ այլ միացությունների ազդեցության մոլեկուլային մեխանիզմին, ներբջջային կարգավորման և կենսաակուստիկայի որոշ հարցերի: Նրա գրչին են պատկանում «Մոլեկուլային կենսաբանությունը և քաղցկեղի պրոբլեմը» (Եր., 1970) և “Структура и функции гистонов” (Ер., 1978) մենագրությունները:

Գ.Փանոսյանը եղել է ԽՍՀՄ ԳԱ կենսաֆիզիկայի պրոբլեմների գիտական խորհրդի անդամ:

Նա ԱՄՆ-ում և Մեծ Բրիտանիայում կատարել է գիտահետազոտական աշխատանք և հանդես եկել զեկուցումներով:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 15 ատենախոսություն:

1981թ. Գ.Փանոսյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է «Աշխատանքային արիության համար (մարտական արիության համար) ի նշանավորումն Վ.Ի.Լենինի ծննդյան 100-ամյակի» (1970) և «Աշխատանքի վետերան» (1984) մեդալներով, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատվոգրով (1981):

ՓԻՐՈՒՄՅԱՆ ԳԵՎՈՐԳ ՊԵՏՐՈՍԻ

Քիմիկոս,
տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1951թ. հունիսի 29-ին Երևանում: 1968թ. ավարտել է Երևանի թիվ 19 միջնակարգ դպրոցը, 1973թ.՝ ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը: 1979թ. Գ.Փիրումյանը պաշտպանել է թեկնածուական, 1997թ. դոկտորական ատենախոսություն: 2002-ին նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1974-1984թթ. աշխատել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետում որպես կրտսեր գիտաշխատող, 1984-1991թթ.՝ ավագ գիտաշխատող, 1992-1996թթ.՝ առաջատար գիտաշխատող, գիտական

թեմայի ղեկավար, 1996-2002թթ. դոցենտ, 2002-2007թթ. պրոֆեսոր: 2007-ից Գ.Փիրումյանը էկոլոգիական քիմիայի ամբիոնի վարիչն է:

Գ.Փիրումյանը հեղինակ է 186 գիտական հոդվածների, 14 արտոնագրի, «Բնական ջրերի էկոլոգաջրաքիմիական գնահատման մեթոդաբանություն» (Եր., 2008) մենագրության, «Էկոլոգիական քիմիա» (Եր., 2008) գիտամեթոդական ձեռնարկի, «Էկոլոգիական տերմինների և բառակապակցությունների բառարան»-ի (Եր., 2005):

Նրա գիտական հետազոտությունները վերաբերում են շրջակա միջավայրում աղտոտիչների փոխարկումների և վարքի ուսումնասիրությանը, բնական ջրի էկոքիմիական առանձնահատկությունների և դրանցում հատակային նստվածքագոյացումների դերի պարզաբանմանը: Գիտական հետաքրքրությունները ընդգրկում են նաև մակերևութային ջրերի ջրաքիմիական ուսումնասիրությունը և թափոնաջրերի մաքրման ժամանակակից եղանակների կիրառությունները:

ՔԱԼԱՆԹԱՐ ԱՇԽԱՐՀԲԵԿ ԱՂԱԼՈՅԻ

Հնագետ, պրոֆեսոր

Ծնվել է 1884թ. փետրվարի 11-ին Լոռու Արդվի գյուղում: 1905թ. ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, 1911-ին՝ Սանկտ Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների ֆակուլտետի հայ-վրացական բանասիրության և պատմության բաժինը: Ավարտելով համալսարանը՝ վերադարձել է Հայաստան, նվիրվել հայրենիքի նյութական մշակույթի ուսումնասիրությանը:

Տակավին ուսանողական տարիներից նա Նիկողայոս Մառի ղեկավարած արշավախմբի կազմում մասնակցել է Անիի պեղումներին: 1914թ. Ն.Մառն իր բացակայության միջոցին Անիի 13-րդ հնագիտական արշավախմբի ղեկավարությունը նրան է վստահել:

1915թ. Ա.Քալանթարը զորավար Անդրանիկի կամավորական գնդի կազմում մասնակցել է ռազմական գործողությունների, դարձել զորավարի քարտուղարը:

1917-ին նա շարունակել է պեղումները Անիում և 1918թ. հարկադրված հեռացել է՝ փրկելով հնագիտական հավաքածուների այն մասը, որն այժմ պահպանվում է ՀՀ պատմության թանգարանում: Նույն 1917թ. Ա.Քալանթարը Նիկողայոս Ադոնցի հետ մասնակցել է Վանի երկրորդ հնագիտական արշավախմբի աշխատանքներին: Հավաքել և վերծանել է ուրարտերեն շուրջ 50 արձանագրություն: 1918թ. Վանից Թիֆլիս վերադառնալով՝ որպես դասախոս աշխատել է Անդրկովկասյան համալսարանում: 1919թ. ամռանը նա եկել է Երևան, ՀՀ կրթության և մշակույթի նախարար Նիկոլ Աղբալյանի հանձնարարությամբ ձեռնամուխ եղել հուշարձանների պահպանության բաժնի ստեղծմանը՝ դառնալով այդ հաստատության հիմնադիր ղեկավարը: 1920թ. ղեկավարել է գիտական վերջին արշավախումբը դեպի Անի և Տեկոր, կատարել չափագրություններ, լուսանկարներ, ընդօրինակել բազմաթիվ արձանագրություններ:

1921թ. Ա.Քալանթարը հրավիրվել է ԵՊՀ որպես դասախոս և աշխատել մինչև 1937թ.: 1922թ. համալսարանում հիմնել է Արևելքի պատմության և հնագիտության ամբիոն, ստեղծել հնագիտական աշխատանոց: Բազմահմուտ մանկավարժը կյանքի է կոչել ուսանողական առաջին հնագիտական խմբակը՝ իր ուսանողներին մասնակից դարձնելով Հայաստանում գործող հնագիտական արշավախմբերի աշխատանքներին: 1923թ. նա հրատարակել է հնագիտության հայերեն առաջին դասագիրքը: 1929թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Ա.Քալանթարի գիտական և վարչական հետագա գործունեությունը կենտրոնացած էր հնությունների պահպանության կոմիտեում (նախագահ՝ Ալ.Թամանյան), որի գիտնական քարտուղարն էր:

Հնագետի երկարամյա տքնաջան աշխատանքների արդյունքն է Արագածի և Գեղամա լեռների հինավուրց ջրաբաշխական համակարգի հայտնաբերումն ու ուսումնասիրությունը: Այդ համակարգին է նվիրված «Մի հնագույն ջրաբաշխական սիստեմ Հայաստանում» (Եր., 1933) մենագրությունը: Ա.Քալանթարն առաջին հնագետն է Հայաստանում, որ համակարգել և ուսումնասիրել է նախնադարյան արվեստի հուշարձանները, մ.թ.ա. 7-3-րդ հազարամյակների ժայռապատկերները: 1930-ական թվականներին յուրատեսակ սխրանք էր հին Վաղարշապատի տարածքում հնագիտական պեղումների իրականացումը, որոնց արդյունքներն ամփոփված են «Հին Վաղարշապատի պեղումները» (Եր., 1935) գրքում: 2007թ. հրատարակվել է նրա «Հայաստանը քարե դարից միջնադար» երկերի ժողովածուն:

Ստալինյան բռնարարքներին հայ նշանավոր շատ մտավորականների հետ միասին զոհ դարձավ նաև Ա.Քալանթարը: 1938թ. մարտին նա ձերբակալվել է այսպես կոչված «պրոֆեսորների գործով»՝ մեղադրվելով հայրենիքի դավաճանության մեջ: Մահապատժի դատավճիռը փոխարինվել է ութ տարվա ազատազրկմամբ: Աքսորվել է Սիբիր, որտեղ 1942թ. հունիսին կնքել է իր մահկանացուն: Արդարացվել է հետմահու:

ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ ԱՐԱՄ ԱՇՈՏԻ

Հնագետ,
պատմական գիտությունների դոկտոր,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ



Ծնվել է 1937թ. օգոստոսի 25-ին Սուխումում: Աշտարակի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո 1954թ. ընդունվել և 1959-ին ավարտել է ԵՊՀ պատմության ֆակուլտետը: 1961-1964թթ. սովորել է ՀԽՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ասպիրանտուրայում: 1964թ. աշխատանքի է անցել ՀԽՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում որպես գիտաշխատող:

Ա.Քալանթարյանը ասպիրանտական տարիներից մասնակցել է Գառնի, Արմավիր, Արտաշատ նշանավոր հնագիտական հուշարձանների պեղումներին, ղեկավարել Օշականի, Սպիտակի, Պտղնիի և Գոգարանի արշավախմբերը: 1961-1976թթ. եղել է Դվինի պեղումների արշավախմբի պետի տեղակալ, 1976-ից՝ արշավախմբի պետ:

1966թ. Ա.Քալանթարյանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1969-1971թթ. եղել է Հայպետշինի հուշարձանների վերականգնման գիտաարտադրական արվեստանոցի գիտահետազոտական բաժնի վարիչ, 1986-1993թթ. ղեկավարել ինստիտուտի նորակուսույցների բաժինը:

1990թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 2002-ից նա հնագիտական և հայագիտական դասընթացներ է վարում ԵՊՀ-ում:

1993-2006թթ. Ա.Քալանթարյանը եղել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն, իսկ 2006-ից ինստիտուտի տնօրենի խորհրդական: Նույն թվականին ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ:

Հեղինակ է մի քանի սասնյակ հոդվածների և մի շարք մենագրությունների, որոնցից առավել կարևոր են «Դվինի նյութական մշակույթը IV-VIII դդ.» (Եր., 1970), «Դվին I, Կենտրոնական թաղամասի պեղումները 1964-1970թթ.» (Եր., 1976), «Դվինի վաղմիջնադարյան կնքադրոշմները» (Եր., 1982), “Двин IV, раскопки 1981-1985гг.” (Ер., 2007), “Dvin. Histoire et Archeologie de la vile medievale” (Paris, 1996) աշխատությունները:

Նշանակալի է Ա.Քալանթարյանի դերը որպես հեղինակ և

խմբագիր ՀԽՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի վերջին տարիների կարևորագույն հրատարակությունների՝ «Գինին հայոց ավանդական մշակույթում» (Եր., 2005) և «Հին Հայաստանի ոսկին» (Եր., 2007) ստեղծման ու հրատարակության գործում:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 3 ատենախոսություն:

Բազմիցս մասնակցել է միջազգային գիտաժողովների (Մոսկվա, Լենինգրադ, Թբիլիսի, Աշխաբադ, Երևան և այլն):

1996-ից Ա.Քալանթարյանը ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում գործող գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի նախագահն է:

ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ ԺԵՆՅԱ ԱՆԴՐԱՆԻԿԻ

Գրականագետ,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1942թ. մայիսի 24-ին Իջևանի շրջանի Սևքար գյուղում: 1959թ ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը, 1964թ՝ ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժինը, 1968թ. ասպիրանտուրան: Նույն թվականին Ժ.Քալանթարյանը պաշտպանել է թեկնածուական, 1988թ. դոկտորական ատենախոսություն: 1990թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1969թ. Ժ.Քալանթարյանը դասախոսական աշխատանքի է անցել ԵՊՀ Հայ նորագույն գրականության ամբիոնում որպես դասախոս, 1972-ից՝ ավագ դասախոս, 1976-ից՝ դոցենտ, 1988-ից՝ պրոֆեսոր: 2007 թվականից նա ԵՊՀ գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնի վարիչն է:

Ժ.Քալանթարյանը հեղինակ է շուրջ 80 հոդվածի, 7 մենագրության: Կարևոր աշխատություններից են՝ «Գրական քննադատության տեսության և պատմության հարցեր» (Եր., 1982), «Հայ գրականագիտության պատմություն» (Եր., 1986), «Անդրադարձներ» (Եր., 2002), «Գրական հորիզոններ» (Եր., 2008) և այլն: Համահեղինակ է 10-րդ դասարանի «Հայ գրականություն» (Եր., 1993, 1996, 2000) դասագրքի:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 3

ատենախոսություն:

1987-ից Ժ.Քալանթարյանը գրողների միության անդամ է, 2001-ից՝ ԵՊՀ-ում գործող գրականագիտության գծով գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի նախագահը:

ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ ՊԱՊԱ ԲԵՋԱՆԻ

Ագրոքիմիկոս, մանրէաբան,
գյուղատնտեսական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1887թ. հուլիսի 7-ին Ալավերդու շրջանի Արդվի գյուղում: 1905թ. ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, 1906-1911թթ. սովորել Լայպցիգի համալսարանի բնագիտության ֆակուլտետում, պաշտպանել ատենախոսություն և ստացել դոկտորի աստիճան:

Աշխատել է Պոլտավայում որպես մանրէաբան, ապա Մոսկվայի գյուղատնտեսական մանրէաբանության կայանում որպես գիտաշխատող: 1914-1918թթ. եղել է Թիֆլիսի գյուղատնտեսության դեպարտամենտի լաբորատորիայի մանրէաբան: 1919թ. տեղափոխվել է Հայաստան և 1920թ. նշանակվել հողագործության ժողկոմի տեղակալ: Պ.Քալանթարյանը ԵՊՀ հիմնադիրներից է և գյուղատնտեսական ֆակուլտետի առաջին դեկանը:

1923թ. Պ.Քալանթարյանը նշանակվել է հողագործության ժողովրդական կոմիսարիատի և ժողովրդական տնտեսության խորհրդի կենտրոնական միացյալ լաբորատորիայի ղեկավար և ագրոհողագիտության գիտահետազոտական կայանի տնօրեն:

ԵՊՀ-ում նա կարդացել է «Մանրէաբանություն», «Հողագիտություն», «Ագրոքիմիա» և «Երկրագործություն» առարկաների դասընթացները: Նա մեծ աշխատանք է կատարել որակյալ մասնագետների պատրաստման ուղղությամբ: Պ.Քալանթարյանը նաև ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի հիմնադիրներից և նախագահության առաջին անդամներից է: Նրա մի շարք ուսումնասիրություններ վերաբերում են անասնապահության, ոռոգման, բույսերի պահպանության, մեքենայացման և գյուղատնտեսության էկոնոմիկայի հարցերին:

1934թ. բարձրագույն որակավորման հանձնաժողովի կող-

մից, առանց ատենախոսության պաշտպանության, նրան շնորհվել է գյուղատնտեսական գիտությունների դոկտորի գիտական աստիճան և պրոֆեսորի կոչում:

1935թ. նա արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման:

Պ.Քալանթարյանի գիտական և հասարակական գործունեությունն ընդհատվել է 1937թ. ենթարկվել է հալածանքների և բռնադատվել:

Վախճանվել է 1942թ. փետրվարի 21-ին աքսորավայրում: Արդարացվել է հետմահու:

ՔԱՆՔԱՆՑԱՆ ԱՂԱՍԻ ԳԱՐԵԳԻՆԻ

Քիմիական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1904թ. սեպտեմբերի 17-ին Վանում: 1915թ. նրանց ընտանիքը բռնել է գաղթի ճանապարհը, հասել Երևան, հիմնել նոր օջախ: Նա սովորել է գաղթականների երեկոյան, ապա՝ Ալ.Մյասնիկյանի անվան միջնակարգ դպրոցում, որն ավարտել է 1924թ.:

1928թ. ավարտելով ԵՊՀ գյուղատնտեսական ֆակուլտետը Ա.Քանքանյանն աշխատանքի է անցել վերլուծական քիմիայի ամբիոնում նախ որպես լաբորանտ, ապա՝ ասիստենտ:

1933-1935թթ. նա սովորել է Լենինգրադի համալսարանի ասպիրանտուրայում: 1939թ. թեկնածուական ատենախոսություն պաշտպանելուց հետո վերադարձել է Երևան և շարունակել աշխատել վերլուծական քիմիայի ամբիոնում մինչև 1985թ.: 1941թ. նրան շնորհվել է դոցենտի կոչում: 13 տարի համատեղությամբ դասավանդել է գյուղատնտեսական ինստիտուտում, շուրջ 10 տարի աշխատել ՀԽՍՀ ԳԱ քիմիայի ինստիտուտում:

Գիտական հետազոտություններն սկսելով ներմետաղական միացությունների ստացման հարցերից՝ Ա.Քանքանյանը հիմնականում զբաղվել է անօրգանական իոնների բաժանման և որոշման, տարրերի համակարգաբաժանման և այլ խնդիրներով՝ որպես նրբաշերտ քրոմատոգրաֆիայի կրիչներ օգտագործելով ՀԽՍՀ բնական սորբենտները:

Ա.Քանքանյանը հեղինակ է շուրջ 150 գիտական հոդվածների, «Անալիտիկ քիմիայի խնդիրներ և վարժություններ» (Եր., 1974), «Որակական քիմիական անալիզի գործնական աշխատանքներ» (Եր., 1977), «Որակական քիմիական անալիզի տեսական հիմունքներ» (Եր., 1979) ձեռնարկների և համահեղինակ՝ «Վերլուծական քիմիայի ծրագրավորված խնդիրների ժողովածու» (Եր., 1984), «Քիմիական անալիզի հիմունքներ» (Եր., 1985) գրքերի:

1970թ. Ա.Քանքանյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով ու մեդալներով:

Վախճանվել է 1999թ. հունվարի 15-ին Երևանում:

ՔԱՋԱԶՆՈՒՆԻ (ԻԳԻԹԽԱՆՑԱՆ) ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱԹԵՎՈՍԻ

Ճարտարապետ, պրոֆեսոր,
քաղաքական-հասարակական գործիչ



Ծնվել է 1868թ. հունվարի 1-ին Ջավախքի Գանձա գյուղում: Միջնակարգ կրթությունն ստացել է Թիֆլիսի ռեալական դպրոցում, ապա 1887-1893թթ. սովորել և ավարտել է Սանկտ Պետերբուրգի քաղաքացիական ճարտարագետների ինստիտուտի ճարտարապետական ֆակուլտետը: 1895-1907թթ. աշխատել է Բաքվում, Բաթումում, Թիֆլիսում, եռանդուն մասնակցություն ունեցել ՀՅԴ կուսակցության գործունեությանը, որի հանձնարարությամբ մեկնել է Կ.Պոլիս, որտեղ ձերբակալվել է: Մինչև 1914թ. որպես վտարանդի ապրել է Փարիզում, Բելգիայում, Կ.Պոլսում, Վանում: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Հ.Քաջազնունին ապրել է Ռուսաստանում, եղել Կովկասի քաղաքների միության Հայկական խորհրդի անդամ, Հավլաբարի շրջանից ընտրվել Թիֆլիսի քաղաքային դումայի իրավասու, աշխատել Բաքվի նավթարդյունաբերողներին հազվագյուտ ապրանքներ բաշխողի պաշտոնում:

1917-1918թթ. Հ.Քաջազնունին ընտրվել է Հայոց ազգային խորհրդի և Անդրկովկասյան սեյմի անդամ, մասնակցել Թուրքիայի հետ Տրապիզոնի և Բաթումի բանակցություններին,

Գեգեչկորիի կառավարության կազմում զբաղեցրել հասարակական խնամակալության նախարարի, իսկ Չխենկելիի կաբինետում՝ անպորտֆել նախարարի պաշտոն: 1918թ. մայիսի 28-ին Հայոց ազգային խորհուրդը Քաջազնունուն ընտրել է Հայաստանի Առաջին Հանրապետության վարչապետ: ՀՀ առաջին կառավարությունը նա գլխավորել է մինչև 1919թ. սկիզբը: Այնուհետև մեկնել է Եվրոպա և ԱՄՆ Հայաստանի համար դաշնակից պետություններից օգնություն խնդրելու, մասնակցել է 1919-1920թթ. Փարիզի հաշտության կոնֆերանսին: 1920թ. սեպտեմբերին վերադարձել է Երևան, ընտրվել ՀՀ պառլամենտի նախագահի տեղակալ: Խորհրդային իշխանության հաստատումից հետո ձերբակալվել է և 1921թ. փետրվարյան ապստամբության ժամանակ ազատվել բանտից: 1921-1924թթ. գտնվել է վտարանդիության մեջ (Թեհրան, Բոմբեյ, Կահիրե, Կոստանդնուպոլիս, Բուխարեստ): 1923թ. օգոստոսին դուրս է եկել ՀՅԴ կուսակցությունից, 1924-ին դիմել է Խորհրդային Հայաստանի կառավարությանը հայրենիք վերադառնալու խնդրանքով: 1925թ. ընտրվել է ՀԽՍՀ պետպլանին կից տեխնիկական խորհրդի անդամ, մինչև 1927թ. հայբամբակկոմում աշխատել բաժնի վարիչ, պետպլանի տնտեսական խորհրդի շինտեխնիկական կոմիտեի նախագահի տեղակալ, 1932-ին՝ ՀԽՍՀ կոմունալ տնտեսության ժողկոմիսարիատի գիտատեխնիկական խորհրդի գիտնական քարտուղար:

Այդ տարիներին Հ.Քաջազնունու նախագծերով Երևանում և Սարդարապատում կառուցվել են գործարաններ, մի շարք բնակելի տներ, հյուրանոցներ և այլ հասարակական շինություններ:

1926-1930թթ. Հ.Քաջազնունին ԵՊՀ տեխնիկական ֆակուլտետում դասավանդել է «Շինարարական արվեստ» և «Ճարտարապետական նախագծում» առարկաները: 1930թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: Որպես համահեղինակ՝ Հր.Աճառյանի, Հ.Զարգարյանի, Դ.Հակոբջանյանի հետ մասնակցել է շինարարական կառույցների ռուս-հայերեն տեխնիկական բառարանի կազմման աշխատանքներին:

1937թ. հուլիսի 29-ին Հ.Քաջազնունին ձերբակալվել և 1938թ. հունվարի 10-ին գնդակահարվել է: Արդարացվել է 1955թ.:

ՔԱՐԱՄՅԱՆ ԱՐՍԵՆ ՌՈԲԵՐՏԻ

Ծնվել է 1974թ. հունվարի 15-ին Կապան քաղաքում: 1980-1990թթ. սովորել է տեղի թիվ 7 միջնակարգ դպրոցում, 1991-1996թթ. ԵՊՀ պատմության ֆակուլտետում: 1995-1996թթ. աշխատել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում: 1996-1998թթ. ծառայել է ՀՀ զինված ուժերում:

Ա.Քարամյանը 1998-1999թթ. եղել է ԵՊՀ ավագ գիտաշխատող, 1999-2002թթ. ուսումնական վարչության բաժնի պատասխանատու: 2007թ. ավարտել է նաև ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետը:

2006թ. նա աշխատել է որպես ՀՀ վարչապետի օգնական, իսկ նույն թվականի մայիսից նշանակվել ԵՊՀ ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտոր: 2003-ից «ԵՊՀ շրջանավարտների միավորում» հասարակական կազմակերպության նախագահն է: 2009թ. նշանակվել է ՀՀ Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության փոխնախարար:

Ա.Քարամյանը հեղինակ է 2 գիտական հոդվածի և «Քաղաքական PR (գովազդ և հաղորդակցություն)» (Եր., 2007) ուսումնամեթոդական ձեռնարկի:

ՔԵՉԵԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՍԵՐԱՖԻՄԻ

Վիրաբույժ,
բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1872թ. հունիսի 7-ին Նոր Նախիջևանում: Սովորել է տեղի հայկական հոգևոր դպրոցում, ապա Ռոստովի գիմնազիայում, որն ավարտել է 1892թ.: Այնուհետև երկու տարի ուսանել է Սանկտ Պետերբուրգի ռազմաբժշկական ակադեմիայում, հետո տեղափոխվել Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետ և 1897թ. ավարտել այն:

Հ.Քեչեկն իր աշխատանքային գործունեությունն սկսել է Ռոստովի քաղաքային հիվանդանոցի վիրաբուժական բաժանմունքում, այնուհետև եղել է Նևիննոմիսկ կայարանի հիվանդանոցի վարիչ և տեղամասային բժիշկ: 1900թ. սկզբին տեղա-

փոխվել է Սանկտ Պետերբուրգ և տեղի վիրաբուժական կլինիկայում աշխատել որպես օրդինատոր:

1901-1905թթ. աշխատել է Գերմանիայի, Ֆրանսիայի, Անգլիայի և Դանիայի մի շարք առաջավոր կլինիկաներում: 1910թ. նա նշանակվել է Նոր Նախիջևանի քաղաքային հիվանդանոցի գլխավոր բժիշկ և այստեղ հիմնել վիրաբուժական բաժանմունք: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին մեծ ջանքեր է գործադրել զինվորական հիվանդանոցների ստեղծման համար՝ միաժամանակ ղեկավարելով Ռոստովի օրթոպեդիկ ինստիտուտի աշխատանքները:

1910թ. Հ.Քեչեկը ստացել է դոկտորի գիտական աստիճան: 1925թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1919-1923թթ. աշխատել է Վրաստանում:

1924թ. հրավիրվել է Երևան և նշանակվել Հանրապետական հիվանդանոցի վիրաբուժական բաժանմունքի ու Համալսարանի նորաստեղծ բժշկական ֆակուլտետի վիրաբուժության ամբիոնի վարիչ, իսկ 1925թ.՝ բժշկական ֆակուլտետի դեկան: ԵՊՀ-ում աշխատելու տարիներին Հ.Քեչեկը մեծ աշխատանք է կատարել բժշկական ֆակուլտետը որակյալ դասախոսական կադրերով համալրելու ուղղությամբ: Դասախոսություններ է կարդացել ոչ միայն իր մասնագիտությունից, այլև ախտաբանական անատոմիա ու ախտաբանական ֆիզիոլոգիա առարկաներից:

Հ.Քեչեկը հեղինակ է ավելի քան 30 գիտական աշխատությունների, որոնք վերաբերում են տուբերկուլյոզային գայլախտի լուսաբուժության մեթոդների մշակմանը, ուրոլոգիայի և վիրաբուժության բազմաթիվ հարցերի:

Եղել է ՀԽՍՀ վիրաբույժների գիտական ընկերության նախագահ, պատվավոր անդամ:

1935թ. Հ.Քեչեկն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով, «Աշխատանքային արիության համար» և այլ մեդալներով:

Վախճանվել է 1948թ. սեպտեմբերի 3-ին Երևանում:

Հ.Քեչեկի անունով է կոչվում Երևանի թիվ 1 կլինիկական հիվանդանոցի վիրաբուժական բաժանմունքը: Բժշկական ինստիտուտում սահմանվել է Քեչեկի անվան կրթաթոշակ:

ՔԵՌՅԱՆ ԳԱՐԻԿ ՄԻՇԱՅԻ

Քաղաքագիտության դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1959թ. մայիսի 25-ին Սևանում: 1976թ. ավարտել է տեղի թիվ 1 միջնակարգ դպրոցը, 1981թ. ԵՊՀ պատմության ֆակուլտետը, 1985-ին՝ ասպիրանտուրան:

1989թ. պաշտպանել է թեկնածուական, 2003թ. դոկտորական ատենախոսություն: 2003թ. նրան շնորհվել է դոցենտի, 2007թ. պրոֆեսորի կոչում:

1981-1986թթ. .Քեռյանն աշխատել է Սևանում որպես պատմության ուսուցիչ և համատեղությամբ՝ նաև կոմերիտմիության շրջանային կոմիտեի հրահանգիչ: 1986-ից անցել է դասախոսական աշխատանքի ԵՊՀ-ում:

1986-1993թթ. եղել է ԵՊՀ քաղաքական պատմության ամբիոնի ասիստենտ, 1993-2007թթ.՝ ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի դոցենտ, 2007-2008թթ. պրոֆեսոր: 2008-ից ԵՊՀ քաղաքագիտության ամբիոնի վարիչն է:

Հեղինակ է 32 գիտական և ուսումնամեթոդական աշխատությունների, այդ թվում՝ հինգ մենագրության «Քաղաքական կուսակցություններ» (Եր., 1996), «Հայաստանի երրորդ հանրապետության կուսակցական համակարգը և քաղաքական կուսակցությունները» (Եր. 1996), «Քաղաքական կուսակցությունների տիպաբանությունը» (Եր., 2002), «Ռուսաստանի Ազգային պետական կառուցվածքի խնդիրը և քաղաքական կուսակցությունները» (Եր., 2001), «Հայաստան-Եվրոպական միություն հարաբերությունների ընթացքը և զարգացման հեռանկարները» (Եր., 2005):

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 3 ատենախոսություն:

ՔՈՉԱՐ ՄԵՐԻ ՀՐԱՉՅԱՅԻ

Արևելագետ,
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Մ. Հ. Քոչար

Ծնվել է 1936թ. սեպտեմբերի 9-ին Երևանում: Ավարտելով Երևանի թիվ 8 դպրոցը՝ 1954թ. ընդունվել է Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի արևելագիտության բաժինը՝ «Թուրքագիտություն» մասնագիտությամբ:

1960թ. Մ.Քոչարն աշխատանքի է անցել ՀԽՍՀ ԳԱ արևելագիտության ինստիտուտում որպես գիտաշխատող: 1963թ. ընդունվել է ասպիրանտուրա, 1968թ.՝ Մոսկվայում պաշտպանել թեկնածուական ատենախոսություն:

1975 թվականից մինչև կյանքի վերջը եղել է ԵՊՀ թուրքական և արաբական բանասիրության ամբիոնի վարիչ, 1978-1993թթ.՝ արևելագիտության ֆակուլտետի դեկան:

1992թ. Մ.Քոչարը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, իսկ 1993թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Հեղինակ է մի շարք հոդվածների, երկու մենագրության՝ «Թուրքական տարրերը պոլսահայերի լեզվում» (ռուս., Եր., 1981), «Հայ-թուրքական հարաբերությունները և հայկական հարցը XIXդ. վերջին - XXդ. սկզբին» (Եր., 1988), համահեղինակ՝ «Ժամանակակից թուրք հեղինակները Հայաստանի և հայկական հարցի մասին» (Եր., 1977) աշխատության:

Զեկուցումներով հանդես է եկել հանրապետական, համամիութենական և միջազգային գիտաժողովներում:

Մ.Քոչարը վախճանվել է 1994թ. նոյեմբերի 23-ին Երևանում:

ՔՈՉԱՐՑԱՆ ԿԱՐԵՆ ՆՈՐԱՅՐԻ

Ռադիոֆիզիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Ծնվել է 1943թ. օգոստոսի 22-ին Երևանում: 1960թ. ավարտել է թիվ 55 դպրոցը, 1966թ. Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետը:

1967-1970թթ. սովորել է նույն բուհի ասպիրանտուրայում: 1970թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և 1971-1978թթ. աշխատանքի անցել ՀԽՍՀ ԳԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտում:

1978-1995թթ. Կ.Քոչարյանն աշխատել է ՀՀ ԳԱԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտում, 1995-1997թթ. ԵՊՀ-ում որպես գերբարձր հաճախությունների ռադիոֆիզիկայի ամբիոնի վարիչ:

1993թ. Կ.Քոչարյանը Մոսկվայում պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1996թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս:

Կ.Քոչարյանի գիտական հետազոտությունների շրջանակն ընդգրկում է նյութերի մագնիսական հատկությունների ուսումնասիրումը ռադիո և տերահերցային տիրույթի սպեկտրադիտման միջոցով և սուբմիլիմետրական ալիքների ֆիզիկան և տեխնիկան:

Հեղինակ է 110 գիտական հոդվածների:

1998 թվականից բնակվում է ԱՄՆ-ում:

ՔՈՉԱՐՅԱՆ ՆՈՐԱՑՐ ՄԱՐԳԱՐԻ

Ֆիզիկոս,
Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1906թ. հոկտեմբերի 16-ին Երևանում: 1925թ. ավարտել է Խ.Աբովյանի անվան միջնակարգ դպրոցը: 1925-1927թթ. աշխատել է Ստեփանավանում որպես ուսուցիչ: 1927-1931թթ. սովորել է ԵՊՀ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետում: 1931-1934թթ. Ն.Քոչարյանը եղել է ԵՊՀ ֆիզիկայի ամբիոնի ասիստենտ, 1934-1938թթ. դոցենտ, 1938-1945թթ.՝ ԵՊԻ ֆիզիկայի, 1938-1956թթ.՝ ԵՊՀ փորձարարական ֆիզիկայի և 1956-1960թթ. նյութի կառուցվածքի ամբիոնների վարիչ: 1943թ. ստացել է ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի, իսկ 1955թ. Հայաստանում ֆիզիկոսներից առաջինը՝ դոկտորի գիտական աստիճան:

1956թ. Ն.Քոչարյանն ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ: 1957թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: Նա ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի առաջին դեկանն էր (1959-1960թթ.):

Ն.Քոչարյանն իր գիտական առաջին աշխատանքները կատարել է 1943թ. Արագածի գիտական արշավախմբի կազմում: 1944-1960թթ. զբաղվել է տիեզերական ճառագայթման բաղադրության, մասնիկների էներգիական և զանգվածների սպեկտրների, ինչպես նաև բարձր էներգիաներով մասնիկների և ատոմային միջուկների փոխազդեցության պրոցեսների հետազոտմամբ:

1950-ականների վերջերից Ն.Քոչարյանի գիտական աշխատանքների հիմնական ուղղությունը դառնում է պինդ մարմնի և պոլիմերների ֆիզիկան: Նա անիզոտրոպ պոլիմերներում հայտնաբերել է «մակածված» պիեզոերևույթը, ուսումնասիրել լուծույթներում ուլտրաձայնային ճառագայթման ազդեցությամբ պոլիմերների կառուցվածքափոխման մեխանիզմները:

Ն.Քոչարյանը հեղինակ է շուրջ 65 գիտական հոդվածների, «Տիեզերական ճառագայթներ: Պոլիմերների ֆիզիկա» (ռուս., Եր., 1973) մենագրության, ինչպես նաև ֆիզիկայի պրակտիկումի հայերեն առաջին ձեռնարկի:

Մեծ է Ն.Քոչարյանի դերը Հայաստանում ֆիզիկայի զարգացման և գիտական կադրերի պատրաստման գործում: 1943թ. Ալիխանյան եղբայրների հետ նա մասնակցել է ՀԽՍՀ ԳԱ ֆիզիկայի ինստիտուտի (հետագայում՝ Երևանի ֆիզիկայի ինստիտուտ) կազմակերպմանը: 1944-1949թթ. նա այդ ինստիտուտի փոխտնօրենն էր, 1949-1960թթ.՝ փոքր էլեկտրամագնիսի լաբորատորիայի, իսկ 1960-1962թթ.՝ պոլիմերների ֆիզիկայի լաբորատորիայի վարիչը: 1962թ. կազմակերպել և ղեկավարել է ՀԽՍՀ ԳԱ կենտրոնական ֆիզիկատեխնիկական լաբորատորիան: Նրա ջանքերով Հայաստանում պինդ մարմնի ֆիզիկայի և ֆիզիկայի այլ բնագավառների զարգացման համար անհրաժեշտ կադրեր են պատրաստվել ԽՍՀՄ հեղինակավոր գիտական և ուսումնական կենտրոններում:

1967թ. Ն.Քոչարյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է «Պատվո նշան» շքանշանով:

Վախճանվել է 1967թ. մարտի 14-ին Երևանում:

ՕՀԱՆՅԱՆ ԼԵՎՈՆ ՊԱՐԳԵՎԻ

Իրավաբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր իրավաբան

Ծնվել է 1937թ. նոյեմբերի 22-ին Երևանում: Ավարտել է Երևանի թիվ 40 միջնակարգ դպրոցը: 1954թ. ընդունվել և 1959թ. ավարտել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետը, ապա աշխատանքի անցել ԵՊՀ կրիմինալիստիկայի (հետագայում՝ դատական փորձաքննությունների) գիտահետազոտական լաբորատորիայում որպես փորձագետ-կրտսեր գիտաշխատող, ավագ փորձագետ, ավագ գիտաշխատող, կրիմինալիստիկական փորձաքննությունների բաժնի վարիչ:

1960թ. Լ.Օհանյանն ավարտել է Մոսկվայի Արդարադատության նախարարության վերապատրաստման բարձրագույն դասընթացները և ստացել կրիմինալիստիկական փորձաքննություններ կատարելու իրավունք: 1960թ. հունվարին ՀԽՍՀ-ում կատարել է առաջին դատա-ձեռագրաբանական փորձաքննությունը:

1970թ. Օդեսայում պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1982թ. նրան շնորհվել է դոցենտի, 2003թ. պրոֆեսորի կոչում:

1970-1971թթ. Լ.Օհանյանը եղել է քրեագետ-դատախազ Երևան քաղաքի դատախազությունում, որտեղ կազմակերպել է քրեագիտական կաբինետ և զբաղվել քննչական աշխատողների գիտամեթոդական ուսուցման հարցերով: 1971թ. աշխատանքի է անցել ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնում, ապա՝ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնում որպես ավագ դասախոս, հետագայում՝ դոցենտ, ամբիոնի վարիչ, պրոֆեսոր: 1995թ. նշանակվել է ՀՀ Արդարադատության խորհրդի գիտնական անդամ: 1983-2006թթ. եղել է ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի վարիչ: 2006-ից նույն ամբիոնի պրոֆեսոր է:

Լ.Օհանյանը գիտական զեկուցումներով հանդես է եկել

ԽՍՀՄ տարբեր քաղաքներում կազմակերպված գիտաժողովներում: Երկար տարիներ եղել է մեր հանրապետության ներկայացուցիչը ԽՍՀՄ կրիմինալիստիկական գիտահետազոտական աշխատանքների համակարգման բյուրոյում:

Հեղինակ է «Ձեռագրի փորձաքննություն» (ռուս., Եր., 1969), «Փորձագետի հավանական եզրակացությունը ապացույցների համակարգում» (ռուս., Բաքու, 1969), «Նախնական քննության ընթացքում կազմվող դատավարական փաստաթղթեր» (Եր., 1984), «Կրիմինալիստիկա. տեխնիկա» (Եր., 1993), «Կրիմինալիստիկան Հայաստանի Հանրապետությունում» (Եր., 2007) մենագրությունների, «Կրիմինալիստիկա» (Եր., 2004) մայրենի լեզվով առաջին դասագրքի:

Նա գործուն մասնակցություն է ունեցել ֆակուլտետում կրիմինալիստիկայի և դատական փորձաքննությունների պրոբլեմների հետազոտման գիտագործնական կենտրոնի ստեղծմանը:

2003թ. Լ.Օհանյանն արժանացել է ՀՀ վաստակավոր իրավաբանի կոչման:

ՕՀԱՆՅԱՆ ՎԻԿՏՈՐ ԿԱՐՈՑԻ

Մաթեմատիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր

Ծնվել է 1948թ. դեկտեմբերի 12-ին Թբիլիսիում: 1966թ. ավարտել է Թբիլիսիի թիվ 11 միջնակարգ դպրոցը, 1971թ.՝ ԵՊՀ մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետը, 1974-ին՝ ԵՊՀ ասպիրանտուրան:

1974-ից Վ.Օհանյանն աշխատում է ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի հավանականությունների տեսության և մաթեմատիկական վիճակագրության ամբիոնում: 1979թ. նա պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1984թ. նրան շնորհվել է դոցենտի կոչում: 1994-ից աշխատում է նաև ՀՀ ԳԱԱ մաթեմատիկայի ինստիտուտում: 1998թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 2002թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Վ.Օհանյանը հեղինակ է շուրջ 40 գիտական հոդվածների,

որոնք վերաբերում են պատահական կետային պրոցեսների, ինտեգրալ և ստոխաստիկ երկրաչափության բնագավառներին, բնական գիտություններում մաթեմատիկական վիճակագրության կիրառման հարցերին:

ՕՍԻՊՅԱՆ ԼԻԱ ԼԵՎՈՆԻ

Բուսաբան,
կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Ծնվել է 1930թ. հունվարի 15-ին Երևանում: 1947թ. ավարտել է թիվ 8 միջնակարգ դպրոցը, 1952թ. ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետը: 1952թ. աշխատել է ԵՊՀ բուսաբանության ամբիոնում որպես լաբորանտ, 1952-1954թթ. եղել է ՀԼԿԵՄ կենտկոմի բաժնի վարիչ, 1954-1959թթ.՝ ԵՊՀ ասիստենտ, 1960-1961թթ. գիտահետազոտական բաժնի գիտքարտուղար, 1961-1967թթ.՝ բուսաբանության ամբիոնի դոցենտ:

1958թ. Լ.Օսիպյանը պաշտպանել է թեկնածուական, 1970թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1971թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1968-2005թթ. եղել է բուսաբանության ամբիոնի վարիչ, 1985-1990թթ. և 1999-2000թթ. ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի դեկան:

1986թ. Լ.Օսիպյանն ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1996թ. ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս: 2005թ. արժանացել է «ԵՊՀ ամբիոնի պատվավոր վարիչ» կոչման: Նույն թվականից ընդհանուր կենսաբանության գիտահետազոտական լաբորատորիայի ղեկավարն է:

Հեղինակ է ավելի քան 300 գիտական աշխատությունների, այդ թվում՝ "Паразитные гифальные грибы Арм.ССР" (Ер., 1962), "Микофлора Арм. ССР", (т. I., Пероноспоровые грибы, Ер., 1967, т. III. Гифальные грибы, Ер., 1975), համահեղինակ՝ "Определитель грибов Закавказья. Пероноспоровые грибы" (Ер., 1985), "Конспект макроскопических грибов Армении. Гастеромицеты" (Ер., 2000) մենագրությունների: Հրատարակել է «Ջրիմուռների, սնկերի և քարաքոսների հիմնական խմբերի դասակարգումը» (Եր., 2003) ուսումնական ձեռնարկը:

Գիտական աշխատանքների հիմնական ուղղություններն են՝ բուսաբանության ընդհանուր հարցեր, միկոլոգիա՝ սնկերի բազմազանություն, տաքսոնոմիա և էկոլոգիա, ֆիզիոլոգիա, ջրային սնկեր, վայրի և մշակովի բույսերի սնկային հիվանդություններ, մարդու սնկային հիվանդություններ, սննդամթերքի անվտանգություն, աղտոտվածություն սնկերով և միկոտոքսիններով, արտակարգ պայմանների ազդեցությունը սնկերի կենսաբանական ակտիվության վրա:

Լ.Օսիպյանը Հայաստանում փորձարարական սնկաբանության հիմնադիրն է: Նա առաջինն է ուսումնասիրել գործնական մեծ նշանակություն ունեցող հիֆոմիցետային սնկերի բազմազանությունը տարբեր միջավայրերում: ԽՍՀՄ-ում առաջիններից մեկն է ուսումնասիրել սննդամթերքներն աղտոտող, թունավորող սնկերը, Հայաստանում մշակել սննդամթերքների անվտանգության հայեցակարգ:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 17 և դոկտորական 1 ատենախոսություն:

Լ.Օսիպյանը մասնակցել է միջազգային բազմաթիվ գիտաժողովների (Հունգարիա՝ 1978, Տալլին՝ 1989, Սանկտ Պետերբուրգ՝ 1998, 2007, ԱՄՆ 1999, Մոսկվա՝ 2002), եղել է ԽՍՀՄ ԳԱ "Микология и фитопатология" ամսագրի խմբագրական խորհրդի անդամ:

1980թ. Լ.Օսիպյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման:

ՕՍԻՊՅԱՆ ՍՈՒՐԵՆ ԱՐՏԱՇԵՍԻ

Իրավաբանական գիտությունների դոկտոր,
ՀԽՍՀ վաստակավոր իրավաբան

Ծնվել է 1930թ. օգոստոսի 28-ին Ադր.ԽՍՀ Նուխի քաղաքում: 1947թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը, 1952թ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետը: Այնուհետև ընդունվել է ասպիրանտուրա՝ միաժամանակ դասախոսելով ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում և այլ կրթօջախներում:

1959թ. Ս.Օսիպյանը պաշտպանել է թեկնածուական, 2005թ. Մոսկվայում՝ դոկտորական ատենախոսություն: 1961թ. նրան շնորհվել է դոցենտի, 2006-ին՝ պրոֆեսորի կոչում:

1968-1970թթ. Ս.Օսիպյանը եղել է ԵՊՀ պետական իրա-

վունքի ամբիոնի վարիչ, 1967-1971թթ. իրավագիտության ֆակուլտետի դեկան, 1971-1988թթ. ՀԽՍՀ գլխավոր դատախազ: Նրան շնորհվել է ԽՍՀՄ արդարադատության 2-րդ դասի պետական խորհրդականի կոչում: 1992-2007թթ. եղել է ՌԴ գլխավոր դատախազության գիտահետազոտական ինստիտուտի (Մոսկվա) առաջատար գիտաշխատող, իսկ 2007 թվականից՝ ՌԴ Հաշվիչ պալատի գիտահետազոտական ինստիտուտի գլխավոր գիտաշխատող:

Ս.Օսիպյանը հեղինակ է ավելի քան 80 գիտական աշխատանքների, այդ թվում՝ 12 մենագրության: Հիշատակության են արժանի "Органы государственной власти в СССР" (Ер., 1970), "Типология российского федерализма и конституционно-правовых проблем государственной власти» (М., 2004), "Суверенитет на современном этапе развития государства" (М., 1994), "Конституция РФ 1993г. и проблемы российского конституционализма" (М., 1995), "Проблемы конституционной теории (российский и западный опыт)" (Ер., 2002) մենագրությունները:

Նա եղել է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի չորս գումարումների պատգամավոր:

Ս.Օսիպյանն արժանացել է ՀԽՍՀ վաստակավոր իրավաբանի (1982), ԽՍՀՄ դատախազության պատվավոր գործչի (1988) կոչումների, պարգևատրվել Աշխատանքային կարմիր դրոշի (1972), Ժողովուրդների բարեկամության (1981) շքանշաններով և մի շարք մեդալներով:

ՖԱՆԱՐՋՅԱՆ ԲԱՐԴՈՒՂԻՄԵՈՍ ԱՐՏԵՄԻ

Ռենտգենաբան,
բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս, ԽՍՀՄ ԲԳԱ թղթակից անդամ

Ծնվել է 1898թ. հունվարի 9-ին Ախալցխայում: Նախնական կրթությունն ստացել է Աբասթումանում: 1917թ. ավարտել է Թիֆլիսի առևտրական ուսումնարանը: 1923թ. ընդունվել է Թիֆլիսի բժշկական համալսարան, այնուհետև 4-րդ կուրսից տեղափոխվել ադրբեջանական համալսարանի բժշկական ֆակուլտետ, որն ավարտել է 1924թ.:

1936թ. Խարկովում Բ.Ֆանարջյանը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, նույն թվականին նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1945թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1956թ. ակադեմիկոս, 1960թ.՝ ԽՍՀՄ ԲԳԱ թղթակից անդամ:

1925-ից աշխատել է Թիֆլիսի նախկին գերմանական հիվանդանոցի ռենտգենյան բաժանմունքում: 1925թ. ՀԽՍՀ ժողկոմխորհի կողմից մեկ տարով գործուղվել է Գերմանիա՝ ռենտգենաբանության մեջ կատարելագործվելու: 1926թ. Բեռլինից վերադառնալուց հետո աշխատել է Երևանում:

1927-ից որպես դասախոս աշխատել է ԵՊՀ բժշկական ֆակուլտետում, իսկ 1936-ից՝ ղեկավարել ռենտգենաբանության ամբիոնը: 1941թ. նշանակվել է Մոսկվայի բժիշկների կատարելագործման ինստիտուտի ռենտգենաբանության ամբիոնի վարիչ: Հայրենական պատերազմի առաջին ամիսներին ինստիտուտի էվակուացման պատճառով տեղափոխվել է Երևան, աշխատել որպես Երևանի բժշկական ինստիտուտի տնօրենի տեղակալ և ամբիոնի վարիչ:

1946-ից մինչև կյանքի վերջը Բ.Ֆանարջյանը եղել է իր նախաձեռնությամբ Երևանում կազմակերպված ռենտգենաբանության և ուռուցքաբանության գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն և գիտական ղեկավար, 1956-1959թթ. ՀԽՍՀ ԳԱ

կենսաբանական, իսկ 1960-1963թթ. բժշկական գիտություններ-ի բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար:

Բ.Ֆանարջյանը Ռենտգենաբանների, ճառագայթաբանների և ուռուցքաբանների հանրապետական ընկերության նախագահն էր, Ռենտգենաբանների և ճառագայթաբանների համամիութենական ընկերության պատվավոր անդամ:

Հեղինակ է շուրջ 120 գիտական աշխատությունների, այդ թվում՝ "Рентгенодиагностика" (М., 1952), «Կրծքավանդակի օրգանների հիվանդությունների ռենտգենոդիագնոստիկա» (Եր., 1956) և այլ մենագրությունների:

Բ.Ֆանարջյանը պարգևատրվել է Լենինի շքանշանով և մի շարք մեդալներով:

Վախճանվել է 1976թ. ապրիլի 3-ին Երևանում:

ՖԵԼԵՔՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿԻ

Գրականագետ,
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ վաստակավոր ժուռնալիստ

Ծնվել է 1931թ. մարտի 13-ին Երևանում: 1948թ. ավարտել է թիվ 34 միջնակարգ դպրոցը, 1953թ. ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետը, ապա՝ ուսումնառությունը շարունակել ԵՊՀ ասպիրանտուրայում:

1958թ. Հ.Ֆելեքյանը պաշտպանել է թեկնածուական, 1970թ. դոկտորական ատենախոսություն: 1971թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Աշխատանքային գործունեությունն սկսել է 1957 թվականից «Սովետական գրականություն» ամսագրի խմբագրությունում որպես գրական աշխատող: 1957-1959թթ. եղել է «Սովետական Հայաստան» թերթի գրականության և արվեստի բաժնի վարիչ, 1959-1961թթ. վարել «Գրական թերթի» քննադատության բաժինը: 1961-1965թթ. աշխատել է ՀԽՍՀ ԳԱ «Պատմաբանասիրական հանդեսի» խմբագրությունում որպես բաժնի վարիչ, 1965-1970թթ.՝ ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի Հայ մամուլի պատմության բաժնի ավագ գիտաշխատող, 1967-1970թթ. համատեղությամբ՝ «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի պատասխանատու քարտուղար, 1970-

1977թթ. գլխավոր խմբագրի տեղակալ, 1978-1986թթ. գլխավոր խմբագիր:

1970-1981թթ. Հ.Ֆելեքյանը եղել է ԵՊՀ ժուռնալիստիկայի ամբիոնի վարիչ, 1981-1991թթ.՝ «Սովետական գրող», (հետագայում՝ «Նաիրի») հրատարակչության տնօրեն, 1991-2001թթ. ՀՀ կառավարությանն առընթեր արխիվային գործի վարչության պետ, 2001-ից՝ վարչության պետի խորհրդական:

Հ.Ֆելեքյանը հայ մամուլի պատմության, հայ գրականության և հրապարակախոսության հարցերին նվիրված բազմաթիվ հոդվածների հեղինակ է, գրել է ««Պրավդա»-ի տրադիցիաներով» (Եր., 1963), «Ալեքսանդր Ծատուրյան» (Եր., 1965), «Հայաստանի պարբերական մամուլը սոցիալիզմի կառուցման պայքարում» (Եր., 1970), «Հրապարակախոսություն և գրականություն» (Եր., 1975) մենագրությունները:

Նա կազմել և խմբագրել է հայ գրողների երկերի մի շարք ժողովածուներ, ծավալել թարգմանչական գործունեություն. նրա թարգմանությամբ է լույս տեսել Ալ.Գերցենի «Եղելություններ և խոհեր» եռագրության առաջին հատորը (Եր., 1981):

Հ.Ֆելեքյանը ժուռնալիստների (1958) և գրողների (1963) միությունների անդամ էր: 1981թ. արժանացել է ՀԽՍՀ վաստակավոր ժուռնալիստի կոչման:

Վախճանվել է 2005թ. դեկտեմբերի 7-ին Երևանում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ *Ա.Հ.Սիմոնյան* 3

ԵՊՀ ՌԵԿՏՈՐՆԵՐ 12

Ղամբարյան Յուրի Ստեփանի 13
Մանանդյան Հակոբ Համազասպի 15
Զավրիյան Դավիթ Քրիստափորի 17
Հովհաննիսյան Հակոբ Գարեգինի 18
Սանթրոսյան Մուշեղ Հայրապետի 19
Հայրապետյան Սահակ Սիմոնի 20
Մուշեղյան Տիգրան Պետրոսի 20
Կոստանյան Վռամ Քրիստափորի 21
Ենգիբարյան Միքայել Ավետիսի 23
Գաբրիելյան Հենրի (Հարություն) Գաբրիելի 24
Արզումանյան Անուշավան Աղաֆոնի 25
Դաբաղյան Նորայր Հարությունի..... 27
Առաքելյան Կամսար Արշակի 28
Պետրոսյան Գարեգին Բախշիի 29
Բունիաթյան Հրաչյա Խաչատուրի 30
Պողոսյան Հովհաննես Գևորգի 32
Դավթյան Գագիկ Ստեփանի 33
Հարությունյան Նագուշ Խաչատուրի 34
Բատիկյան Հրանտ Գևորգի 36
Ներսիսյան Մկրտիչ Գեղամի 37
Համբարձումյան Սերգեյ Ալեքսանդրի 39
Առաքելյան Նորայր Հունանի 41
Մարտիրոսյան Ռաղիկ Մարտիրոսի 42
Սիմոնյան Արամ Հրաչիկի 44

ԵՊՀ ՊՐՈՌԵԿՏՈՐՆԵՐ ԵՎ ԴԱՍԱԽՈՍՆԵՐ 46

Ա

Աբեղյան Մանուկ Խաչատուրի 47
Աբովյան Սարգիս Եսայու 49
Աբրահամյան Աշոտ Գարեգինի 50
Աբրահամյան Բենիամին Լևոնի 51
Աբրահամյան Լև Հարությունի 53
Աբրահամյան Լևոն Հմայակի 54
Աբրահամյան Մարտին Գրիգորի 55
Աբրահամյան Ջուլիետա Հայկի 56
Աբրահամյան Ռաֆիկ Աշոտի 57
Աբրահամյան Սամվել Աբրահամի 58
Ադամյան Հայկազ Իսահակի 59

Ադոնց Մուշեղ Համբարձումի 60
Ազատյան Հայկ Նահապետի 61
Ազատյան Վաղարշ Դավթի 62
Ազգալդյան Լեոնիդ Ռուբենի 63
Աթայան Էդուարդ Ռաֆայելի 64
Ալավերդյան Ռոման Բախշիի 65
Ալեքսանդրյան Ռաֆայել Արամի 66
Ալիխանով Աբրահամ Իսահակի 67
Ալիխանյան Արտեմ Իսահակի 69
Ակունյան Հովհաննես Համբարձումի 70
Աղաբեկյան Կիմ Բագրատի 71
Աղալուլյան Լենսեր Աբգարի 72
Աղայան Էդուարդ Բագրատի 73
Աղայան Ծատուր Պավելի 76
Աղաջանյան Արամայիս Խաչատուրի 77
Աղաջանյան Գեղամ Խաչատուրի 78
Աղբալյան Նիկոլ Պողոսի 79
Աճառյան Հրաչյա Հակոբի 81
Աճեմյան Շահե Արմենի 83
Ամատունի Անդրեյ Ցոլակի 84
Այվազյան Նորիկ Անուշավանի 86
Անանյան Գառնիկ Գուրգենի 87
Անժուր (Չեբոտարյան) Հարություն Գևորգի 88
Աչիքգյոզյան Սիմոն Հովհաննեսի 89
Առաքելյան Արամ Հմայակի 90
Առաքելյան Բաբկեն Նիկոլայի 91
Առաքելյան Մարտիրոս Համբարձումի 93
Առուստամյան Մամիկոն Առուստամի 94
Ասաքիանի Թինա Լևանի 95
Ասատրյան Գառնիկ Սերոբի 96
Ասատրյան Մամիկոն Վահանի 97
Ասատրյան Մանվել Եգորի 98
Ասատուր (Աստվածատրյան) Գեորգ Կոստանդինի 99
Ասլանյան Աշոտ Տիգրանի 100
Ասլանյան Լևոն Սուրենի 101
Ասլանյան Հայկազ Գաբրիելի 102
Ասլանյան Վիլեն Մկրտչի 103
Ավագյան Արամայիս Ռուստամի 104
Ավագյան Արծրուն Աբգարի 104
Ավագյան Գրիգոր Երեմի 105
Ավագյան Ռոբերտ Հովսեփի 106
Ավագյան Ռոլանդ Մամիկոնի 107
Ավագյան Սարգիս Նազարի 108
Ավագյանց Գեղեոն Մովսեսի 109
Ավդալբեգյան Թադևոս Հայրապետի 110

Ավետիսյան Աիդա Ավետիսի 112
Ավետիսյան Արա Կարապետի 113
Ավետիսյան Արա Սերգեյի 114
Ավետիսյան Զավեն Վասիլի 115
Ավետիսյան Համլետ Կարոյի 116
Ավետիսյան Հրանտ Ալեքսանի 117
Ավետիսյան Վարդգես Աբգարի 118
Ավետյան Էդմոնդ Գեղամի 119
Ավետյան Կոլյա Թորգոմի 120
Ավչյան Հենրիկ Մեսրոպի 121
Արարատյան (Արարատով) Քրիստափոր Գերասիմի 122
Արեշյան Գրիգոր Հակոբի 123
Արեշյան Սալոմե Գրիգորի 124
Արզումանյան Անդրեաս Հովսեփի 126
Արզումանյան Մակիչ Վահանի 127
Արիսյան Լևոն Եղիայի 128
Արխիպյանց Խաչատուր Դավթի 128
Արծրունի Վահան Մարգարի 129

Բ

Բաբայան Արաքսի Թովմասի 131
Բագդոև Ալեքսանդր Գեորգիի 132
Բաղդալյան Դավիթ Հայրապետի 133
Բաղդալյան Խաչատուր Հակոբի 134
Բաղդալյան Հայկ Վաղարշակի 135
Բաղդալյան Սմբատ Աղալոյի 136
Բաղդալյան Սուսաննա Միքայելի 137
Բուդիկյան Խաչիկ Գաբրիելի 138
Բազյան Սահակ Միրզոյի 139
Բալայան Բորիս Պավելի 140
Բալայան Պավել Բորիսի 141
Բալասանյան Սերգեյ Իշխանի 142
Բալյան Սողոմոն Պողոսի 142
Բակլավաջյան Հովհաննես Գեղամի 143
Բաղդասարյան Ալեքսան Ստեփանի 145
Բաղդասարյան Անդրանիկ Բախշիի 146
Բաղդասարյան Գևորգ Երվանդի 147
Բայբուրդյան Վահան Առաքելի 149
Բաշինջաղյան Զաքար Գևորգի 150
Բարխուդարյան Վիգեն Գրիգորի 151
Բարխուդարյան Վլադիմիր Բախշիի 152
Բարսեղյան Խիկար Հակոբի 154
Բարսեղյան Հովհաննես Խաչատուրի 155
Բարսեղյան Տարիել Կարապետի 157

Բեգլարյան Նադեժդա Պետրոսի 158
Բեդելյան Հովակիմ Ղազարի 159
Բեզիրգանյան Պետրոս Հակոբի 159
Բեյլերյան Նորայր Մանվելի 161
Բոյնագրյան Վլադիմիր Ռուբենի 162
Բոշնաղյան Պերճ Սերգեյի 162
Բրուտյան Գեորգ Աբելի 164
Բրուտյան Լիլիթ Գեորգի 165
Բունիաթյան Մնացական Ռուբենի 166
Բունիաթյան Նիկողայոս Գաբրիելի 167

Գ

Գաբրիելյան Արշալույս Համբարձումի 170
Գաբրիելյան Հովնան Համբարձումի 171
Գաբրիելյան Հրաչյա Կարապետի 172
Գաբրիելյան Միշա Սարգսի 173
Գաբրիելյան Յուրի Միշայի 174
Գաբրիելյան Վազգեն Արշալույսի 175
Գալիկյան Հրանտ Ավետիսի 176
Գալստյան Սերգեյ Աշոտի 177
Գասպարյան Նիկոլայ Գարեգինի 178
Գասպարյան Սեդա Քերոբի 178
Գասպարյան Ֆերդինանդ Վազգենի 180
Գարեգինյան Գրիգոր Լևոնի 180
Գյուլբուդաղյան Լիպարիտ Վաղարշակի 181
Գյուլբուդաղյան Սիրաք Վաղարշակի 182
Գյուլիքևխյան Հայկ Գաբրիելի 183
Գրիգորյան Ալեքսանդր Կոնստանտինի 184
Գրիգորյան Գառնիկ Լևոնի 185
Գրիգորյան Էդվարդ Խոսրովի 186
Գրիգորյան Կառլեն Վաղարշակի 187
Գրիգորյան Մարատ Արիսի 188
Գրիգորյան Մարտին Գևորգի 189
Գրիգորյան Ռոմեն Պետրոսի 190
Գրիգորյան Սերգեյ Կոստանդի 191
Գրիգորյան Վիլենա Հրանտի 191
Գրին Էլդա Աշոտի 192
Գրձելյան Գևորգ Փարսադանի 193
Գևորգյան Գեղամ Գրիգորի 194
Գևորգյան Էմիլ Սոսի 195
Գևորգյան Համլետ Ամբակումի 197
Գևորգյան Ռուդոլֆ Գրիգորի 198
Գևորգյան Վազգեն Ասքանազի 199

Դ

Դալյան Եվա Բենոյի 201
Դանագուլյան Ալիտա Սերգեյի 202
Դանղյան Մամիկոն Տիգրանի 203
Դանիելյան Էդուարդ Աշոտի 203
Դանիելյան Ֆելիքս Դանիելի 204
Դավթյան Միսակ Արշամի 205
Դարբինյան Մամիկոն Վարդանի 207
Դեմյոխին Ալեքսանդր Պյոտրի 208
Դիլոյան Վալտեր Արտաշեսի 209
Դումանյան Վահրամ Ժորայի 210
Դուրգարյան Անժելո Հակոբի 211
Դուրգարյան Արշակ Հակոբի 212

Ե

Եզեկյան Լևոն Կորյունի 214
Եղիազարյան Արտավազդ (Արտո) Միքայելի 215
Եղոյան Ռայա Վահանի 216
Ենգոյան Փայլակ Իսահակի 216
Եսայան Աղասի Արշակի 217
Եսայան Արամ Միքայելի 218
Եսայան Զապել Մկրտչի 219
Եսայան Լևոն Գարեգինի 220
Եսայան Ստեփան Ալեքսանդրի 221
Երեմյան Սուրեն Տիգրանի 222
Երզնկյան Ելենա Լևոնի 223
Երիցյան Խորեն Ահարոնի 224
Երիցյան Հոմերոս Սուրենի 225

Զ

Զարյան Կոստան Քրիստափորի 226
Զաքարյան Արմեն Եգորի 227
Զաքարյան Սեյրան Արտուշայի 228
Զաքարյան Վանիկ Սուրենի 228
Զոլյան Սուրեն Տիգրանի 229
Զոհրաբյան Էդիկ Արտեմի 230
Զորյան Հակոբ Նշանի 231
Զուբյան Գևորգ Դավթի 233
Զուրաբյան Սարգիս Շարբաթի 234

Է

Էդիլյան Գուրգեն Մեսրոպի 236
Էդոյան Հենրիկ Անտոնի 237

Թ

Թադևոսյան Վռամշապուհ Սամսոնի 239
Թաքոսյան Գևորգ Ալեքսանդրի 240
Թալալյան Ալեքսանդր Անդրանիկի 241
Թախտաջյան Արմեն Լեոնի 242
Թամազյան Աղասի Խաչատուրի 244
Թամանյան Ալեքսանդր Հովհաննեսի 245
Թամրազյան Հրանտ Սմբատի 247
Թառայան Վերգինե Մակարի 248
Թոքուվենց Վահան Հովհաննեսի 250
Թովմասյան Արշակ Թովմասի 251
Թորամանյան Թորոս Հարությունի 252
Թորգոմյան Վրույր Խաչատուրի 253
Թորոսյան Թորոս Շահենի 254
Թոքմաջյան Հասմիկ Արմենակի 255
Թռչունյան Արմեն Համբարձումի 255
Թութունջյան Հովսեփ Մովսեսի 257
Թումանյան Բենիկ Եսայու 258
Թումանյան Հովհաննես Երանոսի 259
Թումանյան Միքայել Գալուստի 260
Թումանյան Սարգիս Քրիստափորի 261

Ժ

Ժամկոչյան Անուշավան Սերոբի 263
Ժամկոչյան Հայկազ Գևորգի 264

Ի

Իշխանյան Ռաֆայել Ավետիսի 266
Իսահակյան Աբգար Իսահակի 267

Լ

Լեո (Բաբախանյան) Առաքել Գրիգորի 269
Լիսիցյան Ստեփան Դանիելի 270
Լևոնյան Գարեգին Ջիվանու 272

Խ

Խանզադյան Ցոլակ Խորենի 273
Խաչատրյան Ժյուլվեռն Բաղդասարի 274
Խաչատրյան Իշխան Գվիդոնի 275
Խաչատրյան Համբարձում Գուրգենի 275
Խաչատրյան Տելեմակ Սուրենի 276
Խաչատուրյան Կարո Էրանի 277

Խաչիկյան Էդուարդ Երեմի 278
Խլղաթյան Վարազդատ Երեմի 279
Խոջանեթյան Զեբեթ Աղաջանի 280
Խրլոպյան Գևորգ Տիգրանի 281
Խուդավերդյան Ալֆրեդ Հայկի 282
Խուրշուդյան Լենդրուշ Արշակի 283

Կ

Կանայան Հայկ Մկրտչի 284
Կարագյան Կարպիս Պողոսի 285
Կարախանյան Ռոբերտ Կարապետի 286
Կարայան Համլետ Սուրենի 287
Կարապետյան Լյուդվիգ Մնացականի 288
Կիրակոսյան Ալբերտ Ավետիսի 289
Կիրակոսյան Անուշավան Սարիբեկի 290
Կիրակոսյան Գրիգոր Եղիշի 291
Կիրակոսյան Լևոն Մարտինի 292
Կիրակոսյան Ջոն Սահակի 293
Կողբետլյանց Երվանդ Գևորգի 294
Կոջոյան Հակոբ Կարապետի 295
Կրյուչկյան Գագիկ Յուրիի 297

Հ

Հախումյան Սեմյոն Տիգրանի 299
Հախումյան Տիգրան Սիմոնի 300
Հակոբյան Ալեքսանդր Արշակի 301
Հակոբյան Արշակ Հայրապետի 302
Հակոբյան Թադևոս Խաչատուրի 304
Հակոբյան Հակոբ Վահանի 305
Հակոբյան Հովհաննես Հակոբի 306
Հակոբյան Հրանտ Խաչատուրի 307
Հակոբյան Նիկոլայ Սարգսի 308
Հակոբյան Ռաֆիկ Սերգեյի 309
Հակոբյան Սարգիս Արշակի 309
Հակոբյան Սիմոն Հարությունի 311
Համբարձումյան Գոհար Համազասպի 312
Համբարձումյան Ռուբեն Վիկտորի 312
Համբարձումյան Վիկտոր Համազասպի 313
Հայրյան Գևորգ Արմենակի 316
Հաջիե Ջնդի Ջաուարի 317
Հասրաթյան Էզրաս Հասրաթի 318
Հասրաթյան Մորուս (Մարգար) Ստեփանի 319
Հասրաթյան Մուրադ Մարգարի 321
Հարությունյան Արմեն Շուրայի 322

Հարությունյան Բաբկեն Հարությունի 323
Հարությունյան Գագիկ Գարուշի 324
Հարությունյան Էդվարդ Արզումանի ... 325
Հարությունյան Լյուդմիլա Հակոբի ... 326
Հարությունյան Հենրիկ Արտավազդի ... 328
Հարությունյան Նազիկ Կարապետի ... 328
Հարությունյան Ռոմիկ Սուրենի ... 329
Հարությունյան Ռուբեն Միքայելի ... 330
Հարությունյան Սամվել Գառնիկի ... 331
Հարությունյան Վիլիկ Մարգարի ... 332
Հարությունյան Վիլիկ Սիրակի ... 334
Հարությունյան Վլադիմիր Միքայելի ... 334
Հարությունյան Ֆելիքս Գևորգի ... 336
Հովհաննիսյան Աբգար Ռուբենի ... 337
Հովհաննիսյան Աշոտ Գարեգինի ... 338
Հովհաննիսյան Արթուր Հովհաննեսի 340
Հովհաննիսյան Լևոն Անդրեասի ... 341
Հովհաննիսյան Հայրապետ Հակոբի 343
Հովհաննիսյան Ռաֆիկ Սմբատի ... 344
Հովհաննիսյան Ռուսեթ Հովհաննեսի ... 345
Հովհաննիսյան Սոֆյա Պետրոսի ... 346
Հովհաննիսյան Սպարտակ Սարիբեկի ... 346
Հովսեփյան Արամայիս Ազիզբեկի ... 347
Հովսեփյան Գարեգին Կարապետի ... 348
Հովսեփյան Լիանա Սամվելի 350
Հովսեփյան Հովհաննես Արամի 351

Ղ

Ղազանչյան Տիրան Տիգրանի ... 353
Ղազարյան Էդուարդ Մուշեղի ... 354
Ղազարյան Հայկ Գեղամի ... 355
Ղազարյան Միշա Արիստակեսի ... 356
Ղազարյան Ռաֆայել Ավետիսի ... 357
Ղազարյան Ռուբեն Սերոբի ... 359
Ղազարյան Սերոբ Ղազարի 359
Ղազարյան Վահան Հովսեփի ... 360
Ղազինյան Գագիկ Սերգեյի ... 362
Ղամբարյան Ստեփան Պողոսի ... 363
Ղանալանյան Արամ Տիգրանի 365
Ղանթարջյան Սարգիս Լևոնի ... 366
Ղարախանյան Գեղամ Հակոբի ... 367
Ղարիբյան Արարատ Սահակի ... 368
Ղարիբյան Գրիշա Ալեքսանի ... 369
Ղարիբյան Գրիգոր Մարգարի ... 371

Ղարիբյան Իգիթ Գարեգինի 372
Ղարիբջանյան Գևորգ Բագրատի 373
Ղարիբջանյան Լյուդվիգ Պապիկի 375
Ղափանցյան Գրիգոր Այվազի 376
Ղաֆադարյան Կարո Գրիգորի 377
Ղուկասյան Արտուշ Ապրեսի 378

Ճ

Ճավրշյան Ջանիկ Մամիկոնի 380

Մ

Մազմանյան Մկրտիչ Արամի 382
Մաթևոսյան Ռաֆայել Խաչատուրի 383
Մալխասյանց Ստեփան Սարգսի 384
Մալխասյան Արարատ Ցոլակի 385
Մախչանյան Հենրիկ Մկրտչի 386
Մաղաքյան Հովհաննես Գևորգի 387
Մամիկոնյան Հովհաննես Լևոնի 388
Մայիլյան Ռաֆիկ Ավագիմի 389
Մանասյան Ալեքսանդր Սարգսի 390
Մանուկյան Միքայել Մանուկի 391
Մանուկյան Ռաֆայել Արշակի 392
Մանուչարյան Հենզել Գերասիմի 393
Մարգարյան Ալեքսանդր Սիմոնի 394
Մարգարյան Էդուարդ Բագրատի 394
Մարգարյան Հայրապետ Գևորգի 395
Մարգարյան Հրանուշ Արայի 396
Մարգարյան Շավարշ Մեղրակի 397
Մարգարյան Շիրազ Ալեքսանդրի 398
Մարկոսյան Սուրեն Սիսակի 399
Մարտիրոսյան Նաղաշ Նարինքեկի 399
Մարտիրոսյան Վալերի Հակոբի 400
Մեղնիկյան Գրիգոր Արտեմի 401
Մելիք-Ադամյան Արտաշես Ալեքսանդրի 402
Մելիք-Բախշյան Ստեփան Տիգրանի 403
Մելիք-Խաչատրյան Ջուլիետա Հայկի 404
Մելիքյան Ալեքսանդր Նիկոլայի 405
Մելիքյան Ալեքսանդր Պավելի 406
Մելիքյան Գուրգեն Վրեժի 407
Մելիքյան Մեհենդակ Արտաշեսի 408
Մելիքյան Նատալյա Մելիքի 409
Մելիքսեթյան Հովիկ Ուխտանեսի 410
Մելիք-Օհանջանյան Կարապետ Աղաբեկի 411
Մեսրոպյան Էվելինա Գուրգենի 412

Մերգելյան Սերգեյ Նիկիտի 413
Մինասյան Էդիկ Գարեգինի 414
Մինասյան Ռոբերտ Սարիբեկի 415
Մինասյան Սիրանուշ Մինասի 416
Միրզա-Ավագյան Հարություն Գրիգորի 417
Միրզաբեկյան Էմիլ Հայկի 418
Միրզոյան Լյուդվիգ Վասիլի 420
Միրզոյան Հրաչիկ Ղազարի 421
Միքայելյան Գրիգոր Գաբրիելի 422
Միքայելյան Սուրեն Աղաբեկի 423
Մխիթարյան Գուրգեն Ենոքի 424
Մխիթարյան Ելենա Սարիբեկի 425
Մկրյան Մկրտիչ Մամբրեի 426
Մկրտիչյան Արթուր Երվանդի 427
Մկրտչյան Լևոն Մկրտչի 428
Մկրտչյան Սերգեյ Սեդրակի 429
Մկրտումյան Մելս Պարգևի 430
Մնացականյան Լարիսա Հրանտի 431
Մնջոյան Արմենակ Լևոնի 432
Մովսիսյան Աբգար Խաչատուրի 434
Մովսիսյան Լերմոնտ Մուշեղի 435
Մովսիսյան Մելիստ Եղիշեի 436
Մովսիսյան Յուրի Թադևոսի 437
Մովսիսյան Յուրի Մովսեսի 438
Մովսիսյան Ռաֆիկ Լևոնի 439
Մուշեղյան Աշոտ Վարազդատի 440
Մուշեղյան Գրիգոր Պետրոսի 441
Մուսախանյան Վարդան Արամի 442
Մուսոյան Վիդոկ Խաչիկի 443
Մուրադյան Ատոմ Ժորայի 444
Մուրադյան Սամվել Պարգևի 445

Յ

Յասինսկայա Զոյա Իերոնիմի 446
Յավրույան Էդուարդ Գրիգորի 447

Ն

Նազարյան Վլադիմիր Ռուբենի 448
Նալբանդյան Գեորգի Մկրտչի 449
Նալբանդյան Վաչե Սմբատի 450
Նաջարյան Հուսիկ Խոսրովի 451
Նավակատիկյան Հովհաննես Ալեքսանդրի 452
Նավասարդյան Լիպարիտ Հայրապետի 453
Ներկարարյան Խաչատուր Վլադիմիրի 454

Ներկարարյան Վլադիմիր Նիկողոսի 455
Ներկարարյան Վլադիմիր Սմբատի 456
Ներսիսյան Լևոն Հրաչյայի 457
Ներսիսյան Հանրի Բարսեղի 458
Ներսիսյան Ստեփան Սարգսի 458

Շ

Շահաբասյան Կարեն Մերուժանի 460
Շահբազյան Կորյուն Խաչատուրի 460
Շահբազյան Ռայմոնդա Մինասի 461
Շահբաղյան Ռոմեն Լիպարիտի 462
Շահինյան Արամ Արտաշեսի 463
Շահինյան Արտաշես Լիպարիտի 465
Շահվերդյան Գայանե Միքայելի 466
Շահվերդովա Սուսաննա Մկրտչի 467
Շառոյան Գարսևան Վանոյի 468
Շավարշյան Արշավիր Մեսրոպի 470
Շարուրյան Ալբերտ Սրապիոնի 471
Շաքարյան Հրաչիկ Գրիգորի 471
Շաքարյան Ղևոնդ Լևոնի 472
Շիրմազան (Շիրմազանյան) Գրիգոր Վասիլի 473
Շուքուրյան Սամվել Կիմի 474

Չ

Չալթիկյան Հովհաննես Հակոբի 476
Չալթիկյան Ռուբեն Հովհաննեսի 477
Չալոյան Վազգեն Կարապետի 478
Չայլախյան Միքայել Քրիստափորի 479
Չիլինգարյան Յուրի Սերգեյի 480
Չոբանյան Կարապետ Սերգեյի 482
Չուբարյան Գրիգոր Համբարձումի 483
Չուբարյան Էդվարդ Վարդանի 484

Պ

Պապոյան Արտաշես Համբարձումի 486
Պապոյան Վլադիմիր Վլադիմիրի 487
Պարսամյան Վարդան Արամի 488
Պաֆենհոլց Կոնստանտին Նիկոլայի 489
Պետրոսյան Գեղամ Հարությունի 490
Պետրոսյան Հայրապետ Աբրահամի 491
Պետրոսյան Հրանտ Զինավորի 492
Պետրոսյան Շահեն Նիկոլայի 493
Պիոտրովսկի Բորիս Բորիսի 494

Պիվազյան Էմանուել Արզումանի 495
Պիվազյան Հարություն Մուշեղի 495
Պողոսյան Կարեն Սուրենի 496
Պողոսյան Հրանտ Ռուբենի 497
Պողոսյան Յարոսլալ Մկրտչի 498
Պողոսյան Պողոս Ստեփանի 499
Պողոսյան Սերոբ Պողոսի 500
Պոպով Յուրի Գեորգիի 502

Ջ

Ջահուկյան Գևորգ Բեգլարի 503
Ջաղացպանյան Դավիթ Կարապետի 504
Ջիվանյան Կարինե Արամի 505
Ջրբաշյան Էդուարդ Մկրտչի 506
Ջրբաշյան Մխիթար Մկրտչի 507
Ջրբաշյան Տիգրան Արշակի 509
Ջուհարյան Թորգոմ Գևորգի 510

Ռ

Ռշտունի Վահան Հարությունի 511
Ռոտինյան Լևոն Ալեքսանդրի 512

Ս

Սալախյան Հակոբ Նշանի 514
Սահակյան Արթուր Արտուշի 515
Սահակյան Գուրգեն Սերոբի 516
Սահակյան Մելս Արտավազդի 518
Սահարյան Արամ Ազատի 519
Սաղաթելյան Վաչագան Վայրդանի 520
Սաղիյան Աշոտ Սերոբի 521
Սամուելյան Խաչիկ Ստեփանի 522
Սարաֆյան Վահան Վրթանեսի 523
Սարգսյան Արա Միհրանի 524
Սարգսյան Գագիկ Խորենի 525
Սարգսյան Խորեն Սարգսի 526
Սարգսյան Հայկ Լևոնի 527
Սարգսյան Հողմիկ Հմայակի 528
Սարգսյան Սամվել Վլադիմիրի 529
Սարգսյան Սանատրուկ Մարտիրոսի 530
Սարգսյան Վլադիմիր Սարգսի 531
Սաֆարյան Վազգեն Հմայակի 532
Սեդրակյան Դավիթ Միհրի 533
Սեմյոնով Լևոն Լազարի 535

Սեֆերյան Սոնա Սարգսի 535
Սիմոնյան Աբել Պողոսի ... 536
Սիմոնյան Գառնիկ Պողոսի 538
Սիմոնյան Հրաչիկ Ռուբենի ... 539
Սիսակյան Նորայր Մարտիրոսի ... 540
Սողոմոնյան Սողոմոն Ալեքսանդրի ... 542
Ստեփանյան Ալբերտ Անդրանիկի ... 544
Ստեփանյան Հովհաննես Ստեփանի ... 545
Սուվարյան Յուրի Միքայելի 546
Սուքիասյան Ալեքսեյ Գրիգորի ... 547
Սուքիասյան Աշոտ Մուրադի ... 548
Սևակ (Գրիգորյան) Գուրգեն Գրիգորի 549

Վ

Վալեսյան Լեմվել Հակոբի ... 550
Վարդանյան Յուրի Լազարի ... 551
Վարդապետյան Արշակ Վարդի 552
Վարդապետյան Բաբկեն Սիմոնի ... 554
Վարդապետյան Համլետ Հարությունի ... 555
Վարդապետյան Ղազար Բարսեղի 556
Վարդևանյան Պողոս Հովհաննեսի ... 557
Վարշամով Ռոմ Ռուբենի ... 558

Տ

Տետերևնիկովա-Բաբայան Դարյա Նիկոլայի 560
Տեր-Անտոնյան Վալերի Մկրտչի 561
Տեր-Ավետիսյան Սմբատ Վարդանի ... 562
Տեր-Կարապետյան Մկրտիչ Արտաշեսի ... 564
Տեր-Ղազարյան Ղազար Գրիգորի ... 565
Տեր-Մինասյան Երվանդ Գալուստի ... 566
Տեր-Միքայելյան Միքայել Լևոնի 567
Տեր-Մկրտչյան Աշոտ Մովսեսի ... 568
Տեր-Մովսիսյան Մեսրոպ (Փարսադան) 570
Տեր-Պողոսյան Ավետիք Գրիգորի 571
Տերտերյան Արսեն Հարությունի ... 572
Տոնյան Արշակ Հովսեփի ... 573
Տրոիցկի Նիկոլայ Ալեքսանդրի ... 574

Ու

Ութմազյան Հայկարամ Մուրադի ... 576

Փ

Փանոսյան Գերասիմ Հարությունի 578
Փիրումյան Գևորգ Պետրոսի 579

Ք

Քալանթար Աշխարհբեկ Աղալոյի 581
Քալանթարյան Արամ Աշոտի 583
Քալանթարյան Ժենյա Անդրանիկի 584
Քալանթարյան Պապա Բեջանի 585
Քանքանյան Աղասի Գարեգինի 586
Քաջազնունի (Իգիթխանյան) Հովհաննես Մաթևոսի 587
Քարամյան Արսեն Ռոբերտի 589
Քեչեկ Համբարձում Սերաֆիմի 589
Քեռյան Գարիկ Միշայի 591
Քոչար Մերի Հրաչյայի 592
Քոչարյան Կարեն Նորայրի 592
Քոչարյան Նորայր Մարգարի 593

Օ

Օհանյան Լևոն Պարգևի 595
Օհանյան Վիկտոր Կարոյի 596
Օսիպյան Լիա Լևոնի 597
Օսիպյան Սուրեն Արտաշեսի 598

Ֆ

Ֆանարջյան Բարդուղիմեոս Արտեմի 600
Ֆելեքյան Հարություն Հայկի 601

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ

Հրատ. խմբագիր՝ Հ.Պետրոսյան
Կազմի ձևավորումը՝ Գ.Մարիկյան
Նկարների մշակումը՝ Ա.Գրիգորյան
Համակարգչային շարվածքը՝ Հ.Գասպարյան
Համակարգչային ձևավորումը՝ Շ.Գալստյան

Ստորագրված է տպագրության 10.09.09թ.:
Չափսը՝ 70x1001/16: Թուղթը՝ կավճապատ:
Հրատ. 39.2 մամուլ.
տպագր. 38,75 մամուլ = 50,6 պայմ. մամուլի:
Տպաքանակ՝ 1000 օրինակ: Պատվեր՝ 1176:

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ.Մանուկյան 1:

Տպագրվել է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: